«Ազգ յաբեթեան եւ թորգոմեան նաեւ աբրահամեան, վաղահաս պտուղք բուրդուղիմէոսեան եւ թադէոսեան, լուսածնունդ գաւակք Սուրբ Էջմիածնեայն եւ գրիգորեայն՝ առանց ամենայն տարակուսանաց եւ հակառակութեանց՝ հայք են եւ ասին.

Ազգք տոհմիւ օրհնեալ.
Երկրաւ բարեբանեալ.
Լեզուաւ կանխագարդեալ.
Գրով բարգաւաճեալ.
Հաւատով ազնուացեալ.
Անուամբ ճոխացեալ,
Առաքինութեամբ բարեպաշտեալ,
Ի Տէր պարծեցեալ,
Եւ զնմանէ գոհացեալ,
Եւ յԱստուածաշունչ գրոց քարոզեալ»:

Ղազար Ա Ջահկեցի,
կաթողիկոս Ամենայն Հայոց (1737-1751)

...все, как малые, так и большие, упадшаго народа християне армянские желают свободы..., а оных сколько есть силы, все в готовности обретаются и ожидают видеть тот день, в которой бы новую издавна желаемую свободу от всего сердца получить! ...извольте, очи свои разумно отворив, управлять и наше секретное дело крепко содержать, чтоб никому было явно и, паки повторяю, дабы не было известно; а и вы знаете, что наших врагов везде есть в готовности много. Еще подтверждаю вам, вартабед, что ежели о сих письмах узнают, то нас погубят. Но вы делайте дело так, чтоб и по нашей смерти не знатно было”.

Եսայի Հասան-Ջալալյան,

Գանձասարի կաթողիկոս (1701-1728)

МАТЕНАДАРАН - MATENADARAN
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА
MASHTOTZ INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

ARMEN AIVAZIAN

THE ARMENIAN CHURCH AT THE CROSSROADS OF THE ARMENIAN LIBERATION MOVEMENT IN THE XVIII CENTURY

АРМЕН АЙВАЗЯН

АРМЯНСКАЯ ЦЕРКОВЬ НА ПЕРЕПУТЬЯХ АРМЯНСКОГО ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ В XVIII ВЕКЕ

YEREVAN - ЕРЕВАН

2003

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ
XVIII ԴԱՐԻ
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ա 551

Հրատարակվում է Մաշտոցի անվ. Մատենադարանի Գիտական խորհրդի որոշմամբ

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Ա 551 Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, -Եր., Լուսակն, 2003թ., 344 էջ:

Աշխատությունը քննում է XVII-XVIII դարերի հայոց պատմության՝ դեռևս մութ մնացած մի շարք խնդիրներ: Մասնավորապես, նոր բացահայտումներով ներկայացված են Ամենայն հայոց կաթողիկոսների կապերը հայ ազատագրական շարժման հետ, հայոց եկեղեցու գաղափարախոսությունը, Արարատյան երկրի Օսմանյան տասնմեկամյա ռազմակալման (1724-1735 թթ.) ներգործությունը՝ կաթողիկոսական երեք իրարահաջորդ ընտրությունների վրա՝ 1726, 1730 և 1734 թթ.: Միաժամանակ ուսումնասիրված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքը հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում, Ս. Էջմիածնի նվիրակների հաստատությունը, հայ-կաթոլիկ փոխհարաբերությունները, ինչպես և քաղաքական պատմության համար կարևոր նշանակություն ունեցող հոգևոր-կանոնական որոշ հարցեր:

Ա $\frac{0503020913}{0150(01)-2003}$ 2003 ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-969-5-4

Տպագրության մեկենաս՝
իրավաբանական գիտությունների թեկնածու
Սամվել Գուրգենի Կարախանյան

© Այվազյան Արմեն, 2003

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Սույն ուսումնասիրությունը մեծավ մասամբ կատարվել է 1994-1995 թթ., Մաշտոցի անվան Մատենադարանում: Ընդհատված աշխատանքը հնարավոր եղավ շարունակել և ավարտին հասցնել միայն 2001 թ.՝ շնորհիվ Հայագիտական ուսումնասիրությունների արդիական կենտրոնի միջոցով ստացված դրամական նպատակային օժանդակության, որի համար երախտապարտ եմ:

Ցանկանում եմ նաև հատուկ շնորհակալություն հայտնել մոսկվաբնակ անվանի փաստաբան Սամվել Գուրգենի Կարախանյա-նին՝ գրքի տպագրության ծախսերը սիրահոժար ստանձնելու համար:

Համառոտագրություններ և հապավումներ

ԱԶԳ - **Մ. արքեպս. Օրմանեան**, *Ազգապատում: Հ. Ա-Բ,* Կ. Պոլիս, 1912-1914.

ԴԱԻ - **Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց:* Աշխատասիրութեամբ՝ Լ. Ա. Խանլարյանի. Երևան 1990.

Դրախտ ցանկալի - **Ղազար Ջահկեցի**, *Գիրք աստուածաբանական, որ կոչի «Դրախտ ցանկալի»:* Կ. Պոլիս, 1733:

Դրվագներ, Ա-Բ - **Աշ. Հովհաննիսյան**, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության:* Գիրք Ա-Բ, Երևան, 1957-1959:

ՁԱՔ - *«Ձաքարեայ սարկաւագի պատմագրութիւն»:* Գիրք Ա-Գ, Վաղարշապատ, 1870.

ԽԱՁ - **Խաչատուր արեղա Ջուղայեցի**, *Պատմութիւն պարսից (ԺԸ դար):* Աշխատութեամբ՝ Բ. Վրդ. Աղաւելեանցի. Վաղարշապատ, 1905:

ԿՈՍ - *«Թովմա Մեծոփեցու յիշատակարանը»:* Հրատարակեց իւր առաջաբանով Կարապետ Կոստանեանց. Թիֆլիզ, 1892:

ՄԺ, Ա-Բ - *«Մանր ժամանակագրություններ ԺԳ-ԺԸ դարերի»:* Կազմեց Վ. Ա. Հակոբյան, Հ. Ա-Բ, Երևան, 1951-1956:

Մաշտոցի անվ. Մատենադարան - ՀՀ կառավարությանն առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան:

ՁԱՄ, Գ - **Մ. վ. Ջամչեանց**, *Պատմութիւն Հայոց:* Հ. Գ, Վենետիկ, 1786:

Ջամբռ - **Սիմէօն Երևանցի**, *Ջամբռ:* Վաղարշապատ, 1870:

ՏՅՈ - **Ց. Թ. Տէր-Յովհաննեանց**, *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան: Հ. Ա-Բ,* Նոր Ջուղա, 1881:

АРО, I - *Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века.* Сборник документов, Т. II, часть I. Под редакцией Аш. Иоаннисяна, Ереван, 1964.

АРО, II - *Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века.* Сборник документов, Т. II, часть II. Под редакцией Аш. Иоаннисяна, Ереван, 1967.

АРО, III - *Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века.* Сборник документов, Т. III, часть I. Под редакцией В. К. Восканяна, Ереван, 1978.

CARM - *A Cronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII Centuries.* Vol. 1-2. London, 1939.

Տոմար և հատուկ նշաններ

Գրքի մեջ, հատուկ նշումի բացակայության դեպքում, բոլոր ամսաթվերը տրված են հին տոմարով: Հրատարակվող բոլոր բնագրերում հապավումները բացել ենք, նշանակել կետադրությունը, ուղղանկյուն փակագծերում առել տվյալ բնագրի ենթախորքից բխող լրացումները և մեր վերականգնում-

ները, իսկ կոր փակագծերում՝ մեր բացատրությունները, թարգմանությունները և խմբագրումները, որոնց հաճախ նախորդում է հավասարության՝ = նշանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1375 թ. Կիլիկյան Հայաստանի կործանմամբ՝ հիմնովին ոչնչացվեց հայկական պետության այդ պահին արդեն շուրջ երեքհազարամյա շարունակական ավանդույթներ ունեցող ճյուղավորված համակարգը՝ ներառյալ թագավորական հաստատությունը և հայկական բանակը: Հետագա երեք հուժկու ազատագրական ելույթների ժամանակահատվածներում՝ 1722-1735 թթ., 1890-1921 թթ. ու 1988-ից մինչև այժմ, գրեթե զրոյից վերստեղծված ազգային-պետական հաստատությունները հայկական քաղաքակրթության հետ իրենց կապը վերագտնելու բավարար ժամանակ չունեցան, այլ հիմնականում փոխառեցին ու նմանակեցին օտար տիրապետող ուժերի համապատասխան հիմնարկներն ու փորձը: Այնինչ հայոց պետականության արդյունավետ կազմակերպումը հնարավոր է միայն հայկակա՛ն քաղաքակրթության բուն սկզբունքները ճանաչել-ընկալելու և դրանց համաձայն առաջնորդվելու դեպքում[1]:

Անկախաշինության մերօրյա բարդագույն պայմաններում է՛լ ավելի է կարևորվում հայկական քաղաքակրթության ծոցից մեզ հասած ավանդական հաստատությունը՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, որն իր յուրահատուկ աստվածաբանության, ծիսակատարության, հոգևոր ծառայությունների և խորհուրդների մեջ պահպանել է պետական հիմունքների վրա կազմակերպված հայ կյանքի և մտքի՝ դեռևս չհետազոտված ու չմեկնաբանված բազմապիսի արժեքավոր մասունքներ[2]:

* * *

Պատմական փաստ է, որ օտար պետությունները միշտ ձգտել են հնարավորին չափ մեծ ազդեցություն ունենալ հայոց եկեղեցու

դեկավար շրջանակների վրա: Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև բաժանման պայմաններում Ս. Էջմիածինն ստիպված էր գործելու քաղաքական դժվարին և զգայուն պայմաններում՝ փորձելով այս երկու տերությունների շահերին բացահայտորեն երբեք չհակադրվել և հայության երկու հատվածներից որևէ մեկը հարվածի տակ չդնել: Սակայն թուրք-պարսկական պատերազմների ժամանակ Մայր Աթոռն անմիջապես դառնում էր այդ երկու պետությունների՝ նպատակասլաց գործողությունների վտանգավոր թատերաբեմ, իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսների ընտրություններն անցնում էին պետական աչալուրջ ուշադրության և անմիջական ազդեցությունների ներքո: Այս ամենը որոշակի լարվածություն էր մտցնում նաև արևելահայ և արևմտահայ կղերի փոխհարաբերություններում: Սույն մենագրությունը, զուգահեռ տարաժամանակյա հարցերի արծարծման հետ մեկտեղ, իր քննության կենտրոնում է պահում հենց այդպիսի մի ժամանակաշրջանում՝ 1720-1730-ական թթ. առաջացած ներազգային-ներեկեղեցային մի շարք խնդիրներ:

* * *

Հայ եկեղեցու XVII-XVIII դարերի պատմությանն անդրադարձել են Հ. Տեր-Հովհանյանցը, Ղ. Ալիշանը, Գ. Աղանյանցը, Բ. Կյուլեսերյանը, Գ. Գալեմքյարյանը, Ն. Ակինյանը, Աշ. Հովհաննիսյանը, Հ. Անասյանը, Հ. Քյուրտյանը, Կ. Ամատունին, Գ. Բամպուքճյանը, Պ. Անանյանը, Մ. Թերզյանը, Լ. Խաչիկյանը, Հ. Միրզոյանը, Ս. Ճեմճեմյանը և այլ հայագետներ, որոնց ուսումնասիրությունների շնորհիվ ի հայտ են եկել բազմաթիվ կարևոր փաստեր, դեմքեր, անտիպ երկեր[3]: Հատուկ նշելի է 1912-1927 թթ. երեք հատորով լույս ընծայված Մ. Օրմանյանի կոթողային Ազգապատումը*: Հետազոտողի համար* Ազգապատումը *մի անփոխարինելի հիմք է և ուղեցույց, որը մինչև օրս էլ շարունակում է մնալ ու գործածվել իբրև Հայոց եկեղեցու պատմության եզակի հանրագիտարան: Այուամենայնիվ, աղբյուրագիտական ու պատմագիտական հետագա ձեռքբերումների համեմատ* Ազգապատումը*, իր անժխտելի պատմագիտական արժանիքներով հանդերձ, բնականաբար, զգալիորեն հնացել է, ներառյալ՝ մեր հետազոտությանը վերաբերող ժամանակահատվածի մասով:*

XVII-XVIII դարերի Հայոց եկեղեցու պատմության հետազոտումը երեք հիմնական բարդություն ունի:

Առաջին՝ հայոց պատմության այս ժամանակաշրջանն առհասարակ շատ թերի է ուսումնասիրված. բազմաթիվ առանցքային հարցեր մնում են դեռևս մութ ու սպասում իրենց հետազոտողներին:

Երկրորդ՝ Խորհրդային Միության 70-ամյա գոյության շրջանում Հայաստանում, փաստորեն, անհնար էր ազատորեն ուսումնասիրել Հայ եկեղեցու պատմությունը, դավանանքը, կանոնակարգը, ծիսակարգը: Արդյունքում՝ այդ տարիներին ի հայտ բերված ու հրապարակված բազմաթիվ բնագրերն ու հետազոտությունները չհամադրվեցին և չընդհանրացվեցին Ազգապատում-ին համարժեք մի նոր հիմնարար աշխատության մեջ, որի պահանջը մեծ է և՛ գիտական, և՛ ընթերցող լայն հանրության համար:

Եվ երրորդ՝ մահմեդական տիրապետության օրոք Հայ եկեղեցու խորը ներգրավվածությունը հայոց ազատագրական շարժումների մեջ, անվտանգության պահանջներից ելնելով, պահվել է հույժ գաղտնի: Ըստ այդմ էլ՝ Հայ եկեղեցու գործունեության գաղտնի մասին վերաբերող սկզբնաղբյուրները չափազանց սուղ են, քանի որ ժամանակակիցներն համապատասխան մանրամասնությունները (մի քանի բացառությամբ)[4] միտումնավոր գրի չեն առել, իսկ գրառված փաստերի գերակշիռ մասը մեզ չի հասել՝ ոչնչացվելով դեռևս այն ժամանակ:

Գաղտնիության քողը հայոց «ընդհատակյա պատմության» (այն է՝ զինված պայքարի գաղտնի նախապատրաստությունների և զուգահեռաբար քրիստոնյա հզոր պետություններից ռազմական օգնություն ստանալու վերաբերյալ տարվող շարունակական բանակցությունների), ինչպես նաև 1720-ական թթ. բուն ազատամարտի շատ դրվագների վրայից կարող էր ընկնել միայն այն դեպքում, եթե Հայաստանի ազատագրությունն իրականություն դառնար և ակնատես գործիչները, այդ թվում հոգևորականները, հնարավորություն ունենային ազատորեն վերհիշել և շարադրել իրենց տեսածն ու ապրածը: Սակայն ազատագրությունն ուշացավ և Հայաստանում մահմեդական տիրապետությունը տևեց մի քանի դար: Ուրեմն հասկանալի է, թե հայ ազատագրական շարժումների՝ քանի-քանի պատ-

մությունն և անուն է թաղված մնացել անհայտության մեջ:

Ներկայացնենք խնդիրն ավելի առարկայորեն:

Տակավին 1703 թ. մայիսի 27-ին հայ մելիքները գրում էին Պետրոս Ա ցարին, թե «շրջապատված ենք անհավատների լրտեսներով» (...окружены шпионами неверных...)[5]*:*

15 տարի անց՝ 1718 թ. սեպտեմբերի 24-ին, խոր ընդհատակում եռանդով զինված ելույթին նախապատրաստվող հայոց ուժերի պարագլուխներից մեկը՝ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, գրելով Ռուսաստանում 1711 թ. ի վեր հայ ազատագրական շարժման լիազոր ներկայացուցիչ Մինաս վարդապետ Տիգրանյանին, նորից ու նորից նախազգուշացնում էր նրան հույժ գաղտնիություն պահպանելու անհրաժեշտության մասին (ռուսերեն թարգմանությամբ պահպանված այս նամակից մեջ ենք բերում մեզ հուզող խնդիրը լուսաբանող մի հատված).

> «մեր անկյալ ազգը՝ բոլոր հայ քրիստոնյաները, մեծավորներն ու փոքրավորները, ազատություն են տենչում.... որքան ուժեր ունենք՝ բոլորը պատրաստության մեջ են գտնվում և ակնկալում հասնել այն օրվան, երբ հնուց ի վեր սպասված ազատությունը նորից ամբողջ սրտով կստանանք: ...մյուս հարցերի մասին Այվազը[6] ձեզ բանավոր կզեկուցի: Թեև ցանկանում էինք այս նամակն առավել մանրամասն շարադրել, սակայն բազմաթիվ պատճառներով վախեցանք, չհամարձակվեցինք: Սա էլ գրեցինք, անսալով Այվազի թախանձագին խնդրանքներին, հավատ ընծայելով նրա երդմանը: Նրան նաև համառոտաբար մեր ձեռնարկի մասին պատմեցինք: ...եթե հանկարծ մեր ժողովրդից որևէ չար մարդ կամ լրտես տեսնի կամ լսի այս նամակների մասին՝ իմացած եղեք, որ մեր վերջն արդեն եկավ, իսկ Տունն այս հիմքից կքանդվի: Այդ իսկ պատճառով էլ՝ բարեհաճեք աչալրջորեն գործել և մեր ձեռնարկն այնպիսի գաղտնիության մեջ պահել, որ որևէ մեկին բացահայտ չլինի ու, կրկնում եմ, հայտնի չդառնա: Դուք էլ գիտեք, որ մեր թշնամիներն ամենուր շատ են: Դարձյալ հաստատում եմ, վարդապե՛տ, որ, եթե այս նամակների մասին իմանան, մեզ կոչնչացնեն: Գործն այնպես տեսեք, որ մեր մահից հետո էլ անգամ այն հայտնի չդառնա»[7]:

> [...все, как малые, так и большие, упадшаго народа християне армянские желают свободы..., а оных сколько есть силы, все в готовности обретаются и ожидают видеть тот день,

в которой бы новую издавна желаемую свободу от всего сердца получить!

...о прочем Айваз вам словесно донесет... И хотели бы мы писать плодовитое письмо, но от страху не посмели, для многих случаев, а сие писали по многому прошению Айваса, которому по присяге ево поверя, дело вкратце означили. ...ежели о сих письмах... из нашего народу или какой злой человек, или шпион приметит или услышит, то знайте, что уже нам конец будет, а сей дом от основания разорится. Того ради вы извольте, очи свои разумно отворив, управлять и наше секретное дело крепко содержать, чтоб никому было явно и, паки повторяю, дабы не было известно; а и вы знаете, что наших врагов везде есть в готовности много. Еще подтверждаю вам, вартабед, что ежели о сих письмах узнают, то нас погубят. Но вы делайте дело так, чтоб и по нашей смерти не знатно было[8].]

Հետաքրքիր է, որ Եսայի Հասան-Ջալալյանի՝ Մինաս վարդապետին տված զգուշացում-առաջադրանքը, թե՝ «գործն այնպես տեսեք, որ մեր մահից հետո էլ անգամ այն հայտնի չդառնա»[8], վերջինս կատարում է անթերի, մինչև իր կյանքի վերջը: Այսպես՝ 1740 թ., վախճանվելուց ընդամենը մի քանի շաբաթ առաջ, Մինաս վարդապետը կտրուկ հրաժարվում է բացահայտել պարսկերեն լեզվով գրված մի փաստաթղթի բովանդակությունը՝ ասելով, որ այդ մասին որևէ մեկը չպետք է իմանա. ինչպես պատմում էին ռուս չինովնիկները՝

«Սնդուսված մեծ թղթի վրա՝ պարսկերենով գրված մի թերթ, իսկ թե ի՞նչ գործի մասին է այն գրված՝ Վարդապետը հրաժարվեց բացահայտել՝ ասելով, որ այդտեղ գրված գործի մասին որևէ ոք չպետք է իմանա»[9]:

[Лист писанной персицким письмом на большой бумаге лощенной, а о каком деле оной писан, о том он, Вартапед, не объявил, а сказал, что о деле писанном в том, никому партикулярным знать не подлежит.]

Նմանապես՝ լեհահայ հայտնի գործիչ Ստ. Ռոշքան, 1730-ականների կեսերին գրում էր, որ չի կարող հրապարակել այն հայ մելիքների անունները, որոնք 1699 թ. ապրիլի 19-ին Անգեղակոթում հեղինակել էին Հռոմի պապին ուղղված մի նամակ՝

«զորոց անուանսն վասն պատճառի ուրուք լռեմ. զթուղթն ես ինքնին թարգմանեցի, որով զհնազանդութիւն տալով Սուրբ Աթոռոյն Հռոմայ, խնդրէին զօգնութիւն ազատելոյ ի լծոյն անհաւատից» [10] (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.):

1700 թ. մայիսի 10-ին Իսրայել Օրին և Մինաս Տիգրանյանն այս նամակը հանձնել են Հռոմի պապին[11]: Հայ-կաթոլիկ հարաբերություններին այդքան ուշադրություն դարձրած հռոմեադավան հեղինակները զարմանալիորեն չեն նկատել այն տրամաբանական կապը, որ կա հայ մելիքների՝ 1699 թ. գրած այս նամակի և նույն 1699 թ.՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Նահապետ Եղեսացու և Երուսաղեմի Հայոց պատրիարք Մինաս Ամդեցու Հռոմի պապին հասցեագրած և նրա գերակայությունը ձևականորեն ճանաչող նամակների միջև[12]: Այնինչ՝ այդ կապը ցույց է տալիս, որ և՛ Նահապետ կաթողիկոսի, և՛ Մինաս պատրիարքի գրություններն ունեցել են մի պարզ և հստակ նպատակ. պապի գերակայության առերես ճանաչմամբ՝ աջակցել 1700 թ. մայիսին Հայաստանի ազատագրության խնդրով Հռոմում Իսրայել Օրու գլխավորած հայկական պատվիրակության վարած բանակցություններին:

1720-ական թթ. հայ ազատագրական շարժմանն անձամբ մասնակցած եկեղեցական ու քաղաքական բազմաթիվ գործիչներ, իրենց թողած հուշագրություններում դիտմամբ քար լռություն են պահպանել ինչպես իրենց նախկին գործունեության, այնպես էլ առհասարակ հայոց մղած երկարատև (1722-ից մինչև 1735 թ.) ազատամարտերի մասին (սույն ուսումնասիրությունը մանրամասն քննում է է Մինաս Փերվազյանի, Ղազար Ջահկեցու և մի շարք այլ գործիչների այդպիսի պահվածքը):

Հայ գործիչները նույնանման մտահոգություններով են առաջնորդվել նաև ավելի վաղ և ավելի ուշ շրջանում: Միքայել Զամչյանն, օրինակ, 1783 թ. ապրիլի 26-ին գրում էր եղբորը.

«...ազգ մեր յայնպիսի վիճակի է այժմ, զորմէ բազում զգուշութեամբ պարտ է գրել, հայելով ի բազում պարագայս, զի մի՛ փոխանակ օգտի՝ այլոյ առիթ տացի»[13]:

Պատմաբաններից ոմանք հպանցիկ նկատել են այս երևույթը: Հ. Անասյանը, խոսելով 1660-1670-ական թթ. հայ բարձրաստի-

ճան կղերի ազատագրական նկրտումների մասին նկատում էր. «Եղի-ազարի գործունեության այս մասը քողարկված է թանձր մշուշով, և չէր էլ կարող քողարկված չլինել, քանի որ կապված էր հայոց ազա-տագրության խնդրի հետ, որը քաղաքական խնդիր էր: Այս նույն պատճառով արդեն Խաչատուր Գաղատացու գործունեության ներ-քին ծալքերի մասին էլ բացարձակապես ոչինչ չենք գտնում հայկա-կան աղբյուրներում»[14]:

Մ. Օրմանյանը, անդրադառնալով Աբրահամ Կրետացի կա-թողիկոսի (1734-1737)՝ Սյունիքի և Արցախի միջով կատարած ուղևորությանը և այդ մասին նրա արած գրառումներին, նշում է. «Իրավ յուր ժամանակը արդեն ջնջված էր հայկական շարժումը, բայց կերևի թե հիշատակն ալ կորած էր, կամ թե հիշելն ալ վտանգավոր էր, որ Կրետացին Մուղանի ուղևորության մեջ հայկական պատե-րազմներուն ասպարեզ եղող ձորերեն ու դաշտերեն ալ անցնելով, բնավ անոնց մասին միտք չդարձներ»[15]: Անշուշտ, ճիշտն Օրմանյանի երկրորդ ենթադրությունն է, որովհետև 1720-ականների հայոց ազա-տամարտի հիշողությունը չկորավ երբեք ու առավել ևս կորած լինել չէր կարող 1730-ականների կեսին:

1760-1770-ական թթ. հայ ազատագրական շարժման երևելի գործիչ Հովսեփ Էմինի հուշերը մանրազնին քննելով, Ա. Ռ. Հովհան-նիսյանն էլ նման մի դիտողություն է անում, գրելով. «Այս բոլոր իրադարձությունների մասին Էմինը խոսում է շատ զուսպ, հավանա-բար, վախենալով վարկաբեկել խառնված անձերին»[16]:

Խնդրո առարկա հարցերի ուսումնասիրությունն ավելի է դժվարանում՝ մեզ հասած սկզբնաղբյուրների տարանջատ-վածության, հատվածականության, բազմալեզու և տարատեսակ լինելու պատճառով: Այդ նյութերից են այլազան վավերագրերը, նե-րառյալ՝ գաղտնի նամակագրությունը, որտեղ բանեցված է երկի-մաստ կամ նույնիսկ ծածկագրված լեզու, երբեմն էլ՝ միտումնավոր ապատեղեկատվություն: Կարևորվում են նաև ցաք ու ցրիվ (հաճախ՝ հակասական) դրվագային տեղեկությունները, որոնք պահպանվել են եվրոպացի, ռուս, պարսիկ, օսմանցի, հայ և վրացի ժամանակակից հեղինակների երկերում, հուշերում, դիվանագիտական, ռազմական ու հետախուզական զեկուցագրերում:

Բացառիկ հավաստիությամբ աչքի են ընկնում դիվանական

փաստաթղթերը: Հայ եկեղեցու և բարձրաստիճան հոգևորականության անմիջական մասնակցությունը հայ ազատագրական շարժման ընդհատակյա գործունեությանը հնարավոր դարձավ որոշ չափով լուսաբանել ռուսական և եվրոպական դիվաններից քաղված նյութերի մի շարք ժողովածուների հրապարակումից հետո միայն[17]: Ավելին՝ նույն վավերագրերը հաճախ միակ աղբյուրն են, որ ընդմիշտ անհայտությունից փրկում են 1720-ական թթ. հայոց հուժկու ազատամարտի բազմաթիվ փառավոր էջերը:

Եթե հրապարակված ժողովածուներն արդեն իսկ արժանացել են պատմաբանների ուշադրությանը (թեև անելիքները դեռ շատ են), ապա նույնը չի կարելի ասել Սիոն *հանդեսում հրապարակված՝ Ս. Հակոբյանց վանքի դիվանական հարուստ նյութերի մասին, որոնք մնացել են «հում»՝ չուսումնասիրված վիճակում ու դեռ նոր-նոր պետք է հետազոտվեն: Այս նյութերը վերաբերում են հիմնականում Երուսաղեմի հայոց պատրիարքությանը, սակայն լույս են սփռում նաև Հայաստանյայց եկեղեցու պատմության մի շարք կարևոր հարցերի վրա:*

Ուշադրավ են Վենետիկի Ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության դիվանից քաղված որոշ նյութերը (նամականի, հուշագրություններ, ինքնակենսագրություններ), որոնք վերջին տարիներին տպագրվել են ինչպես Բազմավէպ *հանդեսի, այնպես էլ առանձին ժողովածուների և մենագրությունների մեջ:*

Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի և Ս. Ղազարի մատենադարանների նորերս լույս տեսած ձեռագրացուցակներում հրապարակվել են նաև մինչև այժմ անհայտ հիշատակարաններ[18]:

Հատուկ նշենք, որ մեր քննության հիմնական հատվածը հենվում է փոխկապակցված մի շարք հետազոտությունների վրա, որոնք ընդգրկված են սույն գրքի հավելվածների բաժնում (այս առումով հատկապես կարևոր է Հավելված Ա ուսումնասիրությունը):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ասվածն, իհարկե, չի նշանակում, թե մեզանում անհրաժեշտ է միապետություն հաստատել կամ վերադառնալ հին կացութաձևերին և օրենսդրությանը: Ամենևի՛ն: Խոսքը վերաբերում է ընդամենը հայկական աշխարհընկալ-

ման, ազգային բնավորության և ավանդական վարքաբարքի հիման վրա կառուցվելիք ներհասարակական հարաբերություններին և պետական մեխանիզմներին:

[2] Հայ եկեղեցու պատմությունը Հայաստանի ընդհանուր պատմության անբաժան մասն է: Այն ծրագրված ու հետևողական ուսումնասիրության կարիք ունի: Ուստի Հայ եկեղեցու պատմությունն ուսումնասիրող պատմագիտահետազոտական առանձին կենտրոնի հիմնումն ու այլևս անխափան աշխատանքը հասունացած անհրաժեշտություն են:

[3] Տե՛ս աստ, *Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ*:

[4] Բացառությունների մեջ պետք է հիշատակել երեք սկզբնաղբյուր. ա) 1730-ական թթ. Վենետիկում՝ 1720-ականների Սյունյաց ազատամարտին մասնակից գործիչների բերանից Ղուկաս Սեբաստացու գրի առած ու խմբագրած պատմությունը (տե՛ս *Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուոց»*: Աշխատասիրեց Սամուէլ Արամեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1978). բ) Աբրահամ Երևանցու *Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի՝* 1730-1740-ականներին շարադրած գործը (Վենետիկ-Ս. Ղազար, 1977). և գ) Եսայի Հասան-Ջալալեանի 1722-1727 թթ. միջև հեղինակած *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի* երկը (Երուսաղէմ, 1868):

[5] **Г. А. Эзов**, *Сношения Петра Великого с армянским народом. Документы, извлеченные из Московского главного и С.-Петербургского архивов Министерства Иностранных Дел, ... и других учреждений* (СПб.: Типография Импер. АН, 1898), с. XXXVII.

[6] Այվազը հայ կապավոր էր, ռուսական ծառայության մեջ հայտնի էր Սիմեոն Ռոմանով անունով (տե՛ս АРО, II, с. 342, прим. 87):

[7] Տե՛ս АРО, I, док. 155, с. 371-372:

[8] 1721 թ. ապրիլի 5-ին Մինաս վարդապետին ուղղած իր նամակում՝ Եսային էլ մեկ անգամ շեշտում էր այս խնդիրը. «Բայց զայս պնդագոյն պատուիր սիրելոյդ որ յետ եւ յառաջ իմ ամենայն թուղթք որ այսմ խորհրդոյ առ քեզ եւ այդր գրեալ եմ, պիտի որ թէ ի կենդանութեան քում, կամ թէ զկնի մահուան, եւ մեր ազնեաց ոչ ոքաց ձեռն չանկանի, որ մեծ վնաս կուհասանի սուրբ աթոռոյս եւ մեզ, լաւ իմացիս զայս եւ հոգացիս եւ զգուշացիս վասն ապագային, զի մի հասցեն մեզ պատիժք եւ դու լիցիս պատճառ այսպիսի իրաց» (АРО, I, док. 162, с. 384):

[9] АРО, III, док 97, с. 132.

[10] **Ստ. Ռօշքայ**, *Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք* (Վիեննա, 1964), էջ 190:

[11] «Իսրայէլ Օրին, Պերօշ իշխանի որդին, ընդ իւր բերեալ զՄինաս վարդապետն Խարբերդցի, եկն ի Հռոմ եւ մատոյց Իննոչ. ԺԲ-ին զթուղթն ի տասն

Մայիսի Մելիքաց Հայոց գրեալ յԸնկեղակութ յամի 1699 Ապրիլի 19». - նույն տեղում:

[12] Տե՛ս **Ստ. Ռօշքայ**, *Ժամանակագրութիւն...*, էջ 190. Մինաս Ամդեցու 1699 թ. դեկտեմբերի 11-ի նամակի ամբողջական հրապարակումը տե՛ս **Կարապետ Ամատունի**, «Մինաս վրդ. Ամդեցի, Պատրիարք Երուսաղէմի (1630-1704 նոյմբ. 24)». - *Յանդէս Ամսօրեայ*, 1983, էջ 79-82:

[13] **Սահակ Ճեմճեմեան**, *Հ. Միքայէլ Զամչեան եւ իր Հայոց պատմութիւնը* (Վենետիկ-Ս. Ղազար, 1983), էջ 22:

[14] **Հ. Ս. Անասյան**. *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում* (Երևան, 1961), էջ 256:

[15] ԱԶԳ, սյուն. 1989, էջ 2911:

[16] **А. Р. Иоаннисян**, *Иосиф Эмин* (Ереван: Изд. ЕГУ, 1945), с. 285.

[17] Տե՛ս **Г. А. Эзов**, Сношения Петра Великого с армянским народом..., ук. соч. 1898. *Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века.* Сборник документов, Т. II, часть I. Под редакцией Аш. Иоаннисяна (Ереван, 1964), Том II, часть II. Под редакцией Аш. Иоаннисяна (Ереван, 1967). *Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века.* Сборник документов. Том III. Под редакцией В.К. Восканяна (Ереван, 1978).

[18] Ցանկանում ենք հատուկ ընդգծել, որ հայագիտության այս երկու օջախներում վերջին տասնամյակներում կատարված աշխատանքի համար պարտական ենք նախ և առաջ երջանկահիշատակ Նորայր արքեպս. Պողարյանին և Աբբահայր Սահակ Ճեմճեմյանին:

ԳԼՈՒԽ Ա.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ՝ ԲՋՆԻԻ, ՀԱՂԲԱՏԻ, Ս. ԹԱԴԵՈՍԻ ԵՎ ՏԱԹԵՎԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՆՈՆԸ

(առաջացման ժամանակն ու հանգամանքները)

Խոսելով 1114 թ. Կիլիկիայում՝ «ի Սեաւ Լեառն» գումարված եկեղեցական մեծ ժողովի մասին, որտեղ քննության էին դրված նաև Աղթամարի կաթողիկոսության իրավասությունները, Միքայել Ջամ-չյանն, իմիջիայլոց, գրում էր.

> Եւ թուի թէ յայս ժողով սահմանեցաւ այն կանոն, զի յընտրութեան կաթողիկոսի լիցի միաձայն հաւանութիւն չորից գլ-խաւոր Աթոռոց արքեպիսկոպոսաց՝ որ ի Մեծն Հայս[1], այսինքն են՝ Բջնոյ, Հաղբատայ, Թադէոսի վանաց, որ յԱրտազ, եւ Ստեփեւու կամ Տաթեւու. եւ եղաւ վճիռ՝ զի առանց հաւանութեան սոցա ան-վաւեր լիցի ընտրութիւնն[2]:

Հետագայում այս տեղեկությունը ձեռք բերեց պատմական ստույգ փաստի համարում, քանի որ այն վկայակոչել են բազմաթիւ հայագետներ՝ Ղ. Ինճիճյանը, Մ. Մսերյանցը, Ղ. Ալիշանը, Վ. Մանկունին, Կ. Կոստանյանցը, Մ. Պոտուրյանը, Մ. Օրմանյանը, Բ. Կյուլեսերյանը, Մ. Հասրաթյանը, Լ. Խաչիկյանը[3]:

Թվարկված հեղինակներից մասնակի վերապահություն էին կատարել միայն Ղ. Ալիշանն ու Լ. Խաչիկյանը: 1873 թ. Ալիշանը նկատում էր, որ «ինչպես անտարակույս չէ այս ժողովիս մեջ կանոնվիլն, նույնպես ալ տարակուսելի է, թե հաջորդ կաթողիկոս ընտրու-

թյանց մեջ պահվա՞ծ է միշտ կանոնն թե ոչ»[4]: Քսան տարի անց, դարձյալ անդրադառնալով նույն հարցին, Ալիշանն արդեն վերագրում էր կանոնը XIII դարին կամ նույնիսկ ավելի ուշ շրջանի. «Յայնմ (13) դարու կամ զկնի երեւին հաստատեալ օրէնքն չՃեռնադրելոյ կաթողիկոս Հայոց՝ առանց հաւանութեան կամ ներկայութեան չորից գլխաւոր եպիսկոպոսական աթոռոց ժամանակին, յորոց մին էր Սիւնեացն»[5]:

Իսկ Լ. Խաչիկյանն իրավամբ պնդում էր, որ 1114 թ. նման կանոնակարգ չէր կարող ընդունվել.

> Այդ տարածված կարծիքը հիմնազուրկ է ու սխալ. 1114 թ. Արտազի աթոռ գոյություն չի ունեցել, իսկ Բջնին, XII դարում Հայոց եկեղեցու նվիրապետության առումով, աննշան մի վայր է եղել... Կաթողիկոսական ընտրության վերոհիշյալ կարգը, մեծ հավանականությամբ, հաստատվել է հենց 1293 թ. խնդրո առարկա ժողովում, որը գումարվել էր Հռոմկլայի անկումից հետո՝ կաթողիկոսական աթոռի համար նոր նստավայր որոշելու և նոր կաթողիկոսի ընտրությունը նախապատրաստելու նպատակով: Այս թյուրիմացությունը, ըստ երևոյթին, ծագել է Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին Գրիգոր Գ. Պահլավունի (Փոքր վկայասեր) կաթողիկոսի (1113-1166) հետ շփոթելու հետևանքով[6]:

Զամչյանի տեղեկությունն ամբողջովին մերժել է միայն մխիթարյան միաբան Վարդան Հացունին.

> Մեր նախնյաց մատենագրության մեջ գոյություն չունի, և անգիր ավանդություն կամ լոկ թվիք մը էր անշուշտ այն «կանոնը», որ Զամչյանին «թվէր» սահմանված 1114ին զաղթամարցիս բանադրող ժողովեն, - և զոր կրկնեցին Ինճիճյան, Հ. Ալիշան, Մսերյանց և այլք և.... Այսպիսի վճիռ չէ տրված երբեք. ինչպես ճրի էր Օրբելյանի պահանջն ալ՝ թե «առանց սոցա (այսինքն եպիսկոպոսաց Սյունյաց - Վ. Հ.) ոչ Ճեռնադրի պատրիարք Հայոց, եւ ոչ լինի ժողով [ընտրութեան], այլ գլուխ եւ հրամանատար ժողովս սոքա լինին»[7]: Պատմչիս օրով իսկ և առանց յուր ներկայության - մանավանդ մին յուր կամաց հակառակ - ընտրվեցան Ստեփանոս Դ ու Գրիգոր Անավարզեցին, և ընտրությունը հավասարապես հաջող ու վավերական եղավ[8]:

Նախ՝ անդրադառնանք Լ. Խաչիկյանի առաջադրած ժամանակագրական սրբագրությանը: Եթե խնդրո առարկա ընտրակարգն իրոք հաստատված լիներ Կիլիկիայում 1293 թ. կայացած ժողովում, ապա այս մասին անպայման հանգամանորեն կհաղորդեր Ստեփանոս Օրբելյանը՝ 1297 թ. ավարտին հասցրած[9] իր «Սյունիքի պատմության» մեջ: Տաթևի գիտնական առաջնորդը պարզապես չէր կարող շրջանցել այդօրինակ ծանրակշիռ մի որոշում, որն իբր մի աննախադեպ պատվաբեր լիազորություն էր դնում անձամբ իր ու իր փառաբանած Աթոռի հաջորդ գահակալների վրա: Այսպես պիտի լիներ նաև այն պատճառով, որ նույն ժողովի ժամանակ կաթողիկոս ընտրված Գրիգոր Անավարզեցին (1293-1307) նախ և առաջ իրեն էր տեղյակ պահում եկեղեցական-քաղաքական այլևայլ կարևոր խնդիրների մասին. «...մեր հայերուն Արեւելցւոյ մեծերուն զիրքս գիտացուցեալ եմք եւ կեցուցեալ: Առաջինն Օրպելին, որ է Սիւնեաց արհիեպիսկոպոս... ցուցաք զգիրքսն եւ հաստատեցաք այս տարի (իմա 1294 թ.՝ Ա.Ա.)...»[10]: Այսուհանդերձ, Ստ. Օրբելյանն իր երկում ոչինչ է ասում այդ կանոնի մասին, իսկ կաթողիկոսի ձեռնադրության ժամանակ Սյունյաց աթոռակալի «հրամանատարության» վերաբերյալ նրա պնդումը՝ կարճ, բայց և սպառիչ կերպով հերքում է Վ. Հացունին (տե՛ս վերը):

Ավելին, 1293-ի ժողովը, անցնելով ամբողջ հայությունը կաթոլիկացնելու մարմաջով բռնված Հեթում Բ թագավորի (1289-1294, 1295-1296, 1299-1307) թելադրանքով, կաթողիկոս էր ձեռնադրել լատինամետ կուսակցության պարագլուխ Գրիգոր Անավարզեցուն[11]: Հետևաբար, այն չէր կարող միաժամանակ հայ նվիրապետության գլխավոր իրավասությունը՝ կաթողիկոս ընտրելու մանդատը, ընդմիշտ շնորհել հայադավանությանը կառչած և հայոց լատինամետ թագավորի վարչական հսկողության սահմաններից դուրս գտնվող արևելյան չորս հեռավոր աթոռներին[12]:

Այսպիսով, Լ. Խաչիկյանի սրբագրումը ևս ընդունելի չէ: Սակայն, հաստատելուց կամ հերքելուց առաջ Վ. Հացունու պնդումը՝ այն է, թե բացի Զամչյանից, «մեր նախնյաց մատենագրության մեջ գոյություն չունի» այդպիսի կանոնի մասին որևէ այլ տեղեկություն, անհրաժեշտ է պատասխանել ևս մի քանի հարցի. ի՞նչ հիմքեր է ունեցել Զամչյանը նմանօրինակ պատասխանատու հայտարարություն

անելու համար: Արդյո՞ք եղել է մի սկզբնաղբյուր, որից նա քաղել է իր տեղեկությունը, և, եթե եղել է, որքանո՞վ է ա՛յն արժանահավատ:

Խնդիրը հետազոտողները չեն նկատել, որ Զամչյանից հինգ տասնամյակ առաջ նույն հաղորդումով հանդես էր եկել հայ նշանավոր աստվածաբան, բանաստեղծ ու եկեղեցական գործիչ, 1737-ից մինչև 1751 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս պաշտոնավարած Ղազար Ջահկեցին: 1733 թ. Կ. Պոլսում լույս տեսած իր Դրախտ ցանկալի *կարևոր աշխատության մեջ*[13]*, հայոց հայրապետների գավազանագիրքը ներկայացնող բաժնում (էջ 577-611) խոսելով Վահան Ա. Սյունեցի կաթողիկոսի (968-969) գահընկեցության մասին՝ Ղազար Ջահկեցին անում է հետևյալ գրառումը (ստորև այն և Զամչյանի հաղորդումը ներկայացնում ենք զուգահեռաբար).*

«Տէր Վահան՝ ամս ա (1): Սա աղանդաւորելով զգայլենիսն գառնենեաւ թաքուցեալ ընդ աղօտիմն տեսութեամբ, այլ յորժամ ծայրացեալ եղեւ փառաւոր իշխանութեամբ, յայնժամ արծարծմամբ հրատարակեաց զաղանդն հերձուածողութեան: Յաղագս որոյ ժողովեալ *չորից* ամբոռակալաց, *այսինքն*՝ Տաթեւու վանից, եւ Թադէոսի առաքելոյն, եւ Ախպատու, եւ Բջնւոյ՝ արտաքսեցին զնա յԱթոռոյն: Քանզի նախկնական կարգ մեր այս է. որ այն *չորիցն* բանիւք եւ *հաւանութեամբ* նստցին կաթողիկոսունք եւ ի նոցանէ օծցին: Եւ եթէ ոչ գնասցեն ըստ հայրենական աւանդութեանց եւ քաղաքաւարութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ, արտաքսեսցին հրամանաւ նոցունց, վասնզի նոքա են պատժողք եւ ո՛չ այլոք: Յաղագս որոյ ընկեցիկ լեալ ի նոցունց անտի...»[14]:

«Եւ թուի թէ յայս ժողով սահմանեցաւ այն կանոն, զի յընտրութեան կաթողիկոսի լիցի միաձայն *հաւանութիւն չորից* գլխաւոր Աթոռոց արքեպիսկոպոսաց՝ որ ի Մեծն Հայս, *այսինքն* են՝ Բջնոյ, Հաղբատայ, Թադէոսի վանաց, որ յԱրտազ, եւ Ստաթեւու կամ Տաթեւու. եւ եդաւ վճիռ՝ զի առանց *հաւանութեան* սոցա անվաւեր լիցի ընտրութիւնն»[15]

(ընդգծումն՝ *Ա.Ա.*):

Այս երկու հաղորդումների կառուցվածքային ու նաև բառային հարազատությունն անմիջապես մատնում է մեկի ծագումը մյուսից. Զամչյանը, մասնավորապես, գլխիվայր է շրջել Աթոռների հերթականությունը և համառոտել է մի քանի նախադասություն: Վստահելով Ղազար Ջահկեցու հեղինակությանն ու բանիմացությանը, գուցե նաև ունենալով լրացուցիչ այլ տեղեկություններ՝ Զամչյանը հավաստի է համարել չորս Աթոռների մասին այս հաղորդումը: Միևնույն ժամանակ, սակայն, Զամչյանն իրավացիորեն անստույգ է նկատել այս «նախկնական կարգի» առաջ գալը IV-IX դարերում, ու նաև X դարում, երբ, ըստ Ղ. Ջահկեցու, այն իբր արդեն գործի էր դրվել: Ուստի, կասկածելով Ղ. Ջահկեցուն ժամանակագրության հարցում սխալվելու մեջ՝ Զամչյանը վերագրել է կանոնի ծնունդը իրեն ամենահավանական թված պատմական պահին (այստեղից էլ նրա «թուի թէ» դարձվածը): Ղազար Ջահկեցուն այսպես սրբագրելով, Զամչյանն առաջնորդվել է իր բազմիցս կիրառած տրամաբանական-կիսակամայական եզրահանգման նույն այն խմբագրական եղանակով, որ մենք ժամանակին սահմանել էինք նրա մեկ այլ սկզբնաղբյուրը քննելիս[16]:

Համենայն դեպս, մեր հերթին ստուգելով Ղ. Ջահկեցու հաղորդումը, համոզվեցինք, որ սկզբնաղբյուրները լռում են Վահան Սյունեցու գահընկեցության գործում չորս Աթոռների՝ իբր վճռորոշ դեր խաղացած լինելու մասին[17]: Ավելին, Ասողիկը հականե-հանվանե հիշում է Վահան Ա-ին աթոռազրկած՝ 969 թ. Անիի եկեղեցական ժողովի ամենաազդեցիկ մասնակիցներին. «Տէր Խաչիկ Արշարունեաց եպիսկոպոս եւ հայր Պողիկարպոս՝ առաջնորդ Կամրջաձորոյ, եւ հայրն Սարգիս Հոռոմոսի վանաց վանական եւ հայր Ստեփանոս Սեւանայ վանաց վանական, եւ այլ եպիսկոպոսունք եւ հարք բազումք»[18]: Ինչպես տեսնում ենք, հանվանե հիշված, այսինքն՝ իրենց դիրքով կամ գործունեությամբ աչքի ընկած չորս գործիչներից երեքը Շիրակ նահանգից էին, որտեղ էր նաև կաթողիկոսանիստ Արգինան և ամենակարևորը՝ արքայանիստ Անին: Ժողովին Շիրակի հոգևորականների ցուցաբերած այսպիսի ակտիվությունը խոսում է հոգուտ Մ. Օրմանյանի այն ենթադրության, ըստ որի Վահան կաթողիկոսի գահընկեցությունը պայմանավորված էր ինչ-ինչ պատճառներով ծագած «հակառակությամբ»՝ նրա և Անիում նստող

Բագրատունի թագավոր Աշոտ Ողորմածի միջև[19]: Բացի այդ, նոր կաթողիկոս ընտրված Ստեփանոս վանականը ևս չէր ներկայացնում Ղազար Ջահկեցու մատնանշած չորս կենտրոններից որևէ մեկը, մանավանդ, որ 969 թ. Բջնիի, Արտազի և Հաղբատի եպիսկոպոսություններ պարզապես չեն եղել[20]:

Ինչևէ, պարզ է, որ Տաթևի, Ս. Թադեի, Հաղբատի և Բջնիի գերիրավասությունների մասին Ղազար Ջահկեցու հաղորդումը չի համապատասխանում IV-XIV դարերի իրականություններին և սկզբնաղբյուրների տվյալներին: Շեշտենք, որ այս կանոնն անհայտ էր նաև հայոց դատաստանագրքերի հեղինակներին[21]: Այս կարգի սահմանումը, թերևս, կարող էր առավել ճշմարտանման դիտվել Ամենայն Հայոց կաթողիկոսարանը Ս. Էջմիածին տեղափոխելու՝ 1441 թ. Վաղարշապատում գումարված ժողովի կապակցությամբ, սակայն, Թովմա Մեծոփեցու և այլոց հաղորդումներում այդ մասին որևէ խոսքի բացակայությունն ի չիք է դարձնում նաև այս հավանականությունը: Ինչպես ցույց կտանք սույն ուսումնասիրության Հավելված Ա-ում, XVII դարում Հայոց կաթողիկոսական ընտրությունները հատուկ քննության առարկա դարձրած հայ հոգևորական երևելի գործիչները նույնպես անտեղյակ էին այսպիսի կանոնի գոյությանը[22]:

Բայց ահա նույն կանոնի մասին հստակ տեղեկություն ենք գտնում նաև Սիմեոն Երևանցու Ջամբռ-ում.

> «Եւ ի մէջ սոցին (խօսքը վերաբերում է Մայր Աթոռին ենթակայ վիճակների առաջնորդներին՝ *Ա.Ա.*) նախապատիւ եւ գերյարգելի զկնի կաթուղիկոսին՝ էին եւ են, որպէս պատրիարգ, չորից սրբոց եւ հռչակաւոր վանից առաջնորդքն, այսինքն. սրբոյն Թադէոսի առաքելոյ վանիցն՝ որ ի յԱրտազ գաւառի, սրբոյն Ստաթէի՝ որ ի Սիւնիս, սրբոյն Աստուածածնի վանիցն՝ որ ի Բջնի, եւ սրբոյն Նշանի վանիցն՝ որ ի Հաղբաթ. որք են իբր աթոռակալք եւ տեղապահք կաթուղիկոսին, որոյ եւ ի յընտրութեանն պարտին ներկայ գտանել եւ յօծմանն նախապէս զձեռն դնել ի գագաթ կաթուղիկոսին»[23]:

Արդ, Ջամբռ-ը միակ օրինակով գրվել է 1765 թ. Էջմիածնում՝ Սիմեոն կաթողիկոսի (1763-1780) ձեռքով՝[24] նախատեսված լինելով միմիայն Մայր Աթոռի ներքին օգտագործման համար՝ «ի յօգուտ նոյնակերտի Աթոռոյս, ի յենարան եւ ի հեշտութիւն ի սմա նստող հայ-

բապետաց, գործակալաց եւ համայն հարազատից պաշտօնէից սո-ւին»[25]: Այս մատյանի հետագա ճակատագիրը դեռևս պարզ չէ. ընդ-օրինակություններ հայտնի չեն, իսկ 1873 թ. հրատարակության առաջաբանում սոսկ ասված է, թե՝ «ոչ բազումք ամք էին յորմէ հե-տէ ազատեցաւ սա ի գերութենէ»[26]: Ամեն ինչից դատելով՝ Սիմեոն կաթողիկոսի այս հաղորդումը Զամչյանին անծանոթ է մնացել: Այն (ինչպես և Ղազար Ջահկեցու հաղորդումը) վրիպել է նաև չորս Աթոռների իրավասությունների խնդիրն արծարծած հետագա բոլոր հեղինակների ուշադրությունից: Այս տեղեկությամբ վերջնականա-պես ժխտվում է Վ. Հացունու կասկածամտությունը, քանզի Սիմեոն կաթողիկոսը հաստատում է կանոնի հավաստիությունն ու կիրառու-մը իր իսկ գահակալության օրոք:

Ավելին, մեզ հաջողվեց հայտնաբերել նույն կանոնի մասին մի լրացուցիչ արժեքավոր հաղորդում ևս: Հայ եկեղեցու բարձրաս-տիճան գործիչ՝ Մինաս վրդ. Փերվազյանը (1680-1757)[27], իր անտիպ ինքնակենսագրությունում, հետևյալ մանրամասնություններն է հայտնում 1726 թ. փետրվարին Կ. Պոլսում տեղի ունեցած կաթողի-կոսական ընտրությունների մասին.

> «...ահա եհաս առ իս թուղթ ի Կոստանդնուպօլսոյ՝ գրեալ ի պատրիարգէ եւ ի մեծամեծաց հայոց, յորում փութացուցանէին զիս հասանել ի Կոստանդնուպօլիս՝ յնտրել զկաթուղիկոս: Զայս ծանուցեալ իմ, գնացի ի Կոստանդնուպօլիս: Եւ իբրեւ կամէին տալ ինձ զկաթուղիկոսութիւն[28], հրաժարեալ ի նոցանէ, գնացի ի Եալո-վայն: Եւ նոքա ժողովեալ ընտրեցին կաթուղիկոս զԿարապետ վար-դապետն զառաջնորդն Գաղատիոյ: Յայս ժողով կոչեցին եւ զիս ստիպմամբ: Բայց ես ոչ ժամանեցի յընտրութիւնն, այլ միայն ի հանդէսն ընտրութեան, զոր կատարէին յեկեղեցւոջն, ընդ որ եւ ես հաճէի: Քանզի ընտրութիւն կաթուղիկոսին, ըստ օրինաց եւ վճ-ռոց հայոց, պարտ է լինիլ յարքեպիսկոպոսէ վանացն Թադէի առաք-ելոյն, Հաղբատու, Տաթեւու եւ Պչնոյ, զորոյ զհակառակն արարին եւ առնեն ի Կոստանդնուպօլիս: Ուստի՝ իբր զապօրինաւոր ինչ, ոչ կամեցայ մտանել ի ժողովս նոցայ»[29]:

Այսպիսով, Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությանը՝ Բջ-նիի, Հաղբատի, Ս. Թադեոսի և Տաթևի վանահայր-առաջնորդների հավանություն տալու կանոնը պատմականորեն ստույգ է, սակայն

այդ մասին բոլոր սկզբնաղբյուրները պատկանում են XVIII դարին[30]*: Ստորև հետևողականորեն ճշտելու ենք կանոնի առաջացման ժամանակը, հանգամանքները, ինչպես և ամենահետաքրքիրը՝ թե ի՞նչու է Ղազար Ջահկեցին կանոնի սահմանումը միտումնավոր կարգով փոխադրել խորը միջնադար:*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] XVII-XVIII դարերում հայ հեղինակները հաճախ Մեծ Հայքի տակ հասկանում էին Պարսկահայաստանը, իսկ Փոքր Հայքի տակ՝ Տաճկահայաստանը: Սրա շատ հստակ մի օրինակ է տալիս Զամչյանը՝ անդրադառնալով 1664 թ. Կ. Պոլսի հայկական համայնքում տեղի ունեցած դեպքերին. «ի Կոստանդինուպօլիս յերկուս պառակտեցան ժողովուրդք. կէսք ի կողմն Էջմիածնի էին, մանաւանդ նոքա՝ որք եկեալ էին ի քաղաք անդր յաչխարհէ Մեծին Հայոց եւ Պարսից, որք եւ կոչէին արեւելցիք. եւ կէսք՝ մանաւանդ թէ յոլովք՝ ի կողմն Եղիազարու, եւ սոքա էին բնակք քաղաքին՝ ժողովեալ անդր ի սահմանաց Փոքուն Հայոց եւ Հոռոմստանու, եւ կոչէին հոռմցիք». - ԶԱՄ, Գ, էջ 700-701:

[2] ԶԱՄ, Գ, էջ 37. հմմտ. էջ 486-487:

[3] Տե՛ս **Ղուկաս վ. Ինճիճեան**, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի:* Հ. Գ (Վենետիկ, 1835), էջ 254-255: **Ղեւոնդ Ալիշան**, *Շնորհալի եւ պարագայ իւր* (Վենետիկ-Ս. Ղազար, 1873), էջ 57: **Վահրամ վրդ. Մանկունի**, «Կրօնական պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք». - *Արարատ*, 1874, էջ 121, 197-198: **Կարապետ Կոստանեանց** (հրատարակիչ), *Թովմա Մեծոփեցու յիշատակարանը* (Թիֆլիզ, 1892),էջ 39: **Մկրտիչ Պոտուրեան**, «Հայ կաթողիկոսութիւն». - *Բազմավէպ*, 1902, էջ 556: ԱԶԳ, սյուն. 930, 1453: **Բաբգէն Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, 1441-էն մինչեւ մեր օրերը* (Անթիլիաս, 1939), սյուն. 1210: **Մ. Հասրաթյան**, «Բջնի». - *Հայկական սովետական հանրագիտարան*: Հ. Բ (Երևան, 1976), էջ 536: **Լևոն Խաչիկյան**, «Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը». - *Բանբեր Մատենադարանի*, 1973, No. 11, էջ 136, ծնթ. 27: Այս հարցն առհասարակ չի արծարծված **Գրիգոր վրդ. Մագուստյանի՝** *Ընտրեալդ յԱստուծոյ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնը* (Երևան. «Նաիրի», 1995) գրքում ամբողջովին կոմպիլյատիվ աշխատության մեջ:

[4] **Ղ. Ալիշան**, *Շնորհալի եւ պարագայ իւր*, էջ 57:

[5] **Ղ. Ալիշան**, *Սիսական* (Վենետիկ-Ս. Ղազար, 1893), էջ 19:

[6] **Լ. Խաչիկյան**, «Արտազի հայկական իշխանությունը», էջ 136, ծնթ. 27: Կիլիկիայում հավաքված 1293 թ. ժողովի մասին տե՛ս նույն տեղում, էջ 135-137. ԱՀԳ, այուն. 1196-1197:

[7] Տե՛ս *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի «Պատմութիւն Տանն Սիսական»:* Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին (Մոսկուա, 1861), էջ 18. հմմտ. *«Պատմութիւն նահանգին Սիսական»*՝ արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց (Թիֆլիզ, 1910), էջ 27:

[8] Տե՛ս **Վարդան վ. Հացունի**, *Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ* (Վենետիկ-Ս. Ղազար, 1930), էջ 53-54:

[9] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, «Սյունիքի պատմություն»: Թարգմ., ներած. և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Աբրահամյանի (Երևան, 1986), էջ 58, 540 (ծնթ. 1647, 1648):

[10] Տե՛ս **Կղեմէս Գալանոս**, *Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ*: Հ. Ա (Հռոմ, 1650), էջ 441. հմմտ. **Լ. Խաչիկյան**. «Արտազի հայկական իշխանությունը», էջ 138:

[11] «...առնէ ժողով թագաւորն Հեթում եւ տայ ձեռնադրել կաթողիկոս Հայոց զՏէր Գրիգոր՝ Անաւարզայ եպիսկոպոս...» (տե՛ս **Ստ. Օրբելեան**, *Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 446): Օրմանյանը նրբանկատորեն նշում է, որ Օրբելյանի այս ձևակերպումը «կցուցնե, թե եպիսկոպոսներու ժողովը եղած է ոչ թե ընտրելու, այլ ձեռնադրություն կատարելու համար» (ԱՀԳ, այուն. 1196):

[12] 1290-ականների դրությամբ, այս չորս աթոռների գահակալներից միակ լատինասերը՝ Արտազի Տիրացու եպիսկոպոսն էր (նրա մասին տե՛ս **Լ. Խաչիկյան**, «Արտազի հայկական իշխանությունը», էջ 136-139):

[13] *Դրախտ ցանկալի*-ի հրատարակության թվականը ճշտված է ստորև, Գլուխ Է:

[14] *Դրախտ ցանկալի*, էջ 593:

[15] ՁԱՄ, Գ, էջ 37:

[16] Տե՛ս **Ա. Մ. Այվազյան**, «1720-ական թթ. Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից (սկզբնաղբյուրների համադրման փորձ)». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1990, No. 2, էջ 125-128:

[17] Տե՛ս **Սամուէլ Անեցի**, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց:* Հրտ. Արշակ Տէր-Միքելեանի (Վաղարշապատ, 1893), էջ 100-101: **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց:* Աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի (Երևան, 1961), էջ 87: **Ստեփանոս Տարոնացի (Ասողիկ)**, *Պատմութիւն տիեզերական* (Ս. Պետերբուրգ, 1885), էջ 181-182: **Վարդան վ. Արեւելցի**, *Հաւաքումն պատմութեան:* Աշխատասիրությամբ՝ Ղ. Ալիշանի (Վենետիկ-Ս. Ղազար, 1862), էջ 89:

[18] **Ստեփանոս Տարոնացի (Ասողիկ)**, *Պատմութիւն տիեզերական*, էջ 181:
[19] Տե՛ս ԱՀԳ, սյուն. 970:
[20] Հաղբատի վանքը հիմնադրվել էր միայն 976 թ. (տե՛ս **Կարո Ղաֆադարյան**, *Հաղբատ:* Երևան, 1975, էջ 10-13):
[21] Հմմտ. **Մխիթար Գոշ**, *Գիրք դատաստանի:* Աշխատասիրությամբ՝ Խ. Թորոսյանի. Երևան, 1975, էջ 141, 404 (այստեղ ասված է միայն, որ կաթողիկոսը կարող է կարգալույծ արվել «կամ ի կաթողիկոսէ, կամ յիւրոց ձեռնադրողաց եպիսկոպոսաց»): *Sempadschfr kodex,* herausgegeben und ubersetst von Josef Karst. Strassburg, 1905, p. 106. *Судебник Смбата спарапета (гундстабля) 1265 г.*. Перевод со среднеарманского, предисловие и примечания проф. А. Г. Сукиасяна (Ереван, 1971), с. 108-109.
[22] Այդ ուսումնասիրությունը նախապես լույս էր տեսել համառոտ թերթային (*Հայաստանի Հանրապետություն* օրաթերթ, 26 մարտի 1995 թ.) և ընդարձակ գիտական տարբերակներով. - տե՛ս **Ա. Մ. Այվազյան**. «Հայոց կաթողիկոսի ընտրության հանգամանքները ԺԵ-ԺԷ դարերում (երկու հնատիպ վավերագրերի քննություն)». - *Հանդէս Ամսօրեայ,* հունվար-դեկտեմբեր 2000, No. 1-12, էջ 349-428:
[23] *Ջամբռ*, էջ 55:
[24] Տե՛ս *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի:* Հ. Ա (Երևան, 1955), սյուն. 451, ձեռ. 978:
[25] Տե՛ս *Ջամբռ*, տիտղոսաթերթ:
[26] Նույն տեղում, էջ Բ:
[27] Նրա կենսագրական որոշ մանրամասնությունների մասին տե՛ս **Ցովհաննէս Պատկերահան**, *Նամականի (1695-1758):* Աշխատասիրեց Սահակ Ճեմճեմեան (Վենետիկ-Ս. Ղազար, 1988), էջ 27-28, ծնթ. 27:
[28] Որ Մինաս Փերվազյանի թեկնածությունն իրոք առաջ է քաշվել, տեղեկանում ենք այլ աղբյուրներից ևս (տե՛ս, օրինակ, *Բազմավէպ*, 1978, No. 3-4, էջ 260):
[29] «Վարք գերապատիւ Մինասայ արքեպիսկոպոսին Զմիւռնիոյ գրեալ համառօտիւ ի դիմաց իւրոց», *Մատենադարան Մխիթարեանց ի Վենետիկ (Ս. Ղազար)*, ձեռագիր 2660: Մեր խնդրանքով, 1995 թ. սույն ձեռագիրը սիրահոժար պատճենել և Երևան էր ուղարկել Վենետիկի մխիթարյանների երջանկահիշատակ Աբբահայր Սահակ վրդ. Ճեմճեմյանը:
[30] Մոտավոր պատկերացում կազմելու համար, թե որ բնակավայրերի և տարածքների վրա էր տարածվում այս չորս աթոռների հոգևոր իշխանությունը, տե՛ս 1765 թ. Ս. Էջմիածնում այդ մասին արված դրառումները (աստ, Հավելված Բ, Վավերագիր Բ): Այս վավերագիրը, սակայն, չի առանձնացնում Հաղբատի վիճակը, այլ խոսում է միայն Թիֆլիսի վիճակի մասին: Պարզվում է, սրա պատճառը 1750-1760-ական թթ. դրությամբ Հաղբատի

վանքի անմխիթար, գրեթե ամայի դրութիւնն էր, որն ստիպել էր Աղեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսին՝ 1754 թ. մարտից մինչև 1755 թ. նոյեմբերն ընկած միջոցին (սա նրա կաթողիկոսության ժամանակահատվածն է) մի որոշում կայացնել Հաղբատի, Սանահինի և Թիֆլիսի վիճակները միավորելու մասին: Մեր ձեռքի տակ գտնվող այդ կոնդակից մէջբերենք մի պերճախոս հատված.

> *«...Հաղբատու եւ Սանահնոյ վանորայքդ, վասն մեղաց եւ անօրէնութեանց մերոց ամայացեալք են եւ աղքատացեալք... քանզի առաջնորդք եւ միաբանք ոչ կարեն նստիլ եւ կայ առնուլ ի դոսա վասն դառնաշունչ բերմանց ժամանակիս... որ թողեալք զվանսն ամայի՝ եկեալ նստին ի յօրհնեալ քաղաքդ ձեր (իմա Թիֆլիս, Ա.Ա.) ի մէջ աշխարհականաց, որ է անդալեհ (՞) իմն, եւ՛ ի կանօնաց արտաքոյ, եւ՛ ձեզ ժողովրդականացդ ճանձրութիւն եւ առիթ բամբասանաց, զի քաղաքի միոյ մի՛ առաջնորդ պիտո է, ո՛չ երկու եւ երեք: Քանզի եւ վարդապետքն, որք եկին ի տեղւոյդ ի Սուրբ Աթոռս, սոքա եւս հրաժարեցան կամաւ եւ յօժարութեամբ իւրեանց յառաջնորդութենէ Հաղբատու եւ Սանահնոյ վասն այդ ասացեալ պատճառդ, որք ահա յանձն առին մնալ ի Սուրբ Աթոռս եւ պաշտել զկարգս իւրեանց, որպէս եւ առաջնորդք եւ միաբանք այլոց վանօրէից կան ի սմա եւ զտուրս ժողովրդոց վայելելով...*

> *...եւ մեր մտածելով... ոչ պատշաճ տեսաք յատուկ յատուկ առաջնորդս կարգել այդոցիկ վանիցդ առ ժամանակ մի՝ մինչեւ ինքն Տէր այդ արասցէ եւ կամեսցի: Այլ բաւական համարելով զմի միայն Առաջնորդ ձեզ երից վիճակացդ, այսինքն՝ Թիլֆիզու, Հաղբատու եւ Սանահնոյ, զսիրելի որդիկդ մեր եւ զհարազատ զաւակս Սրբոյ Գահիս՝ Աւետիք հանճարաշատ եւ Աստուածաբան վարդապետդ կարգել, որ որպէս մինչեւ ցայսօր էր առաջնորդ Թիլֆիզու, նմանապէս այսուհետեւ վերստին լիցի Առաջնորդ եւ հօվիւ հոգեւոր Հաղբատու եւ Սանահնոյ վիճակացդ եւս եւ հովուեսցէ՛ զձեզ զամենեսեանդ հոգեւոր եւ Աստուածային բանիւ»:*

Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 9120, էջ 39-40, շարունակված է էջ 44-ում: Ի դեպ, Աղեքսանդր Բ կաթողիկոսի այս որոշումն առաջացրել է վրաց կաթողիկոսի դժգոհությունը (տե՛ս նույն տեղում, էջ 45-46):

ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1720-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1605 թվականից ի վեր Արարատյան աշխարհ ոտք չկոխած օսմանյան բանակն այստեղ հայտնվեց մեկ էլ 1724 թ. հունիսին[1]: Երեքամսյա պաշարումից հետո, սեպտեմբերի 23-ին թուրքերը գրավեցին Երևանի բերդը[2]: Ավելի շուտ՝ 1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիրը, որի համաձայն, բացառությամբ Դերբենդից Մազանդարան ձգվող մերձկասպյան շրջանների, որոնք 1722-1723 թթ. արդեն հիմնականում գրավված էին ռուսների կողմից, ամբողջ իրանական Այսրկովկասը ճանաչվեց Օսմանյան կայսրության տարածք[3]: Այդպիսով օսմանյան ռազմավարչական իշխանությունն, անհայտ և անորոշ ժամանակով, հաստատվեց ամբողջ Արարատյան երկրի, այդ թվում նաև՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վրա:

Այս շրջադարձային փոփոխությունը բոլորովին նոր ու չափազանց բարդ խնդիրներ էր դնում Մայր Աթոռի առջև: Եթե մինչ այդ՝ սկսած 1461 թվականից, Օսմանյան կայսրության մեջ ապրող հայությունը, իբրև առանձին «միլլեթ», պետության առջև ներկայացված էր Կ. Պոլսի հայոց պատրիարքով ու պատրիարքությամբ, ապա այժմ՝ Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական կառույցում գերագույն մարմին հանդիսացող Ամենայն Հայոց կաթողիկոսությունը, բնականաբար, ձգտելու էր ինքը կատարել այդ դերը: Այս հավակնությունն աստիճանաբար ամրանալու էր, որովհետև Էջմիած-

նի կաթողիկոսն ու միաբանները, տեսնելով Իրանի շարունակվող ճգնաժամն ու քայքայումը, նրա մեծ մասի հայտնվելն աֆղանական, օսմանյան և ռուսական ռազմակալման տակ, առաջիկա տարիների ու տասնամյակների համար, Օսմանյան իշխանություններին այլընտրանք չէին կարող պատկերացնել: Հետևաբար՝ Մայր Աթոռն իր և Հայոց եկեղեցու շահերի տեսակետից անիմաստ ու վտանգավոր էր դիտելու Օսմանյան կայսրության տարածքում Էջմիածնի գերակայության զիջումը Պոլսի պատրիարքությանը: Սակայն, ինչպես կտեսնենք, 1724-1735 թթ. այդ խնդիրը որևէ վերջնական լուծում չստացավ ու մնաց առկախ վիճակում, որովհետև հայ եկեղեցու կառավարումը Ս. Էջմիածնից մեծապես դժվարացել էր ստորև քննվող մի շարք հանգամանքների բերումով:

Պարսկաստանում և Այսրկովկասում (հիմնականում՝ Արցախում և Սյունիքում) շարունակվող պատերազմը քաղաքական-տնտեսական ընդհանուր անապահով իրադրություն էր ստեղծել ողջ Այսրկովկասում, որոշ չափով էլ՝ Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում[4]: Արարատյան երկրի հայությունը, որ Մայր Աթոռի հիմնական հենարանն էր, մարդկային ահավոր կորուստներ էր կրել. լեհ ճիզվիտ Թ. Կրուշինսկին, որ մինչև 1725 թ. գտնվում էր Պարսկաստանում, հաղորդում է, որ միայն Երևանի գրավման ժամանակ սպանվել էր 30.000 հայ, բացի այդ, տասնյակ հազարավոր հայեր քշվել էին գերության[5]: Փլուզվել էին Էջմիածնի տնտեսական կարողությունները, խզվել էին կապերը արևելահայության ֆինանսական մայրաքաղաք Նոր Ջուղայի և առհասարակ Պարսկաստանի, ինչպես և՝ Գանձասարի, Տաթևի, Գանձակի, Շամախիի, այլ կարևոր կենտրոնների ու թեմերի հետ:

Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսը (1715-1725) և նրա կապերը հայ ազատագրական շարժման հետ

Աստվածատուր կաթողիկոսի անունը ցայսօր հանիրավի կերպով չի ներառվել 1720-ական թթ. հայ ազատագրական շարժման գործիչների շարքում, մինչդեռ այդ ասպարեզում կան նրա գործունեությունը լուսաբանող պերճախոս տեղեկություններ:

Կաթողիկոսանալուց (1715 թ. մայիսի 7)[6] մոտ մեկ տարի անց Աստվածատուր կաթողիկոսը հանդիպեց հայ զինված ապստամբությունը վաղուց ի վեր գաղտնաբար նախապատրաստող գործիչներից մեկին՝ Մինաս վարդապետ Տիգրանյանին: Այս երկուսի միջև Ս. Էջմիածնում 1716 թ. հուլիսի 15-ից մինչև 23-ը տևած խորհրդակցությունները[7] բացահայտում են Աստվածատուր կաթողիկոսի շրջահայաց ու զգուշավոր, բայց միաժամանակ բացարձակ նվիրվածությունը Հայաստանը զենքով ազատագրելու գաղափարին: 1717 թ. մարտի 14-ին Մինասը ռուսական կառավարությանը տված իր բանավոր զեկույցում հայտնում էր, որ, լսելով իրենից ազատագրական ծրագրերի և ռուսներից սպասվող օգնության մասին, կաթողիկոսը (մեջբերում ենք)՝

> «շատ ուրախացավ և բանավոր նրան պատասխանեց, որ այն գործը, որի մասին վարդապետն իրեն տեղեկացրեց, շատ բարի է և նա ցանկանում է այդ գործում ծառայել և օժանդակել նորին ցարական մեծությանը (իմա՝ Պետրոս Ա-ին, Ա.Ա.), միայն թե նա մեծ մտավախություն ունի շահից, քանզի դա մեծ գործ է. այնպես չստացվի, որ իրենք բոլորը (իմա՝ ամբողջ հայությունը, Ա.Ա.) ավերածությունների ենթարկվեն: Սակայն, եթե նորին ցարական մեծությունը ցանկանա Պարսկաստանի դեմ պատերազմով դիմել և իր զորքերն այդ երկիր ուղարկել, ապա թող նույն վարդապետի (իմա՝ Մինաս Տիգրանյանի, Ա.Ա.) կամ այլ հաւատարիմների միջոցով նախապես իրեն լուր տա, թե ինչ է նրանից ակնկալում, իսկ ինքն՝ իր բոլոր հավատարիմների հետ, պատեհ միջոցը գտնելով, այդ գործում հավատարմորեն և կարեցած չափով օգնություն ցույց կտա»[8]:

Այդ պատասխանը գրավոր ներկայացնելու Մինասի խնդրանքին՝ Աստվածատուր կաթողիկոսը խոհեմաբար առարկում է, ասելով.

> «գրավոր այս բանը շարադրելը և [ռուսաց ցարին] հավատարմություն հայտնելն անհնար է, քանզի այս գործը պետք է հույժ գաղտնի պահել՝ պարսիկներից և որոշ հայերից: Փոխարենը՝ կտա վարդապետին քողարկված իմաստով մի նամակ, ուր կասվի, թե նա եղել է պատրիարքի մոտ և զեկուցել նրան ամեն տեսակ գործերից, որոնք ընդունվել են սիրով և հաճությամբ»[9]:

Զեկույցի վերջում Մինաս Տիգրանյանը եզրակացնում էր, որ Գանձասարի Եսայի կաթողիկոսը լրիվ պատրաստ է դիմելու զինված ազատագրական պատերազմի և ռուսների օգնությանն ապավինելու, իսկ Ս. Էջմիածնի կաթողիկոսը՝ «թեև բանավոր հայտնում էր իր հակվածության մասին, սակայն այդ գործում Եսայու պես վստահելի չէ, քանզի [պարսից] շահից շատ է երկնչում»[10]:

Հետագա իրադարձությունները ցույց են տալիս, սակայն, որ Աստվածատուր կաթողիկոսի նկատմամբ Մինաս վարդապետի արտահայտած այս մտավախությունը չափազանցված էր, գուցե նաև՝ միտումնավոր: Ամենայն հավանականությամբ, Մինասը ռուսներին դիտավորյալ էր հետ պահում Աստվածատուր կաթողիկոսի հետ աշխույժ կապեր հաստատելու մտքից՝ նպատակ և առաջադրանք ունենալով առավելագույնս ապահովագրել Ս. Էջմիածնի անվտանգությունը:

Ազատագրական պատերազմի այս նախապատրաստությունների շրթայում պետք է դիտել 1719 և 1721 թթ. Եսայի Հասան-Ջալալյանի Ս. Էջմիածին կատարած երկու այցը, որոնց արդյունքում էլ Աստվածատուր կաթողիկոսն արձակեց չորս կարևոր կոնդակ: Այս կոնդակները տնտեսապես ու վարչականորեն զորացնում էին Գանձասարի Աթոռը՝ շնորհելով նրան պատմականորեն Ս. Էջմիածնին ենթակա մի շարք շրջաններ՝ Շամախին, Շիրվանը, Շաքին, Ղաբալան[11]: Աստվածատուրի կոնդակներից մեկը պարզապես արտառոց էր. այն ուղղված էր Գանձասարին երբևէ որևէ տուրք չտված շրջանների հայությանը՝ «ի վերայ Նախիջեւանու, Գողթնեաց, Ղափանու, եւ Թիֆլիզու..., զի զկամաւոր ողորմութիւնս տալով օգնեսցեն պարտուց նորին»[12]:

Ավելին, Աստվածատուրը Եսայու նկատմամբ բարյացակամ հանրային տրամադրություն ստեղծելու ջանք է թափում՝ առ այդ շեշտելով նաև իր և Եսայու մտերմությունը և հորդորելով ժողովրդին.

> «զի ընկալցին զԵսայի կաթուղիկոսն եւ զնուիրական արդիւնսն ի նա յանձնեսցին՝ որպէս նուիրակի ի Սրբո[յ] Էջմիածնէ գնացելոյ...
>
> Թէպէտ մեր էիք բնական՝ եւ մեր էք, սակայն մեք մերով կամաւ եւ յօժարութեամբ դմա շնորհեցաք ի սէր դորին եւ վասն աղքատութեան Գանձասարու աթոռոյն: Այսուհետեւ պարտիք հնազանդիլ եւ ընդունիլ զԵսայի կաթուղիկոսդ ձեր, որում ներհակքն՝ մեզ են ներհակք» (ընդգծումն՝ Ա.Ա.)[13]:

Կարծում ենք, Եսային բազմիցս օգտագործած պիտի լիներ այս կոնդակի մեկից ավելի մեկնաբանության տեղիք տվող այն բանաձևումը, որը Եսայու թշնամիներին դասում էր Աստվածատուրի թշնամիների շարքը՝ «որում ներհակքն՝ մեզ են ներհակք»: Այս բանաձևումը կարելի էր ի ցույց դնել որպես ազատագրական պատերազմի գաղափարին Ս. Էջմիածնի լիակատար համերաշխության մի այլաբանորեն արտահայտված վկայություն, որը շատերի (հատկապես՝ տատանվողների) համար Հայաստանի ազատագրության վտանգավոր ձեռնարկին միանալու մի լրացուցիչ փաստարկ ու դրդիչ պիտի ծառայեր:

Այս կոնդակները միտված էին զգալիորեն ամրապնդելու առաջիկայում սպասվող ազատագրական պատերազմի մեջ առաջամարտիկի դեր ստանձնելու ընդունակ (և այդ առաքելությանը եռանդունորեն նախապատրաստվող) արցախահայության դիրքերը և բարձրացնելու Արցախի հոգևոր-քաղաքական կենտրոն Գանձասարի հեղինակությունը: Հիշենք, օրինակ, որ տեղական հայոց զինուժը գաղտնաբար վերակազմելու, արդիական զենքով սպառազինելու և գլխավորելու նպատակով՝ մոտավորապես նույն ժամանակ՝ 1718-1720 թթ. միջև, Շիրվանից Արցախ էր հրավիրվել ու բուռն գործունեություն ծավալել հայ պրոֆեսիոնալ զորահրամանատարներից բաղկացած մի խումբ՝ Ավան-յուզբաշու առաջնորդությամբ (ժամանակակիցներն այս զինվորականներին անվանում էին «շիրվանցիներ», «Շիրվանայ տղէք»)[14]:

Չի բացառվում, որ Արցախն ազատագրական պատերազմի միջնաբերդ դարձնելու ծրագրին Ս. Էջմիածինն սկսել էր աջակցել դեռևս մինչև Աստվածատուր կաթողիկոսի գահ բարձրանալը՝ տակավին Նահապետ և Աղեքսանդր կաթողիկոսների օրոք, որովհետև նրանք էլ Եսայուն աննախադեպ կարգի օժանդակություն են ցույց տվել, մասնավորապես Աղեքսանդր կաթողիկոսն առաջինն էր, որ փորձ արեց (թեկուզ ապարդյուն) Շամախու և Շիրվանի հայերին դնել Գանձասարի ուղղակի ենթակայության տակ[15]: Այս վարկածի ստուգումը, սակայն, առանձին ուսումնասիրության կարիք ունի:

Ըստ երևույթին, Աստվածատուր կաթողիկոսը հայության պաշտպանական կարողությունները ամրապնդելու նմանատիպ քայլեր էր ձեռնարկում նաև այլ շրջաններում: Այդպիսի գործունեու-

թյան մասին է հուշում 1724 թ. հունիսի 1-ին Սանահինի վիճակի ժողովրդին նրա ուղղած կոնդակը, որով հորդորվում է «առատ տրօք» օգնել վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետին նույն վանքի պարիսպը կառուցելու համար[16]*: Կոնդակը գրվել է օսմանյան ռազմական մեծ կամպանիայի նախօրեին, երբ Երևանը դեռևս գրավված չէր: Հավանական է, ուրեմն, որ Սանահինի պարսպի կառուցումն ու այս կոնդակը որոշակիորեն կապված էին սպասվող պատերազմական գործողությունների հետ:*

Եվ այսպես, 1722-1724 թթ., երբ ազատագրական պատերազմն արդեն իրականություն էր, որքան էլ Աստվածատուր կաթողիկոսն ու հայ գործիչները ձգտում էին գաղտնի պահել հայոց զինուժի հետ Ս. Էջմիածնի կապերը, դրանք այնքան ծավալուն էին, որ ի վերջո հայտնի դարձան և՛ պարսկական, և՛ օսմանյան հետախուզությանը: Պետրոս դի Սարգիս Գիլանենցի՝ խիստ հավաստի աղբյուր ճանաչված օրագրի[17] *մեկ այլ տեղեկություն ուղղակի է խոսում այդ կապի մասին (տեղեկությունը վերաբերում է 1723 թ. ապրիլ-մայիս ամիսների միջոցին).*

«Մեր կաթուղիկոսն (իմա՝ Աստվածատուր Համադանցին՝ Ա.Ա.) հայոց ասկարին [=զինվորության] խետ մին այ, որ յամիշայ [=մշտապես] գաղտուկ մինն ըզմինու գիր ան ելէլ գրում: Մեր կաթուղիկոսին մին գիրն կբռնուի: Էս գիրն կբերեն կտան Յարեւանայ նայիպին [=խանի փոխանորդին]: Էս նայիբն կաթուղիկոսին կանչել էր տարել, թէ՝ «դու էլ աս մեզնէ դօնմիշ ելէլ [=ըմբոստացել ես մեր դեմ][18]. էս քո գիրն այ: որ հայոց ասկարին գրել աս»: [Կաթողիկոսն] ասացել այ, թէ «էտ գիրն ես չեմ գրել, էտ թշնամու շինած գիրայ»: Եւ [նայիբը] կաթուղիկոսին էլ շատ խաֆայաթ [=նեղություն] կտայ եւ ԴՌ (4000) ոսկի ջառիմա [=տուգանք] յինք կառ[ն]ու, քանի օր կպախի, յետոյ մարդ մէջ կընկանի, բաց կթողու»[19]:

Այս դեպքից մի քանի օր անց Երևանի նայիբը դարձյալ կանչում է կաթողիկոսին և խնդրում.

«թէ ձեր Հայոց ասկարն շատ թուրք ա ջառթում, որ ուզեն՝ գոն Յարեւանայ վերայ. դու մին գիր գրէ ձեր ասկարին վերայ, որ էս երկիրն չը գոն եւ մեր մարդին դէկմիշ չնեն [=ձեռք չտան]»[20]:

Կաթողիկոսը դժկամորեն մի նամակ է գրում հայոց զորքերի հրամանատարությանը, նայիբին զգուշացնելով, որ հազիվ թե նրանք ենթարկվեն իր խոսքին: Սակայն նայիբը պնդում է՝ ասելով, թե «թամամ խայէրոց գլխայորն դու աս, որ յամիշայ [=միշտ] քեզ կլսեն... պիտի որ գրես»[21]: Մեծ ճնշման ենթարկվելով՝ Աստվածատուր կաթողիկոսը «մին մախիլայ գիր կը գրէ», այսինքն՝ մի կեղծ դիմում է գրում հայոց զորքերի հրամանատարությանը[22], որում առերեսորեն հորդորում է հայոց զորքին չշարժվել դեպի Արարատյան երկիր, սակայն՝

> «*գրին տակումն* կը գրի, թէ «դուք ինչպէս խէրիաթ [=հարմար] կը տեսնէք, էնպէս արէք, ձեր գիտացածն ձեռաց տէք ոչ (=ձեր ծրագրերը մի մատնեք)»[23] (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.):

Արդ, «գրին տակումն» անգլերեն և ռուսերեն թարգմանիչները հասկացել են իբրև «նամակի վերջում»[24]: Սակայն կաթողիկոսն այդ տողերը բացահայտ գրել չէր կարող, ուստի այս «գրին տակումն» պետք է հասկանալ իբրև նամակի բովանդակությունից դուրս՝ նույն թերթի կամ ծրարի ներքևի ինչ-որ հատվածում անպայման ծածկագրով գրի առնված տողեր (Մայր Աթոռում ծածկագրերի գործածումն ընդունված է եղել)[25]:

Հայկական զորքի հրամանատարությունը մի պատասխան գրությամբ հայտնում է, որ կաթողիկոսին հարգելով, նրանք չեն շարժվի դեպի Արարատյան երկիր, թեև նախապես այդպիսի մտադրություն ունեին, և պահանջում է պարսկական իշխանություններից Մայր Աթոռն ու հայ բնակչությանը նեղություն չպատճառել.

> «մենք ուզում ինք գինք ձեզ վերայ, չումքի մեր կաթուղիկոսն մեզ գրել էր՝ թէ «սոքա մեզ բարեկամ ան, սոցա դէքմիչ չնէք եւ դէս չգէք», մեր կաթուղիկոսին խաթեր խամար էլ եկինք ոչ, յետ դառցանք: Զուն որ մենք էս մարդայորութիւնն արարինք, պիտի որ դուք էլ մեր կաթուղիկոսին եւ իւր թամամ վանքէրին եւ միայբանոցն եւ տեղիտ խայէրին ջաֆայ չառէք՝ լեվ աղաթով պահէք»[26]:

Սակայն, որոշ ժամանակ անց Երևանի նայիբը հանդիմանում է Աստվածատուր կաթողիկոսին կեղծ նամակ գրելու համար, քանի որ հայկական զորքերը հաջողությամբ շարունակում են ընդլայնել և ամրացնել իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքները.

«Նախկն կաթուղիկոսին կկանչէ, թէ՝ «քոյ խայէրն թուրք ջառթելն իվելայցուցել ան, քո գրած գիրն մախիլայ էր գրած. մենք էլ քեզ հավատման չենք եւ էստոնք քեզ թողման չենք»[27]:

Այս ամենը Գիլանենցին հաղորդել է այդ իրադարձությունների պահին Էջմիածնում գտնված Մկրտիչ վարդապետը, որը ճշտում է միայն, որ Աստվածատուր կաթողիկոսի նամակը հասցեագրված էր «Հայոց ասկարի մեծայորին»: Ամենայն հավանականությամբ, նամակը ստացողն ու դրան պատասխանողը Արցախի հայոց զորքերի գլխավոր հրամանատար Ավան-յուզբաշին էր, և ո՛չ Դավիթ-բեկը, որի ուժերը (շուրջ 20 000 զինվոր) քանակապես մոտ երկու անգամ գիջում էին Արցախի հայոց բանակին ու դեռևս Սյունիքի ներսում լուծելիք բարդ խնդիրներ ունեին[28]: Ի դեպ, 1723-1724 թթ. հայ զինվորության չորս խոշոր հատվածները (Արցախ, Սյունիք, Երևան, Նախիջևան) իսկապես նպատակ են ունեցել ստեղծելու միասնական ազատագրական ճակատ, որն Արցախի հայ հրամանատարությանը 1724 թ. սկզբին դեռևս հնարավոր էր թվում՝

«Եւ էս Խայերին մէջտեղն Քուրդ [=մահմեդական ուժեր] կայ: Էս Խայերն ասում ան, թէ... «կուգնանք Քուրտին վերէն, քուրտն փչացնենք, որ տեղէս (իմա՝ Արցախից, Ա.Ա.) մինչի Երևան ողջ Խայեր ան՝ Ա [1] կուտառնան»[29]:

Բայց այս ծրագիրը, տարբեր պատճառներով, իրագործել չի հաջողվում[30]:

Մեկ տարի անց՝ 1724 թ. մարտի 13-ին, Ս. Էջմիածնից մի նամակ էլ է հասցեագրվում Արցախ՝ «իշխանաշուք իշխանացադ գլուխ կարգեալ... պարոն Աւան բէկ ուզբաշուն» (նույն նամակի ռուսերեն համառոտ թարգմանության մեջ ասված է՝ “письмо одного архимандрита главного, которой при патриархе Болшой Армении живет в монастыре Араратском, к собранию Армянскому, к главному юзбаше Авану партикулярно...”)[31]: *Օսմանյան խոշոր հարձակման նախաշեմին գրված այս նամակում՝ Արարատյան երկրի հայության ու նաև պարսկական իշխանությունների անունից, շտապեցվում է ռուսական զորքերի խոստացված (սակայն՝ երբեք չիրագործված) առաջխաղացումը: Հետաքրքիր է, որ նամակն ստորագրել է ոչ թե Աստվածատուր կաթողիկոսը, այլ նրա աթոռակալ Հովասափը. անշուշտ,*

սրանով դարձյալ փորձ էր արվում հնարավորին չափ ապահովագրել կաթողիկոսի անձը հետագա հնարավոր բարդություններից:

Ս. Էջմիածնի համերաշխությունն ու համագործակցությունը հայ ազատագրական շարժմանը հայտնի էր դարձել նաև օսմանյան հետախուզությանը: 1723 թ. ապրիլի 2-ին Էջմիածին այցելած թուրք դեսպանը, Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսին մեղադրում էր թե՝ «դու էլ մեծ սուչի (=հանցանքի) տէր աս, որ Ռուստին խետ մին աս դառցէլ, էսչանք խայ աս կանգընացուցել, որ ասում ան, թէ ԿՌ (60 000) խայ եարաղով հազիր ան (=զինված պատրաստ են [կռվելու])»[32]:

Այս գաղտնի կապը հաստատում են նաև 1724 թ. փետրվարի 25-ին Ղարաբաղից ռուսների մոտ առաքված պատվիրակները, որոնց ասելով՝ հայերի «Արարատյան պատրիարքը (այսինքն՝ Ս. Էջմիածնի կաթողիկոսը - Ա.Ա.) Ղարաբաղ՝ Եսայի կաթողիկոսի մոտ հաճախակի մարդկանց է ուղարկում ու նամակներով հավաստիացնում՝ նրա հետ իր ունեցած համաձայնությունը [ռուսների օգնությամբ ազատագրվելու հարցում]»[33]:

Այս առումով դիտելի է, որ Ռուսաստանում գտնվող հայ ազատագրական շարժման ներկայացուցիչ Մինաս վրդ. Տիգրանյանի գործունեությունը բացահայտվել էր փոքր-ինչ ավելի շուտ՝ մոտավորապես 1720 թ.: Սա պարզվում է 1725 թ. սկզբին հայկական էսկադրոնի հրամանատարներից մեկի՝ Մինաս վերդապետին գրած նամակի հետևյալ հատվածից.

> «Հայր սուրբ, այժմ ամենուրեք հայտնի եղավ մեր բանը. այսքան տարի ոչ ոք չգիտեր քո խորհրդի և գործունեության մասին, այլ և այն բանի մասին, որի համար դու այդտեղ ապրում ես: Ահա այժմ հինգ տարի է, ինչ մեր բանը հայտնի դարձավ բոլոր դավաճաններին...»[34]

Այսպիսով, տարածաշրջանում անսպասելիորեն հայտնված հայկական խոշոր զինուժի կապերը Ս. Էջմիածնի հետ հայտնի էին դարձել և առաջացրել իրանական և օսմանյան տերությունների խոր անվստահությունը Մայր Աթոռի նկատմամբ:

Մեկ տարի անց, սակայն, իրադրությունն այլ էր. ռուսները 1724 թ. հունիսին Կ. Պոլսում պայմանագիր էին կնքել Բարձր Դռան

հետ՝ համաձայնելով գրեթե ամբողջ Այսրկովկասի ու հյուսիսային Իրանի օսմանյան ռազմակալմանը և բավարարվելով սոսկ մերձկասպյան շրջանների գրավմամբ: Օսմանցիները մեծ զորքով ներխուժել էին Այսրկովկաս և հյուսիսային Իրան, Թիֆլիսն ու Վրաստանը առանց դիմադրության անցել էին նրանց վերահսկողության տակ, իսկ հայկական զինված ուժերը, հույսը սխալմամբ դնելով ռուսական խոստացված առաջխաղացման վրա, լիովին կորցրել էին նախաձեռնությունը և պարփակվել Արցախ-Այունիք լեռնային տարածքում: Աստվածատուր կաթողիկոսը, 1724 թ. սեպտեմբերի սկզբին շահ Թահմասպ Բ-ի մոտից վերադառնալով Մայր Աթոռ, ելնելով փոխված հանգամանքներից, խոհեմորեն կատարում է օսմանցիների առաջադրանք-խնդրանքը և ստանձնում Երևանի բերդի անձնատվության բանակցություններում գլխավոր միջնորդի դերը[35]:

Աստվածատուր կաթողիկոսը ջանում էր վաստակել օսմանցիների վստահությունը, անշուշտ, նպատակ ունենալով Մայր Աթոռի և նվաճված տարածքների հայության շահերի պաշտպանությունը: 1725 թ. հոկտեմբերի 10-ին, սակայն, նա դժբախտ պատահարի զոհ դարձավ[36]: Սա էլ մի նոր ուժգին հարված էր Մայր Աթոռին, որի գահը թափուր մնաց մինչև 1728 թ. սկզբները, երբ Կարապետ Ուլնեցին (որն Ամենայն Հայոց կաթողիկոս էր ընտրվել 1726 թ. փետրվարին Կ. Պոլսում) վերջապես ժամանեց Ս. Էջմիածին[37]:

Վերը թվարկված հանգամանքների բերումով՝ 1724-1728 թթ. Էջմիածինը պարզապես ի վիճակի չէր կատարելու իր սովորական կառավարչական գործառույթները և որևէ լուրջ մրցակցություն առաջարկելու Կ. Պոլսի պատրիարքությանը, որի գերհեղինակավոր Հովհաննես Կոլոտ պատրիարքը (1715-1741), շահագործելով Բարձր Դռան հետ իր վաղուց ի վեր մշակած կապերը, շարունակում էր քրտնաջան աշխատել թե՛ օսմանցիների նվաճած պարսկական նոր նահանգներում, թե՛ կայսրության նախկին սահմաններում ապրող հայության շահերի օգտին: Բայց նա դրանով իսկ, կամա թե ակամա, հաստատում էր հայոց եկեղեցու կառույցի ներսում՝ այդ պատմական միջոցին գոյացած Կ. Պոլսի պատրիարքության իրական գերիշխանությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս **Ա. Մ. Այվազյան**, «Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1991, No. 1, էջ 95:
[2] Նույն տեղում, էջ 98-100:
[3] Պայմանագիրն ամբողջությամբ տե՛ս *Полное собрание законов Российской империи*. Москва, 1830, т. VII, No. 4531:
[4] Տե՛ս *Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուոց»*, էջ 96-97 (փաստաթուղթ 12), էջ 98 (փ. 16, 17), էջ 99 (փ. 19), էջ 101 (փ. 27), էջ 106 (փ. 37): Օսմանյան զորքը գերեվարել էր ոչ միայն պարսկահպատակ, այլև, որ կարող է տարօրինակ թվալ, օսմանահպատակ բազմաքանակ հայերի (տե՛ս ՁԱՄ, Գ, էջ 783):
[5] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Ա. Մ. Այվազյան**, «Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ.». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1991, No. 2 (133), էջ 113. **Armen M. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal* (Center for Policy Analysis, American University of Armenia, Yerevan, Armenia, 1997), pp. 36-39.
[6] ՁԱՄ, Գ, էջ 768. ԱԶԳ, սյուն. 1918:
[7] APO, I, док. 148, 154, с. 358, 367.
[8] APO, I, док. 154, с. 368:
[9] Նույն տեղում. կաթողիկոսի գրած նամակը տե՛ս APO, I, док. 148, с. 358-359:
[10] APO, I, док. 154, с. 370.
[11] *Ջամբռ*, էջ 84: Օրմանյանը վրիպմամբ իբրև Եսայու երկրորդ այցելության տարի է նշել 1720-ը (ԱԶԳ, սյուն. 1929): Սիմեոն Երևանցին այս այցելություններին տալիս է զուտ եկեղեցական-ելևմտական իմաստ, այս տեսակետին հետևում է նաև նրանից օգտված Մ. Օրմանյանը: Եսայի Հասան-Ջալալյանի երկում այս այցելությունների մասին չի հիշատակված (տե՛ս **Եսայի Հասան-Ջալալեան**, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի*: Երուսաղէմ, 1868):
[12] *Ջամբռ*, էջ 84:
[13] Նույն տեղում:
[14] APO, II, док. 278, с. 187-188. Հմմտ. **Ա. Մ. Այվազյան**, «Իրադարձություններն Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1990, No. 4 (131), էջ 69-71: Արցախում կենտրոնացվող հայոց զինուժը զինելու և մարզելու նախապատրաստությունների մասին համառոտաբար տե՛ս **Armen M.**

Aivazian, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal*, pp. 9-10, 15-17.

[15] Տե՛ս *Ջամբռ*, էջ 81-83:

[16] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 42: Աստվածատուր կաթողիկոսի այս կոնդակը վրիպել է Հ. Անասյանի ուշադրությունից, տե՛ս նրա «Հայկական մատենագիտություն»-ը, հ. Ա (Երևան, 1959), էջ 676-685:

[17] Գիլանենցի հաղորդումների արժանահավատությունը իրավամբ բարձր են գնահատել այդ աղբյուրն ուսումնասիրած պատմաբանները՝ Ք. Պատկանյանը, Ա. Հովհաննիսյանը և Լ. Լոքհարթը, տե՛ս **Петрос ди Саргис Гиланенц**, *Дневник осады Испагани афганами (1722-1723)*. Перевод и объяснения К. Патканова. СПб., 1870, с. XXIII. հմմտ. **Աշ. Ցովհաննիսեան**, *Պետրոս դի Սարգիս Գիլանէնց*: Ս. Էջմիածին, 1916, էջ 12. տե՛ս նաև *The Chronicle of Petros di Sarkis Gilanentz*. Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and additional Notes by Laurence Lockhart. Lisbon, 1959, pp. X-XII:

[18] Անգլերեն թարգմանված է այսպես՝ «դու՞ էլ էս մեզ լքել կամ դու՞ էլ էս մեզնից երես թեքել [You have also abandoned us!]. - *The Chronicle of Petros di Sarkis Gilanentz*, p. 49.

[19] Տե՛ս «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի», Գլուխ 104. - *Կռունկ Հայոց աշխարհին*, 1863, No. Գ, էջ 196:

[20] Նույն տեղում, Գլուխ 105, էջ 197:

[21] Նույն տեղում:

[22] «Մախիլա»-ն ռուսերեն ճիշտ չէ թարգմանված՝ "написал письмо в общих выражениях" (**Петрос ди Саргис Гиланенц**, *Дневник осады Испагани афганами*, с. 40),, անգլերենում ճիշտ է՝ «a false letter» (*The Chronicle of Petros di Sarkis Gilanentz*, p. 49, note 3):

[23] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի». - *Կռունկ Հայոց աշխարհին*, 1863, No. Գ, էջ 197: Անգլերեն թարգմանության միջից լրիվ դուրս են ընկել «ձեր դիտացածն ձեռաց տէք ոչ» բառերը (*The Chronicle of Petros di Sarkis Gilanentz*, p. 50), իսկ ռուսերեն թարգմանությունն այս դրվագում ստույգ է՝ "не выдавайте ваших планов" (**Петрос ди Саргис Гиланенц**, *Дневник осады Испагани афганами*, с. 40):

[24] *The Chronicle of Petros di Sarkis Gilanentz*, p. 50; **Петрос ди Саргис Гиланенц**. Дневник осады Испагани афганами, с. 40.

[25] Մայր Աթոռում ծածկագիր նշանների գործածության մասին տե՛ս «*Դիւան հայոց պատմութեան*»: Աշխատասիրութեամբ՝ Գիւտ Աղանեանցի: Գիրք Գ,

Թիֆլիս, 1894, էջ 842-852. Գիրք ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 463:

[26] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի». - *Կռունկ Հայոց աշխարհին*, 1863, No. Գ, էջ 197:

[27] Նույն տեղում, Գլուխ 107, էջ 197:

[28] Տե՛ս **Ա. Մ. Այվազյան**, «Իրադարձութիւններն Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք», էջ 63-80: Դավիթ-բեկի տրամադրության տակ գտնվող մարտիկների ընդհանուր թիվը ճշտել ենք 1720-ական թթ. հայոց զորքի թվաքանակին նվիրված դեռևս անտիպ մի հոդվածում:

[29] ԱԴԴ, II, ԴԴԴ. 239, Դ. 99. **Ա. Մ. Այվազյան**, «Իրադարձություններն Այսրկովկասում 1723 թ.», էջ 77-78:

[30] **Armen M. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, p. 46.* Ա. Մ. Այվազյան. «Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ.», էջ 102-114:

[31] ԱԴԴ, II, ԴԴԴ. 228, Դ. 85-86.

[32] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի». - *Կռունկ Հայոց աշխարհին*, 1863, No. Գ, էջ 196:

[33] "...однакож оной патриарх Араратской, чрез частую пересылку в Карабах к патриарху Исайю, письмами обнадеживает о своем согласии с ним" (տե՛ս АРО, II, док. 291, с. 206.):

[34] **Աշ. Ցովհաննիսեան**, *Պետրոս դի Սարգիս Գիլանէնց*, էջ 17, 26:

[35] Տե՛ս **Judasz Tadeusz Krusinski**, *The History of the Late Revolutions of Persia.* Vols. 1 and 2. New York, 1973 (Լոնդոնի 1740 թ. հրատարակության վերատպությունն է), Vol. 2, p. 178. Հմմտ. **Աբրահամ Երևանցի**, *Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի*: Հրատարակեց Սահակ Ճեմճեմեան. Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 31-35): Տե՛ս նաև **Արմեն Այվազյան**, «Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսը (1715-1725) և հայ ազատագրական շարժումը». - *Էջմիածին* հուլիս-օգոստոս, 2002:

[36] ՁԱՄ, Գ, էջ 801:

[37] Տե՛ս ՁԱՄ, Գ, էջ 804. ԱԶԳ, սյուն. 1954:

ԳԼՈՒԽ Գ.

ԿԱՐԱՊԵՏ ՈՒԼՆԵՑԻՆ (1661-1729) ԵՎ ՆՐԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1720-ական թթ. Կ. Պոլսի պատրիարքության՝ Հայ եկեղեցու նվիրապետական կառույցում ձեռքբերած գերիշխան դիրքը առավել ցայտուն արտայայտություն ստացավ 1726 թ. փետրվարին՝ Հովհաննէս Կոլոտի Հովանու ներքո անցկացված Ամենայն Հայոց նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ[1]:

Ստորև մանրամասն քննելու ենք Կարապետ Ուլնեցու կաթողիկոսանալու հանգամանքները, այս մասին Սիմեոն Երևանցու հայտնած կարծիքը և այդ կապակցությամբ Օրմանյանի արած մեկնաբանությունները:

Իր Ջամբռ-ում, Սիմեոն Երևանցին, դրվատելով հանդերձ Կարապետ Ուլնեցու անձը[2], միաժամանակ գրում էր.

> «Սա ի հրաւիրիլն ի մեծ Պոլիս օծեցաւ կաթողիկոս՝ թելադրութեամբ եւ չար դիտաւորութեամբ Բաղիշեցի Յովհաննէս վարդապետին (որ յայնմ ժամանակի պատրիարք էր նոյնոյ քաղաքին Պոլսոյ): Քանզի ետ օծանել զսա ի կաթողիկոս՝ որպէս ասացաք, եւ ինքն եւ իւրքն ձեռնադրեցան անդ եպիսկոպոս: Եւ մինչ ետես զի ամենայն ըղձից իւրոյ ահա ժամանակ է լնանեցման (զի տեսանէր զԿարապետ կաթողիկոսն միամիտ եւ անտեղեակ որպիսութեանց սրբոյ Աթոռոյս)՝ յաւել եւ զայս չարութիւնս. զի զարգա տալն կաթողիկոսաց թագաւորացն օսմանցւոց ընդ ձեռամբ իւրով արար: Յայնմ օրէ սովորութիւն եղեւ՝ զի զոր ինչ խնդիրս ունիցին կաթողիկոսքն ի յօսմանցւոց թագաւորէն՝ պատրիարքն Պոլսոյ տայցէ զարգայն եւ ո՛չ այլ ոք...»[3]:

Քիչ անց Սիմեոն կաթողիկոսն այս հարցն արծարծում է ևս մեկ անգամ.

> «Ապա ի հրաւիրիլն ի կաթողիկոսութիւն վերոյիշեալ Կարապետ կաթողիկոսիդ (որ էր յայն կուսացի եւ մանաւանդ ի վիճակէն Սըսայ), Աթոռոյս որպիսութեան, պատուոյն եւ իշխանութեան ամենեւին անտեղեակ, ինքն եւս ծեր եւ պարզամիտ: Իսկ այն Յովհաննէս վարդապետն Բաղիշեցի... խորամանկ, շոքմոգ, կեղծաւոր եւ խաբող, որպէս բերքն է Բաղիշու եւ այնց կողմանց...»[4]:

Օրմանյանը, ընդարձակորեն[5] մեկնաբանելով վերոբերյալ ամբաստանությունները, գալիս է այն եզրակացության, թե դա միմիայն Սիմեոն կաթողիկոսի անձնական կարծիքն է, որն իբր արդյունք է նրա կաթողիկոսության օրոք՝ 1763-1780 թթ., Մայր Աթոռի և Պոլսի Հայոց պատրիարքության միջև առաջացած լարվածությունների.

> «...Հավանական կկարծենք ըսել, թե Երևանեցին՝ կաթողիկոսական Աթոռին վրա գտնվելով, կփափաքեր ամեն գործ իր հրամանին ներքև առնուլ, ինչպես իրեն տարապայման տարածյալ գործունեութենեն ալ կգուշակվի: Արդ՝ տեսնելով որ Տաճկաստանի գործերուն նկատմամբ իր ձգտումներն արգելք կգտնեին Կ. Պոլսո պատրիարքներուն իրավասութենեն, և կարծելով որ այդ դրությունը Կոլոտի օրեն և Կարապետի ընտրութենեն սկիզբն առած է՝ իր բոլոր զայրույթը թափած է արդեն վախճանած Կոլոտի գլխուն, որով ընդդիմախոսի հանդիպելու վտանգեն ալ զերծ կմնար»[6]:

Սակայն հարցի զննումն այսպես՝ զուտ անձնական շահերի և ձգտումների տեսանկյունից, թույլ չի տալիս նշմարել, որ իրականում երևութապես միայն միջանձնային այս հարաբերությունների թիկունքում շարժվում են խմբակային շահեր և հաշվարկներ, քաղաքական ծրագրեր և պետական ազդեցություններ: Սիմեոն Երևանցու վերը բերված տեսակետն ամենևին զուտ զգացմունքի և անհատական փորձառության արդյունք չէ, ինչպես կարծում է Օրմանյանը, այլ հիմնված է պատմական կարևոր զարգացումների վրա: Ստորև ցույց ենք տալու, որ Սիմեոն կաթողիկոսն ընդամենն արտահայտել է այն բացասական կարծիքը, որ 1726 թ. ի վեր ձևավորվել է Կոլոտի գործունեության հանդեպ ինչպես Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, այնպես էլ հայ, ու հատկապես արևելահայ կղերի լայն շրջա-

նակներում: Բոլորովին այլ խնդիր է, որ Սիմեոն կաթողիկոսի՝ Պոլսի պատրիարքների հետ ունեցած անախորժությունները կարող էին հուզական թարմ լիցք հաղորդել նրա քննադատությանը[7]:

Կոլոտի դեմ դժգոհությունների սկիզբը

Հովհաննես Կոլոտի դեմ առաջին լուրջ դժգոհություններն առաջացան 1726 թ., երբ նա Կ. Պոլսում կազմակերպեց կաթողիկոսական ընտրություններ և Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնում առաջադրեց ու պաշտպանեց Կարապետ Ուլնեցու թեկնածությունը:

Մայր Աթոռից Աստվածատուր կաթողիկոսի մահվան լուրն ստանալուն պես՝ Կոլոտն անմիջապես սկսել է պատրաստություններ տեսնել Կ. Պոլսում հաջորդ կաթողիկոսի ընտրություններն անցկացնելու համար: Նա նաև իսկույն առաջադրել է Կարապետ Ուլնեցու թեկնածությունը, որը 32 տարի շարունակ՝ 1694-ից մինչև 1726 թ., անընդմեջ առաջնորդել էր «Գաղատիոյ առաքելական վիճակը»[8]: 1725 թ. դեկտ. 21-ին Պոլսում գրված մի նամակի մեջ այդ մասին այսպես է ասված.

> «Հայոց կաթողիկոսն վախճանեցաւ եւ կամեցան ի տեղի նորա ի Գաղատիոյ եղեալ զԿարապետ վարդապետն նստուցանել՝ Ստամպօլու պատրիարգին մարիֆաթովն (=ներկայացմամբ, առաջարկությամբ, գովասանական երաշխավորությամբ)»[9]:

Երկու օր անց գրված մեկ այլ նամակից տեղեկանում ենք, որ Կ. Պոլսում 1725 թ. դեկտեմբերի վերջին շաբաթվա մեջ գումարված խորհրդակցական ժողովը («ժողով գոյ աստ վասն կաթողիկոսի») առաջադրել է մի քանի այլ թեկնածություններ. «ոմանք՝ զՄինաս վարդապետ Ակնցի..., ոմանք՝ զԿարապետ վարդապետն, ոմանք՝ զՄանուէլ եւ ոմանք զայլ, եւ տակաւին չեն բացորոշեալք»[10]:

Այսպիսով, պարզվում է, որ Կոլոտի՝ Կարապետ Ուլնեցուն կաթողիկոսացնելու առաջարկությունն հանդիպել է առնվազն մի քանի օր տևած դիմադրության: Եթե նկատի ունենանք, որ այդ պահին Կոլոտ պատրիարքը գտնվում էր իր իշխանության և հեղինակության գագաթնակետին, ապա նրա առաջարկությունն անմիջապես չընդունելը պետք է շատ լուրջ հիմքեր ունենար:

Կարապետ Ուլնեցու ընտրությանը մասնակցած արևելահայ եպիսկոպոսները

Ովքե՞ր են եղել Կարապետ Ուլնեցու կաթողիկոսանալուն դեմ եղած կամ առնվազն դժկամորեն վերաբերած եպիսկոպոսները: Կարապետ Ուլնեցու ինքնակենսագրականից պարզվում է, որ ընտրական ժողովին, բացի պոլսեցիներից և մյուս օսմանահպատակ հայերից, մասնակցել են նաև արևելահայ գործիչներ.

«...ի ՌՃՀԴ (1725) թուին հանդեաւ ի Քրիստոս տէր Աստուածատուր կաթողիկոսն Սուրբ Էջմիածնի, որոյ պատճառաւ իջեալ *յարեւելեան* եւ Հռոմաստանու եղեալ արքեպիսկոպոսունք ի թագաւորանիստ մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս... եւ նախահոգակ պատրաստութեամբ հրաւիրեցին զգագաշեալ ծերութիւնս իմ յայս աստիճան կաթողիկոսութեան[11]:

...եկին եւ հասին այլ եւս մեծամեծ եպիսկոպոսունք *ի յարեւելից* եւ ի բոլորից...»[12]:

Ձեռնադրության հանդեսը տեղի է ունեցել 1726 թ. մարտի 6-ին, «անառակի կիրակի» օրը, Ս. Աստվածածին եկեղեցում. մասնակցել է առնվազն 12 եպիսկոպոս[13]:

Այս հանդեսին ստուգապես մասնակցած կարելի է համարել արևելահայ կղերական կուսակցության հետևյալ երեք ներկայացուցիչներին.

1) ընտրությունից անմիջապես հետո աթոռակալ նշանակված և Մայր Աթոռ ճանապարհ ընկած Սիմեոն (մեծ) վարդապետ Երևանցուն, որը դեռևս 1724 թուականից յիշւում է որպես Ս. Էջմիածնի նվիրակ Կ. Պոլսում[14]:

2) Կաթողիկոսի թեկնածուների շարքում հիշատակված Մանվել Աստապատցին, որին Սիմեոն վարդապետի հետ միաժամանակ կամ դրանից ոչ շատ անց Կարապետ կաթողիկոսը հավանաբար երկրորդ աթոռակալ է նշանակել[15]: Մանվել Աստապատցու նախընթացը մեզ անծանոթ է[16], այնուհանդերձ, դատելով նրան աթոռակալ նշանակելու փաստից, ինչպես նաև Մայր Աթոռի հետ Աստապատի հոգևորականության ավանդական սերտ կապերից[17], կարելի է հետևեցնել, որ նա բարձրաստիճան հոգևորական էր և, ի տարբերու-

թյուն կաթողիկոս ընտրված Կարապետ Ուլնեցու՝ քաջածանոթ էր Մայր Աթոռի գործերին: Թերևս այդ պատճառով էլ աթոռակալ է նշանակվել[18]:

3) Նույնպես կաթողիկոսի թեկնածու է հիշված ակնցի Մինաս Փերվազյանը, որին 1726 թ. մարտին Կարապետ Ուլնեցին նշանակում է Զմյուռնիայի առաջնորդ (ըստ Փերվազյանի՝ իր նշանակումը պայմանավորված էր այս հանդեսին նրա ներկայանալով՝ «Բայց իբրեւ գտայ ի հանդէսն կաթուղիկոսին, առժամայն արար զիս կաթուղիկոսն առաջնորդ Զմիւռնիոյ»)[19]:

Թեև Մինաս արքեպսկ. Փերվազյանը ծննունդով արևելահայ չէր՝ ակնցի էր[20], այնուամենայնիվ 1725 թվականի դրությամբ արդեն հայտնի էր իր «էջմիածնական» գործունեությամբ: 1710-1725 թթ. նա եղել էր Հաղբատի և Թիֆլիսի միացյալ մեծ վիճակի առաջնորդը[21], 1722 թ. դեկտեմբերի 12-ին իր իսկ «ձեռամբ» գրված մի նամակի համաձայն, ինքն էր՝

> «Աթոռակալ սուրբ յէջմիածնի. յաժմուս արքեպիսկոպոս եւ առաջնորդ Հաղբատու Սուրբ Նշանին, թագաւորաշէն աթոռոյն եւ բոլոր Վրացոտանու վերատեսուչ»[22]:

1724 թ. սեպտեմբերի 9-ով թվագրված մի վավերագրի մեջ ևս հիշվում է «Մինաս աթոռակալ»ը, որը նույն Մինաս Փերվազյանն է[23]:

Ինչպես տեղեկանում ենք 1722 թ. դեկտեմբերի 12-ի նամակից, այդպես էլ Եղիա Մուշեղյանի դիվանում գտնվող նյութերից[24], Մինաս Փերվազյանը եռանդուն ու պատասխանատու մասնակցություն է բերել նաև 1720-ականների սկզբին ծավալված հայ ազատագրական շարժմանը, թեև ինքն այս մասին լռել է անգամ կյանքի մայրամուտին հեռավոր Վենետիկում գրած ինքնակենսագրականի մեջ՝ հաշվի առնելով Հայաստանում մնացած գործիչների, մերձավորների ու առհասարակ Հայ եկեղեցու անվտանգության պահանջները[25]:

4) Հետագա քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ օծման հանդեսին ներկա արևելցի եպիսկոպոսների թվում կարող էր լինել նաև այդ պահին Կեսարիայում Ս. Էջմիածնի նվիրակը՝ Ղազար Ջահկեցին:

Կարապետ Ուլնեցու կենսագրական կարևոր մանրամասներ

Ինչո՞ւ «ոմանք» (իմա՝ հիմնականում արևելահայ գործիչները) դեմ էին Կարապետի կաթողիկոսանալուն և ինչու՞ էին հենց նրանք առաջադրում այլ թեկնածություններ: Այս հարցին Սիմեոն Երևանցու վերը մեջբերված հատվածում կա երկու բացատրություն. ա) Կարապետը, ըստ Սիմեոնի՝ «Աթոռոյս որպիսութեան, պատուոյն եւ իշխանութեան ամենեւին անտեղեակ, ինքն եւս ծեր եւ պարզամիտ» էր, և բ) Կարապետը «էր յայն կուսացի եւ մանաւանդ ի վիճակէն Սըսայ»: Քննենք երկու դրույթն էլ:

1726 թ. Կարապետը 65 տարեկան էր[26] և ինքն իրեն համարում էր խոր ծերության մեջ. այսպես, 1727 թ. սեպտեմբերին նա իր տարիքի մասին գրում էր՝ «երեկոյալ պահու կենաց իմոց[27]», կամ՝ «Եւ իմ տեսեալ (կաթողիկոս ընտրուելու բազմակնիք փաստաթուղթը՝ Ա.Ա.)՝ արդարեւ բազմիցս հրաժարեալ չոգայ յետս, զբազում ինչ անկարութիւն պատճառելով, մանաւանդ զծերութիւնս եւ զցաւագարութիւնս իմ ցուցանելով... վասն որոյ իջի ընդ նոսա ի քաղաքն մեծ, որպէսզի եւ ցուցեալ զծերութիւնս իմ եւ դարձայց ի վանս»[28], կամ՝ «անդանոր (իմա՝ Սկիւտարի հոգեւտանը) հանգուցին զծերս» եւ այլն[29]: Այն, որ Կարապետը վախճանվեց 1729 թ. հոկտեմբերի 2-ին, ևս վկայում է նրա վատառողջության մասին:

Կարապետն իրոք «ամենեւին անտեղեակ» էր Մայր Աթոռի «որպիսութեան, պատուոյն եւ իշխանութեանը», քանզի միակ կարճատև այցով այնտեղ էր եղել տակավին 1694 թ.[30], իսկ 1705 թ-ից ի վեր՝ 21 տարի (!), Գաղատիայի վիճակի սահմաններից դուրս չէր եկել[31]:

Ուրեմն ակնհայտ է, որ Կ. Պոլսի ընտրական ժողովին Կարապետի կաթողիկոսանալուն դեմ եղած գործիչները բերած պիտի լինեին նրա ծերության և Մայր Աթոռի գործերի մեջ անփորձ լինելու վերը նշված փաստարկները: Սակայն, դրանք այնքան էլ խոսուն չեն եղել թեկուզև այն պատճառով, որ Կարապետ Ուլնեցին պահպանել էր դեռևս մտքի և մարմնի այնպիսի ունակություն, որ կաթողիկոս ընտրվելուց հետո կարողացավ բավական աշխույժ գործունեություն ծավալել և՛ Կ. Պոլսում, և՛ Ս. Էջմիածնում: Մասնավորապես, մնալով

Կ. Պոլսում «տարի մի եւ Բ (2) ամիս՝ առ ի հոգալ զբաղում հոգս Սուրբ Աթոռոյն, մանաւանդ պէսպէս հրամանահանութեան»[32], նա, Հովհաննես Կոլոտի անփոխարինելի գործակցությամբ, կարողացավ ձեռք բերել, իր իսկ բառերով՝

«Հրաման արքունական վասն մեր յոյժ պիտանի եւ կարեւոր, խեթկիչ բռնաւորաց, զի մի՛ արգելօղք լինիցին հոգեւոր հրամանաց եւ դատողութեան մերում եւ կամ նեղեսցեն զնուիրակունս մեր, եւ այլ սոյնպիսի վեցեսին հրամանս սաստիկս, ի յօգուտ եւ յապահով յանգստակացութիւն Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, եւ նորին կալուածոցն, հողոցն եւ ջրոցն եւ միաբանիցն, ոչ միայն Սուրբ Էջմիածնին, այլ եւ ամենայն վանորէիցն. որովհետեւ կալան զերկիրն Օսմանցիքն, եւ է Սուրբ Աթոռն ի յանցս ճանապարհին պատերազմաց, եւ չեւ եւս են հաշտեցեալք, կարի յարկաւորք են այսպիսի հրամանքս զորս ընկալաք»[33]:

Կարապետը, իր կրթվածությամբ և վարչական կարողությամբ, վաղուց ի վեր մեծ հարգանք էր վայելում եկեղեցական շրջանակներում: Ահա թե 1714 և 1718 թթ. ինչպես էր բնութագրում Կարապետին Կարմիր վանքի միաբան Հովհաննէս Զեյթունցին.

(1714 թ.) «...ի յառաջնորդութեան Սրբոյ Աթոռոյս Զեյթունցի Կարապետ Աստուածաբանութեամբ ճոխացեալ վարդապետին, արհի եւ պանծալի արշի եպիսկոպոսին, որ այժմ ունի եւ վայելէ զիւր դահապետութիւն, հանդերձ բազմահոյլ եւ գումարախումբ միաբանիւք, զոր իսկոյն կառավարէ եւ խնամարկէ զիւրաքանչիւրն ըստ պիտոյիցն հարկաւորօքն եւ վայելչականօքն, հոգեւորականօք եւ մարմնականօք ամենիմաստ գիտութեամբն իւրով...

(1718 թ.)...յառաջնորդութեան սրբոյ ուխտիս Զեյթունցի ամենապատուելի մեծի Տեառն Կարապետի գերահռչակ եւ ճոխափառ ծայրագոյն բաբունապետի եւ Աստուածաբանութեանց վարդապետի, եւ առաքելական վիճակիս Գաղատիոյ՝ արեգակնափայլ եւ լուսածագ Արքայ եպիսկոպոսի...»[34]

Կարապետ կաթողիկոսի վարչական-դիվանագիտական կարողությունների մասին դրական է արտահայտվում նույնիսկ նրան կուսակցական հակառակորդ համարող Սիմեոն Երևանցին.

«Սա էր այր ծեր եւ անձնեայ, մեծաշուք եւ առատաձեռն... Սա ետ նկարել զպատկերս երկոտասան Առաքելոցն ի ճակատ Աւագ

խորանին եւ ետ ծաղկել ոսկեզօծ եւ գեղեցիկ գունօք: Ունի հոգաացեալ եւ զգրեանս օգտարարս... Եւ մինչ ի ժամանակս սորա երկիրս մեր ընդ իշխանութեամբ Օսմանցւոց էր, ուստի եւ *սա կարի յառաջադէմ եւ յաջողակ էր ի բանս եւ սիրիւր ի նոցունց,* զԵրեւանու մելիք Յակոբճանն ի կախաղանէն իջուցեալ ապրեցոյց ի մահուանէն»[35]:

Այս պարբերությունից կարելի է մակաբերել նաև, թե Կարապետին կաթողիկոսացնելու անհրաժեշտության օգտին ինչպիսի փաստարկներ պետք է բերած լիներ Կոլոտ պատրիարքը (որն այդ պահին, ի դեպ, դեռևս եպիսկոպոս չէր): Թեև Գաղատիայի առաջնորդն իսկապես վատածանոթ էր Պարսկահայաստանի եկեղեցաքաղաքական վիճակին և ավանդական կացութաձևերին, սակայն, ամբողջ կյանքն ապրած լինելով Օսմանյան կայսրության մեջ, նա հրաշալի գիտեր Արարատյան երկրի և Մայր Աթոռի վրա իրենց վարչությունը հաստատած օսմանցիներին: Իսկ այդ պահին ամենակարևոր գործն, իրոք որ, Երևանի օսմանյան կուսակալի հետ լավ հարաբերությունների հաստատումն էր: Նույնիսկ Կարապետ Բ Ուլնեցուն չհամակրող Սիմեոն կաթողիկոսի վկայությամբ՝ Կարապետն այս խնդիրը փայլուն է լուծում: Ուստի Կարապետ կաթողիկոսին «պարզամիտ» անվանելով՝ Սիմեոնը նկատի ուներ, նախ և առաջ, նրա անկեղծությունը, պարզ սիրտ ու հասարակ վարք ունենալը (ի հակադրություն՝ «խորամանկ, շոքմոգ, կեղծաւոր եւ խաբող» Կոլոտի), ապա նոր նրա անտեղյակությունն Էջմիածնի կաթողիկոսի և Մայր Աթոռի գերակայության վերաբերյալ զանազան արարողակարգային ընդունված նորմերին և այլ կարգի խնդիրներին[36]: Առհասարակ՝ Սիմեոնի բերանում «պարզամիտ»ը դրական իմաստ ունի, այլապես նա այն չէր օգտագործի իրեն իսկ ինքնաբնութագրելիս[37]:

Վերը նշել ենք, որ, օսմանյան հետախուզությունը համոզված էր, որ Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը մասնակցել է Արցախում և Սյունիքում կենտրոնացած հայկական զինուժի համախմբմանը, որոնք իրենց հերթին կապ էին հաստատել պարսկական հակաօսմանյան ուժերի և Ռուսաստանի հետ: XVIII դարում էլ (ինչպես և այսօր) ապստամբների և օտար պետության հետ համագործակցելը դիտվել է իբրեւ հակապետական գործողություն եւ լրտեսություն: Ահա մեկ օրինակ: 1745 թվին, ձերբակալելով հայ ճանաչված

երկու արքեպիսկոպոսների և հարուցելով մի շարք ամբաստանու-թյուններ, Ղազար Ջահկեցին նրանց ամենամեծ մեղքը համարում էր լրտեսությունը.

> «Ստուգութեամբ ի վերայ հասեալ եմ, զի դուք երկոքին եւս լրտես էք յայլմէ թագաւորութենէ (իմա՝ Օսմանյան կայսրու-թյան - Ա.Ա.). վասն որոյ պա՛րտ է ինձ դատաստան առնել ընդ ձեզ, եւ յետ դատելոյ առաքել ի Դավրէժ առ մեծ իշխանն պարսից, զի նա եւս դատեսցէ եւ պատուհասեսցէ զձեզ»[38]:

Միջպետական հարաբերությունների ոլորտին վերաբերող այսօրինակ իրողությունների դիտարկումը թույլ է տալիս ճշտել Կ. Պոլսում Կարապետ Ուլնեցուն կաթողիկոս ընտրելու ընթացքի վրա ազդած թերևս ամենավճռորոշ՝ ցայսօր չնկատված և ստվերում մնա-ցած հանգամանքը: Բանն այն է, որ այդ ընտրությանը միջամտած պետք է լիներ Բարձր Դուռը, որը ցանկանալու էր Ս. Էջմիածնի գա-հին բազմած տեսնել հե՛նց Կարապետի պես ողջ կյանքն Օսմանյան եր-կրում պաշտոնավարած վստահելի մի անձի, և ո՛չ թե իրեն վատածա-նոթ արևելահայ եկեղեցական որևէ գործչի, որը կարող էր Արցախում և Սյունիքում թուրքերին դիմադրող հայկական զինուժի հնարավոր գաղտնի աջակիցն ու համախոհը լինել, կամ անցյալում հաստատված կապեր ունենալ պարսկական և ռուսական իշխանությունների հետ:

Ս. Էջմիածնի Աթոռին օսմանահպատակ գործչի տեսնելու իր պահանջով կաթողիկոսական ընտրությունների վրա ներազդելու համար Օսմանյան արքունիքը ուներ միակ արդյունավետ ճանա-պարհ՝ իր պահանջը ներկայացնել ի պաշտոնե մշտապես Բարձր Դռան հետ գործակցող Կ. Պոլսի Հայոց պատրիարքին ու նրանից էլ ակնկալել այդ պահանջի կատարումը: Այլ հարց է, որ ինքը՝ Կոլոտ պատրիարքը չէր կարող բարձրաձայն բոլորի առջև բացահայտել Բարձր Դռան դրած այս խիստ պայմանը, որի մասին գիտեին դուցե մի քանի հոգի միայն: Հետևաբեմային այս անցուդարձին ժողովա-կանների մեծ մասը, ինչպես և ժողովուրդը անտեղյակ էին: Սա էլ հենց նպաստեց Կոլոտին ուղղված մեղադրանքների առաջացմանը, ըստ որի հե՛նց նա է խախտել Հայ եկեղեցու աւանդությունները՝ կա-թողիկոսական ընտրությունն անցկացնելով Կ. Պոլսում ու նաև չհարգելով չորս Աթոռների գերակա մասնակցության կանոնը:

Կարապետ Ուլնեցին իբրև «յայնկուսացի»
(արևելահայ և արևմտահայ կղերի հարաբերությունները XVII-XVIII դարերում)

Սակայն, Կարապետի կաթողիկոսանալուն դեմ եղածները, ավելի խորքում ունեին կարևոր ու, անշուշտ, ժողովի ժամանակ բարձրաձայն չարծարծված ևս մի պատճառ, այն է՝ որ Կարապետը «յայն կուսացի եւ մանաւանդ ի վիճակէն Սըսայ» էր: Մ. Օրմանյանը, բանեցնելով Սիմեոն կաթողիկոսի դեմ նույնպիսի անհարկի հարձակողականություն, որպիսին վերջինս գործածել էր Կոլոտի դեմ, այս առթիվ գրում է, թե Սիմեոնը «քսութեան ձևերու ալ կդիմե և Կարապետին ի վիճակեն Սըսա, այսինքն՝ պարզ ծննդյամբ զեյթունցի ըլլալը կհիշե, զի այն նշանակութենե զուրկ պարագա մըն է և ոչ երբեք Կարապետի՝ Սսո միաբան կամ Սսո Աթոռեն եպիսկոպոսացած ըլլալը կցուցնե. ապա թե ոչ՝ հայտնապես գրած կըլլար զայդ եթե այնպես եղած ըլլար: Իբր քսութիւն կնկատենք նաև Կարապետը «յայնկուսացի» կոչելը, լատինամիտ և կաթոլիկության հակամետ ըսել ուզելով»[39]:

Իրականում, ինչպես ստորև կտեսնենք, Սիմեոն Երևանցու «յայնկուսացի»-ն նշանակում է արևմտահայ Եղիազար Այնթապցի (1682-1691) և Նահապետ Եդեսացի (1691-1705) կաթողիկոսների կղերական կուսակցության ներկայացուցիչ, կուսակցություն, որը վաղուց ի վեր վարկաբեկված էր արևելահայ հոգևորականության շրջանում և որին հաճախ վերագրվում էր նաև լատինամետ ընթացք:

Առանց մեջբերելու հանրահայտ փաստերը՝ հիշեցնենք, որ սկսած Կիլիկյան Հայաստանի ժամանակաշրջանից՝ արևելահայ և արևմտահայ կղերի հարաբերություններում որոշակի լարվածությունը մերթընդմերթ բերում էր անցանկալի բախումների: Մասնավորապես, 1441 թ. Ս. Էջմիածնում Մայր Աթոռի վերահաստատվելուց ի վեր, ավանդական էին դարձել Սսի և Էջմիածնի միջև հակասությունները, Զամչյանի բառերով ասած՝ «ատելութիւն թշնամութեան, որ կայր ի մէջ երկուց Աթոռոց»[40]: Ամենալուրջ ճգնաժամը արձանագրվեց 1664 թ., երբ Սսի գահակալ Խաչատուր Գաղատացու ձեռքով կաթողիկոս օծված Եղիազար Այնթապցին հռչակվեց բոլոր արևմտահայոց կաթողիկոս: 1681 թ. Եղիազարի՝ Ս. Էջմիածնի կաթողիկոս

դառնալով կրքերն առժամանակ հանդարտվեցին, սակայն շատ չանցած, նրա աշակերտ Նահապետ Եդեսացու անօրինաբար կաթողիկոսանալով (1691 թ. օգոստ. 10)՝ Հայաստանյայց եկեղեցին ապրեց ևս մեկ ցավոտ շրջան, որը, բացի բարոյական, նյութական և անգամ մարդկային ծանր կորուստներից, հանգեցրեց մինչև իսկ Մայր Աթոռից արևելահայ խոշորագույն կենտրոններից մեկի՝ Նոր Ջուղայի ամբողջ վիճակի ժամանակավոր փաստական անջատմանը (1693/4 թ-ից մինչև 1705 թ.)[41]: Եղիազար և Նահապետ կաթողիկոսների հանդեպ արևելահայ հոգևորականության շրջանում ձևավորված ընդհանուր բացասական վերաբերմունքի արտահայտությունները մանրամասն ներկայացրել ենք սույն գրքի Հավելված Ա-ում (տե՛ս, մասնավորապես, Զաքարիա Քանաքեռցու տված գնահատականը):

Միանգամայն բնական է, որ այս մտապատճենի (ստերեոտիպի) հակադարձ երեսը գտնում ենք հայ կղերի արևմտահայ կուսակցության մեջ. տակավին 1634 թ. Սսի Սիմեոն Բ. Սեբաստացի (1633-1648) կաթողիկոսը Ս. Էջմիածնի կաթողիկոսին հղած իր մի գրգռիչ նամակում այսպես էր ակնարկում պարսկական վարչության ներքո պաշտոնավարելու թերի պարագաները.

> «Սակայն երկրի մերում չես կարող առնել ինչ, հանդարտ կաց, զի այս երկիրս Օսմանեան երկիր է, սոցա դատաստանն ուղիղ է, Աստուած զսոցա թագաւորութիւնն հաստատ պահեսցէ...», կամ՝ «...սոքա օսմանցի են. թէպէտ այլազգի են, բայց ուղիղ դատաստան ունին»[42]:

Այս վերջին մտապատճենը, սակայն, հաճախ մերժվել է հե՛նց սեփական ճամբարում. այսպես 1656 թ. հունիսի 5-ին Կ. Պոլսի հայ բնակչությունը, Ս. Էջմիածնի նվիրակին հասցեագրած մի նամակում, ծայրահեղ բացասական բնութագրություն է տալիս Օսմանյան կայսրությանը, ավանդաբար անվանելով այն Տունս Հունաց.

> «Ի Կոստանդնուպօլսոյ Զ (6) եկեղեցոյ իշխանաց, աթոռակալից, եկեղեցականաց եւ այլ հասարակ քահանայից, ժողովրդեան մեծամեծաց եւ փոքունց եւ այլ եկք եւ ընիկք Հռոմցոցս ամենայնի՝ ուշ լիցի քեզ Արեւելցի Մարտիրոս եւ Մովսէս վարդապետդ եւ նուիրակդ, պարոնտէրդ եւ փիլիսոփայդ, որ լու եղեւ փաւքելի եւ սիրալի գալուստ քո *առ անարգ եւ մոլի, յիմար եւ տմարդի Տունս Յունաց* (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.)»[43]:

Արդ, Սիմեոն Երևանցին, ստանալով իր կրթությունն ու դաստիարակությունն Ս. Էջմիածնում («վարժեալ ի մանկութենէ ի ծոց սրբոյ Աթոռոյս»[44]), քաջատեղյակ էր Եղիազարի ու Նահապետի վայրագործունեությանն ու դրա տխուր արդյունքներին: Այսպես, ծանուցելով, որ սկսած 1706 թ. Էջմիածնի կաթողիկոսները, բացի պարսից շահից, ենթակա էին դարձել նաև օսմանյան սուլթանի հաստատմանը, նա նշում էր. «որոյ պատճառն է գլխաւորապէս Եղիազարու եւ այլոց նոյնապիսեաց լրբութիւնն»[45]: Այն, որ «այլոց նոյնապիսեաց» ասելով, Սիմեոնն առաջին հերթին նկատի ուներ Նահապետ Եդեսացուն, պարզ է դառնում վերջինիս այսպիսի բնութագրությունից՝ «էր նման Եղիազարու (որոյ էր աշակերտ). այր ճոռամախօս եւ փառապերճ, իշխան եւ ահարկու, յորմէ կասկածէին ամենեքեան»[46]:

Լսելով Կարապետ Ուլնեցուն կաթողիկոսացնելու Կոլոտի մտադրության մասին՝ Կ. Պոլսի ժողովին մասնակցող արևելահայ հոգևորականները, անշուշտ, վերհիշել են կաթողիկոսացուի կենսագրության երկու մանրամասնություն. նախ՝ Կարապետը, ինչպես և Եղիազար կաթողիկոսը՝ ծննունդով կիլիկեցի էր՝ «ի վիճակէն Սըսայ», և երկրորդ՝ 1694 թ. նրան եպիսկոպոսացրել ու Գաղատիո վիճակի առաջնորդ էր կարգել ոչ այլ ոք, քան Նահապետ կաթողիկոսը[47]: Ավելին, Կարապետի «հոգեւոր ծնող»՝ Գաղատիայի նախկին առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը, նույնպես զեյթունցի էր և Նահապետ կաթողիկոսի հետ լավագույն հարաբերությունների մեջ էր: Նահապետի համար ծանր 1694 թ., երբ Նոր Ջուղան արդեն ի լուր ամենքի իր անվստահությունն էր հայտնել Ս. Էջմիածնի կաթողիկոսին՝ արգելելով իր վիճակի տարածքում պատարագի ու ժամերգության մեջ հիշատակել նրա անունը (տե՛ս Հավելված Ա), Ստեփանոսն, ի նշան իր աջակցության, «բազում ընծայիւք» Մայր Աթոռ է ուղարկում Կարապետ Ուլնեցուն[48]: Ուստի հին թշնամությունը չմոռացած արևելահայ եկեղեցականները (ու նրանց հետագայում ընդամենը կրկնած Սիմեոն Երևանցին) իրավունք ունեին Կարապետին անմիջապես նկատելու «յայնկուսացի», այսինքն՝ եղիազար-նահապետյան արևմտահայ կուսակցության ներկայացուցիչ:

Այնուամենայնիվ, «ի վիճակէն Սըսայ» արտահայտության իմաստն ու ենթաիմաստներն առավել ընդգրկուն պատկերացնելու համար պետք է փոքր-ինչ ավելի խորանալ պատմության մեջ: 1633

Թ. Սսի վերոհիշյալ Սիմեոն կաթողիկոսը, իր պնդմամբ՝ առաջնորդ-վելով Գաղատիո ժողովրդի ցանկությամբ, եպիսկոպոսացրել և տեղի առաջնորդ էր կարգել կիլիկեցի Թորոս վարդապետին: Սա Ս. Էջմի-ածնի իրավասությունների կոպիտ խախտում էր, քանզի Գաղատիա-Անկյուրիան, ինչպես, պատասխանելով Փիլիպպոս կաթողիկոսի հանդիմանությանը, ընդունում էր ինքը Սսի Սիմեոն կաթողիկոսը՝ «Էջմիածնի է թեմն»: Սակայն, դրա հետ միասին, նա չէր հրաժար-վում իր իրավունքից՝ ազատորեն եպիսկոպոս ձեռնադրելու հատկա-պես նրանց, ովքեր ծննդեամբ Սսի վիճակից էին.

> «Արդ այսուհետեւ ի՞նչ իրաւունք մնաց քեզ, որ թուղթ յղես վասն նորա եւ մեղադրես զմեզ, թէ՝ եպիսկոպոս ես օրհնեալ. զի եթէ օրհնեմ, զի՞նչ վնաս ի նմանէ՝ ո՞չ ապաքէն ի մեր թեմն է, զի ի կողմանէ հօր ի Գամրայ երկրէն է եւ ի մօր կողմանէ՝ ի Մելի-տինայ, զի հարբ եւ մարբ իւրով ի թեմէս եւ ի վիճակէս մերմէ է, քեզ զի փոյթ է, որ թուղթ եւ մեղադրանք յղես ի կողմանս մեր»[49]:

Միաժամանակ, Սսի Սիմեոնն իր հերթին մեղադրում էր Ս. Էջմիածնին, թե «զբերիացի (=հալեպցի) Մարգար երիցու որդին՝ զՍի-մէոնն օրհնեցիք (նկատի ունի եպիսկոպոս ձեռնադրելը՝ Ա.Ա.)»[50]: Հետևաբար՝ Սիս-Էջմիածին ավանդաբար լարված հարաբերություն-ների տեսանկյունից, Կարապետ Ուլնեցու ծննդյան վայրը ժամանա-կակիցների համար բոլորովին էլ «նշանակութենե զուրկ պարագա մը չէր», ինչպես կարծում է Օրմանյանը:

Մի կարևոր հանգամանք ևս: Կարապետ Ուլնեցին Զեյթունից եկել էր Գաղատիա 1678 թ., 17 տարեկան հասակում, իր խոսքերով՝ «յետ ուսման դպրութեան եւ յետ վաղճանի ծնօղացս»[51]: Երեք տարի անց նա ձեռնադրվում է քահանա[52]: Մինչդեռ 1652 թ. Երուսաղեմում Էջմիածնի Փիլիպպոս և Սսի Ներսես կաթողիկոսների միջև կնքված հայտնի կանոնադրության առաջին իսկ կետի համաձայն՝

> «իւրաքանչիւր կաթուղիկոս զիւրոյ վիճակի *նուիրեալն* ձեռնադրեսցէ [եպիսկոպոս] եւ մի զայլոց. եւ թէ դէպ լինիցի զի ձեռնադրեսցէ յայլմէ վիճակէ զոք՝ յիւրում վիճակին տեղաւորեսցէ զնա... երկրորդ՝ զի ինքն նուիրեալն եւս մի համարձակեսցի առ այլ կաթուղիկոս գնալ՝ թողլով զիւրն, այլ առ իւր կաթուղիկոսն»[53]:

Բծախնդիր մոտեցման դեպքում «նուիրեալ» կարող էր համարվել քահանայությանը նախորդող հոգևորական աստիճանները[54] ստացած կամ նույնիսկ մկրտված որևէ մեկը[55]: Արդարև, Կարապետը մկրտվել և եկեղեցական առաջին պաշտոններն էլ ստացել էր իր ծննդավայր Զեյթունում, ուստի նրա մասին ասված «ի վիճակէն Սըսայ» դարձվածը սխալական չէ նաև այս տեսանկյունից: Ինքը Կարապետը, շատ սերտ հարաբերություններ պահպանելով իր ծննդավայրի հետ[56], հատուկ ընդգծում էր՝ «եմ ի Տանէն Կիլիկիոյ»[57]: Պարզվում է նաև, որ Կարապետն ունեցել է անվանակից ավագ եղբայր վարդապետ, որն, ըստ ամենայնի, գործել է Սսի վիճակի սահմաններում (1694-ի դրությամբ մահացած էր)[58]: Իսկ մյուս եղբայրը՝ Ստեփանոսը և նրա որդի Հակոբը քահանայագործում էին Զեյթունի մեջ[59]:

Մեկ այլ ճշտում. Կարմիր վանքի վերոհիշյալ միաբան Հովհաննես Զեյթունցին Կարապետ Ուլնեցու եղբոր՝ Ստեփաննոս քահանայի որդի Հակոբ քահանայի որդին էր[60]: Նա գրում է՝ «եմ երկրաւ գերմանացի ի գեղջէն Զեյթունայ՝ ի տանէ նախնեացս Դագոնց կոչեցելոյ»[61]: Ուրեմն՝ Կարապետ Ուլնեցու նախնիների «ազգանունը» եղել է Դագոնց:

Կարապետի հոգևոր հայր Սաչլու (=Գիսավոր=Վարսավոր=Վարսամ[62]) մականվանյալ Ստեփանոս Զեյթունցին էլ առնվազն 1673-ից եղել է Զեյթունի Ս. Աստվածածնի թեմի առաջնորդը[63]: Անպարզ հանգամանքների բերումով և 1652 թ. կնքված վերոհիշյալ համաձայնագրի խախտումով, 1678 թ. նա ստանձնել է Գաղատիո էջմիածնական վիճակի առաջնորդությունը. իր ասելով՝

> «ես իմ կամաւ թողի [Զեյթունի Ս. Աստվածածնի] զառաջնորդութիւն Մկրտիչ վարդապետի, եւ ես Ստեփանոս եպիսկոպոս նստա՛ յԱնկիւրի հրամանաւ նախ Մարտիրոս [Ղրիմեցի] վարդապետի, որ էր վէքիլ (=լիազոր ներկայացուցիչ) Յակոբ [Դ. Ջուղայեցի] կաթողիկոսի եւ յետոյ ինքն՝ Յակոբ կաթողիկոսն, ինքն հաստատեաց զմեզ յաթոռս այս եպիսկոպոս եւ առաջնորդ, որ յետ նորա եկեալ մեծն Եղիազար [Ա. Այնթապցի Ա. կաթողիկոս] եղեւ առաջնորդ էջմիածինն եւ նա՛ եւս ետ մեզ ձեռագիր առաջնորդութեան»[64]:

Գաղատիայի առաջնորդությունն ստանձնելու համար Ստեփանոսի ստացած եռակի հաստատումն արդեն ինքնին փաստում է,

որ Սսի վիճակից՝ Ս. Էջմիածնի վիճակ փոխադրվելը բավական արտառոց և նուրբ իրադարձություն է եղել:

Այսպիսով, Սիմեոն Երևանցու վերոբերյալ մի քանի արտահայտությունների պարզաբանումը հանգեցնում է հետևյալ եզրակացության: Կարապետ Ուլնեցին, արևելահայ հոգևորական գործիչների պատկերացմամբ, եղել է Եղիազար Այնթապցի (1681-1691) և Նահապետ Եդեսացի (1691-1705) կաթողիկոսների վարկաբեկված կղերական կուսակցության ներկայացուցիչը. մինչդեռ 1706-ից մինչև 1725 թ. Մայր Աթոռը Ս. Էջմիածինը կառավարվել ու ճևավորվել էր Եղիազարի և Նահապետի ոխերիմ թշնամի՝ ջուղահայ կղերական կուսակցության ներկայացուցիչներ Աղեքսանդր և Աստվածատուր կաթողիկոսների օրոք: Քսան տարի շարունակ ղեկավարվելով և դաստիարակվելով այս հայադավանապաշտ կաթողիկոսների ու նրանց նշանավոր համախոհների (ինչպիսին էր, օրինակ, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցին) աջի և պատգամների ներքո, երբ Եղիազար ու Նահապետ կաթողիկոսների կղերական կուսակցությունն այլևս ընդմիշտ օտարված էր թվում Մայր Աթոռից, արևելահայ կղերը մեծ անակնկալի է եկել՝ տեսնելով Կարապետ Ուլնեցուն կաթողիկոսի գահին բարձրացած:

Սակայն Կարապետ Ուլնեցու ընտրությունը հարուցել էր նաև այլ կարգի մտավախություններ և բարձրաձայն դժգոհություններ, այն է՝ որ Կարապետ Ուլնեցին, հետևելով Կ. Պոլսի Հովհաննես Կոլոտ պատրիարքին, ենթադրաբար դիմել է կաթոլիկ եկեղեցու հետ մերձեցման անթույլատրելի քայլերի: Հանգամանորեն քննենք այս խնդիրը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] ԱԶԳ, սյուն. 1944:
[2] Տե՛ս *Ջամբռ*, էջ 28:
[3] Նույն տեղում, 299:
[4] Նույն տեղում, էջ 235-236:
[5] Տե՛ս ԱԶԳ, սյուն. 1945-1947:
[6] ԱԶԳ, սյուն. 1947:
[7] Տե՛ս *Ջամբռ*, էջ 29, 56-57, 62, 234-238:
[8] Տե՛ս **Բաբգէն Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վա-*

նուց եւ շրջակայից (Անթիլիաս, 1957), սյուն. 478, 480:

[9] **Սահակ Ճեմճեմեան**, «Նոր նիւթեր Կ. Պոլսոյ երջանկայիշատակ պատրիարք Յովհաննէս Կոլոտի մասին (քաղուած Ս. Ղազարի դիւանէն)». - *Բազմավէպ*, 1978, էջ 260:

[10] Նույն տեղում:

[11] Տե՛ս **Բաբգէն Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից*, սյուն. 483, հմմտ. սյուն. 433:

[12] Տե՛ս «*Կարապետի կաթողիկոսի Ուլնեցւոյ Վարք ինքնագիր*»: Հրատարակեց Սահակ Ճեմճեմեան. - *Բազմավէպ*, 1978, էջ 289: Ս. Ճեմճեմյանի ուշադրությունից, սակայն, վրիպել են այս հիշատակարանի համառոտ տարբերակները, որոնք ունեն մի շարք լրացուցիչ տեղեկություններ և հրապարակված են Բ. Կյուլեսերյանի *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*-ում (սյուն. 101-104, 432-435, 482-486): Նույն գրքում Կյուլեսերյանը նշում էր, որ «այս ընդարձակ հիշատակարանն արդեն ընդօրինակած և դրած ենք Անկյուրիո Հայոց պատմության մեջ՝ Կարապետ կաթողիկոսի վրա դրելու ատեն, վավերագիրներու շարքին և տված ենք կարևոր ծանոթություններ ալ» (սյուն. 298): Ցավոք, «*Հայ Անկիւրիա*» վերնագրված այդ, ըստ ամենայնի, արժեքավոր աշխատությունը ցայսօր անտիպ է մնացել (տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, սյուն. 1109):

[13] Այս մասին ունենք երկու առանձին տեղեկություն. ա. «ՌՃՀԵ (1726) մարտի Զ (6) Կարապետ վարդապետն կաթողիկոս օրհնեցին, որ էր անառակի կիրակին» (*Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 2347, պահպանակ Դ). բ. 1726 թ. մարտի 12/23-ին գրված մի վավերագրում կարդում ենք. «...Կարապետ վարդապետ՝ Գաղատիու առաջնորդն եղեւ կաթուղիկոս... ի յերկոտասան եպիսկոպոսաց յեկեղեցին Աստուածածնայ...» (տե՛ս **Ղեւոնդ Տայեան**, *Մայր դիւան մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար, 1707-1733:* Վենետիկ, 1930, էջ 31): Զամչյանը օծման հանդեսին տալիս է փոքր-ինչ տարբեր թվագրում՝ 1727 թ. փետրվար 27, որը նույնիսկ նոր տոմարի վերածելու դեպքում ստացվում է մարտի 9-ը և մարտի 6-ի հետ չի համընկնում (ՁԱՄ, Գ, էջ 801-802):

[14] Ինչպես տեղեկանում ենք Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող՝ Ահմեդ Գ սուլթանի հիջրեթի 1138 թ. ռաջապ ամսի 1-ին (այսինքն՝ 1726 թ. մարտի 5-ին) արձակած ֆերմանից, կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո Կարապետ Ուլնեցին աթոռակալ է նշանակում Սիմեոն վարդապետին և որպես փոխանորդ առաքում Ս. Էջմիածին: Նույն վավերագրի հակառակ կողմում առկա է ավելի ուշ գրանցված (ըստ երևույթին, 1760-ական թթ., երբ Մայր Աթոռի դիվանը Սիմեոն կաթողիկոսի հրամանով կարգի էր բերվում) հետևյալ բացատրագիրը.

Յորժամ Կարապետ կաթողիկոսն ի Պոլսոյ զՍիմէօն վարդապետն Աթոռակալ արարեալ յղեալ է ի Սուրբ Աթոռս, զայս ֆարմանս հանեալ էի սուլթան Ահմէտ թագաւորէն ի վերայ փաշայից, դաղեաց եւ այլ մեծամեծաց եւ ենկիչարոց, զի՝ ուր եւ դիպեցի նա ի գալն յԱթոռս, մի՛ ոք նմա դիպեսցի եւ զբան պահանջեսցէ:

(*Մաշտոցի անվ. Մատենադարան*, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 310): Այս Սիմեոնին հիշում է նաև Սիմեոն Երևանցի կաթողիկոսը.

Այլ եւ առն գովելոյ, չնորհաշատի եւ պեճիմաստի, Տեառն Սիմէօն Աստուածաբանի վարդապետին Երեւանցւոյ զմեծ եւ զարժանի արձանագրեցման գործն ոչ է զանց առնելի, որ է ի ՌՃՀԳ (1724) թուոջն մինչ Օսմանցին ի մերս կոյս դիմեաց եւ էառ զերկիրս մեր, յիշեալ Սիմէօն վարդապետն ի Կոստանդնուպօլիս նուիրակ էր Սրբոյ Աթոռոյս, մեծաւ հոգունակութեամբ զհրամանագիրս եհան ի թագաւորէն ի վերայ սէրէսկէրին իրոյ, զի ի յԱթոռս ամենեւին ոչ մերձեսցին եւ մի վնաս ինչ տայցեն, որպէս եւ եղեւն: Որ ահա նոյն հատի չերիֆն գոյ ի Սուրբ Աթոռս (*Ջամբռ*, էջ 28-29, 241):

Մ. Օրմանյանն ու Պ. Հարությունյանը հատուկ նշել են այս Սիմեոն Երևանցի վարդապետի և Սիմեոն Երևանցի կաթողիկոսի տարբեր անձ լինելը (ԱՋԳ, Գլուխ 1945. **Симеон Ереванци**, *Джамбр* (Москва. Изд. Вост. Лит-ры, 1958), с. 381, прим. 55): Շատ հավանական է, որ մեծ Սիմեոնը հե՛նց այն Սիմեոն վանականն է, որին Աստվածատուր կաթողիկոսի խնդրագրով՝ 1724 թ. մարտի 29-ին սուլթան Ահմեդ Գ-ն համաձայնել էր դարձնել Երևանի առաջնորդ՝ ազատելով Կարսի և Բայազետի առաջնորդությունից (*Մաշտոցի անվ. Մատենադարան*, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, ցուցակ No. 29, վավերագիր 291) և որի դիմաց կաթողիկոսի չանվանված ներկայացուցիչը (գուցե այդ պահին Կ. Պոլսում գտնվող նույն Սիմեոնը) դանձարան էր մուծել 6800 ախչա (տե՛ս նույն տեղում, վավերագիր 330):

[15] Տե՛ս «Կարապետի կաթողիկոսի Ուլնեցւոյ Վարք ինքնագիր». - *Բազմավէպ*, 1978, էջ 292-293: **Սահակ Ճեմճեմեան**, «Նոր նիւթեր Կ. Պոլսոյ երջանկայիշատակ պատրիարք Յովհաննէս Կոլոտի մասին», էջ 269: ՁԱՄ, Գ, էջ 802:

[16] Գ. Բամպուքճյանը սխալմամբ դնում է այս Մանուելին Կոլոտ պատրիարքի աշակերտների շարքում (տե՛ս **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ (1678-1741) եւ իր աշակերտները:* Ստանպուլ, 1984, էջ 123-

124): Կոլոտի աշակերտներից որևէ մեկը 1725-ի դեկտեմբերին չէր կարող առաջադրվել կաթողիկոսի թեկնածու թե՛ տարիքի, թե՛ հոգևորական աստիճանի պատճառով (հիշենք, որ, օրինակ, ինքը Կոլոտն այդ պահին դեռևս եպիսկոպոս էլ չէր, իսկ նրա լավագույն աշակերտ Հակոբ Նալյանը միայն 1728 թ. ստացավ մանավոր վարդապետության աստիճան, տե՛ս **Գ. Բամպուքճեան**, *Յակոբ Նալեան պատրիարք 1706-1764*: Ստանպուլ, 1981, էջ 17-19): Այնինչ Կարապետ կաթողիկոսը՝ 1726 թ. օգոստ. 25-ին գրված մի նամակի մեջ, այս Մանուելին հորջորջում է «Աթոռակալ որդեակին Մանուել մեծ (այսինքն՝ տարիքն առած, վաստակաշատ, հեղինակավոր, Ա.Ա.) վարդապետի...» (տե՛ս **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 123):

[17] Օրինակ, 1708 թ. փետրվարի 20-ին Էջմիածնի Աղեքսանդր Ա Ջուղայեցու հայտնի կտակ-շրջաբերականը ստորագրած 138 գործիչներից առնվազն 5-ը՝ աստապատցի էին, որոնցից 4-ը՝ Էջմիածնի միաբան (Մինաս արքեպիսկոպոսը և երեք վարդապետներ՝ Խաչատուրն ու երկու Մարտիրոսը) - տե՛ս *Ազգասէր Արարատեան*, Կալկաթա, 1849, էջ 95-96:

[18] Աստվածատուր կաթողիկոսի օրոք՝ 1724 թ. մարտին, հիշվում է Ս. Էջմիածնի նաև մեկ ուրիշ աթոռակալ՝ Հովասափ անունով (տե՛ս APO, II, док. 288, с. 85):

[19] «Վարք գերապատիւ Մինասայ արքեպիսկոպոսին Զմիւռնիոյ...», *Մատենադարան Մխիթարյանց ի Վենետիկ (Ս. Ղազար)*, ձեռ. 2660, էջ 6:

[20] 1727 թ. Կարապետ Ուլնեցին Մինաս Փերվազյանի մասին ասում է՝ «Առաջնորդն Իզմիրու, հոգեւոր որդեակն իմ Մինաս վարդապետն Ակնցի» (տե՛ս «Կարապետի կաթողիկոսի Ուլնեցւոյ Վարք ինքնագիր». - *Բազմավէպ*, 1978, էջ 293): Արդյո՞ք սա նշանակում է, որ Մինաս Փերվազյանը և 1694 թ. Գաղատիայի Ս. Աստվածածնի «տէր Մինաս վարդապետ»ը՝ նույն անձն է (հմմտ. «Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ», այուն. 930): Համենայն դեպս, Մինաս Փերվազյանի ինքնակենսագրականում որևէ տեղեկություն չկա իր՝ Գաղատիայում երբևէ գտնվելու և Կարապետ Ուլնեցուն մինչև կաթողիկոս ընտրվելը ճանաչելու մասին: Ինքնակենսագրականում Մինասը չի գրում, սակայն, թե ումից է ստացել վարդապետական գավազանը:

[21] **Յովհաննէս Պատկերահան**, *Նամականի*, էջ 27-28, ծնթ. 27:

[22] Տե՛ս APO, II, док. 169, с. 20:

[23] Տե՛ս «Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*, 1971, էջ 367:

[24] Տե՛ս «Եղիա Կարնեցու դիվանը: Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության»: Առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի (Երևան. «Միտք» հրատ., 1968), վավերագիր 91, էջ 177: Փաստորեն, այս ժողովածուի հրատարակիչ Աշ. Աբրահամյանը չփոթել է Մինաս Փերվազյանին (իսկ երկու այլ փաստաթղթում՝ ոմն վաճառական

Մինասին, տե՛ս էջ 79 և 117) Մինաս Տիգրանյանի հետ, հմմտ. անձնանուն-ների ցանկ, էջ 356, նաև՝ էջ 340, ծնթ. 37: Իրականում՝ Մինաս Տիգրանյա-նը ժողովածուի որևէ վավերագրում հիշատակված չէ:

[25] Տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, դրսի ժապավեն No. 268:

[26] Ծնվել է Ռ.Ճ.Ժ (=1661) թ. - տե՛ս «Կարապետի կաթողիկոսի Ուլնեցւոյ Վարք ինքնագիր». - *Բազմավէպ*, 1978, էջ 286: Ուշմիջնադարյան Հայաս-տանում ծեր է համարվել հիսունն անց մարդը. այս կապակցությամբ մի հս-տակ տեղեկություն է հայտնում Թովմա Մեծոփեցին (ԺԸ դար), որն ըն-թերցողից ներողամտություն հայցելով, գրում է. «դու անմեղադիր լեր, ծեր էի եւ յետ 50 ամաց սկսայ. վասն այսորիկ յետ եւ յառաջ գրեցի» (տե՛ս **Թովմա վ. Մեծոբեցի**, *Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց:* Աչխ.՝ Կարապետ վ. Շահնազարեանի, Փարիզ, 1860, էջ 44. հմմտ. **Բ. Կիւլէ-սէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, սյուն. 1148-1149): Նմանա-պես, 1245 թ. Սիմեոն թարգմանիչը գրում էր, թե «յոյժ ծերացեալ էի եւ տկարացեալ յաչաց եւ ի մտաց եւ ի զօրութենէ, զի զվաթսն ամենիւք էի» (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 2347, էջ 322բ. ի դեպ, հրապարակված է սույն հիշատակարանի փոքր-ինչ տարբեր բովանդակու-թյուն ունեցող մի տարբերակը, որ վերցված է Հայաստանից դուրս գտնվող ձեռագրի միջից, տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար»: Կազմեց՝ Ա. Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 248-249): Հայաստանի կեն-սապայմանները որևէ լուրջ բարելավում չապրեցին ընդհուպ մինչև XX-րդ դարը, ուստի ծերության այսպիսի ըմբռնումը միանգամայն համապատաս-խանում է նաև 1720-ական թվականներին: Թեև չպետք է մոռանալ, որ Հա-յաստանը միշտ եղել է երկարակյացների երկիր: Պատահական չէ, որ Ռափա-յել Պատկանյանն այդ առթիվ մի հատուկ նշում է անում 1883 թ. գրած իր «Հայաստանի ազատության վարդապետարանում». «Հայաստանը կարժէ ամենամեծ զոհերի, վասնզի նորա մէջ կեցողի կեանքի տեւողութիւնը մի-ջին թւուով է 75 տարի». տե՛ս *Ցեղին ձայնը* (Երևան, 1999), էջ 6: Հին և միջնադարյան շրջանում հայի երկարակեցության վավերագրական հաստա-տումները ի մի բերող ուսումնասիրություններ չեն կատարվել: Ահա, սա-կայն, մի փաստագրված օրինակ. Վրթանես արքեպիսկոպոս Ստեփանյան՝ ծնվել է Կեսարիայում 1661 թ., մահացել է Հռոմում 1671 թ.՝ հարյուր տաս տարեկան հասակում (տե՛ս **Յովհաննէս Պատկերահան**, *Նամականի (1695-1758)*, էջ 22, ծնթ. 17):

[27] Տե՛ս *Բազմավէպ*, 1978, էջ 285:

[28] Նույն տեղում, էջ 289:

[29] Նույն տեղում, էջ 292:

[30] Նույն տեղում, էջ 286:

[31] Նույն տեղում, էջ 287-288:

[32] Տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*, սյուն. 102:

[33] *Բազմավէպ*, 1978, էջ 290: Հիշված վավերագրերը նկարագրված են *Ջամբռ*-ում (էջ 242-244) և այժմ պահվում են Մաշտոցի անվ. Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում, թղթ. 1գ (պարսկերեն, արաբերեն, օսմաներեն), վավերագրեր 306-311, 313, 314, 321: Սիմեոն կաթողիկոսի օրոք վավերագրերի հակառակ էջին գրվել են համառոտ բացատրագրեր: Իբրև օրինակ, ստորև զետեղում ենք դեռևս մինչև Կարապետի կաթողիկոս ընտրվելը՝ 1725 թ. հոկտեմբերի 24-ին, սուլթանի տված ֆերմանի բացատրագիրը, որն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Էջմիածնի տնտեսական վիճակի մասին (նույն տեղում, վավերագիր No. 306).

ՄԼՔԵՐԻ ՖԱՐՄԱՆՆ Է ՎԱՍՆ ՄԵՐ ԽԱՐԱՃԻՆ ԻՍՊԷՆՃԻ ԵՒ ՈՉԽԱՐԻ. ՍՈՒԼԹԱՆ ՅԱՀՄԷՏԻՆ Է

Սուլթան Ահմէտ թագաւորի Ֆարմանն է, վասն մաղաֆուրթեան Սրբոյ Աթոռոյս, զոր գրէ ի վերայ Ռաշաֆ փաշային եւ զալուրյն եւ այլ մեծամեծացն Երեւանու: Եւ մաղաֆիրքն են այսինչ. Բ (2) գուրթան, Ռեճ (1500) սօմար սերմ, Եճ (500) ոչխար, Բ (2) տինկ, Բ (2) ձիթահանք, եւ բովանդակ ջրաղացքն եւ այգիքն: Ի սեւագլխացն, ասէ, ճազիայ եւ խսլանճ (գլխահարկի տեսակ է՝ հնգանորդ - Ա.Ա.) մի առցի՝ թէ՛ ի մեծացն, եւ թէ՛ ի փոքունցն: Եւ ոչ յանյիշատակաց ապրանացն զբան ինչ առցէ ոք, զի Էջմիածնի հասանիլ պարտին: Եւ բաց ի Գ ճԾ (350) զուռուշէն, զոր Երեւանու խանքն առեալ են, փաշայքն զաւելի իրս մի առցեն, այլ զայնքանն միայն առցէն:

Իսկ եւ, ասէ, ի յՕշականու ի տասնէն մի, եւ ի Մաստարայու ի տասներկուէն մի մուլքս առցեն: Նաեւ Դ (4) եկեղեցիքն եւս ասէ ընդ Էջմիածնի մաղաֆ լիցին, զորս թէպէտ ոչ գրէ յանուանէ, այլ յայլ ֆերմանս գրեցեալ գոն, որք են՝ Սուրբ Հռիփսիմէն, Գայիանէն, Շողակաթն եւ Երեւանու անապատն: Ի ՌՃԼԸ (1138) թուոջն տաճկաց: Զայս ընդ արզայի Աստուածատուր կաթողիկոսին է տուեալ: Գ (3) սաւատ (=պատճեն) եւս ունի: Շարի կնիքով:

Ավելի ուշ շրջանում ռուսերենով ավելացված է՝ 15-го Съфера 1138 г. Геджира (=1725 հոկտեմբերի 24):

[34] **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*, սյուն. 187, 910:

[35] Տե՛ս *Ջամբռ*, էջ 28:

[36] Հմմտ. նույն տեղում, էջ 59-63:

[37] Նույն տեղում, էջ 34:

[38] ՁԱՄ, էջ 828:

[39] Տե՛ս ԱԶԳ, սյուն. 1946. հմմտ. սյուն. 1953:

[40] ՁԱՄ, Գ, էջ 628:

[41] Այս մասին մանրամասն տե՛ս վերը:
[42] **Բ. Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, սյուն. 1245-1246:
[43] *«Օրագրութիւն Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանի»*: Հրատ. Մեսրոպ Նշանեան, (Երուսաղէմ, 1939), էջ 182:
[44] *Ջամբռ*, էջ 33:
[45] Նույն տեղում, էջ 238:
[46] Նույն տեղում, էջ 26:
[47] Տե՛ս *Բազմավէպ*, 1978, էջ 286-287: Գաղատիո Ս. Աստվածածին վանքի միաբան, Կարապետ Ուլնեցու եղբոր թոռ Հովհաննես Զեյթունցին սխալվել է, գրելով, թե Կարապետին եպիսկոպոսական աստիճանը չնորհել էր Եղիազար Այնթապցին (տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*, սյուն. 911-912):
[48] Տե՛ս *Բազմավէպ*, 1978, էջ 286:
[49] Տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, սյուն. 1242-1243. հմմտ. 330:
[50] Նույն տեղում, սյուն. 1240:
[51] Տե՛ս *Բազմավէպ*, 1978, էջ 286:
[52] Նույն տեղում:
[53] ԴԱՎ, էջ 270-271:
[54] Այդ աստիճաններն են. 0. Սաղմոսերգուք և ավելածուք, 1. Դռնապանք, 2. Ընթերցողք, 3. Երգմնեցուցիչք, 4. Ջահընկալք, 5. Դպիրք, 6. Սարկավագք (տե՛ս *Մաշտոց ձեռնադրութեան կղերիկոսաց, սարկաւագաց եւ քահանայից*: Վաղարշապատ, 1876, էջ 5-23):
[55] Հմմտ. *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի* (Վենետիկ, 1837): Հ. Բ, էջ 287:
[56] Տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*, սյուն. 481. հմմտ. *Բազմավէպ*, 1978, էջ 287:
[57] Տե՛ս *Բազմավէպ*, 1978, էջ 285. հմմտ. **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*, սյուն. 102, 433:
[58] **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*, սյուն. 930:
[59] Նույն տեղում, սյուն. 195, 930:
[60] Նույն տեղում, սյուն. 195, 930:
[61] Նույն տեղում, սյուն. 195:
[62] Տե՛ս *Բազմավէպ*, 1978, էջ 286. **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*, սյուն. 101, 433, 482, 748, 912:
[63] **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*, սյուն. 394, 748, 1128:
[64] Նույն տեղում, սյուն. 395:

ԳԼՈՒԽ Դ.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԱՊԵՏ ՈՒԼՆԵՑՈՒ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏԻ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սկսած Կիլիկյան Հայաստանի թագավորության ժամանակներից՝ հայոց լատինասիրությունը, որպես կանոն, ունեցել է գործնական երկու դրդապատճառ. առաջին՝ ստանալ քրիստոնյա Եվրոպայից քաղաքական և ռազմական աջակցություն, երկրորդ՝ օգտագործել եվրոպական քաղաքակրթության ձեռքբերումները հայոց կրթությունն ու մշակույթը զարգացնելու համար: Ուրեմն սկզբից ևեթ ընդգծենք, որ, առհասարակ, ինչպես ժամանակին ճիշտ նկատել է Հ. Անասյանը՝ «հայոց լատինասիրությունը... առերեսային էր, լոկ կաթոլիկ Եվրոպայի համակրանքը շահելու համար... այն պետք է չակերտների մեջ առնել և կամ ուղղակի անվանել կեղծ-լատինասիրություն»[1]:

Ի մի բերելով Եղիազար Այնթապցու «լատինասիրության» բազմաթիվ դրսևորումները՝ Հ. Անասյանը նկատում է, որ Եղիազարը «Հռոմեական եկեղեցու հետ մերձեցման և ընդհանրապես լատինասիրական բացահայտ հակումներ է ցուցաբերել 1664/1665 թվականներից սկսած» և «այդ գիծն ունեցել և պահպանել է նաև Էջմիածնի իր կաթողիկոսության ընթացքում»[2]: Նույն ուղեգիծն էր որդեգրել նաև նրա աշակերտ ու հետնորդ Նահապետ Եղեսացի կաթողիկոսը (տե՛ս Հավելված Ա, էջ 187): Այսպիսով, միայն այն հանգամանքը, որ արևելահայ կղերը Կարապետ Ուլնեցուն համարել է Եղիազար և Նահապետ կաթողիկոսների «վերապրած» կուսակից, արդեն ինք-

նին բավարար էր Մայր Աթոռի գահին անսպասելիորեն հայտնված զեյթունցի հայրապետին՝ լատինամիտության մեջ կասկածելու համար:

Սակայն արդյո՞ք Կարապետ Ուլնեցուն լատինասիրության մեջ կասկածողներն առաջնորդվել են միայն Եղիազար, Նահապետ և Կարապետ կաթողիկոսների միջև տեսնելով կուսակցական-գաղափարական կապ, թե՞, դրանից բացի, Կարապետ կաթողիկոսն ինքն էլ անձամբ նկատվել է ինչ-ինչ կաթոլիկամետ գործողությունների մեջ:

Այս հարցին պատասխանելու համար, նախ դիտել տանք, որ ժամանակակիցներից շատերը մեղադրել են Հովհաննես Կոլոտ պատրիարքին կաթոլիկ եկեղեցու նկատմամբ խոշոր զիջումներ կատարելու մեջ: Ուշագրավ է, որ Կոլոտը, առաջին անգամ փորձարկելով իր հաշտարար քաղաքականությունը տակավին 1720-1721 թթ.[3], ապա, ավելի զգուշորեն՝ 1725 թ.[4], առավել համարձակորեն այն գործադրեց հե՛նց Կարապետ Ուլնեցու կաթողիկոս ընտրվելուց հետո ու հատկապես վերջինիս Կ. Պոլսում 1726-1727 թթ. գտնվելու միջոցին: Կոլոտի նախաձեռնած և կազմակերպած այդպիսի քայլերից էր, օրինակ, 1727թ. ապրիլի 2-ին Կ. Պոլսի լատին պատրիարքի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին տված աննախադեպ այցը, որն ընդունվեց մեծ հանդիսավորությամբ ու ճոխությամբ.

> «...եկն եւ լատին եպիսկոպոսն յայցելութիւն Կարապետ կաթուղիկոսի՝ յապրիլի 2 հանդերձ Լուքաքի թարգմանաւ եւ քանի մի պատուաւոր արամբք: Գնաց ընդառաջ նոցա Յովհաննէս պատրիարգ քահանայիւք եւ սարկաւագօք՝ զգեցեալ զշուրջառս եւ առեալ բուրվառ ի ձեռին՝ մինչեւ ի դուռն եկեղեցւոյ: Եւ այնպէս եբեր եւ եմոյծ զեպիսկոպոսն ի ներքս եւ անդ էարկ ի վերայ նորա զմեծագին զիւր շուրջառ: Եւ յետ աղօթից առեալ տարաւ հանդիսիւ ի վերին սենեակն՝ յոր նստէր կաթուղիկոսն, ուր եւ ցուցին մեծարանս եւ սէր առ միմեանս. եւ բազում ժամս արարին առանձին խօսակցութիւն չորեքին նոքա, այսինքն՝ կաթուղիկոսն եւ պատրիարգն եւ լատին եպիսկոպոսն եւ թարգման նորա...»[5]:

Համաձայն ենք Սահակ Ճեմճեմյանի հետ, որ այս իրադարձությունն «արդարև եզական է այդ դարուն և այդ օրերուն համար»[6]:

Այդ ացելությանը նախորդել էր Կարապետ կաթողիկոսի և Հովհաննես Կոլոտի ջանքերով ձեռքբերված աննախադեպ մեկ այլ

պայմանագիր՝ հայադավան և կաթոլիկացած հայերի միջև, ըստ որի. ա) կաթոլիկացածները պարտավորվում էին այդուհետ հաճախել միայն հայկական եկեղեցիներ[7], և բ) կաթողիկոսի և պատրիարքի «սաստիկ հրամանաւ» հայկական եկեղեցիներում արգելվում էր երգել «Ով հրաշալի» շարականի վերջին երեք՝ «Տեսի ես», «Աստանօր» և «Գեղեցիկ» հետսամուտ տունները, որոնց մեջ նզովք է արձակված Քաղկեդոնի ժողովի և Լևոնի տոմարի դեմ[8]: Այս «սաստիկ հրամանը» ևս պետք է գրգռեր հայադավան զանգվածներն ու ավանդական դիրքերին հավատարմորեն կառչած հայ կղերը: Ավելի ուշ՝ 1737 թ. Կոլոտի վերարձակած նույն հրամանը բերեց մինչև իսկ նրա դեմ ուղղված իսկական ապստամբության, և Կոլոտը փախուստով միայն կարողացավ ազատվել կեսարացի հայադավանապաշտների ձեռքից[9]:

Հովհաննես Կոլոտի և Կարապետ կաթողիկոսի այսպիսի հաշտարար գործունեությունը հայկական որոշ շրջանակներում դժգոհություն և անհանգստություն է առաջացրել: Լատին եպիսկոպոսի այցելությունից ընդամենը երեք շաբաթ անց՝ ապրիլի 22-ին, Կ. Պոլսից Մխիթար Սեբաստացուն տեղեկացնում էին, թե՝ «այժմ լսեմք, թէ ոմանք անձինք քահանայք եւ ժողովուրդ խորհուրդ արարեր են արզ տալ փաշային վասն փաթրիքին (իմա՝ Կոլոտ պատրիարքին)՝ թէ ֆռանկ (=կաթոլիկ) եղեալ է: Զայս լուեալ, փաթրիքն հնար խորհի վասն գլխաւորի սոցին զիլամ առնուլ եւ քիւրէկն ղրկել (=թիապարտության ուղարկել)»[10]:

Զամչյանի համաձայն՝ Կարապետ կաթողիկոսի դեպի Մայր Աթոռ ճանապարհվելու ուշացումը երկու պատճառ է ունեցել. «մի՝ զի սպասէր առնուլ լուր խաղաղութեան յերեսաց պատերազմաց՝ որ ի կողմանս Արարատայ, եւ միւս եւս՝ զի տակաւին ակն ունէր ընդունել այլ եւս պատասխանի ինչ ի Հռովմայ»[11]:

Նույն 1726-1727 թթ. պտտվում էին իրականությանը չհամապատասխանող լուրեր առ այն, թե իբր Կոլոտն ու Մխիթար Սեբաստացին մշտական նամակագրական կապի մեջ են[12]: Իրականում՝ այս լուրերն ուղղակի հետևանք էին մխիթարյանների և նրանց մշակութային գործունեության նկատմամբ Կոլոտի ցուցաբերած բարյացակամության և խրախուսանքի[13]: 1726 թ. հոկտեմբերին և նոյեմբերին գրված նամակներում կարդում ենք, որ Կարապետ կաթողիկոսն ու Կոլոտը՝ «ուր եւ իցէ՝ գովաբանեն զԱբբահայրն» և թե՝ «կաթողիկոսն

եւ պատրիարքն խիստ կու սիրէ զձեզ (մխիթարյաններին) եւ զձեր մեծաւորն, եւ այս այնքան յայտնի՝ մինչ զի յաւուր միում ի մեծի հանդիսի, ի մէջ բազմականաց դրուատելով գովաբանեաց զձեր մեծաւորն»[14]:

Կապը Հայաստանում շրջող ու կաթոլիկություն քարոզող մխիթարյանների և արդեն Ս. Էջմիածին ժամանած Կարապետ կաթողիկոսի միջև պահպանվել է նաև հետագայում: Այս մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել՝ կարդալով 1728 թ. սեպտեմբերի վերջին մխիթարյան միաբան Հակոբ վարդապետ Բուզայանի՝ Ախլցխայի շրջակայքից Վենետիկ ուղարկված նամակի հետևյալ տողերը. «Ուստի հաւատամ, թէ առաւել ապահովագոյն շրջիմք մեք Հոգեւոր Հօրն (իմա՝ Կարապետ կաթողիկոսի) լոկ հրամանագրովն, քան թէ բեհմովթին միովն»[15]:

Գաղատիա-Անկյուրիա թեմը և հայ-կաթոլիկ հարաբերությունները

Այսպիսով, Կարապետ Ուլնեցու լատինասեր լինելու համբավն առաջացել էր դեռևս մինչև նրա Ս. Էջմիածին ժամանելը: Սակայն այդ կարծիքն է՛լ ավելի սաստկացած պետք է լիներ Կարապետի մահից հետո, քանի որ 1736-1737 թթ. Անկյուրիան (Գաղատիան) դարձավ կաթոլիկական հաջողված հեղաշրջման կենտրոն. կաթոլիկացած հայերը գրավեցին հայկական 7 եկեղեցիներից 4-ը[16]: Ինչո՞վ էր պայմանավորված Հռոմի այս խոշոր հաջողությունը:

Արդեն 1717 թ. հունիսի դրությամբ, Անկյուրիայի հայ կաթոլիկները իրենց թիվը հաշվում էին 300-400 հոգի, սակայն այդ պահին հոգևոր հովիվ դեռ չունեին[17]: Պարզվում է, որ Անկյուրիայի կաթոլիկ համայնքը կազմակերպելու խնդիրը սկսել են լուծել հե՛նց Կարապետ Ուլնեցու առաջնորդության շրջանում՝ 1724-1725 թվականներին. այս մասին վկայում է Հակոբ վարդապետ Բուզայանը 1725 թ. ապրիլի 13-ին Կ. Պոլսից Մխիթար Սեբաստացուն գրած իր նամակում՝ նշելով. «ես ուղղեցի զգնացս իմ ի Գաղատիա, ըստ որում եւ նոքայն լուեալ սպասեն ինձ փափագանօք...»[18]: Մխիթարյան այս քարոզչին Անկյուրիա, Դիարբեքիր և Թոխատ էր առաքել անձամբ

Մխիթար Սեբաստացին՝ 1724 թ. արձակած հրահանգով. «...բայց եւ զայն արարիցս, որ ի պատուիրանի գրեալ ես գնալ» - 1724 թ. դեկտեմբերի 4-ին Մխիթարին էր գրում Հակոբ Բուզայանը: Նա նաև հայտնում է, թե «մերոյս թագաւորութեան հրեշտակը (իմա՝ Կ. Պոլսում Վենետիկի դեսպանը - Ա.Ա.)» իրեն խորհուրդ է տվել չգնալ «յորս գաւառս առաքէ զքեզ Աբբահայրն... վատ ժամանակ է ի յայնս գաւառս գնալոյ, զի ի մեծ ալեկոծութեան պատերազմի են այնք գաւառք»[19]:

Բուզայանն ամբողջ վեց ամիս՝ ընդհուպ մինչև 1726 թ. փետրվար, մնում է Անկյուրիայում[20]: Ցավոք, այդ միջոցին Գաղատիայում մխիթարյանների գործունեությանը վերաբերող՝ Ս. Ղազարի դիվանում պահվող վավերագրերը, ներառյալ Բուզայանի այս նամակները, հրապարակված են (գուցե դիտավորապես) միայն հատվածաբար, ուստի հնարավորություն չունենք ուղղակի տեղեկություններ քաղել Կարապետ Ուլնեցու և մխիթարյանների միջև եղած հարաբերությունների մասին: Սակայն, ամեն ինչից դատելով, այդ հարաբերությունները եղել են ջերմ, Բուզայանն էլ վայելել է Կարապետ Ուլնեցու լիակատար աջակցությունը. այդ մասին անուղղակի կերպով վկայում է նաև 1728 թ. սեպտեմբերի վերջին Ախլցխայի շրջակայքից Բուզայանի գրած ու վերն արդեն հիշատակված նամակը, որը փաստում է Կարապետ Ուլնեցու հետ նրա շարունակվող կապը:

Այս Հակոբ վարդապետ Բուզայանը, ըստ երևույթին, վերադարձել է Անկյուրիա և շարունակել իր քարոզչությունը, քանզի Ս. Ղազարի դիվանին քաջածանոթ Սահակ Ճեմճեմյանը թերևս հե՛նց սրան է անվանում «Հ. Հակոբ միայնակյաց, Գաղատիոյ երկար տարիներու քարոզիչ», նաև մի հատված բերելով վերջինիս՝ 1726 թ. փետրվարի 24-ին Անկյուրիայից Մխիթար Սեբաստացուն ուղարկած նամակից.

> «Գոհութիւն զկրօնէ մերմէ եւ զգերյարգեցելոյդ այնքան է, զի ի թղթի գրել ոչ կարեմ: Մանաւանդ, մինչ եհաս առ իս ի Գաղատիա 10 «Քրիստոնէական վարդապետութիւն», զորս գերյարգելիդ շարադրեալ է, զի բերան ներհակաց մերոց ոչ այլով իւիք խցել կարեմք՝ եթէ ոչ գրեամբք ի քէն շարադրեցելոց»[21]:

Հայկական միջավայրում գործող եվրոպացի միսիոներները պարզ գիտակցել են կաթոլիկ քարոզչությունն արդյունավետորեն

վարելու՝ մխիթարյանների ունեցած առավելությունները: 1728 թ. դիմելով նույն Հակոբ Բուզայանին, նրանք արձանագրել են. «առաւել գործունեայ է բանն ձեր, քան զմերն, ըստ որում էք ի նոյնոյ ազգէ»[22]: Այսպիսով, Անկյուրիայում Հռոմի ձեռք բերած հաջողությունները մեծապես պայմանավորված էին կաթոլիկ հոգեորսությունը մխիթարյանների ու նրանց հետևած անտոնյան հայ միաբանների բերած ժրաջան մասնակցությամբ և եռանդուն քարոզչությամբ: Անկյուրիայում մխիթարյաններն սկսել էին կաթոլիկություն քարոզել 1720-ական թթ. սկզբից, իսկ անտոնյանները՝ 1732-1736 թթ.:

Կարապետ Ուլնեցուն կարող էին հետմահու մեղադրել նաև այն բանում, որ նրա նշանակած[23] Գաղատիո նոր առաջնորդը՝ Մովսես վարդապետ Շիրինյանը, նույնպես բարյացակամ վարքագիծ էր որդեգրել անտոնյան հայ կաթոլիկ միաբանների նկատմամբ, և եթե Զամչյանի հաղորդումը ստույգ է, նույնիսկ ինքն էր օր ծերության կաթոլիկացել (թեև Օրմանյանը տրամաբանորեն կարծես թե կարողանում է ժխտել այս վերջին հավանականությունը)[24]:

Այնուամենայնիվ, վերը կատարված քննությունը գալիս է նոր փաստերով հաստատելու Մ. Օրմանյանի արտահայտած այն կարծիքը, որ Անկյուրիայում և այլուր կաթոլիկների ունեցած «հաջողության պատճառները պիտի տեսնենք նախ այն հաշտարար ընթացքին մեջ, որուն կհետևեր Կոլոտ (ավելացնենք՝ նաև Կարապետ Ուլնեցին - Ա.Ա.), անուղղակի ասպարեզ թողնելով սպրդող քարոզիչներուն, և երկրորդ՝ այն ձևին մեջ, զոր որդեգրած էին Մխիթարյան և Անտոնյան միաբանները, դյուրամատույց ընծայելով հռոմեականության ընդունելությունը»[25]:

Ժամանակակից հայ այն գործիչներն ու զանգվածները, որոնք ի սկզբանե դեմ էին կաթոլիկների նկատմամբ տարվող անարդյունավետ, պարտվողական տարրեր պարունակող և ազգակործան տեսանելի հետևանքներ ունեցող քաղաքականությանը, պիտի է՛լ ավելի խիստ մեղադրեին այդ քաղաքականության գլխավոր հեղինակներին՝ Հովհաննես Կոլոտին և Կարապետ Ուլնեցուն: Հե՛նց այդ խիստ գնահատականն էլ տեղ է գտել Սիմեոն կաթողիկոսի Զամբռում:

Արդ, մեր քննության շարունակությունը թեթևացնելու համար, այժմ արդեն անենք մի քանի հստակ եզրակացություն:

Նահապետ Եղեսացուց հետո Ս. Էջմիածնի նոր գահակալ ընտրվեց նրա հակառակորդ՝ ջուղահայ կղերական կուսակցության պարագլուխ Աղեքսանդր Ա. Ջուղայեցին (1706-1714), որին հաջորդեց նույն կուսակցության ներկայացուցիչ Աստվածատուր Ա. Համադանցին (1715-1725): Մինչ Կարապետ Ուլնեցու կաթողիկոսանալը՝ քսան տարի շարունակ Մայր Աթոռի միաբաններին հավաքագրել, կառավարել ու դաստիարակել էին ջուղահայ կաթողիկոսները, որոնք, ինչպես ասվեց, խիստ թշնամական վերաբերմունք ունեին Եղիազար և Նահապետ կաթողիկոսների ու նրանց մտերիմ գործիչների նկատմամբ: Պետք է նաև ասել, որ 1706-ից մինչև 1723 թ. տևած ժամանակահատվածը եղավ Մայր Աթոռի համար բարեկարգման ու բարգավաճման բացառիկ հաջող մի շրջան[26]:

Դատելով մեր ձեռքի տակ եղած նյութերից և վերը կատարված քննության արդյունքներից՝ կարելի է նաև պնդել, որ արևելահայ չորս գերապատիվ աթոռների մասին կանոնը սահմանված պետք է լիներ Նահապետ Եղեսացի կաթողիկոսի մահից՝ 1705 թ., հետո: Ամենայն հավանականությամբ, կանոնը հաստատվել էր Աղեքսանդր Ջուղայեցու գահակալման տարիներին՝ 1705-1715 թթ.: Առավել ստույգ է թվում 1708 թվականը, երբ կաթողիկոսական ընտրությունների կարգի հարցերն արծարծվեցին հատուկ շրջաբերական-կոնդակով[27]:

Կոլոտ պատրիարքի և Կարապետ կաթողիկոսի՝ կաթոլիկների հանդեպ որդեգրած հաշտարար դիրքորոշման քաղաքական դրդապատճառները

Իհարկե, Կոլոտ պատրիարքի և Կարապետ Ուլնեցու՝ կաթոլիկների հանդեպ հաշտարար գործողությունները բխում էին ամենևին ո՛չ պապասիրությունից: Ո՛չ էլ այդ գործողություններն այս անգամ թելադրված էին միայն Եվրոպայից քաղաքական հովանավորություն ստանալու և կրթական-մշակութային համագործակցություն ծավալելու հայոց ավանդական նպատակներով:

Խնդիրը 1720-ական թթ. ռազմաքաղաքական իրադրությունն էր: Պարզաբանենք:

1720-ական թթ., դառնալով օսմանյան ագրեսիայի զոհ, արևելահայությունը տվել էր մարդկային և նյութական ահավոր կորուստներ[28]: 1724-1734 թթ. ամբողջ Այսրկովկասն ու հյուսիսային Իրանը ռազմակալած օսմանյան բանակների համար միակ աննվաճ ամրոց էին մնացել հայոց Արցախն ու Սյունիքը, որոնք այդ տարիներին ձեռք էին բերել փաստական անկախություն և ողջ տարածաշրջանում հայտնի դարձել պետականության իմաստ պարունակող Հայկական սղնախներ, Հայկական զորք, Հայկական բանակ նոր անվանումներով: Ռուս-թուրքական հասունացող պատերազմի դեպքում, Արցախ-Սյունիքում կենտրոնացած 50-60 հազարանոց հայկական մարտունակ զինուժն ի վիճակի էր ցանկացած ժամանակ կտրելու թուրքերի և նրանց Կովկասյան սուննի դաշնակիցների՝ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հաղորդակցությունը: Հայկական սղնախները համառորեն արհամարհում էին շարիաթի սկզբունքային պահանջը՝ ոչ-մահմեդականների հնազանդությունը մահմեդականներին: Ըստ այդմ էլ՝ դիմադրություն ցույց տվող արևելահայերը (ինչպես նաև Իրանի շիաները) ենթարկվում էին զանգվածային ոչնչացման, որն օսմանցիների ավանդական ռազմական քաղաքականությունն էր: Ուշագրավ է հատկապես 1723 թ. սկզբին օսմանյան կառավարության՝ Ֆաթվայի կարգով ընդունած այն որոշումը, որով բանակին հրահանգվում էր զանգվածաբար գերեվարել ու ոչնչացնել Իրանի շիա և քրիստոնյա դիմադրող բնակչությունը[29]: Քաղաքական խիստ վտանգավոր դրության մեջ էր հայտնվել ամբողջ հայությունը, ինչպես և հայ եկեղեցին:

Այս պայմաններում, ինչպես մանրամասն քննել ենք մեկ այլ ուսումնասիրության մեջ[30], հայերի մեջ ծայր էր առել «ազգովին բնաջնջման ենթարկվելու» տագնապը, որն առկա էր իրանական և օսմանյան պետությունների ողջ տարածքում, ռազմաճակատներին մոտ և հեռու վայրերում՝ Թիֆլիսում, Ռեշտում, Շամախում, Ղարաբաղում, Պոլսում և այլուր: Հայոց այս սաստիկ անհանգստությունն անհիմն չէր, այլ մի կողմից բխում էր Իրանի և Թուրքիայի քաղաքական-հասարակական իրականության սթափ գնահատումից, իսկ մյուս կողմից՝ արդյունք էր այն սպառնալիքների, որ ուղղում էին ապստամբած հայերի դեմ սկզբում պարսիկները, ապա թուրքերն ու նրանց դաշնակից Կովկասյան սուննի լեռնականները:

1725 թ. մարտի 9-ին Ստամբուլից Վենետիկ՝ Մխիթար Սեբաստացուն Եղիա վարդապետ Մարտիրոսյանի ուղարկած նամակում կարդում ենք.

> «...Թագաւորն *(իմա՝ սուլթան Ահմեդ Գ-ը)* տաղտկացեալ է ի հայոց եւ բազմիցս կամեցեալ է ի պատճառս Աճեմիստանու *(այսինքն՝ Իրանում ընթացող պատերազմի)* բնաւ զՀայս բնաջինջ առնել, բայց մուֆթին ոչ տուեալ է զհրաման առ ի բնաջինջ առնել զՀայս: Ուստի գիտելով զայս [Հովհաննես Կոլոտ] պատրիարքին, թէ ի պատճառս Սղնախու Հայերուն կարի զայրացեալք են մեծամեծք տեղւոյս՝ «անհաւատարիմ» ասելով, եւ յորժամ սկսի աստ եւս ինքն բռնել տալ զուղղափառսն *(իմա՝ կաթոլիկներին)*, յայնժամ վերանորոգին վէրքն Թագաւորին, թէ աստ եղեալքն եւս են ապստամբք: Վասն այսորիկ եւ վասն այլոց գաղտնի պատճառաց *(sic)* ոչ ըմբռնէ զոք»[31]:

Հայերին բնաջնջելու գաղափարն առաջացել էր այն բանից հետո, երբ օսմանյան կանոնավոր զորքերը, բախվելով Արցախում և Սյունիքում հայոց կազմակերպած արդյունավետ դիմադրությանը, չարաչար պարտություններ էին կրել և տասնյակ հազարավոր սպանվածներ տվել, ինչպես և ասված է վերոբերյալ գրության մեջ՝ «ի պատճառս Սղնախու Հայերուն կարի զայրացեալք են մեծամեծք տեղւոյս՝ «անհաւատարիմ» ասելով» կամ, ինչպես շեշտված է մեկ այլ վավերագրում՝ «եւ այս ամենայն վարկանի պատճառեցեալ գոլ ի յաւերմանէ զօրաց Տաճկաց ի Հայոց»[32]:

Օսմանյան կառավարող շրջանակները կասկածում էին, որ հայության արևմտյան հատվածը ևս կարող է զենքի դիմել՝ «թէ աստ եղեալքն եւս են ապստամբք»: Այս մտավախությունն անտեղի չէր. դիվանական փաստաթղթերը հաստատում են, որ համատեղ ապստամբելու նպատակով արևելահայերը գաղտնի կապ էին հաստատել Վասպուրականի և Տիգրանակերտի (գուցե և այլ) հայ ազատագրական կենտրոնների և անգամ ասորիների հետ[33] (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Գլուխներ Թ և Ժ-ում): Այլ հարց է, որ պատմական անբարենպաստ հանգամանքների և արևելահայ ղեկավարության թույլ տված ռազմավարական խոշոր սխալների պատճառով այդ ծրագրերն այդպես էլ անկատար մնացին: Այդ պատճառներից այստեղ նշենք երկու գլխավորը. ա) 1722-1724 թթ. արևելահայ ազա-

տագրական շարժման ղեկավարությունը, հայկական զգալի զինված ուժեր կենտրոնացնելով Արցախում և Սյունիքում, բռնեց ռուսական զորքերին սպասելու կրավորական դիրք, այդ պատճառով էլ ուշացրեց ու չկարողացավ ընդլայնել իր իշխանությունը Հայաստանի այլ տարածքների և դրանց բնակչության վրա: Այդպիսով ձախողվեց հուսալի կապի հաստատումը հայ ազատագրական այլ կենտրոնների, հատկապես, Երևանի, Նախիջևանի և Վասպուրական-Տարոնի հետ, որոնք կարող էին եռապատկել ու քառապատկել հայ ապստամբների մարդկային և նյութական ռեսուրսները՝ հայկական զորքերի թիվը հասցնելով նախապես ծրագրված 150-200 հազար զինվորի. բ) ի տարբերություն հայկական զինուժի որդեգրած խուլ պաշտպանողական ռազմավարության և ռուսների առաջխաղացման վրա հույս դնելու սխալ հաշվարկի, սկսած 1722 թ. կեսերից օսմանյան բանակը խոշոր ուժեր կենտրոնացրեց Այսրկովկասին և Իրանին սահմանակից գոտում, հատկապես՝ Արևմտյան Հայաստանում (օսմանյան բանակների կազմավորման գլխավոր կետերներն էին Էրզրումը, Վանը և Կարսը): 1723 թ. հունիսին անցնելով հարձակման, օսմանցիներն այլևս նախաձեռնությունն իրենց ձեռքից բաց չթողեցին և արդեն 1725 թ. դրությամբ կարողացան գրավել ամբողջ Այսրկովկասը, բացառությամբ Արցախ-Սյունիքի և դրանից երկու-երեք տարի առաջ ռուսների ձեռքին հայտնված մերձկասպյան շրջանների[34]:

Ահա այս պայմանների ծանրության ներքո էր, որ Օսմանյան կայսրության մայրաքաղաքում գործող արևմտահայ վերնախավը, ներառյալ Հովհաննես Կոլոտ պատրիարքն ու Կարապետ կաթողիկոսը, փորձել են լուծել երկու կարևոր խնդիր. առաջին՝ վերավստահեցնել Բարձր Դուռը հայկական «միլլեթ»-ի հավատարմության մեջ և, երկրորդ՝ կանգնեցնել կաթոլիկության քարոզարշավի պատճառով աստիճանաբար թափ առնող հայության նոր պառակտումն ու ջլատումը: Այս վերջին դիրքորոշումը լավագույնս արտահայտված է պոլսահայ կաթոլիկ և հայադավան համայնքներին արված այն հաշտարարական խոսք-դիմումում, որ սկզբնաղբյուրները վերագրում են և՛ Կարապետ Ուլնեցուն, և՛ նրա աթոռակալ Մանվել Աստապատցուն, և՛ Հովհաննես Կոլոտին, ահավասիկ.

«զի՞նչ է այս աղմուկն, որ ոմանք ասէք՝ մի բնութիւն, եւ ոմանք՝ երկու, արարէք խաղաղութիւն ի միջի ձերում՝ վասն սիրոյն

Աստուծոյ, շատ է չարն եւ վիշտն եւ պատիժն ազգին մերոյ: Եւ այսպիսի... բանիւք՝ երկուց կողմանցն եւս միշտ ջանան հաճոյացուցանել զինքեանս... ջանան խափանել զչարն»[35]:

Հովհաննես Կոլոտի և Կարապետ Ուլնեցու հակակաթոլիկ ձեռնարկները

Կաթոլիկության նկատմամբ զիջողական քայլեր ձեռնարկելով հանդերձ՝ և՛ Կոլոտը, և՛ Կարապետ Ուլնեցին միշտ եղել ու մինչև վերջ էլ մնացել են Հայ եկեղեցու վարդապետության դիրքերին:

Ուշագրավ է, որ մինչև 1723-1725 թթ., այսինքն՝ մինչև Արևելյան Հայաստանում հայ-օսմանյան զինված առճակատումը և դրա հետևանքով օսմանյան միջավայրում հակահայկական տրամադրությունների բորբոքումը՝ Կարապետ Ուլնեցին անհաշտ դիրքորոշում է ունեցել կաթոլիկություն քարոզողների դեմ: Այսպես՝ երբ մոտ 1713 թ. Աբրահամ Պետրոս Արծիվյանը, քարոզելով գալիս հասնում է Գաղատիա, այստեղ նրա դեմ արգելք է դրվում. ինքն այսպես է գանգատվում՝ «ո՛չ ելթող զիս քարոզել Կարապետ եպիսկոպոս քաղաքին, զի լցեալ էր փքով նախանձու եւ տգիտութեան»[36]: Նույնպիսի վերաբերմունք Կարապետ Ուլնեցին դրսևորել է նաև 1721 թ. տեղի ունեցած հակակաթոլիկ մեծ հալածանքների ժամանակ. Անկյուրիան հիշված է հենց այն քաղաքների շարքում, որտեղ կաթոլիկները ենթարկվել էին ամենախիստ հետապնդումների[37]:

Ինչ վերաբերում է Հովհաննես Կոլոտ պատրիարքին, ապա նա, անհրաժեշտության դեպքում, չի վարանել խիստ պատժամիջոցներ կիրառել կասեցնելու համար կաթոլիկների քարոզչությունն ու գործունեությունը, ինչպես, օրինակ՝ 1720-21, 1728, 1733-34, 1735 թվականներին[38]: 1735 թ. հունիսի 2-ին Պողոս Տայի Սիմոնյան վարդապետը Կ. Պոլսից Մխիթար Սեբաստացուն գրած նամակում՝ Կոլոտի հավատափոխության մասին ոչ-հավաստի մի լուր մեջբերելով, հայտնում էր.

...զայս, զորմէ ասելոց եմ, լուայ ի Մօնսինեօռէն (իմա՝ Կ. Պոլսի լատին եպիսկոպոսից - Ա.Ա.), զի «այս պատրիարգ զդաւանութեան գիր յղեալ ի՛ցէ առ սրբազան պապն եւ նմանէ օրհնու-

թիւն առեալ իցէ: Բայց հետ որոյ զայնքան հակառակութիւն եւ հայհոյութիւն արար», ասաց, «թէեւ վերստին մեղայ գոչիցէ՝ ոչ լի-նի լսելի»[39]:

Տեղեկանալով նույն իրադարձությունների մասին՝ 1735 թ. հուլիսի 1-ին Գրիգոր Շղթայակիրը գրում էր Կոլոտին (այս տողերը բացահայտում են Շղթայակրի և Կոլոտի իրական վերաբերմունքը կաթոլիկականության նկատմամբ, իսկ կաթոլիկները «երկաբնակ» ավանդական անվան փոխարեն կոչված են «չարաբնակ»).

«Լուայ եւ զմաքառումն քո ընդ չարաբնակսն՝ Տէր օգնեսցէ քեզ աղօթիւք Սրբոյ Լուսատուին մերոյ՝ բայց զգոյշ լեր ի նոցա չար խորամանկութեանց եւ ի քաղցկեղ բանից՝ եւ Տէր օգնեսցէ...»[40]

Եթե Կոլոտ պատրիարքը Հռոմի պապին իրոք դավանափոխության գաղտնի գրություն ուղարկած լիներ, ապա երեք տարի անց՝ 1738 թ., Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպանն ու Պոլսի լատին եպիսկոպոսը չէին հորդորի նրան դարձյալ նույնը անել՝ «գրել թուղթ դաւանութեան առ ի յայտարարութիւն ողջմտութեան հաւատոյն»[41]: Դրանից հետո՝ 1738 թ. դեկտեմբերի 4-ին Կոլոտն ընդամենը խիստ սիրալիր, սակայն հայադավանության դիրքերից մի թիզ անգամ չնահանջող մի նամակ է գրել Հռոմում պաշտոնավարող կարդինալ Լուդովիկոս Պելլուկային (այդ նամակը հրապարակել և ծանոթագրել է Ս. Ճեմճեմյանը)[42]:

Կարևոր է նկատել նաև, որ երբեմն Կոլոտի զիջողական քայլերը կաթոլիկների նկատմամբ պարտադրել են օսմանյան պաշտոնյաները: Այդպես է պատահել, Գրիգոր Շղթայակրի համաձայն, 1737 թ..

«...յօրն ուրբաթ, որ ի վաղիւն Եփեսոսի Ս. ժողովոյն տօնն էր, Ղայմախամ եկէն Մէհմէտ փաշան, որ նախ մաքսապետ էր, թելադրութեամբ լատինացւոց մեծին՝ սաստիկ հրաման յղեալ էր առ Պատրիարք վարդապետն (իմա՝ Հովհաննես Կոլոտը, Ա.Ա.), թէ «ի Հայոց եկեղեցիսն պատուէր տուր, զի զՈվ հրաշալւոյ յետին երեք տուն շարականն մի՛ ասիցեն»: Եւ նա յահէ պատուէր ետ չասել, որ եւ զամենայն ոչ ասացին. եւ Ով հրաշալի ասելն խափանեցաւ ի Ստամպօլու, եւ եղեւ այն չար սովորութիւն: Եւ մեք յայնմ գիշերի յեկեղեցին ոչ գնացաք, այլ տրտմութեամբ եւ լալով զօրն անցուցաք»[43]:

Կոլոտի՝ միշտ Հայ եկեղեցու պաշտպանության դիրքերին մնալու օգտին է խոսում նաև հետևյալ հետաքրքրական պատմությունը: 1720-ական թթ. սկզբից Կոլոտը հետաքրքրություն էր ցուցաբերում Մխիթար Սեբաստացու հրատարակչական գործունեության նկատմամբ[44]: Մասնավորապես, սկսած 1726 թվականից, նա անընդհատ, միջնորդավորված ճանապարհներով, հորդորում էր Մխիթարին ձեռնարկել Թովմա Աքվինացու Աստվածաբանության Համառգումարի լիակատար թարգմանությունն ու հրատարակությունը[45]: Եվ սա այն դեպքում, երբ Կոլոտն արդեն իսկ պատվիրել էր Հռոմի Հավատասփյուռի վարժարանում ուսանած խարբերդցի Ղուկաս վարդապետին հատվածաբար թարգմանել Աքվինացու այդ երկը և 1734 թ. դրությամբ այդ աշխատանքը մի զգալի մասով արդեն կատարված էր[46]: 1738 թ. Կոլոտը, միջնորդի միջոցով կրկին հետաքրքրվելով, թե ինչու Մխիթարը չի տպագրում և Պոլիս առաքում իր թարգմանած Աքվինացու այդ Աստվածաբանությունը, ասում է՝ «մեք զոմանս մասունս թարգմանեալ ունիմք եւ զոմանս մասունս ոչ»[47]:

Ինչու՞ էր Կոլոտն ա՛յդքան շահագրգռվածություն ցուցաբերում՝ կաթոլիկ աստվածաբանության այս հիմնաքար աշխատությունն ամբողջությամբ հայերենով թարգմանված ունենալու մեջ: Ինչպէ՞ս էր նա պատրաստվում օգտագործել այդ թարգմանությունը:

Մինչև այս հարցերին պատասխանելը, հիշենք, որ դեռևս 1329-1344 թթ. Թովմա Աքվինացու այս երկի առանձին բաժիններ հայերեն էին թարգմանել Հակոբ և Հովհան Քռնեցիները: Ստուգապես չգիտենք, թե այս թարգմանություններն արդյոք հասանելի են եղել Կոլոտին, սակայն Կոլոտը և իր աշակերտները պետք է առնվազն լսած լինեին այդ թարգմանությունների մասին, քանի որ ժամանակակիցներից շատերն էին դրանց լավատեղյակ: Այսպես, Լվովի (Լեոպոլսի) հայոց Վարդան արքեպիսկոպոս Հովնանյանը՝ 1707 թ. հունվարի 20-ին գրած նամակում, պատասխանելով Մխիթար Սեբաստացու հարցումին, խորհուրդ էր տալիս դիմել ջահկեցիներին, որոնք, իր տվյալներով, ունեին Աքվինացու Աստվածաբանությունը[48]: Ինչպես նկատել է Ս. Արևշատյանը՝

«այդ թարգմանությունների, ինչպես և Բարդուղիմեոս Բոլոնիացու ու Պետրոս Արագոնացու աշխատանքների շնորհիվ Գլաձորի և Տաթևի դպրոցների գործիչները ծանոթացել են Թովմա

Աքվինացու ուսմունքին և հաղորդակից դառնալով արիստոտելյան փիլիսոփայության կաթոլիկական մեկնաբանությանը, պայքար ծավալել Հռոմի եկեղեցու գաղափարական հարձակման դեմ»[49]:

Արդյո՞ք Աքվինացու Աստվածաբանության *ամբողջական հայերեն թարգմանությունն ունենալու Կոլոտի ձգտումը նույն կերպ չի բացատրվում, այսինքն՝ որ Կոլոտն այդ թարգմանությունը ցանկանում էր կիրառել կաթոլիկ քարոզչության դեմ: Այս հարցին կարելի է դրական պատասխան տալ: Ահա թե 1733 թ. լույս տեսած և ժամանակակցի բնորոշմամբ «ընդդէմ երկաբնակաց»[50] ուղղված* Վէմ հաւատոյ *իր երկի մեջ՝ կաթոլիկ քարոզչության դրույթներից մեկը ինչպես է քննադատում Կոլոտի ամենամտերիմ աշակերտ Հակոբ Նալյանը.*

«Այսպէս եւ զբանս Թովմայի Աքուինացւոյն (որ ասէ, թէ՝ «եթէ Ադամ ո՛չ մեղանչէր՝ Քրիստոս ո՛չ մարմնանայր») փոխեցին եւ ի նմանէ վկայութիւն բերեն, թէ՝ «եթէ Ադամ ո՛չ մեղանչէր՝ Քրիստոս մարմնանայր», որպէս ասէ Սկոթոս վարդապետն նրբամիտ[51]: *Իսկ բանն Թովմայի առ մեզ գտանի եւ ի գիրս մարդեղութեան խստապէս ընդդիմանայ, թէ վասն մեղացն Ադամայ մարմնացաւ Քրիստոս (ընդգծումն՝ Ա.Ա.)»[52]:*

Այսպիսով հավաստվում է, որ Աքվինացու Աստվածաբանության *հայերեն ամբողջական թարգմանությունն ձեռքի տակ ունենալու Կոլոտի ցանկության բուն նպատակը կաթոլիկ քարոզչության չեզոքացումն էր՝ արդյունավետ հակաքարոզչության միջոցով, որը նախատեսում էր կաթոլիկ աստվածաբանության հնարավորին չափ լավ իմացություն: Կոլոտի հովանավորությամբ իրականացված Նալյանի հաստափոր* Վէմ հաւատոյ *երկի հրատարակությունը՝ հայ եկեղեցու (ինքնըստինքյան, նաև հայ ժողովրդի) գաղափարական ինքնուրույնությունը պաշտպանող այդպիսի հակաքարոզչության ձեռնարկներից մեկն էր:*

Ազգապահպանման և հայադավանության պաշտպանության դիրքերին կանգնած հայտնի գործիչ Գևորգ Մխլայիմը (1681-1758), ևս մշտապես ստացել է Հովհաննես Կոլոտ պատրիարքի աջակցությունն ու նաև պատվեր-առաջադրանքները: Հայ եկեղեցու դեմ որևէ աշխատության լույս տեսնելուն պես Կոլոտը՝

«Հրաման տուեալ էր նմա, ասելով, թէ «դու՛ եւս ընդդիմարկն նոցին բանիցն՝ գրեա՛ եւ տպագրեա՛ եւ ցրուեա՛»[53]:

Ու հե՛նց Կոլոտ պատրիարքի հովանավորությամբ էլ Մխլայիմը 1734 թ. Կ. Պոլսում հրապարակել է իր «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց» հայտնի երկը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Հ. Ս. Անասյան,** *XVII դարի ազատագրական շարժումներն...*, էջ 257:
[2] Նույն տեղում, էջ 256-267 (մեջբերված եզրակացությունը՝ էջ 264-265):
[3] Տե՛ս ՁԱՄ, Գ, էջ 775-778:
[4] 1725 թ. հոկտեմբերի 5-ին Կ. Պոլսից Մխիթար աբբահորը հղած նամակում մխիթարյան միաբան Միքայել վարդապետը պատմում է, որ Վենետիկից նավով մխիթարյան նորատիպ գրքերի Պոլիս հասնելուց հետո, հայերից ոմանք ամբաստանել են Կոլոտ պատրիարքին՝ «թէ Ֆռէնկիստանու ֆռէնկի գրքեր գան եւ Ֆռէնկ չինէն զազգն մեր եւ չէ փոյթ քեզ», ինչից հետո միայն Կոլոտը, արքունի ֆերմանով, արգելում է այդ գրքերի նավից դուրս հանումն ու վաճառքը. - *Բազմավէպ*, 1978, էջ 277:
[5] ՁԱՄ, Գ, էջ 803:
[6] Ս. Ճեմճեմյանը, հրատարակելով Զամչյանի սկզբնաղբյուրը, այս այցելությունը թվագրում է մարտի 30 կամ 31-ով. - *Բազմավէպ*, 1978, էջ 269:
[7] Հայկական եկեղեցիներ այցելելու խնդիրը կենտրոնականն էր հայադավան-հայկաթոլիկ հարաբերությունների մեջ: Այն սկիզբ էր առել տակավին Եփրեմ Ղափանցու (Տաթևացու) պատրիարքության տարիներին (1684-1686, 1694-1698): Կոլոտն այս խնդիրը լուծելու իր առաջին ապարդյուն փորձն էր արել տակավին 1720-1721 թթ. (տե՛ս ՁԱՄ, Գ, էջ 775-778): Այն փորձել էր լուծել նաև Մխիթար Սեբաստացին. 1718 թ. իր միաբանության պաշտպանության խնդրով Հռոմում գտնվելու ժամանակ, նա հաջողեցնում է ստանալ «քահանայապետական հատուկ հրամանագիր, որու զորությամբ» հայ կաթոլիկներին թույլ էր տրվում հաճախել հայկական եկեղեցիներ: Սակայն 1728 թ. այս հրամանագիրը վերջնականապես «չեղյալ կհամարվի, ու Հռոմեն Պոլիս կհասնի նոր հրահանգ, բացարձակորեն արգիլելով ոևէ «կաթողիկեի» հաճախել Հայոց եկեղեցիները, թույլ տալով միայն «գնալ ի գաւիթն եկեղեցվոյն եւ տալ զտուրք գանձանակին, որպէսզի մի՛ հալածումն յարուցանիցեն» (տե՛ս *Բազմավէպ*, 1978, էջ 266, 270):
[8] ՁԱՄ, Գ, էջ 802-803. Հմմտ. ԱԶԳ, սյուն. 1952:
[9] ԱԶԳ, սյուն. 1994. *Բազմավէպ*, 1978, էջ 270-271:
[10] *Բազմավէպ*, 1978, էջ 269-270: 1735 թվականին՝ հաշտարար մեկ այլ ցույ-

ցից հետո, կրկին «գտան եւ ոմանք, որք սկսան բամբասել զպատրիարգն, թէ ի լատին է դարձեալ». - ՁԱՄ, Գ, էջ 813:

[11] ՁԱՄ, Գ, էջ 803-804:

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 275 (1726 թ. նոյեմբերի 9-ին Պոլսից Վենետիկ ուղարկված նամակը):

[13] Տե՛ս *Բազմավէպ*, 1978, էջ 266-267, 275-282:

[14] *Բազմավէպ*, 1978, էջ 279, 281:

[15] Տե՛ս *Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուոց»*, էջ 111: XVIII դարի երկրորդ կեսին Ախլցխայում կաթոլիկ քարոզչության ու դրա հետևանքների մասին տե՛ս **Պ. Հակոբյան**, *Հայ կաթոլիկությունը պատմա-քննական լույսի տակ. - Հրավեր ողջամտության* (Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1993), էջ 49-76. **В. М. Мартиросян, П. А.Чобанян.** "Документы по истории армяно-грузинских взаимоотношений и общественной жизни Грузии (2-ая половина 18 века)", - *Кавказ и Византия*, Выпуск 3 (1982), с. 232-269.

[16] ՁԱՄ, Գ, էջ 814. հմմտ. ԱԶԳ, սյուն. 1988: Գաղատիայի թեմի հետ առնչված մի արտառոց պատմություն էլ արձանագրվել էր տակավին մինչև Կարապետ Ուլնեցու կաթողիկոս ընտրվելը: Կարմիր վանքի նախկին միաբան՝ 1706-1720 թթ. Կեսարիո արքեպիսկոպոս պաշտոնավարած Վրթանես Ստեփանյանը, 1720 թ. տեղափոխվել էր Հռոմ և այնտեղ աշխատել իբրև Հայոց ձեռնադրիչ եպիսկոպոս (տե՛ս **Ց. Պատկերահան**, *Նամականի*, էջ 22, ծնթ. 17): 1694 թ. գրած իր հիշատակարանի մեջ Կարապետ Ուլնեցին, «միաբան եղբայրների» շարքում, հիշում է նաև սրան՝ իբրև «տէր Վրդանէս Կեսարացի». - տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ*, սյուն. 930:

[17] Տե՛ս **Յովհաննէս վ. Թորոսեան**, *Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ* (Վենետիկ, 1901), էջ 327: Օրմանյանն այս թիվն սխալմամբ վերագրել է 1732 թվականին (ԱԶԳ, սյուն. 1988), մինչդեռ այդ ժամանակ, անկասկած, կաթոլիկներն արդեն բազմապատիկ շատացած պետք է լինեին:

[18] Տե՛ս *Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուոց»*, էջ 98 (վավերագիր 17):

[19] Տե՛ս *Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուոց»*, էջ 96-97 (վավ. 12). հմմտ. էջ 98 (վավ. 16), 101 (վավ. 27), 103-104 (վավ. 31):

[20] Նույն տեղում, էջ 101 (վավ. 27):

[21] **Սահակ Ճեմճեմեան**, *Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը* (Վենետիկ-Ս. Ղազար), 1980, էջ 77:

[22] *Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուոց»*, էջ 110:

[23] Տե՛ս *Բազմավէպ*, 1978, էջ 290:

[24] ՁԱՄ, Գ, էջ 813: ԱԶԳ, սյուն. 1988:

[25] ԱԶԳ, սյուն. 1988: Մխիթարյանների և անտոնյանների գործելակերպի մասին Օրմանյանն ավելի մանրամասն գրում է նախորդ՝ 1987 սյունակում,

որ հենց այդպես էլ խորագրված է՝ «Մխիթարյանց ընթացքը»:
[26] Տե՛ս ԱԶԳ, սյուն. 1916:
[27] «Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսի կտակ-շրջաբերականը (1708 թ. փետրուարի 20)». - *Ազգասէր Արարատեան*, Կալկաթա, 1849, թ. 12:
[28] Հայության կրած այդ կորուստները, այլազան աղբյուրների համեմատական քննությամբ, հաշվել և ներկայացրել ենք աստ՝ **A. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal*, pp. 36-39:
[29] Մանրամասն վերլուծությունը տե՛ս **A. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s...*, pp. 33-36; հմմտ. **Laurence Lockhart**, *The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia* (London: Cambridge University Press, 1958), pp. 251-252; **J. de Hammer**, *Histoire de l'empire ottoman*. T. XIV. Paris, 1839, pp. 91-93; **Mohammed A. Hekmat**, *Essai sur l'Histoire des Relations Politiques Irano-Ottomanes de 1722a 1747* (Paris, 1937), p. 119. Թուրքերեն բնագիրը տե՛ս **Muhammad Rashid**, *Tarikhi-i-Rashid Efendi*, Vol. III, Constantinople, Հիջրեթի 1153 թ. (1740-1741 թթ.), էջ 16b-17a (այս հատվածի հեղինակը Մուստաֆա Զելեբի-Զադեն է):
[30] **A. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s...*, op. cit..
[31] *Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուոց»*, էջ 97:
[32] *Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուոց»*, էջ 104: 1723-1727 թթ. Հայկական և օսմանյան զորքերի միջև տեղի ունեցած խոշոր ճակատամարտերի ժամանակը, վայրը և օսմանցիների տված կորուստների թիվը ճշտող աղյուսակը տե՛ս **A. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s...*, p. 20.
[33] **Ա. Մ. Այվազյան**, «Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները». - *Պատմա-բանասիրական հանդես*, No. 3 (130), էջ 83-85. ԱԴԴ, II, ԴԴԴ. 258-259.
[34] Տե՛ս նաև **A. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s...*, pp. 46-47.
[35] Քաղվածքը վերցրել ենք 1726 թ. նոյեմբերի 9-ին Մխիթար Սեբաստացուն Կ. Պոլսից Մխիթարյան միաբան Ստեփաննոս վարդապետի գրած մի նամակից. - *Բազմավէպ*, 1978, էջ 269. հմմտ. ՁԱՄ, Գ, էջ 802. **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ (1678-1741) եւ իր աշակերտները*, էջ 277:
[36] **Բ. Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, սյուն. 1355. հմմտ. **Մեսրոպ Քեշիշեան**, *Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին* (Վիեննա, 1964), էջ 197: Արծիվյանն ստույգ թվականը չի նշում, սակայն գրում է, որ Գաղատիայից անմիջապես մեկնել է Կ. Պոլիս և քարոզելու հրաման ստացել Սահակ Ապուչեխցի պատրիարքից, որը և շուտով՝ 1714 թ. պաշտոնանկ է եղել:
[37] Տե՛ս ՁԱՄ, Գ, էջ 777:
[38] ՁԱՄ, Գ, էջ 776-778, 804, 805-806, 808-809. հմմտ. **Ց. Թորոսեան**, *Վարք Մխիթարայ...*, էջ 334-335:

[39] *Բազմավէպ*, 1978, էջ 274:
[40] «Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*, 1972, էջ 464:
[41] ՁԱՄ, Գ, էջ 823:
[42] *Բազմավէպ*, 1978, էջ 296-301:
[43] «Ստորագրութիւն ուղեւորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի Պատրիարքի Ս. Աթոռոյս՝ յԵրուսաղէմի ի Կ. Պոլիս». - *Սիոն*, 1866, էջ 142:
[44] *Բազմավէպ*, 1978, էջ 276-281:
[45] *Բազմավէպ*, 1978, էջ 277-278: Մխիթար Սեբաստացին, Հովհաննես Սեբաստացու հետ համատեղ, Աքվինացու «Աստվածաբանության հանրագումարի» թարգմանությունն սկսել էր դեռևս 1712 թ. ու ավարտել 1716-1717 թթ.: 11 հատորների մեջ զետեղված այս թարգմանությունը ցայսօր անտիպ է. - տե՛ս **Ս. Ճեմճեմեան**, *Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը*, էջ 18-21, 25, 259:
[46] 1734 թ. դրությամբ թարգմանված էր Թովմա Աքվինացու «Աստվածաբանության» Բ մասը. այդ ձեռագիրն այժմ պահվում է Ղալաթիո Ազգային Մատենադարանում, թիվ 49, էջք 666 (տե՛ս **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 292): Մի մասնակի օրինակ էլ կա Երուսաղեմի Հայոց պատրիարքության մատենադարանում (տե՛ս **Ն. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Դ, Երուսաղեմ, 1969, էջ 597-598):
[47] *Բազմավէպ*, 1978, էջ 277-278:
[48] Տե՛ս **Ս. Ճեմճեմեան**, *Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը*, էջ 19: XVII դարի կեսերին Լեհաստանում գրող մեկ այլ հեղինակ նույնպես հիշում էր ջահկեցիներին.

...Թղթեր Հռոմայ փափէն եկին...
Թէ կաթողիկոսըն Մելքիսեթ
Ընդ Ֆռանգաց ուխտ ու դաշն ետ.
Ճահուկ գրքովք ձեռնադրանք ետ,
Զմեզ այլազգեացը գերի ետ...

Ղեւոնդ Ալիշան, *Կամենից. տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ հաւաստչեայ յաւելուածովք* (Վենետիկ-Ս. Ղազար, 1896), էջ 205:
[49] **Ս. Արեւշատյան**, «Թովմա Աքվինացի». - *Հայկական սովետական հանրագիտարան:* Հ. 4 (Երևան, 1978), էջ 201:
[50] *Դրախտ ցանկալի*, էջ 702:
[51] 1729 թ. վերոհիշյալ Ղուկաս Խարբերդցին թարգմանել էր նաև Սկոթոսի *Աստվածաբանությունը* (**Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 292):
[52] **Յակոբ Նալեան**, *Վէմ հաւատոյ* (Կ. Պոլիս, 1733), էջ 321:
[53] Տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 883, էջ 86ա (վերցրել ենք

Հետևյալ ուսումնասիրությունից՝ **Արմեն Տեր-Ստեփանյան**, «Գևորգ Մխլայիմ». - *Էջմիածին*, 1984, No. 5 (մայիս), էջ 38):

ԳԼՈՒԽ Ե.

ԱԲՐԱՀԱՄ Բ ԽՈՇԱԲԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ (1719-1734)

Նախնական դիտողություններ

Մեր հետագա քննության առանցքում են Այսրկովկասում օսմանյան իշխանության տարիներին՝ 1724-1735 թթ., Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի միջև զարգացող հարաբերությունների ցայսօր անհայտ մնացած կարևոր դրվագները[1]:

Կարապետ Բ Ուլնեցի կաթողիկոսը՝ թե՛ իր բնատուր հեզությունից, թե՛ խիստ առաջացած տարիքից, և թե՛ Կոլոտի կողմից իրեն կաթողիկոսացնելու երախտագիտության զգացումից ելնելով, իր գահակալման երեք տարիների ընթացքում (1726-1729) միշտ մնաց Կ. Պոլսի Հայոց պատրիարքի ազդեցության տակ: Ամենայն Հայոց հայրապետի այսպիսի կախյալ վիճակը, որքան էլ այն պայմանավորված լիներ առարկայական պայմաններով, անտարակույս, դժգոհություն էր առաջացնելու՝ նախկինում վճռորոշ ձայն ունեցած Մայր Աթոռի միաբանության և նրա հետ սերտորեն կապված հոգևոր խոշոր կենտրոնների մեջ: Ստեղծված դրությունը պետք է գնահատվեր իբրև Հայոց եկեղեցու ընդհանուր գործերում Կ. Պոլսի պատրիարքության չափից ավելի մեծացած հզորություն, համապատասխանաբար նաև Ս. Էջմիածնի դիրքերի և ինքնուրույնության թուլացում: Ավելին, ժամանակակիցները չգիտեին, որ ընդամենը մի քանի տարի անց

Արարատյան երկիրը դարձյալ հայտնվելու է պարսկական տիրապետության տակ (1735 թ. սեպտեմբերի 22-ին պարսկական զորքերը վերատիրացան Երևանին, դրանով իսկ ապահովելով իրենց իշխանությունն Արարատյան երկրի վրա[2]):

Կարապետի մահը, սակայն, կտրուկ փոխեց այս իրավիճակը: Նախ՝ Մայր Աթոռի միաբանությունն այս անգամ ձեռքից բաց չթողեց նոր կաթողիկոս ընտրելու նախաձեռնությունը և, հենվելով վեց տարվա ընթացքում արդեն ամրացած Երևանի օսմանյան իշխանությունների վրա, շատ արագ նոր կաթողիկոս ընտրեց Մշո Սուրբ Կարապետի առաջնորդ Աբրահամ արքեպիսկոպոս Խոշաբեցուն (1677-1734 թ. նոյեմբերի 11)[3]: Այն, որ Մայր Աթոռի միաբաններն իրոք շտապել են կաթողիկոսի ընտրությունն ինքնուրույնաբար անցկացնել Ս. Էջմիածնում, երևում է հետևյալ փաստերից: Կարապետ կաթողիկոսը մահացել էր 1729 թ. հոկտեմբերի 2-ին[4], Աբրահամն էլ ընտրվելու լուրն ստանալուն պես՝ ճանապարհ է ընկել, 1730 թ. հունվարի 4-ին մտել Ս. Էջմիածին և ընդամենը երեք օր անց կաթողիկոս օծվել[5] (Օրմանյանը, ձեռքի տակ չունենալով լրացուցիչ տեղեկություններ, ենթադրաբար գրում է, որ Աբրահամը չպետք է ճանապարհ ընկած լիներ «խոր ձմեռվան մէջ» և նրա օծումն սխալմամբ դնում 1730-ի մարտի վերջին)[6]:

Այս շտապողականությունը կարելի է բացատրել, նախ և առաջ, Ս. Էջմիածնի դերակայությունը վերահաստատելու ցանկությամբ և Կ. Պոլսում նոր ընտրություններ թույլ չտալու մտավախությամբ: Հետաքրքրական է, որ Խոշաբեցին իր կաթողիկոս ընտրվելու մասին լուրը մեծ ուշացումով է ուղարկում Կարինից Երուսաղեմ՝ իր քեռորդի Գրիգոր Շղթայակիր պատրիարքին, որը Կոլոտի մշտական և հավատարիմ դաշնակիցն էր: Նամակը Կարինից Երուսաղեմ է հասնում ավելի քան 7 ամսում՝ 1730 թ. հուլիսի 26-ին: Թերևս այս դիտումնավոր ուշացումն էր պատճառը, որ այդ մասին պատմող Շղթայակրի նամակի լուսանցքում, նրա քարտուղարի ձեռքով, իմիջիայլոց, ավելացված է՝ «զի մահու չափ վիրաւորեաց զմեզ Վեհն (=կաթողիկոսը)»[7]: Շատ հավանական է, որ Կոլոտը ևս ուշացումով է տեղեկացվել նոր կաթողիկոսի ընտրության մասին:

Ամեն դեպքում, Կոլոտ պատրիարքը դժվար թե բացահայտորեն հակադրվեր Աբրահամ Խոշաբեցու՝ Ամենայն Հայոց կաթողիկոս

ընտրվելուն, որովհետև Աբրահամը Կոլոտի համալսարանական ավագ ընկերներից էր, նաև, ինչպես ասվեց, նրա հոգևոր հայր և մեր-ձավորագույն բարեկամ՝ Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շղթայա-կրի քեռորդին[8]: Այս երեքն այն հինգ վարդապետների և երկու աբե-ղաների թվի մեջ էին, ովքեր 1704 թ. Ամրդոլի վանք-համալսարանից տեղափոխվեցին Մշո Ս. Կարապետ[9]: Եվ առաջին հայացքից թվում է, թե այս երկու համալսարանակից ընկերների մեջ որևէ խնդիր չպետք է առաջանար:

Աբրահամ Խոշաբեցու և Կոլոտի հարաբերությունները 1719-1727 թթ.

Իսկապես, մինչև կաթողիկոս ընտրվելն Աբրահամը և Կոլոտը արտաքնապես հրաշալի հարաբերությունների մեջ էին: Ահավասիկ, այս փաստը հաստատող երեք վկայություն (ներկայացնում ենք ժա-մանակագրական կարգով):

Ա. 1719 թ. Կոլոտը գրում էր.

> «ընդ մեզ էր յամենայնի ի սկզբանց անտի եւ մեծապատիւ եղբայրն իմ Աբրահամ վսեմաբան եւ քաջաշնորհ վարդապետն, որ է այժմ վերատեսուչ եւ արժանաժառանգ առաջնորդ Տարօնոյ եւ գահակալ սրբոյ ուխտին այնորիկ»[10]:

Բ. 1720 թ. հունիսի 25-ին Կոլոտը և Երուսաղեմի Գրիգոր Շղ-թայակիր պատրիարքը մի համատեղ կոնդակ են հղում Բաղեշի ժո-ղովրդին, որտեղ, ի թիվս այլ խնդիրների, կոչ են անում ամեն կերպ աջակցել Աբրահամ Խոշաբեցուն՝ վանքերի պարտքերը վճարելու գործում (ամենայն հավանականությամբ, կոնդակը գրվել էր Աբրա-համ Խոշաբեցու և մի քանի այլ գործիչների խնդրանքով)[11]:

Գ. 1727 թ. Աբրահամն այցելել է Երուսաղեմ, որտեղ իր և Կո-լոտի հիշատակին մի խաչքար է կանգնեցրել.

> «Ի թվին ՌՃՀԶ (1727) ամին կանգնեցաւ սուրբ խաչս բա-րեխօս առ Աստուած վասն տեառն Յովհաննու պատրիարգ վարդա-պետի՝ սրբոյ Աթոռոյս սպասաւորի, եւ տեառն Աբրահամու՝ դիտի Մշոյ սուրբ Կարապետի եւ ծնողաց նոցա. յիշեցէք ի Տէր եւ Աս-տուած ողորմի ասացէք. ամէն»[12]:

Այսուհանդերձ, հակառակ Կոլոտի հետ իր այս երկարամյա բարեկամության, Մայր Աթոռի և Կ. Պոլսի պատրիարքության ներ-հակություններն արդեն այն աստիճան էին խորացել, որ ուժգնորեն զգացնել տվեցին հե՛նց Աբրահամ Խոշաբեցու Ս. Էջմիածնում գահա-կալելու տարիներին: Ըստ ստորև մեջբերվող տեղեկությունների՝ Աբ-րահամը չի եղել Կարապետ Ուլնեցու պես Կոլոտի հետ ամեն բանում համաձայնող կաթողիկոս, այլ վարել է բավական կարծր ինքնուրույն քաղաքականություն: Ըստ երևույթին, Աբրահամ Խոշաբեցին ինքն էլ անձամբ շատ դժգոհ է եղել Կոլոտի կատարած քայլերից, հատկա-պես՝ կաթոլիկների նկատմամբ հաշտարար-զիջողական դիրքորոշում բռնելուց, ինչպես նաև 1726 թ. կաթողիկոսական ընտրությունները Կ. Պոլսում կազմակերպելուց (հիշենք, օրինակ, որ հայ եկեղեցու կա-նոնադրության այս կոպիտ խախտումն այնպիսի վրդովմունք էր առաջացրել Մինաս արքեպիսկոպոս Փերվազյանի մոտ, որ նա իբրև բողոքի նշան հրաժարվել էր ներկայանալ ընտրություններին): Անց-նենք այս կռահումները լուսաբանող փաստական նյութին:

Աբրահամ Խոշաբեցու և Կոլոտի հարաբերությունները 1730-1734 թթ.

Աբրահամ կաթողիկոսի և Կոլոտի միջև եղած որոշակի լար-վածության մասին է վկայում Սիմեոն Երևանցու աշակերտության շրջանին վերաբերող հետաքրքրական մի դրվագ, երբ Աբրահամ կա-թողիկոսը, դժգոհելով Պոլսի պատրիարքարանի՝ «ուղեղներ որսալու» գործելակերպից, այս դեպքում՝ Սիմեոն Երևանցուն Ս. Էջմիածնից Պոլիս գայթակղել-տանելու Կոլոտի ջանքերից՝

> «վիրավորված սրտու սաստիկ հանդիմանում է... և ասում. «չա՞տ համարեցիք մի տղա Սուրբ Աթոռի համար, որ նորան էլ ու-զում էք հեռացնել այստեղից»[13]:

Ամրդոլի վանքի այս երկու նախկին եղբայր-միաբանների միջև եղած խնդիրների մասին կան նաև շատ ավելի հստակ տեղեկու-թյուններ: Այսպես՝ 1732 թ. հոկտեմբերի 5-ին Երուսաղեմից Կոլոտին հղած նամակում Գրիգոր Շղթայակիրը գրում էր.

«Լուայ յոմանց զՍուրբ Գահի (=Ս. Էջմիածնի) նուիրակին զվատչուեր զարարսն. եւ ընդ այն զարհուրեալ եւ զարմացեալ կամ՝ յապշութեան եւ մտախոհ լեալ ոչ գիտեմ, թէ զի՞նչ ասացից. զի դու յորժամ լուար՝ *ընդէ՞ր ոչ զգացուցէր Եղբորդ* (իմա՝ Աբրահամ Մշեցի կաթողիկոսին, Ա.Ա.)՝ *զի պատժակոծ զնա առնիցէր*: Եւ կամ թէ ինքն (իմա՝ նվիրակը, Ա.Ա.) դառնահամբաւ՝ զի՞նչ տեսեալ զմէնջ նեղութիւն, որ այսքան զմեզ ի բերանն որդնալի առեալ պախարակէ. զոր Տէր լիցի ինքեան վրէժխնդիր եւ հատուսցէ ըստ գործոց իւրոց՝ ամէն:

Եւ կամ թէ ազգն մեր արամեան, քահանայք եւ ժողովուրդք երլիք (=տեղացի) եւ եկք, զայսքան եպերանաց խօսս լուեալ ի պիղծ բերանոյ նորա, եւ մի ի նոցանէ ոչ խօսեցաւ, թէ՝ «ընդէ՞ր այդպէս զանիրաւսն բարբառիս»: Ուրեմն լոյս աչացս, բարձեալք են իրաւունք յերկրէ, եւ կենաց իմոց վա՛յ թէ որպէս պարտիմք կենցաղավարիլ ի մէջ այսպիսեացս: Եւ դու կարի մի տրտմիցիս՝ յիշեա զբանն, որ վասն Տեառն մերոյ գրէ Հեղն սուրբ, թէ «Հիսուս չոգաւ թաքեաւ ի նոցանէ եւ այլն»[14]: Եւ խնդրեմ յԱստուծոյ, զի քեզ արիութիւն եւ համբերութիւն տացէ, եւ զթշնամիս քոյ ի կոր կործանեսցէ, յիշելով զխղճութիւնս մեր եւ զամբարտաւանութիւնս նոցայ»[15]:

Նույն մտահոգությունները, ավելի քողարկված և այլաբանական ձևակերպումներով, արտահայտված են 1733 թ. հունիսի 11-ին Գրիգոր Շղթայակրի՝ Կոլոտին հասցեագրած նամակում.

«...Հոգի, մի՛ տրտմիր՝ այլ ուրախ լեր, զի վարձք քո բազում են յերկինս. թող ասեն ասողքն զինչ որ կասեն, հատուցանող դատաւորն արդար է:...բայց յորժամ զմիւս գիրն ընթերցայ՝ տրտմութեամբ լցայ ընդ խղճութիւն դառնուկին իմոյ, որ ի բերանս գայլաց անկեալ կայ՝ զոր Անտուածն Դանիէլի խցցէ զռեխս նոցա: *Եւ այժմ զատոյգն քեզ գրեմ թէպէտ սիրտս եւ ձեռքս ի դողումն է* (այլ զի՞նչ առնեմ, որովհետեւ ամենայն յաջողումն ի Տեառնէ է)՝ *Սրբոյ Աթոռոյ Գահակալն յայն կէտն է եւ այլ աւելի, եւ Սրբոյ Եկեղեցոյդ պարտքն եւս դիզեալ կայ,* զոր Տէր ոչնչացուսցէ: Եւ ըստ գրոյդ զօրութեան հոտեալն քառօրեայ եւ չյարուցեալն ի Սուրբ Գահն, յերկիրն եւ այդր՝ զբազում բարեկամս ստացեալ է. մինչ զի ի հարկէ յայնպիսի տեղոջ յղեալ ես, որ բացարձակ զչարիս իւր յայտնէ, զոր Տէր զինքն պատժեսցէ... բայց ընդ լսողն եւ չխօսողն ես զարմացեալ եմ. վա՛յ աշխարհիս դայթակղութեան եւ

մարդոց անհաւատարմութեան: ...զի դանն (sic) ոչ բարով նոր գնաց անդ (թե ու՞ր՝ պարզ չէ - Ա.Ա.)՝ մի գուցէ դարան ինչ գործիցէ եւ լիցի առիթ խազմի (=խռովության): Եւ դու եւս շատ մի՛ անկանիր ի հետն, զի ստուգիւ դիւազգեացեալն ի դիւէ լլկեալ գործէ զնանրութիւն. մի՛ լիցի, թէ մեք պատճառ խռովութեան՝ զոր Տէր փրկեսցէ...»[16]:

Ինչպես տեսնում ենք, Շղթայակիրը մեղադրում է Աբրահամ կաթողիկոսին երկու հարցում. նախ՝ Հայ եկեղեցու վզին պարտքեր փաթաթելու մեջ («Սրբոյ Եկեղեցոյդ պարտքն եւս դիզեալ կայ»), և, երկրորդ՝ համագործակցելու համար Կոլոտին պախարակող ինչ-որ անձի՝ «դան»-ի, հետ, որին բնորոշում է իբրև «հոտեալն քառօրեայ եւ չյարուցեալն ի Սուրբ Գահն»: Ուշագրավ է նաև այն, որ պոլսահայ զանգվածները չեն բռնել Կոլոտի կողմը և չեն դատապարտել նրա այդ քննադատին: Սա վկայում է ինչպես այդ անանուն անձի վայելած հեղինակության և ազդեցիկ դիրքի, այնպես էլ՝ Կոլոտ պատրիարքի հաշտարար քաղաքականության դեմ հայ զանգվածների լայն շերտերում առաջացած լուրջ դժգոհության և կասկածների մասին: Սակայն, ո՞վ էր Կ. Պոլսի Հայոց պատրիարք Կոլոտի այդ հզոր թշնամին, որի անունն անգամ իր նամակներում խուսափել է տալ Շղթայակիրը: Բարեբախտաբար, Շղթայակրի 1732 թ. հոկտեմբերի 5-ի վերոբերյալ նամակն ունի մի փաստ, որը հնարավորություն է տալիս ճշտել նաև Կոլոտի հակառակորդի ով լինելը, այն է՝ նամակում նշվում է այդ մարդու պաշտոնը՝ «զՍուրբ Գահի նուիրակն»:

Ստորև քննությունը շարունակելու ենք հետևյալ երկու հարցի ուղղությամբ. ա) ի՞նչ էր Հայ եկեղեցու նվիրակության հաստատությունն առհասարակ ու 1720-ական թթ. մասնավորապես, և բ) ո՞վ էր 1732-1733 թթ. Ս. Էջմիածնի նվիրակը Կ. Պոլսում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ազգային-եկեղեցական այս երկու կենտրոնական հիմնարկությունների հարաբերություններն հնարավոր կլինի ամբողջական տեսությամբ ներկայացնել Երևանի, Կ. Պոլսի, Երուսաղեմի և մյուս հայկական մատենադարաններում ցրված համապատասխան վավերագրերն ի մի բերելուց և հրատարակելուց հետո միայն:

[2] **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, էջ 68:
[3] Հմմտ. ԱՀԳ, սյուն. 1965:
[4] ՁԱՄ, Գ, էջ 805. *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 2347, պահպանակ Դ:
[5] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 2347, պահպանակ Դ: **Ներսէս Ակինեան**, *Բաղէշի դպրոցը (1500-1704)*: Վիեննա, 1952, էջ 376:
[6] ԱՀԳ, սյուն. 1965:
[7] «Նամականի Գրիգոր Շղթայակիր պատրիարքի» («Դիւան Սուրբ Յակոբի»). - *Սիոն*, 1971, էջ 432:
[8] Կոլոտը Գրիգոր Շղթայակրից էր ստացել ծայրագույն վարդապետության աստիճանը (տե՛ս **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 23):
[9] **Ն. Ակինեան**, *Բաղէշի դպրոցը*, էջ 372-378:
[10] **Բաբգէն Կիւլէսէրեան**, *Կոլոտ Յովհաննէս պատրիարք*, էջ 164:
[11] **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 270-273:
[12] Նույն տեղում, էջ 274. **Տիգրան Սաւալանեանց**, *Պատմութիւն Երուսաղէմի:* Հ. Բ (Երուսաղէմ, 1931), էջ 1231. **Ն. Ակինեան**, *Բաղէշի դպրոցը*, էջ 376:
[13] *Դիւան հայոց պատմութեան*, Գիրք Գ, էջ ԿԵ-ԿԶ: Գյուտ Աղանյանցն այս դրվագը քաղել է «Ճառ գովութեան՝ գովելեաց կոչեցեալ իսկութիւն բանի: Նախընտրաբար վասն սրբազան...» գրքույկից (տե՛ս *Դիւան հայոց պատմութեան:* Գիրք Գ, էջ ԽԵ, ծնթ. 3): Այս ձեռագիրը պահվում է Ս. Պետերբուրգում Մելքիսեդեկ բանասերի հավաքածոյում, տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, No. 268 դրսի ժապավենը:
[14] *Յովհաննէս Աւետարանիչ*, Գլուխ ԺԲ, 36:
[15] «Նամականի Գրիգոր Շղթայակիր պատրիարքի» («Դիւան Սուրբ Յակոբի»). - *Սիոն*, 1972, էջ 61-62:
[16] «Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*, 1972, էջ 72-75. Հմմտ. նույն տեղում, էջ 378, 469-470, 471:

ԳԼՈՒԽ Զ.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՎԻՐԱԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ եկեղեցու նվիրական հաստատությունը մեզանում, ցավոք, առանձին ուսումնասիրությունների առարկա դեռևս չի դարձել[1]: Ուստի դժվար է ստուգապես ասել, թէ այն ե՞րբ է ստեղծվել և սկզբնապես ի՞նչ գործառույթներ է ունեցել:

Սուրբ մյուռոնի բաշխումն անկասկած կաթողիկոսական նվիրակի ամենավաղ հաստատված պարտականություններից մեկն է եղել. X-XI դարերում խմբագրված Հայոց Կանոնագիրքն արդեն որոշակիորեն կարգավորում էր մյուռոնի բաշխումը.

> «Եպիսկոպոսունք մի՛ իշխեսցեն միւռոն աւրհնել կամ յաւելուած առնել եւ տալ քահանայից, այլ ամ յամէ ի հայրապետանոցէն առցեն ըստ կանոնական հրամանի սուրբ հարցն»[2]:

Սկզբնաղբյուրներում Ամենայն Հայոց կաթողիկոսի նվիրակի մասին մեզ հանդիպած ամենավաղ վկայությունը վերաբերում է 1290 թ.[3] (1317-1318 թվականներին գրված մի վավերագիր արդեն հիշատակում է նվիրակի՝ մյուռոնի բաշխման առաքելությունը)[4]:

Հնարավոր է, որ նվիրակի պաշտոնը կանոնադրորեն հաստատված լինի 1246-ից մինչև 1290 թ. ընկած միջոցին, որովհետև 1246 թ. Կոնստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը, Կիլիկիայից բուն Հայաստան ուղարկելով Վարդան Արևելցուն և հանձնարարելով Հայաստանի ամբողջ ժողովրդին ընդունել նրան իբրև կաթողիկոսի փոխանորդ՝ «փոխանակ անձին իմոյ» (որ, ինչպես շուտով կտեսնենք,

նվիրակի հիմնական առաքելություններից էր), այդուհանդերձ՝ Վարդան վարդապետին «նուիրակ» չի անվանում[5]: Կիրակոս Գանձակեցին ևս, հիշատակելով նույն այցը մոտավորապես 1200-1271 թթ., Վարդանին «նուիրակ» չի կոչում[6]: Այսքանից թերևս կարելի է եզրակացնել, որ XIII դարի կեսերին նվիրակի պաշտոն դեռ գոյություն չուներ և անհայտ էր ժամանակակիցներին: Հետևաբար, պատմաբանասիրական գրականության մեջ՝ 1246 թ. այցի կապակցությամբ, Վարդան Արևելցուն նվիրակ անվանելը պետք է առայժմ՝ մինչև հնարավոր նոր փաստերի ի հայտ գալը, պայմանականորեն ընկալել[7]:

Ինչևէ, XVI-XVIII դարերում Հայ եկեղեցու ներքին կառույցում նվիրակների կշիռն զգալիորեն աճել էր: Պատահական չէ, որ իր հեղինակած աղոթքներից մեկում Ղազար կաթողիկոսը նրանց է դիմում հատուկ բարեմաղթանքով.

> «Մեծազան աշխատութեամբ վաստակող Նուիրակացն մերոց, որք ընդ ոլորտս տիեզերաց՝ զօրութիւն եւ կարողութիւն»[8]:

Որո՞նք էին, ուրեմն, Ս. Էջմիածնի նվիրակի պարտականություններն ու իրավասությունները: 1760 թ. Մայր Աթոռում Սիմեոն վարդապետ Երևանցու ձեռքով գրված մի նամակում, կարդում ենք, որ Ս. Էջմիածնի

> նուիրակին գործն այն է, որ զպատուիրանս Աստուծոյ քարոզէ եւ հոգեւորապէս իշխէ ժողովրդեանն եւ զսուրբ միւռոն բաշխեսցէ[9]:

Այսքանով, սակայն, նվիրակի իրավասությունները չէին սահմանափակվում: Նույն նամակը, որ գրվել էր ի պատասխան ինչ-որ վիճակից Ս. Էջմիածնի նվիրակի մասին ուղարկված բողոքի, ունի նաև հետևյալ հետաքրքրական տողերը.

> «Գրեալ էիք [կաթողիկոսին], թէ գրեա՛ նուիրակին, որ մեր խօսիցն հետեւիցի... յայսքան քաղաք եւ յայսքան յերկիր նուիրակք գնան, ի միոյ մեծէ կամ ի փոքունէ ոչ եմք լուեալ, թէ՝ «սրբազան հայր, գրեա նուիրակին, որ մեզ հետեւիցի»: Քանզի ի ընէ այսպէս է կարգն, որ սրբազան հայրն կոնդակ գրէ ժողովրդեանն,

թէ՝ «Հլու եւ հնազանդ լինիցիք նուիրակիս մերում»: Եւ նուիրակին եւս հրաման տայ սաստելոյ եւ յանդիմանելոյ, կապելոյ եւ արձակելոյ...»

Պարզվում է, որ այս նամակը գրելիս, Սիմեոն Երևանցին ձեռքի տակ է ունեցել և իբրև կաղապար օգտագործել իրենից ավելի վաղ գրված կաթողիկոսական մի կոնդակ, որը հաջողվեց հայտնաբերել: Դա Ղազար Ա Ջահկեցի կաթողիկոսի (1737-1751) հեղինակած և հետագայում կաղապարային փաստաթղթերի շարքում ընդգրկված մի անթվական կոնդակ է, որն ի թիվս այլ խնդիրների, հաստատում է, որ ժողովուրդն ու հոգևոր դասը պարտավոր են ենթարկվել Ս. Էջմիածնի նվիրակին՝ «որդիական խոնարհութեամբք՝ հլուք, հնազանդք եւ հպատակք լինիլ դմա» (այստեղից են վերցուած Սիմեոնի՝ «Հլու եւ հնազանդ լինիցիք նուիրակիս մերում» բառերը)[10]: Չի բացառվում, որ Ղազար Ջահկեցին եւս ունեցել և իր հերթին իբրև կաղապար է օգտագործել ավելի վաղ գրված կաթողիկոսական նույնաբնույթ մի ինչ-որ այլ կոնդակ:

Իսկ 1765 թ. գրված իր Ջամբռ-ում Սիմեոն Երևանցին հետևյալ նշումներն է արել նվիրակ առաքելու և նվիրակների իրավասությունների մասին.

«ըստ ժամանակին զնուիրակունս առաքել առ յամենեսեան *իբր փոխանորդ ինքեան*՝ ի քննել եւ վերահասու լինել զորպիսաբար կացութեանց եկեղեցեաց եւ եկեղեցականաց, զիւղն Աստուածագործ բաշխել ի յօծումն օծելոց եւ ի սրբազնագործել զսրբագործելիսն...

Եւ նուիրակն սորին որքան ի յեկեղեցիս իւրեանց կացցէ՝ հնազանդութեամբ եւ անտրտունջ ընդունին, հոգալով զպիտոյսն կերակրոց եւ ըմպելեաց. *յիշեն եւ զանունն ի յեկեղեցին նախքան զանուն Առաջնորդին իւրեանց՝ նախագահ ունելով քան զնա տեղեաւ եւ պատուով* (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.)»[11]:

Այսպիսով, Ս. Էջմիածնի նվիրակը հանդես էր գալիս իբրև Ամենայն Հայոց կաթողիկոսի փոխանորդ *ու, որպես այդպիսին, ավելի մեծ հոգևոր լիազորություններ և իշխանություն ուներ, քան իր նվիրակության տարածքի մեջ մտնող որևէ վիճակի առաջնորդը: Վերատեսչությունից զատ, նվիրակների մյուս կարևոր գործն էլ Ս. Էջմիածնի օգտին նվիրատվություն կազմակերպելն էր (կամ, մերօրյա*

անգլերեն հայտնի եզրով՝ fundraising-ը): Այս աշխատանքների մասին որոշակի պատկերացում կարելի է ստանալ՝ 1629-1631 թթ. Կաֆայում Ս. Էջմիածնի նվիրակի ծավալած գործունեության վերաբերյալ ժամանակակցի տված հետևյալ հաղորդումներից.

> «Խաչատուր վարդապետն եկաւ Էջմիածնայ լուսափուխ մեռոնաւ, որ էր նուիրակ նորընծա Տէր Մովսէս կաթուղիկոսին, Բ (2) աշակերտ ունէր, մինն ճգնաւոր, մինն՝ կիսասարկաւագ:...Նուիրակ վարդապետն դատապարտեց ըզքահանայքն, Դ-Ե (4-5) քահանայ արգիլեց, տուգանք իառ, ոսկի, գիրք, խաչ, ըսկի, որըն կամաւ, որն ակամայ, ժողովուրդ ալ բանադրեց՝ Վարդանն, Յարութիւնն եւ այլ մէկ քանիքն: Քաղքիս ժամերն ամէնն ժուռ եկաւ, ինչ որ տըւին էառ՝ գաւազան տըւին, ասմաւուրք տըւին:...Նուիրակ կացուց պարոնտէրն եւ տէր Մկրտիչն ուղարկեց Կէզլով, Պախչա-Սարայն, Խարա-Սուն, գեղրանքն ընթանուր [Խըր]մին երկիրն. գընացին, նուիրակեցին ու բերին... Եւ դարձեալ ինքն ելաւ գընաց, մէմ ալ ինքն նուիրկեց, ետո յեկաւ նըստաւ Խարա-Սուն, խապար խըրկեց կաֆացոց, զիս եկէք առէք, կամ մեռոնըս ուղարկեցեք: Մենք մեռոնն ուղարկեցաք, ետոյ բարկացաւ մեզ կաֆացոցս: Ելան դաւլվաթորայք եւ քահանայք հաւասար գնացաք, ապա ուրախացաւ, Գ (3) ժամէս Ճ (100) խռուշ ուղաց, Բ (2) ժամէն Լ (30) խռուշ էառ, ետոյ մեռոնն թափեց Խարա-Սուն...
>
> Թվականն ՌՁ (1631) այսաւր շաբաթ օր է, ապրիլի Լ (30) է, այս եկաւ ան սահաթին մտաւ նաւ եւ գընաց. Աստուած բարի ճանապարհ տայ»[12]:

Այս և այլ հաղորդումներից երևում է, որ Ս. Էջմիածնի նվիրակներն ունեցել են նաև օգնականներ և գործակալներ, որոնք հաճախ նույնպես նվիրակ են կոչվել:

Սեփական պետքերն ու ծախսերը հոգալու համար մերձակա և հեռավոր շրջաններ «նվիրակներ» են առաքել նաև Գանձասարի և Աղթամարի կաթողիկոսները, Երուսաղեմի պատրիարքը, առանձին վանքերի և թեմերի առաջնորդները: Սակայն, ի տարբերություն Ս. Էջմիածնի նվիրակների, սրանց գործունեությունը սահմանափակվել է զուտ դրամահավաքով և հոգևոր-վերատեսչական որևէ իշխանություն կամ գործառույթ չի պարունակել: Ուստի այս «տեղական» նվիրակների գործունեությանը հատուկ անդրադառնալը մեր հետազոտության նպատակներից դուրս է: Օսմանյան կայսրության տա-

բածքում Ս. Էջմիածնի նվիրակները կարող էին բախվել մյուռոն բաժանող և այլ նույնանման լիազորություններով օժտված «մրցակից» նվիրակների հետ միայն Եղիազար Այնթապցու ստեղծած հակաթոռ կաթողիկոսության օրոք՝ 1665-1680 թթ.[13]:

Ս. Էջմիածնի նվիրակը հավաքում և իր հետ Մայր Աթոռ էր բերում հետևյալ կարգի նվերներ՝ «վարագոյր, գոգնոց, աթոռ, կոնք, սկիհ, աւետարան, շապիկք եւ շուրջառք. բերի ընդ իս եւ մեծագին ջահ մի», - պատմում էր Կ. Պոլսում նվիրակած Պետրոս Քյուրյուր վարդապետը[14]:

Ս. Էջմիածնի նվիրակի պաշտոնն, իր գործառույթներով, որոշակիորեն համընկնում է Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու առաքելական դելեգատի կամ լեգատի պաշտոնին[15], որի մասին դեռևս XVII դարի սկզբին Սիմեոն Լեհացին ճշգրիտ տեղեկացնում էր.

> «Այլ եւ ունի Փափն ամէն երկիր *Լէկաթ, որ է նուիրակ:* Եւ ամէն տարի Ենէրալնի առաքէ առ ի դատել եւ քննել զանուղղայ կարգաւորս եւ դնել հարպետ (=փոխանորդ), առաջնորդ, վանաց հայր: Եւ այսպէս ամէն երեք տարի փոխեն եւ այլ դնեն. այսպիսի կարգաւ վարին: Եւ սահման կայ ի մէջ նոցա, զի ոչ ոք չկարէ դատել զկարգաւորսն, բայց միայն եպիսկոպոսն, եւ զեպիսկոպոսն՝ Փափն կամ Լէկաթն[16] (ընդգծումն՝ Ա.Ա.)»:

Հետաքրքիր է, որ Ս. Էջմիածնի նվիրակի պաշտոնավարության ժամկետը, կարծես նմանօրինակված լինելով, նույնպես երեք տարի էր: Այսպես, Ս. Էջմիածնի նվիրակները՝ «նուիրակութեան ժողով» անելու, այսինքն՝ հանգանակություն և նվիրատվություններ հավաքելու նպատակով կարող էին մուտք գործել նույն բնակավայր՝ նախորդ նվիրակությունից երեք տարի անց միայն: Ինչպես հաղորդում է 1725 թ. կեսերին Եվդոկիա մտած Ս. Էջմիածնի նվիրակի գրագիրը.

> «Երեք օրէն ապա հասի յԵւդոկի,
> բայց անդ չէր ժամ նուիրակութեան ժողովի,
> զի դեռ երկու ամ անցեալ էր նուիրակի.
> վասն այն թողաք եւ գնացաք ի Ղայսերի»[17]:

Սակայն, հաջորդ տարի՝ 1726 թ., նրանք վերադառնում են Եվդոկիա և նվիրակություն կատարում.

«Իսկոյն ապա դարձաք քաղաքն յԵւդոկի,որ այն միայն մնացեալ էր եզակի. անդ արարաք զնուիրակութիւն ըստ կարգի, որպէս վերոյ ուրթերորդի տանն յիշի»[18]:

Նվիրակություն անելու ավանդական եռամյա ժամկետը հաստատում է նաև Եփրեմ կաթողիկոսի (1809-1830)՝ վերոհիշյալ կոնդակը. «ժամանակ շրջագայելոյ նուիրակաց ի վիճակի իւրեանց պայմանեալ է լինիլ երեք ամ»[19]: Սիմեոն Երևանցին, օրինակ, Հնդկաստանում նվիրակություն արեց երեք ու կես տարի[20]:

Այնուամենայնիվ, դեռևս վաղ է հաստատապես եզրակացնել, թե որ ուղղությամբ է կատարվել նվիրակության երեք տարվա ժամկետի փոխառումը. արդյոք Ս. Էջմիածի՞ն է կաթոլիկ եկեղեցու փորձն ուշադիր ուսումնասիրել և նվիրակության վերաբերյալ այս ու մի շարք այլ կանոնադրական կետեր փոխառել, թե գուցե Հռո՞մն է նկատել հայ եկեղեցու նվիրակության կառույցի արդյունավետությունը և որոշել է այն ընդօրինակել: Թեև երկրորդ տարբերակը պակաս հավանական է թվում, բայց և այնպես այդ չի կարելի բացառել թեկուզ այն պատճառով, որ կաթոլիկ նվիրակների՝ լեգաթների, նունցիների, ինթերնունցիների *աստիճաններն ու նրանց գործունեության կանոններն առաջին անգամ պաշտոնապես հաստատվել են Գրիգոր XIII պապի գահակալման օրոք՝ 1572-1585 թթ.[21], երբ հայ նվիրակությունն արդեն վաղուց գործող համակարգ էր: Կաթոլիկ եկեղեցու օտարերկրյա մշտական ներկայացուցչությունը (*նունցիների *հաստատությունը) ևս բավական ուշ է ձևավորվել՝ XVI դարի առաջին կեսին: Չի բացառվում նաև, որ դարերի ընթացքում հայ և կաթոլիկ եկեղեցիները միմյանցից ընդօրինակած լինեն նվիրական գործունեության զանազան տարրեր:*

Ի՞նչ դժվարություններ ու բարդություններ էին պատահում Ս. Էջմիածնի նվիրակի աշխատանքում:

Նախ, նվիրակի պաշտոնը երբեմն շատ վտանգավոր է եղել: Թուրք-պարսկական երկարամյա պատերազմներից մեկի (1501-1515 թթ.) միջոցին՝ 1506 թ., Կ. Պոլսով Ղրիմ և Լեհաստան անցած ու վերադարձած Ս. Էջմիածնի նվիրակներին՝ մեղադրելով Իրանի օգտին լրտեսություն անելու՝ Եվրոպա անցնելու ու Օսմանյան կայսրության թշնամի քրիստոնյա պետությունների հետ կապ հաստատելու փորձի մեջ, դատապարտում են գլխատման.

«Յեջմիածնէն նուիրակք եկան
Բոլոր աշխարհս Հռոմոց Տան:
...Ասին չաշուտ (=լրտես) են միաբան,
Սօֆին (=Իրանի շահը) ղրկել ի Ֆրանկիստան...»[22]

Մեկ այլ սկզբնաղբյուր նույն դեպքը վերագրում է 1503 թվին. «Թվ. ՉԾԲ Ըստըմպօլն՝ զտէր Յովհաննէսն, զտէր Դաւիթն, զտէր Սարգիսն՝ որք էին յէջմիածնայ նվիրակք, նահատակեցան...»[23]:

Ավելի հաճախ, սակայն, բարդությունները լինում էին վիճակների և թեմերի առաջնորդների հետ՝ հոգևոր-վարչական գերիշխանության հողի վրա, քանզի նվիրակը, ինչպես վերն արդեն ասվեց, Ամենայն Հայոց կաթողիկոսի փոխանորդի կարգավիճակ ունենալով, ուներ նաև վերահսկողի դեր: Նվիրակն ու առաջնորդը, միմյանց հավասարակշռելով, միշտ գտնվում էին բավական նուրբ հարաբերությունների մեջ: Զուր չէր, օրինակ, Գրիգոր Շղթայակիրը՝ Կոլոտին գրած մի նամակում (9 սեպտեմբեր 1724 թ.), չեշտում Ս. Էջմիածնի նվիրակին ընդունելու և նրա հետ աշխատելու «տաժանելիությունը».

«Եւ լաւ ես արարեալ, զի սիրով ընկալեալ ես զնուիրակ վարդապետն. Աստուած տայ զի մինչեւ ի վերջն սիրով լիցի, թէպէտ է՛ յոյժ տաժանելի»[24]:

Իսկ Կ. Պոլսի պատրիարք Հակոբ Նալյանը (1741-1764), դառնացած Ս. Էջմիածնի կաթողիկոսների և նրանց նվիրակների հետ իր և իր նախորդի՝ Կոլոտ պատրիարքի ունեցած տհաճ խնդիրներից, մեղադրական էր կարդում.

«Նուիրակքն՝ անօրէնք,
Ուղարկօղքն՝ անիրաւք,
Տզրկապէս ծըծին զարիւն՝
Զազգս խնայօղ մարդ չի մընաց»[25]:

XVI-XVIII դարերում իր նվիրակների միջոցով Ս. Էջմիածինն ապահովում էր ինչպես Հայ եկեղեցու բավական արդյունավետ (ընձեռած հնարավորությունների սահմաններում) կառավարումն ու վերատեսչությունը, այնպես էլ իր եկամուտների մեծագույն մասը: Ս. Էջմիածնի նվիրակների ցանցն այն առանցքային օղակն էր, որ կա-

պում էր աշխարհասփյուռ հայությունը հայկական օրենքներին, ավանդույթներին և, ի վերջո, հայրենիքին ու համազգային շահերին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Այս հարցին մասնակիորեն անդրադարձել ենք հետևյալ հոդվածում՝ **Արմեն Այվազյան**, «Հայ եկեղեցու նվիրական կառույցը ԺԶ-ԺԸ դարերում». - *Կանթեղ* (ՀՀ ԳԱԱ Հումանիտար գիտությունների բաժանմունքի Գիտական հոդվածների ժողովածու), No. 6, 2001 (Երևան. «Ասողիկ» հրատ.), էջ 190-197:

[2] Տե՛ս *Կանոնագիրք Հայոց:* Աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի: Հ. Բ (Երևան, ԳԱ հրատ., 1971), էջ 7. հմմտ. *Կանոնագիրք Հայոց:* Աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի: Հ. Ա (Երևան. ԳԱ հրատ., 1964), էջ 519:

[3] Տե՛ս *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական*, էջ 321-322. *Պատմութիւն նահանգին Սիսական*, էջ 439:

[4] Տե՛ս **Լ. Խաչիկյան**, *Արտազի հայկական իշխանությունը*, էջ 151:

[5] «...եւ առաքեցի առ ձեզ զարդիւնական վարդապետդ զՎարդան փոխանակ անձին իմոյ... եւ փոխանակ ասեմ զանձն իմ, զի ընդունիցեք զդա սիրով... Այլ եւ ամենայն պաշտելի եւ երկրպագելի սրբութիւնս իմուս երեսօք ընկալցին զերկրպագութիւն եւ աղօթս՝ դիմօք Վարդան վարդապետիդ իմ, եւ ձերովդ». - **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն հայոց:* Աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի (Երևան, ԳԱ հրատ., 1961), էջ 298-299:

[6] «...զի ծերացեալ էր նա, զվարդապետն (իմա՝ Վարդան Արևելցին, Ա.Ա.) փոխանակ իւր ընդունիցին». - Նույն տեղում, էջ 295:

[7] ԱԶԳ, սյուն. 1124 (Օրմանյանը իր այս գլուխն այդպես էլ անվանել է՝ «Վարդան նվիրակ»). **Վարդան Արևելցի**, *Մեկնութիւն քերականի:* Աշխատասիրությամբ՝ Լ. Գ. Խաչերյանի (Երևան. ԳԱ հրատ., 1972), էջ 6 (Խաչերյանը նրան անվանում է «կաթողիկոսի նվիրակ»):

[8] **Ղազար Ջահկեցի**, *Գիրք աղօթից որ կոչի՝ Աստուածաղերս* (Կ. Պոլիս, 1742-1744), էջ 251:

[9] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավերագիր 53:

[10] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 9120, էջ 45ա:

[11] *Ջամբռ*, էջ 52-53: Նվիրակների իրավասություններն ու պարտականություններն առավել մանրամասն նկարագրված են Եփրեմ Ա Ջորագեղցի կաթողիկոսի (1809-1830) հրամանով կազմված մի հատուկ հրահանգում («Ցուցակ պաշտօնի եւ պատուիրանաց յանձնեցելոց նուիրակին յառաքելն

զնա ի վիճակ»). - տե՛ս *Դիւան Հայոց պատմութեան:* Գիրք Գ, էջ 807-824:
[12] ՄԺ, Ա, էջ 217-218:
[13] **Ա. Յովհաննիսեան**, «Յակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը եւ տաճկահայ նուիրակութեան խնդիրը». - *Արարատ*, 1915 (փետրվար-մարտ), էջ 195-205:
[14] ՁԱՄ, Գ, էջ 829:
[15] Առաքելական դելեգատի տարատեսակ են նաև Հռոմի պապի կողմից շնորհվող նունցիի կամ ինտերնունցիի աստիճանները, որոնք, սակայն, միջնադարյան ոլորտին վերաբերող դիվանագիտական պաշտոններ են:
[16] **Սիմէոն դպիր Լեհացի**, *Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք*, էջ 108. հմմտ. *Энциклопедический словарь*. Том XXI, Издатели: Ф. А. Брокгауз (Лейпциг), И. А. Ефрон (СПб.). СПб., 1897, с. 427.
[17] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 56ա:
[18] Նույն տեղում, էջ 56բ:
[19] *Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Գ, էջ 815:
[20] ԱԶԳ, սյուն. 2070:
[21] *Советская историческая энциклопедия*. Том 10, Москва, 1967, с. 378.
[22] *«Հայոց նոր վկաները. 1155-1843 (Գիտական հրատարակութիւն)»*: Աշխատասիրութեամբ Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 340, 342:
[23] **Ալիշան**, *Կամենից*, էջ 16:
[24] Խոսքը վերաբերում է Սիմեոն Երևանցի վարդապետին («Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*, 1971, էջ 364. հմմտ. էջ 361):
[25] Այս չափածոն ամբողջությամբ տպագրված է, տե՛ս **Շուշանիկ Նազարյան**, *Ողբի և սթափման բանաստեղծություն* (Երևան. ԳԱ հրատ., 1992), էջ 350, 437-439:

ԳԼՈՒԽ Է.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՆՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱԲՐԱՀԱՄ Բ ԽՈՇԱԲԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ

Քննությունը շարունակելու համար հիշենք 1724-1735 թթ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքության հարաբերությունների ենթախորքը. եթե սկսած 1461 թվականից Օսմանյան կայսրության մեջ ապրող հայությունը, իբրև առանձին ենթակա ազգ-«միլլեթ», պետության առջև ներկայացված էր Կ. Պոլսի հայոց պատրիարքով և պատրիարքությամբ, ապա, 1724 թ. հայտնվելով նույն կայսրության վարչաիրավական տիրույթում և վարույթում, Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսությունը այլևս ինքն էր ձգտելու տիրել օրինականորեն հե՛նց իրեն պատկանող այդ մենաշնորհին: Սակայն, 1724-1730 թթ., վերը քննված տարբեր պատճառներով, Մայր Աթոռն իր ունեցած փաստացի հոգևոր իշխանությամբ դեռևս զիջում էր Կ. Պոլսի Հայոց պատրիարքությանը: Այդ պատճառներից էին՝ 1725 թ. Աստվածատուր կաթողիկոսի հանկարծահաս մահը, արևելահայ եկեղեցական գործիչների նկատմամբ օսմանյան իշխանության տածած անվստահությունը, Կարապետ Ուլնեցու ուշ ժամանումը Էջմիածին և նրա՝ Կոլոտի ազդեցության տակ լինելն ու գործելը:

Այժմ անդրադառնանք Աբրահամ Խոշաբեցի կաթողիկոսի և Հովհաննես Կոլոտի միջև ծագած խնդիրներին: Ըստ ամենայնի, կաթողիկոսանալուն պես՝ Աբրահամը վճռական և արտակարգ քայլերի էր դիմել Կ. Պոլսի Հայոց պատրիարքության նկատմամբ Ս. Էջմիած-

նի գերակայությունն ու վերահսկողությունը հաստատելու համար: Այդ քայլերից մեկը, ինչպես ցույց ենք տալու ստորև, եղել է նոր՝ «ծայրագույն նվիրակ» կոչվող աստիճանի սահմանումը:

Ահա այս առթիվ մեր չորս փաստարկները.

ա) սկզբնաղբյուրներն առաջին անգամ արձանագրում են «ծայրագույն նվիրակ» պաշտոնը 1730-34 թթ. (այս մասին մանրամասն կխոսենք ստորև՝ այդ տարիներին ծայրագույն նվիրակի պաշտոնը զբաղեցրած անձի ով լինելը ճշտելուն զուգահեռ).

բ) Ս. Էջմիածնի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքության միջև 1730-1732 թթ. արձանագրված լարված հարաբերությունները, որ վերը լուսաբանել ենք.

գ) 1730 թվականից ավելի վաղ «ծայրագույն նվիրակ» պաշտոնի բացակայությունը (համենայն դեպս, այդ ուղղությամբ սկզբնաղբյուրների մեր տեսական պրպտումներն արդյունք չտվեցին).

դ) 1730-34 թվականներից ի վեր՝ XVIII դարի ողջ ընթացքում սկզբնաղբյուրներում ծայրագույն նվիրակների բազմիցս հիշատակումը[1]:

Այս փաստարկների բաղդատումից կարելի է որոշակի վստահությամբ եզրակացնել, որ ծայրագույն նվիրակի պաշտոնը սահմանվել է Աբրահամ Խոշաբեցի կաթողիկոսի օրոք՝ 1730-1734 թվականների միջև ընկած միջոցին:

Պետք է ասել, սակայն, որ 1730-ականներից առաջ էլ հայտնի են առանձին նախադեպեր, երբ Ս. Էջմիածնի նվիրակներն օժտվել են արտակարգ լիազորություններով (սակայն, չեն կրել «ծայրագույն նվիրակ» տիտղոսը): Ինչպես հաղորդում է Առաքել Դաւրիժեցին՝

> «ի թուականին մեր ՌՀԹ (1630)... առաքեաց Մովսէս կաթուղիկոսն մեծ աշակերտ իւր զԿեսարացի Խաչատուր վարդապետն վասն նուիրակութեան Սուրբ Էջմիածնի յաշխարհն արեւմտական՝ յԱսորեստան եւ ի Հոռոմաստան (իմա՝ Օսմանյան կայսրություն - Ա.Ա.)»[2]:

1662 թ. Լեհաստանի հայերին ուղղված կաթողիկոսական մի կոնդակում ևս հիշվում է արտակարգ լիազորություններով Օսմանյան կայսրություն առաքված մի նվիրակ.

«Եւ մանաւանդ քան զնուիրակութիւնն կրկնակի օգնութիւն իմն կու խնդրեմ ի ձէնջ. քանզի յոյժ բազմացեալ է պարտքն ի վերայ սուրբ տանս, այս քան՝ զի պարանոցաթաղ կեամք ի մէջ պարտուցն... Եւ դարձեալ կրկին թախանձանօք խնդրեմ... զի փութանակի գործառնութիւն դորին (իմա՝ նվիրակին, Ա.Ա.) օգնական եւ թելադիր լինիջիք, զի մի՛ յետասցի, եւ տոկոսն ի վերայ պարտուցն բարդեսցի, զի կամքն մեր այս էր, զի *բոլոր տունս Յունաց ի դա էաք յանձնեալ*, հանդերձ երեք վարդապետօք, զի նուիրակեսցեն...»[3]

Նմանապես, 1690 կամ 1691 թ. Եղիազար Այնթափցի կաթողիկոսը, «ընդհանրական նուիրակութեան» կոնդակով[4], Կ. Պոլիս է առաքում հռչակավոր Մինաս արքեպիսկոպոս Ամդեցուն որպես «նուիրակ Սուրբ Աթոռոյն Էջմիածնի ի քաղաքս Իստամպոլ, ի յԱսիայ, եւ ամենայն տանս յունաց»[5]: Կարապետ Ուլնեցին ևս հաստատում է ընդհանրական նվիրակ հատուկ տիտղոսի առաջ գալը՝ «...ի մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, յորում ամի էր (1691 թ.) մեծ վարդապետն Մինաս Յամթեցի, եկեալ անդ ընդհանրական նուիրակ Սուրբ Էջմիածնի...»[6]:

Այսուամենայնիվ, ի տարբերություն ծայրագույն նվիրակության, վերը նշված երկու նախադեպերը հայ եկեղեցու կառուցվածքի մեջ նոր մնայուն պաշտոն-հաստատության հիմնում չեն նշանավորել, այլ առաջացել են ad hoc՝ ըստ պահի անհրաժեշտության և ավարտվել են Խաչատուր Կեսարացու և Մինաս Ամդեցու գործունեության հետ միասին: Այսպես՝ Մինաս Ամդեցուց հետո՝ 1706 թ. Ս. Էջմիածնից Կ. Պոլիս ժամանած Աստվածատուր վարդապետ Ցահրապատցին այլևս հիշատակված է իբրև սովորական, և ոչ՝ ընդհանրական նվիրակ[7]:

Ս. Էջմիածնի առաջին ծայրագույն նվիրակը՝ Ղազար վարդապետ Ջահկեցի

Ճշտումներ

Այժմ տեսնենք, թե ո՞վ էր, ի վերջո, 1730-ական թթ. սկզբին Ս. Էջմիածնի նվիրակը Կ. Պոլսում՝ Հայ եկեղեցու առաջին ծայրագույն նվիրակը:

Հրապարակելով «ՁՍուրբ Գահի նուիրակին զվատշուեր զարարսն»-ի մասին ակնարկած՝ 1732 թ. հոկտ. 5 թվակիր նամակը, Արա Գալայճյանն իմիջիայլոց ծանոթագրել է, թե այս դրվագում Գրիգոր Շղթայակիրն «ապահովաբար կակնարկէ Սիմեոն Երևանցիին (պետք չէ շփոթել կաթողիկոս Սիմեոն Երևանցիի հետ), որ 1732ին Զմյուռնիա կգտնվեր իբր նվիրակ Ս. Էջմիածնի»[8]: Սակայն, այս ծանոթագրության հետ անհնար է համաձայնելը, որովհետև.

ա) որևէ վկայություն չունենք առ այն, որ 1726 թ. Կարապետ Ուլնեցի կաթողիկոսի կողմից աթոռակալ կարգված և Ս. Էջմիածին առաքված Սիմեոն Երևանցին՞ 1732 թ. եղել է Ս. Էջմիածնի նվիրակը Զմյուռնիայում.

բ) Գրիգոր Շղթայակրի նամակում խոսքը վերաբերում է ոչ թե Զմյուռնիայում, այլ Կ. Պոլսում նստող Ս. Էջմիածնի գլխավոր նվիրակին, որը, իր դիրքի բերումով, իսկապես կարող էր լուրջ մարտահրավեր նետել Կ. Պոլսի պատրիարքին.

գ) այս Սիմեոն Երևանցի վարդապետը եղել է Գրիգոր Շղթայակրի մտերիմը, որ պարզվում է Հովհաննես Կոլոտին նրա գրած մեկ այլ նամակի (1724 թ. հունիսի 15) հետևյալ տողերից.

> «...եւ թէ մեր եղբայր Սիմէոն վարդապետն մեծ ա՞յդր է. նա ի քեզ յանձին՝ եւ դու ի նա՝ եւ երկուքդ յԱստուած. չլինի թէ օտարաբար ընդ միմեանս շարժիցիք. եւ ողջո՛յն նմա բազում»[10]:

Ուշագրավ է Սիմեոն վարդապետ Երևանցուն Շղթայակրի տված «մեծ» բնութագրումը. այն հուշում է ինչպես նրա արդեն տարեց լինելը, այնպես էլ նրա նկատմամբ հեղինակի տածած խորը հարգանքը: Սիմեոն վարդապետին մեր եղբայր կոչելով՝ Շղթայակիրն ակնարկում է նրա հետ ունեցած իր վաղեմի բարեկամության մասին: Ուստի այդ նույն մարդու մասին Շղթայակիրը չէր կարող ընդամենը մի քանի տարի անց արտահայտվել, զորօրինակ, այսպիսի անսքող թշնամանքով և ատելությամբ. «Հոտեալն քառօրեայ եւ չյարուցեալն ի Սուրբ Գահն», կամ՝ «զայսքան եպերանաց խօսս լուեալ ի պիղծ բերանոյ նորա» և այլն:

Մի շարք սկզբնաղբյուրներ հնարավորություն են տալիս անվերապահորեն պարզել 1730-ական թթ. սկզբին Կ. Պոլսում Ս. Էջմիածնի նվիրակի ով լինելը: Այդ աղբյուրներն են. հնատիպ երկու գրքերի հիշատակարանները, Զամչյանի մի հստակ տեղեկությունը և

Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագիր մատյաններից մեկում պահպանված՝ Ղազար Ջահկեցու աշակերտի գրած անտիպ մի երկը:

Ղազար Ջահկեցին իր Դրախտ ցանկալի *երկի հիշատակարանում գրում է.*

> «...ի գալն իմ ի Կոստանդնուպոլիս յաղագս նուիրակութեան սրբոյն Էջմիածնի մօրն հաւատոյ եւ ի ժամանելն իմ ի Թրակիա ի ՌՃՁԱ (1732) թուականիս մերում՝ անդ սկսայ ի կիր արկանելով ծնանիլ զայս գործս վաղեմնասաղմ, ներ երեք ամսոջ, շնորհօք ամենազօրին Աստուծոյ եւ հոգաբարձութեամբ նորին դիտի Տեառն Աբրահամու երջանկազարդ ռաբունապետին»[11]:

Այսպիսով, այս հաղորդումից կարելի է ճշտել, որ Ղազար Ջահկեցին Կ. Պոլսում Ս. Էջմիածնի նվիրակն էր ամենաուշը 1732 թ. սկզբի դրությամբ, կամ գուցե ավելի վաղ, քանի որ Թրակիա ժամանելուց առաջ նա որոշ ժամանակ անցկացրել էր Կ. Պոլսում: Մենք դեռևս կքննենք նրա Թրակիա ժամանելու և այնտեղ երեք ամիս մնալու դրդապատճառներն ու հանգամանքները, իսկ այժմ, նախքան 1730-ականների սկզբին Ղազար Ջահկեցու նվիրակության մասին հաջորդ հաղորդմանն անցնելը, կարևոր է ճշտել նաև Դրախտ ցանկալի*-ի հրատարակության ժամանակը:*

Դրախտ ցանկալի-ի հրատարակության ժամանակը

Դրախտ ցանկալի *գրքի հիշատակագրության համաձայն, տպագրությունը կատարվել էր «ի ՌՃԶԴ (1735) թուին մերում»[12]: Մ. Օրմանյանը, ինչպես նաև մատենագիտական ամենավերջին հրատարակությունների հեղինակները լիովին վստահել են այս տեղեկությանը[13]: Մինչդեռ երեք անվանի հեղինակ, առանց հարցն առանձին քննության ենթարկելու, տվել են տարբեր թվագրումներ. Ա. Ալպոյաճյանը թվագրել է* Դրախտ ցանկալի*-ն 1737-ով, Ա. Ղազիկյանը՝ 1734-ով, իսկ Ներսես Ակինյանը՝ 1758-ով[14]:*

Բայց և այնպես՝ այս չորս տարբեր թվագրումները բոլորն էլ սխալ են: Սա ասում ենք՝ հենվելով հետևյալ անժխտելի փաստարկների վրա: Այսպես, Դրախտ ցանկալի*-ի 702 էջում հրատարակիչը հստակ ծանուցում է.*

«Եւ գիտելի է, զի Տէր Յակոբ ամենիմաստ վարդապետն Աստուածաբան, աշակերտ Յոհաննու մեծի Պատրիարգին Կոստանդնուպօլսոյ, արար զգիրս Աստուածաբանականս, որ կոչի Վէմ հաւատոյ զանազան առարկութեամբ եւ բազմահոյլ վկայիւք ընդդէմ երկաբնակաց: Եւ ընդ շարս Աստուածազանից կարգեցաք, թէպէտ յաստ եդաւ: Որոյ պատճառէ զի ի յարմարել գրքոյս՝ դէռ չէր աւարտեալ զչքնաղ մատեանս իւր. յաղագս որոյ գրեցաւ աստ զի հաշուեսցի ի կարգս գրեցելոյն առաջնոց»:

Այստեղ Դրախտ ցանկալի*-ի հրատարակիչը հաղորդում է, որ նույն տպարանում տպագրության ընթացքի մեջ է և շուտով լույս կտեսնի Հակոբ Նալյանի* Վէմ հաւատոյ *հատորը (ի դեպ, սա 18-դարյան հայկական գովազդի մի հետաքրքրական նմուշ է): Արդ, հայտնի է, որ Նալյանի* Վէմ հաւատոյ*-ի տպագրությունն սկսվել էր «ի թուին Քրիստոսի ՌԷԼՃԳ եւ Հայոց ՌՃՁԲ (1733), փետրուարի ԺԴ (14)», և ավարտին հասցվել «ի թուականիս մերում ՌՃՁԲ, յօգոստոսի ԻԵ (25-ին)»*[15]*: Հետևաբար,* Դրախտ ցանկալի*-ի տպագրությունն ավարտվել է 1733 թ. փետրվարից (երբ արդեն սկսել էին շարել* Վէմ հաւատոյ*-ն) մինչև նույն թվի օգոստոսն ընկած ժամանակահատվածի մեջ:* Դրախտ ցանկալի*-ի հիշատակագրության ՌՃՁԴ-ն (1735) տպագրական վրիպակ է, պիտի լիներ՝ ՌՃՁԲ (1733):*

Այս թվագրումը կողմնակիորեն հաստատվում է նաև վերը հիշված այն փաստով, որ Ղազար Ջահկեցին *շարադրել էր* Դրախտ ցանկալին *երեք ամսվա ընթացքում «ի Թրակիա, ի ՌՃՁԱ (1732) թուականիս մերում»: Սրան լրացնող մի նշում էլ գտնում ենք* Դրախտ ցանկալի*-ի 611 էջի վրա. «Տէր Աբրահամ Մշեցի... որ կայ եւ վարէ այժմ զիշխանութիւնն հայրապետական, նստեալ ի մեծապայծառ գահն Սուրբ Էջմիածնի, որ եւ հայցեմք ի Տեառնէ, զի երկար ամօք եւ անսասան կենօք պահեսցէ զնա ի հաճոյս կամաց իւրոց...»: Ինչպես հայտնի է, Աբրահամ Բ Մշեցի/Խոշաբեցի կաթողիկոսը մահացել է 1734 թ. նոյեմբերի 11-ին*[16]*, ուստի գիրքն էլ պետք է մինչ այդ տպագրված լիներ:*

Ղազար Ջահկեցու հետ եղած Հովհաննես Ամասիացին էլ հայտնում է Թրակիա նրանց ժամանելու ճշգրիտ օրը՝ 1732 թ. օգոստոսի 2[17]*: Ուրեմն* Դրախտ ցանկալի*-ն շարադրվել է 1732 թ. և անմիջապես հանձնվել տպագրության: Այս եզրակացությունը վերջնակա-*

նապես հաստատում է Հովհաննես Ամասիացին՝ հայտնելով գրքի «չարահարման» օրը՝ 1732 թ. հոկտեմբերի 28[18]: Նոյեմբերի 2-ին Ղազարը դուրս է գալիս Թրակիայից և հինգ օրից հետո մտնում Ադրիանուպոլիս՝ նվիրակելու գործով[19]: Իսկ գիրքը լույս է տեսել միայն հաջորդ տարվա առաջին կեսին՝ «արդեամբ եւ ծախիւք Սրբոյն Էջմիածնի»[20]:

Մեկնութիւն աղօթից-ի տպագրության տարեթիվը և հիշատակարանը

Արդ, ներկայացնենք Ղազար Ջահկեցու՝ նվիրակության ժամանակի մասին հաջորդ հաղորդումը: 1730-ական թթ. սկզբին Կ. Պոլսում հրատարակված Խոսրով Անձևացու Մեկնութիւն աղօթից *գրքի տպագրիչ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու հիշատակարանում կարդում ենք.*

> «Տպեցաւ սուրբ գիրքս... ընդհանրական մեծի Աթոռոյն Էջմիածնի հաւատարիմ միաբան ծայրագոյն նուիրակ Տեառն Ղազարու Աստուածաբանութեան վարդապետին Ճահկեցւոյ յոգնաջան երկամբն եւ անդուլ աշխատութեամբն: Այսինքն՝ զկանոնս բաժանելով եւ զխորագիրս զոմանս մակագրելով, եւ զայլ բազում բանս սրբոց վարդապետաց ժողովելով եւ աստ դնելով: Նաեւ՝ զարս բարեմիտս զներքոգրեալսն յորդորելով առ ի տպել զսուրբ գիրքս»[21]:

Ահա սա է Ս. Էջմիածնի «ծայրագույն նվիրակ» պաշտոնի առաջին հիշատակությունը: Առաջին ծայրագույն նվիրակը Ղազար Ջահկեցին է:

Մեկնութիւն աղօթից-ը, *սակայն, չունի տպագրության վայրի ու տարեթվի ծանուցում: Սակայն, եթե վայրը հեշտությամբ որոշվում է այդ տարիներին Կ. Պոլսում գործող հայկական հայտնի տպարանով, ապա հրատարակության ժամանակը (հետևաբար, նաև այս հիշատակարանի տարեթիվը) ավելի հանգամանալից ճշտման կարիք ունի:*

1869 թ. Վենետիկում հրատարակելով Խոսրով Անձևացու միևնույն երկը՝ Ղևոնդ Ալիշանը՝ որպես Պոլսի հրատարակության

ժամանակ, նշում է 1730 թվականը[22]: Ալիշանի տեղեկությանը անվերապահորեն վստահել են Հայ գիրքը 1512-1800 թթ. նորօրյա մատենագիտության հեղինակները (էջ 294): Իսկ Գ. Զարբհանալյանն ու Ա. Ղազիկյանը, ունենալով հանդերձ Ալիշանի նշումը, այնուամենայնիվ գրքի տպագրության թիվը նշել են ավելի առաձգականորեն՝ 1730-ից մինչև 1736 թ. ընկած հատվածի մեջ[23]: Քանի որ չունենք որևէ տվյալ, որը կհաստատեր գրքի ալիշանական թվագրումը 1730-ով (որ, հնարավոր է, և ճիշտ լինի), մենք ևս ստիպված ենք առավել բծախնդիր լինել: Մի տեղեկություն, սակայն, թույլ է տալիս զգալիորեն սեղմել գրքի տպագրության հավանական ժամանակի սահմանները. նույն հիշատակարանը ծանուցում է նաև, որ Մեկնութիւն աղօթից-ի տպագրությանն օժանդակելու նպատակով, մի ձեռագիր մատյան էլ տրամադրել էր «սրբազան եպիսկոպոս Թրակիոյ Աբրահամ Աստուածաբան վարդապետն»: Իսկ վերջինս 1734 թ. ապրիլի 27-ին Ռոդոսթոյից ուխտագնացության էր մեկնել Ս. Էջմիածին, տեղ հասել 100 օր հետո, իսկ երեք ու կես ամիս անց՝ 1734 թ. նոյեմբերի 14-ին, ընտրվել էր Ամենայն Հայոց կաթողիկոս[24]: Ուստի Աբրահամ Կրետացին այդ մատյանը կարող էր տպագրիչին փոխանցել (անձամբ կամ 1732 թ. երեք ամիս իր մոտ՝ Թրակիայում հյուրընկալած Ղազար Ջահկեցու միջոցով) մինչև իր ճանապարհ ընկնելը, այսինքն՝ մինչև 1734 թ. ապրիլի 27-ը: Հետևաբար, կարելի է Մեկնութիւն աղօթից-ի տպագրության ժամանակային սահմանները երկու տարով կրճատել և ասել, որ այն լույս է տեսել ամենաշուտը 1730 թ. և ամենաուշը՝ 1734 թ. վերջերին:

Լրացուցիչ տեղեկություններ

Զամչյանի պահպանած մի տեղեկություն ևս հաստատում է 1730-1734 թթ. հատվածում Ղազար Ջահկեցու Կ. Պոլսում Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակ լինելը: 1745 թ. Ս. Էջմիածնում Ղազար Ջահկեցին, հանդիմանելով Պետրոս Քյություր վարդապետին (որ իրենից հետո էր նվիրակել Կ. Պոլսում), ուշագրավ մանրամասնություններ է վերհիշում իր նվիրակության ժամանակներից.

«Յիշե՞ս, զի յորժամ ես նուիրակ առաքեալ էի ի Կոստանդինուպօլիս ի ժամանակս Կոդուացի Աբրահամ կաթողիկոսին, յօրհնել նորա զիս աստ ի սեղանատան, թէ՝ «Օրհնեալ լիցի Ղազար վարդապետ, զի զոր պատուիրեալ էի նմա երեքհարիւր կանթեղս շինել՝ կատարեաց նա զխնդիրս իմ»: Եւ քո ասացեալ է յայնժամ. «զի՞նչ մեծ է նուիրակին Կոստանդինուպօլսոյ շինել երեք հարիւր կանթեղս»: Եւ այսու կամեցար նուաստացուցանել զիս, եւ զաշխատանս իմ նուազեցուցանել: Արդ՝ ո՞ր են այժմ քոյ կանթեղքդ. ո՞չ ապաքէն դու եւս նուիրակ առաքեցար ի Կոստանդինուպօլիս ի բարելից ժամանակիս»[25]:

Այսպիսով՝ կարելի է վստահաբար ասել, որ Ղազար Ջահկեցուն Կ. Պոլսի ծայրագույն նվիրակ է կարգել Աբրահամ Մշեցի կաթողիկոսը (հայտնի է նաև Խոշաբեցի, Քյուրդիստանցի կամ Կորդվացի անուններով, քանի որ ծնվել էր Վանից հարավ ընկած Հայոց ձորի սահմանակից գավառի Խոշաբ ավանում)[26]: Այս մասնավոր դրվագը գալիս է մի անգամ ևս լուսաբանելու Կոլոտ և Շղթայակիր պատրիարքների դժգոհությունը իրենց նախկին մտերիմ ու դասակից Աբրահամ Մշեցի կաթողիկոսից, որը չէր անսացել նրանց բողոքներին, այլ, ընդհակառակը, իր աջակցությունն էր ցույց տվել վերջիններիս խստագույնս քննադատած Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակ Ղազար Ջահկեցուն: Հիշեցնենք, որ Ղազարի քննադատության առարկան կաթոլիկների հանդեպ որդեգրած հաշտարար անարդյունավետ գործունեությունն էր:

Հնարավոր է պատասխանել նաև այն կարևոր հարցին, թե մինչև ե՞րբ է Ղազար Ջահկեցին եղել Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակը Կ. Պոլսում: 1734 թ. օգոստոս-սեպտեմբերի դրությամբ՝ «Ստամպոլու նուիրակ» է հիշվում արդեն Պետրոս վարդապետ Քյուրությը[27]: 1735 թ. նոյեմբերի 14 թվակիր նամակում Շղթայակիրը, իմիջիայլոց, Երուսաղեմից գրում էր Կոլոտին.

«Եւ լուայ, թէ Սրբոյ Աթոռոյ նուիրակ Պետրոս վարդապետն այդր եկեալ է. եւ զնա եւս սիրով ընկալ, զի արդիւնք լիցի Սրբոյ Մօրն մերոյ՝ որ յայսչափ անտանելի տառապանաց միջի է»[28]:

Վերջին երեք տեղեկությունները թույլ են տալիս վստահ եզրակացնել, որ Ղազար Ջահկեցին եղել է Կ. Պոլսի Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակ՝ 1730-ի վերջից կամ 1731 թվականից մինչև 1734 թ.

սկիզբը կամ կեսերը: Այս եզրակացությունը վերջնականապես հաստատվում է Ղազար Ջահկեցու աշակերտի թողած մի հստակ հաղորդմամբ[29] (այս մասին ավելի մանրամասն՝ ստորև):

Աբրահամ կաթողիկոս Մշեցին, նկատի առնելով Ղազարի նվիրակության երեք տարվա ավանդական ժամկետի լրանալը, ինչպես նաև՝ Ղազարի և Կոլոտի հարաբերությունների մեջ առաջացած թշնամությունը, Կ. Պոլսի նոր նվիրակ է նշանակել Պետրոս վարդապետ Քյուրյուրին: Փոքր-ինչ շեղվելով, նկատենք, որ վերջինիս դիրքորոշումը Կոլոտի հանդեպ եղավ է՛լ ավելի քննադատական և անզիջում, քան՝ Ղազար Ջահկեցունն էր[30]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս ատ, Հավելված Բ, 1. Ծայրագույն նվիրակներ (1741-1797):

[2] ԴԱԻ, էջ 298:

[3] **Ղ. Ալիշան**, *Կամենից*, էջ 258:

[4] Այս կոնդակի պատճենը («մեծ մուսատան») պահպանվել է Երուսաղեմի Հայոց պատրիարքության Մատենադարանի համար 186 ձեռագրի մեջ. - տե՛ս **Նորայր Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Ա (Երուսաղէմ, 1966), էջ 548:

[5] **Ն. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Գ (Երուսաղէմ, 1968), էջ 72:

[6] *Բազմավէպ*, 1978, էջ 286: Մինաս Ամդեցու անտիպ *Օրագրութիւնը* որևէ նոր կարևոր տեղեկություն 1691 թ. «ընդհանրական նվիրակության» մասին չի պարունակում, սակայն, կան որոշ հետաքրքրական մանրամասներ, օրինակ՝ «Յուլիս ԺԸ (18) օրն ուրբաթ գիշերս դարձեալ շարժ եղեւ... Միքայէլ վարդապետի նուիրակութեան չիս (540) ղուրուշ առաք: Յուլիս ԺԹ (19) օրն շաբաթ տօն սրբոց առաքելոցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. գիշերս դարձեալ շարժ եղեւ... Մխիթար վարդապետն Բասենու ճ (100) ղուրուշ նուիրակութիւն եբեր. ճ (100) այլ խարճ եբեր» (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, դրսի ժապավեն 1040, էջ 135բ. հմմտ. էջ 142բ): Տե՛ս նաև Մինաս Ամդեցու *Օրագրութեան* երկու նկարագրությունները. **Մեսրոպ Նշանեան**, *Օրագրութիւն Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանի* (Երուսաղէմ, 1939), էջ ճԽ-ճԽԱ և **Ն. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Դ (Երուսաղէմ, 1969), էջ 564-565:

[7] «Յիշեսջիք եւ զանճանձիր վարժապետն իմ զԱստուածատուր Աստուածա-

բան Վարդապետն Ցահրապատցի, որ ի թուին 1155 (1706) եկն նուիրակ ի Կոստանդնուպոլիս». - **Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան**, *Հայ գիրքը 1512-1800 թթ.: Հայ հնատիպ գրքի մատենագիտություն:* Առաջաբանը՝ Ն. Ոսկանյանի, խմբագրությամբ՝ Ռ. Ա. Իշխանյանի (Երևան, 1988), էջ 279:

[8] «Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*, 1972, էջ 11, ծնթ. 1:

[9] Տե՛ս աստ, Գլուխ Գ. ծնթ. 14:

[10] «Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*, 1971, էջ 361:

[11] *Դրախտ ցանկալի*, էջ 680: Ղազար Ջահկեցու նշած «հոգաբարձութիւնը» պետք է հասկանալ իբրև հյուրընկալություն և բարոյական աջակցություն միայն, քանզի գիրքը հրատարակվել էր «արդեամբ եւ ծախիւք Սրբոյն Էջմիածնի» (տե՛ս նույն տեղում, էջ 703):

[12] *Դրախտ ցանկալի*, էջ 703:

[13] ԱԶԳ, սյուն. 1992: **Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան**. *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 329-330: *A Reference Guide to Modern Armenian Literature, 1500-1920.* Compiled and with an Introduction by Kevork B. Bardakjian (Detroit: Wayne State University Press, 2000), p. 399; *Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան* (Երևան, Հայկ. հանրագիտարանի գլխավոր հրատ., 2002), էջ 653:

[14] **Ա. Ալպոյաճեան**, *Տպագրութեան արուեստը եւ հայք* (անտիպ), Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության թանգարան: **Ա. Ղազիկեան**, *Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի* (Վենետիկ, 1909-1912), էջ 1625. հմմտ. *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 330). **Ներսէս Ակինեան**, *Բաղէշի դպրոցը*, էջ 379:

[15] Տե՛ս «Վէմ հաւատոյ»-ի տիտղոսաթերթը և 660 չհամարակալված էջը. հմմտ. *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 315:

[16] **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, էջ 42: **Ս. Տեր-Ավետիսյան**, «Աբրահամ Կրետացու հիշատակարանը (ծոցի տետրակը)». - *Երևանի Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ»*, հ. XIII (Երևան, 1940), էջ 323: ԱԶԳ, սյուն. 1971:

[17] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 65ա: Ամբողջությամբ հրապարակում ենք Հովհաննես Ամասիացու՝ իր ուսուցիչ Ղազար Ջահկեցուն ձոնած չափածո վարքը (աստ, Հավելված Դ):

[18] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 66ա:

[19] Նույն տեղում, էջ 66բ:

[20] *Դրախտ ցանկալի*, էջ 703:

[21] *Գիրք որ կոչի «Մեկնութիւն աղօթից»:* Արարեալ երանելւոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի եւ այլ սրբոց վարդապետաց: Կ. Պոլիս, անթուական, էջ 450:

[22] *Մեկնութիւն աղօթից պատարագին* (Վենետիկ, 1869), էջ Գ:
[23] Տե՛ս **Գ. Զարբհանալեան**, *Հայկական մատենագիտութիւն* (Վենետիկ, 1883), էջ 266. **Ա. Ղազիկեան**, *Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի* (Վենետիկ. 1909-1912), էջ 1150:
[24] **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, էջ 32, 46. հմմտ. **Ս. Տեր-Ավետիսյան**, «Աբրահամ Կրետացու հիշատակարանը (ծոցի տետրակը)», էջ 316:
[25] ՁԱՄ, Գ, էջ 828-829: Արծաթե կանթեղների պատրաստումն ավարտվում է 1732 թ. մայիսին, այս մասին պատմում է Հովհաննես Ամասիացին (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 63բ-64ա): Մի դրվագ մնում է մութ. պարզ չէ, թե Ղազարն ինքն է բերել այդ 300 կանթեղը Ս. Էջմիածին թե՞ ուրիշի միջոցով է դրանք ուղարկել:
[26] ԱԶԳ, սյուն. 1965. հմմտ. **Տիրայր Տէրվիշեան**, *Յրուացանկ «Ազգապատում»ի յատուկ անուններու* (Լոս-Անջելէս, 1976), էջ 15:
[27] **Ս. Տեր-Աւետիսյան**, «Աբրահամ Կրետացու հիշատակարանը», էջ 318:
[28] «Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*, 1972, էջ 471:
[29] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 59բ:
[30] ԱԶԳ, սյուն. 1994. *Բազմավէպ*, 1978, էջ 270-271: **Գրիգորիս Գալեմքեր-եան**, *Կենսագրութիւն Սարգիս Արքեպիսկոպոսի Սարաօեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք* (Վիեննա, Մխիթարեան տպ., 1908), էջ 33-37, 177-178:

ԳԼՈՒԽ Ը.

ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑՈՒ ՆԱԽԸՆԹԱՑԸ (1719-1731 թթ.)

Եվ այսպես, 1732 թ. Գրիգոր Շղթայակրի հիշատակած Կոլոտ պատրիարքի ոխերիմ թշնամին ոչ այլ ոք էր, քան Ս. Էջմիածնի նո-րանշանակ առաջին ծայրագույն նվիրակը՝ աստվածաբան, Հայ եկե-ղեցու ջատագով, ազգային երևելի գաղափարախոս, տաղանդավոր բանաստեղծ Ղազար արքեպիսկոպոս Ջահկեցին: Ղազար Ջահկեցին այնքան սուր է քննադատել կաթոլիկների նկատմամբ Կոլոտի վարած հաշտարարական քաղաքականությունը, որ վերջինիս վիճակը Շղ-թայակիրը ընութագրում է բավական անմխիթար գույներով՝ «գառ-նուկին իմոյ, որ ի բերանս գայլաց անկեալ կայ»: Ըստ երևույթին, Ղազար Ջահկեցին չի խնայել նաև Կոլոտի հավատարիմ դաշնակից հեղինակավոր Շղթայակրին անգամ, քանի որ վերջինս ասում է՝ «...այսքան զմեզ ի բերանն որդնալի առեալ պախարակէ»: Ջահկեցու քննադատության պատճառաբանված ու արդյունավետ լինելն է ակ-նարկում նաև Շղթայակրի զարմանքը ժողովրդի դիրքորոշման վերա-բերյալ. «Եւ կամ թէ ազգն մեր արամեան, քահանայք եւ ժողովուրդք երլիք (=տեղացի) եւ եկք, զայսքան եպերանաց խօսս լուեալ ի պիղծ բերանոյ նորա, եւ մի ի նոցանէ ոչ խօսեցաւ՝ թէ «ընդէ՞ր այդպէս զա-նիրաւսն բարբառիս»:

Ղազար Ջահկեցու մասին են նաև Գրիգոր Շղթայակրի՝ Կո-լոտին ուղղված 1733 թ. հունիսի 11-ի նամակի հետևյալ (վերը մեջ-բերված) տողերը. «ըստ գրոյդ զօրութեան հոտեալն քառօրեայ եւ չյարուցեալն ի Սուրբ Գահն, յերկիրն եւ այդր՝ զբազում բարեկամս

ստացեալ է»: Այստեղ կարելի է ընդամենը ենթադրել, որ խոսքը դարձյալ վերաբերում է Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ իր ենթակա Ղազար Ջահկեցուն չսաստելուն, ի հեճուկս Կոլոտի գրած ինչ-որ դիմումի, որի ազդեցությամբ էլ Ղազարը ինչ-որ չորսօրյա վատ տրամադրության մեջ է եղել («ըստ գրոյդ զօրութեան հոտեալն քառօրեայ եւ չյարուցեալն ի Սուրբ Գահն»):

Ղազար Ջահկեցու նախընթացի մասին մասնագիտական գրականության մեջ նշվող գրեթե միակ կենսագրական փաստն այն է, որ մինչև կաթողիկոս ընտրվելը (1737 թ.) Ղազարն եղել է Զմյուռնիայի տերունական վիճակի առաջնորդը[1]: Հատուկ հետազոտությունները, ցավոք, բացակայում են:

Ստորև ի հայտ բերված կարևոր տեղեկությունները զգալի չափով լրացնում են այս նշանավոր գործչի կենսագործունեության անհայտ մնացած էջերը:

Նախ՝ անդրադառնանք Ղազար Ջահկեցու 1719, 1726 և 1732 թթ. գրած երեք տարբեր հիշատակարաններին ու նրանց պարունակած տեղեկություններին:

Ինչպես պարզվում է Մաշտոցի անվ. Մատենադարանի համար 698 ձեռագիր մատյանի հիշատակարանից, «Կերակուր վարդապետաց» *խորագիրը կրող այս ժողովածուն Ղազար Ջահկեցու ինքնագիր աշխատությունն է.*

> «Արդ հաւաքեցաւ եւ յօրինեալ շարագծեց զսուրբ գիրքս զայս, որ կոչի *Կերակուր վարդապետաց*, ի թուին ՌՃԿԸ (1719)-որդին[2], ցամսեանն մայիսի յերկրորդում աւուրն աւարտ եղեւ. ի հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի Տեառն Աստուածատուր կաթողիկոսի, ի գեօղաքաղաքն Ճահուկ, ընդ հուանեաւ ամենասուրբ կուսին Մարիամու Աստուածածնին Շողակաթ կոչեցելոյ: Աշխատութեամբ Ղազարու վարդապետին Ճահկեցւոյ»[3]:

Մաշտոցի անվ. Մատենադարանիս 2121 համարը կրող ձեռագիր մատյանը պատրաստվել է 1726 թ. Կեսարիայում: Ստացողը Ղազար Ջահկեցին է, որն իր ընդարձակ հիշատակարանում (տե՛ս Հավելված Բ), իմիջիայլոց, հայտնում է հետևյալը.

> «Եւ ես ունայնախոհ եւ խակամիտ Ղազար պիտակ եւեթ վարդապետս, գոլով յերկրէն Նախչուանայ ի գիւղաքաղաքէն Ճահ-

կայ, որդի ումեմն բարեպաշտի եւ երկիւղածի՝ իմաստախոհ եւ արժանաւոր քահանայի տէր Մկրտիչ վերակոչեցելոյ. որ եւ իմ եկեալ ի յերկիրն Յունաց եւ ի մայրաքաղաքն Կեսարիայ Կապադովկացւոց՝ յաղագս նուիրակութեան սրբոյ եւ մեծի Աթոռոյն Էջմիածնի»[4]:

Հաջորդ հիշատակարանը Դրախտ ցանկալի գրքից է. այն այլ առիթով վերն արդեն մասամբ օգտագործել ենք, սակայն այժմ հարկ է այն մեջբերել ավելի ընդարձակորեն.

«...Որ եւ էի յղացեալ զայս յԱստուածազանից բանից սերմանց ի վաղնջուց դրոշմամբ նկարակերտեցեալ ի սենեկի սրտի իմում՝ յԱստուածաբնակ եւ ի յրեշտակակրօն յանապատն Շատիկու՝ հրամանաւ գիտնական վարժապետին իմոյ տեառն Մեսրոպայ Քրիստոսակիր առաքինապերճ անձին սրբասնելոյ: Ուստի ի գալն իմ ի Կոստանդնուպօլիս յաղագս նուիրակութեան Սրբոյն Էջմիածնի մօրն հաւատոյ եւ ի ժամանելն իմ ի Թրակիա ի ՌՃՁԱ (1732) թուականիս մերում՝ անդ սկսայ ի կիր արկանելով ծնանիլ զայս գործս վաղեմնասաղմ, ներ երեք ամսոջ, շնորհօք ամենազօրին Աստուծոյ եւ հոգաբարձութեամբ նորին գիտի Տեառն Աբրահամու երջանկազարդ բաբունապետին»[5]:

Նույն գրքի մեկ այլ էջում Ղազարը հայտնում է, որ վարդապետության գավազանն ստացել էր Աստվածատուր կաթողիկոսի աշակերտ Պետրոս վարդապետից[6]:

Իսկ այժմ ի մի բերենք այս տեղեկությունները, համադրելով և լրացնելով դրանք Մաշտոցի անվ. Մատենադարանի 9245 թվակիր ձեռագիր մատյանում՝ Ղազար Ջահկեցու աշակերտ Հովհաննես վարդապետ Ամասիացու՝ իր ուսուցչին ձոնած ներբողական պատմության տվյալների հետ (առաջին անգամ հրապարակվում է սույն գրքում, տե՛ս Հավելված Գ):

Ղազարը ծնվել է Ճահուկում: Հայրը եղել է քահանա Մկրտիչը: 1719 թ. դրությամբ Ղազարը եղել է Ճահուկ գյուղաքաղաքի՝ Շողակաթ կոչված Ս. Աստվածածին վանքի միաբան, արդեն խորիմաց վարդապետ և ինքնուրույն աշխատությունների հեղինակ: Մինչև 1719 թ. նա աշակերտել էր նաև Եղեգաձորի Շատիկա վանքում՝ Մեսրոպ Հուշականցի ճգնակրին[7]: Ղազարը մուտք էր գործել Շատիկա վանք 16 տարեկան հասակում.

«յետ վեչտասան տիոյ նորին ծաղկալի
թողու զաշխարհս նաեւ՝ ծնօղս ըզկնի
եւ մտանէ յԱնապատն հրաշալի՝
ի սուրբ Սիօն Շատիկ կոչեալ ճահ տեղի:
Ունականայ անդէն զիմաստս բուն բանի
պէս պէս զշնորհս զգիտութիւնս լիալի,
յանտուստ ծագէ իբր զարուսեակ աշխարհի[8],
համանման Յօհաննիսին Մկրտչի»[9]:

Ղազարը, որոշ ժամանակ քարոզելով հայրենի նահանգում, մեկնում է Ամասիա, որտեղ քարոզում է շուրջ մեկ տարի: Այնուհետև, 1723 կամ 1724 թ. սկզբներին Ղազարը լինում է Ս. Էջմիածնում, որտեղ էլ Աստվածատուր Համադանցին նրան եպիսկոպոս է ձեռնադրում և նվիրակության ուղարկում դեպի, ինչպես ասում է Հովհաննես Ամասիացին՝ «Զորրորդ Հայք», այն է՝ Համշեն-Ամասիա-Եվդոկիայ-Կեսարիա (Ղայսերի) շրջանը.

«եւ ձեռնադրէ եպիսկոպոս ընդհանրի.
յղէ նուիրակ չորրորդ Հայոց աշխարհի»[10]:

Մոտավորապես 1724 թ. երկրորդ կեսին վերադառնալով Ս. Էջմիածին՝ ստուգապես անհայտ ինչ-որ մի ժամանակահատված Ղազարն անցկացնում է Աստվածատուր կաթողիկոսի մոտ, թվում է, թե ուղեկցում է նրան Ս. Էջմիածնից դուրս, երբ վերջինս, հայտնվելով օսմանյան և պարսկական բանակների միջև, որոշ ժամանակ աստանդական կյանք էր վարում մերթ Թավրիզ-Նախիջևանում, մերթ էլ Լոռու և Թիֆլիսի կողմերում[11]: Այս ասելով, նկատի ունենք, որ Աստվածատուր կաթողիկոսի 1724-1725 թթ. հայրենանվեր գործունեությունը Ղազար Ջահկեցին նկարագրում է իբրև ականատես.

«...բազմադիմի եւ յոգնատանջ տառապանօք վարեաց զիշխանութիւն հայրապետական պէս պէս վշտիւ եւ նեղութեամբ եւ այլ ազգի ազգի ցաւօք եւ փորձութեամբ. հալածանօք հանդերձ վտարանդի շրջելով ողբօք եւ արտասուօք, միջաբեկիւ եւ անմխիթարաւ սգով՝ երբեմն ի տունն Վրաց, եւ երբեմն ի տունն Նախչուանայ: Եւ անտի դարձեալ գա ի սեպհական յԱթոռն իւր ի Սուրբ Էջմիածին, սուգ առնելով ի վերայ տանն Հայոց եւ ի վերայ գիշատեալ եւ ճապաղեալ, խոցեալ եւ վիրաւորեալ գառանցն իւրոց անմեղաց, որպէս Երեմիա՝ ի վերայ հնոյն Իսրայէլի: Քանզի հովիւս

քաջ արիական յոժարութեամբ զանձն իւր եղ ի վերայ բանաւոր ոչ-խարացն Քրիստոսի, կամէր մատնիլ զանձն իւր ի դանս եւ ի բան-տս, ի թուքս եւ ի յապտակս, ի վիշտս եւ ի նեղութիւնս, ի չարչա-րանս եւ ի մահս՝ վասն փրկութեան եւ ազատութեան ազգին իւրոյ եւ Աթոռոյն»[12]:

Ղազարն ականատես է լինում և ցնցվում Արարատյան երկ-րում օսմանյան բանակների գործած կոտորածներից ու ավերածու-թյուններից[13]. հետևյալ նկարագրություններն իր տեսածի արտահայ-տություններն են.

«Սակայն եւ *մեր ի՛սկ տեսեալ աչօք* զյոլովութիւն չարեաց-ն, որ գործեցաւ ի նախաձայնեալ աղէտից սուրբ նահատակին Ներսիսի:...զի նստեալ ողբայի բարձրագոչ ձայնիւ զխաւարումն եկեղեցեաց եւ զամայութիւն տանն Հայաստանեաց. ուստի զեկեղե-ցիսն նսեմացեալ եւ զսեղանն սուրբ կործանեալ. զմատեանս Աս-տուծոյ ինս այրեցեալ եւ առ ոտն կոխեալ. զսպասն սրբութեան եւ Քրիստոսական նշանս անարժանից ձեռօք չօշափեալ եւ նախա-տեալ. զաշխարհս մեր եւ զքաղաքս անապատացեալ եւ բնակութիւն գազանաց եղեալ: Քանզի լցան լերինք եւ անապատք մեր անզերծ փախստեամբք եւ դաշտք՝ դիակոյտ ոսկերօք կոտորելոցն: Անդաս-տանք մեր եւ հովիտք առոգեցան արեամբք եւ *կերաք մնացորդքս* զհասկ սննդեան այնպիսի արտորէից... (ընդգծումն իմն է, Ա.Ա.)»[14]

Հայոց այս աղետը Ղազարը նույն մոտիվներով ներկայացրել է նաև իր «Ողբ ի վերայ Հայաստան աշխարհին» չափածոյում՝ մաս-նավորաբար գրելով.

«...Արդ սրբութիւնք Սիոնի,
Եւ անօթք մաքուր պատուական,
Շոշափելով այլազգաց՝
Անկեալ ի յոտս եւ ի կոխան:

Հրզօրք մեր տրկարացեալք,
Ճոխք եւ փարթամքն տնանկացան,
Ըզգեղեցիկս եւ զփափուկս՝
Յայլասեռ մարդկանց գերեցան:

Որդիք գոռալով ի Հարց
Եւ ի մարցըն որոշեցան,
Քորք եւ եղբարք ի միմեանց՝
Դառն արտասուօք մերժեցան:

Սիրելիք օտարացեալք՝
Ի յայլ երկիրս վարեցան,
Եւ բարեկամք բաժանեալք,
Սաստիկ ոգով յոյժ տրտմեցան...»

Իր Ողբի *վերջում Ղազարն ավելացնում է, թե՝*

«Ես Ղազարոս վատաբախտ,
Ամենաթշուառս մեղօք լի,
Աչօք իմօք զայս տեսեալ՝
Ողբս առեալ լալով երգեցի»[15]:

1725 թ. սկզբից մինչև 1728 թ. Ղազարը դարձյալ նվիրակություն է անում «Զորրորդ Հայքում» և վերադառնում Ս. Էջմիածին 1728 թ. սկզբներին՝ Կարապետ Ուլնեցի կաթողիկոսի Ս. Էջմիածին մուտք գործելուց երեք շաբաթ առաջ[16]: 1728 թ. գարնանը Կարապետ կաթողիկոսը դարձյալ նվիրակության է ուղարկում Ղազարին, այս անգամ՝ դեպի Ռումելի և Կաֆա: 1730 թ. Ղազարը վերադարձել է Ս. Էջմիածին, որտեղ նրան ջերմորեն ընդունել է նոր կաթողիկոս Աբրահամ Մշեցին ու գրեթե անմիջապես նշանակել Կ. Պոլսի նվիրակ[17]: Սակայն, հենց այդ ժամանակ Արարատյան երկրում բռնկված պատերազմական գործողությունների պատճառով ուղևորությունը մի որոշ ժամանակով (հավանաբար՝ մեկ-երկու ամսով) հետաձգվում է[18]: Կարս-Դարանաղյաց գավառ-Եվդոկիա-Կ.Պոլիս ճանապարհորդությունը տևում է մի քանի ամիս[19], ուստի Ղազարը Պոլիս պետք է հասած լիներ 1730 թ. վերջերին կամ 1731 թ. սկզբներին:

Ղազար Ջահկեցու տարիքը

1725 թ. Ղազարի տարիքը 40-ից պակաս չպետք է լիներ, քանի որ, սովորաբար, եպիսկոպոս են ձեռնադրվել 40-ից բարձր տարիք ունեցող վարդապետները: Օրինակ, Երուսաղեմի վանքի մի վարդա-

պետ դժգոհում էր, թե «Կաթողիկոս Էջմիածին Տեառն Սիմէոն էր, որ Բ (2) անգամ գնացի նուիրակութեանս Էջմիածին, որ օրհնէր զիս եպիսկոպոս, չի օրհնեց, թէ՝ "դեռևս Խ (40) ամաց ես"»[20]: Ինքը Ղազարը 1726 թ. իր մասին այսպես էր ասում՝ «Իսկ ի նսեմացեալ եւ ի ծերացեալ աւուրս...»[21]: Սրանից արդեն կարելի է հետևեցնել, որ 1726 թ. Ղազարի տարիքը եղել է 50-ից ոչ պակաս (քանի որ, ինչպես վերն արդեն նշել ենք, Հայաստանում ծեր էր համարվում հիսունն անց մարդը)[22] և 55-ից ոչ ավել, քանի որ ընդհուպ մինչեւ 1740-ական թթ. երկրորդ կեսը Ղազարը բավական առույգ էր և ի վիճակի էր հեռավոր ճանապարհորդություններ կատարել[23], որ հուշում է, թե 1751 թ. նա մահացած պետք է լիներ մոտավորապես 70-75 տարեկան հասակում՝ ոչ շատ ավելին: Ուստի կարելի է հաշվարկել, որ Ղազար Ջահկեցին ծնվել է մոտավորապես 1680-1685 թթ.: Կարելի է նաև մոտավորապես ասել, որ նա պետք է վարդապետ դարձած լիներ ամենաուշը 1702-1707 թթ., քանի որ ուշիմ աշակերտները վարդապետ էին ձեռնադրվում է արդեն 22 տարեկան հասակում, օրինակ, 22 տարեկան հասակում էին վարդապետ ձեռնադրվել Գրիգոր Շղթայակիրը (1692 թ.), Կոլոտ պատրիարքը (1700 թ.), Հակոբ Նալյան պատրիարքը (1728 թ.)[24]:

1732 թ. Ղազար Ջահկեցին արդեն Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակն էր Կ. Պոլսում: Դրանից հետո, մինչև կաթողիկոս ընտրվելը, Ղազարը Զմյուռնիայի առաջնորդն էր. ինչպես հաղորդում է XVIII դարի հեղինակ Բաղդասար Դպիրը՝

> «Ղազար կաթուղիկոս Ջահկեցի յոյժ գիտնական, որ էր առաջնորդ Իզմիրու յետ նուիրակութեանն Ստամպօլու, նստաւ կաթուղիկոս 1186 (1737) Հայոց թուին»[25]:

Հովհաննես Ամասիացին՝ Ղազարի և Կոլոտի հարաբերությունների մասին

Վերը կատարված քննությունն արդեն պարզել է, որ 1732-1733 թթ. Կոլոտի և Ղազարի հարաբերությունները խիստ սրված էին (հիշեցնենք, որ այդ վկայող Շղթայակրի վերը մեջբերված երկու նամակներից առաջինը գրված է 1732 թ. հոկտեմբերի 5-ին, երկրորդը՝ 1733 թ. հունիսի 11-ին):

Սակայն, հետաքրքիր է, որ Հովհաննես Ամասիացին (Ղազար Ջահկեցու մտերիմ աշակերտը, որ 1724 թ. մինչև 1733 թ. վերջերը գրեթե միշտ նրա հետ էր) 1756 թ. գրելով իր ուսուցչի չափածո կենսագրականը, միտումնավոր լռել է Կոլոտ-Ղազար բախումների մասին: Ըստ Հովհաննես Ամասիացու՝ Ղազարի և Կոլոտի հարաբերությունները եղել են միշտ բարիդրացիական: Այսուամենայնիվ, մի քանի դրվագներում, ինչպես ստորև կտեսնենք, Ամասիացին մատնում է եղելությունը:

Այս խնդրի մասին Ամասիացու ամենաարժեքավոր հաղորդումն այն է, որ Կոլոտն ու Ղազարն ի վերջո հաշտվել են, հավանաբար ժողովրդի հանգստությունը պահպանելու համար: Այս հաշտության սկիզբ պետք է համարել Կոլոտի նամակը Ղազարին (որ նրան է հասնում Ադրիանուպոլսում 1733 թ. հունվարի 1-ին) և Ղազարի պատասխան նամակը.

«Արդ, էր գրեալ ի պատրիարգէն նոյն տեղի՝
Յովհաննիսէ Աստուածաբան մեծ պետի
վասն սիրոյ առ Տեառն իմոյ սոփեստի
կրկին անգամ ի տեսանել մին ըզմի:
Պատճէն թղթոյն, որ էր գրեալ այս կերպի.
թէ՝ «շատ ողջոյն յինէն առ քեզ մատուսցի,
թէ կարիցես աւարտ առնել քո բանի
մինչ ի մեծի Բարեկենդան հասելի:
Արդ, խնդիրն է իմ առ ի քէն ըղձալի՝
Ելեալ գայցես առ մեզ սիրով չեշտակի,
զի ես ծեր եմ՝ գուցէ զմահն իմ ժամանի՝
ե՛կ, արասցուք զԲարեկենդանս մի տեղի.
Տեսցուք զմիմեանս կրկին անգամ բերկրալի
եւ լցուսցուք զբաղձանս մեր կարօտի,
զի ո՞ գիտէ զկեանըս մեր տեւելի՝
վաղեան աւուր կամ միւսում մընալի»:
Ուստի վեհն իմ տայ զպատասխան իւր թղթի,
թէ՝ «առ սրբոյ պատրիարգիտ մեծ պօլսի՝
Տեառնդ Յովհաննու Աստուածաբան հռետորի
ողջոյն սիրոյ առ Հօրդ իմոյ բազմասցի
Իւսմամբ սիրով գրեալ թուղթ քո քաղցրալի
էհաս առ մեզ առաջներորդ յունվարի
եւ իմացաք զբաղձանք Հաւոյդ իմ մեծի,

բայց ո՞վ եմ ես, որ սիրտ Տեառնդ իմ ըղձացի:
Որ եմ ծառայ պատրաստական պօլսիդ Դիտի.
որպէս կամի սիրտ Հօրդ իմոյ՝ նոյն լիցի,
որ Աստուծով եւ աղօթիւքդ վըսեմի
գալոց եմ ես, տալով կատար հրամանի»[26]:

Իսկ բուն հաշտությունը տեղի է ունեցել 1733 թ. հունվարի 29-ին Կ. Պոլսում՝ հետևյալ հանգամանքներում (ըստ Ամասիացու նկարագրության).

«եկաք հասաք ի քաղաքըն Բիւզանդի,
մտաք ի պալատն պատրիարգին նոյն պօլսի:
Իբրեւ ետես մեզ պատրիարգն բերկրալի՝
ուրախ եղեւ ինքն եւս սրտալի,
ասէ՝ «բարի եկիր, ով իմ ըղձալի,
աչք իմ դիտէր ձեր գալստեան մըշտակի»:
Իւսմամբ սիրով մատչի յայնժամ առաջի
վեհն իմ առ պատրիարգի Հօր մեծի՝
տալ ի համբոյր օծեալ Աջոյն շնորհալի.
նա ոչ տայ Աջն, բայց համբուրեն մին ըզմի:
Նոյն այս դարձումն ի Բիւզանդին մեր լինի
ի թուականի Հայոց մեծաց տօմարի
հազար հարիւր ութսունեերկուերորդի
եւ յամսեանն քսան եւ ինն յունվարի[27]:

Սակայն, սրանից հետո էլ խնդիրը լրիվ չի վերանում: Ամասիացին պատմում է այս հաշտությունից անմիջապես հետո Ղազար Ջահկեցու և Հակոբ Նալյանի միջև տեղի ունեցած մի լուրջ վեճի մասին, որն իբր ուներ զուտ աստվածաբանական բնույթ[28]: Ամասիացու համաձայն՝ Նալյանը, որը Կոլոտի աշակերտն ու աջ թևն էր, քինախնդրությամբ է լցվում.

«Իւլթ մախանաց գաղեալ մնայ ի սըրտի
առ Յակոբայ վարդապետին մեծակի,
յօրէ այնմիկ, որքան առ անդ մընալի,
խեթիւ հայէր առ Տեառն իմոյ մեծեղի»[29]:

Եթե հավատալու լինենք Հովհաննես Ամասիացուն՝ 1737 թ. Ղազար Ջահկեցին կաթողիկոս է ընտրվում հե՛նց Հովհաննես Կոլոտ

պատրիարքի ուղղակի միջնորդությամբ, որում վերջինս բացահայտ խոսում է նաև Հայոց եկեղեցու արևելյան և արևմտյան թևերի հակասությունների մասին.

«Վաղվաղակի զմիաբանքն համայնի
ժողովք առնին ամենեքեանք մի տեղի.
թղթովք ընտրեն զերիս Արբս պատուելի՝
Էջմիածնայ կաթողիկոս լինելի:
Իսկ առաջին՝ զպատրիարգն Սաղէմի,
եւ երկրորդըն՝ զՅովհաննէսն մեծ Պոլսի,
եւ երրորդն՝ զՂազարըն Ջահկեցի.
զայս երեքեանս էին խնդրեալք ընդհանրի:
Պնդեալ զմռօք՝ երբ զմահսարն հասանի
ի քաղաքըն Բիւզանդին մեծ որ ասի,
ի ձեռն մեծի պատրիարգաց, որք անտի,
որ Աստուծով Գրիգորն եւս անդ լինի:
Ապա անդէն ժողովք առնեն բազմակի
վարդապետօք, քահանայիւք համայնի.
նախ՝ հրաւիրեն զպատրիարգն Սաղէմի,
թէ՝ «դու լիջիր կաթուղիկոս ընդհանրի»:
Սակայն նա սոյն մեծապատուէս հրաժարի,
ասելով թէ՝ «չէմ այն պատուոյն արժանի,
չառնում յանձն զկեան իմ վաղուան մընալի,
զի ես ծեր եմ՝ մահն իմ կայ միշտ իմ դիմի»:
Ապա յետոյ առ հրաւիրեն բըռնալի
Յովհաննիսի պատրիարգին մեծ Պոլսի.
նա եւս չառնու յանձն պէս-պէս պատճառի,
զտկարութիւն միշտ բերելով առաջի:
Նաեւ ասէ՝ «*չէ միշտ ի մէնջ դնելի,*
պարտ է այժմ արեւելցի լինելի,
զի երեք արք նստան ի մէնջ Աթոռի,
պէս-պէս խարդախ անցեալ էր անդ ի միջի»:
Եթէ կամիք ըզՂազարըն Ջահկեցի,
նա է՛ արժան այսօր զնա առնելի,
այլեւ՝ է՛ նա ծնեալ ի նոյն գաւառի,
գուցէ զտրտունջ նոցին այսօր բաց բառնի»[30]

(ընդգծումները՝ Ա.Ա.):

Եթե Ամասիացու հաղորդումը հավաստի է, ապա Ղազարի հաշտեցումը Կոլոտի հետ որքան էլ կիսատ էր, այնուամենայնիվ

առերեսային էլ չէր: Բայց Ամասիացու այս հաղորդման մի հատվածը հակասում է Կ. Պոլսի ընտրական ժողովի անմիջական մասնակից Գրիգոր Շղթայակրի մի տեղեկությանը, որում վերջինս պնդում է, որ Ս. Էջմիածնից Կ. Պոլիս ժամանած պատվիրակներն իրականում ներկայացրել են կնիքով հաստատված ընդամենը երկու՝ իր և Ղազար Ջահկեցու թեկնածությունները (ընդ որում՝ վերջնագրային տրամադրվածությամբ).

«...ի Սուրբ Էջմիածնայ երկու վարդապետք եկին՝ Թովմայ եւ Մկրտիչ անուամբ, եւ նուիրակն (իմա՝ Պետրոս Քյություրը, Ա.Ա.)[31]... եւ այլք...

Եւ բազմակնիք մահզար մի եդին առաջի մեր, յորում զմեզ խնդրեալ էին լինել կաթուղիկոս: Եւ իմ երեք օր պայման խնդրեալ՝ զնոսա յղեցի, բայց Պատրիարք վարդապետին (իմա՝ Հովհաննես Կոլոտին, Ա.Ա.) եւ մեր մահտեսեացն ի ծածուկ ասացի, թէ «այս երեք անգամ եղեւ, որ վասն այսմ իրի զմեզ խնդրեն, բայց անհնար է ինձ լինել, զի անարժան եմ»: Եւ զկնի երից աւուրցն եկաք ի Ս. Աստուածածնի եկեղեցին, եւ յայտնի առաջի ամենեցուն հրաժարեցայ, եւ յոչ ասելն իմ, ապա այն եկող վարդապետքն բերին եւ մահզար մի այլ գրեալ՝ թէ «նա յանձն չառնու եւ չլինի, զջահկեցի Ղազար վարդապետն կը խնդրեմք եւ ոչ զայլ ոք»: Եւ յետ բազմաց ասից եւ խօսից, կնքեցի մեղաւորս նախ զհաւանութեան գիրն, որ եւ ի վերայ նորա հաստատեցաւ կաթուղիկոսութիւն: Եւ իմ ելեալ անտի փութով գնացի յՈւսկուտար, զի մի՛ զրոյցն բազմացի, եւ զմահզարն յԻզմիր յղեցաք առ Ղազար վարդապետն, զի ելեալ գնասցէ ի սուրբ Գահն»[32]:

Ուրեմն՝ եթե նույնիսկ Հովհաննես Կոլոտ պատրիարքի թեկնածությունը քննարկվել է, ապա ո՛չ Մայր Աթոռի միաբանության և նրա ուղարկած պատվիրակների նախաձեռնությամբ, որ մեկ անգամ ևս փաստում է Ս. Էջմիածնում Կոլոտի նկատմամբ վերապահ վերաբերմունքը:

Այս ամենից անելիք միակ եզրակացությունն այն է, որ Հովհաննես Ամասիացին, տարիներ անց շարադրելով Ղազար Ջահկեցու կենսագրությունը և լռելով մեծ հեղինակություն վայելող Կոլոտ պատրիարքի հետ նրա ունեցած լուրջ բախումների մասին, փորձում էր մեղմել իր ուսուցչի դեմ նրա թշնամիների ու հատկապես կաթուղիկների՝ առանց այն էլ հաջողված քարոզչության արդյունքները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] ՁԱՄ, Գ, էջ 819. **Ա. Տէր-Յովհաննիսեան**, *Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի* (Երուսաղէմ, 1890), էջ 51. ԱԶԳ, այուն. 1991: *A Reference Guide to Modern Armenian Literature, 1500-1920, op. cit., pp. 95-96, 399. Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան* (Երևան, Հայկ. հանրագիտարանի գլխավոր հրատ., 2002), էջ 653:

[2] Մաշտոցի անվ. Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի հեղինակները, չնկատելով Աստվածատուր կաթողիկոսի գահակալության օրոք ժողովածուն ավարտելու մասին՝ հիշատակարանում հեղինակի արած նշումը, սխալմամբ կարդացել են ՌՃՀԸ (1729). - տե՛ս *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի:* Հ. Ա, այունակ 385:

[3] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 698, էջ 6ա. էջ 7ա-ում կարդում ենք. «չատ էր զայս եւ դժուարիմաց, բայց եւ ծաղկաքաղ գրեցի. անմեղադիր լերուք»: Նույն մատյանի էջ 7բ-ում նկարված է մի վարդապետ՝ գավազանով ևհանդերձանքով: Սա կարող է խորհրդանշել հայ վարդապետի կերպարն առհասարակ, մանավանդ, որովհետև երկն էլ վարդապետական քարոզի մի ձեռնարկ է և կոչվում է «Կերակուր վարդապետաց»: Սակայն այս կերպարում Ղազար Ջահկեցին կարող էր նաև ինքն իրեն մարմնավորել: Համենայն դեպս, Մաշտոցի անվ. Մատենադարանիս համառոտ ձեռագրացուցակի հեղինակներն այդպես էլ կարծել են ու գրել. «Գրիչ՝ Ղազար Ճահկեցի:...Մանրանկար՝ նկար՝ Ղազար Ճահկեցի, կիսախորան, լուսանցազարդ» (*Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի:* Հ. Ա, այուն. 385):

[4] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 2121, էջ 370ա:

[5] *Դրախտ ցանկալի*, էջ 680:

[6] Նույն տեղում, էջ 649:

[7] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 64բ:

[8] *Յոհնն*, Ե, 35:

[9] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 54բ:

[10] Նույն տեղում, էջ 55ա:

[11] Տե՛ս **Աբրահամ Երեւանցի**, *Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի*, էջ 31-32, 100. հմմտ. *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 2121, էջ 369ա:

[12] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 2121, էջ 369ա:

[13] Արևելյան Հայաստանի ավերածության մասին տե՛ս **Ա. Այվազյան**, «Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ.», էջ 102-114. **A. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s...*, 15, 31-32, 36-39:

[14] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 2121, էջ 368բ:
[15] **Ղազար Ջահկեցի**, *Գիրք նորաբոյս, որ կոչի ԵՐԳԱՐԱՆ* (Կ. Պոլիս, 1737), էջ 238-241: Այս «Ողբից» մի քանի այլ հատված լույս է տեսել նաև Շուշանիկ Նազարյանի *Ողբի եւ սթափման բանաստեղծություն*-ում, էջ 279-280:
[16] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 57բ:
[17] Նույն տեղում, էջ 59բ:
[18] Նույն տեղում, էջ 60բ-61ա:
[19] Նույն տեղում, էջ 60ա-62ա:
[20] Տե՛ս **Ն. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Ը (Երուսաղէմ, 1977), էջ 219: Նույն աղբյուրը հայտնում է նաև, որ Ղազար Ջահկեցին ունեցել է Մկրտիչ անունով վարդապետ եղբայր, որը 1740-ական թթ. եղել է Երնջակ-Գողթն (գուցե նաև Նախիջևան) թեմի առաջնորդը: Ղազար Ջահկեցու երեք եղբայրների մասին հմմտ. ՁԱՄ, Գ, էջ 821:
[21] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 2121, էջ 369ա:
[22] Տե՛ս աստ, ծնթ. 330:
[23] Տե՛ս ՁԱՄ, Գ, էջ 827-828, 838-841:
[24] **Գ. Բամպուքճեան**, «Մարտիրոս պատրիարք Ղրիմեցի (1630°-1683) եւ իր նորայայտ չափածոյ յիշատակարանը». - *Բազմավէպ*, 1994, էջ 451-452:
[25] ՄԺ, հ. Ա, էջ 339:
[26] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 66բ-67բ:
[27] Նույն տեղում, էջ 67բ-68ա:
[28] Նույն տեղում, էջ 68բ-69բ:
[29] Նույն տեղում, էջ 70ա:
[30] Նույն տեղում, էջ 71բ-72ա:
[31] Նույն տեղում, էջ 72բ:
[32] «Ստորագրութիւն ուղեւորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի Պատրիարքի Ս. Աթոռոյս՝ յԵրուսաղէմի ի Կ. Պոլիս». - *Միոն* (Երուսաղէմ), 1866, էջ 142:

ԳԼՈՒԽ Թ.

ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայության ազգակազմիչ տարրերի ջահկեցիական սահմանումը

Ղազար Ջահկեցին, գաղափարական առումով, հայ միջնադարյան ազգայնականության խոշորագույն տեսաբան Գրիգոր Տաթևացու (1346-1409) աշակերտն էր: Բոլորովին պատահական չէ, որ Ջահկեցին Գրիգոր Տաթևացուն մեծարում է առանձին երգով («Երգ Սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ նորին Տեառն Ղազարու Վարդապետին Ճահկեցւոյ»), որտեղ հնչում են նաև ազգային հպարտությամբ լի այսպիսի տողեր.

«Արեգական նըման ծագեալ ի Հայաստան,
Քաջ հռետուր եւ փիլիսոփայ անյաղթական,
Քան ըզՊղատոն եւ ըզՊորփիւր Աստուածաբան՝
Գեր ի վերոյ, քան զիմաստունս հելլենական»[1]:

Ղազարը ոչ միայն որդեգրում, այլև նորովի է զարգացնում Տաթևացու հայրենասիրական-ազգայնական գաղափարախոսությունը: Այսպես՝ 1397 թ. ավարտած իր Գիրք հարցմանց *երկում Տաթևացին ներկայացնում է Աստծու՝ «Հայոց ազգին» պարգևած տաս «առանձնական բարութիւնները»[2]: Ղազարն սրանց թիվը հասցնում է 50-ի[3] և ավարտում իր այդ մանրամասն մշակումը հայ ազգին ուղղված հետևյալ ծրագրային ճոնով, որի իմաստային բաղադրամասերը ներկայացնում ենք մեր համարակալումով՝*

«Ազգ յաբեթեան եւ թորգոմեան նաեւ աբրահամեան, վաղահաս պտուղք բուրդուղիմէոսեան եւ թադէոսեան, լուսածնունդ զաւակք Սուրբ Էջմիածնեայն եւ գրիգորեայն՝ առանց ամենայն տարակուսանաց եւ հակառակութեանց՝ հայք են եւ ասին.

(1) Ազգք տոհմիւ օրհնեալ.
(2) Երկրաւ բարեբանեալ.
(3) Լեզուաւ կանխազարդեալ.
(4) Գրով բարգաւաճեալ.
(5) Հաւատով ազնուացեալ.
(6) Անուամբ ճոխացեալ,
Առաքինութեամբ բարեպաշտեալ,
Ի Տէր պարծեցեալ,
Եւ զնմանէ գոհացեալ,
Եւ յԱստուածաշունչ գրոց քարոզեալ»[4]:

Այս դիպուկ ձևակերպումներում ներկայացված են միջնադարում և ուշ միջնադարում հայերի ազգային ինքնագիտակցության վեց հիմնասյունները: Դրանք են՝

(1) «Ազգք տոհմիւ օրհնեալ» - հայերի ծագումն ընդհանուր նախահայրերից.

(2) «Երկրաւ բարեբանեալ» - Հայաստանում և նրանից դուրս ապրող հայերի խոր կապվածությունը հայ ազգի ձևավորման ու ընակության բնիկ տարածքին, որ կարելի է կոչել նաև «հայրենիքի սինդրոմ».

(3) «Լեզուաւ կանխազարդեալ» - հայոց լեզուն որպես հայերի ընդհանուր լեզու լինելը.

(4) «Գրով բարգաւաճեալ» - ազգային գրական-մշակութային վիթխարի ժառանգության առկայությունը.

(5) «Հաւատով ազնուացեալ» - ազգային եկեղեցին ու նրա ուրույն դավանանքը՝ հայադավանությունը.

(6) «Անուամբ ճոխացեալ, Առաքինութեամբ բարեպաշտեալ, Ի Տէր պարծեցեալ, Եւ զնմանէ գոհացեալ, Եւ յԱստուածաշունչ գրոց քարոզեալ» - ազգային արժեքների և նվաճումների ճանաչումն ու մեծարումը:

Ղազար Ջահկեցու այս ձևակերպումները, փաստորեն, ոչ այլ ինչ են, քան միջնադարյան և ուշմիջնադարյան հայ ազգը բնութագրող մի կատարյալ սահմանում՝ հետևյալ վեց հիմնական բնորոշիչնե-

րով. ընդհանուր ծագում, հայկական բնիկ տարածքի՝ հայրենիքի առկայություն (այս մասին ավելի մանրամասն՝ ստորև), ազգային լեզու, ազգային մշակույթ, Հայ Եկեղեցի և հավատ, ազգային հպարտություն սնող պատմական այլ հիմքեր:

Ուշագրավ է, որ XVIII դարում Ջահկեցին հայերի ազգակազմիչ բնորոշիչներից կրոնականը նշում է հինգերորդ աստիճանի վրա, առաջինների վրա դնելով հայրենիքը և ազգը, ընդ որում՝ նախաքրիստոնեական իր ծննդաբանությամբ հանդերձ («Ազգ յաբեթեան եւ թորգոմեան նաեւ աբրահամեան, վաղահաս պտուղք բուրդուղիմէոսեան եւ թադէոսեան, լուսածնունդ զաւակք Սուրբ Էջմիածնեայն եւ գրիգորեայն՝ առանց ամենայն տարակուսանաց եւ հակառակութեանց՝ հայք են»):

Այս կապակցությամբ պատմական մի զուգահեռ կարող է թվալ անհավատալի: IV-V դարերում հայ զինվորականության պատվո վարքականոնը, պաշտպանության ենթակա ազգային արժեքների թվում՝ Հայ եկեղեցին ու հավատը նշանակում էր դարձյալ ճիշտ նույն հինգերորդ տեղում և ազգն ու հայրենիքը ավելի առաջնային դիտում[5]: Հայ հին զինվորականության արժեհամակարգի հետ այս համընկնումն առավել ևս զարմանալի է, եթե հիշենք, որ Ղազար Ջահկեցին ինքը բարձրաստիճան հոգևորական էր և ապրում էր հայկական պետականության բացակայության ժամանակներում: Այս համընկնումը, սակայն, միանգամայն բնական է. այն արգասիքն ու արտահայտությունն է տակավին հին ժամանակներում ձևավորված հայկական ազգայնականության (հայերի պարագայում՝ նույնական է հայրենասիրությանը), որը ժամանակի ընթացքում թեև մանր ձևափոխություններ էր ունենում, բայց և՛ IV-V-րդ, և՛ հետագա բոլոր դարերում հիմնականում նույնական էր[6]:

Ավելին՝ Ղազար Ջահկեցին հայոց լեզուն և ազգային մշակույթը չի ստորադասում հայ եկեղեցուն ու քրիստոնյա հավատին, այլ դրանք բոլորը շաղկապում-ձուլում է հայության մեկ ընդհանուր բնութագրի մեջ: Սա համապատասխանում է հեղինակի ազգայնական մտայնությանը: Առհասարակ, իր ողջ կյանքով ու գործունեությամբ Ղազար Ջահկեցին մի կատարյալ ազգայնականի տիպար է. դա է պատճառը, որ հայկական քաղաքակրթության խնդիրներն արծարծելիս, նրա մոտեցումը միշտ և՛ գիտական է, և՛ քաղաքական-գաղափարախոսական:

Ի դեպ, Ղազար Ջահկեցին այս հարցում զգալիորեն հեռանում է Գրիգոր Տաթևացու՝ միջնադարյան ազգին տված իր ժամանակների համար բացառիկ մի սահմանումից, որտեղ Տաթևացին հավատն ու դավանանքը համարում է ազգի գլխավոր կազմարարները (Տաթևացու սահմանումը կարծես վերցված լինի սոցիոլոգիայի մերօրյա մի դասագրքից).

> «Ազգ առ ազգ բաժանեալ լինի գաւառաւ եւ լեզուաւ եւ կանոնական սահմանաւ, որ են աւանդութիւնք եւ հաւատք եկեղեցւոյ: Եւ բաժանումն յաւէտ զքան գաւառաւ եւ լեզուաւ՝ կանոնական սահմանաւն ասացեալ լինին»[7]:

Ի տարբերություն դրա՝ Ղազար Ջահկեցին ազգի առաջնային կազմարար է համարում հայրենիքը, ընդհանուր ծագումը, ազգային մշակույթն ու լեզուն, որ վկայում է Գրիգոր Տաթևացու համեմատ նրա առավել աշխարհիկ ազգայնականությունը: Ըստ ամենայնի՝ Ջահկեցու այսպիսի «քաղաքականացված» ազգայնականության վրա լրջորեն ազդած պետք է լիներ նաև 1720-ական թթ. բռնկված հայ ազատագրական պատերազմը:

Ջահկեցու *Երգարանը* իբրև XVIII դարի հայ պաշտոնական ազգայնականության «ձեռնարկ»

Կ. Պոլսում 1737 թ. հրատարակված Ղազար Ջահկեցու Երգարանը *իր ժամանակների հայ ազգային-եկեղեցական գաղափարախոսության մի հարուստ շտեմարան է, մի իսկական ուղեցույց՝ այդ գաղափարախոսության կառուցվածքի և բաղկացուցիչ տարրերի մեջ: Պաշտոնական այդ գաղափարախոսությունը քարոզում էին Ս. Էջմիածնի նվիրակները, հայ բարձրաստիճան կղերը, ինչպես նաև հայ հոգևոր և աշխարհիկ մտավորականության մեծ մասը:*

Պետք է նշել, սակայն, որ հայկական ազգային գաղափարախոսության այն տարրերը, որոնք վերաբերում էին Հայաստանի ազատագրությանն ու անկախության հաստատմանը, ինչպես, օրինակ, «Ազատագրական լեգենդը»[8], ելնելով անվտանգության նկատառումներից, քարոզվում էին գաղտնաբար՝ բանավոր կերպով կամ հարա-

բերաբար քիչ ընդօրինակվող ձեռագրերում: Տպագիր գրականութեան մեջ ազատագրական թեման կարող էր միմիայն ակնարկվել, որովհետև տպագիր գրականությունն ուներ մեծ տպաքանակ և վայելում էր ազգի ղեկավար շրջանակների հովանավորությունը, այսինքն՝ վտանգ կար, որ օտար մահմեդական տիրակալները կարող էին մեղադրել և ծանր պատիժների ենթարկել Հայ եկեղեցու առաջնորդներին: Մի օրինակ. Գրիգոր Տաթևացու Գիրք հարցմանց-ի բաղկացուցիչ մաս էր կազմում իսլամի դեմ գրված Ընդդէմ Տաճկաց երկը, որ, զետեղված լինելով ձեռագիր մատյաններում, դուրս էր թողնվել Գիրք հարցմանց-ի 1720 և 1729 թթ. Կ. Պոլսում իրականացված հրատարակություններից[9]:

Ջահկեցու Երգարանն ընդգրկում և քարոզում է հայոց ազգային գաղափարախոսության պաշտոնական (կամ «բաց») հետևյալ դրույթները.

Ա. Սուրբ Էջմիածին

Գլխավոր դրույթը Ս. Էջմիածնի ճանաչումն ու պաշտամունքն էր՝ որպես հայ ազգի հոգևոր կենտրոն: Ս. Էջմիածնի փառաբանմանը նվիրված է երկու երգ՝ «Երգ Սրբոյն Էջմիածնի» (էջ 109-112) և «Ներբողեան ի Դէմս Սրբոյն Էջմիածնի» (էջ 112-121): Վերջին երգի երկարաբանությունն ինքնին փաստում է գաղափարախոսական այս կետի կենտրոնականությունը՝ մյուս դրույթների համեմատ (Երգարան-ի մյուս բանաստեղծությունների միջին ծավալը երեք էջ է):

Ղազար Ջահկեցին դիտում է Ս. Էջմիածինը ոչ միայն իբրև հոգևոր-կրոնական եզակի կենտրոն, «մայր հաւատոյ»՝ աշխարհում միակ վայր, ուր Փրկիչն իջել է երկնքից, այլև՝ հայապահպանության հզորագույն օջախ: Ահա Հայաստանի և հայ ազգի ճակատագրի հետ Ս. Էջմիածնի անխախտ կապն ընդգծող մի քանի հատված.

> «Ի Տանս Հայոց կառուցելոյդ զարմանամ, զարմանամ»
> (էջ 109)...

> «Աթոռ մեծի Լուսաւորչին Գրիգորի, Գրիգորի,
> Ամէն ազգաց եւ աշխարհաց բաղձալի, բաղձալի»
> (էջ 110)...

«[ու]րախացուցիչ մերոյ ազգիս Թորգոմեան, Թորգոմեան» (էջ 110)...

«Ուրախ լեր Աթոռ փառաց մայր եկեղեցի,
Քանզի քեւ ծագեցաւ մեզ լոյս մեծ Քրիստոս
Հայաստան երկրի» (էջ 111)...

«Էջմիածին՝ Աթոռ փառաց,
Առ քեզ իջեալ հաստիչն Աստուած,
Դուռն իմաստից, աղբիւր շնորհաց,
Յերկիրն օրհնեալ Հայոց Մեծաց» (էջ 117)...

«Էջմիածին... ի թշնամեաց զմեզ փրկողին» (էջ 118)...

«Էջմիածին՝ Աթոռ Հայոց» (էջ 119)...

«Էջմիածին՝ մեծ վեհարան,
Սուրբ հաւատոյ շտեմարան,
Որք զերախտիս քո ուրանան՝
Երկու աչօքն կուրանան» (էջ 121)...

Ավելին՝ ի դեմս Ս. Էջմիածնի հայ եկեղեցին ուղղակիորեն դիտված է իբրև մահմեդական տիրապետության ծանր ժամանակաշրջանում հայոց պետականության հնարավոր միակ ձև, այդ պետականությունը փոխարինող հաստատություն, ահա.

«Էջմիածին հարկ պետութեան
Եւ գայիսոն զօրեղութեան,
Ամուր պատուար հաստատութեան,
Ուղղափառացս յոյս փրկութեան» (էջ 114):

Ղազար Ջահկեցին այլուր այսպես էր խոսում Ս. Էջմիածնի առաջնայնության մասին.

«[կաթոլիկները] ասեն, թէ «Հռոմայ եկեղեցին է գլուխ ամենայն եկեղեցեաց», ոչ ունելով վկայ իրին այնմիկ: Այլ թէ կամին լուիցեն եւ ի միտ առցեն, զի Սուրբ Էջմիածինն է Սիօն եւ մայր ամենայն եկեղեցեաց, քանզի Աստուածաէջ եւ Քրիստոսահիմն է, որպէս իւրեանք եւս վկայեն զայս ճշմարիտ գոլ եւ ո՛չ կարեն ուրաստ լինիլ...»[10]

Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսներ

Հաջորդ դրությունն է Ամենայն Հայոց կաթողիկոսների պաշտամունքը և նրանց ճանաչումը՝ որպես հայ ազգի գլուխ և հոգևոր առաջնորդ («Երգ մեծին Ներսէսի Հայրապետին», էջ 164-165 և «Երգ Սրբոց Հայրապետաց», 179-181):

Հայոց պետականության բացակայության այդ դարաշրջանում Ամենայն Հայոց կաթողիկոսների դիրքն իսկապես չափազանց կարևոր էր ոչ միայն քաղաքական, վարչական, տնտեսական, այլև գաղափարախոսական ասպարեզում ու նաև յուրաքանչյուր հայի մտայնության մեջ: Այս առիթով շատ բնութագրական է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի խոսքը՝ ուղղված պարսից շահին.

> «Ի բնէ է ամենայն ազգ Հայոց ուր եւ իցէ՝ թէ՛ յաշխարհին Օնցւոց, թէ՛ ի Ֆռանգաց, թէ՛ Հնդկաց, թէ՛ Մոսկովաց, եւ ուր եւ գտանի յազգէն Հայոց, ամենեքեան հնազանդին Էջմիածնի...»[11]

Այդ դարաշրջանում Ամենայն Հայոց կաթողիկոսի ունեցած համազգային դերի ու իրավասությունների թերևս լավագույն համառոտ դասակարգումը տվել է Սիմեոն Երևանցին, որն արժե մեջբերել ամբողջությամբ.

> «Ապա ուրեմն ձգի եւ տարածի հոգեւոր իշխանութիւն Սրբոյ Աթոռոյս ի յամենայն տեղիս եւ ընդ ամենայն ծագս երկրի՝ ուր կան եւ գտանին Հայկածին եւ Լուսաւորչակրօն ժողովուրդք եւ հոգեւոր ժողովարան: Քանզի ուր եւ գտանին յազգէս Հայոց թէ՛ եկեղեցիք եւ թէ՛ եկեղեցականք, կարգաւորք եւ աշխարհականք, ի յինչ կոչման եւ իցեն՝ բովանդակքն պարաւանդեցեալք եւ փակեցեալք են ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի եւ ի սմա նստող Հայրապետացն՝ որք են յաջորդք եւ փոխանորդք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց: Եւ ի սմա նստող Հայրապետին է յատուկ իշխանութիւն զբոլոր եկեղեցիս Հայոց հաստատել, բարեկարգել եւ ի կանոնի պահել, զաւելորդսն բառնալ եկ զթերին լցուցանել, զեպիսկոպոս ձեռնադրել, զառաջնորդս կարգել, զհեստեալսն ուղղել, զանարժանսն եւ զանուղղելիսն հանել ի յԵկեղեցւոյն եւ լուծանել ի կարգէն, անրգել եւ բացարձակ իշխանութեամբն հրամայել զհոգեւորսն եւ զօգտակարսն, փակել եւ բանալ, կապել եւ արձակել: Եւ ըստ ժամանակին զնուիրակուսս առա-

քել առ յամենեսեան իբր փոխանորդ ինքեան՝ ի քննել եւ վերահասու լինել զորպիսաբար կացութեանց եկեղեցեաց եւ եկեղեցականաց, զիւղն Աստուածագործ բաշխել ի յօծումն օծելոց եւ ի սրբազնագործել զսրբազնագործելիսն: Եւ միանգամայն որք վերաբերին ի յեկեղեցիս եւ ի հաւատս, ի սրբոյ Աթոռոյս եւ ի սմա նստող Հայրապետացն վերառաքին, տրին, եւ կարգին ի յազգս Հայոց որպէս ի միոյ մշտաբուղխ աղբերէն: Վասն որոյ եւ ազգս Հայոց փոխաբերաբար ի ցուցանել զհնազանդութիւն շնորհակալութեամբ հանդերձ, յիշեն զանուն Հայրապետին յամենայնում յաւուր յեկեղեցիս իւրեանց եւ տան յօժարութեամբ զհասս նուիրականս... ի ձեռն նուիրակացն սորին ըստ պայմանեալ ժամանակին»[12]:

Հետաքրքրական են նաև XIX դարում մի եվրոպացի ճանապարհորդի արած դիտարկումները.

«Էջմիածնում նստող պատրիարքը հայ ժողովրդի միասնականության և ազգակցության համար ահռելի նշանակություն ունի: Այստեղ է այն կենտրոնական կետը, որտեղ Գանգեսից և Ինդոսից, Եփրատից և Նեղոսից, Վոլգայից, Նեվայից և Բոսփորից եկած ուխտավորները առաջին անգամ են հանդիպում և ծանոթանում ու հաստատում եղբայրական միության կապերը... Այսպես է ազգային Եկեղեցու միասնությունը մշտապես ճանաչվում ու նորովի ամրացվում»[13]:

Ժողովուրդն զգում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնավարումը և մեծ նշանակություն տալիս դրան: Այսպես՝ 1725 թ., առնելով Աստվածատուր կաթողիկոսի մահվան լուրը, Կեսարիայի հայերը հրաժարվում են նվիրատվություններ անել Ս. Էջմիածնի նվիրակին (Ղազար Ջահկեցուն), պատճառաբանելով.

«չէ՛ պարտ զնուիրակութիւն այժմ տալի,
զի ոչ գիտէ ոք, թէ վեհն ե՞րբ լինի»[14]:

Բայց նոր կաթողիկոսի ընտրության լուրն ստանալուն պես, ինչպես հայտնում է Ս. Էջմիածնի նվիրակի օգնականը, տրամադրությունը փոխվում է.

«տրտունջ ժողովրդեան բաց բառնի.
այնուհետեւ գործ մեր կարգաւ ընթանի՝
ի չորս ամսէն անդ ժողովք մեր աւարտի»[15]:

Գ. Ազգային քրիստոնյա սրբեր

Ազգային քրիստոնյա սրբերի (կամ, Ջահկեցու բառերով ասած՝ «Հայոց լուսաւորիչների») գնահատումն ու պաշտամունքը, որ տրված է էջ 157-178: Իր «Երգ լուսաւորչացն Հայոց»-ի մեջ (էջ 159-161), Ջահկեցին այս համաստեղության մեջ է ընդգրկում, ըստ հերթականության, Բարդուղիմեոսին, Հակոբյան Հուդային, Շմավոնին, Թադեոսին, Գրիգոր Լուսավորչին, Վրթանեսին, Արիստակեսին, Ներսես Մեծին, Սահակ Պարթևին, Մեսրոպ Մաշտոցին, սուրբ թարգմանիչներին «մերովք», Հովհան Օձնեցուն, Հովհան Որոտնեցուն ու Գրիգոր Տաթևացուն, որոնք՝

> «Աստեղք լուսափայլք հայոց արեգակունք,
> Քարինք պատուական եւ զանազան ակունք,
> Աչտարակք հզօրք եւ պատուարք հաւատոյ,
> Հիմունք եւ որմունք Սիօնի մօր մերոյ
> (իմա՝ Ս. Էջմիածնի, Ա.Ա.)»:

Առանձին «երգեր» են նվիրված մասնավորապես Գրիգոր Լուսավորչին (էջ 157-159), «որդւոց եւ թոռանց սրբոյն Լուսաւորչին» (էջ 161-163), «մեծին Ներսէսի հայրապետին» (էջ 164-165), Սահակ Պարթևին (էջ 166-167), Մեսրոպ Մաշտոցին (էջ 168-169), Գրիգոր Տաթևացուն (էջ 177-178):

Դ. Հայ քրիստոնյա նահատակներ

Ազգային քրիստոնյա նահատակների դիրքը հայոց միջնադարյան մտայնության մեջ առանձին ուսումնասիրության կարիք ունի (որ շուտով հուսով ենք ներկայացնել ընթերցողի ուշադրությանը): Այժմ նշենք միայն, որ Ջահկեցին նրանց է նվիրում մի քանի «երգ»՝ «Երգ սրբոց մարտիրոսաց» (էջ 181-183), «Երգ սրբոց Հռիփսիմեանց» (185-187), «Երգ սրբոց Ոսկեանց» (էջ 202-203):

Ե. Հայոց թագավորներ և զորավարներ

Ջահկեցին չի մոռանում նաև անցյալում մնացած հզոր Հայաստանի աշխարհիկ առաջնորդներին.

«...ո՛վ սուրբ Տրդատ արքայդ հըզօր հըզօր՝
օգնեա մեզ *այսօր* (էջ 196-197, ընդգծումն՝ Ա.Ա.)»:

Կամ՝

«Սուրբդ Ատոմ եւ Մանաճիր ընդ ձեր զօրաց...
Արագահաս գոլով առ մեզ միշտ տոնողաց,
Եւ ազատել զազգս եւ զազինս ի թշնամեաց (էջ 212-213)»:

Սույն տողերը գրվել են 1720-1730-ական թթ., երբ Արևելյան Հայաստանում «վերակենդանացած» հայկական խոշոր զինուժը, ունենալով ազատագրական հստակ ծրագիր, կատաղի ճակատամարտեր էր տալիս սկզբում պարսկական, ապա օսմանյան զորքերի դեմ: Ջահկեցին ինքը, ականատես լինելուց բացի, նաև քաջատեղյակ պետք է լիներ Կիլիկյան Հայաստանի անկումից ի վեր չտեսնված հայոց այդ մեծ ազատամարտի կարևոր դրվագներին, գուցե նաև անձամբ ծանոթ էր ռազմական գործիչներից ոմանց: Նկատի ունենալով Ղազար Ջահկեցու գաղափարախոսությունն ու անհանգիստ խառնվածքը, նաև նրա մտերմությունը հայոց ապստամբների հետ կապված Աստվածատուր կաթողիկոսին՝ միանգամայն հնարավոր վարկած կարելի է համարել, որ նա այս կամ այն կերպ կարող էր մասնակցած լինել ազատագրական շարժման գաղտնի նախապատրաստությանը:

Վերն արդեն մի այլ առիթով մասնակիորեն մեջ ենք բերել Ջահկեցու Երգարան-ի «Ողբ ի վերայ Հայաստան աշխարհին»ը (էջ 238-241): Այդ չափածոյի հարցադրումը հետևյալն է՝

«Զողբալի երկիրըս Հայոց՝
Ո՞ր են նախկին հարքն ամենայն՝
Գեղաշուք եւ ջոկափառ՝
Պայազատ որդիք յաբեթեան»:

Այնուհետև Ջահկեցին հիշատակում-ոգեկոչում է հայոց ազգային և ռազմական առաջնորդների մի ամբողջ փաղանգի.

«Աղեղնաւոր մեծն Հայկ
Եւ հզօրն Արամ հրակայն,
Հերձող նիզակաւ զերկաթ
Եւ գեղեցկափայլն Տիգրան:

Ո՞ր են ցեղքն Աբրահամու՝
Շառաւիղքն քետուրական,
Տիեզերասասան Արշակ
Եւ Վաղարշակն արիական:
Վանիչ պարսիցըն Խոսրով
Եւ Տրդատ հզօր մեծ արքայն,
Որ զԹրշնամիս պատառէր
Այլ որպէս առիւծ եւ գազան:

Յաղթող ազգն Արշակունեաց
Եւ պարթեւեանքն, որ զօրացան
Վա՜յ եւ եղուկ մեզ եղեն,
Որ ի մէնջ նոքա սպառեցան:

Ո՞ր են փառազարդ իշխանքն՝
Զօրեղ եւ հզօրն Անգեղտան՝
Քաջամարտիկն Մուշեղ,
Սպառազէն եւ գայլն Վահան,
Որ պատերազմին վասըն մեր՝
Ազատեն զգերեալքս ամենայն՝
Փրկելով զազգս եւ զազինս՝
Եւ ամենայն զաշխարհ Հայաստան»:

Ինչ խոսք, որ հին հայոց քաղաքական-ռազմական առաջնորդների այսպիսի ոգեկոչումը համապատասխանում էր 1720-1730-ական թթ. հայոց ազատամարտի ոգուն: Սակայն, կարծում ենք, Ղազարն ավելի՛ն նկատի ուներ՝ հիշելով հայոց հին հերոսներին, նա այլաբանորեն ոգեկոչում էր նաև իր ժամանակի հայոց ազատամարտիկներին ու նրանց առաջնորդներին, որոնցից ոմանց նա, ինչպես ասվեց, անձամբ կարող էր ճանաչած լինել:

Ղազար Ջահկեցին՝ 1722 թ. Լիմ անապատի գաղտնի ժողովում ընթերցված կոչի հեղինա՞կ

Նկատենք, որ Ջահկեցու տողերից մի քանիսը գրեթե ճշգրիտ համապատասխանում են 1722 թ. Լիմ անապատում արևելահայ ազատագրական շարժման ուղարկած պատվիրակի՝ Ներսես վարդապետի խոսքին, համեմատենք.

Ղազար Ջահկեցի.
«Որ պատերազմին վասըն մեր՝
Ազատեն զգերեալքս ամենայն՝
Փրկելով զազգս եւ զազինս՝
Եւ ամենայն զաշխարհ Հայաստան (ընդգծումն՝ Ա.Ա.)»:

Ներսես վարդապետ.
«Քաջահամբաւ եւ արիասիրտ վարդապետ մի՝ յերկրէն Ռուշտունեաց Տէր Ներսէս անուանեալ, յոյժ յուզեալ եւ լալագին պատկերացոյց դառնակսկիծ վիճակս համօրէն ազգիս Հայոց եւ յայտնեաց ցնծագին՝ թէ այր մի յերկրէն Սիւնեաց Դաւիթ բէկ անուանեալ, զօրաշարժութիւն արարեալ ի՛ցէ վասն հալածելոյ նեղիչք եւ կշտամբիչք մեր, *միտս ունելով ազատագրելոյ արիւնածուփ զաշխարհն Հայաստան (ընդգծումը գրիչ Մխիթար աբեղայինն է՝ Ա.Ա.)*»:

Կարելի՞ է արդյոք այս ցայտուն նմանության հիման վրա հետևություն անել, որ Ներսես վարդապետը, խոսելով Լիմում հավաքված ժողովականների առջև, ձեռքի տակ ունեցել է նախապես իրեն տրված մի գրավոր փաստաթուղթ-դիմում: Կարելի՞ է արդյոք դրանից հետո հետևեցնել, որ Ղազար Ջահկեցին ծանոթ է եղել այդ դիմումին, գուցե թե ինքն էլ հենց այդ պատասխանատու փաստաթղթի հեղինակը կամ հեղինակակիցն է եղել: Ս. Էջմիածնում կարող էին հաշվի առած լինել նրա ճարտասանական ձիրքն ու նրան հանձնարարել այդպիսի մի զգայացունց կոչ գրելը: Հովհաննես Ամասիացին Ջահկեցու հռետորական արտակարգ կարողությունների մասին բազմիցս է խոսում: Ահա երկու այդպիսի հետաքրքրական դրվագ: Տեղեկանալով Ամասիայում Ջահկեցու փայլուն քարոզչության մասին, Աստվածատուր կաթողիկոսը կանչում է նրան Ս. Էջմիածին և լսում.

«Նա հրաւիրեալ կոչէ առ ինքն շեշտակի՝
յԱթոռ իւր Սուրբ իշման բանին Միածնի,
ի փորձ առնէ զհամբաւոյն զոր լըսի,
եւ հրամայէ քարոզ ասել ի դասի:

Նոյն ժամայն անդ՝ բանայ զբերանն շնորհալի,
ի մէջ բազմաց հրահանգելոց գումարի,
աղբերաբար անդ քարոզէ ատենի.
մնան լսողք քարոզութեան ապշելի:
Ի վաղճանի հռետորական քարոզի
խոնարհի անդ ի համբուրել զԱչ վեհի.
վեհն համբուրէ զգագաթ նորին նազելի,
այլեւ գովէ՛ զիմաստ մտացն պանծալի:
Սիրով ասէ զվեհ իւր զայս բանս առաջի
համագումար անդ եղելոց ատենի,
թէ՝ «ոչ թողցեր Տէր մեզ զաւակ այսպիսի[16].
նմանէաք իբր Սօղոմայ Գօմորի»:
Էականի բարւոյն դիտմամբ զվեհն հաճի.
իսկոյն կոչէ զմիաբանս համայնի
եւ ձեռնադրէ եպիսկոպոս ընդհանրի.
յղէ նուիրակ չորրորդ Հայոց աշխարհի»[17]:

1730 թ. Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան վրա հավաքված ուխտավորները խնդրում են Ջահկեցուն քարոզ կարդալ.

«Համագումարք վարդապետքըն, որք անտի,
քարոզ ասել առ Տեառն իմոյ հորդորի.
զվեհն իմ բանայ զբերան շնորհալի,
ճառէ զկիրս Լուսաւորչին հրաշալի:
Կատարեցման հռետորական ճոխ բանի
օրհնէ զժողովն այն օրհնութեամբ, որ յերկնի.
կան հիացեալք լսողք համայն քարոզի,
եւ փառս տան այնքան շնորհաց տուողի»[18]:

Հետաքրքիր է նաև, որ Լիմ անապատի միաբան Մխիթար աբեղան՝ 1722 թ. Լիմում գումարված ժողովից որոշ ժամանակ անց գրի առնելով իր տեսածն ու լսածը, մի ուղղակի մեջբերում է արել Ներսես վարդապետի «յոյժ յուզեալ եւ լալագին» ճառից, ահա.

«Արդ, ով բարեմիտ եւ հայրենապաշտ ժողովականք, շրջեսցէք դաւառս եւ ի կողմանս յերկրին ձերոյ, խրախուսեսցէք ժողովուրդս ձեր, որ մրափեալ է ի խոր խաւարի եւ տանջարանաց, զի թոթափեսցին զլուծ անիրաւանց բռնութեանցս, եւ յորժամ մեք առաքեսցուք զհրաւէր մարտի, բառնան ձայն ապստամբութեան ընդդէմ մարդակեր եւ խաչահալած թշնամեաց մերոց»[19]:

Սա կարծես թե նույնպես հուշում է, որ Ներսես վարդապետն իր ձեռքին է ունեցել մի գրավոր կոչ-դիմում, որից էլ հետագայում օգտվել է Մխիթար աբեղան:

Ղազար Ջահկեցու քաղաքական-ռազմական հարցերին քաջատեղյակ լինելու մասին է վկայում մեկ փաստ ևս: 1730 թ. Ղազարը, նվիրակությունից նոր-նոր վերադառնալով Ս. Էջմիածին, հրավիրվում է Երևանի փաշայի մոտ ինչ-որ գաղտնի գործով՝ «զի կոչեալ էր զփաշայն առ իւր ատենի՝ սակըս ծածուկ դժուարագոյն իմն իրի»[20]: Ամենայն հավանականությամբ, Երևանի փաշային պետք էր եղել ինչ-որ տեղեկություններ ստանալ այդ պահին Նախիջևանի կողմերում գտնվող պարսկական բանակի ու տեղի հայ բնակչության դիրքորոշման մասին և նա այդ հարցով դիմել էր Ս. Էջմիածին՝ Աբրահամ կաթողիկոսին, իսկ վերջինս նրա մոտ էր ուղարկել Ղազար Ջահկեցուն՝ որպես այդ տարածաշրջանի բնիկ և ռազմաքաղաքական հարցերին առավել բանիմաց անձնավորություն:

Հետևապես, եթե մեր ենթադրությունները ճիշտ են, ապա 1737 թ. Ջահկեցին դիմել է բավական համարձակ մի քայլի. 1722 թ. ազատագրական շարժման ղեկավարների հանձնարարությամբ՝ իր (կամ գուցե ևս մի քանիսի) հեղինակած փաստաթղթի վերն ընդգծված արտահայտությունները որոշել է դնել մի այլ ենթախորքի մեջ ու հրատարակել իր Երգարան-*ում:*

Ջահկեցու «Ողբի» գլխավոր հարցադրումը իբրև ուշմիջնադարյան հայ մատենագրության կենտրոնական դրույթ

Եթե վերևում առաջադրված վարկածը չի համապատասխանում իրականությանը, ապա գործ ունենք մի ընագրային համաձայնության հետ, որ արգասիք է 1720-ական թվականների հայոց ազա-

տագրական պատերազմի ծնած ընդհանուր մտայնության:

Իսկ Ղազար Ջահկեցու «Ողբի» գլխավոր հարցադրումը («Ու՞ր են նախկին հարքն ամենայն...») հայոց մատենագրության մեջ իսկապես ավանդական է: Այսպես՝ Լեհաստանում XVII դարի կեսերին Հայոց եկեղեցու դեմ ծավալված հալածանքների ժամանակ՝ լեհահայ մի անհայտ բանաստեղծ նույնպես հայ ազգի անցյալի ուժն ու փառքն էր ոգեկոչում.

«Ու՞ր են նախնի հայրապետքն այն,
Եւ քաջ հովիւքըն սըրբազան,
Որք վասն հօտին զանձինս եդին...[21]

Ու՞ր են դաւառք մեր հայրենի,
Ու՞ր են աթոռք հայրապետի,
Ու՞ր կան թախտերն թագաւորի՝
Մեծ Արշակայ եւ Տըրդատի:

Եղեալ եմք ցիրուցան երկրի
Օտար աշխարհ եւ յոյժ հեռի,
Ի սփիւռս ցրուեալ հեթանոսի,
Կոխան եղեալ ամէն ազգի»[22]:

Ուշ միջնադարի և նոր շրջանի հայ հեղինակների այս հաճախակի հարցադրման նախատիպը, թերևս, կարելի է գտնել Արիստակես Լաստիվերտցու Պատմութեան *մեջ, որը գրվել է 1079 թ.*

«...Ու՞ր են Աթոռները թագավորական, էլ չեն երևում, ու՞ր են ամպի պես նրանց առջևում խտացող զորքի բազմությունները, որ գարնանաբույս ծաղիկների պես իրենց երփներանգ հանդերձանքներով փայլփլում էին. ահա էլ չկան ու չեն երևում: Ու՞ր է Աթոռը հայրապետական, մեծ հրաշալի... այսօր թափուր է, զուրկ իր տիրոջից, մերկ իր զարդերից, ծածկված փոշով ու սարդոստայնով. աթոռակալն էլ որպես մի գերի ու կալանավոր քշված է օտար հեռավոր աշխարհ: Լռել են վարդապետների ձայնն ու քարոզները. հերձվածողների խմբերը, որոնք նրանց ժամանակ ծակերը փախչող մկների նման այստեղ ու այնտեղ էին թաքնվում, հալածված նրանց աստվածաբանական քարոզներից և ուղղադավան վարդապետությունից, այսօր քաջասիրտ առյուծների պես աներկյուղ դուրս են գալիս բներից, բերանը բացած, որ անմեղներից մեկին կլանեն...»[23]

Այս ողբերը ոչ այլ ինչ են, քան Հայաստանը դարձյալ ազատագրված ու բարգավաճ տեսնելու փափագով գրված կոչեր: Հայաստանի վաղ թե ուշ ազատագրվելու թեման կենտրոնական էր հայկական ուշմիջնադարյան ու նոր շրջանի մատենագրության մեջ, ինչպես և ժողովրդական ու գուսանական երգերում: Իսկ XI, XVII և XVIII դարերից վերը բերված վկայությունները խորհրդանշում են, թե ժամանակի և տարածության մեջ որքան ինտենսիվ էր հայերի հաղորդակցությունը իրենց հայրենիքի ճակատագրի վերաբերյալ:

Այսպիսով, վերը բերված փաստերի համադրումից հանգում ենք այն եզրակացության, որ Ջահկեցու Երգարանը *նախատեսված էր ծառայելու իբրև XVII-XVIII դարերում Ս. Էջմիածնի վավերացրած՝ հայկական ազգային գաղափարախոսության մի իսկական առաձեռն դասագիրք՝ իր յուրահատուկ ձևաբովանդակային ընդգրկումներով:*

«Ազատագրական աղոթքը»

Ղազար Ջահկեցին ազգի ցավով ապրող գործիչ էր: Իր Երգարան*-ում նա հետևյալ աղոթքով է դիմում Ս. Աստվածածնին.*

«Յիսուսապսակ եկեղեցեաց մեր՝ հաստատութիւն,
Եւ տառապեալ ազգիս Հայոց՝ միշտ խաղաղութիւն,
Բանտարկելոց եւ գերելոց՝ տու՛ր ազատութիւն,
Աստուածածին ծնօղ միածին՝ փրկեայ՛»[24]:

Իսկ այն, որ Ջահկեցին տենչում էր Հայաստանը տեսնել ազատագրված՝ լիակատար անկախություն վերահաստատած մի հզոր պետություն, փաստում է նաև նրա ինքնագիր մատյանում գրառված մի աղոթք, որը կարելի է պայմանականորեն կոչել «Ազատագրական»:

Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող (ձեռ. 698) Ղազար Ջահկեցու ինքնագիր մատյանի 236բ էջում կարդում ենք հետևյալ աղոթքը.

«Մանավանդ ազգս Հայկազյան՝ մեղքերի պատճառով անարժան դարձած և օտարացած, մեղքերի հողմով փոշու պես ցանուցիր եղած երկրի երեսին՝ օտարասեռ ազգերի և ցեղերի մեջ:

Հայցում ենք ամենախնամ և ամենագութ Արարչից, որ-պեսզի կտրվածը դարձյալ բժշկի.

և հոգու գրգանքով - իբրև թռչունը, որ ճագերին իր թևերի տակ է ժողովում - իր ամրածածուկ աչով վերստին հավաքելով հայերին նրանց վիճակված սեփական, ընիկ և հայրենի երկրի ու գավառների մեջ, վերանորոգի այնպես, ինչպես ստեղծել էր ամենասկզբում՝ պանծալի փառքով և բարգավաճող արդյունքով:

Ուժ տա, կազդուրի և հաստատահիմն դարձնի թագավորական ու հոգևոր ինքնիշխանությամբ և ամեն տեսակ բարիքներով:

Հաղթող և զորավոր դարձնի ճշմարտության բոլոր թշնամիների դեմ»:

[Մանաւանդ զազգս հայկազեան, զտարժանեալս եւ զվարատեալս մեղօք, զցրուեալս ընդ երեսս երկրի. իբրեւ զփոշի հոսեալ մեղայ հողմով ի յազգս եւ յազգինս օտարասեռս:

Հայցեսցուք յամենախնամ եւ յամագութ Արարչէն.

զի որ եհատն դարձեալ բժշկեսցէ.

եւ գրգմամբ հոգուոյն, իբրեւ հաւ զճագս ժողովեալ ընդ թեւօք իւրովք, եւ ամրածածուկ աչովն իւրով հաւաքեալ վերստին ի սեփական, ի ընիկ եւ ի հայրենի երկիրս եւ ի գաւառս հայկական վիճակի, նորնորոգեսցէ իբրեւ զառաջնաստեղծն՝ պերճ փառօք եւ բարգաւաճեալ յարգասիւք.

կարողացուսցէ, կազդուրացուսցէ եւ հաստատահիմն արասցէ թագաւորական եւ քահանայական ճոխութեամբ եւ յամենայն որպիսութեամբ բարեաց.

յաղթող եւ զօրաւոր արասցէ ընդդէմ ամենայն ներհակաց ճշմարտութեան:]

Այս տողերը գրի են առնված ընդհանուր շարադրանքից հետո. 236ա էջը դատարկ է, իսկ դրան նախորդող երեք էջը պատռված-հանված են (էջերը համարակալելիս, այս բացը որևէ կերպ չեն նշել): Բացի այդ, այս աղոթքը թեև գրված է նույն գրչի՝ Ղազար Ջահկեցու ձեռքով (լեզուն և ոճը առավել ևս նրանն են), սակայն, շարադրանքում եղածի համեմատ, գիրը փոքր-ինչ մեծ է և անխնամ, կարծես գրված լինի հոգու խռովության պահին կամ ծեր հասակում: Ըստ երևույթին, Ղազար Ջահկեցին գրառել է այս աղոթքը ձեռագիրը պատրաստելուց ավելի ուշ, այսինքն՝ 1719 թ. հետո, որովհետև աղոթքի մոտիվները գտնում ենք նաև 1726 թ. նրա շարադրած հիշատակարանում[25]*:*

Հետաքրքիրն այն է, որ այս աղոթքի ավելի վաղ (գուցե և՝ ոչ նախնական) տարբերակը գրի է առնվել դեռևս 1674 թ. ոմն Փարթամ գրչի կողմից[26]: Սա նշանակում է, որ հայ եկեղեցու գաղափարախոսությունը ներառում էր հատուկ ազատագրական աղոթքների մի ավանդություն, որի պահապաններից ու զարգացնողներից էր նաև Ղազար Ջահկեցին:

Ինչևէ, անվտանգության հասկանալի նկատառումներից ելնելով, Ջահկեցին այս աղոթքը դուրս է թողել իր պատրաստած Աստուածաղերս *ժողովածուից: Թե որքան տարբեր էր Հայ եկեղեցու հրապարակային քարոզը նրա գաղտնի տրամադրություններից, կարելի է պատկերացնել, համեմատելով Ջահկեցու գրառած «Ազատագրական աղոթքը» տպագիր* Աստուածաղերս*-ի աղոթքներից մեկի հետ, որտեղ Աստծուց դարձյալ աղերսվում է հաստատել «զՍուրբ Կաթուղիկէ եւ Առաքելական եկեղեցի քո զէջմիածին եւ զամենայն վանորայս եւ զեկեղեցիս Հայաստանեայց անշարժ եւ հաստատուն մնալ ի ներկայումս եւ առ յապայ», այլևս ոչ մի խոսք չասելով Հայոց անկախ պետականության վերահաստատման մասին: Փոխարենը՝ կան կայսրության հավատարիմ ռայային պատշաճող ահա այսպիսի տողեր. «պահեա՛... զբարեպաշտ թագաւորս եւ զիշխանս աշխարհաց, զօրացո՛ զօրութեամբ քով եւ կարողացո՛ ընդդէմ օտար թշնամեաց»[27]:*

Ղազար Ջահկեցու գրառած այս աղոթքը՝ թեմատիկ ուղղվածությամբ և բառապատկերային որոշ փոփոխությամբ՝ ակնհայտ ազդեցություն է կրել Ստեփանոս Սյունեցու «Ողբք եւ հառաչանքի» վերջաբանից, ահա.

«Թողումք զողբանք զցաւագին,
Առնեմք աւարտ՝ լալեաց բանին:
Յուսահատիլ՝ չէ պարտ բնաւին
Մեզ ի յուսոյ անմահ բանին,
Որ ի քարանցն անշնչային
Կանգնէ որդիս Աբրահամին:
Այլ պաղատիլ մեզ խիստ ուժգին,
Գիրկս արկանել ոտից նորին:
Ձցայգ եւ զցերեկ՝ կանխել ի սոյն
Արթուն ի քնոյ զբաղականին:

Զի թէ կարճէ զչափ չարին,
Որ մինչ ցայսօր ընդ մեզ անցին,
Առնէ վաղճան սրգոյս խորին,
Զոր բազմամեայ կրեմք յանձին:
Տայ նորոգումըն մեզ կըրկին,
Որ բնաւ չյիշեմք զփառսն առաջին:
Կանգնէ զաթոռ թագաւորին
Եւ զգաւազան Պատրիարգին.
Ամենեցունց ըստ իւր կարգին:
Ուղղէ զգահոյս տիրականին,
Նոր զարդարէ փառօքն հին,
Եւ առաւել, քան զոր էին:
Տայ մեզ գոչել ձայնիւ ուժգին.
Վերջինս է մեծ, քան զառաջինն:
Եւ մեք ամենս՝ ի միասին,
Տամք գոհութիւն մեր փըրկողին
Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն,
Փառք եւ պատիւ անեղ Բանին:
Յաւէտ ամօք, որ չվճարին
Այժմ եւ անկէտ՝ յաւիտենին
(ընդգծումն՝ Ա.Ա.)»[28]:

Իսկ Սիմեոն Երևանցին, կարծես արձագանքելով Ջահկեցու և մյուսների՝ հայ ազգի «երկրի երեսին փոշու պես ցանուցիր» լինելու ցավին, քաղաքագետ-պատմաբանի սառնասրտությամբ ժամանակագրական հստակ շրջանակի մեջ է դնում այդ երևույթը.

«Արդ, ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ միչեւ ի սուրբն Գրիգոր Տղայ կոչեցեալն Հայրապետ... յամս ՊԺԳ (813), [այսինքն՝] մինչեւ ի ՇԿԶ (1117) թուականն մեր... յայսքան միջոցս ազգ մեր գոյր անտարագիր, անցանեւցիր եւ համաժողով յերկիրս Հայոց, եւ Հայկական իշանութեամբ վարիւր ըստ Հոգւոյ եւ ըստ մարմնոյ (թէպէտ երբեմն պայծառ եւ երբեմն նուազ) եւ կաթուղիկոսն ի յերկիրս իւր նստիւր՝ եւ զազգն ընդ ձեռամբ ունէր»[29]:

Պատառիկներ Ջահկեցու Հայրենասիրական-ազգայնական գաղափարախոսության

Ջահկեցու հայրենասիրական-ազգայնական գաղափարախոսությունը, հռետորական և գեղագիտական հնարների տեսքով, սփռված է նրա ստեղծագործությունների տարբեր էջերում:

Այսպես՝ Դրախտ ցանկալի-ի «Հայոց գերազանցութիւնք» անվանված գլխում (էջ 666-670)[30], Ջահկեցին վիճաբանում է կաթոլիկ հոգեորսության այն քարոզչական կարևոր դրույթի դեմ, որը հայերին նախատում ու միաժամանակ գայթակղում էր, թե՝

> «ահա՛ ունիմք մեք զթագաւորութիւնս ճոխս եւ զազգս մեծամեծս, իսկ դուք, հայք, ոչ ունելով թագաւոր, ստրուկ եւ փոքր գոլով ոչ հնազանդիք իշխանութեանս մերում հռոմէականի»[31]:

Ջահկեցու պատասխաններում երևակվում են ազգայնականի հոգեբանությունն ու գաղափարախոսությունը, ինչպես նաև միջազգային հարաբերություններին նրա գիտակությունը.

> «սնոտիք են, որք իշխանութեամբ պարծին ազգն երկաբնակաց եւ ասեն՝ «մեք միայն ունիմք զթագաւորութիւն եւ զհայրապետութիւն եւ ամենայն ազգ եւ ազինք պարտին հնազանդիլ մեզ»:...քանզի ոչ միայն յինքեանս գտանի պերճութիւնս այս նիւթականաց, այլեւ ի բազում ազգս, այսինքն՝ ի հապէշս, ի մօսկօփս, ի լօթրանս (իմա՝ բողոքականների, լյութերականների, Ա.Ա.), ի մահմէտականս, ի կռամոլ հնդիկս եւ ի զանազան ազգս բազումս եւ ի սոսկավիթխար ազինս յոլովս գտանին իշխանութիւնս եւ պետութիւնս...
>
> Իսկ եթէ զփոքրկութիւն մեր եպերեն, եւ այդ չէ ինչ տարդէպ: Եւ մեք վասն պատուիրանի Տեառն եւ վասն յուսոյ արքայութեան նորին՝ յանձն առնումք զայդ: Քանզի Տերն բնաւից՝ փոքերց խոստացաւ զարքայութիւն, ասելով՝ «մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ արքայութիւն» (Մատ. 22.14)...
>
> Եւ լաւ է մի գոյացութիւն, քան զբազում պատահումս: Եւ մի արեգակն, քան զբազում աստեղս: Եւ մի գլուխ, քան զբազում անդամս: Մի ակն պատուական, քան զբազում քարինս անպիտան»[32]:

Այս վերջին տողն իր հիմքում ունի համընդհանուր տարածում գտած հայ ժողովրդական մի հատու բանաձևում, որ հանդիպում է նաև XVII դարի բանաստեղծ Դավիթ Սալաձորցու խաղերից մեկի մեջ.

«Որպէս ակն ու գոհար, մարգարիտ մանր է,
Նոյնպէս հայն փոքր ազգ է եւ գինն ծանր է»[33]:

Փաստորեն, Ղազար Ջահկեցին իր ստեղծագործություններում մշակել է ազգային գաղափարախոսության բավական ընդգրկուն մի տեսություն, ինչը թույլ է տալիս նրան համարելու Գրիգոր Տաթևացուց հետո հայոց ամենախոշոր գաղափարախոսներից մեկը:

Ղազար Ջահկեցին ընդդեմ կաթոլիկ քարոզչության

Զարմանալի չէ, որ հայբենասիրական-ազգայնական այդպիսի հաստատուն դիրքերի վրա կանգնած հոգևորականը, կաթողիկոս դառնալուց առաջ էլ, դրանից հետո էլ միշտ անզիջում դիրքորոշում է հանդես բերել կաթոլիկ քարոզիչների և քարոզչության հանդեպ: Նրա վաղ շրջանի հայադավանապաշտ անխախտ դիրքորոշումների մասին կարելի է պատկերացում կազմել դեռևս 1719 թ. գրված Կերակուր վարդապետաց-ի հետևյալ տողերից. «Կարկեա՛, Տէր, զբերան հերձուածողաց, չիջո՛ եւ լռեցոյ զխռովութիւն»[34]: 1732 թ. Կ. Պոլսից հեռացած և Թրակիայում ապաստանած Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակ Ղազարը, իր Դրախտ ցանկալի-ի մեջ, դարձյալ իր գրիչն ուղղում էր կաթոլիկացած հայերի և կարծես նաև նրանց որոշակի զիջումներ անող բարձրաստիճան եկեղեցական գործիչների դեմ, մասնավորապես գրելով.

«Արդ, մի գուցէ վասն ճայնի վիճմանց եւ կականմանց ողբոց եւ աղաղակաց, արք ոմանք համարեսցեն զմեզ ամբարիշտս եւ մարդատեաց. զոր քաւ եւ մի՛ լիցի ընդ այսմ մասին մեղանչել մեզ... Վասն զի որովայն իմ ցաւի եւ զգայարանք իմ ճմլին վասն կորստեան հոգւոց ոմանց ի մենջ հեստելոց կարգաւորաց եւ աշխարհականաց, որք ինքեանք մոլորեցան ի ճշմարտութեանն ճանապարհէ եւ զայլս միշտ մոլորեցուցանելոյ ո՛չ դադարին երբէք...»[35]:

1737 թ. լույս տեսած Աստուածաղերս*-ում Ջահկեցին դարձյալ խոսում է նույն ցավոտ խնդրի մասին. «Շնորհեա՛, Տէր,...հերձուածողաց կարկումն, աղանդից խափանումն» (էջ 244) կամ «հերձուածողաց եւ հերետիկոսաց՝ ստորասզութիւն» (էջ 252):*

Իսկ կաթողիկոս ընտրվելուց հետո, ըստ մի հավաստի աղբյուրի՝

> «Ճահուկցի Ղազար Կաթուղիկոսն հարուցեալ շրջեր զդրունս մեծամեծացն զի հանիցեն յամենայն պատրիսն (իմա՝ կաթոլիկ միսիոներներին) ի յերկրէն Պարսից»[36]:

Ղազար Ջահկեցին իր ամբողջ կյանքն անց էր կացրել կաթոլիկ պառակտիչ քարոզչության դեմ մղած անզիջում գաղափարախոսական պայքարում. պայքար, որ իր արտահայտությունն է գտել նրա բոլոր ստեղծագործություններում: Սակայն հզոր ուժի դեմ Ղազար Ջահկեցու ձեռնարկած այս ծառացումն անհետևանք մնալ չէր կարող, այն էլ՝ Հայաստանի համար անկումային և ծանրագույն մի ժամանակաշրջանում, երբ հայ եկեղեցական գործիչներից շատերը փորձում էին զիջումների գնով հաշտվել Հռոմի հետ, իսկ շատերն էլ՝ ուղղակի նետվում էին կաթոլիկության գիրկը: Այս ընդհանուր մթնոլորտում Ղազարն ուներ քիչ դաշնակիցներ և շատ թշնամիներ: Նրա յուրաքանչյուր վրիպումը, յուրաքանչյուր սխալն ուռճացվում էին և ենթարկվում վարկաբեկումների և հարձակումների: Ղազար Ջահկեցու կերպարը հատկապես տուժել է (և, ցավոք, մինչև այսօր էլ լիովին չի վերականգնվել) Ղազարին ժամանակակից մխիթարյանների միակողմանի հաղորդումները՝ Զամչյանի Հայոց պատմության միջոցով լայն շրջանառության մեջ դնելուց հետո: Մխիթարյանների թշնամությունը Ղազար Ջահկեցու նկատմամբ եղել է այնքան խորն ու երկարատև, որ Զամչյանի անսովոր ընդարձակ բացասական անդրադարձը Ամենայն Հայոց այս կաթողիկոսին ընդունել է ցցուն վարկաբեկիչ բնույթ[37]: Արդյունքում՝ անգամ Օրմանյանի պես հակակաթոլիկ հեղինակը տուրք է տվել Ղազարի անձին մխիթարյանների և նրա մյուս հակառակորդների տված գնահատականներին[38]: Սակայն նույն Օրմանյանը մի ամփոփիչ խորաթափանց նկատողությամբ, դիտել է տվել նաև Ղազար Ջահկեցու փառավոր կաթողիկոս լինելը.

«Եթէ գիտցած ըլլար իր ձիրքերը՝ կիրքերէ զերծ պահելով արդիւնաւորել, անշուշտ աւելի հանդարտ ու երջանիկ, եւ տագնապներէ տառապանքներէ զերծ կեանք վարած կըլլար, եւ իր անունը լաւագոյն կաթողիկոսներուն հետ կդասուէր. մինչ այժմ իր անտեղի գործերն են, որ լաւ եւ ընտիր կողմերն ալ կքողարկեն եւ կաղաւաղեն, եւ իր անունը փառաւոր յիշատակէ կը զրկեն»[39]:

Կարծում ենք, սույն ուսումնասիրությունը վերականգնում է Ամենայն Հայոց այս հայրապետի հանիրավի սևացված անունն ու մեծ վաստակը, մասնավորաբար՝ ի հայտ բերելով, թե ինչպիսի ժամանակներում, ինչ միջավայրում և ինչ հզոր ուժերի հակազդեցության ներքո է գործել Ղազար Ջահկեցին[40]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Ղազար Ջահկեցի**, *Գիրք նորաբոյս, որ կոչի ԵՐԳԱՐԱՆ*, էջ 178:

[2] «Իսկ ազգիս Հայոց ի յԱստուծոյ առանձնական բարութիւն պարգեւեալ այսոքիկ. Առաջին՝ դարձն հրաշիւք: Երկրորդ՝ Սրբոյն Գրիգորի, որ վասն չինութեան եկեղեցւոյ տեսիլն: Երրորդ՝ յերկոտասանից առաքելոցն երիցն ի Հայս քարոզութիւնն եւ վախճան: Չորրորդ՝ Աբգարու թագաւորին նախընծայ ի Քրիստոս հաւատալն: Հինգերորդ՝ աստուածապարգեւք գիրն: Վեցերորդ՝ տապանն Նոյի յԱրարատ ի լեառն Մասիս: Եօթներորդ՝ եղեմաբուղխ երից գետոց հոսումն: Ութերորդ՝ զի արեւելեանք կոչին Հայք: Իններորդ՝ եւ յասմ կողմանէ եւ աստուածատունկ դրախտն: Տասներորդ՝ եւ այսմ կողմանէ՛ շարժին լուսաւորքդ ի յընթացս իւրեանց, որ են կարապետ մեծին լուսոյ ծագմանն, վասնզի արեգակն արդարութեան Քրիստոս Հայրական փառօք եւ աստուածագումար դասուք եւ կարապետեալ աստուածային նշանն անտի գալոց է ըստ Տեառնն (որպէս փայլակն, որ ելանէ յարեւելից՝ այսպէս եւ գալուստն որդւոյ մարդոյ)». - **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք հարցմանց* (Կոստանդնուպոլիս, 1729), էջ 555:

[3] *Դրախտ ցանկալի*, էջ 670-678:

[4] Նույն տեղում, էջ 677:

[5] Հմմտ. **Արմեն Այվազյան**, *Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր)*: Երևան, «Արտագերս», 2000, էջ 7-10, 16-24:

[6] Հայկական հին և միջնադարյան ազգայնականության առանձնահատկությունների մասին տե՛ս **Արմեն Այվազյան**, *Մայրենի լեզուն և ազգայնա-*

կանութեան սկզբնավորումը (հայկական և եվրոպական աղբյուրների համեմատական քննություն): Երևան:- Մատենադարան. «Արտագերս», 2001:

[7] **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք հարցմանց*, էջ 552:

[8] Ազատագրական լեգենդի մանրամասն քննությունը տե՛ս **Աշ. Հովհաննիսյան**, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*: Գիրք Ա, Երևան, 1957:

[9] Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, *Ընդդէմ Տաճկաց:* Ուսումնասիրեց եւ հրատարակեց՝ Բաբգէն Կիւլէսէրեան (Վիեննա, 1937), էջ 12-13:

[10] *Դրախտ ցանկալի*, էջ 512:

[11] ՀԱԳ, Բ, էջ 81:

[12] *Ջամբռ*, էջ 52:

[13] "The Patriarch at Etchmiadzin is of incalculable importance to the unity and nationality of the Armenian people. It is the central point where pilgrims, from the Ganges and the Indus, the Euphrates and the Nile, the Volga, the Neva, and the Bosphorus, first meet and become acquainted, and form ties of fraternal union... Thus the unity of the national Church is constantly recognized and cemented afresh;" **Baron A. von Haxthausen**, *Transcaucasia* (London, 1854), pp. 308-309:

[14] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 56ա:

[15] Նույն տեղում:

[16] *Եսայիայ*, Ա, 9:

[17] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 54բ-55ա:

[18] Նույն տեղում, էջ 61ա-61բ. Ղազար Ջահկեցու փայլուն քարոզների մասին տե՛ս նաև էջ 62ա, 62բ, 63ա, 63բ:

[19] Տե՛ս աստ, Հավելված Ե:

[20] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 60ա:

[21] **Ղ. Ալիշան**, *Կամենից*, էջ 203:

[22] Նույն տեղում, էջ 212. հմմտ. **Ա. Զոպանեան**, *Հայ էջեր* (Փարիզ, 1922), էջ 13:

[23] **Արիստակես Լաստիվերտցի**, *Պատմություն:* Թարգմանությունը՝ Վ. Ա. Գևորգյանի (Երևան. «Հայաստան», 1971), էջ 68:

[24] **Ղազար Ջահկեցի**, *Գիրք նորաբոյս, որ կոչի ԵՐԳԱՐԱՆ*, էջ 18:

[25] Բերենք այդ երկու ստեղծագործությունների մեջ եղած նմանություններից մի ցայտուն օրինակ.

«Ազատագրական աղոթք»՝ «Հայցեսցուք յամենախնամ եւ յամագուլթ Արարչէն. զի որ եհատն դարձեալ բժշկեսցէ».

1726 թ. հիշատակարան՝ «Այլ ակն ունիմք ի գթութիւն Աստուծոյ... նա՛ բժշկեսցէ զվիրաւորեալ մարմին իւր...». - հմմտ. *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 2121, հատկապես էջ 368բ-369ա. տե՛ս աստ, Հավելված Բ):

[26] **Բ. Կիւլէսէրեան**, *Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ...*, էջ 747:

[27] **Ղազար Ջահկեցի**, *Աստուածաղերս*, էջ 242-243:

[28] «Ողբք եւ հառաչանք ի դիմաց Մօրս մեր սրբոց Աթոռոյն Էջմիածնի Տեառն Ստեփանոսի Սիւնեաց այցելուի, որդւոյ Տարսայիճ իշխանի, ըստ խնդրոյ Վարդապետին Խաչատրոյ Կեչառեցւոյ ի ՉԽԸ (1299) թուիս մերոյ». - Կալկաթա, 1846, էջ 26-28. այս «Ողբ»-ի որոշ հատվածները հրապարակվել են հետևյալ վերնագրով՝ «Ողբ ի դիմաց Վաղարշապատու Ս. Կաթուղիկէին». - *Գանձարան հայ հին բանաստեղծության:* Աշխատասիրությամբ՝ Պողոս Խաչատրյանի (Երևան, «Հայագիտակ», 2000), էջ 402-405 (քաղված Կ. Կոստանյանցի 1885 թ. թիֆլիսյան հրատարակությունից):

[29] *Ջամբռ*, էջ 53:

[30] Այս գլխի խորագիրը տրված է *Դրախտ ցանկալի*-ի ցանկում, էջ 693:

[31] Նույն տեղում, էջ 666:

[32] Նույն տեղում, էջ 667-668:

[33] *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.):* Հ. Բ: Աշխատասիրությամբ Հասմիկ Սահակյանի (Երևան, 1987), էջ 363:

[34] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռագիր 698, էջ 235ա:

[35] *Դրախտ ցանկալի*, էջ 680-681: Այս դառը խորհրդածությունները որոշակիորեն ձայնակցում են Ստեփանոս Օրբելյանի հետևյալ տողերին, որոնց Ղազարը, թվում է, ծանոթ պետք է լիներ. «...եւ աներկիւղ բարբառով յառաջ մատչիմ, ձայն արկանեմ յազգս Թորգոմայ... Աւաղ եւ եղուկ եմ ես: Քանի՞ վնասք առ մեօք մտին յեկեղեցի: Քանի՞ սերմանք օտարք ընձիւղեցան յանդաստանս մեր. թողին զաղբիւրն ջրոյ կենդանւոյ. ոչ լուան իմաստնոյն, թէ՝ «արբ ջուր ի քոց ամանոց» (Տե՛ս **Ստեփաննոս Օրբելեան**, *Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց:* Շարադրեալ ի թուին Հայոց ՉԾԱ (1302) ի կաթողիկոսութիւն Գրիգորի Անաւարզեցւոյ: Կ. Պոլիս, 1756, էջ 4, 93):

[36] **Համազասպ Ոսկեան**, *Եղիա Աստուածատուրեան Մուշեղեան* (Վիեննա, 1927), էջ 46-47:

[37] ՁԱՄ, էջ 818-822, 827-835, 837-841:

[38] ԱԶԳ, սյուն. 2022-2028:

[39] ԱԶԳ, սյուն. 2034:

[40] Ղազար Ջահկեցու, ինչպես նաև Հայոց բազմաթիվ այլ փառահեղ կաթողի-

կոսների անունը կրող որևէ փողոց կամ հրապարակ այսօրվա Հայաստանում չկա: Սակայն, զարմանալիորեն, 1990-ական թթ. երևանյան մի փողոց անվանակոչվել է ի պատիվ Կարապետ Ուլնեցու՝ մի կաթողիկոսի, որը պաշտոնավարել է ընդամենը երեք տարի (որից երկուսն է միայն Ս. Էջմիածնում անցկացրել) և դրական շատ համեստ ժառանգություն է թողել: Թե Հայոց մյուս կաթողիկոսների համեմատ Կարապետ Ուլնեցու ո՞ր առավելություններն են ցանկացել ընդգծած լինել փողոցն անվանակոչած այրերը՝ պարզ չէ: Գուցե նրանց դուր է եկել Կարապետ Ուլնեցու՝ կաթոլիկների նկատմամբ բռնած հաշտարար դիրքորոշումը, որն, ինչպես վերը ցույց ենք տվել, դրդված էր զուտ քաղաքական հանգամանքներով և Հայոց եկեղեցու դիրքերն ամրապնդելու սխալ հաշվարկով:

ԳԼՈՒԽ Ժ.

ՕՍՄԱՆՅԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ (1725-1734 ԹԹ.)

Ընդհանուր դիտարկումներ

Կարապետ Ուլնեցու ընտրության կապակցությամբ վերն արդեն նշել ենք, որ Բարձր Դուռն անպայման ցանկանալու էր Էջմիածնի գահին բազմած տեսնել Օսմանյան կայսրությունում պաշտոնավարած վստահելի մի անձի, և ոչ թե արևելահայ եկեղեցական գործիչներից որևէ մեկին, որը նախկինում կարող էր կապեր հաստատած լինել պարսկական ու ռուսական իշխանությունների հետ, կամ Արցախում և Սյունիքում թուրքերին դիմադրող հայ զինվորության հնարավոր գաղտնի աջակիցը լինել: Բայց նույնը կարելի է ասել նաև Այսրկովկասի օսմանյան ռազմակալման տարիներին (1724-1735 թթ. միջև ընկած միջոցին) Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրված բոլոր երեք գործիչների մասին. մինչև կաթողիկոսանալը ո՛չ Կարապետ Ուլնեցին, ո՛չ Աբրահամ Մշեցին, և ո՛չ էլ Աբրահամ Կրետացին Օսմանյան կայսրության սահմաններից անդին երբևէ չէին գործել: Կարապետ Ուլնեցու կենսագրությունն արդեն ներկայացրել ենք: 1705 թ. Աբրահամ Մշեցին, դուրս գալով Ամրդոլի համալսարան-վանքից, հաստատվել էր Մշո Ս. Կարապետում, որի վանահայրն էր դարձել 1717 թ. ու Օսմանյան կայսրության տարածքից երբեք չէր բացակայել[1]: Իսկ Աբրահամ Կրետացին 1709 մինչև 1734 թթ. անընդմեջ եղել

էր Թեքիրտաղի հայոց թեմի առաջնորդը, այդ ընթացքում միայն երկու տարի՝ 1719-1720 թթ., անցկացնելով Երուսաղեմում[2]:

Կաթողիկոսական այս երեք ընտրությունները կարելի է դիտել իբրև օրինաչափ մի շարք: Արարատյան երկիրը ռազմակալելուց հետո Բարձր Դուռը, թեև Հայ եկեղեցուն հնարավորություն էր ընձեռել ազատորեն կաթողիկոսական ընտրություններ անցկացնել, սակայն առաջ էր քաշել մի պարտադիր պայման, ըստ որի՝ առժամանակ, մինչև Այսրկովկասում իր դիրքերի վերջնական ամրապնդումը, Ս. Էջմիածնի գահին չպետք է բազմեին նախկին պարսկահպատակ եկեղեցական գործիչները, այլ միայն նախկին օսմանահպատակները:

Մի կարևոր հարց, սակայն, դեռևս պարզաբանման կարիք ունի: Ի տարբերություն Կարապետ Ուլնեցու, որն ընտրվել էր Կ. Պոլսում՝ առանց Մայր Աթոռի միաբանության վճռորոշ մասնակցության և հատուկ արտահայտած ցանկության, հաջորդ երկու կաթողիկոսների թեկնածությունն առաջադրել և առանց ժամանակ կորցնելու ընտրել էին Ս. Էջմիածնում: Ինչու՞ էին Ս. Էջմիածնում դերադասել հե՛նց Աբրահամ Մշեցուն և Աբրահամ Կրետացուն Հայ եկեղեցու օսմանահպատակ այլ երևելի գործիչներից:

Աբրահամ Մշեցու ընտրությանը նպաստած ցարդ անհայտ պարագաները

Ինչու՞ Կարապետ Ուլնեցու մահից հետո Մայր Աթոռի միաբանությունն առանց վայրկյան իսկ կորցնելու անմիջապես իր ընտրությունը կանգնեցրեց Մշո Ս. Կարապետի առաջնորդ Աբրահամ Մշեցու վրա: Վերջինիս կաթողիկոս ընտրելու վճռի վրա ազդած պետք է լինեին երկու հանգամանք:

Առաջին, ինչպես վերն արդեն նշվել է, Աբրահամ Մշեցին կտրուկ դեմ էր իր նախկին ամրդոլցի դասակից Կոլոտ պատրիարքի՝ կաթոլիկների նկատմամբ վարած զիջողական-հաշտարարական քաղաքականությանը: Այս հարցում Աբրահամի և Մայր Աթոռի միաբանության (ու ողջ արևելահայ կղերի) հայացքները լիովին համընկել են:

Երկրորդ հանգամանքի մասին ստիպված ենք խոսել որոշ վերապահությամբ, թեև այս ենթադրությունն անելու համար ունենք

ծանրակշիռ հիմքեր: Դեռևս XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի սկզբին արևմտահայությունը նույնպես հույժ գաղտնի ապստամբական պատրաստություններ էր տեսնում. 1701 թ. արևելահայ գործիչները հայտարարում էին, որ տասնյակ հազարավոր արևմտահայեր միանալու են իրենց բարձրացնելիք ապստամբությանը[3]: Արդ, մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ տակավին 1719-1722 թթ. Մայր Աթոռի միաբանության և Աբրահամ Մշեցու միջև եղած պետք է լիներ հույժ գաղտնի հաղորդակցություն՝ ծրագրվող համահայկական զինված ապստամբությանը Տարոնի բերելիք կարևոր մասնակցության վերաբերյալ:

Ավելի հստակ: Ինչպես վերն այլ առիթով արդեն ասվել է, 1722 թ. օգոստոս-սեպտեմբերին Լիմ անապատ էր ժամանել արևելահայ ապստամբների պատվիրակը, որի խրախուսանքով Վասպուրականի հայության աշխարհիկ և հոգևոր ավագանին որոշել էր նախապատրաստություններ տեսնել՝ միանալու համար Արևելյան Հայաստանում բռնկված զինված ապստամբությանը.

> «Առաջնորդք եւ վարդապետք եւ քահանայք եւ իշխանք ամրակառոյց քաղաքիս Վանայ, մեծամեծք գաւառաց Վասպուրականի, Մելիքք յերկրաց Քաջբերունեաց եւ Բզնունեաց, գիւղապետք համայն գիւղօրէից հաւաքեալ եղեն ի ծովապատ սուրբ մենաստանս»[4]:

Այս գաղտնի ժողովում ընդունած որոշումներին իր օրհնությունն է տվել նաև Աղթամարի կաթողիկոս Հովհաննես Ջորեցին (կաթողիկոս է եղել ոչ ուշ, քան 1720-ից մինչև 1725 թ.):

Թեև 1722 թ. Լիմի ժողովից հետո, վերն արդեն նշված պատճառներով, Վասպուրականում և առհասարակ Արևմտյան Հայաստանում ապստամբական քայլեր չձեռնարկվեցին, սակայն հինգ տարի անց՝ 1727 թ. հոկտեմբերին, Թուրքիայում հետախուզական ինչոր գաղտնի առաքելություն կատարող հայ ազատագրական շարժման գործակալները հայտնում էին, որ, նախկինում կնքված պայմանավորվածության համաձայն, Վասպուրականի և Դիարբեքիրի շրջանների ասորիներն ու Պազուքի ցեղի քրդերը պատրաստ են միանալ հայերին՝ օսմանցիների դեմ նրանց ապստամբելու դեպքում[5]:

Ի դեպ, ասորիների հետ գաղտնի դաշինքի հաստատմանը

կարող էր անձնական կապերով նպաստած լինել Մինաս վրդ. Տիգ-րանյանը, որը ծնվել էր, ինչպես ինքն է ասում՝ «Տիգրանակերտում, որ Ասորեստանում է» («родился я в граде Тиграна в Ассирии»)[6]: Նույն դերը կարող էր կատարած լինել նաև արևելահայ շարժման պատվիրակը՝ Ներսես վարդապետը, որը ծնունդով ռշտունեցի էր, այ-սինքն՝ նույնպես ասորիների բնակավայրերին մոտ շրջանից և գուցե նաև Մինասի միջոցով շարժմանը ներգրավված անձ: Նկատենք նաև, որ հայ ազատագրական շարժումների գաղտնի կապն ասորիների հետ առկա էր տակավին XVII դարում[7]:

Փաստերը, այսպիսով, ցույց են տալիս, որ նախապատրաստ-վող ապստամբությանը տեղեկացված են եղել թե՛ ասորիները, և թե՛ քրդական որոշ աշիրեթներ. սա նշանակում է, որ հայկական զինված ուժերի խոշոր բեկորներից մեկը պահպանած տարածագոտին՝ Մուշ-Սասունը պետք է անպատճառ և պարտադրաբար նույնպես տեղե-կացված լիներ այս գաղտնի կապերի և նախապատրաստական գոր-ծողությունների մասին: Իսկ այդ պարագայում, Մուշ-Սասունում ազատագրական գաղտնի պատրաստությունների ղեկավար դերերից մեկն ստանձնելու էր ոչ այլ ոք, քան Տարոնի հոգևոր առաջնորդը, այսինքն՝ Աբրահամ արքեպիսկոպոս Մշեցին: Այսպիսի եզրակացու-թյան օգտին ուժգնորեն խոսում է ավելի ուշ շրջանի մի փաստ՝ չորս տասնամյակ անց Մշո Ս. Կարապետ վանքի առաջնորդ Հովհան ար-քեպիսկոպոսի եռանդուն մասնակցությունը Հովսեփ Էմինի ծրագ-րած հայկական ապստամբությանը[8]: Ավելին՝ 1763 թ. Էմինին գրած մի նամակում Հովհան արքեպիսկոպոսը վկայակոչում է ասորիների և եզդիների հետ վերահաստատված կամ, ավելի ճիշտ՝ վերանորոգ-ված նույնատիպ ազատագրական մի դաշինքի առկայությունը, ինչն ստիպում է կարծել, թե 1720-ական թթ. մինչև 1760-ական թթ. այդ գաղտնի կապը երբեք չէր մոռացվել.

> «Անցնող տասնամեկ ամիսը գրելով էի զբաղած: Ինձ շատ դյուրին եղավ ձեզմով շահագրգռել ու ձեր հերոսական մտածողու-թյամբն համակել Թուրքիո բոլոր կարևոր հայերը՝ Պոլիս, Զմյուռ-նիա, Կեսարիա, Թոքատ, Էրզրում, Տիարպեքիր...Վուեր (Վա՞ն -- Ա.Ա.) ևայլն, ևայլն... Գալով կռվողներուն, գիտցեք որ... ձեզ պի-տի դիմավորեն 40,000 մարտիկներ: Ասորիներ ևեզիտի քյուրտեր նմանապես պատրաստ են միանալու մեզ»[9]:

Ինչպես վերը նշել ենք, հայ ազատագրական շարժման անմիջական մասնակից է եղել Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը: Ահա նրա միջոցով էլ՝ (1717 թ. հուլիսից ի վեր[10]) Մշո Ս. Կարապետի վանահայր Աբրահամը պետք է տեղեկացված լիներ հայկական նախապատրաստվող ապստամբության: Սա նշանակում է, որ Մայր Աթոռի երևելի այն միաբանները, որ մոտ են կանգնած եղել Աստվածատուր կաթողիկոսին, տեղյակ են եղել Աբրահամ արքեպիսկոպոսի հետ եղած կապին: 1730 թ., Կարապետ Ուլնեցու մահից հետո, Աբրահամի հետ նախկինում ունեցած այս գաղտնի կապը պետք է լուրջ դեր խաղացած լիներ Աբրահամին անվարան և անհապաղ կաթողիկոսությունն առաջարկելու համար: Ընդ որում՝ երկու կողմն էլ պետք է գոհ լինեին Հայաստանի ազատագրության խնդրով տարիներ առաջ հաստատված իրենց հարաբերություններից և համագործակցությունից. այլ կերպ ասած՝ 1720-ական թթ. սկզբին Աբրահամն իր աջակցությունը պետք է հայտնած լիներ Աստվածատուր կաթողիկոսի ազատագրական ծրագրերին ու նպատակներին և անվերապահորեն օրհներ տարոնահայ զինյալների մասնակցությունը նախապատրաստվող համահայկական ապստամբությանը՝ այնպես, ինչպես 1722 թ. սեպտեմբերին վասպուրականցիների ապստամբական նախապատրաստություններն օրհնեց Աղթամարի կաթողիկոս Հովհաննես Ջորեցին: Այլապես՝ ազատագրական խնդրին Աբրահամ Մշեցու մերժողական կամ սառը վերաբերմունքի դեպքում, 1730 թ. նրան շտապ Ս. Էջմիածին հրավիրելը կարող էր նաև վտանգավոր լինել Աստվածատուր կաթողիկոսի մտերիմ միաբանների համար:

Մեր այս ենթադրությունը հիմնված է կողմնակի փաստերի համադրման ու վերլուծության վրա, այն հաստատող ուղղակի վկայություններ դեռևս հայտնաբերված չեն: Սակայն ուղղակի վկայությունների բացակայությունը միանգամայն բնական է, որովհետև վտանգավոր բոլոր փաստաթղթերը անվտանգության նկատառումներով ժամանակին ոչնչացվել են, հատկապես՝ եթե դրանք վերաբերել են Հայ եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյաներին և այն գործիչներին, որոնք շարունակում էին ապրել Հայաստանում:

Մի դիտարկում-հաստատում ևս: Արևելահայ ազատագրական շարժման գործիչները և Ս. Էջմիածինը, անվտանգության պահանջներից ելնելով, ոչ մի դեպքում չէին տեղեկացնելու իրենց նպա-

տակների մասին Կ. Պոլսի հայոց առաջնորդներին, մանավանդ Բարձր Դռան հետ մշտական կապ ունեցող (ու ինքնաբերաբար մշտապես վերահսկողության տակ գտնվող) Պոլսի հայոց պատրիարքներին:

Աբրահամ Կրետացու ընտրությանը նպաստած ցարդ անհայտ պարագաները

Աբրահամ Կրետացու ընտրությունը ևս ունի հետաքրքրական չբացահայտված դրվագներ:

1735 թ. հոկտեմբերի 1-ին Գրիգոր Շղթայակիրը մի նամակ է գրում Կոլոտին, որում խոսում է նաև Աբրահամ Կրետացի նորընտիր Ամենայն Հայոց կաթողիկոսի և Կոլոտի հարաբերություններում՝ 1734 թ. ինչ-ինչ պատճառներով առաջացած լուրջ գժտվածության մասին.

> «Եւ որովհետեւ Եղբայրդ Սուրբ առ Աստուած գնաց, եւ անուանակից նորա ի տեղի նորա նստաւ (իմա՝ Աբրահամ Բ Մշեցուն հաջորդեց Աբրահամ Գ Կրետացին - Ա.Ա.)՝ ո՞չ ապաքէն Ռ (1000)-ապատիկ լաւագոյն է, քան զայլ ապերախտսն եւ զանիրաւս. *ընդէ՞ր զթշնամութիւն ցոյց կուտաս, հո՛գի:* Եւ որովհետեւ քո գրով զնորա աշակերտ Յովաննէս վարդապետն բերեալ ես՝ ընդէ՞ր զխոստացեալդ ոչ կատարես, տալով նմա զիւր զվարդապետի զտեղն (իմա՝ Թրակիո-Թեքիրդաղի թեմը[11]): Վասնորոյ յստակ սրտիւ աղաչեմ զքեզ. զհին սիրելութիւն՝ յատելութիւն մի՛ փոխարկիցես: Աղաչեմ եւ դարձեալ աղերսեմ. վասն խաթեր հնացեալ ծերոյս եւ խոցեալ սրտիս, *ա՛յնպէս առնիցես, զի կրկին սէր ի միջի ձերում հաստատիցի եւ մի՛ խռովութիւն:* Եւ այն տղային տուր զվիճակ Հօրն իւրոյ: Յոյժ սաստիկ ստիպով գրեցի, չկարացի յերկարել. խնդրեմ, զի մի՛ լիցի անտես խնդիրն իմ, եւ լեր կրկին ողջ ի Տէր, ա՛մեն[12] (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.)»:

Մեկ տարի անց այս կնճիռը մնացել էր չլուծված, որովհետև 1735 թ. նոյեմբերի 14-ին Շղթայակիրը դարձյալ հիշեցնում էր Կոլոտին.

> «...զայս յուշ առնեմ քեզ աղերսիւ՝ զի իրիճայ եօլմայ կէլմիշ տըր (թուրքերեն՝ խնդրանքը ճամբու մեջ մտած է). իմ խաթերս համար զԹեքիրտաղու դիտողութիւն տուր Հոգեւոր Տիրի Յովհաննէս վարդապետին, զի դու գրեալ ես, թէ «եկ եւ տաց քեզ», ընդէ՞ր

խոստացեալսդ ջրեսցես. տուր եւ հայրախնամ սիրով լեր ընդ նմա վասն սիրոյ հնագոյն սիրելոյն մերոյ...

Եւ լուայ, թէ Սրբոյ Աթոռոյ նուիրակ Պետրոս վարդապետն այդր եկեալ է. եւ զնա եւս սիրով ընկալ, զի արդիւնք լիցի Սրբոյ Մօրն մերոյ՝ որ յայսչափ անտանելի տառապանաց միջի է:

Եւ ընդ Հոգեւոր Տիրին կատարեալ սիրով կաց՝ աղաչեմ, գիտէ Աստուած, զի ինձ անմխիթարիս՝ մեծ մխիթարութիւն եղեւ նորա լինիլն Հայրապետ, զոր Տէր հաստատ պահեսցէ»[13]:

Կոլոտի և Աբրահամ Կրետացու գժտվածության ակունքները պետք է փնտրել մեզ արդեն հայտնի այն փաստի մեջ, որ 1732 թվականին Կ. Պոլսում Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակ Ղազար Ջահկեցին՝ Կոլոտ պատրիարքի հետ իր ամենասուր ընդհարումներից մեկի ժամանակ, ապաստանում է Թրակիայում (Թեքիրդաղում), որտեղ էլ, երեք ամիս ջերմորեն հյուրընկալվելով տեղի հայոց առաջնորդ Աբրահամ Կրետացու մոտ (ինչպես ինքն է ասում՝ «հոգաբարձութեամբ նորին դիտի Տեառն Աբրահամու երջանկազարդ բաբունապետին»)՝ շարադրում է իր Դրախտ ցանկալի գիրքը: Այսինքն՝ Ղազար Ջահկեցուն Թրակիայում ապաստան տալով, Աբրահամ Կրետացին իր համերաշխությունն ու աջակցությունն է հայտնել և՛ Ղազարին, և՛ Ղազարի թիկունքում կանգնած Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Ահա այստեղից էլ Կոլոտի եւ Աբրահամ Կրետացու հարաբերությունները «հին սիրելութիւնից» վերածել էին «ատելութեան»: Ըստ երևույթին, Կոլոտը վիրավորվել էր իր թշնամու նկատմամբ Թրակիո առաջնորդի դրսևորած ընդգծված բարյացակամ վերաբերմունքից ու վերջինիս կաթողիկոս ընտրվելուց հետո անգամ չէր ցանկացել մոռանալ այս պատմությունը: Իհարկե, չի բացառվում, որ պառակտման հիմքում կարող են եղած լինել և ուրիշ պատճառներ:

1720-ական թթ. սկզբի դրությամբ Կոլոտի և Աբրահամ Կրետացու ջերմ հարաբերությունները, նրանց «հին սիրելութիւն»ը վկայված է 1723 թ. Կոլոտի և Գրիգոր Շղթայակրի հեղինակած մի հիշատակարանում, որտեղ Աբրահամ Մշեցին և Աբրահամ Կրետացին հիշված են իբրև մտերիմ բարեկամներ.

«...Եւ զհամաչունչ եւ զսիրով սիրելիսն մեր, եւ զմիեղեն եղբարսն, այսինքն՝ զերկոսին զԱբրահամ, գիտնական եւ զհանճարաշատ վարդապետսն. որ է մինն աթոռակալ սրբոյ Կարապետին եւ

վերատեսուչ Տարօնոյ, իսկ միւսն է՛ հեղինակ (իմա՝ առաջնորդ) Թրակիոյ, որք են ընդ մեզ՝ յամենայն գործս վասն Տեառն տան»[14]:

1736-1737 թթ. գրած իր Պատմութեան մեջ, Աբրահամ Կրետացին, հիշելով իր 1719-1720 թթ. այցը Երուսաղեմ, ինքն էլ բարի և հարգալից ընութագրումներ է տալիս Գրիգոր Շղթայակրին ու Կոլոտին.

«...ի պատրիարգութեան սրբոյն Սաղիմայ Գրիգորի ճգնազգեաց եւ հեզահոգի սրբազան վարդապետի եւ առաջնորդութեան Կոստանդնուպօլսոյ Յովհաննէս քաջաջան Աստուածաբան վարդապետի՝ աշակերտաց Վարդանայ վարդապետին Բաղիշեցւոյ ի վանից Ամրտօլւոյ»[15]:

Հետաքրքիր է, որ 1734 թվականին էլ, այսինքն՝ այն ժամանակ, երբ Կոլոտն իր նկատմամբ կոշտ դիրք էր բռնել, Կրետացին դարձյալ բարեմտորեն է հիշատակում նրան իբրև «պատրիարգի եղբոր մերոյ»[16]:

Շղթայակրի այն ակնարկը, թե Աբրահամ Կրետացու բարձրանալը Ս. Էջմիածնի գահին «ո՞չ ապաքէն Ռ (1000)-ապատիկ լաւագոյն է, քան զայլ ապերախտսն եւ զանիրաւս», վերաբերում է, առաջին հերթին, Ղազար Ջահկեցուն և հնարավոր է մի քանի ուրիշ բարձրաստիճան եկեղեցականների, որոնք, Շղթայակրի կարծիքով՝ ունեին կաթողիկոս ընտրվելու որոշակի հնարավորություններ, բայց Ղազարի պես թշնամաբար էին տրամադրված Կոլոտի դեմ: Ինչ վերաբերում է Ղազար Ջահկեցուն, ապա նա 1726 թվականից ի վեր ապրում էր Օսմանյան կայսրության սրտում՝ Կեսարիայում, Կ. Պոլսում և Զմյուռնիայում, ու դժվար թե օսմանյան իշխանություններն այլևս կասկածեին նրան՝ հայ ապստամբների կամ ռուսների և պարսիկների հետ գաղտնի կապեր ունենալու մեջ ու, ըստ այդմ էլ, արգելեին նրա ընտրությունը:

Ահա ուշադրություն պահանջող մի այլ հարցադրում: Թեև 1736-1737 թթ. հեղինակած իր Պատմութեան մեջ, Աբրահամ Կրետացին փորձում է ամեն կերպ ցույց տալ իր՝ իբր անսպասելիորեն և պատահականորեն կաթողիկոս ընտրվելը, մեր ունեցած տվյալները թույլ են տալիս լուրջ կասկածի ենթարկել ցայսօր անվերապահորեն ընդունվող այս վարկածի ճշմարտացիությունը:

Կետ առ կետ քննենք Կրետացու ներկայացրած վարկածը:

1. Կրետացին պնդում է, թե ինքը մեկնել է Ս. Էջմիածին, «քանզի զկարօտութիւն... ունէի ի մանկութենէ իմմէ... վասն սրբոց Աթոռոց եւ եւս վասն Հայաստան երկրի վանորայից եւ ուխտատեղաց»[17]: Սակայն, անհավատալի է, որ «զբոսաշրջություն» հիշեցնող այդպիսի մի ուխտագնացություն նա որոշել էր ձեռնարկել 1734 թվականին, այսինքն՝ ճիշտ այն պահին, երբ հյուսիսային Իրանն ու Այսրկովկասը դարձել էին օսմանյան և պարսկական բանակների միջև բախտորոշիչ մարտերի ասպարեզ, իսկ այդ սաստկացած պատերազմն էլ որևէ մեկի համար գաղտնիք չէր:

2. Կրետացին հավաստիացնում է, թե որոշել էր այցելել Ս. Էջմիածինն ու Մշո Ս. Կարապետի վանքը, բայց նա ժամանում է ուղիղ Ս. Էջմիածին, իր ասելով՝ թողնելով Ս. Կարապետի այցելությունը վերադարձի ճանապարհին: Այնինչ՝ նրա ուղևորության գիծը՝ Թեքիրդաղ-Թոխաթ-Կարին-Կարս-Էջմիածին[18], ընկած էր Մուշից շատ մոտ տարածության վրա: Եվ ավելի բնական կլիներ, եթե Աբրահամ Կրետացին Մուշ մտնելուց հետո նոր միայն ճանապարվեր դեպի իր «ուխտագնացության» ամենահեռավոր կետը՝ Ս. Էջմիածին:

3. Ըստ Կրետացու, 20 օր Ս. Էջմիածնում անցկացնելուց հետո, ինքը փորձում է վերադառնալ, սակայն Աբրահամ Մշեցի կաթողիկոսը նրան թույլ չի տալիս: Այս կապակցությամբ շատ հետաքրքիր են կաթողիկոսի բերած պատճառաբանությունները[19]. դրանք լույս են սփռում մի քանի կարևոր հանգամանքի վրա, որոնց մասին Աբրահամ Կրետացին նախընտրում է բացայայտորեն չխոսել: Ստորև, առանձին-առանձին, ներկայացնում ենք Աբրահամ Մշեցու փաստարկները և բացատրում դրանց ետնախորքը.

ա) «Զքեզ ինձ Աստուած առաքեաց, տեսանելով զխղճութիւնս իմ», այսինքն՝ կաթողիկոսն արդեն վատառողջ էր.

բ) «Եւ գիտեմ զհարազատութիւն քո ի հեռուն հետէ, եւ վկայէ հոգի իմ, զի բարեկամ եւ հաւատարիմ ես ինձ, որպէս եւ իմայնոցն, որպէս լուեալ եմ այսքան տարի, նաեւ՝ ի Սուրբ Գահիս» - կաթողիկոսի այս ակնարկի տակ պետք է անմիջապես հասկանանք Աբրահամ Կրետացու՝ Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակ Ղազար Ջահկեցուն ցուցաբերած բարոյական և նյութական մեծ աջակցությունը, հատկապես՝ 1732 թ. նրան Թրակիայում հյուրընկալելը.

գ) «Վասն որոյ այսմ ամի գոնէ ոչ թողում գնալ, այլ կաց մնայ ի գիրկս եւ գոգ մօր քո լուսոյ Սուրբ Էջմիածնիս եւ լեր ինձ խորհրդակից, ցաւակից եւ կարեկից». - փաստորեն, թեև հստակ այդ մասին չի ասվում, կաթողիկոսն Աբրահամ Կրետացուն նշանակում է իր հետնորդ աթոռակալը: Հայ եկեղեցու պատմության մեջ, հատկապես վայրիվերո ու վտանգավոր ժամանակաշրջաններում՝ շատ ընդունված ու պատմականորեն արդարացված միջոցառում էր կաթողիկոսի աթոռակալ-հետնորդ կամ նույնիսկ մի քանի աթոռակալ նշանակելը:

Հետագա դեպքերը հաստատում են այս ենթադրությունը: Հետևած երեք ամսվա ընթացքում՝ մինչև կաթողիկոսի մահանալը (նոյեմբերի 11), Աբրահամ Կրետացին հանդես է գալիս Մայր Աթոռում որպես անվիճելիորեն երկրորդ դեմք, ասել է թե՝ կաթողիկոսի աթոռակալ-հետնորդի դերում: Նա է, օրինակ, գիշեր-ցերեկ հսկում կաթողիկոսի մահճի մոտ ու նրա ձեռքերում էլ կաթողիկոսը մահանում է. «Եւ այսպէս աջ ձեռն ի մէջ ձեռացս գոլով հեշտ ու հանգիստ աւանդեաց զմաքուր հոգին իւր...»[20]: Նա է, որ կատարում է կաթողիկոսի թաղումը («ժամ արարի եւ օծի») և հաջորդ օրը, միաբաններին գլուխ անցնելով, այցելում նրա շիրիմը՝ «առեալ իմ զբոլոր ուխտ սուրբ Աթոռոյս գնացինք ի Գայիանէ»[21]:

Վերջապես, Մայր Աթոռի միաբաններն, առանց որևէ քննարկումների և տարակարծությունների, Աբրահամին են առաջարկում ստանձնել վեհապետի թափուր մնացած գահը: Այսպիսի միակարծությունը ևս հուշում է, որ Մայր Աթոռում վաղուց էին որոշում կայացրել Աբրահամ Կրետացուն հաջորդ կաթողիկոս ընտրելու մասին, և այս որոշումը բոլորովին էլ պայմանավորված չէր, ինչպես փորձում է ցույց տալ ինքը Կրետացին, սոսկ արտակարգ իրավիճակով:

Այսպիսով, Աբրահամ Կրետացին, առանց նույնիսկ պաշտոնական հատուկ հայտարարությունների և ավելորդ հրապարակման, ներքին կարգով, նշանակվել էր վատառողջ Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռակալ-հետնորդի պաշտոնին: Եվ այս ամենը այն պարագայում, որ նրա ժամանման պահին Ս. Էջմիածնում արդեն կար մի այլ աթոռակալ, որի անունը մեզ հայտնի չէ[22]:

Այս ենթադրությունը հաստատող մի լրացուցիչ փաստ էլ այն է, որ քաղաքականապես և ռազմականապես այն ծանր պահին,

երբ պարսկական զորքերը Նադիրի գլխավորությամբ մոտենում էին Երևանին ու Ս. Էջմիածնին, Աբրահամ Կրետացին բազմաթիվ այցելություններ է կատարում Արարատյան երկրի վանքերն ու բնակավայրերը՝ Հոհաննավանք, Սաղմոսավանք, Ուշի, Փարպի, Կարբի, Մուղնի, Օշական, Ս. Լուսաւորչի անապատ, Երևան, Խոր Վիրապ, Արկուռի, Հավուց Թառ, Աղջոց վանք, Գեղարդ, Գառնի, Նորք, Գետարգել[23]: Ինչպես ինքն է ասում, իր այցելությունների պահը համընկել էր այնպիսի ծայրաստիճան լարված իրադրության հետ, որ 1734 թ. սեպտեմբերի վերջին Աբրահամ Մշեցի կաթողիկոսը, հրաժարվելով Կրետացու հետ միասին այցելություններ կատարելու իր նախկին մտադրությունից, Ս. Էջմիածնից չբացակայելու որոշում է ընդունում, սակայն միևնույն ժամանակ, զարմանալիորեն, թույլ է տալիս, որ Կրետացին միայնակ շարունակի իր «ուխտագնացությունը».

«Մանաւանդ զի էր եւ ժամանակն խառնակ, եւ ազգի-ազգի զրոյցք գային ի լսելիս Վեհին վասն գալստեան Թահմազ[ղուլի]-խանին եւ շարժելոյ զօրացն պարսկային, փութացաւ զդարձն անդրէն առ ի սուրբ Աթոռն, զի հոգասցէ զհոգս ամենեցուն»:

Միթե՞ կարելի է հավատալ, որ պատերազմի օրեցօր մոտենալու այդպիսի վտանգավոր պահին Կրետացու այցելությունների բուն նպատակը եղել է ուխտագնացություն-զբոսաշրջությունը: Ամենևին:

Իրականում՝ Ս. Էջմիածին ժամանելուց հետո Աբրահամ Կրետացին անմիջապես անցել է միանգամայն այլ խնդիրների լուծմանը: Մի դրվագ օգնում է պարզել, թե ի՛նչ խնդիրների մասին է խոսքը: Մեջբերելով Երևանի օսմանցի ռայիսին տված իր խիստ պատասխանը (որում նա իբրև թե հրաժարվում էր Մայր Աթոռի և Երևանի օսմանյան վարչության իրեն առաջարկվող կաթողիկոսությունից)՝ Աբրահամ Կրետացին նշում է, որ վատածանոթությունը Արարատյան երկրին լուրջ թերություն է Ս. Էջմիածնի գահակալի որևէ թեկնածուի համար.

«Զեմ բաւական այդմ գործոյ եւ ոչ ունիմ կարողութիւն յամենայն կողմանց: Մանաւանդ՝ զարիպ եւ օտար եմ: Ուխտի աղաւաւ եկեալ եմ այսր»[24]:

Այս խոստովանությունը հիշեցնում է Կարապետ Ուլնեցու թերությունների մասին Սիմեոն Երևանցու արած դիտողությունն առ այն, որ նա «Աթոռոյս որպիսութեան, պատուոյն եւ իշխանութեան ամենեւին անտեղեակ» էր[25]:

Ս. Էջմիածին ժամանելուն պես՝ ճիշտ նույն բացը փորձել է արագ լցնել Աբրահամ Կրետացին և հաջողությամբ լուծել է այդ խնդիրը. այն է՝ իր այցելությունների ընթացքում ծանոթացել է Արարատյան երկրին և հայ աշխարհիկ ու հոգևոր ավագանուն, որը վճռորոշ դեր էր ունենալու նրան կաթողիկոս ընտրելու ժամանակ: Բացի այդ, նա զբաղվել է նաև Մայր Աթոռի տնտեսական գանձան հարցերի կարգավորմամբ (հավանաբար, վատառողջ կաթողիկոսի հանձնարարությամբ): Կարծես այս է վկայում նաև Աբրահամ Կրետացու՝ Ս. Էջմիածին ոտք դնելուն պես դրսևորած անմիջական հետաքրքրությունը տեղական ապրանքների և գների նկատմամբ, որ ստիպել է Ս. Տեր-Ավետիսյանին գրել, թե՝ «Կրետացին անպայման ունեցել է և առևտրական ջիղ»[26]: *Հիշենք նաև, որ 1733 թ. հունիսի 11-ի վերը տարբեր առիթներով մեկնաբանված նամակում Գրիգոր Շղթայակիրն ակնարկում էր Աբրահամ Մշեցու օրոք Մայր Աթոռի ունեցած դրամական ծանր պարտքերը՝ «Սրբոյ Եկեղեցոյդ պարտքն եւս դիզեալ կայ»: Սա հաստատում է նաև ինքը Կրետացին.*

> «Յետ այսորիկ (իմա՝ կաթողիկոս ընտրուելուց յետոյ, Ա.Ա.) սկսայ մտախոհ լինիլ եւ յամենայն զօրութենէ ջանալ եւ արիանալ վասն մեծի գործոյն եւ կառավարութեան Սուրբ Աթոռոյն մեծի. եւ զի անծանօթ գոլով իմ երկրի, եւ մարդկանց, եւ միաբանից, եւ ամենայն ելից եւ մտից եւ արարողութեան եւ վասն պակասութեան փողից, որս ոչ գոյր ամենեւին: Իսկ վանից ծախքն՝ բազում եւ անթիւ»[27]:

Այս ամենն ստիպում է հավանականության բավական մեծ աստիճանով ենթադրել, որ Թրակիայից ճանապարհվելով դեպի Ս. Էջմիածին՝ Աբրահամ Կրետացին արդեն տեղեկացված էր Մայր Աթոռում իրեն կաթողիկոսացնելու մտադրության մասին, ինչպես նաև արդեն հայտնած պետք է լիներ իր նախնական համաձայնությունը: «Ուխտադնացության» ձեռնարկումով նա արդեն լիովին հաստատում էր իր մտադրությունները:

Սակայն առաջանում է երկու հարց, որոնց կպատասխանենք իրարահաջորդաբար:

Նախ՝ ինչու՞ էին Աբրահամ Մշեցի կաթողիկոսը և Մայր Աթոռի միաբանները որոշել հաջորդ կաթողիկոս ընտրել հե՛նց Աբրահամ Կրետացուն:

Պատասխանը բխում է մեր նախորդ քննության արդյունքներից.

1) Աբրահամ Կրետացին վաղուց ի վեր լավ հարաբերություններ ուներ Աբրահամ Մշեցու հետ՝ առնվազն սկսած 1719-1720 թթ. Երուսաղեմում միասին անցկացված ժամանակներից:

2) Իր թեմում հյուրընկալելով Ս. Էջմիածնի ծայրագույն նվիրակ Ղազար Ջահկեցուն՝ Կոլոտ պատրիարքի հետ վերջինիս լուրջ բախման մի ժամանակաշրջանում, Կրետացին ապացուցել էր իր հավատարմությունը Մայր Աթոռի դավանական հարցերում վարած ավանդական կարծր դիրքորոշմանը և Հայ եկեղեցու ընդհանուր գործերում Ս. Էջմիածնի անառարկելի գերագահությանը: Կրետացու այս դիրքորոշումներում համոզվելու հնարավորություն է ունեցել անձամբ Ղազար Ջահկեցին, որն էլ այդ մասին պետք է տեղեկացրած լիներ Ամենայն Հայոց կաթողիկոսին:

3) Աբրահամ Կրետացին օսմանահպատակ էր, իր ամբողջ նախորդ կյանքը ապրել էր իրանյան սահմանից հեռու գտնվող Թրակիայում և, ի տարբերություն արևելահայ կղերականների, հակաօսմանյան որևէ կապերի մեջ կասկածվել չէր կարող: Ուստի՝ Կրետացու արագ ընտրությունը չէր ստիպելու Երևանի փաշային Բարձր Դռնից լրացուցիչ ճշտումներ և հաստատում խնդրել: Այսինքն՝ Հովհաննես Կոլոտ պատրիարքը հայտնվելու էր (ինչպես և 1729 թ. աշնանը՝ Աբրահամ Մշեցու ընտրության ժամանակ) կատարված փաստի առջև ու հնարավորություն չէր ունենալու Ս. Էջմիածնի գահին առաջադրել իրեն ցանկալի եկեղեցական գործչի կամ գուցե իր իսկ թեկնածությունը:

4) Աբրահամ Կրետացին հայ եկեղեցու ամենահեղինակավոր գործիչներից էր, որն իր անթերի կենսուղով ու նաև պատկառելի տարիքով ընդունելի էր համարվելու բոլորի համար. նրա ընտրվելուց հետո՝ հայ հոգևորականության այս կամ այն թևում բուռն ընդդիմություն և երկպառակումներ առաջանալ չէին կարող.

Երկրորդ հարցը. ինչու՞ է Աբրահամ Կրետացին քողարկել Ս. Էջմիածին ուղևորվելու իր բուն նպատակը և ներկայացրել այն իբրև մի սովորական ուխտագնացություն:

Նշենք երեք հնարավոր պատճառ.

ա) եկեղեցական բարձրաստիճան գործիչներից շատերը բարի աչքով չէին նայելու հայոց եկեղեցու կանոնակարգին հակառակ՝ Արարատյան երկրի աշխարհիկ ու հոգևոր գործիչների որոշումով միայն, Աբրահամ Կրետացու կաթողիկոս դառնալուն.

բ) Հովհաննես Կոլոտ պատրիարքը, սրտի խորքում վիրավորված լինելով Ղազար Ջահկեցուն Թեքիրդաղում ջերմորեն հյուրընկալելու պատմությունից, կարող էր ուղղակի ընդդիմանալ Աբրահամի կաթողիկոսանալուն և, օգտագործելով Կ. Պոլսում իր ունեցած կապերն ու լծակները, բարդություններ առաջացնել նրա ճանապարհորդության, ընտրության, ինչպես նաև հետագայում այդ ընտրությունն օսմանյան արքունիքում հաստատելու առջև.

գ) ուխտագնացության մեկնողները սովորաբար ազատվում էին մաքսերի մի զգալի մասից, իսկ Աբրահամ Կրետացին Ս. Էջմիածին էր տանում մեծ թվով ապրանքներ[28], այդ թվում՝ Զմյուռնիայի առաջնորդ Ղազար Ջահկեցու ուղարկած արժեքավոր նվերները[29]: Ահա այս երեք հիմնական դրդապատճառներն էլ ստիպել են Աբրահամ Կրետացուն ներկայացնել իր Ս. Էջմիածին կատարած ուղևորությունը իբրև ուխտագնացություն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 24, 32 և այլն:

[2] **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, էջ 6, 32, 187:

[3] **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում*. **Г. А. Эзов**, *Сношения Петра Великого с армянским народом*, док. 9, пункт 25. հմմտ. **Լեո**, *Երկերի ժողովածու: Հայոց պատմություն*, Երրորդ հատոր, Գիրք երկրորդ (Երևան, 1973), էջ 56:

[4] Հիշատակարանն ամբողջությամբ զետեղված է Հավելված Ե-ում, իսկ նրա մանրամասն քննությունը տե՛ս **Armen M. Ayvazyan,** “The Secret Meeting of Armenians on Lim Island in 1722: Concerning the Possible Involvement of Western Armenians in an All-Armenian Liberation Movement),“ in

Jбnos M. Bak and Pйter Banyo, eds., *Issues and Resources for the Study of Medieval Central and Eastern Europe: Reports and Articles* (Department of Medieval Studies, Central European University and the Committee on Centers and Regional Associations of the Medieval Academy of America: Budapest-Cambridge, MA, 2001), pp. 59-68.

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 62-63: Այդ ժամանակաշրջանում հայ-ասորական բարեկամական հարաբերությունների մասին վկայում են 1737 թ. հունիսի 25-ին Երուսաղեմի հայոց պատրիարք Գրիգոր Շղթայակրի՝ Պոլսից գրած մի նամակի՝ հետևյալ հետաքրքրական տողերը. «Ասորոց Հալապու դէտ (իմա՝ առաջնորդ, Ա.Ա.) Գէորգ վարդապետն գրեաց մեզ՝ թէ «գրեա՛ք ո մարդոց, որ մեր վանաց տիրութիւն անեն մինչեւ մեք մարդ ըղրկեմք»: Եւ ես իւրեանց կաթողիկոսին գրեալ եմ, թէ «լաւ մարդ մի ըղրկես», վանորոյ տիրութիւն անէք վան Աստուծոյ, *զի մե՛ր են*» (ընդծումն իմն է՝ Ա.Ա.). - «Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*, 1973, էջ 148:

[6] Տե՛ս Л. Меликсет-бек, “К биографии сподвижника Исраеля Ори - Минаса вардапета.” - *Տեղեկագիր* (հաս. գիտ.), 1946, No. 1, էջ 79:

[7] **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումները...*, էջ 95-96, 156-157, 161, 275:

[8] Հովնան արքեպիսկոպոսի գործունեության մանրամասն քննության մասին տես՝ **А. Р. Иоаннисян**, *Иосиф Эмин* (Ереван, Изд. ГУ, 1945), сс. 145-161, 230-235.

[9] Տե՛ս Հովսեփ Էմինի կյանքն ու գործունեությունը, նշվ. աշխ. էջ 267. Հմմտ. *The Life and Adventures of Joseph Emin, an Armenian*, pp. 234-235. cf. pp. 228-229.

[10] Այսինքն՝ այն պահից, երբ Գրիգոր Շիրվանեցին մեկնեց Կ. Պոլիս՝ ստանձնելու Երուսաղեմի պատրիարքի պաշտոնը (Հմմտ. **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 32):

[11] Թեքիրդաղ=Թագավոր-դաղ=Ռոտոստո: Թագավոր-դաղ են անվանել 1606-1607 թթ. Անի-կամախից, Երզնկայից և Դերջանից այստեղ տեղափոխված հայերը՝ ի հիշատակ Հայաստանի Թագավոր-դաղի (**Ս. Տեր-Ավետիսյան**, «Աբրահամ Կրետացու հիշատակարանը», էջ 288, ծնթ. 1):

[12] «Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*, 1972, էջ 469-470:

[13] Նույն տեղում, էջ 471:

[14] **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 221:

[15] **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, էջ 32:

[16] Նույն տեղում, էջ 33:

[17] Նույն տեղում:

[18] **Ս. Տեր-Ավետիսյան**, «Աբրահամ Կրետացու հիշատակարանը», էջ 288, 316:

Ս. Էջմիածին ուղևորվելիս, Կարինի միջով էին անցել նաև Կարապետ Ուլ-նեցին (1728 թ.), Աբրահամ Մշեցին (1729 թ.) և Ղազար Ջահկեցին (1737 թ.):

[19] **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, էջ 34:

[20] Նույն տեղում, էջ 40-41:

[21] Նույն տեղում, էջ 42:

[22] Աբրահամ Կրետացին իր ծոցի տետրակում նշել է, որ Ս. Էջմիածին ժամանելուց հետո «Աթոռակալին» է հանձնել 2 ոսկի մի անգամ և 1 ոսկի՝ մյուս անգամ (տե՛ս **Ս. Տեր-Ավետիսյան**, «Աբրահամ Կրետացու հիշատակարանը», էջ 320-321):

[23] **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, էջ 35-39:

[24] Նույն տեղում, էջ 44:

[25] *Ջամբռ*, էջ 235-236:

[26] **Ս. Տեր-Ավետիսյան**, «Աբրահամ Կրետացու հիշատակարանը», էջ 290, 317:

[27] **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, 46-47:

[28] **Ս. Տեր-Ավետիսյան**, «Աբրահամ Կրետացու հիշատակարանը», էջ 288-291, 310-315, 318-321:

[29] Նույն տեղում, էջ 320:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԵՐՋԱԲԱՆ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատասխան՝ ուսումնասիրության սկզբում առաջադրված հարցին

Ի մի բերենք ուսումնասիրության սկզբում առաջադրված հարցի պատասխանը, որ ստացել ենք ամբողջ քննության արդյունքում:

1. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությանը Բջնիի, Հաղբատի, Ս. Թադեոսի և Տաթևի վանահայր-առաջնորդների հավանություն տալու կանոնը պատմականորեն ստույգ է:

2. Այս կանոնն առաջացել է 1705 թ. Նահապետ Եղեսացի կաթողիկոսի մահից հետո, երբ Աղեքսանդր Ջուղայեցու կաթողիկոսանալով վերջ դրվեց արևելահայ հոգևորականության շրջանում խորապես վարկաբեկված արևմտահայ Եղիազար Այնթապցի (1682-1691) և Նահապետ Եղեսացի (1691-1705) կաթողիկոսների կղերական կուսակցության կառավարմանը: Ընդ որում՝ այդ կուսակցությանը հաճախ վերագրվում էր լատինամետ ընթացք: Կանոնը պետք է հաստատված լինի Աղեքսանդր Ջուղայեցու գահակալման տարիներին՝ 1705-1715 թթ., առավել հավանական է 1708 թ., երբ կաթողիկոսական ընտրությունների կարգի որոշ հարցեր արծարծվեցին հատուկ կոնդակով:

3. Այս կանոնը խախտվել է 1726 թ. փետրվարին, երբ Կ. Պոլսում Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվել Կարապետ Բ Ուլնեցին

(1661-1729): Թեև վերջինս հիմնականում հաջող է կատարում իր պարտականությունները և կարողանում է լավ հարաբերություններ հաստատել օսմանյան նորելուկ իշխանությունների հետ, այնուամենայնիվ, իր կենսագրական աղերսների պատճառով, արևելահայ կղերը դիտում է նրան որպես Եղիազար Այնթապցու և Նահապետ Եղեսացու մերժելի կուսակցության ներկայացուցիչ:

4. Կ. Պոլսում Կարապետ Ուլնեցուն Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրելու ընթացքի վրա պետք է ուղղակիորեն ազդած լիներ Բարձր Դուռը: Վերջինս ցանկանալու էր Էջմիածնի գահին բազմած տեսնել ո՛չ թե իրեն վատածանոթ արևելահայ եկեղեցական գործիչներից որևէ մեկին, որը կարող էր պարսկական կամ ռուսական իշխանությունների հետ նախկինում կապեր ունենալ, կամ էլ՝ Արցախում ու Սյունիքում թուրքերին հաջողությամբ դիմադրող հայ զինվորության հնարավոր գաղտնի աջակիցն ու համախոհը լինել, այլ հե՛նց Կարապետի պես ողջ կյանքն Օսմանյան երկրում պաշտոնավարած վստահելի մի անձի:

5. Ղազար Ջահկեցին, իր «Դրախտ ցանկալի»-ում արծարծելով չորս աթոռների խնդիրը, արտահայտել է արևելահայ կղերի անհանգստությունը՝ Կ. Պոլսի 1726 թ. ընտրությունների հնարավոր կրկնության առթիվ: Ըստ որում, Ղ. Ջահկեցին ցանկացել է առավել կշիռ ու «լեգիտիմություն» հաղորդել այս կանոնին և այդ նպատակով դիտավորյալ դրա սահմանումը ժամանակագրորեն հետ է տեղաշարժել՝ մոտավորապես XVIII դարի սկզբներից դեպի հեռավոր IX դար: Ջամչյանը փորձել է սրբագրել Ղազար Ջահկեցուն, սակայն կանոնի ստեղծումն սխալմամբ վերագրել է 1114 թվականին: Հետագա հեղինակները նույնպես թյուրիմացության մեջ են եղել, փորձելով կամ մերժել կանոնի գոյությունն առհասարակ (Վարդան Հացունի) կամ վերագրել այն XIII-XIV դարերին (Ղևոնդ Ալիշան, Լևոն Խաչիկյան):

* * *

Հայաստանը և հայոց եկեղեցին XVII-XVIII դարերում

XVII-XVIII դարերում Հայաստանի աշխարհաքաղաքական դրությունը սեփական ուժերով ազատագրվելու հնարավորություն գրեթե չէր ընձեռում. Հայաստանը քրիստոնյա երկրներից հեռու էր, բաժանված ու չորս կողմից շրջապատված էր հզորագույն մահմեդական տերությունների՝ Սեֆյան Իրանի և Օսմանյան կայրության միջև: Քրիստոնյա աշխարհի՝ Օսմանյան կայրության դեմ վարած պատերազմները չէին կարող միասնական ընդհանուր ճակատ ստեղծել հայ ազգային-ազատագրական շարժման հետ (ի տարբերություն բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի), մանավանդ, որ մինչև XVII դարի երկրորդ կեսը օսմանցիների պատերազմները եվրոպական պետությունների դեմ հարձակողական էին ու հաջողակ: XVIII դարի սկզբի (ինչպես և XIX դարի վերջի-XX դարի սկզբի) հայ ազատագրական շարժումները բնորոշվում էին, մասնավորապես, նրանով, որ պոտենցիալ հնարավորություն ունեին միաձուլվելու՝ Օսմանյան կայսրության և Իրանի դեմ Ռուսաստանի մղած պատերազմների հետ:

1375 թ. Կիլիկյան Հայաստանի կործանմամբ՝ միակ ազգային-պետական հաստատությունը, *որ շարունակեց գոյատևել՝ Հայ եկեղեցին էր, որը հետագա օտար երկարատև տիրապետության շրջանում՝ ընդհուպ մինչև XX դար, ստիպված իր վրա էր ստանձնել ազգի առաջնորդի դերակատարումը: Ամենածանր XV-XVIII դարերում, երբ Հայաստանի պետականությունը կործանվել էր, իսկ ազգային զինուժը ոչնչացվել ու անհետացել էր ասպարեզից (հայկական առանձին զորամիավորումներ էին պահպանվել միայն Հայաստանի որոշ լեռնային շրջաններում, Վրաստանում ու պարսկական զորքերի կազմում)՝ Հայ եկեղեցին մեծ գործ կատարեց. պահպանեց ազգային ինքնագիտակցությունը, կազմակերպեց ազգային կրթությունը, հնարավորին չափով առաջ տարավ մշակույթը, ավելին՝ գաղտնի դիվանագիտական գործունեություն ծավալեց Հայաստանը քրիստոնյա մեծ տերությունների օգնությամբ մահմեդական լծից ազատագրելու համար ու նաև այդ ուղղությամբ որոշակի գաղտնի նախապատրաստական աշխատանք տարավ հայկական միջավայրում: Սա թերևս առա-*

վելագույնն էր, որ թուրք-պարսկական տիրապետության պայմաններում հնարավոր էր իրականացնել և իրականացվեց: Իսկ 1720-ական թվականներին եկեղեցին հայոց վերածնված զինուժի ոգեշնչողն ու կառուցողներից էր: Բնականաբար, միամտություն կլիներ եկեղեցուց ակնկալել ռազմաքաղաքական կառույցներին հատուկ հմտություններ, կարողություններ ու փորձառություն: Եկեղեցին ուներ ազատագրական շարժումներն արդյունավետորեն ծրագրելու և գլխավորելու կառուցվածքային ներհատուկ սահմանափակումներ:

XV-XVIII դարերում Հայոց եկեղեցին միակ համահայկական հաստատությունն էր: *Այս իրողությունը ճանաչել են և՛ հայերը, և՛ օտարները: Որպես այդպիսին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը նաև միակ կառույցն էր, որ մշակում էր Հայաստանի և ամբողջ հայության խնդիրներին վերաբերող քաղաքականություն՝ ներառյալ ապագա անելիքների առումով: Հայ ազատագրական շարժումների ղեկավարները միշտ կապվում էին Մայր Աթոռի և Ամենայն Հայոց կաթողիկոսների հետ՝ ստանալու համար նրանց աջակցությունն ու օրհնանքը: Երբեմն էլ այդ շարժումները նախաձեռնվում և ուղղորդվում էին հե՛նց Մայր Աթոռից:*

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը համահայկական ամենահեղինակավոր կենտրոնն էր, *հայությանը Հայաստանի հետ կապող ճգողական ամենահզոր կետը:*

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մշակված ազգային-եկեղեցական գաղափարախոսությունը համահայկական էր *և՛ իր բովանդակությամբ, և՛ իր նպատակներով: Հայկական «պաշտոնական» այդ գաղափարախոսությունը քարոզվում էր Հայաստանում և ի սփյուռս աշխարհի, որտեղ կար հայկական համայնք և եկեղեցի, իսկ քարոզիչներն էին Ս. Էջմիածնի նվիրակները, հայ բարձրաստիճան կղերը, ինչպես նաև հայ հոգևոր և աշխարհիկ մտավորականությունը: Սակայն հայկական գաղափարախոսության այն տարրերը, որոնք վերաբերում էին Հայաստանի ազատագրությանն ու անկախության հաստատմանը, քարոզվում էին գաղտնաբար՝ բանավոր կամ քիչ ընդօրինակվող ձեռագրերում: Տպագիր նյութերում ազատագրական թեման միայն ակնարկվում էր, քանի որ տպագիր գրականությունն ուներ մեծ տպաքանակ և լույս էր ընծայվում ազգի ղեկավար շրջանակների հովանավորությամբ և վերահսկողությամբ, այ-*

սինքն՝ վտանգ կար, որ մահմեդական տիրակալները կարող էին մեղադրել և ծանր պատիժների ենթարկել Հայ եկեղեցու առաջնորդներին:

Ընձեռված հնարավորությունների սահմաններում, Հայ եկեղեցու պայքարն ընդդեմ մահմեդականության և կաթոլիկության՝ կարելի է հիմնականում հաջողված համարել, թեև թերացումներն ու ձախողումները նույնպես քիչ չէին: Անհաջողությունների պատճառներից էին Հայ եկեղեցու արևելահայ և արևմտահայ հատվածների միջև ծագած խնդիրները, որոնք, սակայն, անխուսափելի էին՝ Իրանի և Օսմանյան կայսրության միջև Հայաստանի քաղաքական բաժանման պայմաններում:

Հայոց պետականության բացակայության այդ դարաշրջանում Ամենայն Հայոց կաթողիկոսների դիրքը հույժ կարևոր էր ոչ միայն քաղաքական, վարչական, տնտեսական, այլև գաղափարախոսական ասպարեզում ու նաև յուրաքանչյուր հայի մտայնության մեջ: Ամենայն Հայոց կաթողիկոսներին հայերը պաշտում էին որպես ազգի գլուխ և հոգևոր առաջնորդ:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ք

(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐ)

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ XV-XVII ԴԱՐԵՐՈՒՄ

(Երկու հնատիպ վավերագրի քննություն)

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնական «Հասկ» ամսագրում 1970 թ.՝ նորահայտ հայ հնատիպ գրքերի մասին Լևոն Մինասյանի հրապարակած հաղորդման մեջ նկարագրված էին նաև Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում պահվող երկու, ըստ հեղինակի՝ Կոնդակ, *որոնք 1693 թ. տպագրվել էին Նոր Ջուղայի տպարանում՝ երկու հարյուր օրինակով, մեկական էջի վրա, մեկի չափերը 80x28 սմ, մյուսինը՝ 44x35 սմ: Նկարագրության մեջ ասված էր, թե «երկու կոնդակի բովանդակությունն էլ բողոք ու հանրաստորագրություն է կաթողիկոսական ընտրության շուրջ»: Նշված էր երկրորդ վավերագրի խորագիրը՝ «Յաղագս կարգի կաթողիկոս ձեռնադրութեան, գրեալ ի Մովսիսէ վարդապետէ Բջնեցոյ. համաձայնութեամբ սրբազան վարդապետաց եւ եպիսկոպոսաց», նշված էր նաև, որ այն ստորագրել են 27 հոգի՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, խոջաներ և ուրիշներ (անունները չեն հիշատակված)[1]: Այս տեղեկությունները, բնականաբար, վավերագրերի մասին առարկայական պատկերացում կազմելու համար բավարար չէին:*

Նույն վավերագրերը նկարագրվել են նաև Երևանում լույս տեսած՝ 1512-1800 թթ. հայ տպագիր գրքի կոթողային մատենագիտության մեջ[2]: Այս նկարագրությունը ևս, որ կատարված է Լ. Մինասյանի՝ Հայաստանի Ազգային գրադարանին ուղարկած լուսանկարների հիման վրա, էական նորություն չունի:

Ինչևիցե, ծանոթանալով Ազգային գրադարանում պահվող վերը նշված լուսանկարներին, այդ փաստաթղթերի մեջ տեսանք քննության կարոտ բազմաթիվ հարցեր և խնդիրներ, որոնք թելադրեցին պատրաստելու այդ վավերագրերի ներկա՝ ծանոթագրված հրատարակությունը:

Սկզբից ևեթ նշենք վավերագրերը նկարագրած հեղինակների ուշադրությունից վրիպած կարևոր երեք փաստ.

Ա. թեև երկու փաստաթուղթն էլ տպագրվել են միաժամանակ՝ 1693 թ. մայիսի 1-ին, դրանցից մեկը գրվել էր 28 տարի առաջ՝ 1665 թ.: Հետևաբար, որքան էլ այս վավերագրերը փոխկապակցված են թե՛ միասին տպագրված լինելու, թե՛ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության կանոնակարգին վերաբերելու առումով, դրանով հանդերձ, նրանցից յուրաքանչյուրը պահանջում է առանձին մոտեցում և քննություն:

Բ. Այս վավերագրերը (նկարագրողների կոչածի նման) կոնդակ, այսինքն՝ հայրապետական կամ առաջնորդական ուղերձներ չեն, այլ մեկը 1665 թ. Արևելահայաստանի մի խումբ երևելի հոգևոր և աշխարհիկ գործիչների գումարած ժողովի որոշումն է, իսկ մյուսը՝ 1693 թ. ջուղահայության անունից Արևելահայաստանի հոգևոր կենտրոններին առաքված շրջաբերականը:

Հ. Տեր-Հովհաննիսյանցն դեռևս 1881 թ. ամբողջությամբ հրապարակել է 1693 թ. շարադրված շրջաբերականը՝ առանց որևէ քննության՝ «յաղագս լինելոյ ազգային հնութեան, թէպէտ արտաքոյ կարգի պատմութեանս է գործ»[3]: Սակայն, այս արժեքավոր վավերագիրը հետագայում անուշադրության է մատնվել, չարժանանալով որևէ քննության[4]: Այդ իսկ պատճառով հրատարակում ենք և՛ այդ բնագիրը (տողատակում նշանակելով Տէր-Հովհաննիսյանցի շեղումներն ու թյուրընթերցումները և բացատրելով օտար բառերը), և՛ 1665 թ. ժողովի որոշումը, այնուհետև ենթարկում դրանք պատմական մանրազնին քննության, որի տրամաբանությանը հետևելով էլ վավերագրերը հրապարակել ենք ժամանակագրական հակադարձ կարգով:

Ա. ՆԱՀԱՊԵՏ ԵԴԵՍԱՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ա վավերագիր (1693 թ.)

«ՍՈՒՐԲ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՊԱՇՏՕՆԱԿՑԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԱՑ *հաւատարմաց, երջանկացելոց եղբարց ճշմարտախոհից եւ ուղղասիրաց, վերադիտողացդ սրբազանից զետեղելոց ի գերագահ եւ ի գերահռչակ, ի սուրբ եւ ի սրբարար Աթոռդ Էջմիածին՝ ի մայրդ հա-*

սարակաց, նաեւ՝ որոց ընդ հովանեաւ դորին որդիացելոց յաշխարհիդ Արարադայ եւ յԱտրպատականի. քահանայապետից եւ քահանայից, եւ համօրէն լրման ուխտի ժառանգաւորաց եւ վիճակաւորաց սուրբ եկեղեցոյ. ողջո՛յն ի Քրիստոս մատուցանեմք, սիրալրական սիրով սրբութեան, երկնաւոր խաղաղութեամբն հանդերձ, մեք՝ ի Շօշ եղեալ քրիստոնէախումբ դասք եկեղեցականաց եւ աշխարհականաց:

Ընդ որոյ եւ որով ծանուցանեմք պատուականութեան ձերոյ զեղելոց իրաց դիպելոց, որ ի մերումս եղեալ թշուառութեան ամանակի յանզգուշութեան եւ յանպատրաստութեան մերոյ պատճառէ, որով կամք ամենեքեան երերեալ եւ տատանեալ՝ իբրեւ զնաւ խռովեալ յալեաց ծովու: Քանզի սկիզբն եւ աւարտ խաղաղութեան զբարեկարգութիւնն լինել[5] իմանամք, զի ուրանօր բարձեալ է բարեկարգութիւն՝ արմատացեալ լինի աղմուկ խռովութեան, որպէս եւ տեսանեմք մերովք տեսանելեօք: Քանզի որքան վախճան առեալ է ի կենցաղոյս ընդ երանելիսն հանգուցեալ երջանիկ հայրապետն մեր Տէր Եղիազար՝ վրդովումն խռովութեան ոչ պակասի ի մէնջ: Պատճառն՝ անխոհեմ եւ անհանճար մարդոց գործ եւ արարմունք, որք յիւրեանց փառամոլութեանց ախտիցն ձգեալք եւ պատրեալք[6], որոց գլուխ եւ զօրավիդ զԱստապատցի Մինասն, որ ո՛չ գրոց աշակերտեալ ի մանկութենէ եւ ո՛չ ճշմարտութեան վարուց հետեւեալ, ո՛չ զտեսականն ծանուցեալ եւ ո՛չ գործնականին մասին հաղորդեալ, այլ զօրէն գռեհկաց զերկրաւորս եւեթ ողջունեալ եւ ի նոյնն ցանկ դեգերեալ, ժամադիր եղեալ ընդ Նահապետին ձեռագրով եւ կնքով միմեանց, թէ՝ «միշտ ի քո կաթուղիկոսութեանդ ես եղէց աթոռակա՛լ»: Այսու պայմանաւ յառաջեցուցեալ զայդ գործ, որ մեզ ամենեցուն ստոյգ եւ իրաւապէս յայտնի եղեւ, որ այդ այդպէս է: Եւ առաւել քան զայդ, գիտակ եղաք ամենայնի, զոր չէ պարտ մի ըստ միոջէ արձանացուցանել ի գիրս:

Արդ, ո՞վ իցէ Աստապատցի Մինասն, որ զայդ առնիցէ: Մի՞թէ ազգս արծաթագին է հօր դորա՛, որ ում[7] եւ կամիցի՝ վաճառիցէ յաղագս պորտոյ եւ յորովայնի իւրո՞յ: Եթէ այդպիսի է կարգ եւ կանոն կաթուղիկոս ձեռնադրութեան, ո՞վ է[8] պակաս քան զնա, որ ոչ կարիցէ զոմն կատարօղ ախտի իւրոյ ձեռնադրել կաթուղիկոս: Քանզի ի ձերում աշխարհի յոլովք գոն վանորայք եւ եպիսկոպոսունք,

նաեւ՝ ի մերս աշխարհի: Եթէ այդպէս իցէ, որ առանց ընտրութեան եւ վկայականի թղթոյ ձեռնադրեալն է կաթուղիկոս, որում պարտ է հնազանդել՝ ո՞վ է, որ ոչ կարիցէ իբրեւ զԱստապատցին օծանել զոք ի պատիւ կաթուղիկոսութեան: Ո՞վ է, որ պակա՛ս է քան զնա, որ օծեալ նորա լիցի կաթուղիկոս, եւ այլոցն՝ ո՛չ: Եթէ նորայն ընդունելի է, ուրեմն այլոցն պա՛րտ է լինիլ եւ ընդունելի, իսկ թէ այլոցն ո՛չ, ուրեմն՝ եւ նորայն ո՛չ: Տի՛նա, որ Աստապատցին ոչ է ի յարգի[9] հասարակաց, այլ յոռի եւ անարգ քան զամենեսեան՝ յաղագս անուսման եւ անվարժութեան իւրոյ: Զոր տգիտութիւնն մայր գոլ սահմանեցին ամենայն մոլութեանց, որովք դա՛ կայ պարաւանդեալ, որ այդպիսի ոճրագործութիւն գործեաց ի մէջ ազգիս: Որ եւ յետ կատարման գործոյն գրեալ են առ մեզ կրկին պատճառ. նախ՝ թէ «ըստ կտակի Հոգեւոր Տիրին արարաք զայս», երկրորդ՝ թէ «ի ձէնջ առաքեալ թղթոյն բանիւն գործեցաք»:

Առաջնոյն զայս պատասխանեմք, թէ Եղիազար Հոգեւոր Տէրն ո՛չ է արարեալ զայդ կտակ, որպէս եւ կանխագոյն յայտ իսկ է ձեզ եւ յետոյ մեզ եւս եղեւ զստոյգն[10] յայտնի, զոր, եթէ կամիք, մե՛ք ծանուսցուք ձեզ զճշ[մ]արիտ կտակ Հոգեւոր Տիրին:

Արդ, որովհետեւ արար՝ վասն է՞ր ոչ դրոշմեաց ձեռամբ իւրով ի քարտիսի, զոր կանխագոյն իսկ ունէր սովորութիւն յաւարտ բանին դնէր ձեռս, ասելով թէ. «առ ի հաստատութիւն բանիս եդի զձեռագիրս[11] ի վերայ»: Որ քանի՛ թուղթ առ մեզ գոյ՝ այսպիսի գրեալ եւ դրոշմեալ: Հարկաւորապէս եւ առաւելապէս դմին իրի յաւէտ պա՛րտ էր[12] զայդ սովորութիւն ի գործ ածել, զի համաշխարհական է[13] բանդ եւ իրագործութիւն, որով երեւի ոչ գոլ ճշմարիտ զասացեալն:

Ասեմք, թէ եւ ասացեալ եւս լիցի. հայեցարո՛ւք ի կարգս եւ ի կանոնս հարցն սրբոց եւ երանելի նախնեաց՝ եթէ այդպէ՞ս է սովորութիւն եւ կարգ, որ[14] կաթուղիկոսն, թարց ժողովոյ եպիսկոպոսաց եւ վարդապետաց, նաեւ հարց վանականաց լեռնակեաց կրօնաւորաց եւ աշխարհաժողով հանդիսի, ինքնահաճ կամօք, ըստ ախորժակաց սրտի իւրոյ, կոչեսցէ զոք ի պատիւ կաթուղիկոսութեան: Եթէ այնպիսին ընդու[ն]ելի եղեալ է՝ եւ ա՛յժմս[15] լինիցի, ապա թէ թիւր եւ զարտուղի է յընթացից նախնեաց՝ ուրեմն ո՛չ է ընդունելի:

Եթէ հարցն առաջնոց եւ նոցին կանոնաց ոչ անսան, գոնէ ի մերումս եղեալ ժամանակի հարցն անսասցեն, որ ի թուահա-

չու[ու]թեան տոհմիս հայկական հազարերորդի հարիւրորդի եւ տասնեւհինգ ամի[16] մեծանուն վարդապետք, երեւելիք եւ նշանաւորք ժողովեալ են ի Սուրբ Աթոռդ Էջմիածին, հետեւելով հարցն սրբազանից, եւ քանի գլխով բան կարգեալ յաղագս կաթուղիկոս ձեռնադրութեան, թէ որ ոչ լինի այնպէս՝ խոտելի է: Որոց գրեալ բանքն լուսաւոր հոգի Մովսէս վարդապետին ձեռնադրով եւ այլ սրբազան վարդապետաց կնքով եւ գրով առ մեզ է, որոյ սաւատն[17] եւս առ ձեզ առաքեցաք: Եթէ այնց բանից միոյն համաձայնի արարեալն ներկայիս, ապա է՛ մեզ ընդունելի, իսկ թէ ո՛չ՝ մեք ումեք ոչ եմք պարտական՝ եթէ զպարտսն պահանջեսցէ: Այսքան առ առաջինն:

Երկրորդին զայս տամք պատասխանի. թէ գրեալ եմք մեք առ Տէր Եղիազար կաթուղիկոսն եւ ոչ կարեմք յուրաստ լինել, թէ «որքան դու կենդանի ես՝ մեր կաթուղիկոս դու ես, եւ յետ քո կատարօղ եմք կամաց քոց եւ քոյոցն առնելոց եմք կաթուղիկոս»: Ահա Եղիազար Հոգեւոր Տիրին ո՛չ մի ունէր աշակերտ, այլ յոլով: Եթէ մեք յանուանէ՛ մարդոյ անուն գրեալ եմք, ապա թէ մեզ վերայ հաստատի բանդ: Իսկ թէ անորոշակի եմք գրեալ, ապա՝ զուր եւ նանիր է մեզ վերայ ասացեալդ եւ անպատշաճ արարեալդ:

Ի յաւիտենից ոչ ոք լուաւ, թէ նախքան զթաղումն վախճանեալ կաթուղիկոսի օծանիցի նոր կաթուղիկոս, զոր ահա եղեւ: Մի՞թէ Եղիազար Հոգեւոր Տէրն այր տգէտ երեւեցաւ յաչս ոմանց, քանզի, իւր խոհեմութեամբն եւ խորագիտութեամբն, ի գալն յԵրուսաղէմայ նստաւ ի Կոստանդնուպօլիս՝ ասելով, թէ «ոչ եկից ի Սուրբ Աթոռն, մինչեւ ո՛չ գայցէ մանսար Իսպահանու»: Եւ յորժամ առաքեցաք՝ իսկոյն եկն: Այսպէս լինի արարք առն խոհեմագունի: Եթէ յաղագս ինքեան այսպէս խորհէր, ապա վասն այլոյ զիա՞րդ հրամայէր լինել առանց մեր մանսարի: Զոր յետ գործոյն կատարման թարց վկայականի թղթոյ ապա խնդրեալ էին ի մէնջ մանսար, զոր մեք[18] նարդեանս գրեալն յայնժամն էաք գրելոց: Բայց երկրորդ Հողեփեռնէսս[19] եւ Գոգդոսս՝ անկեալ եւ կործանեալ չԱւետս[20], կաշառակուր եղեալ եւ արծաթով կուրացեալ, կրկին եւ երեքկին անգամ ընկալեալ զկաշառ, լի՛պասի հուքմ[21] հանեալ եւ առաքեալ առանց մեր մանսարի[22], սալահի[23] եւ գիտութեան, որոյ վասն եւ ինքն կործանեցաւ եւ նոր քալանթար հաստատեցաւ Մահտասի-խօջա[24] Պետրոսի որդի՝ Քրիստոսիւ օրհնեալ խօջա Ղուկասն, ամենեւի՛ն յար եւ նման բարե-

պաշտութեան հօրն իւրոյ: Այսուհետեւ կաշառն անգործ եղեալ՝ ճշմարտութիւնն է թագաւորելոց եւ ուղղութիւնն հաստատելոց: Ժա՛մ է այսուհետեւ մեզ, սիրելիք, ի քնոյ զարթնուլ, քանզի գիշերն մերժեցաւ եւ տիւն մերձեցաւ:

Զայս թուղթ վասն այնր առաքեցաք առ մեծութիւն ձեր, զի ցուցանիցէք կաթուղիկոս եղնողիդ. եթէ կամի դա բռնութեամբ եւ ուժգնութեամբ բազկի իւրոյ տիրել մեզ՝ ո՛չ կարէ: Քանզի մեք ոչ ումեք եմք արծաթագին: Զի բարձրեալն, որոյ տէրութիւնն սեփական է[25] եւ իշխանութիւնն՝ բնութեամբ, բռնաբար ոչ ումեք տիրէ, թո՛ղ թէ մարդ: Իսկ ապա թէ արդարութեամբ եւ իրաւամբք տիրէ՝ հնազանդիմք եւ մեք առաւել քան զառաւել:

Եւ թէ զի՞նչ է արդարութիւն եւ իրաւունք, այսինքն է՝ գնալ անխոտոր զշաւիղս յառաջնոցն սրբոց. եթէ նախնեացն եւ գերագունիցն ոչ, սակայն յետնոցն, որ ի մերումս ամանակի զառաջնոցն ստացան վարս եւ առաքինութիւնս, ճշմարտութեան կարգաց եւ կրօնից հետեւելով: Զլուսաւոր հոգիք Մովսէս եւ Փիլիպպոս կաթուղիկոսացն ասեմք, որ ի վերջին ժամանակս փայլեցան իբրեւ զարեգակն ջահաւորեալք ի մէջ սուրբ եկեղեցոյ[26] եւ յազգս[27] Հայաստանեայց:

Եւ զի՞նչ է խնդիր մեր եւ զո՞րս՝ համառօտաբար կարգեսցուք երկոտասան գլխոք:

Նախ. զի կաթուղիկոսն միշտ եւ անպարապ ընթերցցի՛ զԱստուածային գիրս եւ ինքն նովիմբ վարեսցի՛ եւ վարեսցէ՛ զեկեղեցի:

Երկրորդ. զի դպրատունս եւ զդասատունս հաստատեսցէ՛ յամենայն տեղիս, որպէս սովորութիւն է այլազգեաց քրիստոնէից, եւ մանաւանդ թէ մեզ իսկ գլխովին, նաեւ պարսից եւս, զոր գիտողացն է քաջայայտ՝ թէ որքան ունին ջանք եւ փոյթ յայդմ իրի: Քանզի չինութիւն եւ հաստատութիւն ազգի դովա՛ւ լինի: Որպէս եւ տեսանեմք խոպանացեալ եւ անգիտանացեալ ազգն վրաց՝ յաղագս ոչ ունելոյ փոյթ զայնմանէ:

Երրորդ. զի եւ ինքն ասուեղէն զգեցցի՛ եւ ո՛չ բամբակեղէն կամ վշեղէն, եւ ո՛չ այլոց թոյլ տայցէ:

Չորրորդ. զատ եւ առանձին ի միաբանից ո՛չ յաղօթս կացցէ եւ ո՛չ հաց կերիցէ, այլ ընդ միաբանսն հաղորդեսցի՛ ի յամենայն աղօթսն եւ ի հացկերոյթ սեղանատեղսն:

Հինգերորդ[28]. մի՛ լիցի առանձին տնտեստուն եւ մառան եւ

մի՛ իմ եւ քո ի մէջ բերիցէ ի հասարակ տան. ինքն իւրայովքն աւեւորդօք քան զհարկաւորն շատացեալ, եւ հասարակն անխնամ եւ անայցելու մնացեալ կարօտ հարկաւորին: Այլ զամենայն մի լիցի՝ եթէ՛ գանձարան[29], եթէ՛ շտեմարան, եթէ՛ տնտեստուն, եւ եթէ՛ սեղանատուն:

Վեցերորդ. մի՛ զարդարեալ սիգաքայլ երիվարօք յոխորտացեալ յօրանայցէ, այլ կիսիշեօ՛ք շրջեսցի, որպէս եւ տեսեալ ի՛սկ եմք զնախնիսն աչօք մերովք:

Եօթներորդ. ո՛չ ունիցի երկու կամ երեք եւ չորք փայեակ[30], որպէս այժմս լսեմք, այլ միով սուրհանդակաւ բաւականանալ՝ որպէս նախնի կաթուղիկոսունքն:

Ութերորդ. նոր զարմանս եւ ծիծաղելիս ո՛չ առնել, այսինքն՝ թէ քարշել առաջի, ըստ օրինի իշխանաց, եդակս[31] մէկ, երկու եւ կամ աւելի եւ պակաս: Եւ կապել թիւր եւ զադարայ[32], որ կարի հեռի է ի հոգեւոր իշխանութենէ, զի զէն զինուորութեան մերոյ ո՛չ է մարմնաւոր, այլ հոգեւոր՝ ըստ առաքելոյ[33]:

Իններորդ. ո՛չ պահել մատաղ մանկունս զսպասաւորս առաջի, զարդարեալ զգեստիւք՝ ի գայթակղութիւն տկարամտաց, այլ կատարեալ հասակաւ եւ մուրուօք, սեւազգեստ եւ խոշորահանդերձ՝ ի յամօթ հակառակորդաց բամբասողաց:

Տասներորդ. արանց տգիտաց եւ անվարժից մի՛ տայցէ պատիւ եպիսկոպոսական եւ իշխանութիւն վարդապետական, քանզի նոքա՝ որ ունին ջան եւ աշխատասիրութիւն ուսման, տեսանելով զայլս թարց ջանից եւ աշխատանաց ընկալեալ զպատիւ եպիսկոպոսութեան եւ զաստիճան վարդապետութեան, եւ նոքա յուսահատեալ խափան լինին ի բարի յառաջադիմութենէ, եւ մնայ ազգս ի մէջ անգիտութեան խաւարի յաղագս անընտրութեան՝ ըստ Արիստոտէլի, որ ասէ. «եթէ կամիս բարեկարգութիւն տան՝ ընտրեայ զլաւն ի վատթարէն եւ զվաստ[ա]կաւորն յանջանէն»: Եւ ըստ իմաստնոյն, թէ «զփառս իմաստունք ժառանգեսցեն»:

Մետասաներորդ. ո՛չ ածել պատիժս անպատշաճս ի վերայ ուրուք անյարմար կարգի եւ աստիճանի, որպէս լսեմք, թէ այս ինչ մարդոյ մուրուս կտրեալ է եւ այս ինչ մարդ՝ ի սիւն կապեալ: Ոչ մի անգամ լսեմք, այլ յոլովակի: Ուստի՞ ունի օրինակ զայդպիսի անոպայ արարմանց. զայր եպիսկոպոս առանց ժողովոյ եւ դատաստանի,

ի ժամ հացկերութեան եւ գինի ըմպութեան կապեալ ի սիւն եւ բրա-ծեծ տալ առնել արանց սրիկայից եւ ելուզակաց, եւ յետոյ զմուրուսն հատանել: Բարեպաշտն Կոստանդիանոս ե՞րբ արար զայդ Արիոսի, թէպէտ եւ սպանման էր արժանի, եւ կամ Փոքրն Թէոդոս առ Նեստոր ե՞րբ գործեաց զայդ, եւ կամ հայրապետքն սուրբք ե՞րբ օրէնս վար-կան եւ իրաւունք համարեցան այդպիսի դատաստանաւ դատել զե-կեղեցական եւ մանաւանդ եպիսկոպոս, որպէս գրէ սուրբն Կիւրեղ Աղեքսանդրացի յաղագս պղծոյն Նեստորի՝ թէ. «լուծումն արարաք զնա յեպիսկոպոսութենէն իրաւամբք ժողովոյն»: Զի Մովսէս Հոգեւոր Տէրն ե՞րբ արար զայդ, եւ կամ լուսաւոր հոգի Փիլիպպոս կաթուղի-կոսն՝ ԻԴ (24) ամ վարեալ զկաթուղիկոսութիւնն, ե՞րբ եւ կամ ո՞ւմ մուրուս կտրեաց կամ սիւն կապեաց: Նոյնպէս եւ Յակոբ Հոգեւոր Տէրն, քսան եւ հինգ ամ կացեալ յԱթոռն, միայն Ոնոփրիոսին էած զայդ պատիժ, նմին՝ աշխարհ վկայէր մահու գոլ արժանի եւ ո՛չ լոկ պատժոյ: Զոր ա[յ]ժմս տարի եւ կէս է՝ քանիսն լսեմք զայդպիսի խայ-տառակեալ զուր եւ ունայն պատճառաւ: Այդպիսի պատիժ քաղաքա-կան օրինի եւ դատաստանի է անկ եւ ո՛չ եկեղեցական: Վասն որոյ ոչ կամիմք զայր եպիսկոպոս կամ վարդապետ, թարց ժողովոյ եւ կա-նոնաց, դատել կամ պատժել: Յորմէ պատճառէ վնասս յոլովս[34] ծնա-նի, զի ժամանակս չար է[35]:

Երկոտասաներորդ. *մի փոփոխեսցէ զթեմ եւ զվիճակ եպիսկո-պոսաց ըստ նմանութեան Բրքիշոյի եւ Շմուէլի, որ մինն զմեռեալ եպիսկոպոսաց վիճակն յափշտակէր, իսկ զմիւսն՝ եւ զկենդանի եպիս-կոպոսաց, որպէս գրէ քերթողահայրն Մովսէս ի Վիպագրութեան իւ-րում[36], այլ, ըստ ուղիղ կանոնաց առաքելական եւ հայրապետական՝ իւրաքանչիւր եպիսկոպոս տիրէ յիւրում վիճակին, եւ իւրաքանչիւր թէմ՝ յիւրում աթոռոյ կացցէ եւ մնասցէ, զոր ի ընէ ունի կարգեալ եւ հաստատեալ: Բայց թէ առաջնորդ եպիսկոպոսն անուղղագործս ու-նիցի՝ դատեսցի ըստ իրաւանց կանոնաց եկեղեցւոյ եւ որպէս արժա՛-նն է՝ պատժեսցի: Քանզի ի փոփոխմանէ եւ ի բաժանմանէ բազում չարիս ծնեալ է, ծնանի եւ ծնանելոց է: Ըստ տէրունականն բանի՝ «տուն, քաղաք եւ թագաւորութիւն բաժանեալ՝ կործանի»[37]: Եւ զի ամենեցունցդ է քաջայայտ, որ իւրաքանչիւր աթոռ պսակեալ է ընդ իւրոյ վիճակին, որոց ո՛չ է պարտ բաժանիլ ի միմեանց, թէպէտ յետ սրբասէր կաթուղիկոսին Տեառն Փիլիպպոսի ոմանց բաժանումն ե-*

ղեալ է, եւ այն՝ ոչ կանոնական իրաւամբք, այլ յանիրաւ յարձակմանէ, որոց յայսմ հետէ ոչ կամիմք եւ ոչ թողացուցանեմք լինիլ զայն անկարգութիւն[38]: Եւ ի վերայ այսր ամենայնի Աստապատցի Մինասն արտաքսեսցէ՛ եւ հալածեսցէ՛ ի Սուրբ Աթոռոյդ եւ յԱյրարատ գաւառէ եւ կորուսցէ՛ ի բնիկ տեղի իւր, եւ զոր ինչ ստացեալ է եւ ունի, խլեսցէ՛ ի ձեռացն: Մուրուս կտրելոյ, սիւն կապելոյ եւ բրածեծ առնելոյ դա՛ է արժանի, եւ ո՛չ այս եւ այն: Հալածեալ կորուսանիցե՛ք ձեռագրով, որ այլ յերեւան[39] չկոխէ. բարի է: Ապա թէ ո՛չ, Ճշմարտին յայտնի է՝ մե՛ք առնեմք արքունի հրամանաւ: Եւ գիտեմք, թէ որպէս անպատմելի եւ անասելի խայտառակութեամբ կորուսանելոց եմք հանդերձ դատապարտական պատժիւք, քանզի դա՛ եւս բազմադիմի կաշառօք կուրացուցանէր զայս գարշելի այրակերպ գազանս[40] յաղագս ի գլուխ հանելոյ զիւր չարութեան գործն: Վասն որոյ ոչ կամիմք այդպիսի բանսարկու եւ շոգմոգ առն մնալ ի սուրբ եւ ի հռչակաւոր տեղիդ, այլ յանկեան ուրեք ծակամուտ կացցէ՛, որպէս եւ արժան ի՛սկ է:

Ահա զայս երկոտասան բանք կարգեալք պահանջեմք ի կաթուղիկոսէն՝ ով ոք եւ իցէ: Եւ զայս բանս խնդրանաց եղբայրական սիրով առ ձեզ առաքեցաք՝ իբրեւ անդամք միմեանց լինելով ցաւակիցք: Եւ դուք տարեալ ցուցէք իւրն: Եթէ հաւանի եւ ընդունի՝ գրով եւ կնքով իւրով եւ վկայութեամբ երջանիկ եպիսկոպոսաց, առ մեզ առաքեսցէ իբրեւ զայետիկար[41] անջի[ն]ջ մնալ առ մեզ՝ յայնժամ եւ մեք սիրով հլու հպատակութեամբ հնազանդ լիցուք նմա իբրեւ զլխոյ, եւ ինքն թագաւորեսցէ յեկեղեցիս մեր որպէս զարեգակն: Ապա թէ ոչ ընդունիցի զասացեալս մեր եւ կամ գրեալքս խոտան համարեսցի, յայնժամ զգրեանս մեր դարձուսջիք յետս: Յայնմ հետէ գիտեմք եւ մեք, թէ որպէս պա՛րտն իցէ առնել յամենայն կողմանէ անխիղճ:

Տպեցաւ տիպս երկու հարիւր. ի դրան Սուրբ Ամենափրկչի վանացս Նոր Ջուղայու. յԻսպահան քաղաքի. ի թուում կենարարին մերոյ հազար վեց հարիւր [ին]նսուն եւ երեք եւ ի Հայոց՝ հազար հարիւր քառասուն եւ երկու (1693), յամսեանն մայիսի Ա (1)»:

Քննություն Ա. վավերագրի

1. Տպագրությունը

Այսպիսով, 1693 թ. Նոր Ջուղայի հայությունը («...ի Շոշ եղեալ քրիստոնէախումբ դասք եկեղեցականաց եւ աշխարհականաց») այս գրությունն ուղարկել է Մայր Աթոռի միաբաններին և Արարատյան ու Ատրպատականի երկրների հոգևոր հայրերին: Օգտվելով 1636 թ-ից ի վեր Նոր Ջուղայում հաստատված և ընդմիջումներով գործող տպարանի ընձեռած հնարավորությունից և, անշուշտ, նկատի ունենալով շրջաբերականի կարևորությունը՝ այն 200 օրինակ բազմացրել են: Իմիջիայլոց, ընթացիկ խնդիրների այսպիսի արծարծումն աննախադեպ երևույթ է XVI-XVIII դդ. հայ տպագրության պատմության մեջ: Ընդ որում, այս երկու փաստաթուղթը Նոր Ջուղայի հայ տպագրության առաջին շրջանի (1636-1696 թթ.) վերջին նմուշն են (հայ տպագրությունն այնտեղ վերսկսվել է միայն 1872 թ.)[42]:

2. Պատմական ետնախորքը

Մեզ հետաքրքրող իրադարձությունների մասին ցարդ հայտնի էր հետևյալը: 1691 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս է դարձել Նահապետ Եղեսացին: Ժամանակակից հայ հեղինակները սրան բնութագրում էին իբրեւ «ճոռոմախօս, փառապերճ, ահարկու»[43], սակայն «կարդալոյ եւ յօրինաց թոյլ» կաթողիկոս[44]: Այսպես, Զաքարիա Քանաքեռցին Նահապետի մասին գրել է.

> «...կարի սաստիկ էր ի վերայ յանցաւորաց, եւ եթէ ոք պակասութիւն ինչ գործէր, սա կալեալ հրապարակաւ կախէր, եւ դանալից առնէր, եւ տուգանէր մարմնաւոր իշխանութեամբ, հարէր զմորուսն եւ զանգուրն, եւ արկանէր ի բանտ եւ չղթայէր: Եւ այսպէս ահարկութեամբ կայր ի վերայ ամենայն եկեղեցականաց եւ քահանայից»[45]:

Քանաքեռցին նաև հայտնում է, որ այդպիսի վերաբերմունքի արժանանալուց հետո միայն «վիրաւորեցան ոմանք ի սեւագլխոց ի մերումս աշխարհէ» և, միաբանելով Նախիջևանի ու Գողթնի եպիսկոպոսների հետ՝

> «գրեցին առ Ստեփաննոս վարդապետն, որ էր առաջնորդ Ասպահանայ եւ Ջուղայու, թէ «կաթուղիկոս այս խանդարեաց ամենայն կարգ եւ օրենք, զոր սահմանեալ էին նախնիքն մեր, եւ ինքն զոր ինչ եւ կամի՝ այնպէս վարէ առանց կանոնաց եւ վկայութեանց գրոյ»[46]:

Հովհաննավանքում, այսինքն՝ Էջմիածնի անմիջական վերահսկողության ներքո, պաշտոնավարող Զաքարիա Քանաքեռցին վերը նշված և «այլ» (չհիշատակված) ամբաստանությունները «սուտ» է անվանում, որ հակասում է իր իսկ (վերը մեր մեջբերած) տողերին և մի այլ առիթով արած պարզ դիտողությանը՝ «...Բայց զկարգ եւ զկանոն առաջին կաթուղիկոսացն քայքայեցաւ ի Սուրբ Աթոռոյն եւ յամենայն վանորէից վասն թոյլ տալոյ նոցա... (իմա՝ Եղիազար եւ Նահապետ կաթողիկոսների, Ա.Ա.)»[47]: Ինչպես շուտով կտեսնենք, այս ցավալի իրողությունը հաստատում են նաև այլ փաստեր:

Այնուհետև, դեպքերը զարգացել են այսպես. Ստեփաննոս Ջուղայեցին ձեռք է բերել Նահապետին գահազրկելու և նրա փոխարեն կաթողիկոսանալու շահական հրովարտակ և իրենից առաջ Էջմիածին է ուղարկել Դավիթ Ջուղայեցու աշակերտ Աղեքսանդր Ջուղայեցուն՝ Նահապետին Տաթևում արգելափակելու առաջադրանքով: Բայց վերջինս խույս է տվել: 1696 թ. նոյեմբերի 2-ին Էջմիածնում Ստեփաննոսը՝ Մինաս Ամդեցու ձեռքով, օծվել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Սակայն ընդամենը երկու-երեք ամիս անց[48] Նահապետը, օգնական ունենալով իր «մտերիմ բարեկամ», ընտանյոք մահմեդականացած և շահի արքունիքում կարևոր դիրքի արժանացած Նոր Ջուղայի նախկին քալանթար Ավետիսին[49], ինչպես նաև կաշառքի զորությունը, վերագրավել է Մայր Աթոռը: Ստեփաննոս Ջուղայեցին բանտարկվել է, ենթարկվել դաժանագույն խոշտանգումների և մահացել: Այնուհետև՝ Նահապետի կամքին հակառակ, Նոր Ջուղայի առաջնորդ է ընտրվել Աղեքսանդր Ջուղայեցին (ապագա կաթողիկոսը): Հայտնի է նաև, որ մինչև Նահապետի մահը (1705 թ. հունիսի

13)[50] Նոր Ջուղայի հայությունը հրաժարվել է ընդունել նրան որպես Ամենայն Հայոց կաթողիկոս[51]: Զաքարիա Քանաքեռցին, լռության մատնելով այս հանրահայտ փաստը, դրանով իսկ բացահայտում է Նահապետին վերաբերող հարցերում իր գրչի կաշկանդվածությունը[52]:

Արդ, ինչպես տեսնում ենք, մինչ այժմ մեր ձեռքի տակ եղած նյութերը, չնչին բացառությամբ[53], շրջանցում են 1691-1696 թթ. միջև եղած անցուդարձը: Ահա այս բացն է, որ զգալիորեն լրացնում է 1693 թ. Նոր Ջուղայում տպագրված շրջաբերականը:

3. Նահապետ Եղեսացու կաթողիկոսանալու հանգամանքները

Ըստ Զամչյանի՝ Նահապետի օծումը եղել է Եղիազար Այնթապցի կաթողիկոսի մահից ընդամենը երկու օր անց՝ օգոստոսի 10-ին[54]: Այս արագությունը շփոթեցրել է անգամ ժամանակակիցներին. Ավետիք Եվդոկիացին իր հիշատակարանի մեջ գրում էր, թե Եղիազարը, կանխազգալով իր մոտալուտ վախճանը, ելել է մահճից, պատարագ մատուցել և իր ձեռքով օծել Նահապետին, այնուհետև, անկողին վերադառնալով՝ «նոյնժամայն» մահացել[55]: Օրմանյանը, Զամչյանի հաղորդած «ընտրելագոյն» ժամանակագրական տվյալների հիման վրա, իրավամբ հերքել է Ավետիք պատրիարքի այս հաղորդման հավաստիությունը, սակայն, ձեռքի տակ չունենալով լրացուցիչ աղբյուրներ, սխալմամբ ենթադրել է, թե Նահապետի ընտրությունը ժամանակի օրինականության սահմաններում է եղել, որից հետո՝ «ոչ մի կողմեն նկատողություն չի հարուցվիր և ամեն կողմե առանց դիտողության կընդունվի Նահապետի կաթողիկոսությունը»[56]:

Մինչդեռ, արդեն 1693 թ. մայիսի 1-ին, ջուղայեցիները, արձանագրելով, որ Նահապետի ձեռնադրությունը կատարվել էր «նախքան զթաղումն վախճանեալ կաթուղիկոսի», մի բան՝ որ «ի յաւիտենից ոչ ոք լուաւ», վճռականորեն դատապարտում էին եկեղեցական կանոնադրության այս կոպիտ խախտումը: Դեպքի մասին հավե-

լյալ մանրամասնություններ է հաղորդում Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսը՝ 1708 թ. փետրվարի 20-ին արձակած շրջաբերականով.

> «Իսկ յետ վախճանի սորա (իմա՝ Եղիազար Այնթապցու, Ա.Ա.)՝ յինն ժամու, ձեռնադրեցաւ յԱթոռն Հայրապետական Տէր Նահապետ կաթուղիկոս...՝ թարց ազգիս գիտութեան եւ առաջնորդաց եկեղեցեաց հաւանութեան: Որպէս ի վերոյ գրեցաք յաղագս Յակոբ [Դ Ջուղայեցի] հայրապետի, թէ յԱրզրում եւ ի Դաւրէժ ոչ եհաս լուրն[57], իսկ սորայս ի Կաղզուան եւ ի Նախչուան ո՛չ իմացան: Քանզի յաւուր յորում Եղիազարն փոխադրեցաւ, եւ սա ի նոյնում աւուր եւ ի նոյնում պատարագւոջ, ուր էր դի նորա եղեալ ի դաղղի, նախ ինքն ձեռնադրեցաւ կաթուղիկոս եւ ապա օծեալ՝ զնա իջոյց ի գերեզման: Զորպիսի ձեռնադրութիւն ո՛չ վայել է գեղջկան երիցու միոյ, թող թէ՝ կաթուղիկոսի եւ հայրապետի, եւ մանաւանդ ազգի գլխոյ»[58]:

Ավելին՝ ոտնահարված էր XVII-րդ դարում ավանդական դարձած Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության կարգը, ըստ որի, եթե էջմիածնում ազգային կամ եկեղեցական ընտրական ժողով չէր հավաքվում, Մայր Աթոռի միաբանությունը, կաթողիկոս ձեռնադրելուց առաջ իր առաջադրած թեկնածուի անունը (որ սովորաբար որոշվում էր նախորդ կաթողիկոսի կամքը հաշվի առնելով)[59] պետք է հաղորդեր բոլոր կարևոր թեմերին, այնուհետև նրանցից ստանար համաձայնության վկայականներ (այսպես կոչված, վկայական թղթեր *կամ* մահզար-ներ*)[60]: Այս իսկ պատճառով Փիլիպպոս Աղբակեցու ձեռնադրությունն, օրինակ, հետաձգվել է ութ ամսով՝ 1632 թ. մայիսից մինչև 1633 թ. հունվար[61], իսկ Աղեքսանդր Ջուղայեցունը երեք ամսով՝ 1706 թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբերի 7-ը[62]:*

Նահապետ Եդեսացու ձեռնադրությունը կատարված փաստի առջև էր կանգնեցրել ո՛չ միայն ջուղայեցիներին: Մեկ այլ փաստաթղթից գիտենք, որ Նահապետի կաթողիկոսանալը՝ առանց նախապես Հայաստանյայց եկեղեցու թեմական առաջնորդների և ժողովրդի համաձայնությունը ստանալու, դժգոհություն էր առաջացրել նաև պոլսահայության մեջ[63]:

4. Նորջուղայեցիների և պոլսեցիների մասնակցությունը կաթողիկոսական ընտրություններին

Բերված փաստերը վկայում են, որ Նահապետը, չունենալով հայության երկու ամենահարուստ և ազդեցիկ հատվածների՝ պոլսեցիների և ջուղայեցիների հավանությունն ու աջակցությունը, օրինականության պահպանման դեպքում կաթողիկոս չէր ընտրվի, քանզի առաջինները ցանկանում էին կաթողիկոս ընտրել Մինաս Ամդեցուն, իսկ վերջինները՝ իրենց առաջնորդ Ստեփաննոսին:

1708 թ. փետրվարի 20-ի՝ վերը հիշատակված շրջաբերականում Աղեքսանդր Ջուղայեցին հատուկ շեշտում էր կաթողիկոսական ընտրություններում ջուղայեցիների և պոլսեցիների ձայնի առաջնայնությունը.

> «...յետ այսր եւ առ յապայ, յորում ժամանակի եւ իցէ՝ թարց սալահի եւ մանսարի եւ վկայական թղթոյ չորեքծագեան կողմանէ, որք թեմ եւ վիճակ են եւ ժողովուրդ Սուրբ Աթոռոյս եւ հարազատ որդիք Մօրս ամենայն եկեղեցեաց՝ Վաղարշապատու սուրբ քաւարանին Էջմիածնի, յաւէտ եւս եւ մայրաքաղաքաց եւ արքայանիստ գահից, այսինքն՝ Իսպահանու եւ Իստամպօլու, եւ առանց մեծի ժողովոյ ի Սուրբ Աթոռս՝ մի՛ ձեռնադրեսցեն զոք ի պատիւ կաթուղիկոսութեան: Եթէ ո՛չ այսպէս՝ անընդունակ եղիցի»[64]:

Հետևաբար, հե՛նց այս շրջաբերականը նկատի ուներ Աբրահամ Կրետացին, երբ 1734 թ. Երևանի փաշային ասում էր, թե.

> «Մեր նախնի սովորութիւնն այն է, որ մահսար անէն Սպահան եւ Ստամպօլ, որ այն Բ (2) քաղաքացիք միաբանին եւ զմի ոմն ընտրեն եւ կացուցանեն [կաթողիկոս]: Ապա թէ ո՛չ, Սուրբ Աթոռին եւ կաթողիկոս նստողին մեծ վնաս կլինի: Որ եւ գիր ունիմք այսպէս՝ հաստատեալ բազմաց գրով եւ կնքով եւ նզովիւք փակեալ»[65]:

Մյուս կողմից, սկսած նույն Աղեքսանդր Ա Ջուղայեցուց, Էջմիածնի կաթողիկոսները, բացի պարսից շահից, ենթակա էին դառնում նաև օսմանյան սուլթանի հաստատմանը՝ «որոյ պատճառն է, - զայրույթով նշում է Սիմեոն Երևանցին, - գլխավորապես Եղիազա-

րու [կաթողիկոս Այնթափցու] եւ այլոց նոյնապիսեաց լրբութիւնն»[66]: Սրանով, կաթողիկոսական ընտրություններն է՛լ ավելի էին ենթակա դառնում օտար միջամտություններին:

5. Մինաս եպս. Աստապատցի

Ջուղայեցիների 1691 թ. մայիսյան շրջաբերականից պարզվում է, որ Նահապետին օծել էր ոմն Մինաս Աստապատցի եպիսկոպոսը, որը նաև կաշառելով («կաշառակուր» անելով) Նոր Ջուղայի քալանթար, կարճ ժամանակ անց (1693-1694 թթ.) ուրացած վերոհիշյալ Ավետիսին, առանց ջուղայեցիների գիտության, հաջողեցնում է շահական արքունիքից Նահապետի անունով կաթողիկոսության ռաղամ ձեռք բերել: Նահապետն էլ, հաշվի առնելով սրա ծառայությունները, նշանակում է նրան իր աթոռակալ-փոխանորդ: Այս Մինասի մասին մեզ հասած կցկտուր տեղեկություններից ժամանակագրորեն առաջինը 1690 թ. հուլիսի 2-ին՝ «ի դրանէ Սբ. Էջմիածնի»՝ «Պարոն Մօլարէթխուցէս (=գլխավոր դանձապահ) Քայիխոսրով բեգին» ուղարկած նամակի մի հատվածն է, որը գրել է «ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Մինաս վարդապետ, աթոռակալ ամենապայծառ եւ նախամեծար Վեհազարդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի»[67]: Այսպիսով, պարզվում է, որ Մինաս Աստապատցին աթոռակալում էր (բայց ո՛չ աթոռակալ-փոխանորդի իրավունքով, որ նրան չնորհեց Նահապետ կաթողիկոսը միայն) դեռևս Եղիազար կաթողիկոսի օրոք: Սույնով հասկանալի է դառնում, թե ինչու՞ և ի՞նչ իրավասությամբ հենց նա էր Նահապետին կաթողիկոս օծողը[68]:

Սրա մասին ևս մի տեղեկություն հայտնում է Սբ. Թադեի վանական Իսահակ եպիսկոպոսը (ո՛չ նույն վանքի առաջնորդ Իսահակ վրդ. Արդարը). «Թվին ՌՃԽԱ (1692) դեկտեմբերի ամսոյ մէկին, Ծ (50) ոսկի աթոռհակալ Մինաս վարդապետէն Աստուծոյ փոխ առաւ Սարգիս վարդապետն, յորժամ ուզէ անպատճառ տայ, գիտութեամբ տէր Դաւթին եւ տէր Յովսէփին»[69]:

«Սուրբ Էջմիածնայ աթոռակալ Մինաս վարդապետ»ի ստորագրությամբ հայտնի է 1702 թ. նոյեմբերի 7-ով թվագրված մի նամակ, որը հասցեագրված է Իսրայել Օրիին և Մինաս վրդ. Տիգրանյա-

նին[70]: Աշ. Հովհաննիսյանը կարծում է, թե այս նամակը գրվել է Մինաս Տիգրանյանի ձեռքով[71]: Մեզ համար կարևորն այն է, որ նամակը գրվել է Մինաս Աստապատցու անունից: 1708 թ. այս Մինասը դեռևս ողջ էր. 1708 թ. փետրվարի 20-ի վերոհիշյալ շրջաբերականը ստորագրող-հաստատող 138 հոգուց մեկը նա էր. «Ինձ՝ սապուղ (=նախկին) աթոռակալ Մինաս վարդապետիս այս սահմանադրութիւնս ղապուլ է (=ընդունելի է)՝ որպէս սրբազան Վէհիս կողմանէ»[72]:

1707-1714 թթ. միջև գրված մեկ այլ կոնդակից մակաբերում ենք, որ 1693 թ. շրջաբերականի պահանջը՝ Մինասին Մայր Աթոռից արտաքսել «ի բնիկ տեղի իւր» Աստապատ, իսկապես կատարվել է, սակայն միայն Նահապետի մահից հետո[73]: Այդ վավերագիրն ասում է, թե Աստապատի առաջնորդ Մինաս վարդապետը ժամանել է Ս. Էջմիածին, Աղեքսանդր Ջուղայեցու կողմից իբր ջերմ ընդունելության արժանացել և, ստանալով իր ծննդավայրում նվիրակություն անելու առաջադրանք, շուտով ետ ուղարկվել (նշենք, որ այդ ժամանակ Աստապատը Նախիջևանի նահանգի ամենախոշոր բնակավայրերից էր[74]): Հավանաբար, այս հաշտությունը, բացի մեզ անհայտ ինչ-ինչ կետերից կայացել էր նաև Մինասի՝ Մայր Աթոռի օգտին խոշոր դրամահավաք կազմակերպելու պարտավորության հողի վրա: Մինաս Աստապատցու բնութագրությունը շրջաբերականում հետաքրքիր է.

> «ո՛չ գրոց աշակերտեալ ի մանկութենէ եւ ո՛չ ճշմարտութեան վարուց հետեւեալ, ո՛չ զտեսականն ծանուցեալ, եւ ո՛չ գործնականին մասին հաղորդեալ, այլ զօրէն գռեհկաց զերկրաւորս եւեթ ողջունեալ եւ ի նոյնն ցանկ դեգերեալ»:

6. Նահապետի կաթողիկոսության շրջանի հետևանքները

«Կատարված փաստի» մարտավարությունն սկզբում, կարծես, արդարացրեց Նահապետ Եդեսացու, Մինաս Աստապատցու և քալանթար Ավետիսի սպասումները: Սակայն, այս ոչ օրինական (մերօրյա բառապաշարով ասած՝ ոչ լեգիտիմ) ձեռնադրությունը զգացնել տվեց ընդհուպ մինչև Նահապետի մահը՝ հարվածելով Հայ եկե-

ղեցու միասնականությանը, հեղինակությանը, նյութական կացությանը, ինչպես նաև նշանավոր գործիչների ճակատագրին: 1708 թ. Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսն այսպիսի գնահատական էր տալիս իր նախորդի գահակալության շրջանին.

> «Եւ երեքտասան ամ կացեալ նա յԱթոռն՝ բայց խազմ եւ խռովութիւն ոչ պակասեցաւ ի ժամանակս սորա, այլ օր աւուր յաւելաւ, եւ բազում եղեւ Աթոռոյս եւ Ազգիս վնաս, զոր վնասուն այնորիկ արգասիքն ահա մեք կրեմք՝ անձամբ անձին հարկատուութեամբ»[75]:

Արդեն 1693 թ. սկզբին, ջուղայեցիների միահամուռ ճնշման տակ, քալանթար Ավետիսը պաշտոնանկ է արվում ու հավանաբար այդ ժամանակ էլ հավատափոխ լինում[76]: Շրջաբերականում այս ուրացողը բնութագրված է իբրև «գարշելի այրակերպ գազան, երկրորդ Հողեփեռնէս եւ Գոգդոս»:

Հարկ է արժանին մատուցել ջուղայեցիներին և նրանց առաջնորդ Ստեփաննոս վարդապետին, որ անգամ այս կարգի խայտառակ անցուդարձին լավատեղյակ լինելով և կացության վրա նեբազդելու կարողությունն ունենալով՝ նրանք խուսափել են հարվածի սլաքն ուղղել անձամբ Ամենայն Հայոց կաթողիկոսի դեմ, այլ ցանկացել են նրան զսպել ու զգոնության կոչել՝ Մինաս Աստապատցուն Մայր Աթոռից վռնդելու առաջարկված միջոցով: Վերջինս նշանակվել էր աթոռակալ-փոխանորդ Նահապետի միանձնյա կամքով: Հենց այս օրինախախտության առիթով էին ջուղայեցիք հրապարակ հանել ու տպագրել Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի նույնպիսի զանցանքի դեմ 1665 թ. գրված փաստաթուղթը:

Փաստորեն, 1691 թ. մայիսյան շրջաբերականը՝ Նահապետ Եղեսացի կաթողիկոսին ուղղված վերջնագիր է. նա կամ պետք է իր գործելակերպի մեջ կտրուկ շրջադարձ կատարեր և մաքրեր իր շրջապատը կամ պատրաստվեր դիմակայելու ջուղայեցիների բուռն և, իրենց իսկ բնորոշմամբ՝ «անխիղճ» հարձակումներին: Ցավոք, նա ընտրեց երկրորդը: Ինն ամիս անց՝ 1694 թ. փետրվարին, Սպահանում դեգերող կարմելիտների Հռոմ ուղարկած մի զեկույցից իմանում ենք, որ Ստեփաննոս Ջուղայեցին, հավանաբար տեղեկանալով շրջաբերականի անհետևանք մնալու մասին, իր վիճակի եկեղեցականնե-

ին կարգադրում է՝ պատարագի և ժամերգության մեջ չհիշատակել Նահապետի անունը[77]:

7. Ստեփաննոս Ջուղայեցու ընթացքն ու վախճանը

Արդ, այս ամենով հերքվում է նաև Ստեփաննոս Ջուղայեցու գործողություններին Մ. Օրմանյանի տված գնահատականը, ըստ որի, դրանք սոսկ «անխորհուրդ ձեռնարկներ» էին՝ «առանց եկեղեցական և կանոնական օրինավորության կաթողիկոս մը գահընկեց ընելու և անոր տեղն անցնելու հավակնությամբ, լոկ մասնավոր խումբի մը գրգռությամբ»[78]: Ինչպես տեսանք, եկեղեցական-կանոնական օրենքներն ի սկզբանե բացահայտորեն և շարունակաբար խախտողը Նահապետ Եդեսացին էր, որն իր դիրքերն ամրապնդելու համար չէր խորշում ո՛չ ուրացած Ավետիսին, ո՛չ էլ Հռոմի պապին ու կաթոլիկ միսիոներներին դիմելուց[79]: Այս առումով պատահական չենք համարում այն, որ Նահապետի վերահաստատմանը նպաստել էին Թավրիզի կապուչինները[80]: Ժամանակակից ու հետագա կաթոլիկ հեղինակները նրան սովորաբար ներկայացնում են Հայոց «ամենալատինասեր» կաթողիկոսների շարքում[81]: Բացահայտ լատինասիրությամբ ճանաչված էր նաև Նահապետի նախորդ և ուսուցիչ Եղիազար Այնթապցի կաթողիկոսը[82]: Մինչդեռ Ստեփաննոս Ջուղայեցին, որը ժամանակի ամենաուսյալ հայ վարդապետներից էր, հայտնի էր իբրև Հայաստանյայց ազգային եկեղեցու եռանդուն պաշտպան՝ «ամոլն հաւատոյ եւ սիւնն եկեղեցւոյ... համաբնթաց սուրբ հարցն, վարուց քաջ եւ վրէժ խնդրող օրինացն Աստուծոյ եւ հաստատիչ կարգաց եկեղեցւոյ եւ հետեւող հաւատոյ ուղղափառութեան, այր պարկեշտ եւ բազում վշտաց համբերող», իսկ լատինների բնորոշմամբ՝ «հակապապական», «կատաղի հերձուածող», «կաթոլիկների հալածիչ»[83]:

Վերջինիս եղերական վախճանի մասին ունենք մի քանի վկայություն: Կարմելիտների հաղորդման մեջ ասվում է, որ Ստեփաննոսին ձերբակալել և երկիցս դանաձեռ է արել Երևանի խանը: Այնուհետև, ինչ-որ լճի մի կղզյակում նրան արգելափակել են և սովամահ արել: Այս կղզյակում էլ իբր Ստեփաննոսի կողմնակիցները

գտնում են առնետների կողմից «կիսով չափ» հոշոտված նրա դիակը (այս վավերագիրը հրապարակված է կրճատումներով, և նրանից պարզ չի դառնում, թե Նահապետ Եղեսացին ինչ դիրք էր բռնել Ստեփաննոսի վախճանի նկատմամբ)[84]:

Սակայն հայկական աղբյուրները պնդում են բանտում Ստեփաննոսի մահանալը. այսպես, ժամանակակից Անանուն Վանեցու հիշատակարանում կարդում ենք, որ Ստեփաննոսը «տարի մի ի բանտն մնաց եւ ՌՃԽԷ (1698) թվին բազում չարչարանօք սպանին թագուն ի մէջ բանտին, որ եւ բազում հրաշս եցոյց այլազգեաց եւ մերազնեաց»[85]: Մեկ այլ հիշատակագիր հաղորդում է.

> «Դարձեալ որպէս գրեցաք զկիրս Ստեփանոս կաթողիկոսին, որ ի ՌՃԽԶ (1697) թուին ի փետրուարին եդին ի բանտի Հրամանաւ Շահին: Եւ մնացեալ անդ ի մէջ դառն նեղութեանց մինչեւ ի մուտս ՌՃԽԷ (1698) ամին, յունուար Դ (4) վախճանի ի նոյնում բանդի, եւ եթող զնա անթաղ Երեւանայ խանն, մինչեւ ըստ հաճոյից իւրոց արար Նահապետ Հոգեւոր Տէրն (խօսքը, հաւանաբար, խանին տրուած կաշառքի մասին է՝ Ա.Ա.), եւ ապայ տայ Հրաման յունուար Է (7-ին) տանել թաղել, զի մինչեւ ցայն աւր անթաղ կայր, եւ տարեալ ամփոփեցին ի վանքն Հռչակաւոր, Վիրապ կոչեցեալ...»[86]:

Զաքարիա Քանաքեռցու հավաստումով՝

> «Ստեփաննոսին հանին ի թեթեւ բանտէն եւ եդին ի մթին եւ գարշահոտ զնդան, եւ ոտքն ի ծնգացն եդին ի կոճեղս, որ է *տոմրուղ* եւ ի ներքոյ թիկանցն քար ողորկ. եւ ի զազրութենէ հոտոյն եւ յաճմանէ հերացն, եւ ի բազմանալոյ որդանցն վշտացեալ՝ մեռաւ անդէն»[87]:

Ու թեև Օրմանյանը փորձում է Նահապետի վրայից վերցնել այս գործողության պատասխանատվությունը՝ ասելով, թե «կաթողիկոսին վրա չէինք սիրեր ծանրացնել այդպիսի վայրագ վրեժխնդրություն մի»[88], այնուհանդերձ, Նահապետը լավագույն դեպքում լռելյայն համաձայնել է Ստեփաննոսի այդօրինակ վախճանին: Սա ևս հաստատում է արևելյան բռնապետի նրա կերպարը և այդ կերպարի ճշգրիտ պատկերումը 1693 թ. մայիսի 1-ի շրջաբերականում:

Մեկ ճշտում ևս, այս անգամ՝ Նահապետի մահվան վերաբերյալ: Հայտնի է, որ նա վախճանվել է 1705 թ. հունիսի 13-ին, թաղված է Ս. Շողակաթ եկեղեցու բակում[89]: Այստեղ կարելի է ավելացնել ուսումնասիրողների աչքից վրիպած մի տեղեկություն ևս. Ղազար Ջահկեցին՝ 1733 թ. Կ. Պոլսում լույս տեսած իր «Դրախտ ցանկալի» աշխատության մեջ ծանուցում է, որ Նահապետը «հանգեաւ ի Քրիստոս ի հրեշտակաբնակ անապատն Շատիկու եւ բերեալ ամփոփեցաւ ի զանկակատուն սրբոյն Շողակաթի»[90]: Այս հաղորդման հավաստիությունը որևէ կասկած չի հարուցում, քանզի Ղազար Ջահկեցին այդ տարիներին Շատիկա վանքի միաբան էր[91]: Այսպիսով, Նահապետն իր մահկանացուն կնքել է՝ օր ծերության մեզ անհայտ նպատակներով ճեռնարկած մի ուղևորության ժամանակ:

8. Հայոց կաթողիկոսների կենցաղավարության և տարազի մասին

1693 թ. մայիսի 1-ի փաստաթղթի 3-ից 8-երորդ կետերի առաջադրած պահանջներն ունեին պատմական խոր արմատներ: Ահա թե ինչ էր գրում Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221-1267) մասին 1230-ականներին Կիլիկիա այցելած գերմանացի մի ճանապարհորդ.

> «Հայոց [հոգևոր] առաջնորդներուն գլուխը կկոչվի կաթողիկոս: Անոր քով մնացի տասնևչորս օր, ան իր մոտ ունի արքեպիկոպոսներ և եպիսկոպոսներ, վանահայրեր և ուրիշ եկեղեցականներ: Ան իր անունդովն, զգեստներովն և կենցաղովն այնքան օրինակելի է, որ անոր նման ոչ մին տեսած եմ, ըլլա կրոնական ըլլա աշխարհական, և ստույգ կերպով կհայտարարեմ, թե՝ իմ կարծիքովս իր հագած զգեստները հինգ ստերլին չիլին արժեք չունին: Սակայն ան ունի շատ հաստատուն դղյակներ և մեծ եկամուտներ, և հարուստ է որևէ հասարակ մարդե ավելի: Ան կը հագնի ոչխարի կարմիր մորթե կոշտ մուշտակ մը, շատ մաշած և տգեղ և լայն թևերով, և անոր տակեն շատ հինցած գորշ պարեգոտ մը, և գրեթե մաշած: Բաց աստ ան կհագնի սև փորուրար մը, և ժան տեսակեն հաստ սև կրկնոց մը»[92]:

Մկրտիչ Աղավնունին ծանոթագրում է, որ XIII «դարուն Կիլիկիո հայրապետներեն ոմանք կխորշեին հանդերձի փափկութենեն, ինչպես կգրեն Օրբելյան և Սմբատ պատմիչ. վերջինս կավելցնե Հովհաննես մեծաբարո կաթողիկոսին համար ըսելով. «անպաճոյճ անձամբ»[93]:

Վաղ շրջանից եկող այս ավանդությունները չէին դադարել գործելուց նաև XVII դարում. 1662 թ. Էջմիածին այցելած ճիզվիտ երկու միսիոներներից մեկը՝ Հրանչոիս Փալիվը, իր ուղեգրության մեջ այսպես է նկարագրել Էջմիածնի միաբանների ընթրիքը.

«...Նախ հայրապետը սեղանն օրհնեց, ինչպես նաև քանի մը հաց, զոր ձեռքը բռնեց, հացը կտոր կտոր ըրավ, կտոր մը ինք առավ, իսկ մնացյալը բաժնվեցավ միաբաններուն: Խնդրած էինք, որ մեզի ալ տային ինչ որ մյուս կրոնավորներուն պիտի տրվեր. ինչպես հայրապետին, մեզի ալ երկու պնակ բակլա, ձիթապտուղ և ծնեբեկ հրամցուցին, առանց յուղի և կարագի, ինչպես նաև կանանչ խոտեր, և իբրև ըմպելի՝ սառով ջուր: Զարմանքով կնկատեինք, թե որքան չափավոր և սակավապետ էին այս կրոնավորները, որ պահքի շրջաններուն օրը մեկ անգամ կճաշեն...[94] ...[նրանց] տաբազը քիչ կտարբերի մեր կրոնավորներուն տարազեն, միշտ կկրեն կոշտ քուրձ մը...: Իրենց աղոթասացությունները շատ երկար են...: Իրենց խուցերը շատ փոքր են: Այն կրոնավորները, որ եպիսկոպոսական կարգ կստանան, կամ նույնիսկ հայրապետը ո՛չ իրենց տաբազը կփոխեն, և ո՛չ ալ իրենց կենցաղը: ...[Ս. Էջմիածնի կաթողիկոսն է] միակ ճշմարիտ հայրապետը բովանդակ Հայաստանի... իր իշխանությունն այնքան մեծ է, որ կրնա եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները իրենց հասավոր պաշտոններեն զրկել: Ինքն է միայն, որ անոնց ամենուն կարգ կու տա, բայց կղերը և ժողովուրդն է, որ զանոնք իրեն կհանձնարարեն: Նույնիսկ կրնա իրեն հաջորդ մը ընտրել, որուն պաշտոնը կհաստատեն եպիսկոպոսները: Հարյուր հիսուն եպիսկոպոս և արքեպիսկոպոս ունի իր հրամանին տակ...»[95]:

Հայոց կաթողիկոսների և եպիսկոպոսների՝ ձի չնստելու և ջորիով շրջելու սովորության մասին մատենագրական վկայություններ է ժողովել Ղուկաս Ինճիճյանը[96]: 1636 թ. Հակոբ Սսեցու գրած՝ «Վասն պախարակելոյ օրինազանցիցն» չափածոյից իմանում ենք, որ XVII դարում այս կանոնի շրջանցումները հաճախացել էին.

«Այն անիրաւ նուիրակնուն,
Տաճկի րախտով (=ձիասարքով) ձի կու հեծնուն,
Շարժմունքն ամեն զէտ օսմանցուն.
Ա՛յ սուրբ մեռոն, հայիվ սէնի (=ափսոս քեզ)»[97]:

Ութերորդ կետով ջուղայեցիները վրդովմունք էին հայտնում, որ Նահապետն, ըստ իրենց հասած լուրերի, որդեգրել էր աշխարհական իշխանի կեցվածք. «Նոր զարմանս եւ ծիծաղելիս ո՛չ առնել, այսինքն՝ թէ... կապել թիւր եւ դաղարայ(?), որ կարի հեռի է ի հոգեւոր իշխանութենէ, զի զէն զինուորութեան մերոյ ո՛չ է մարմնաւոր, այլ հոգեւոր»: Այս տեղեկությունն այն աստիճան արտասովոր է, որ նրա արժանահավատությունն ակամա կասկած է առաջացնում: Սակայն եղած տարակույսները փարատվում են, երբ ընթերցում ես 1692 կամ 1693 թ. Նահապետի իսկ ձեռքով՝ բողոքարկու պոլսահայության առաջնորդներին գրված հետևյալ տողերը.

«...դուք է՞ր իմ կաթուղիկոսութիւնն չուզէք, քանց ո՞վ պակաս եմ: Այս քսան-երեսուն տարի է, որ Եղիազարին ղուլլուղ (=ծառայություն) եմ արեր այս աւուրս համար: Դուք ո՞ր տեղացդ իմ սէխսիս պարապար մարդիք, որ կաթուղիկոս ընտրեր՝ զորն է խէչվը, զորն է քօսէ, զորն քոռ, զորն կիժ... գող ու բոզ Մարկոսի պիսակոտ աշակերտն (իմա՝ Մինաս Ամդեցուն) քանց Եղիազարին [աշակերտն] (իմա՝ իրեն Նահապետին, Ա.Ա.) աւելի ուզէք: Այս է, որ մին փոքր դժուար է գալիս ինձ, թէ չէ՝ ձեր տօլվաթէն ես քան զԵղիազարն այլ մեծ եմ, քան զՅակոբն այլ: *Ես բերդն առեր եմ ու նստեր, ո՛վ խօսք ունի՝ դայ խօսի... Ես կորիւն առիւծու եմ՝ Եղիազարին տեղն եմ. տեսնունք Մարկոսի պիսակոտն է ուժով թէ՞ Եղիազարի ասլանն է...* Ա՛յ խօճայք, դուք զիմ լաւն ու վատն ինչէ՞ն իմացայք, որ կու գրէք, թէ Նահապետ կաթուղիկոսն չենք ուզեր, հպայ այդ չալ Մինա՞ան կուզեք. լաւ է, ուղարկեցե՛ք դայ, ձեր հաթերն համար մին կաթուղիկոս չինեմ, որ աշխարհ ամենայն հազ անէ» (ընդգծումն՝ Ա.Ա.)[98]:

Նահապետի այս խոսքում շեշտված է իր նախորդին՝ Եղիազար Այնթապցուն աշակերտելու հանգամանքը: 1695 թ. օգոստոսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գրված մի հիշատակարան նույնպես ընդգծում է, թե՝ Նահապետ կաթողիկոսի «զհոգեւոր ծնօղն եւ զդաստիարակն զՏէր Եղիազար, զոր երկամք աստուածայնօք դաստի-

արակեալ հասոյց յարբունս հասակի իւրոյ, որով եւ արժանաժառանգ գտաւ առաքելական Աթոռոյս մեծի»[99]: Ժամանակակիցները նմանություններ էին նկատում այս երկու կաթողիկոսների վարքագծի մեջ: Այսպես, Զ. Քանաքեռցին գրում էր.

> «Այս երկու կաթուղիկոսաց ի ժամանակի շինեցաւ եւ նորոգեցաւ բազում վանորայս եւ եկեղեցիս: ...Բայց զկարգ եւ զկանոն առաջին կաթուղիկոսացն[100] քայքայեցաւ ի Ս. Աթոռոյն եւ յամենայն վանորէից վասն թոյլ տալոյ նոցա. զի ամենայն առաջնորդք ըստ կամաց իւրեանց առնէին, եւ կաթուղիկոսացն ոչինչ լինէր փոյթ, զի ինքեանք զոր ինչ յիւրեանց աշխարհին (իմա՝ Օսմանյան կայսրությունում, Ա.Ա.) վարեալ էին՝ զնոյն եւ աստ առնէին: Այլեւ զոր ինչ պակասութիւն տեսանէին աբեղայից եւ երիցանց, բերեալ զերծէին զգլուխսն եւ զմորուսն եւ բրածեծ առնէին մահու չափ: Եւ այսպէս կային ի ժամանակս կենաց իւրեանց»[101]:

Ավելի ուշ նրանց միջև զուգահեռներ էր անցկացնում նաև Սիմեոն Ա. Երևանցին՝ նկատելով, որ Նահապետը «էր նման Եղիազարու (որոյ էր աշակերտ). այր ճոռամախսիս եւ փառապերճ, իշխան եւ ահարկու, յորմէ կասկածէին ամենեքեան»[102]:

XVII դարի հայ փիլիսոփայության պատմաբան Հ. Միրզոյանի կարծիքով, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցին (1643-1715)[103], 1690-ականների իրադարձությունների ազդեցությամբ, «ստիպված է եղել վերանայելու իր Գիրք սրբազնագործութեան երկը՝ հատուկ գլուխ հատկացնելով կաթողիկոսների ցանկալի վարքագծի վերլուծությանը», որտեղ հետևյալ տողերն ուղղված էին անձամբ Նահապետ Եդեսացուն.

> «...Նախ ժողովել պարտիս զգիտնականս եւ արս հանճարեղս, եւ ունօղս խղճմտանս... եւ անխարդախս, եւ նոքօք խորհեսցես, եւ զվնաս պատժապարտին յայտ յանդիման առաջի ամենեցունց բացերեւոցես, եւ յետ վկայութեան ամենեցունց, ապա զսուրն սոսկալի ի գործ գործցես»[104]:

Ուշադիր զննելով Հովհաննես Ջուղայեցու երկի այդ հավելյալ գլուխը[105], նրա մեջ նշմարեցինք ևս մի քանի հատված, ուր խոսքն անտարակույս վերաբերում է Նահապետի գործելակերպին: Ահավասիկ, 1693 թ. շրջաբերականի հետ ուղղակի աղերս ունեցող մի պարբերություն.

«...Ապա թէ ոչ այսպէս (իմա առաքինաբար՝ Ա.Ա.), այլ բարձրայօն չրջիցէ [կաթողիկոսը], կամելով զարհուրեցուցանել զորս են ընդ ձեռամբ զմեծագոյնս եւ զփոքրագոյնս խորովելով եւ այրելով եւ զկծեցուցանելով՝ զոմանս դանելով եւ հարկանելով, ատելով եւ տառապեցուցանելով, եւ կամ հրամայելով ի վեր քան զչափն, եւ զոմանս հրաւիրելով ի գերադրական փառս, եւ յաստիճանս եւ ի պատիւս առ ի յայրել, եւ ի խորովել զաղքատսն հոգւով, յաջ եւ յահեակ խոտորմամբ՝ ոչ ապաքէն վրիպումն ցուցանի... քանզի դանելն եւ հարկանելն մարմնաւորացն է, եւ ո՛չ հոգեւորաց... Եւ ո՞ւր ընթերցեալ լինի, եթէ զոք հարեալ իցէ Քրիստոս, այլ մանաւանդ ինքն՝ հարեալ ինքն ձաղեալ, ինքն կռփահարեալ եւ ապտակեալ, յերեսն թքեալ եւ դան հարեալ, ի խաչն բարձրացուցեալ, եւ զայլիւք բեւեռօք ի փայտին բեւեռեալ, բարձրացեալ եւ նախատեալ»[106]:

Սակայն, հեղինակի մի բացականչությունից եզրակացնում ենք, որ այս խրատական ուղերձը գրվել է Նահապետի մահից հետո՝ Մայր Աթոռի գահին բազմած Հովհաննես Մրքուզի դասընկեր Աղեքսանդր Ջուղայեցուն (Դավիթ Ջուղայեցու «երրորդ ընտրելագոյն եւ գերահրաշ աշակերտ»ին)[107] և հաջորդ կաթողիկոսներին Նահապետի կատարած սխալներից ետ պահելու նպատակով.

«...արդ, որպէս կամիս՝ հեզութեամբ եւ խոնարհութեամբ խրատեսցէ զքեզ եւ քաղցրութեամբ, եթէ՝ սրտմտութեամբ, դանիւ, եւ հարկանելով, եւ ի մէջ բազմաց խայտառակելով, եւ զամօթալի զքեզ ամենեսեան ցուցեալ նշաւակելով. *եւ գիտեմ, զի զառաջինն ընտրեսցե՛ս» (ընդգծումն՝ Ա.Ա.)[108]:*

9. Հայ և օտար մշակույթների համեմատական գնահատականներ (1625, 1693, 1733 և 1740 թթ.)

1693 թ. մայիսի 1-ին Նոր Ջուղայի հայ առաջնորդները, ընդգծելով ազգային առաջընթացի գործում կրթական-լուսավորչական լայն ցանց ստեղծելու անհրաժեշտությունը, արձանագրում էին այդ պահին նույն ընագավառում հարևան վրաց ժողովրդի զգալի հետամնացությունը.

«(Ամենայն Հայոց կաթողիկոսը) դպրատունս եւ զդասատունս հաստատեսցէ՛ յամենայն տեղիս, որպէս սովորութիւն է այլազգեաց քրիստոնէից, եւ մանաւանդ թէ մեզ իսկ գլխովին, նաեւ պարսից եւս, զոր գիտողացն է քաջայայտ՝ թէ որքան ունին ջանք եւ փոյթ յայդմ իրի: Քանզի չինութիւն եւ հաստատութիւն ազգի դովա՛ւ լինի: *Որպէս եւ տեսանեմք խոպանացեալ եւ անգիտանացեալ ազգն վրաց՝ յաղագս ոչ ունելոյ փոյթ զայնմանէ»:*

Արդարև, XVI-XVII դարերում վրաց մշակույթը խորը ճգնաժամի մեջ էր, որ, նախ և առաջ, արդյունք էր օտար նվաճողների կատարած վիթխարի ավերածությունների և եղբայրասպան մեծ ու փոքր անվերջ պատերազմների: Սակայն, XVIII դարի առաջին քառորդի ընթացքում, Քարթլիի ջանիշին (փոխարքա) (1703-1714), հետագայում՝ թագավոր (1716-1724) Վախթանգ Զ-ի (1675-1737) շուրջը համախմբված հայրենասեր գործիչների եռանդուն ջանքերով, վրաց մշակույթն իսկական զարթոնք ապրեց[109]*, և այն աստիճան, որ 1740 թ. հունիսի 23-ին, Կ. Պոլսի Հայոց Հովհաննես Կոլոտ պատրիարքն արդեն տարբեր կարծիք էր հայտնում հայերի և վրացիների մշակութային ձեռքբերումների մասին.*

«Բայց իմ նկատեալ ի փարթամութիւնս լատինացւոց եւ յաղքատութիւն ազին իմոյ եւ իմ իսկ գլխովին (ի կոչմանէ իմաստութեան եւ մեկնութեան Աստուածաշունչ գրոց) թաղձէի եւ մորմոքէի ի սրտի իմում, թէ վասն ո՞յր պատճառի քան զազգն իմ այլ առաւել աղքատագոյն ազինք պերճացեալք իցեն իմաստութեամբ, որպիսիք են *Ասորիք եւ Վրացիք,* յորոց զբազում բանս ի նոցունց թարգմանեալ ցուցանեն նախնիք մեր...» (ընդգծումն՝ Ա.Ա.)[110]:

Դեռևս 1720-1723 թթ. գրած մի չափածոյում Հովհաննես Կոլոտը դժգոհում է հայերի որոշ հատկություններից, որոնք, իր կարծիքով, ընորոշ չեն այլ ազգերին.

«Նա եւ այս իսկ է հրաշական,
եւ զարմացման է իսկ արժան.
Ազգք եւ ազինք համանգամայն,
Իւրաքանչիւրքն ամենեքեան
Ըզգլխաւորս մեծարական՝
պատուեն սիրով խոնարհական,

Են հնազանդ յոյժ միաբան
եւ վայելեն ի բարութեան:
Մերքն միայն անգիտական,
սիրեն մնալ տարագրական...»[111]

Իսկ 1733-ին Կոլոտի աշակերտ Հակոբ Նալյանը, բարի նախանձախնդրությամբ վառված, հետևելով իր ուսուցչին խտացնում էր գույները և անում այսպիսի համեմատություն.

«...եւ մեր նկատեալ, թէ ամենայն ազգք քրիստոնէից զբաղում ջանս ունին ի կրթումն իւրեանց յանձնեցեալ հօտին, եւ մերս ազգ՝ կամ յիւրեանց անընդունակութենէ եւ կամ զիմաստնոց պատիւն ոչ գիտելոյ, մնացեալ են յանջրդի վայրս անճարակ եւ անդաստիարակ...»[112]:

Կոլոտի և Նալյանի կարծիքին համահունչ համեմատական մի գնահատական էլ՝ նրանցից մոտ մեկ դար առաջ, տվել է Սիմեոն Լեհացին (1584-1637): Թեպետ Սիմեոնը հակակաթոլիկ եռանդուն գործիչ էր, բայց և այնպես գիտության ու կրթության նկատմամբ հայերի և եվրոպացիների տարբեր վերաբերմունքը գնահատում էր ոչ հայերի օգտին: 1619-1625 թթ. շարադրած իր «Ուղեգրության» մեջ, նա նախ ընդարձակորեն գովաբանել է եվրոպացիներին («ազգն Ֆռանկաց»).

«Զի ամենեքեան իմաստունք են, կարգաւորք եւ աշխարհականք, նաեւ շինականքն եւ ուսումնասէրք, զի Աստուածաբանք, իմաստնասէրք, երաժիշտք, երկրաչափ եւ աստեղագէտք առ նոսա գտանին. եւ տասն տարեն տղան տասն բիւր դրամի հաշիւն եւ համարն ի մի ժամն կարէ տալ բախամով (=թվանշանով):...զի նոցա փոքր տղայքն բուն վարդապետք են... զի ԺԵ (15) տարի, Ի (20), ԻԵ (25) ուսանին, եւ ոչ թէ մերձ ծնողաց, այլ հեռաբնակ եւ օտար երկիրս»[113]:

Այնուհետև Սիմեոն Լեհացին գնահատում է կրթական ասպարեզում հայոց մեջ ստեղծված իրավիճակը.

«Իսկ ազգն մեր յոյժ հովցել եւ զպատվիրան Աստուծոյ մոռացել. զի եւ զանունն Աստուծոյ երբեք ոչ յիշեմք. վասն զի բնաւ չունին սէր ուսման. վասն որոյ եւ զզաւակն թողուն անճնապաստան եւ անփոյթ. իսկ նոքա մեծացեալ որպէս պախրէք

(=արջառներ) տգէտ եւ յիմարք գոլով՝ ի մեղս ծնողաց եւ ի նախատինս անձանց: Վասն որոյ նուազեալ պակասեցաւ եւ ջնջեցան կարգաւորք եւ իմաստունք յազգս մեր. եւ որք կանն այժմս ամաչեմ կարգաւոր կոչել զնոսա»[114]:

Փաստորեն, հայերի կրթասիրությունն ու կրթական համակարգը փոքրիշատե դրական է գնահատել վերը բերված չորսից միայն մեկ վավերագիր՝ 1693 թվականին գրվածը: Հասկանալու համար այս հակասությունը, բավական է հայացք նետել պատմական այն ժամանակաշրջաններին, երբ տրվել են այս գնահատականները: Դրանց մեջ ամենահանգիստ ժամանակները հե՛նց 1690-ականներն էին, երբ Հայաստանը, հիսուն տարուց ավելի ապրելով խաղաղության պայմաններում, արդեն շունչ էր քաշել թուրք-պարսկական դարուկես տևած պատերազմներից ու մեծապես բարելավել էր իր սոցիալ-տնտեսական վիճակը: Մյուս երեք գնահատականները տրվել են Հայաստանի համար խիստ ծանր ժամանակներում: Միաժամանակ՝ այս գնահատականներն արտացոլում են թերարժեքության այն բարդույթը, որն օտար տիրապետության երկարատևության հետևանքով, արդեն հասցրել էր խոր արմատներ գցել հայերի ազգային հոգեբանության մեջ:

Կարևոր է նշել, սակայն, որ մյուս երեք հեղինակները բոլորն էլ ազգասեր անհատներ էին, և նրանց սուր քննադատությունը նպատակային էր՝ հայկական կրթության զարգացմանը զարկ տալուն միտված: Ահավասիկ, նույն Սիմեոն Լեհացին, այցելելով Ամիթ-Տիգրանակերտ, տալիս է հայերի կրթասիրության բոլորովին այլ պատկեր.

«(Տիգրանակերտ) ունէր դարպաս եւ եպիսկոպոսարան եւ դպրատուն եւ վարդապետ մի Բարսեղ անուն, որ եւ առաջնորդ, աշակերտ Սրապիոն կաթողիկոսի, այր խրթին եւ բազմիմաստ:...Եւ քաղաքացիքն յոյժ բարեկեցիկք եւ պարկեշտ. նաեւ ընթրիս բազմեալ ոչ արբենան, ոչ շատ խօսին, այլ հեզ եւ հանդարտութեամբ. զի ամէնքն կարդացողք, տօմարագէտք եւ հանճարեղք, զրուցատրութիւն թէ առուտուր, թէ ասուլիս՝ ամէն մարդավարութեամբ եւ ամենայն ինչ իմաստութեամբ, եւ զրուցն գրաբար եւ ոճիւ բառքն... Զի անդ է այժմ Հայոց Աթէնք. զի եւ փոքր տղայք գիտունք եւ հանճարեղք են, հանապազ ի հարցում եւ ի քննումն են...»[115]

* * *

Բ. ՀԱԿԱՀԱԿՈԲՅԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ
(1664-1665 ԹԹ.)

Ահա և 1693 թ. մայիսի 1-ին Նոր Ջուղայում տպագրված երկրորդ վավերագիրը (գրության տարեթիվը՝ 1665 թ.):

Բ վավերագիր (1665 թ.)

Յաղագս կարգի կաթուղիկոս ձեռնադրութեան, գրեալ ի Մովսիսէ վարդապետէ Բ՚ջնեցոյ՝ համաձայնութեամբ սրբազան վարդապետաց եւ եպիսկոպոսաց վերագրելոց ի քարտիսիս.

Յամի կենարարին մարդեղութեան հազար [վեց հարիւր]երորդի եւ վաթսներորդի հինգերորդի եւ, ըստ թուահաշու[ու]թեան հայկայինս տոհմի՝ հազարերորդի հարիւրերորդի ընդ հինգետասանեկի մասնկի, մե՛ք, Արարատեան նահանգի վարդապետք եւ եպիսկոպոսունք եւ առաջնորդ վանականաց, եւ միանդամայն Արեւելեան կողմանց Աթոռոյ ունողք եւ ժողովրդեան վերադիտողք, որ ընդ տէրութեամբ պարսկական արքայից արքայի, հանդերձ աշխարհիկ արանց[116] մեծամեծօք, գումարեցաք ի մի վայր եւ զայս երիս իրս սահմանեալ հաստատեցաք ի միջի մերում՝ վասն գերագահ Աթոռոյն Սուրբ Էջմիածնի պայծառութեան եւ ժողովրդեան Աստուծոյ բարեկարգութեան:

Նախ՝ զի կաթուղիկոս ոք մի՛ իշխեսցէ ըստ կամաց իւրոց նստուցանել զով ոք ախորժէ ի տեղի իւր, եթէ ո՛չ ըստ ազգաց քրիստոնէից հանրականաց աւանդութեամբ, չորիւք յեղանակօք, այսինքն.

կամ վիճակաւ իմիք, որպէս հռովմայեցւոց է՛ սովորութիւն.

կամ ընտրութեամբ հասարակաց, որպէս առաջնոցն եւ յետնոցն եւս.

եւ կամ ի հաւանութեանց վեհագունից բազմաց Յ սրբազան

արանց:

Թողո՛ւմ ասել զչորրորդն, որ է՝ վերին յայտնութենէն, որ ա՛յժմ իսկ դադարեալ է եւ լռեալ՝ վասն անարժանութեան մերում: Եւ ի բաց ի չորիցս յայսցանէ եղելոյ մի՛ ոյ կաթուղիկոս ինք[ն]ագլուխ մի՛ իշխեսցէ ընտրել զոք ի պատիւ հայրապետութեան փոխանակ իւր՝ արտաքոյ սահմանադրութեան հարց նախնեաց սրբոց:

Երկրորդ. *եթէ բռնասցի գլուխ ազգի կարգեալ կաթուղիկոսն առնել ըստ կամաց իւրոց՝ զարտուղի խորհրդով նստուցանել զոր ոք հաճեսցի անձն իւր փոխանակ իւր - կամ այլազգեաց իշխանութեամբ, կամ անիրաւ մամոնայի սփռմամբ, եւ կամ խաբեութեամբ իմիք - ի գրելոց աստի եւ ըստ իւրաքանչիւր անուանելոց քարոզ կոչեցելոց վարդապետաց՝ խոտեսցի ինքն կաթուղիկոսն եւ ընտրեալ իւր: Քանզի թէ սկիզբն [սուրբ է]՝ սուրբ է ե՛ւ զանկուածն ե՛ւ արմատն, ապաքէն ե՛ւ ոստքն: Իսկ եթէ է՛ ընդդէմ ճշմարտութեան մարտնչումն, եղիցի համարեալ ի մասին մեղացն, որ ոչ քաւեսցի աստէն եւ անդէն. որպէս վկայէ տէրունական վճիռն յաւետարանի հռչակութեան*[117]*:*

Եւ երրորդ. *եթէ երկուքս այսոքիկ յառաջեսցին անհանճար գնացիւք, հարկ լիցի ապա ուրեմն ե՛ւ վարդապետաց, ե՛ւ եպիսկոպոսաց, ե՛ւ բոլոր ուխտի վիճակաւորաց, ե՛ւ համայն աշխարհի արանց երեւելեաց՝ ընդդիմանալ միագունդ պնդութեամբ եւ ջանալ եղծանել զապարասանութիւն բռնացելոյ կաթուղիկոսին, որով հօտն Աստուծոյ արածեսցի ի վայրի դալարոջ եւ սնուսցի ի ջուրս հանգստեան եւ առաջի երկնաւոր թագաւորին պսակաց յաղթականաց արժանասցին, քան թէ սնոտի երկիւղիւ՝ պարտեցելոց եւ թուլամորթից պատժոց, որպէս եւ իրաւունք համօրէն ազանց ուսուցանեն զսոյն զայսոսիկ այսպէս գոլ: Վասնորոյ եւ զայս թուղթս, զոր գրեցաք առ Յակոբ կաթուղիկոսն միաբանական համաձայնութեամբ, յաղագս հասարակաց եւ հաստատութեան Սրբոյ Աթոռոյն հանրական արամեան ազգիս էջմիածնի՝ ոչ ի մէջ հակառակութեան եւ երկպառակութեան: Եթէ ի պատճառս սորին հոգեկան եւ մարմնական պատիժ յառաջեսցի ի նմանէ, դառնութիւն ինչ եւ բանադրանք, եւ կամ տուգանք եւ զըզուանք ի վերայ միոյ ուրուք գալ եւ կամ առ ոմանս՝ իբրու ի յոլովս*

ի վերայ ամենեցունց եղիցի: Զոր ուխտեցաք եւ հաստատեցաք համակամութեամբ վրէժխնդիր լինել մերժեցելոյն: Եւ զվէրս մեզ համարել եւ կռուել յոժարութեամբ: Քանզի եթէ վչտանայ մի անդամն, վչտանալ պա՛րտին ամենայն անդամքն ընդ նմա: Իսկ եթէ ոք յայսցանէ վրիպեալ վերջասցի անհանճար խորհրդով եւ ունայնական մտօք՝ նզովեսցի յերից սուրբ ժողովոյ հայրապետացն եւ մասն ընդ Յուդայի եւ խաչահանուացն ընկալցի, որք զճշմարտութիւն քարոզեցին եւ զթիւրութիւն եւ զմոլութիւն սերմանեալ ի բաց հերքեցին: Եւ եղիցի այնպիսին լուծեալ ի կարգէն եւ որոշեալ յաստիճանէն դատապարտական պատժիւք: Յորոյ վերայ կնքեսցի Ամէնն:

Տպեցաւ սաւատս ի Նոր Ջուղայ, ի թուին հազար հարիւր քառասուն եւ երկու (1693) եւ յամսեանն մայիսի ի մէկն:

1. Յովհաննէս վարդապետ Մուղնեցի †[118]
2. Մովսէս վարդապետի՛ է կնիքս եւ գիծս †
3. Միքայէլ վարդապետ. առաջնորդ սուրբ Նախավկային†
4. Եսայի վարդապետ. առաջնորդ սուրբ Կարապետու †
5. Պետրոս վարդապետ Ադուլեցի †
6. Մաթէոս վարդապետ Ջուղայեցի †
7. Երեմիա վարդապետ Մեղրեցի †
8. Յովհաննէս վարդապետ Կարփցի †
9. Գաբրիէլ վարդապետ †
10. Ստեփաննոս վարդապետ Լեհացի †
11. Փիլիպպոս վարդապետ †
12. Մինաս վարդապետ †
13. Մանուէլ վարդապետ †
14. Յակոբ եպիսկոպոս †
15. Յոհան վարդապետ [Շամբե՞]ցի †
16. Դաւիթ վարդապետ †
17. Խաչատուր եպիսկոպոս †
18. Յակոբ պատրիարք (՞- Ա.Ա.) †
19. Իսահակ վարդապետ Շախսաբանցի[119] †
20. Ադուլեցի խոջայ Շմաւոն †
21. Մելիք Գասպար Երեւանցի †
22. Խոջա Բարաքիազ Ադուլեցի †
23. Ասլան Նորքցի †

24. Թաթոս Երևանցի †
25. Յարութիւն Մարուքի որդի †
26. Սարգիս [Ջորա]գեղցի[120] †
27. Յակոբջան Երևանցի †

Քննություն Բ վավերագրի

1. Վավերագրի գրության ժամանակը և վայրը

«Յամի կենարարին մարդեղութեան հազար [վեց հարիւր]երորդի եւ վաթսներորդի հինգերորդի եւ, ըստ թուահաշու[ու]թեան հայկայինս տոհմի՝ հազարերորդի հարիւրերորդի ընդ հինգետասանեկի մասնկի՛»: Այստեղ գործածված է հայկական շարժական տոմարը, որով 1115 թ. սկսվում է 1665 թ. հոկտեմբերի 6-ին[121]: «Մասնկի՛» մակբայական կիրառությամբ գործածված բառը նշանակում է հենց 1115-ի մի մասը, վերոգրյալ քրիստոնեական տոմարի բաղդատությամբ՝ մինչև 1666 թ.: Այսպիսով, փաստաթուղթն ընդունվել է 1665 թ. հոկտեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում (հին տոմարով): Պարզ մակաբերություն կատարելով՝ ուղղանկյունաձև փակագծերում ավելացրել ենք վեց հարիւր *(վավերագրի վրա, հավանաբար Լ. Մինասյանի կամ գուցե ավելի վաղ գրչի ձեռքով՝ նույնն է ավելացված):*

1693 թ. Նոր Ջուղայում շարադրված փաստաթղթի հեղինակները ժամանակագրական չփոթի տեղիք են տվել, երբ, նշելով այս վավերագրի գրության թվականը, բաց են թողել «մասնկի» բառը, որով՝ 1665-ի փոխարեն հասկացվում է 1666 թ.:

1665 թ. վերջին կայացած ժողովի վայրը բուն վավերագրում չի հիշվում, սակայն այն հստակ նշված է 1693 թ. ջուղայեցիների շրջաբերականում՝ «...[1665 թ.] մեծանուն վարդապետք, երեւելիք եւ նշանաւորք ժողովեալ են ի Սուրբ Աթոռդ Էջմիածին»:

Առաջադրենք այս ժողովի ժամանակն ու վայրը ճշտող մի վարկած: Իր «Օրագրության» մեջ՝ Զաքարիա Ագուլեցին շատ համառոտ կերպով նշում է, որ 1665 թ. դեկտեմբերի 3-ին Ագուլիսից մեկ-

նել է Երևան, ուր հասել է չորս օրից, այնուհետև՝ դեկտեմբերի 15-ին, բռնել է վերադարձի ճամփան[122]: Արդ, նա մի խոսք անգամ չի ասում իր ուղևորության դրդապատճառների և Երևանում անցկացված ութ օրվա անցքերի մասին, որ այլ առիթներով սովորաբար միշտ անում է: Սա կասկած է առաջացնում առ այն, որ այդ ճմեռային արագընթաց ճանապարհորդությունը կարող էր ձեռնարկված լինել իր եղբոր՝ հակահակոբյան ժողովի վճռի տակ աշխարհականներից իր ստորագրությունն առաջինը դրած՝ խոջա Շմավոն Ագուլեցու[123] կանչով, քանզի այս երկու եղբայրները մշտապես ու սերտորեն համագործակցում էին և՛ առևտրական, և՛ մյուս գործերում: Եթե մեր այս ենթադրությունը համապատասխանում է իրականությանը, ապա ժողովի անցկացման ժամանակը կարելի է ճշտել՝ 1665 թ. դեկտեմբերի առաջին կես, իսկ վայրը՝ 1664 թ. հոկտեմբերին կայացած ժողովի[124] պես՝ դարձյալ Երևան:

2. 1664 թ. հոկտեմբերի ժողովը: Ժողովականները

Համաձայն Զաքարիա Քանաքեռցու՝ Օնոփրիոս վարդապետ Կարկուտը, Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսից (1655-1680) իր պես դժգոհ տարրերին ի մի է բերում, որովհետև.

> «միաբանեցոյց ընդ ինքեան, եւ գրեցին բազում հայհոյանօք սուտս ի կաթուղիկոսէն առ Եղիազար վարդապետն, որ պատրիարգ [էր] Երուսաղէմի, թէ «դու եկ ի Սուրբ Աթոռս, եւ մեք քեզ տամք զկաթուղիկոսութիւնն Էջմիածնի՝ արքունական նօմոսիւք (=հրամանագրով): Եւ ահա առաքեցաք առ քեզ զՕնոփրիոս վարդապետ, զի զքեզ փառաւորապէս բերցէ ի Սուրբ Աթոռս»: Զայս գրեցին եւ, ընդ հաւատարմաց իւրեանց առաքեցին յառաջագոյն. եւ յետոյ գնաց Օնոփրիոսն զկնի թղթոյն»[125]:

Ինչպես ճիշտ նկատում է Կ. Ամատունին, «Զաքարիայի այս տվյալները կենթադրեն ժողովական գումարում»[126]: Այդ ժողովին վերաբերող մի ընդարձակ վավերագիր հրապարակել է Մեսրոպ Նշանյանը, այն համարելով Կարկուտ Օնոփրիոսից Եղիազար Այնթապցուն ուղղված նամակ[127]: Այս առթիվ նկատենք, որ ա) փաստաթղթի

հեղինակն իրոք Օնոփրիոսն է, բ) սա սովորական անձնական բնույթի նամակ չէ: Այսպես, տեսնենք, թե ինչ են բովանդակում Օնոփրիոսի շարադրանքի վերջին տողերը.

> «...եկի ի սուրբ յԵրուսաղէմ, ժամանեալ մարտի ամսոյ ի չորրորդումն աւուր (1665 թ.), եւ գտի զԵղիազար վարդապետն կաթուղիկոս եւ պատրիարք օծեալ ի վերայ նոյն Սուրբ Աթոռոյն ամսօք կանխօք,... եւ մի ըստ միոջէ զամենայն վերոգրեալսն եւ այլ աւելիս ծանուցի նմա...: Վասն իմոյ կամաց եւ կարեաց ախորժութեան՝ ամենայն յօժարութեամբ իմով հաւանեալ ետու զանձն իմ ի ծառայութիւն կամաց Տեառն Եղիազարու կաթուղիկոսին Ամենայն Հայոց. վասն որոյ գրեցի զայս ձեռագրի ուխտադրութիւնս եւ կնքեցի, զի մինչ ի մահ եւ ի վճար կենաց իմոց Աստուծով զանձն իմ եղից ի վերայ անձին սորա՝ եթէ ի մահ եւ եթէ ի կապանս եւ ի տանջանս. եւ զամենայն ել եւ մուտ կացից եւ գնացից իմոց նորին կամաւ կալ եւ մնալ որքան ի մարմնի իմ, եւ թէ ստերիւրալ խեռիցեմ ի սիրոյ նորին ծառայութենէ՝ ընդ ուխտադրուժ ուխտազանցսն կրիցեմ ըզդատապարտութիւնն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ»[128]:

Կասկած չկա, որ այս տողերն իսկապես նախատեսված էին ի տես Եղիազարի, սակայն, փաստաթուղթը գրված է XVII-XVIII դարերի վստահագիր-երդմնագրերում հանդիպող ոճով[129]: Ուստի այսուհետև այս գրությունը կանվանենք «երդմնագիր»:

Կարապետ Ամատունին, որ հանգամանորեն անդրադարձել է այս գրությանը[130], կարծում է, թե այն գրվել է 1665 թ. մարտի 5-ին[131]: Սակայն Օնոփրիոսը պարզ նշում է, որ ժամանել է Երուսաղեմ 1665 թ. մարտի 5-ին, *հանձնել իր բերած նամակը Եղիազարին, ապա մի քանի օր նրա մոտ մնացել՝ «առ նմա եղեալ աւուրքք ինչ...»[132]: Իսկ գրությունը շարադրել է, երբ ոմն Ղազար՝ «... առեալ հրաման յարքունուստ եւ եկեալ գողօրէն եմուտ ի սուրբ Աթոռն յԵրուսաղէմի, եւ զհին եւ զնոր արդիւնս եւ զինչս Սուրբ Տանն կողոպտեալ եւ ցրուեալ ընդ վայր ընդ վայր կորուսանելով...՝ զՍուրբ Տունն քակել եւ կործանել ջանայ, եւ զիւր ստապապատիր գործն յառաջացուցանել եւ հաստատել»[133]: Ամենայն հավանականությամբ, Օնոփրիոսի նկարագրած անցքերը, հետևաբար՝ նաև «երդմնագիրը», վերաբերում են 1665 թ. մարտի կեսերից հետո ընկած միջոցին, երբ հակաեղիազարյան խմբա-*

կցությունն սկսեց հակահարված հասցնել նրա գլուխ բերած Արևմտահայոց նորաստեղծ կաթողիկոսությանը:

* * *

Կարկուտ Օնոփրիոսի համաձայն, 1664 թ. հոկտեմբերին՝ «ի տիրաշէն մայրաքաղաքն յԵրևան մեծահանդէս ժողով եղեւ երջանկափառ վարդապետաց եւ արհիապատիւ եպիսկոպոսաց»: Ժողովի 27 մասնակիցները հիշված են հականե-հանվանե[134]: Մեկ տարի անց՝ 1665 թ. վերջին գումարված ժողովի ընդունած (վերևում մեր հրապարակած) փաստաթուղթը բացահայտում է մի խիստ ուշագրավ փաստ. անցած մեկ տարվա ընթացքում Հակոբ Ջուղայեցին կարողացել էր հաշտվել իր նախկին հակառակորդների մեծ մասի հետ, որովհետև 1664 թ. ժողովին ներկա 27 հոգուց 21-ը կամ 22-ը 1665 թ. վերջում կայացած ժողովին բացակայում էին: Նույն անձերից ներկա ենք գտնում միայն Հովհաննես վարդապետ Մուղնեցուն, Սբ. Նախավկայի առաջնորդ Միքայել վարդապետին, Ստեփաննոս վարդապետ Լեհացուն, Դավիթ վարդապետին (որը հայտնի էր որպես Մշեցի կամ պարզապես Դավիթ), Սուսիկ Հովհաննես վարդապետին (սա, ամենայն հավանականությամբ, Կարբեցի կամ Ղափանցի Հովհաննես է) և Հոհան վարդապետ Շամբեցուն (վերջինիս մասնակցությունը թեական է, քանի որ 1665 թ. վերջին կայացած ժողովի փաստաթղթի մեջ «Շամպե» տառերը վերականգնել ենք ենթադրաբար[135]):

Սակայն հետաքրքրական է, որ այս երկու ժողովին էլ մասնակցել է ուղիղ 27 հոգի: 1665 թ. ժողովականների թիվը հաջողվել էր պահպանել նույնը՝ ներգրավելով նոր մարդկանց՝ 8 աշխարհական, 13 կամ 14 հոգևորական:

Նկատենք, որ 1650-60-ական թթ.՝ Մայր Աթոռի միաբանությունը ունեցել էր մոտ 50 վանական: 1653 թ. գրված մի հիշատակարան հայտնում է, որ Մայր Աթոռում՝

> «կայաւորեալք են բազմութիւնք եղբարց կուսակրոնից իբրեւ յինեակ թուով. միշտ յԱստուածաշունչ գիրս պարապեալք եւ յար ի ք[ն]ութիւնս բնախօսական տառից կրթեալք»[136]:

Այդ տարիներին Ս. Էջմիածնի միաբանությունը մտավոր զո-

ըեղ ներուժ ուներ և մեծ հեղինակություն էր վայելում: Հանրահայտ են Սիմեոն Ջուղայեցու, Առաքել Դավրիժեցու, Ստեփաննոս Լեհացու, Ոսկան Երևանցու անունները: Հարկ է նշել, որ իրենց գիտակրթական գործունեությամբ փայլել են նաև ուրիշները: Այսպես, թվարկելով Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսության տարիներին Մայր Աթոռի միաբանության անդամներից տասին, որոնցից 6-ը, մեր համեմատությամբ, մասնակցել էր 1665-ի վերջում եղած ժողովին (Ստեփաննոս Լեհացին, Հովհաննես Մուղնեցին, Միքայել, Մովսես, Գաբրիել և Երեմիա վարդապետները), ժամանակակից Դավիթ Բաղիշեցին գրում էր. «Սոքա ամենեքեան սիւնք եկեղեցոյ եւ անօթք հոգւոյն սրբոյ, անյաղթ փիլիսոփայք»[137]: Սրան ձայնակցում է մի այլ հիշատակագիր. «Ի հրահանգս իմաստասիրութեան կրթէին զանձինս իւրեանց, քանզի զայնու ժամանակաւ (1670) բազումք էին երեւելի վարդապետք քաջաբանք, բանաստեղծք, Աստուածային գրոց գիտունք եւ հմուտք»[138]:

1665 թ. վերջում գումարված ժողովի որոշումը խմբագրել է Մովսես վարդապետ Բջնեցին («...գրեալ ի Մովսիսէ վարդապետէ Բջնեցոյ՝ համաձայնութեամբ սրբազան վարդապետաց եւ եպիսկոպոսաց...»), որն Արարատյան երկրի առաջնորդն էր առնվազն 1656-ից[139]: 1666 թ. գրված մի հիշատակարանի մեջ նրա մասին կարդում ենք. «Հրամանաւ մեծի քաջ հռետորի եւ անյաղթ փիլիսոփայի՝ Մովսէս հոգիացեալ ռաբունապետի, դիտապետի եւ արքեպիսկոպոսի Բջնւոյ մեծ նահանգի Արարատեանս երկրի»[140]: Մովսեսից էր նոտրգիրն ուսանել Պոլսի պատրիարք Եփրեմ վարդապետը (1684-1686, 1694-1698), որը 1695 թ. նրան հիշատակում է իբրև «Աստուածաբանութեան ռաբունապետ»[141]: Այն, որ Եփրեմ պատրիարքն «իբրև կաթոլիկության առաջին հալածիչ նկատված է»[142], թերևս, կարող է որոշ պատկերացում տալ նաև հայոց դավանանքի հարցում նրա ուսուցչի ունեցած կարծր դիրքորոշման մասին: Նույն Մովսես Բջնեցին նաև Ստեփաննոս Լեհացու գրչագրության ուսուցիչն էր[143]:

Ժողովի որոշման վերջնական խմբագրումն իր վրա վերցնելով՝ Մովսես Բջնեցին իր մեծ հեղինակությամբ և իշխանությամբ կարծե՛ս պատնեշում էր մյուս ժողովականներին կաթողիկոսի հնարավոր պատժամիջոցներից, որոնց մասին փաստաթուղթում մտավախություն է արտահայտված: Հետաքրքիր է նաև այն, որ Մովսես Բջ-

նեցին չի մասնակցել Հակոբ կաթողիկոսի դեմ մեկ տարի առաջ՝ 1664 թ. հոկտեմբերին Երևանում գումարված ժողովին: Սա վկայում է, որ կաթողիկոսի աթոռակալ-փոխանորդի հարցն այնքան ցավոտ էր, որ մեկ տարի առաջ իր լուծումը չստանալով (հայտնի է, որ Հակոբ Ջուղայեցին ցանկանում էր իրեն հաջորդ տեսնել Արդար մականվանյալ Իսահակ Մակվեցի եպիսկոպոսին)[144], ինքնին ի վիճակի էր դարձյալ ըմբոստացնելու հայ եկեղեցու բարձրագույն հովիվներին, որոնցից էին ժողովին մասնակցած Ստեփաննոս վրդ. Լեհացին,[145] Միքայել վրդ. Շամբեցին[146], Մատթեոս վրդ. Ջուղայեցին[147], Պետրոս վրդ. Ագուլեցին[148], Հովհաննես վրդ. Մուղնեցին (հավանաբար, նա ամենատարեցն էր 1665 թ. վերջում գումարված ժողովականների մեջ. դրանով ենք բացատրում ստորագրողների ցուցակի մեջ նրա անվան առաջինը դրված լինելը)[149], Հովհաննավանքի առաջնորդ Հովհաննես վրդ. Կարբեցին[150], Երնջակի Ս. Կարապետի առաջնորդ Եսայի վարդապետը[151], Սաղմոսավանքի առաջնորդ Գաբրիել վրդ. Կարբեցին[152], Էջմիածնի միաբան Երեմիա, Մինաս և Դավիթ վարդապետները[153]:

Նշված բոլոր գործիչները արքեպիսկոպոս ու եպիսկոպոս էին, իսկ վարդապետ տիտղոսով ստորագրում էին հայոց մեջ այդ ժամանակներում տարածված սովորության համաձայն[154], երբ վարդապետության հեղինակությունը բարձրացել էր մինչև այնտեղ, որ 1658 թ. մի հիշատակագիր կարող էր ասել՝ «ի կաթուղիկոսութեանն սրբազանի Յակոբի Ջուղայացի վարդապետի»[155]: Ն. Մառը, հայ վարդապետության մասին խոսելիս[156], նկատում էր, որ «հին հայ եկեղեցու մեջ վարդապետների... հեղինակությունը հոգևոր հարցերում շատ բարձր էր, երբեմն ավելի՝ քան եպիսկոպոսի և նույնիսկ կաթողիկոսի հեղինակությունն էր»[157]: Հոգևոր-կանոնական հարցերի նույն այդ ոլորտին է պատկանում նաև վերևում մեր հրապարակած փաստաթուղթը, ուստի վարդապետ ստորագրելը միանգամայն բնական ու սովորական պետք է դիտել: Նմանապես՝ օրինակ, 1652 թ. Երուսաղեմում կայացած՝ XVI-XVIII դարերում հայոց ամենախոշոր եկեղեցական ժողովներից մեկը (մասնակցում էին երկու կաթողիկոս, 18 վարդապետ, 8 եպիսկոպոս, 35 աբեղա, 60-ից ավելի քահանա) արձանագրող Մարտիրոս Ղրիմեցին՝ Էջմիածնի և Սսի կաթողիկոսներից հետո, նախ և առաջ թվարկում ու գովաբանում էր մասնակից տասնութ վարդապետներին, որոնց էլ պատկանում էր եկեղեցական կա-

նոնները մեկնելու և փոփոխելու իրավունքը[158], ու նոր միայն այն ութ «եպիսկոպոսացն, որ են ընդ սոցին»[159]: Այս ժողովին մասնակցած հոգևորականների առաջնայնության հարցը նույն տրամաբանությամբ է լուծում նաև Ա. Դավրիժեցին.

> «Տեառնս Փիլիպպոսի կամեցեալ գնալ յԵրուսաղէմ, որ եւ ելեալ գնաց բազում ամբոխիւ՝ (1) վարդապետօք (2) եւ եպիսկոպոսօք (3) եւ քահանայիւք (4) եւ սպասաւորօք»
> (համարակալումն իմն է՝ Ա.Ա.)[160]:

Պատմական այդ շրջանից առաջ անցնելով՝ նշենք, որ 1802 թ., մի նմանատիպ փաստաթուղթ (Դանիելին կաթողիկոս ճանաչելու և Դավթին մերժելու շրջաբերականը) ստորագրելիս, առաջնայնությունը տրվում էր եպիսկոպոսներին, իսկ սրանցից շատերն էլ, անշուշտ ունենալով հանդերձ նաև վարդապետական իշխանություն, արդեն ավելորդ էին համարում իրենց նվիրապետական այդ աստիճանի գրանցումը, ինչը վարդապետության ինստիտուտի գահավեժ անկման պերճախոս վկայություն է[161]:

Ինչևէ, 1665 թ. վերջին ընդունված փաստաթղթի տակ՝ ժողովին մասնակից ութ աշխարհականներից առաջինն իր ստորագրությունը դրել է Զաքարիա Ագուլեցու եղբայրը՝ խոջա Շմավոնը: Վերջինս, շահի բարձր կարգադրությամբ, 1658-1663 և 1664-1670 թթ. կառավարել է Երևանի «զառաֆխանան» (փողերանոցը)՝ այդ պաշտոնում լինելով առաջին հայը[162], ու, թերևս, նաև այդ տարիներին Երևանի նահանգի հայ ամենաբարձրաստիճան պաշտոնյան: Մյուս աշխարհականները վերջինիս շրջապատից էին. Սարգիս Զորագեղցին, օրինակ, Երևանի «զառաֆբաշին» էր 1663 և 1674-1679 թթ.[163]: Հակոբջան Երևանցին, իրականում, Սպահանում երևանցիների համայնքի («թաղի») ավագն էր, որին 1656 թ. տեղի ունեցած իրադարձությունների առիթով հիշում է Առաքել Դավրիժեցին[164]: Նոր Ջուղայի «Երևան» թաղից էին նաև մելիք-խոջա Գասպար Երևանցին[165] ու Թաթոս երեց Երևանցին[166]: Նորջուղայեցիներին (որոնցից էր, ի դեպ, նաև հեղինակավոր Իսահակ վարդապետ Շախսաբանցին[167]) այս ժողովին ներկա գտնվելու փաստը մեկ անգամ ևս վկայում է, որ 1660-ական թթ. ազգային կյանքում առանց նրանց մասնակցության

որևէ հիմնախնդիր հնարավոր չէր լուծել[168]: Այս խոջաները հակահակոբյան ժողովին, ամենայն հավանականությամբ, միացել էին՝ Էջմիածնի կաթողիկոսի հետ ունեցած դրամական ինչ-ինչ հաշիվների մղումով[169]: Թվում է՝ այսպիսի վտանգավոր բախումները հետագայում կանխելու մտահոգությամբ է, որ 1677 թ. երկրորդ կեսին՝ մահից ընդամենը երեք տարի առաջ՝ Հակոբ Ջուղայեցին առաջարկում էր Էջմիածնի ֆինանսա-տնտեսական գործերը հանձնել «դոլվաթաւոր երեսփոխանաց» ձեռնհաս կառավարմանը, հաստատելով սույն կարգը այն ժամանակ, «յերբ կաթողիկոս լինիք օրհնելոյ»[170]:

3. 1665 թ. տարեմուտի հակահակոբյան ժողովի պահանջների հարաբերական մեղմացման դրդապատճառները

Ամենահետաքրքրականը, սակայն, հետևյալն է. 1665 թ. վերջին Էջմիածնում հավաքվածներն այլևս չէին մեղադրում Հակոբ կաթողիկոսին այն 17 մեղքերի մեջ, որոնք մանրամասն շարադրված են Օնոփրիոսի երդմնագրում և ներկայացնում են 1664 թ. հոկտեմբերին Երևանում կայացած ժողովի վճիռը: Այդ մեղադրանքներից կրկնվում է միայն համար 3-ը՝ փոխանորդ-աթոռակալ ձեռնադրելու կաթողիկոսի ցանկությունը և այս առթիվ ժողովականների ունեցած բուռն անհամաձայնությունն ու ընդդիմությունը: Նաև՝ ի տարբերություն 1664-ի հոկտեմբերյան ժողովի, չէր դրվում Հակոբ Ջուղայեցուն անմիջապես որևէ մեկով փոխարինելու խնդիրը: Արդ՝ ո՞րն էր մեկ տարվա ընթացքում Հակոբ կաթողիկոսի նկատմամբ տրամադրությունների այսպիսի նշանակալից մեղմացման պատճառը: Ինչու՞ էին այդ պահին նրանից դժգոհ շատերը ետ քաշվել ու հրաժարվել այս նոր ժողովին մասնակցելուց:

Այս հարցին պատասխանելու համար նախ պիտի նկատել, որ 1664 թ. հոկտեմբերին Երևանում գումարված եկեղեցական գործիչները խնդրում էին «սուրբ Երուսաղէմի աթոռակալ» Եղիազար Այնթափցուն, որպեսզի նա «ի ցաւակցութիւն աղճատանաց Սուրբ Աթոռոյն Էջմիածնայ եւ բոլոր Տանս Հայոց»՝ իր ցանկացած վայրում գումարի եկեղեցական մի մեծ ժողով.

«զամենեսեան զնոսա առ ինքն կոչելով՝ նստցի դատաւոր

ի միջի նոցա, եւ արասցէ դատ իրաւամբ եւ արդարութեամբ ըստ կանոնաց հարցն սրբոց եւ նախնեաց մերոց՝ ի մէջ մեր ամենեցուն եւ ի մէջ կաթուղիկոսի նարդեան ժամուս՝ Տեառն Յակոբայ, որ նստի յԱթոռ Սուրբ Էջմիածնի»[171]:

Այս ծրագիրն անպայման նախատեսում էր նաև այդ գումարվելիք ժողովի ժամանակ Մայր Աթոռի գահակալի՝ Հակոբ Ջուղայեցու գահընկեց անելը և նրա փոխարեն Եղիազարին կաթողիկոսացնելը: Առ այս վերն արդեն մեջբերեցինք նաև Զաքարիա Քանաքեռցու ուղղակի վկայությունը («ահա առաքեցաք առ քեզ զՕնոփրիոս վարդապետ, զի զքեզ փառաւորապէս բերցէ ի Սուրբ Աթոռս»): Սակայն հստակ է նաև այն, որ ժողովի անցկացման պահին Արևմտահայ կաթողիկոսության հիմնադրման մասին լուրը Արարատյան երկիր դեռ չէր հասել: Այս մասին է վկայում նաև Օնոփրիոսը, երբ ասում է, թե 1665 թ. մարտի 5-ին Երուսաղեմ ժամանելով, իր իսկ համար անակնկալ կերպով՝ «գտի զԵղիազար վարդապետն կաթուղիկոս եւ պատրիարք օծեալ ի վերայ նոյն Սուրբ Աթոռոյն, ընդ որ կարի յոյժ ուրախացեալ»[172]: Հ. Անասյանի մանրազննին քննության համաձայն՝ Եղիազարը կաթողիկոս էր օծվել 1664 թ. հոկտեմբերի 6/15-ից մինչև նոյեմբերի վերջն ընկած միջոցին[173], իսկ ըստ Օնոփրիոսի երդմնագրի՝ 1665 թ. մարտի 5-ից առաջ «ամսօք կանխօք», որ միանգամայն համընկնում է Անասյանի հաշվարկի հետ[174]:

Գիտենք նաև, որ Եղիազարի կաթողիկոսանալուց հետո նրա նախկին համախոհներից շատերը անցել էին Հակոբ Ջուղայեցու կողմը[175]: Արդ, վերը շարադրված փաստերի համադրումից մակաբերում ենք, որ Էջմիածնի միաբանությունը, բնականորեն, ամենից շատ պիտի հակառակվեր Եղիազար Այնթափցուն ու նորաստեղծ պայմաններում Մայր Աթոռի երերուն դիրքերն է՛լ ավելի չթուլացնելու համար՝ համաձայնության գար Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի հետ: Այս է փաստում նաև 1665 թ. հունվարի սկզբին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Եղիազարի գործի խափանման նպատակով տեղի ունեցած նոր խորհրդաժողովը. «ժողովեցան ամենայն առաջնորդք վանորէից, եպիսկոպոսք եւ վարդապետք, եւ հարք, եւ անապատականք, եւ աշխարհական արք երեւելիք, եւ մեծաւ փառօք ուղարկեցին զկաթուղիկոսն ի Կոստանդնուպոլիս»[176]: Ս. Էջմիածնի շահերի պաշտպանության նույն նպատակով էլ Եղիազարի նախկին գաղափարակիցներ

Աստվածատուր Տարոնեցին և Մարտիրոս Ղրիմեցին, ինչպես նկատել է Հ. Անասյանը, շրջվում են ու դառնում նրա կատաղի հակառակորդները[177]:

Այսպիսով, Եղիազարի՝ հակաթոռ կաթողիկոս օծումով՝ Հակոբ Դ Ջուղայեցու և Էջմիածնի միաբանության միջև ըստ երևույթին վաղուց ի վեր սկիզբ առած (ու դեռևս հետագա մանրամասն հետազոտության կարոտ) սուր առճակատումը[178] մեծապես թուլանում էր, սակայն չէր վերանում իսպառ, որ ցույց է տալիս 1665 թ. վերջին Ս. Էջմիածնում գումարված նոր ժողովը: Բայց այդ ժողովին ստիպված էին հաշվի նստելու նորահաս իրողությունների հետ: Այս առումով շատ բնորոշ է վավերագրում գործածվող «Արեւելեան կողմանց Աթոռ... որ ընդ տէրութեամբ պարսկական արքայից արքայի» արտահայտությունը, որ փաստում է 1665 թ. վերջին Մայր Աթոռի ակամա հաշտվածությունը՝ մեկ տարի առաջ Եղիազար Այնթապցու հիմնած Արևմտահայ կաթողիկոսության գոյության հետ[179]:

4. 1664 թ. ժողովը և Արևմտահայոց կաթողիկոսության ստեղծումը

Երևանում կայացած հակահակոբյան «մեծահանդէս ժողովի» գումարումը հե՛նց Եղիազար Այնթափցու կաթողիկոսանալու նախօրեին՝ 1664 թ. հոկտեմբերին, բոլորովին էլ պատահական չէր: Ըստ Զամչյանի՝ կաթողիկոսանալու սուլթանական հրովարտակը Եղիազարը ձեռք էր բերել դեռևս 1663 թ. և այդ փաստը գաղտնի էր պահել ու միայն որոշ ժամանակ անց Հալեպից այդ մասին տեղեկացրել Կոստանդնուպոլսում գտնվող Խաչատուր Գաղատացուն: Վերջինս, ըստ Զամչյանի, դարձյալ 1663 թ. ընթացքում՝ «կոչեաց ի ծածուկ զոմանս յերեւելեացն հայոց եւ ի զգօնամիտ արանց, ընդ որս էր եւ Երեմիայ Չէլէպի Քէօմիւրճեանց. եւ խորհուրդ արար ընդ նոսա վասն իրացս այսոցիկ»: Կանչվածներն ընդդիմանում են Թուրքիո Հայոց կաթողիկոսության գաղափարին.

«Իսկ նոքա իբրեւ լուան, ափշեցան եւ զահի հարան, յայ-

տնի տեսանելով՝ թէ ո՛րպիսի պառակտումն հանդերձեալ է լինել ի մէջ ազգին, եւ պատառումն անկարկատելի...: Վասնորոյ բազում աղաչանօք *հաւանեցուցին զԽաչատուր մի վաղվաղել, զի թերեւս գտնեն հնարս ինչ* (ընդգծումն՝ Ա.Ա.)»[180]:

Այդ հնարներից մեկը՝ Եղիազարին տարհամոզելու նպատակով Երեմիա Չելեպիին շտապ Հալեպ ուղարկելն էր.

զի թերեւս կարասցէ նա իմաստութեամբ իւրով փոխել զմիտս նորա: [1664, ՌՃԺԳ] Հասեալ Երեմիայ ի Բերիա՝ յանդիման եղեւ Եղիազարու եւ խօսեցաւ ընդ նմա բազում ինչ *ի բազում աւուրս,* այլ ինչ ոչ օգտեցաւ...: Եւ Երեմիայ Չելէպի անյոյս լեալ ի փոխելոյ զմիտս նորա՝ ծանոյց գրով ի Կոստանդնուպօլիս: *Յետ սակաւուց* եկն եւ Խաչատուր կաթուղիկոս Սսոյ ի Կոստանդնուպօլսոյ ի Բերիա. եւ անդ վերստին խորհեալ ընդ Եղիազարու... ձեռնադրեալ էօծ զնա կաթուղիկոս (ընդգծումն՝ Ա.Ա.)[181]:

Այսպիսով, նոր կաթողիկոսություն հիմնելու Եղիազարի մտադրությունը հայտնի է դարձել այդ գաղափարի հակառակորդներին 1663 թ. վերջերին կամ ամենաուշը՝ 1664 թ. սկզբին, և նրանք դրա դեմն առնելու փորձեր են արել ու, նախ և առաջ, հաջողել են որոշ ժամանակ շահել: Զամչյանի այս տվյալների համադրումից կարելի է հետևեցնել, որ Պոլիս-Հալեպ երթևեկը ու այդ ընթացքում եղած խորհրդատվությունները առնվազն մի քանի ամսվա միջոց էին խլել: Այս ընթացքում՝ Եղիազարին իր ծրագրից ետ պահելու համար, բացի Երեմիային Հալեպ ուղարկելուց, անշուշտ, դիմած պիտի լինեին այլ միջոցների ևս: Անկասկած, սպառնալիքի մասին շտապ տեղեկացվել են Ս. Էջմիածնի կաթողիկոսն ու միաբանները: Ընդ որում, եթե Երեմիա Քյոմյուրճյանը և նրա համախոհ պոլսեցի այլ երևելիները կարծում էին, «թէ հաւան է բովանդակ ազգն ընդ Յակոբ կաթուղիկոս Էջմիածնի եւ սիրով կապեալ ընդ նմա վասն բարելաւութեան նորա եւ չէր ուրուք գտեալ ի նմա արատս ինչ»[182], ապա մեր ձեռքի տակ եղած վավերական նյութերը ասում են, որ այդ նույն ժամանակ Արևելահայաստանի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդներից շատերը (ներառյալ՝ Մայր Աթոռի միաբանների մի մասը) խիստ լարված հարաբերություններ ունեին կաթողիկոսի հետ, և, բնական է, որ նրան էին մեղադրելու Հայ կյանքին սպառնացող աննախադեպ ծա-

նր դրության՝ Հայաստանյայց եկեղեցու հնարավոր «անկարկատելի պատառման» մեջ: Ահավասիկ, այսպիսի հանգամանքներում է, որ 1664 թ. հոկտեմբերին Երևանում փորձել են հասունացող վտանգը կանխել Հակոբին գահազրկելով և նրա փոխարեն Եղիազարին կաթողիկոսացնելով՝ մի բան, որ արվեց Հակոբի մահից հետո միայն: Հետևաբար, Եղիազարին Ս. Էջմիածին հրավիրելու գաղափարը առաջին անգամ ծագել էր 1664, այլ ոչ թե 1681 թ.[183]*:*

Ըստ Զ. Քանաքեռցու, Երևանի ժողովի օրերին Հակոբ կաթողիկոսը Երուսաղեմի ճանապարհին էր: Իր ու իր կողմից աթոռակալ նշանակված Իսահակ Մակվեցու դեմ սկսված խլրտումների լուրը հասավ կաթողիկոսին Թոխաթում և ստիպեց նրան շտապ Մայր Աթոռ վերադառնալ[184]*: Նրա Երուսաղեմ ուղևորվելն ինչ-որ կապ ուներ ծնունդ առնող նոր՝ «Արևմտահայոց» կաթողիկոսության ու Եղիազարի հետ, քանզի, ինչպես շատ աղոտ ասում է Քանաքեռցին՝ «Եղիազարն իբրեւ լուաւ զդառնալն կաթուղիկոսին՝ քամահանս վարկաւ ինքեան, եւ ի խոր խոցեցաւ ի սրտի իւրում»*[185]*:*

Ի մի բերենք: Եղիազարի՝ արևմտահայոց կաթողիկոսություն հիմնելու ընթացքը բոլորովին տարբեր ծրագրերով փորձել են կանխել, մի կողմից՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսն ու իր մերձավոր եկեղեցականները, մյուս կողմից՝ Ս. Էջմիածնի միաբանների զգալի մասն ու նրանց միացած արևելահայ նշանավոր հոգևոր և աշխարհիկ մի շարք գործիչները: Ինչ խոսք, որ 1664-1665 թթ. արձանագրված այս ներհակությունն էլ ամենից շատ է նպաստել հակաեղիազարյան գործողությունների անարդյունավետությանը: Այս առումով ուշագրավ է, որ Զաքարիա Քանաքեռցին փորձում է բացատրել Արևմտահայ կաթողիկոսության հիմնումը հե՛նց Հակոբ կաթողիկոսի ծրագրերի խանգարումով ու նրա կես ճանապարհից վերադարձով. «վասն որոյ [Եղիազար Այնթափցին] ժողովեաց զամենայն Եպիսկոպոսունս յայնմ նահանգի ի Բերիա քաղաք՝ որ է Հալապ, եւ օրհնեցաւ կաթուղիկոս ինքնագլուխ»[186]*: Իսկ արդյունքում՝ Հայաստանյայց եկեղեցին ունեցավ անուղղելի վտանգներով հղի 16-ամյա մի շրջան: Բարեբախտաբար, նույն այդ գործիչներն էին, որ տարիներ անց հաջողեցին կացությունը բերել ի բնական շրջանս յուր*[187]*:*

5. Կոնկլավի կանոնները և 1441 թ. Էջմիածնի կաթողիկոսի ընտրությունը

1665 թ. վերջին կայացած խորհրդաժողովի որոշումը՝ Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսին ուղղված վերջնագիր է: Այն ընդամենը մեկ պահանջ ունի. Ամենայն Հայոց կաթողիկոսը իրավասու չէ իր միաձնյա կամքով որոշել հաջորդ կաթողիկոսի ով լինելը, այլ այս հարցում պարտավոր է առաջնորդվել քրիստոնյա ազգերի մեջ ընդունված ավանդությամբ, որոնք հոգևոր գերագույն հովիվ ընտրելու չորս «եղանակ» են ճանաչում: Նորից ընթերցենք մեզ հետաքրքրող հատվածը.

> «...զի կաթուղիկոս ոք մի՛ իշխեսցէ ըստ կամաց իւրոց նստուցանել զով ոք ախորժէ ի տեղի իւր, եթէ ոչ, ըստ ազգաց քրիստոնէից հանրականաց աւանդութեամբ՝ չորիւք յեղանակօք, այսինքն.
>
> (1) կամ վիճակաւ իմիք, որպէս Հռովմայեցւոց է՛ սովորութիւն.
>
> (2) կամ ընտրութեամբ հասարակաց, որպէս առաջնոցն եւ յետնոցն եւս (այստեղ խոսքը վերաբերում է ազգային-եկեղեցական համաժողովին՝ Ա.Ա.)
>
> (3) եւ կամ ի հաւանութեանց վեհագունից բազմաց եւ սրբազան արանց (այսինքն՝ ազգի հոգևոր և աշխարհիկ առաջնորդների համաձայնությամբ, որ, ինչպես վերն արդեն խոսեցինք՝ կարող էր իրականացվել նաև հեռակա կարգով՝ Ա.Ա.):
>
> (4) Թողում ասել զչորրորդն, որ է վերին յայտնութենէն, որ ա՛յժմ իսկ դադարեալ է եւ լռեալ՝ վասն անարժանութեան մերում»:

XVII դարի երկրորդ կեսին Հակոբ Ջուղայեցուն ու Նահապետ Եղեսացուն ուղղվող միևնույն այս պահանջը միանգամայն համահունչ էր հայոց նախնյաց օրենսդրությանը: Դեռևս 1265 թ. Սմբատ Սպարապետն իր դատաստանագրքում հատուկ նշում էր. «կաթողիկոսն իրավունք չունի ինքնակամորեն որևէ մեկին կաթողիկոս ձեռնադրել, այլ կարող է որևէ մեկին ձեռնադրել կաթողիկոս միմիայն բազմաց ընտրությամբ»[188]: Նույն դրույթը հպանցիկ նշել է նաև Մխիթար Գոշը. «...ի բազմացն ընտրութենէն... ձեռնադրել կաթողիկոս»[189]:

Ուշադրություն է դրավում հատկապես 1-ին կետը, ուր ասված է, թե Ամենայն Հայոց կաթողիկոսը կարող է ընտրվել նաև «վիճակաւ իմիք, որպէս հռովմայեցւոց է՛ սովորութիւն»: Խոսքը վերաբերում է մասնակի ձևափոխումներով մինչև այսօր գործող Հռոմի պապերի ընտրության կարգին, որ սահմանվել է 1274 թ. Լիոնի Բ խորհրդաժողովում՝ Գրիգոր Ժ պապի «Ubi periculum» («Որտե՞ղ է վտանգը») կոնդակով: Այս կոնդակի գլխավոր դրույթներն հետևյալն են. պապի մահից հետո կարդինալները գումարում են ընտրական ժողով մի հատուկ շենքի՝ կոնկլավի *(այսինքն՝ փակ դահլիճի) մեջ, որտեղից նրանք դուրս գալու իրավունք չունեն այնքան ժամանակ, մինչև որ՝ փակ գաղտնի քվեարկությամբ, չընտրեն իրենցից մեկին Հռոմի նոր պապ (ընտրական արարողությունն ունի բազմաթիվ հետաքրքրական մանրամասնություններ, որոնք, սակայն, մեր քննության համար էական չեն)*[190]*:*

Արդ, հարց է առաջանում. եթե XVII դարի հայ երևելի վարդապետները, կաթոլիկ եկեղեցու հետ սուր հակամարտության մի ժամանակաշրջանում, ընդունելի են համարել կոնկլավի կանոնների կիրառումը նաև մեզանում՝ արդյո՞ք դրա համար նրանք չեն ունեցել որոշակի նախադեպ հե՛նց հայոց պատմության մեջ:

Կարծում ենք՝ ունեցել են: Ստորև առաջարկվող վերլուծության արդյունքներով, կոնկլավի գլխավոր պահանջների համաձայն է ընտրվել ո՛չ այլ ոք, քան 1441 թ. Էջմիածնում վերահաստատված Մայր Աթոռի առաջին գահակալ Կիրակոս Վիրապեցին:

Որո՞նք են մեր փաստարկները:

Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոսության վերահաստատվելը առավելագույնս կարևորելու միտումով՝ Աստուծո ուղղակի միջամտությունը Կիրակոս Վիրապեցու կաթողիկոսանալուն (այսինքն՝ վերը նշված չորրորդ կանոնի կիրառումը) շեշտվել է ինչպես բուն ընտրության պահին, այնպես էլ հետագայում: Այդպես է ներկայացնում 1441 թ. ընտրությունները նաև ականատես պատմիչ Թովմա Մեծոփեցին, բազմիցս ասելով, որ այդ ընտրությունները կատարվել են՝

> «...ազդեցութեամբ Հոգւոյն Սրբոյ, հրաշագործութեամբ բարերարին Աստուծոյ...»,

«...ընտրութեամբ Հոգւոյն Սրբոյ, տեսլեամբ գիշերոյ եւ յանուրջս երազոյ...»,

«[նախնական ընտրութիւնների անյաջողութիւնից հետո]...ապաւինեցաք յԱստուած եւ միաբանութեամբ սկսաք աղօթիւք եւ պաղատանօք խնդրել յԱստուծոյ տալ մեզ առաջնորդ ըստ կամաց իւրոց»,

«[ընտրութիւնից հետո] Փառք Քեզ ամենասուրբ Երրորդութիւն Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, զի կատարեցեր զխնդրուածս հայկացեան սեռի... Եւ մեք զոր ինչ խնդրեցաք, եւ առաք յԱստուծոյ ի Հօրէ»[191]:

Թովմա Մեծոփեցու վարքի հեղինակ ու նրա աշակերտ Կիրակոս Բանասեր Ռշտունեցին[192], որ նույնպես խնդրո առարկա անցքերի մասնակից էր[193], հետևելով իր ուսուցչին, Կիրակոս Վիրապեցու ընտրության մասին գրում էր.

«[Թովմա Մեծոփեցին] Հանապազ խնդրէր յԱստուծոյ զի Էջմիածինն վերստին նորոգեսցի, կաթողիկոս եւ թագաւոր նստցի յԷջմիածինն: Եւ Աստուած... կատարեաց զխնդրուածս նորա եւ ելից զփափագ սրտի նորա. եւ հրաշիւք եւ յայտնութեամբ երազոյ եւ սքանչելեօք, աւետարանին վկայութեամբ յայտնեաց զսքանչելի այրն Աստուծոյ... զսուրբ հայրապետն զՏէր Կիրակոս...»[194]:

1442 թ. Արարատյան երկրի Սերկևիլ գյուղում Ոհաննես Թմոքվեցի գրիչը նմանապես արձանագրում էր. «...ընդրեցին տեսլեամբ եւ կամաւք ամենասուրբ Երրորդութեան՝... որպէս հայրապետս մեր՝ Հոգեւոր Տէր Կիրակոս կաթողիկոսս...»[195]:

Այսուհանդերձ, երկրային ընտրությունը նախատեսում էր որոշակի գործողություններ: Ըստ Թովմա Մեծոփեցու՝ ժողովականներն «արկին վիճակ ի սուրբ աւետարանն, եւ ել վիճակն Կիրակոս հայրապետին»[196]: Օրմանյանը տարակուսած գրում էր, թե ընտրական այս ձևը «քիչ մը տարօրինակ կերևի..., վասնզի ավետարանին մեջ Կիրակոսի անունը գտնել հնար չէր: Ուստի, - եզրակացնում էր նա, - պետք է ըսել, թե Կիրակոսի վրա համաձայնություն գոյացնելեն ետքը, ավետարանի վիճակին ալ դիմած են, և ավետարանը բացած ատեննին նպատակահարմար տունի մը հանդիպած և այս կերպով

կատարած ընտրությունին վերնային կամքին համաձայն ճանչցած են»[197]*:*

Սակայն, 1665 թ. վերջին Հակոբ Ջուղայեցուն հասցեագրված վերջնագրում վիճակ *բառն ունի բոլորովին այլ՝* քվեաթերթիկներ գործածելու *իմաստ՝ «վիճակաւ իմիք, որպէս հռովմայեցւոց է՛ սովորութիւն»: Անտարակույս, մեր գիտնական վարդապետները քաջատեղյակ են եղել Հռոմի պապի ընտրակարգի ընդհանուր դրույթներին: 1664 թ. հոկտեմբերին գրված՝ Հակոբ Ջուղայեցուն ամբաստանող մեկ այլ վավերագրում* վիճակ*-ը գործածված է նույնանման իմաստով.*

> «...զի ոչ ըստ կանոնաց սրբոց եւ սահմանի ազգաց կամի վիճակաւ եւ հաւանութեամբ ամենայն եկեղեցւոյն ընտրել զյաջորդ Սուրբ Աթոռոյն, այլ՝ ինքնահաւան անձնայաճութեամբ զծերագոյնսն յետս ընկրկեալ եւ զեսն իմն ունակացեալ, զիւրային մակաբարոյսն յառաջացուցանէ»[198]:

Այս դեպքում «վիճակաւ... ամենայն եկեղեցւոյն ընտրել»-ը կարող է նշանակել միայն ընտրական թղթատար ինչ-որ գործողություն, ինչպիսին էին վերոհիշյալ մահզարները ու նաև՝ անմիջական գրավոր քվեարկությունը:

Հետևաբար, Թովմա Մեծոփեցու՝ *«արկին վիճակ ի սուրբ աւետարանն, եւ ել վիճակն Կիրակոս հայրապետին»* հաղորդումը նշանակում է, որ Կիրակոս Ա Վիրապեցի հայրապետն ընտրվել է փակ գաղտնի քվեարկության մի ինչ-որ արարողակարգով, որի վերջում նրա անունով ժողովականների լրացրած թերթիկները լցվել են ավետարանի վրա: *Դատելով անցքերի ընթացքից՝ վերապահություն պետք է անել միայն ընտրության իրական գաղտնիության աստիճանի առթիվ:*

1441 թ. պատմական ընտրություններն ունեն կոնկլավի հետ ուրիշ նմանություններ ևս, որոնք դժվար թե բոլորը միասին սովորական զուգադիպություն լինեն:

Ա. Կաթողիկոս ընտրվեց ներկա ժողովականներից մեկը, որ կոնկլավի հիմնական կանոններից է:

Բ. Թեև, ըստ Մեծոփեցու և այլոց, ընտրությանն այս կամ այն կերպ իրենց մասնակցությունն են բերել բազմաթիվ աշխարհական-

ներ՝ «ազատք եւ որդիք ազատաց, ձեռնաւորք եւ տանուտէրք»[199], «սրբասէր ազտիք եւ ժողովուրդք»[200], որ և թույլ է տվել Օրմանյանին խոսելու «ընդհանուր ազգային ժողովի» մասին՝ ընտրական ձայնի իրավունքով օժտված պիտի լինեին ոչ բոլորը, ինչպես կարծում էր Օրմանյանը[201], անգամ ոչ բոլոր հոգևորականները, որոնց թիվը հասնում էր 300-ի[202], այլ, ամենայն հավանականությամբ՝ միայն վարդապետներն ու եպիսկոպոսները, ինչպես որ կոնկլավում՝ միայն կարդինալները: Այսպես ասելու համար նկատի ունենք, նախ, Մեծոփեցու՝ մի առիթով արած հստակ նկատողությունը. «զժողովս մեր...՝ վարդապետք եւ եպիսկոպոսք ի մի միաբանութիւն»[203]: Այս դիտողությունը բոլորովին անկախաբար կրկնված է 1441-ի դեկտեմբերին կամ 1442-ին Վանում՝ Կարապետ երեցի գրած հիշատակարանի մեջ՝ «յամի ՊՂԱ թուականութեանս Հայոց... եղեւ ժողով եպիսկոպոսաց եւ վարդապետաց ի մայրաքաղաքն ի Վաղարշապատ... եւ եդին զՏէր Կիրակոսն յէջմիածին կաթողիկոս Ամենայն Հայոց...»[204]: Զամչյանը՝ անհայտ ինչ-որ աղբյուր օգտագործելով, ևս ծանուցում է 1441 թ. ընտրություններում եպիսկոպոսների և վարդապետների ունեցած վճռորոշ ձայնի մասին.

> Սմին իրի գրեցին *եպիսկոպոսք եւ վարդապետք* առ Գրիգոր Մուսաբեկեանց, եւ հրաւիրեցին գալ յէջմիածին... Այլ իբրեւ չէառ նա յանձն գալ անդր, անուհետեւ խորհեցան առաջնորդք ազգին (իմա նույն եպիսկոպոսներն ու վարդապետները՝ Ա.Ա.) մեծ ժողով գումարել յէջմիածին... (ընդգծումն՝ Ա.Ա.)»[205]:

Երկրորդ. եթե ընդունելու լինենք, որ ընտրական ձայնով օժտված են եղել նաև աշխարհականները, ապա Մեծոփեցու շարադրանքից անպայման պիտի եզրակացնենք, որ կանայք նույնպես քվեարկողների թվում են եղել, քանզի բացի հոգևորականներից, ժողովին մասնակցում էին «ազատք եւ որդիք ազատաց, ձեռնաւորք եւ տանուտէրք, եւ անթիւ եւ անհամար բազմութիւն ժողովրդեան՝ արանց եւ կանանց»[206]: Մինչդեռ Հայոց դատաստանագրքերից հայտնի է, որ ուշ միջնադարում հայ կնոջ իրավունքները, մասամբ, նաև մուսուլմանական օրենքի՝ շարիաթի ազդեցությամբ, խիստ սահմանափակ էին. մասնավորապես, կինը զրկված էր անգամ դատարանում վկա լինելու իրավունքից[207]: Հետևաբար, աշխարհականների մասնա-

կցությունը 1441 թ. կաթողիկոսական ընտրություններին սահմանափակվել է (ա) նյութական և բարոյական աջակցությամբ, (բ) ընտրությունների արդյունքին, ինչպիսին էլ որ այն լիներ՝ հավանություն տալով: Այլ կերպ ասած, նրանք բոլորը միասին՝ տղամարդ և կին, հարուստ և աղքատ, իրոք, մասնակից են եղել ընտրություններին, բայց ոչ ընտրելու, այլ ընտրությունները «հաստատելու» իրավունքով, որ նույնպես շատ կարևոր էր, հատկապես՝ ժողովին համազգային բնույթ և հնչողություն հաղորդելու իր գործողությամբ[208]: Իսկ ընտրելու ձայն ունեցել են, ամենայն հավանականությամբ, Մեծոփեցու՝ հականե-հանվանե հիշատակած 31 վարդապետներն ու եպիսկոպոսները և գուցե հանրաճանաչ միայնակյացներից ու վանահայրերից էլի ոմանք: Սա հաստատում է նաև Հակոբ կաթողիկոս Ջուղայեցին, որը իր Պատմութիւն կաթողիկոսաց մեզ չհասած երկում գրել է՝ «վարդապետն Թումայ Մեծոփեցին արար ժողով եպիսկոպոսաց, վարդապետաց եւ գիտնական արանց»[209]:

1441 թ. Էջմիածնի ժողովում ընտրողների մեջ պետք է հաշվել նաև այս ժողովին «թղթով միաբանեալ» այն 20 վարդապետներին ու եպիսկոպոսներին, որոնք, այս կամ այն պատճառով ներկա չլինելով, նախապես իրենց համաձայնությունն էին հայտնել կայացվելիք որևէ ընտրությանը[210]: Այս հինգ տասնյակից անցնող քվեարկուների թիվն էլ հենց ամենից ընդունելին ու իրականն է:

Գ. Կոնկլավում սկզբից անցկացվում են «փորձնական» ընտրություններ, որոնց ընթացքում ճշտվում է տարբեր կուսակցությունների փոխադարձ վերաբերմունքը և ուժերի հարաբերակցությունը[211]: 1441 թ. Էջմիածնում արվել է նույնը. ըստ Մեծոփեցու, սկզբում «բազումք ի յեղբարցն յառաջ կոչեցաք գալ ի յառաջնորդութիւն Թորգոմական գրոհիս, եւ ոչ կամեցան բառնալ զծանրութիւն դառնութեան բարձրագոյն աստիճանին»[212]: Օրմանյանը, մրցակից կուսակցություններն ի հայտ բերելով, մանրամասն մեկնաբանում է այս նախադասությունը և գալիս այն ճիշտ եզրակացության, որ առաջ կոչվածների ետ քաշվելը ոչ թե «անկեղծ խոնարհամտություն էր», այլ «մրցակիցների մեջ մղված խուլ պայքարի» հետևանք[213]:

Դ. Կոնկլավի կանոններով, առանց նորընտիրի համաձայնության, նա չի կարող պապ հռչակվել: Մեծոփեցին հատուկ շեշտում է

Կիրակոսի հնազանդությունը. «Եւ մեք հիացեալ զարմացաք զհնազանդութիւն առն Աստուծոյ... զի կարի անհնազանդ բարս ունէր եւ ատէր զփառս երկրաւորս»[214]: Պետք է ասել, սակայն, որ այս կանոնը սովորական է նաև Հայաստանյայց եկեղեցու համար:

Ե. Մեծոփեցին հիշատակում է նաև, որ Կիրակոսն, ընտրությունից անմիջապես հետո «եկեալ կանգնեցաւ ի մէջ ահագին ատենին»[215]: Կոնկլավի կանոնների համաձայն ևս՝ նորընտիր պապը, դեռ մինչև գահակալության հանդեսը, հայտնվում է շենքի առջև հավաքված ամբոխին:

Զ. 1441թ. Վաղարշապատում կայացած ընտրությունների տևողությունը:

Կ. Կոստանյանցն սխալվում է, կարծելով, թե ժողովը տևել է «եթե ոչ ամիսներ, գեթ մի քանի շաբաթ», որի ընթացքում իբր բանակցություններ են եղել Գրիգոր Թ Մուսաբեկյանց կաթողիկոսի հետ[216]: Այնինչ Թովմա Մեծոփեցին այս հարցը լուծելու պարզ միջոց է ընձեռել՝ հերթագրել է ընտրական ժողովի ընթացքում եղած տեսիլներն ու երազները. փորձնական ընտրություններից հետո՝ նույն կամ հաջորդ օրն եղել է առաջին երազը, «ի միւս օրն»՝ երկրորդը, «եւ ի միւս օրն»՝ երրորդը, նույն կամ հաջորդ օրը՝ հոգևորականներից մեկի Օշական գնալը, վերադարձը և տեսիլի պատմելը, որ մեկ կամ երկու օր պետք է տևեր[217]: Ուրեմն, ընտրական ժողովը տևել է նվազագույնը 4, առավելագույնը՝ 6 օր: Օրմանյանը, անվանելով փորձնական ընտրությունները «խորհրդակցություններ», կարծում էր, թե դրանք եղել են Վաղարշապատում գումարված ժողովից առաջ, դեռևս Երևանում, որ բացարձակապես չի համապատասխանում Մեծոփեցու տվյալներին և անշուշտ սխալ է[218]:

Արդ, այս 4-6 օրվա ընթացքում ժողովականների մի առանձնավայրում խմբված լինելն ենթադրելի է և՛ շարադրանքից, և՛ դեպքերի տրամաբանությունից, և՛ հատկապես այն հաղորդումից, որ մեկ անգամ միայն, թողնելով համատեղ աղոթքի (ասել է թե՝ ժողովի անցկացման) վայրը, ժողովականներից մի հոգի գնում է Օշական՝ սուրբ Մաշտոցի գերեզման ուխտի՝ «որպէսզի հայցեն... զաջողումն ճեռնադրութեան»: Հավանաբար, նա գնում է ընտրություններին անմիջականորեն չմասնակցող «դրսեցիների» ուղեկցությամբ՝ «Դարձեալ

ոմն ի յեղբարցն առնու նուէր եւ մատաղ եւ գնան ի սուրբ վարդապետի գերեզմանն...»[219]: Սա կարող է դիտվել իբրև կոնկլավի կանոնների խախտում և մեր ենթադրության դեմ խոսող փաստարկ, սակայն ուշագրավ է, որ նրա վերադառնալուն և «օրհնության տեսիլքը» պատմելուն պես՝ տեղի է ունենում վերջնական ընտրությունը: Ըստ երևույթին, երկու հիմնական մրցակից խմբակցությունների՝ սյունեցիների և վասպուրականցիների՝ Կիրակոսի անձի վրա համաձայնության գալուց հետո, ժողովականներից մեկին ուղարկել են ուխտի՝ «օրհնության տեսիլք» բերելու առաջադրանքով: Այս փաստը վկայում է, որ 1441 թ. կաթողիկոսական ընտրությունների ժամանակ կոնկլավի կանոնները կիրառվել են ոչ խստորեն, այլ միայն մասնակիորեն՝ հարմարեցվելով առկա պայմաններին և հնարավորություններին: Այս առթիվ կարելի է նկատել, որ 1665 թ. վերջին գրված փաստաթուղթը նույնպես ընդգծում էր միայն կոնկլավի գլխավոր դրույթը՝ «վիճակաւ իմիք» Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրելու կարգը, այսինքն՝ փակ գաղտնի գրավոր որևէ կերպ կազմակերպված քվեարկության օրինականությունը, և ո՛չ՝ կոնկլավի անխտիր բոլոր կանոնների կիրարկումը:

Միաժամանակ, պետք է նկատել, որ հայերն իրենք էլ ունեցել են գրավոր քվեարկությամբ կաթողիկոս ընտրելու սեփական յուրօրինակ փորձ: Այսպես, 1343 թ. սկզբին Կիլիկյան Հայաստանից Հռոմ առաքված մի վավերագիր արձանագրում է, որ կաթողիկոսի ընտրությունը կատարում է Հայոց թագավորի հրավիրած եկեղեցական ժողովը, ուր մասնակիցներից յուրաքանչյուրը, իր գրով ու կնիքով հաստատած թղթի վրա, թագավորին է ներկայացնում իր նախընտրած թեկնածուի անունը: Եթե թեկնածուները շատ են լինում, թագավորը կարգադրում է միաբանել երկուսի կամ երեքի վրա, ապա այս վերջիններից ընտրում նրան՝ ում ցանկանում է[220]:

Կիլիկյան Հայաստանում կաթողիկոսական ընտրության այս եղանակը շատ է հիշեցնում 1737 թ. Ս. Էջմիածնում անցկացված գաղտնի գրավոր մի քվեարկությունը, որն առաջարկել էր Ամենայն Հայոց կաթողիկոսի երեք թեկնածու, որոնցից մեկին Կ. Պոլսի հայության ժողովը (կարծես՝ կատարելով նախկինում հայոց թագավորին վերապահված դերը) հաստատում է կաթողիկոս: Ըստ մի ականատեսի, Ս. Էջմիածնում՝

«Վաղվաղակի զմիաբանքն համայնի
ժողովք առնին ամենեքեանք մի տեղի.
Թղթովք ընտրեն զերիս Արբս պատուելի՝
Էջմիածնայ կաթողիկոս լինելի» (ընդգծումն՝ Ա.Ա.)[221]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Լ. Մինասեան**, «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակը և մի քանի նորայայտ գրքեր ու այլ ծանօթութիւններ». - *Հասկ*, 1970, էջ 380:
[2] **Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան**, *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 114:
[3] ՏՅՈ, Բ, էջ 114-122:
[4] Մեզ ծանոթ միակ հեղինակը, որ իր քննության ընթացքում հպանցիկ վկայակոչում է այս վավերագրի մի տեղեկություն՝ Հակոբ Անասյանն է (տե՛ս **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում*, էջ 270):
[5] «չինել» (ՏՅՈ, Բ, 115):
[6] «պարապեալք» (ՏՅՈ, Բ, 115):
[7] «որում» (ՏՅՈ, Բ, 115):
[8] «է»-ն դուրս է ընկել (ՏՅՈ, Բ, 115):
[9] «ի կարգի» (ՏՅՈ, Բ, 116):
[10] «զըստոյգն» (ՏՅՈ, Բ, 116):
[11] «զձեռագիր» (ՏՅՈ, Բ, 116):
[12] «պարտէր» (ՏՅՈ, Բ, 116):
[13] «համաշխարհականէ» (ՏՅՈ, Բ, 116):
[14] «որ»ը դուրս է ընկել (ՏՅՈ, Բ, 116):
[15] «այժմ» (ՏՅՈ, Բ, 117):
[16] «...ի թուահաշու[ու]թեան տոհմիս հայկական հազարերորդի հարիւրորդի եւ տասնեւհինգ ամի» 6 1666, սակայն գրվել է 1665ի վերջին՝ տե՛ս ստորև, էջ 31:
[17] Սաւատ (արաբերէն) - պատճեն:
[18] «մեքն» (ՏՅՈ, Բ, 118):
[19] «Հողեփեռնէոս» (ՏՅՈ, Բ, 118):
[20] «զաւետս» (ՏՅՈ, Բ, 118):
[21] Լի՛պասի հուքմ (արաբերեն-պարսկերեն) - ձեռնադրությունը հաստատող հրովարտակ, բառացիորեն՝ զգեստավորվելու հրովարտակ:
[22] Մանսար = մահզար (արաբ.) - այստեղ՝ հանրագիր, վկայական, Սիմեոն

Երևանցու թարգմանությամբ՝ «բազմակնիք թուղթ համահաւանութեան», «զհաւանութեան բազմակնիք» (Տե՛ս *Ջամբռ*, էջ 59):
[23] Սալահ (պարսկ.) - համաձայնություն:
[24] «Մահտեսի-խօջա» (ՏՅՈ, Բ, 118):
[25] «սեփականէ» (ՏՅՈ, Բ, 118):
[26] «եկեղեցւոյ» (ՏՅՈ, Բ, 118):
[27] «յաղագս» (ՏՅՈ, Բ, 118):
[28] Տեր-Հովհանյանցի հրատարակության մեջ «հինգերորդից» մինչև «երկոտասաներորդ» բոլոր թվահամարներն ուղղագրական սխալով են, այն է՝ բնագրի հապավումները բացված են երկու բր-ով (հինգերբորդ և այլն):
[29] «գան Յարան» (ՏՅՈ, Բ, 119):
[30] Փայեակ (պարսկ.) - սուրհանդակ:
[31] Եդակ=յետակ - «պատվո ձի, հանդիսությունների ժամանակ հետիոտն և ձեռքով առաջնորդվող նժույգ» (**Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում*, էջ 384):
[32] Ղադարայ - անծանոթ բառ է. հավանաբար՝ զինահանդերձանքի ինչ-որ պարագա:
[33] Բ Կորնթ. Ժ, 4:
[34] «յոլով» (ՏՅՈ, Բ, 120):
[35] «չարէ» (ՏՅՈ, Բ, 120):
[36] Հմմտ. **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց:* Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի (նմանահանություն): Լրացումները՝ Ա. Բ. Սարգսյանի (Երևան, 1991), էջ 349, 353:
[37] *Մատթէոս*, ԺԲ, 25. *Մարկոս*, Գ, 24-25. *Ղուկաս*, ԺԱ, 17:
[38] Հակոբ Ջուղայեցու, Եղիազար Այնթապցու և Նահապետ Եղեսացու կողմից Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի վիճակի բաժանումների մասին տե՛ս ՏՅՈ, Բ, 96-104: Տե՛ս նաև **Ց. Քիւրտեան**, «Նիւթեր Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կենսագրութեան համար (1655-1680)». - *Հասկ*, 1952, էջ 42, 87: Նույնի՝ «Նոր նիւթեր Եղիազար կաթողիկոս Այնթապցիի մասին». - *Հասկ*, 1952, էջ 171-172. հմմտ. **Կ. Ամատունի**, «Յակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոս Էջմիածնի (1600-1680)». - *Բազմավէպ*, 1992, էջ 39:

1678 թ. հունվարի 2-ի մեկ այլ կոնդակով Հակոբ Ջուղայեցին Ոստին, Հորս, Խրաչկուս, Խրովատեղ, Արատես, Կալասեռ, Արտավին, Ազատակ և Զեթաց գյուղերը հանձնում էր Դարաչամբի Սբ. Ստեփաննոս Նախավկայի վանքին (այն վերանորոգվել էր իր տասնամյա անձնական ջանքերով, տե՛ս ԴԱԻ, էջ 281), հավանաբար, հանելով դրանք Սբ. Թադեի վիճակից. «Այսուհետեւ ձեր իսկապէս հաստատուն Աթոռն Սուրբ Նախավկայն է, եւ դուք՝ հարազատ որդիք եւ ժողովուրդ նորին» (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, Կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավերագիր 245):

[39] «Յերեւան» (ՏՅՈ, Բ, էջ 121):
[40] Խոսքը վերաբերում է Նոր Ջուղայի նախկին քալանթար Ավետիսին (տե՛ս *Դրվագներ*, Բ, էջ 300-301. ՁԱՔ, Բ, էջ 137. ԽԱՁ, էջ 152):
[41] Յետիկար, երբեմն՝ հետկար, ետկար=յատիկար (պարսկ.) - յիշատակ, կտակ.
[42] Տե՛ս **Լ. Մինասեան**, *Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972)* (Նոր Ջուղայ, 1972), էջ 60: Սրանով հանդերձ, վերոյիշեալ փաստը ո՛չ այս, ո՛չ էլ այլ հրապարակման մէջ չի արձանագրուել:
[43] *Ջամբռ*, էջ 26:
[44] Տե՛ս «Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի Հայոց Կ. Պոհսոյ». - *Արարատ*, 1874, էջ 113. հմմտ. ԱԶԳ, սյուն. 1826:
[45] ՁԱՔ, Բ, էջ 136. հմմտ. անդ 107. ԽԱՁ, էջ 151: Այս և մի քանի այլ դրվագներում Խաչատուր Ջուղայեցին գրեթե բառացիորեն վերարտադրում է Զաքարիա Քանաքեռցու պատմածը, որ նշանակում է, թե Խաչատուրի աղբյուրը Զաքարիան էր:
[46] ՁԱՔ, Բ, էջ 136:
[47] ՁԱՔ, Բ, էջ 107:
[48] 1697 թ. փետր. 4-ի դրությամբ Նահապետն արդեն վերահաստատված էր էջմիածնում (տե՛ս **Մեսրոպ Նշանեան**, *Օրագրութիւն Երեմիա Զէյլէպի Քէօմիւրճեանի:* Երուսաղէմ, 1939, էջ ՃԽԲ. հմմտ. ՄԺ, Ա, էջ 281-283, 285, 287, ծնթ. 10, 310, 312, ՄԺ, Բ, էջ 423, ծնթ. 31): Ստեփանոս Ռոշքան Ստեփաննոս Ջուղայեցու գահակալության տևողությունը հաշվել է «ամիսս վեց», իսկ Մ. Ջամչյանը՝ «ամիսս տասն» (տե՛ս **Ստ. Ռօշքայ**, *Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք:* Վիեննա, 1964, էջ 189. ՁԱՄ, Գ, էջ 725):
[49] Տե՛ս ԽԱՁ, էջ 152. հմմտ. **Ստ. Ռօշքայ**, *Ժամանակագրութիւն...*, էջ 189:
[50] ԱԶԳ, սյուն. 1871:
[51] Տե՛ս ՏՅՈ, Բ, էջ 46-48. *Դրվագներ*, Բ, էջ 302-304. CARM, p. 482:
[52] Վազգեն Հակոբյանն այս կողմնակալությունը բացատրում է նրանով, որ Զ. Քանաքեռցին «վախեցել է Նահապետ կաթողիկոսի խստություններից» (տե՛ս ՄԺ, Ա, էջ 283, ծնթ. 1):
[53] *Դրվագներ*, Բ, էջ 297-8. CARM, pp. 480-481:
[54] ՁԱՄ, Գ, էջ 722, 724:
[55] Տե՛ս «Արարատ», 1874, էջ 112. հմմտ. ԱԶԳ, սյուն. 1826:
[56] ԱԶԳ, սյուն. 1826:
[57] Փիլիպպոս Ա. Աղբակեցին վախճանվել էր 1655 թ. մարտի 25-ին, Հակոբ Ջուղայեցին էլ կաթողիկոս էր օծվել 13 օր անց՝ ապրիլի 8-ին (տե՛ս ԱԶԳ. սյուն. 1708, 1723), այսինքն՝ հանդուցյալի քառասունքը տակավին չլրացած:
[58] *Ազգասէր Արարատեան*, Կալկաթա, 1849, թ. 12, էջ 94:
[59] Ավելի հին ժամանակաշրջանում ևս երբեմն եղել են դիպքեր, երբ կաթո-

ղիկոսի ցուցումով է ընտրվել նրա հաջորդը (տե՛ս **Վարդան Հացունի**, *Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ:* Վենետիկ-Ս. Ղազար, 1930, էջ 44-50): 1343 թ. մի փաստաթղթում հատուկ շեշտված է, որ, օրինակ, թեև Աղվանից և Աղթամարի կաթողիկոսների պարագայում, նրանք են «ընտրում իրենց հաջորդներին, սակայն ընտրվածների ձեռնադրությունը կատարվում է ո՛չ նրանց կենդանության օրոք, այլ մահանալուց հետո միայն» (տե՛ս Mansi Joannes Dominicus, *Sacrorum conciliorum nova et amplissima collectio*. Graz, 1960-1962, Vol. 25 (Anni 1300-1344), p. 1258. հմմտ. **Վ. Հացունի**, նույն տեղում, էջ 50):

[60] *Ջամբռ*, էջ 59:

[61] ԴԱԻ, էջ 257-260:

[62] Տե՛ս ՏՅՈ, Բ, էջ 48. **Յով. Շահխաթունեանց**, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառաց Այրարատոյ:* Հ. Բ (Վաղարշապատ, 1842), էջ 224. հմմտ. ԱԶԳ, սյուն. 1884:

[63] Տե՛ս **Ն. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Բ (Երուսաղէմ, 1953), էջ 168-169:

[64] *Ազգասէր Արարատեան*, 1849, էջ 92:

[65] Տե՛ս **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն:* Քննական բնագիր, ռուս. թարգմ., առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի (Երևան, 1973), էջ 44-45. հմմտ. *Ջամբռ*, էջ 59: Այս կարգի մասին պատմում է նաև Խուբյանցը՝ տե՛ս Յաղագս վարուց եւ գործոց կաթողիկոսաց Էջմիածնայ (1737-1827 թթ.), *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 2766, էջ 4ա-բ:

[66] *Ջամբռ*, էջ 238:

[67] Տե՛ս **Մսեր Մսերեանց,** *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէոնէ մինչ ցՅովհաննէս Ը (1763-1831)* (Մոսկուա, 1876), էջ 296:

[68] Այդ ժամանակներում Էջմիածնում էր Եղիազար կաթողիկոսի մեկ այլ մտերիմ՝ նշանավոր Մինաս վարդապետ Ամդեցին, սակայն նամակի հեղինակը նա չէր կարող լինել՝ այն պարզ պատճառով, որ Էջմիածնից դուրս էր եկել 1690 թ. հունիսի 2-ին, իսկ հուլիսի 2-ին արդեն Էրզրումում էր (տե՛ս «Օրագրութիւն Երեմիայ Չելեպի Քէօմիւրճեանի», էջ ՃԽ):

[69] ՄԺ, Ա, էջ 312. հմմտ. **Աշ. Հովհաննիսյան**, *Հայ-ռուս օրիենտացիայի խնդիրը* (Էջմիածին, 1921), էջ 40:

[70] **Г. А. Эзов,** *Сношения Петра Великого с армянским народом*, док. 85, с. 138-139.

[71] Տե՛ս **Աշ. Հովհաննիսյան**, *Հայ-ռուս օրիենտացիայի խնդիրը*, էջ 37-41. *Դրվագներ*, Բ, էջ 523-524: Աշ. Հովհաննիսյանը նաև ենթադրում էր, թե 1722 թ. դեկտեմբերի 12-ին Թիֆլիսից ռուսներին հղված նամակը, որ գրվել էր «ձեռամբ Մինաս Փերվազեան վարդապետէ. Աթոռակալ սուրբ յԷջմիածնի.

յաժմուս արքեպիսկոպոս եւ առաջնորդ Հաղբատու Սուրբ Նշանին, թագաւորաշէն աթոռոյն եւ բոլոր Վրացտանու վերատեսուչ» (տե՛ս APO, II, док. 169, с. 20)՝ կարող էր նույն Մինասի հեղինակածը լինել (Աշ. Հովհաննիսյան. Հայ-ռուս օրիենտացիայի խնդիրը, էջ 41, ծնթ.): Սակայն այս ենթադրությունն սխալ է. Մինաս վրդ. Փերվազյանը (1680-1757) ակնցի էր և այլապես հայտնի գործիչ (նրա մասին, համառոտաբար, տե՛ս **Յովհաննէս Պատկերահան**, *Նամականի*, էջ 27-28, ծնթ. 27):

[72] *Ազգասէր Արարատեան*, 1849, էջ 95:

[73] Տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 5: Այս փաստաթուղթն ունի միայն ամսաթիվ՝ 12-ը հունիսի, հետագա գրիչը, սակայն, նրա հակառակ կողմում թվագրել է ՌՃԾԵ (1706), որ և ստույգ է ընդունել Հ. Անասյանը (տե՛ս նրա *Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դարեր:* Հ. Ա, Երևան, 1959, սյուն. 587): Մինչդեռ հաստատ գիտենք, որ Աղեքսանդր Ջուղայեցին հասած պիտի լիներ Ս. Էջմիածին ամենաշուտը 1706 թ. սեպտեմբերի վերջին, քանզի Նոր Ջուղայից ճանապարհ էր ընկել միայն սեպտեմբերի 18-ին (ՏՅՈ, Բ, էջ 48): Հետագա գրչին, ըստ երևույթին, թյուրիմացության է մատնել վավերագրի վրա եղած՝ Աղեքսանդր Ջուղայեցու կաթողիկոսական կնիքը, որ բնականաբար ունի ՌՃԾԵ (1706)՝ նրա կաթողիկոս ձեռնադրվելու տարեթիվը: Նմանապես, օրինակ, 1700 թ. գրած մի հիշատակարանի տակ դրված՝ Նահապետ Եղեսացու կնիքը ևս ունի ՌՃԽ (1691) թվականը, որ վերջինիս կաթողիկոսանալու տարեթիվն է (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 350, էջ 551բ). Կարապետ Ուլնեցու (1661-1729) վարդապետության շրջանի կնիքն ունի նրա՝ մասնավոր վարդապետություն ստանալու տարեթիվը՝ 1684, իսկ կաթողիկոսության շրջանինը՝ կաթողիկոսանալու թվականը՝ 1726 (տե՛ս **Բարդէն Կիւլէսէրեան**, *Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից*, սյուն. 108. հմմտ. «Կարապետի կաթողիկոսի Ուլնեցւոյ Վարք ինքնագիր». - *Բազմավէպ*, 1978, էջ 286):

[74] 1663 թ. Աստապատն ուներ 1000 ընտանիք. - տե՛ս **Սահակ Ճեմճեմեան**, *Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հռոմը* (Վենետիկ-Ս. Ղազար, 2000), էջ 138, ծնթ. 1:

[75] Տե՛ս *Ազգասէր Արարատեան*, 1849, էջ 94. հմմտ. *Դրվագներ*, Բ, էջ 304:

[76] Ավետիսը, բնականաբար, չէր կարող մահմեդականություն ընդունել և շարունակել պաշտոնավարել իբրև Նոր Ջուղայի քալանթար, ուստի նա հավատափոխ է եղել պաշտոնանկ լինելուց հետո, այսինքն՝ 1693 թ. առաջին ամիսներին: Նա Նոր Ջուղայի քալանթարն էր առնվազն 1688-ից՝ «...ի քալանթարութեան պայազատ պարոն Աւետին» (*Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 108ա): Սակայն այս հիմքի վրա նրան Ավետ Քալանթարյան անվանելը (նույն տեղում, էջ 803բ) ճիշտ չէ:

[77] CARM, p. 480.

[78] ԱԶԳ, սյուն.1836: Իսկ Ա. Զամինյանն էլ Նահապետին գնահատում էր իբրև «չափազանց խստապահանջ ու կարգապահ», որը սոսկ «աշխատում էր եկեղեցականներին բարեկարգել» (տե՛ս **Աբրահամ Զամինեան**, *Հայոց եկեղեցու պատմութիւն:* Մասն Բ, Նոր Նախիջեւան, 1909, էջ 37):

[79] Մաշտոցի անվ. Մատենադարանում պահվող՝ XVII-րդ դարում օրինակված մի բժշկարանի վերջին թերթը սևագրությունն է կամ պատճենը Նահապետի՝ Հռոմի Ինոնովկենտիոս ԺԲ պապին 1694 թ. սեպ. 5-ին գրված հայտնի նամակի (տե՛ս ձեռ. 7304, էջ 88ա-բ), որ Ռոշքան, Զամչյանը և Ազարյանը թվագրում են 1695-ով (տե՛ս **Ստ. Ռօշքայ**, *Ժամանակագրութիւն...*, էջ 188. ԶԱՄ, Գ, 724. ԱԶԳ, սյուն. 1832. Հմմտ. Stephanus Azarian, *Ecclesiae Armenae traditio de Romani pontificis primatu jurisdictionis et inerrabili magisterio*. Romae, 1870, pp. 130-131՝ այստեղ զետեղված է սույն նամակի լատիներեն թարգմանությունը): Մատենադարանիս համառոտ ձեռագրացուցակի մեջ այն գրանցվել է այսպես՝ «Թուղթ Նահապետի կթղ.-ի, 1694 թ.» (Հ. Բ, էջ 503): Այս մատյանն ունի հետագայում մուծված հատված, որ ուրիշ գրչի արտագրություն է (էջ 75ա-87բ): Մատյանը վերակարելու ընթացքում Նահապետի նամակը, բժշկարանի բովանդակության հետ կապ չունենալու պատճառով, դարձյալ տեղափոխվել է ամենավերջ, և 76-րդի փոխարեն դարձել 88-րդ էջը (մատյանից դուրս է ընկել սրան անմիջապես նախորդող մեկ թերթ, որ պետք է լիներ 75-րդը): Ինչևիցե, այս ձեռագիրը պատկանել է Նահապետին կամ էլ նրա քարտուղարներից որևէ մեկին: Համենայն դեպս, դատելով Գ-Ք-Կ հնչյունների, ինչպես նաև արաբ.-օսմաներեն դարար-կարար (=որոշում) բառի օգտագործումից՝ կարելի է վստահաբար ասել, որ գրիչը արևմտահայ էր: Պահպանվել է նաև Ինոնովկենտիոս ԺԲ պապի պատասխան նամակը, ինչպես նաև նրա՝ Նահապետին ուղարկած թանկարժեք նվերների հիշատակությունը (տե՛ս **Ստ. Ռօշքայ**, *Ժամանակագրութիւն...*, էջ 189. ԶԱՄ, Գ, 725. CARM, 482-483):

[80] *Դրվագներ,* Բ, էջ 303:

[81] Տե՛ս ԶԱՄ, Գ, էջ 724-727. Jacobo Villote, *Dictionarium Novum Latino-Armenorium*. Romae, 1714, p. 756. Հմմտ. ԱԶԳ, սյուն. 1826. *Դրվագներ*, Բ, էջ 303-305:

[82] Այս մասին մանրամասն տե՛ս **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում*, էջ 256-267:

[83] Տե՛ս CARM, p. 480. *Դրվագներ*, Բ, էջ 301-304. **Մ. Մ. Կարապետյան, Է. Խ. Թաջիրյան**, «Էջեր XVII դարի վերջի Նոր Ջուղայի պատմությունից». - *Բանբեր Երևանի Համալսարանի*, 1998, No. 2 (95), էջ 82-83: Ա.Հ. Հովհաննիսյանը շատ մեղմորեն էր նշում այս հանգամանքը՝ «Ստեփաննոսն ավելի հեռու էր միսիոներներից, քան նրա հակառակորդը» (*Դրվագներ*, Բ,

էջ 301):

[84] CARM, p. 482.

[85] ՄԺ, Ա, էջ 285: Այս տեղեկության առթիվ Վազգեն Հակոբյանը գրել է. «Այստեղ արդեն ակամա կասկած է առաջանում, թե արդյո՞ք սպանության մեջ այս կամ այն չափով մասնակցություն չի ունեցել նրա անհաշտ հակառակորդ Նահապետ կաթողիկոսը» (նույն տեղում, էջ 283):

[86] Տե՛ս **Գ. Սրուանձտեանց**, *Թորոս Աղբար:* [Մասն Բ], Կ. Պոլիս, 1884, էջ 410: Հետաքրքիր է, որ, ինչպես և Զ. Քանաքեռցին, Արղնիի Բարձրահայաց Ս. Աստվածածնի վանական Սահակը՝ 1691-1696 թթ. Նահապետ կաթողիկոսի դեմ հնչած բողոքները մերժում և կեղծ «աւելորդաբանութիւններ» էր անվանում (նույն տեղում, էջ 408): Այս դեպքում, սակայն, նրա կարծիքի վրա ազդել էր ոչ թե Էջմիածնի կաթողիկոսի անմիջական վերահսկողությունը, այլ այն, որ Նահապետը Եղիազարի աշակերտն էր, իսկ Եղիազարը՝ Բարձրահայաց Ս. Աստվածածինը հիմնովին նորոգողն ու կառուցապատողը (տե՛ս նույն տեղում, էջ 404-405):

[87] ՁԱՔ, Բ, էջ 138. հմմտ. ԽԱՁ, էջ 153:

[88] ԱԶԳ, սյուն.1826:

[89] Տե՛ս ԱԶԳ, սյուն.1871:

[90] *Դրախտ ցանկալի*, էջ 606:

[91] Նույն տեղում, էջ 680:

[92] Տե՛ս **Մկրտիչ Աղաւնունի**, «Կիլիկիոյ հայ արքունիքին եւ հայ եկեղեցականութեան մասին ԺԳ դարուն օտար ճանապարհորդի մը տեղեկութիւնները». - *Սիոն*, 1933, էջ 179:

[93] Նույն տեղում, էջ 180. հմմտ. *«Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ»:* Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վրդ. Շահնազարեանց (Փարիզ, 1859), էջ 114: *«Սմբատայ Սպարապետի Տարեգիրք»* (Վենետիկ-Ս. Ղազար, 1956), էջ 213:

[94] Դատելով Մսեր Մսերյանցի նկարագրությունից, XIX-րդ դարի առաջին կեսին Էջմիածնի միաբանների ուտեստեղենը մեծ փոփոխություն չէր կրել (տե՛ս նրա՝ *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի...*, էջ 273-276):

[95] Տե՛ս **Հայկ Պերպերեան**, «Էջիմածնի վանքը 1662-ին». - *Հասկ*, 1950, էջ 273-274:

[96] Տե՛ս **Ղուկաս Ինճիճեան**, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի:* Հ. Գ (Վենետիկ, 1835), էջ 268-269 (հմմտ. **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 295: **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն:* Վաղարշապատ, 1898, էջ 104-105): Ի դեպ, Մ. Մսերյանցի մահից հետո, նրա գրառումներում հայտնաբերելով Ինճիճյանի այս հատորից արված ընդարձակ արտագրություններ, Զարմայր Մսերյանցը, թյուրիմացա-

բար, հրատարակել է դրանք իբրև իր հոր տակավին 1852 թ. գրած «Հոդված» (հմմտ. **Ղուկաս Ինճիճեան**, անդ, էջ 238-289 և **Մսեր Մսերեանց**, *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի...*, էջ 277-306):

[97] *Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.)*: Հ. Բ: Աշխատասիրությամբ Հասմիկ Սահակյանի (Երևան 1987), էջ 271:

[98] Տե՛ս **Ն. Պողարյան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց*: Հ. Բ, էջ 168-169: Աշ. Հովհաննիսյանն այս ուղերձը համարում էր «ժամանակի եկեղեցական բարքերի և ըմբռնումների համար շատ բնորոշ» վավերագիր (տե՛ս *Դրվագներ*, Բ, էջ 297-298):

[99] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 1534, էջ 610ա:

[100] Զ. Քանաքեռցին այստեղ նկատի ունի Մովսես Գ. Տաթևացուն (1629-1632), Փիլիպպոս Ա. Աղբակեցուն (1632-1655) և, պակաս չափով, Հակոբ Դ. Ջուղայեցուն (1655-1680):

[101] ԶԱՔ, Բ, էջ 107:

[102] *Ջամբռ*, էջ 26:

[103] Նրա մասին տե՛ս ԽԱՁ, էջ 153-218. **Հ. Ղ. Միրզոյան**, *XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն* (Երևան, 1983), էջ 176-190:

[104] Տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան**, *XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն*, էջ 189:

[105] Տե՛ս **Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցի**, *Գիրք որ կոչի Սրբազնագործութիւն...* (Մադրաս, 1812), էջ 222-264՝ «Գլուխ ԻԹ. Յաղագս թէ սրբազան Կաթողիկոսն, պարտին առաւել խոնարհել որքան առաւել գահագլուխք են, եւ յօրինակ հայեցողացն լինել, զի զբարիս ուսցին խոնարհագոյնքն»:

[106] Նույն տեղում, էջ 239:

[107] Տե՛ս ԽԱՁ, էջ 219:

[108] Նույն տեղում, էջ 243:

[109] Տե՛ս **Н. Бердзенишвили, И.Джавахишвили, С. Джанашиа**. *История Грузии*. Часть I (Тбилиси, 1946), с. 382-390: **Պ. Ա. Զոբանյան**, *Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին* (Երևան, 1981), էջ 12-14:

[110] Տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Կոլոտ Յովհաննէս պատրիարք*, էջ 44, 198-199. **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 280:

[111] **Գ. Բամպուքճեան**, *Յովհաննէս պատրիարք Կոլոտ*, էջ 218:

[112] **Յակոբ Նալեան**, *Վէմ Հաւատոյ*, էջ 8:

[113] **Սիմէոն դպիր Լեհացի**, *Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք:* Ուսումնասիրեց եւ հրատարակեց Ներսէս Ակինեան (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1936), էջ 111-112:

[114] Նույն տեղում:

[115] Նույն տեղում, էջ 204-207:
[116] Բնագրի մեջ՝ «արարանց»:
[117] *Մատթ.*, ԺԲ, 32. *Մարկոս*, Բ, 29:
[118] Ձախ կողմում, վերևից ներքև, ստորագրողների անուններն են, որ մենք համարակալել ենք: 28 տարի անց՝ 1693 թ. մայիսի 1-ին, հրատարակելով այս փաստաթուղթը, Ջուղայեցի տպագրիչները յուրաքանչյուր անվան աջ կողքին դրել են խաչի նշան (+): Ձենք կարծում, թե այդ խաչով նրանք նշել են ստորագրողների մահացած լինելը: Ամենայն հավանականությամբ, այս խաչը խորհրդանշում էր յուրաքանչյուրի դրած ստորագրության և կնիքի տեղը:
[119] Շախսաբան = Շըխշաբան կամ Շախշաբան՝ Սպահանի թաղ (տե՛ս ԴԱԻ, էջ 352. ՁԱՔ, Ա, էջ 19-20):
[120] Փակագծերի մեջ առնված տառերը լուսապատճենի կամ գուցե բնօրինակի վրա ջնջված են, սակայն, սա ըստ երևույթին Զաքարիա Ագուլեցու հիշատակած Սարգիս Ջորագեղցին է (տե՛ս *«Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը»*, Երևան, 1938, էջ 123-124):
[121] Հմմտ. **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում*, էջ 253, ծնթ. 1:
[122] Տե՛ս *«Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը»*, 8 26, էջ 65-66:
[123] Նրա մասին տե՛ս աստ, էջ 39:
[124] Այս ժողովի մասին տե՛ս ստորև:
[125] ՁԱՔ, Բ, էջ 71:
[126] Տե՛ս **Կարապետ Ամատունի**, «Յակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոս Էջմիածնի (1600-1680)». - *Բազմավէպ*, 1993, էջ 36:
[127] Տե՛ս *Սիոն*, 1933, էջ 151-153:
[128] Տե՛ս *Սիոն*, 1933, էջ 153:
[129] Հմմտ., օրինակ, ԱՐՕ, II, փաստաթղթեր № 198, 200, 229, 233, 341, 342, 351:
[130] Տե՛ս *Բազմավէպ*, 1993, էջ 36-40:
[131] Նույն տեղում, էջ 36, 39. Հմմտ. **Մեսրոպ Թերզեան**, *Յակոբ Դ. Ջուղայեցի (1655-1680):* Պէյրութ, 1956, էջ 129:
[132] *Սիոն*, 1933, էջ 153:
[133] Նույն տեղում: Խոսքը վերաբերում է «դիվրիկեցի Ղազար վարդապետին» (տե՛ս **Ց. Քիւրտեան**. «Յակոբ կաթ. Ջուղայեցիի նորագիւտ խիստ կարեւոր վաւերաթուղթ մը». - *Սիոն*, 1969, էջ 129):
[134] *Սիոն*, 1933, էջ 151-152. տե՛ս նաև *Բազմավէպ*, 1993, էջ 36:
[135] «...Էջմիածնայ յերկրէն Նախավկայի վանից Շամբեցի Յոհան վարդապետ...»-ը հիշվում է նաև 1666 թ.՝ Կ. Պոլսում ծավալած հակաեղիազարյան գործունեության կապակցությամբ (տե՛ս «Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն*,

1940, էջ 282):

[136] *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.)*: Հ. Գ: Կազմեց Վազգեն Հակոբյան. Երևան, 1984, էջ 537): Դրանից մոտ մեկ տասնամյակ առաջ, 1641-1642 թթ., երբ Սիմեոն Ջուղայեցին նոր էր եկել Էջմիածին (տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան**, *XVII հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն,* էջ 148, ծնթ. 216)՝ միաբանների թիվը ավելի քիչ էր՝ «...ոչ միայն Էջմիածնի միաբանքն, այլ եւ բոլոր վանօրէից գրոց աշակերտեալ աբեղայքն... միահամուռ ժողովեցան անձինք երեսուն, եւ սկսան առնուլ դաս» (ԴԱԻ, 321. հմմտ. **Պօղոս Անանեան**, «Ոսկան վարդապետի նամականին». - *Բազմավէպ*, 1967, թիւ 6-8, էջ 133՝ «Սիմէոն վարդապետն ...եկն ի սուրբ Աթոռս եւ հաստատեաց զնոր Աթէնս չնորհօք ս. Հոգւոյն... եւ էին ամենեքեան (իմա՝ աշակերտողները - Ա.Ա.) մեծ եւ փոքր Լ (30) հոգի»): 1710-1720-ական թթ. Ս. Էջմիածնում կրթաուսումնաբիրական իրավիճակը շատ ավելի բարվոք էր (մինչև 1724 թ. օսմանյան ներխուժումը). Ղազար Ջահկեցու բառերով՝ «Էջմիածին փառօք պատուեալ, հայրապետօք բարգաւաճեալ, վարդապետօք փարթամացեալ, ուսումնասէր մանկամբք ծաղկեալ» (**Ղազար Ջահկեցի**, *Գիրք նորաբոյս, որ կոչի ԵՐԳԱՐԱՆ*, էջ 120):

[137] Մժ, Բ, էջ 361, Դավիթ Բաղիշեցու մասին տե՛ս նույն տեղում, էջ 287-288: **Աշ. Աբրահամյան**, «Դավիթ Բաղիշեցու տարեգրությունը և նրա արժեքը հայ մատենագրության մեջ». - *Էջմիածին*, 1946, VIII-X, էջ 55-59, XI-XII, էջ 35-42: Հակոբ Դ Ջուղայեցու օրոք Էջմիածնի միաբանության անդամ վարդապետներից 18-ի անունները հիշված են նաև 1681 թ. հուլիսի 21-ին շարադրված՝ «Գիր աղերսանաց գրեալ առ տէր Եղիազար Կաթողիկոսն ի միաբանիցն սրբոյ Էջմիածնի ի սուրբ Երուսաղէմ» վավերագրում (տե՛ս **Ն. Պօղարեան**, *Մայր ցուցակ...*, հ. Ա, էջ 480): Սակայն մեկ այլ գրչագրից գիտենք, որ «այս գրիս կայր ԼԳ (33) մօհրը (=կնիք) գլուխ վարդապետաց, եւ Լ (30) այլ իշխանաց մօհրը» (նույն տեղում, էջ 554):

[138] Տե՛ս **Միսաք Թ. Խոստիկեան**, «Վերածնութեան շրջան - ԺԷ դարու վերանորոգիչ կաթուղիկոսները». - *Արարատ*, 1902, էջ 774:

[139] *«Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.)»*: Հ. Գ, էջ 723, 296, 539, 769, 957: Նրա մասին տե՛ս նաև ԴԱԻ, էջ 285 (Ա. Դավրիժեցու երկի վերջին հրատարակության ցանկում Մովսէս վարդապետ անվան տակ սխալմամբ նույնացված են Մովսես Բջնեցին և Մովսես Տաթևացին՝ տե՛ս էջ 580. հմմտ. էջ 236, 285, 482, 483, 512): **[Մսեր Մսերեանց]**, «Մովսէսի Բջնեցւոյ առեղծուած զգրոյ». - *Ծռաքաղ*, 1861-1862, էջ 134-135: Մժ, Բ, 361:

[140] Տե՛ս **Ց. Տաշեան**, *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա* (Վիեննա, 1895), էջ 260:

[141] Տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 2503, էջ 494ա. հմմտ. **Ներ-**

սէս Ակինեան, *Երեմիա Զէյէպի Քէօմիւրճեան. կեանքն եւ գրական գործունէութիւնը* (Վիեննա, 1933), էջ 57: Այս ձեռագրի առաջին ստացողը նույն ինքը Մովսես Բջնեցին էր՝ «(1648 թ.) յանդեալ աւարտեցաւ տառս աստուածաբանական մեծին Դիոնէսիոսի Արիսպագացւոյ... ի վայելումն անձին իմում մեղապարտի Մովսէսի իմաստութեան սիրողի» (տե՛ս նույն տեղում, էջ 372բ-373ա. նաեւ՝ *«Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ»:* Հ. Գ, էջ 296):

[142] Տե՛ս ԱՋԳ, այուն. 1851-1852. հմմտ. **Աբ. Զամինեան**, *Հայոց եկեղեցու պատմութիւն*: Մասն Բ, էջ 81:

[143] Տե՛ս **Ղ. Ալիշան**, *Կամենից*, էջ 193:

[144] Տե՛ս **Գ. Գալեմքեարեան**, «Ո՞վ է Ջուղայեցի Յակոբ Դ կաթողիկոսին յաջորդը». - *Հանդէս Ամսօրեայ*, 1912, էջ 577-580: **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի հայ ազատագրական շարժումները*, էջ 265-266: *Դրվագներ*, Բ, 192, 293-4, 300, 314, 543: **Կ. Ամատունի**, «Սահակ վրդ. Մակուեցի». - *Բազմավէպ*, 1983, էջ 98-131, նույն հոդվածը համառոտված տե՛ս *Բազմավէպ*, 1988, էջ 53-56:

[145] 1661 թ. սեպտ. 28-ին Հռոմի Աղեքսանդր Է պապին ուղղված Հակոբ Ջուղայեցու նամակն անձամբ գրել էր Էջմիածնի կաթողիկոսի կնքապահ (Sigillarius) «Pater Stephanus Wartanowic»-ը (տե՛ս **Մեսրոպ Թերզեան**, *Յակոբ Դ Ջուղայեցի*, էջ 123), այսինքն՝ նույն Ստեփաննոս Լեհացին, «յազատ տանէ Վարդանէնց» (հմմտ. *Ղ. Ալիշան*, *Կամենից*, էջ 140, 193): 1673 թ. Ստեփաննոս Լեհացու վարչական պաշտոնն էր՝ «վերակացու եւ դանձապետ ի սուրբ Կաթողիկոսարանն Էջմիածնի» (*Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 678, էջ 166ա. հմմտ. **Գալուստ Տէր-Մկրտչյան**, *Հայագիտական ուսումնասիրություններ /Հայկականք ԺԳ-ԺԹ/:* Երևան, Գիրք Ա, 1979, էջ 154): Հետաքրքիր է, որ Ստեփաննոս Լեհացին և Միքայել վրդ. Շամբեցին գրեթե միաժամանակ՝ առաջինը 1679 թ. նոյեմբերին, երկրորդը՝ նույն թվի դեկտեմբերին, հիշվում են իբրև Էջմիածնի կաթողիկոսի տեղապահ և աթոռակալ (ՁԱՔ, Գ, էջ 37. *«Ձաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը»*, էջ 145): Ամենայն հավանականությամբ, այդ միջոցին նրանք եղել են «աթոռակից» տեղապահներ: Ստեփաննոս Լեհացու մասին տե՛ս նաև ԴԱԻ, էջ 322-324: ՁԱՄ, Գ, 620: **Ներսէս Ակինեան**, «Ստեփանոս վրդ. Լեհացի». - *Հանդէս Ամսօրեայ*, 1912, էջ 62-66, 147-153: *«Հայելի վարուց»:* Աշխատասիրությամբ Քնարիկ Տեր-Դավթյանի. Երևան, 1994, էջ 13-21: **В. К. Чалоян**, *История армянской философии.* Ереван, 1959, с. 319-333. Ստ. Լեհացին վախճանվել է 1689 թ. (տե՛ս ՄԺ, Ա, էջ 327. **Ստ. Ռոշքայ**, *Ժամանակագրութիւն...*, էջ 185-186. ՁԱՄ, Գ, էջ 620):

[146] Դարաշամբի Ս. նախավկայի առաջնորդ Միքայել վարդապետի մասին տե՛ս

Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 244. նաև անդ, ձեռ. 3531, էջ 350ա. *Դրվագներ*, Բ, էջ 153, 156, 293:

[147] Հակոբ կաթողիկոսի՝ 1665-1672 թթ. բացակայության ժամանակ, Մատթեոս եպիսկոպոսը հիշվում է իբրև էջմիածնում նստող «աթոռակալ» (տե՛ս ՁԱՔ, Բ, էջ 76. հմմտ. *«Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ»*: Հ. Գ, էջ 383, 632՝ 1654-ին հիշվում է իբրև եպիսկոպոս, 681):

[148] Պետրոս Ագուլեցին եպիսկոպոս էր ձեռնադրվել 1654 թ., իսկ 1664 թվականից բազմել էր Ագուլիսի Ս. Թովմայի առաջնորդության աթոռին (տե՛ս *«Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը»*, էջ 63): Սա էր «Գ եպիսկոպոսների գլուխ անցած» այն հրավիրակը, որին 1680 թ. դեկտեմբերին ուղարկել էին Երուսաղեմ՝ Եղիազարին Էջմիածին բերելու պատվերով (տե՛ս *Արարատ*, 1874, էջ 75. *«Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը»*, էջ 152): Այս գործը լավագույնս գլուխ բերելուց հետո (տե՛ս *«Օրագրություն Երեմիա Զէյլէպի Քէօմիւրճեանի»*, էջ 430-433. հմմտ. **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումները...*, էջ 263-264, 268-269), 1683 թ. Պետրոս Ագուլեցին նշանակվում է Էջմիածնի աթոռակալ, սակայն երկու ամիս անց հեռանում է Ագուլիս՝ «իւր վանքը» (տե՛ս *«Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը»*, էջ 152):

[149] 1652-1655 թթ. Հովհաննես Մուղնեցին եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարքը, 1660-ականների սկզբին՝ Հակոբ Դ. Ջուղայեցու աթոռակալը, այդ ժամանակվա ինչոցին էլ այս երկուսի միջև սուր առճակատում է առաջացել (Մուղնեցու դժգոհությունները շարադրված են 1664 թ. նոյեմբերի 4-ին Եղիազար Այնթապցուն ուղղած նամակում, տե՛ս *Սիոն*, 1933, էջ 119-122): Հովհաննես Մուղնեցին Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտներից էր. «Յովհաննէս անուամբ վարդապետ՝ այր երեւելի», որին հիշում է Դավրիժեցին այն ժամանակ, «մինչ քարոզութեամբ չրջէր Տէր Փիլիպպոս կաթուղիկոս յաշխարհին Օսմանցւոց» (տե՛ս ԴԱԻ, էջ 265)՝ կարող էր միայն այս Հովհաննես վրդ. Մուղնեցին լինել, քանզի կաթողիկոսին 1651-1652 թթ. ուղեկցող վարդապետներից միակ Յովհաննէսը, «տեսուչ Տիգրանակերտ քաղաքին»՝ նա էր (տե՛ս *«Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ»*: Հ. Գ, էջ 523-524. նաեւ՝ էջ 58, 790): Հովհաննես Մուղնեցու մասին տե՛ս նաև ՁԱՄ, էջ 629, 664. **Մեսրոպ Նշանեան**, *Օրագրություն Երեմիա Զէյլէպի Քէօմիւրճեանի* (Երուսաղէմ, 1939): **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումները...*, էջ 246-248: **Ստ. Մխիթարեան**, *Ստորագրություն հռչակաւոր վանաց Ս. Գեորգայ որ ի Մուղնի* (Դաւրէժ, 1889), էջ 26, 28-29: Յովհաննէս Մուղնեցին մահացել է 1669 թ. ապրիլի 4-ին (տե՛ս *«Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը»*, էջ 83-84):

[150] Հովհաննես Կարբեցու մասին տե՛ս **Կարապետ Ամատունի**, «ԺԷ դարու երեւելի վարդապետներ». - *Բազմավէպ*, 1987, էջ 76. ԴԱԻ, 504: Հովհաննա-

վանքի մեծ հեղինակությունն ու ազդեցությունը պայմանավորված էր նաև նրանով, որ նրա վիճակի մեջ էր Զուխուր-Սադի, այն է՝ Երևանի նահանգի ամենահարուստ մահալը՝ Կարբին (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9120, էջ 5ա. հմմտ. *Ջամբռ*, էջ 291. հմմտ. **Հակոբ Փափազյան**, «Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դար)». - *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1977, No. 1, էջ 38):

[151] Պոլսի վերոհիշյալ Եփրեմ պատրիարքն, որն իրեն «երաժիշտ» է անվանում (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 2503, էջ 495ա), բացի Մովսես Բջնեցուց, աշակերտել էր «նաեւ քեռորդի՝ Տեառն Եսայեայ աստուածաբանութեան մեծի բաբունապետի եւ առաջնորդի Նախիջեւանու վանիցն Սրբոյ Կարապետին» (անդ, 494ա): Եփրեմը, սակայն, «քանի մի ամ» երաժտություն էր ուսանել ոչ սրանցից (և ո՛չ էլ Մարտիրոս Ղրիմեցուց - տե՛ս **Ա. Ա. Մարտիրոսյան**, *Մարտիրոս Ղրիմեցի* (Երևան, 1958), էջ 27-28, 44, այլ մի երրորդ ուսուցչից՝ Գրիգոր վարդապետ Զեյթունցուց (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 789, էջ 6բ):

[152] *«Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը»*, էջ 108:

[153] Սրանք ևս Էջմիածնի միաբանության առաջին դեմքերից էին (*Մաշտոցի անվ. Մատենադարան*, Կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 244):

[154] Հմմտ. **Բաբգէն Կիւլէսէրեան**, *Վարդապետութեան աստիճանները հայ եկեղեցւոյ մէջ* (Անթիլիաս, 1980), էջ 146-149 (այս աշխատությունը սկզբնապես լույս էր տեսել 1905-1906 թթ.՝ Կյուլեսերյանի խմբագրած «Լույս» շաբաթաթերթում): Հեղինակը, մասնավորապես, նշում էր, թե «այսպիսի սովորություն մը ունեին հին եպիսկոպոսներ, որոնք ի պատիվ իրենց վարդապետության, կպահեին իրենց վարդապետ տիտղոսը և եպիսկոպոսությունը կկցեին իրենց վիճակին հետ» (անդ, էջ 147): Կյուլեսերյանը նաև նկատում էր, որ XVII-XVIII դարերում «վարդապետ ըսված ատենը կհասկցվէր Ծայրագույն վարդապետ: Ոչ-ծայրագույնները Աբեղա կկոչվեին» (**Բ. Կիւլէսէրեան**, *Կոլոտ Յովհաննէս պատրիարք*, էջ 34):

[155] *«Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ»*: Հ. Գ, էջ 807:

[156] Բ. Կյուլեսէրյանին անծանոթ էին Վարդապետական ինստիտուտի մասին Ն. Մառի ավելի վաղ արած այս դիտարկումները (տե՛ս **Н. Марр**, *Критика и мелкие статьи*. С.-Петербург, 1903, с. 34-38):

[157] Նույն տեղում, էջ 34. հմմտ. **Գառնիկ Գէորգեան**, «Ճշտումներ Մինաս Ամթեցիի մասին». - *Բազմավէպ*, 1966, No. 7-8, էջ 194, ծնթ. 4:

[158] Հմմտ. **Н. Марр**, *Критика и мелкие статьи*, с. 35-37.

[159] Տե՛ս *«Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ»*: Հ. Գ, էջ 522-524. հմմտ. անդ, էջ 505՝ «...այսմ ամի Ս. Էջմիածնայ կաթողիկոսն եկն ի սուրբ քաղաքս Երուսաղէմ Ի (20) վարդապետաւք եւ այլ միաբանք ընդ

նմա...»:

[160] ԴԱԻ, 269. հմմտ. ԱԶԳ, սյուն. 1688:

[161] Տե՛ս *Արարատ*, 1893, էջ 196. հմմտ. «*Դիւան հայոց պատմութեան*», գիրք Ե՝ «Դանիէլ կաթողիկոս /1800-1808/»: Աշխատասիրությամբ Գ. Աղանյանցի (Թիֆլիս, 1902), էջ 234-236:

[162] «*Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*», էջ 71, 123-124: Շմավոնը մահացել է 1670 թ. դեկտեմբերին Սպահանում (նույն տեղում, էջ 103):

[163] Նույն տեղում, էջ 123-124:

[164] Տե՛ս ԴԱԻ, 352: 1670 թ. խոջա Շմավոնը՝ ագուլիսյան մի եկեղեցու շինարարության վրա վերակացու է նշանակում այս Հակոբջան Երևանցու որդի Օհան-Բաբային (տե՛ս «*Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*», էջ 82): 1671 թ. «Յակոբջան աղայ»ն, որ պետք է նույն Հակոբջան Երևանցին լինի, հիշվում է ջուղայեցի այն մեծահարուստների շարքում, «որոց մէն մի ունեցեալ են զտասն կամ զքսան ստորադրեալ վաճառականս» (տե՛ս ՏՅՈ, Ա, էջ 172):

[165] Տե՛ս «*Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ*»: Հ. Գ, էջ 236, 252, 910:

[166] Իր՝ «Պատմութիւն Պետրոս աւագ գոնսուլին Հայոց եւ երկու ընկերացն՝ Քթռեչէնց Դեւդորոսին եւ Խանէնց Ստեփանին» չափածոյում, Թադեոսն այսպէս էր ներկայանում. «Մեղօք լցեալ Թադէոսի, Անուամբ եւեթ քահանայի, Գոլով որդի տէր Սարգսի, Եւ ի ցեղէ Համազասպի. Շօշ քաղաքու ըսպահանցի, Կոչիմ ազգաւ Երեւանցի...» (տե՛ս **Գ. Գալեմքեարեան**, «Թադէի երիցու պատմական մէկ գործը». - *Հանդէս Ամսօրեայ*, 1887, էջ 170): Թադեոս երեց Երևանցի Համազասպյանի մասին եղած գրականության մատենագիտությունը, նորահայտ նյութերը և ամփոփիչ գնահատականը տե՛ս **Սահակ Ճեմճեմեան**, *Մարսիլիոյ հայկական տպարանը* (Վենետիկ-Ս. Ղազար), 1986: **Ռաֆայել Իշխանյան**, *Հայ գրքի պատմություն*: Հ. 1 (Երևան, 1977), էջ 476-495: **Նույնի՝** «Սահակ Ճեմճեմյան. Մարսիլիո հայկական տպարանը». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1988, No. 1, էջ 208-209: Թադեոս երեցի մի հետաքրքրական հիշատակարանը (1674 թ.) տե՛ս **Ս. Ճեմճեմեան**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*: Հ. Դ. (Վենետիկ-Ս.Ղազար, 1993), էջ 1049-1050:

[167] Տե՛ս «*Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ*»: Հ. Գ, էջ 570: Ըստ երևույթին, սա նույն Իսահակ կամ Սահակ Ջուղայեցին էր, քանզի երկուսն էլ գրիչ էին (հմմտ. անդ, էջ 570 եւ 295) և նույն տարիներին գործում էին Նոր Ջուղայում: Նա, համառոտաբար ներկայացնելով իր տոհմածառը, ինքն իր ազգանունն էլ է ճշտում. «...Սահակ վարդապետիս Ջուղայեցւոյ... որ եմ ազգաւ Ղարատանեցի» (անդ, էջ 295. հմմտ. անդ, էջ 756-757՝ «...Հեզահոգի եւ առաքելաշնորհ քաջ հովւի Իսահակ վրդապետին Ջու-

ղայեցւոյ», 962): Հմմտ. նաև **Ս. Ճեմճեմեան**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*: Հ. Ե. (Վենետիկ-Ս.Ղազար, 1995), էջ 780:

[168] Հմմտ. **Հ. Ղ. Միրզոյան**, *XVII հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն,* էջ 42-46: Հ. Միրզոյանն իրավամբ նկատում է, որ «արևելահայ հասարական-քաղաքական կյանքում ջուղահայ առևտրական կապիտալի այս գործունը դերն սկսել էր երևան գալ դեռևս Հին Ջուղայում՝ նախքան մեծ բռնագաղթը» (նույն տեղում, էջ 46):

[169] Հմմտ. «*Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը*», էջ 110, 139:

[170] Տե՛ս **Լ. Ս. Խաչիկյան**. «Հակոբ Ջուղայեցու կտակը». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1966, No. 4, էջ 183-185: Առայժմ չենք ճշտել ժողովի մյուս մասնակիցների կենսագրական մանրամասները: Երկուսի անձի վերաբերյալ, սակայն,

ունենք ենթադրություններ. ա) Մարուքի որդի Հարությունը պետք է որ բուն երևանցի լիներ, քանզի Զաքարյա Քանաքեռցին հիշում է Թահմասպ-կուլի-խան Ղաջարի՝ Երևանում պաշտոնավարելու տարիներին (1625-1635) խոշտանգման ենթարկված ոմն Երևանցի Մարուքեին (ՁԱՔ, Ա, էջ 66), որը քաղաքի ուսևորներից պիտի լիներ. բ) Հակոբ եպիսկոպոսը, հնարավոր է, եղել է Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի միաբան. 1679 թ. գրված մի հիշատակարանում, այլ միաբան վարդապետների շարքին, առաջինը հիշվում է «Մեծ Յակոբ բաբունապետն» (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 3531, էջ 350ա. Հմմտ. **Գ. Տեր-Մկրտչյան**, *Հայագիտական ուսումնասիրություններ*, էջ 156):

[171] Տե՛ս *Սիոն*, 1933, էջ 151:

[172] Նույն տեղում, էջ 153:

[173] Տե՛ս **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումները...*, էջ 253, ծնթ. 1:

[174] Կ. Ամատունին, առանց որևէ աղբյուր վկայակոչելու, Եղիազար Այնթափցու օծումը դնում է 1664 թ. սեպտեմբերին, որ ընդունելի չէ (տե՛ս *Բազմավէպ*, 1993, էջ 35):

[175] **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումները...*, էջ 254:

[176] Տե՛ս ՁԱՔ, Բ, 73. ԱՁԳ, սյուն. 1756, 1759: Օրմանյանի հաշվարկով, Հակոբ կաթողիկոսն Էջմիածնից դուրս է եկել 1665-ի մարտի 26-ին Զատիկն անելուց հետո (ԱՁԳ, սյուն. 1759): 1665 թ. հուլիսի 28-ին «Եփրեմ կրօնաւորէ Տաթեւացւոյ» (որ հետագայում դառնալու էր Պոլսի վերոհիշյալ Եփրեմ պատրիարքը) գրած մի հիշատակարանից պարզվում է, որ այդ օրը նա դեռևս Կեսարիայում էր (տե՛ս *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 2291, էջ 380բ):

[177] **Հ. Ս. Անասյան**, *XVII դարի ազատագրական շարժումները...*, էջ 254:

[178] Այս առճակատման սրութիւնը երևում է նաև Հակոբ Ջուղայեցու աթոռակալ Հովհաննես Մուղնեցու՝ Եղազար Այնթապցուն ուղղված մի նամակից. - տե՛ս *Սիոն*, 1933, էջ 119-121:
[179] Արդեն 1667 թ. սեպտ. 24-ին Հակոբ Ջուղայեցին ազդարարում էր Եղիազարին՝ «խաղաղութիւն եւ հաշտութիւն» բանակցելու իր ցանկությունը (տե՛ս *Սիոն*, 1941, էջ 157-158. Եղիազարի պատասխան նամակը տե՛ս անդ, էջ 200-201): 1671 թ. հուլիսի 4-ին Հակոբ Ջուղայեցին գրում է նրան մի նամակ ևս՝ «առ ի մարզումն եւ ի հրավիրումն զքեզ ի խաղաղութիւն... միայն թէ փութայ գալ [Պոլիս]» (տե՛ս **Ն. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Ա, Երուսաղէմ, 1966, էջ 553. հաշտության որոնումներին մասին տե՛ս նաև **Տ. Հ. Թ. Սաւալանեանց**, *Պատմութիւն Երուսաղէմի:* Հ. Ա, Երուսաղէմ, 1931, էջ 618-637): Սակայն 1672 թ. սուլթանի հրամանով Հակոբ Ջուղայեցին արտաքսվում է Օսմանյան կայսրության տարածքից և, յոթամյա բացակայությունից հետո (տե՛ս **Ղ. Ալիշան**, *Կամենից*, էջ 264), նույն թվի մայիսի 15-ին ժամանում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին (տե՛ս *«Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը»*, էջ 66, 91):
[180] ՁԱՄ, Գ, էջ 699:
[181] Նույն տեղում, էջ 700:
[182] ՁԱՄ, էջ 699:
[183] Հմմտ. ԱԶԳ, այուն. 1808:
[184] ՁԱՔ, Բ, էջ 72:
[185] Նույն տեղում:
[186] Նույն տեղում:
[187] 1665 թ. վերջին կայացած Էջմիածնի ժողովի որոշման ի հայտ գալով և վերը կատարված քննությամբ՝ լիովին հերքվում է Կ. Ամատունու այն ենթադրությունը, թե Օնոփրիոսի երդմնագիրը իբր «զուրկ է պաշտոնական հանգամանքե, անձնական թուղթ մըն է, ինքն է (իմա Օնոփրիոսը՝ Ա.Ա.) միայն անոր հեղինակը...», և թե «ոչ մեկ ապացույց ունինք հաստատելու, թե ժողովին 27 անդամները կամ գեթ անոր մեծամասնությունը հավանած ըլլան օրինավոր հայրապետը դատի հանելու հակաթոռ կաթողիկոսի ատյանին», այլապես՝ «եթե անոնք հավան եղած ըլլային այդ գաղափարին, նկատած դարուն բարքերը, դժվարին չէր վար առնել կաթողիկոս մը, ուրիշ մը նստեցնելու անոր տեղը» (տե՛ս *Բազմավէպ*, 1993, էջ 39): Օնոփրիոսի երդմնագրի բովանդակությունը որոշակի կասկած էր առաջացրել նաև Աշ. Հովհաննիսյանի մոտ, քանզի նա «որպես թե» նախաբանով է վերաշարադրում 1664 թ. հոկտեմբերի ժողովի մանրամասնությունները, իսկ ժողովականների՝ Եղիազարին ուղղած համակամ խնդրանքը վերագրում է, ինչպես և Կ. Ամատունին՝ միայն Օնոփրիոս Կարկուտին (տե՛ս *Դրվագներ*, Բ, 153):
[188] Տե՛ս *Sempadschfr kodex*, herausgegeben und ubersetst von Josef Karst

(Strassburg, 1905), p. 74. Հմմտ. *Судебник Смбата спарапета (гунд-стабля) 1265 г.* Перевод со среднеармянского, предисловие и примечания проф. А. Г. Сукиасяна (Ереван, 1971), с. 88.

[189] **Մխիթար Գոշ**, *Գիրք Դատաստանի:* Աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի (Երևան, 1975), էջ 89:

[190] Ubi periculum-ի հիմնական դրույթները և հետագա էական ձևափոխումները շատ լավ համառոտված են հետևյալ հանրագիտարանում՝ *The World of Knowledge Encyclopeadia.* Vol. VI, London-New York-Toronto-Sydney-Aucland, 1971. տե՛ս նաև **Lector**. *Conclave: son organisation, sa legislation ancienne et modern* (Paris, 1894).

[191] ԿՈՍ, էջ 51, 53, 69, 73:

[192] Տե՛ս ՄԺ, Ա, էջ 113-114:

[193] Տե՛ս ԿՈՍ, էջ 81-82:

[194] Տե՛ս **Գարեգին վրդ. Ցովսէփեան**, «Թովմա Մեծոփեցու կեանքը (կենսագրական նոր նիւթերով)». - *Արարատ*, 1914, էջ 8:

[195] *«ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»:* Մասն Ա (1401-1450 թթ.): Կազմեց Լ. Ս. Խաչիկյան (Երևան, 1955), էջ 531-532:

[196] ԿՈՍ, էջ 72:

[197] ԱԶԳ, սյուն. 1458:

[198] Տե՛ս *Սիոն*, 1933, էջ 151-152:

[199] ԿՈՍ, էջ 53:

[200] *«ԺԵ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»*, Ա, էջ 531:

[201] ԱԶԳ, սյուն. 1453:

[202] ԿՈՍ, էջ 53:

[203] ԿՈՍ, էջ 68:

[204] ԴԱԻ, էջ 329: Գործածված է հայկական չարժական տոմարը, որով ՊՂԱ (891) թվականն սկսվում է 1441 թ. դեկտեմբերի 1-ին (տե՛ս, օրինակ, **Բ. Ե. Թումանյան**, *Տոմարի պատմությունը:* Երևան, 1972, էջ 90): Լ. Խաչիկյանը հաշվարկը կատարելով անշարժ տոմարով, հիշատակարանը թվագրում է 1442-ով (*«ԺԵ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»*, Ա, էջ 536):

[205] ՁԱՄ, Գ, էջ 486 և շար.. Հմմտ. **Բարգէն Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)*: Անթիլիաս, 1939, սյուն. 1211: Այս դեպքը գրեթե նույն բառերով շարադրելով 1713 թ. գրված իր «Գավազանագրքում» (Երուսաղեմի Մատենադարան, ձեռ. 462)՝ Մաղաքիա դպիր Ճեվահիրճին նախորդում է Զամչյանին (տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, սյուն. 34, ծնթ.), որ կնշանակի, թե վերջինս օգտվել է հենց այս գործից կամ էլ՝ երկուսն էլ ունեցել են մի երրորդ՝ մեզ անհայտ աղբյուր: Համենայն դեպս, մի օրինակ էլ այս Գավազանագրքից պահվում է Ս. Ղազարի մատենադարանում՝ ձեռ. No. 50-ը, սակայն այս-

տեղ ժամանակագրությունը հասցված է առնվազն մինչև 1741 թ. (տե՛ս **Ս. Ճեմճեմեան**, «Նոր նիւթեր Կ. Պոլսոյ երջանկայիշատակ պատրիարք Յովհաննէս Կոլոտի մասին», էջ 282):

[206] ԿՈՍ, էջ 53:

[207] Տե՛ս **Մխիթար Գոշ**, *Գիրք Դատաստանի*, էջ 13-14, 543 (ծնթ. 17, 18, 19):

[208] Հետաքրքիր է, որ մի նմանատիպ պատմական փաստ՝ 1652 թ. Երուսաղեմում կայացած եկեղեցական ժողովը մեկնաբանելիս, Օրմանյանը հանգել էր ճիշտ մեր վերոգրյալ եզրակացությանը, այն է՝ որ «ժողովրդական ուխտավորներ հազար կամ այլ աւել, որոնք կերպով մը անցած կնկատվին ի թիւ ժողովին, իբր զի (sic) ընդհանուր ազգային հաւանությամբ հաստատվեցաւ երկու աթոռներու հաշտությունը» (տե՛ս ԱԶԳ, սյուն. 1688. հմմտ. «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.)», հ. Գ, էջ 522-524:)

[209] Տե՛ս **Լ. Ս. Խաչիկյան**, «Հակոբ Ջուղայեցու կտակը», էջ 179:

[210] ԿՈՍ, էջ 51-53:

[211] *Энциклопедический словарь*. Изд. Ф. Брокгауз, И. А. Ефрон, том XXII, С.-Петербург, 1897, с. 739. հմմտ. նույն հանրագիտարանի Հ. 15, էջ 956:

[212] ԿՈՍ, էջ 69:

[213] ԱԶԳ, սյուն. 1457: Այդ մրցակցության կարևոր դրվագների և նրբությունների մասին տե՛ս **Հակոբ Փափազյան**, «Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից». - *Տեղեկագիր Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի*, 1955, No. 8, էջ 96-99: 1441 թ. պատմական իրադարձություններին նվիրված Թ. Մեծոփեցու հիշատակարանի ուշագրավ քննությունը տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ*, սյուն. 31-42, 1125-1214:

[214] ԿՈՍ, էջ 73:

[215] ԿՈՍ, էջ 72-73:

[216] ԿՈՍ, էջ 40:

[217] ԿՈՍ, էջ 69-72:

[218] ԿՈՍ, էջ 69. հմմտ. ԱԶԳ, սյուն. 1457:

[219] ԿՈՍ, էջ 71:

[220] Տե՛ս Mansi Joannes Dominicus, *op. cit.*, p. 1258. հմմտ. **Ղուկաս Ինճիճեան**, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի:* Հ. Գ, էջ 255 (Ինճիճյանից կատարված արտագրությունը տե՛ս **Մսեր Մսերեանց**. *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէոնէ մինչ ցՅովհաննէս Ը (1763-1831)*, Մոսկուա, 1876, էջ 281). ԱԶԳ, սյուն. 1290-1291. **Վարդան Հացունի**, *Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ*, էջ 44:

[221] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9245, էջ 71բ: Իրականում, սակայն, Ս. Էջմիածնից Կ. Պոլիս ժամանած պատվիրակները ներկայացնում են երկու թեկնածություն (այս մասին մանրամասն տե՛ս սույն ուսումնասիրության մեջ, Գլուխ Ը.):

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՆՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ծայրագույն Նվիրակներ (1741-1797)

Ստորև նշում ենք 1741-ից մինչև 1797 թ. սկզբնաղբյուրներում մեզ հանդիպած՝ Ս. Էջմիածնի ծայրագույն Նվիրակների անունները, Նվիրակության վայրը և առկա զուգահեռ տեղեկություններ:

Ծայրագույն Նվիրակ [անանուն], Կ. Պոլիս (ամենայն հավանականությամբ՝ 1742 թ. հիշված Իսահակ արքեպիսկոպոսն է, տե՛ս վարը)

1741 թ. հունիսի 12-ին՝ *Կ. Պոլսի պատրիարք Հակոբ Նալյանը՝ իր բարեկամ Սարգիս վարդապետին ուղղած մի նամակում, իմիջիայլոց, գրում էր. «Եթէ կամիս, գրեա՛ աստ քոյոց ծանօթաց եւ բարեկամաց եւ ընկալ ի նոցանէ զզրոյց, թէ յորմէ հետէ եկեալն է Ծայրագոյն Նուիրակ Սրբոյ Աթոռոյն՝ որքանիցս ծանուցումն արարեալ եմ եւ որքան յորդորեալ զժողովուրդն ի տուրս Սրբոյ Աթոռոյն, եւ թէ ի ժամանակս նախկին պատրիարքաց որքան էր եւ ինչ կերպիւ Նուիրակութիւն Սրբոյ Աթոռոյն, եւ ի ժամանակս լուսահոգի Հօր մերոյ (իմա՝ 1741 թ. փետրվարի 13-ին մահացած Հովհաննես Կոլոտի օրոք՝ Ա.Ա.) որքան յառաջացաւ եւ յորդեցաւ»*[1]:

Իսահակ արքեպիսկոպոս, Կ. Պոլիս

1742 թ. *«Ծայրագոյն Նուիրակ ի Կոստանդնուպոլսո» է հիշված «Իսահակ աստուածաբանութեան վարդապետը»*[2]: *Սա Սահակ Բ*

Ահագինն է, որ նվիրակել է Կ. Պոլսում մինչև 1743 թ., այնուհետև դարձել է Զմյունիայի առաջնորդ. 1746 թ. սկզբին դարձյալ հիշված է իբրև նվիրակ[3]: 1784 թ. եղել է նվիրակ Զմյունիայում, մահացել է 1792 թ.[4]: 1757 թ. ապրիլին դեռևս հիշվում է նույն տիտղոսով՝ «Իսահակ արհիեպիսկոպոսն եւ Ծայրագոյն նուիրակն լուսահիման մօրն հաւատոյ Սրբոյ Էջմիածնայ[5]:

Դանիէլ եպիսկոպոս, Ղրիմ

1744 թ.՝ *Ղրիմահայության գրած մի նամակում ասվում է. «ի թուոջ ՌՃՂԳ (1744)-ին, ըստ սովորութեան նախնեացն մերոց, եկն առ մեզ եւ յերկիրս մեր Ծայրագոյն նուիրակ Սրբոյ յԷջմիածնէ ամենասքանչ յԱթոռոյն՝ Տէր Դանիէլ աստուածաբան եպիսկոպոսն, որ մեք ամենեքեանքս բաղձմամբ մեծաւ խնդրեաք այսպիսի տեսուչ եւ հովիւ, վասն որոյ յարեաք ի յոտին մեծամեծքս եւ փոքունքս, ծերքս եւ տղայքս, եւ համայն ժողովուրդքս՝ զդա հազիւ եւ բռնութեամբ իմն, ի ձեռն աղերսանաց, արգելաք յերկիրս մեր՝ առաջնորդ եւ դէտ տեսչութեան մեզ եւ նահանգիս մերոյ...»[6] (փաստաթուղթն ամբողջությամբ հրապարակում ենք սույն հավելվածի 2-րդ բաժնում որպես Վավերագիր Ա):*

Հովսեփ արքեպիսկոպոս Արղության, Ռուսաստան

1777 թվականից ի վեր *Ծայրագույն նվիրակի պաշտոն-տիտղոսով է հիշատակվում Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը: Ստորև, ըստ ժամանկագրական հերթականության, բերում ենք Արղության տիտղոսի հիշատակումները:*

1777 թ. ապրիլի 8՝ *«լուսակառոյց Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի ծայրագոյն նուիրակ եւ կողմանցս Հիւսիսոյ Հայոց Առաջնորդ Յովսէփ Արքեպիսկոպոս...»[7]: Արղությանը նշանակվել էր Ռուսահայոց թեմի առաջնորդ և մեկնել Աստրախան տակավին 1773 թ., ուստի չի բացառվում, որ ծայրագույն նվիրակի տիտղոսը նրան շնորհվել է 1773 թ.:*

1780 թ. հոկտեմբերին՝ *Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը դիմում է Արղությանին որպես՝ «քրտնաջան զաւակիդ Սրբոյ Աթոռոյս եւ Ծայրագոյն նուիրակիդ սորին», իսկ* 1781 թ. փետ. 4-ին՝ *«Ռուսաց օրհնեցելոց երկրի Ծայրագոյն նուիրակ եւ առաջնորդ Յովսէփ աս-*

տուածաբան վարդապետ»[8].

1788-ից մինչեւ 1797 թ. *(ու, հավանաբար, մինչև 1800 թ. կաթողիկոս ընտրվելը)* եղած հիշատակումներում՝ «Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Ծայրագոյն նուիրակ»[9]:

Դատելով Իսահակ վարդապետի և Հովսեփ Արղությանի երկար տարիներ անընդմեջ Ծայրագույն նվիրակ հորջորջվելուց՝ պետք է կարծել, որ սկսած 1740-ական թթ. Ծայրագույն նվիրակի պաշտոնը վերածվել էր տիտղոսի և առանձնահատուկ պայմաններում նվիրակություն անելու երեք տարվա ժամկետն այլևս չէր պահպանվում: Թեև եղել են նաև նախադեպեր. Մինաս Ամդեցին՝ որպես Ս. Էջմիածնի նվիրակ, շրջագայել է շուրջ 24 տարի՝ 1679-1703 թթ.[10]:

2. Ս. Էջմիածնի նվիրակներին վերաբերող դիվանական անտիպ նյութեր

ՎԱՎԵՐԱԳԻՐ Ա

Ս. Էջմիածնի նվիրակ Դանիել եպիսկոպոսին՝ ղրիմահայության առաջնորդ ընտրելու վկայականը (1744 թ.)[11]

Տերութեամբ Տեառն Ամենազօրին Աստուծոյ եւ խնամաւն նորա մեք՝ Ղրիմու ժողովուրդքս՝ մեծամեծքս եւ փոքունքս, ծերքս եւ տղայքս, գլխաւորքս եւ առ հասարակ ամենայն հաւատացեալքս՝ քեաֆայիցիքս եւ ղարասուեցիքս, բաղչասարայեցիքս եւ կեօզլէվեցիքս, եւ ղաւուշանեցիքս, եւ օրեցիքս, եւ աղմեչիտիքս, այլ եւ գիւղեցիքս, այսինքն՝ օրթալանկեցիքս եւ թոփրուեցիքս, եւ ղամշլխեցիքս, եւ սալայեցիքս, եւ էսգիղրիմեցիքս, որ եմք ի բնէ թէմք եւ վիճակ վանացն մերոց՝ Սրբոյ Խաչին, որ է՛ յերկիրս Յոնաց:

Եւ զի այս թուի եր[ր]որդ ամ եղեւ, որ մեք մեղուցեալ հօտքս թարց հովուի եւ առաջնորդի եմք, որ ի փաստէ այսմիկ ծնանէին ի մէնջ պէս պէս վնասս հոգեկանս: Վասն որոյ ոչ կարացաք ժուժել առանց հովուի, որ ի հարկէ պիտոյ էր մեզ եւ երկրին մերոյ առաջնորդ ոք: Ուստի՝ ի ազգմանէն Արարչին, ի ցրտային ժամանակոջս

այսմիկ, ի թուոջ ՌՃՂԳ (1744)-ին, ըստ սովորութեան նախնեացն մերոց, եկն առ մեզ եւ յերկիրս մեր Ծայրագոյն նուիրակ Սրբոյ յԷջմիածնէ ամենասքանչ յԱթոռոյն՝ Տէր Դանիէլ աստուածաբան եպիսկոպոսն, որ մեք ամենեքեանքս բաղձմամբ մեծաւ խնդրեաք այսպիսի տեսուչ եւ հովիւ, վասն որոյ յարեաք ի յոտին մեծամեծքս եւ փոքունքս, ծերքս եւ տղայքս, եւ համայն ժողովուրդքս՝ զդա հազիւ եւ բռնութեամբ իմն, ի ձեռն աղերսանաց, արգելաք յերկիրս մեր՝ առաջնորդ եւ դէտ տեսչութեան մեզ եւ նահանգիս մերոյ, որ յոժար կամաւ հաճեցաք սմա եւ ընտրեցաք մեզ գոլ դէտ կամակցութեամբն Աստուծոյ եւ հրամանաւն սրբազանին տիեզերակալի: Վասն որոյ պարտիմք ամենեքեանքս հնազանդիլ սմա հոգեւորապէս՝ իբրեւ ճշմարիտ հովուին եւ առաջնորդին մերոյ: Փրկչին եւ կենդանատուին՝ Տեառն ընաւից՝ երկնի եւ երկրի Յիսուսի Քրիստոսի, որ եւ վասն հաւատարմութեան մերոյ զթըխանկար մատնէ հարս եղաք ի վերայ վկայական գրոյն մերոյ, զի տեսցացն համայնից հաճոյ թուեսցի սակաւագիծ գիրս: Ողջ լերուք: Բաւ է:

(Սույն փաստաթուղթը հաստատված է 69 հայերեն կնիքով և դրանց փոխարինող երեք մատնահետքով, որոնց ներքևի մասում գրված է՝ Գաբրիէլ, Յարութիւն, Խաչեղբայր՝ Ա.Ա.)

Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր 9120 (Վավերագրեր և կաղապարներ, XVII-XVIII դդ.)

Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսի (1763-1780) կարգադրությամբ, 1765 թ. Մայր Աթոռում պատրաստվել է հաճախակի գործածվող գրակաղապարների մի ժողովածու՝ հավաքվել են մի կամ մի քանի տարբերակ այն գրություններից, որոնք Ս. Էջմիածնի միաբանության կամ կաթողիկոսի անունից, պարբերական հաճախականությամբ կրկնվող այս կամ այն կարևոր առիթով, առաքվել են սովորական հասցեներով[12]: Անուշադրության մատնված այս մատյանը հայագիտությանը հայտնի՝ հայ եկեղեցական թղթակցության մեջ կիրառված ստանդարտ բանաձևերի միակ ժողովածուն է: Այստեղից էլ նրա երկակի արժեքը.

ա) մեզանում այս մատյանն առհասարակ զարգացում չապրած պատմագիտական ճյուղի՝ վավերագրագիտության (diplomatics, diplomatika)[13] ուշմիջնադարյան մի ձեռնարկ է ու, միաժամանակ՝ հայ միջնադարյան վավերագրերի արդի ուսումնասիրությունը դյուրացնող առաջնակարգ աղբյուր.

բ) մատյանիս՝ 1694-1765 թթ. ժամանակահատվածն ընդգրկող շուրջ ինը տասնյակ փաստաթղթերից հրատարակվել է միայն մեկը (տե՛ս ստորև), մյուսները՝ ո՛չ մեջբերվել են, ո՛չ առանձին քննության արժանացել, այնինչ դրանցից յուրաքանչյուրը ցարդ անհայտ պատմական կարևոր փաստերի շտեմարան է:

Վավերագրերը լուսաբանում են հատկապես Ամենայն Հայոց կաթողիկոսական հաստատության, Մայր Աթոռի միաբանության, հայ եկեղեցու ներքին կանոնադրության և արտաքին հարաբերությունների կարևոր և քիչ ուսումնասիրված հարցերը:

Բացի վերոհիշյալ փաստաթղթերից, Էջմիածնի նվիրակների գործունեությունը կարգավորելու նպատակով, մատյանի մեջ՝ «հաւաստի տեղեկութեամբ, անթերութեամբ եւ ուղիղ դասութեամբ», ժողովել են «ի մի վայր զընդհանուր թեմս եւ զվիճակս սրբոյ Աթոռոյս. զքաղաքս, զղասապայս եւ զգլխաւոր գիւղորայս նոցին»: Բերված պատմաաշխարհագրական հարուստ տեղեկություններն իրենց քանակով զգալիորեն գերազանցում են Սիմեոն կաթողիկոսի «Ջամբռ»ում եղած համանման նյութը՝ հնարավորություն ընձեռելով ճշ-

տելու 1760-ական թթ. հայության աշխարհագրական-ժողովրդագրական սփռման սահմանները:

Նվիրակության խնդիրները լուսաբանված են հետևյալ խորագրերը կրող փաստաթղթերում.

1. *«Ի յերկիրն Ռուսաց յորժամ նուիրակութեան կոնդակ գրիցի՝ այս է սկիզբն նորին եւ այսպէս է գրելի» (էջ 10ա):*
2. *«Օրինակ՝ ծայրագոյն նուիրակութեան մեռոնի» (էջ 13բ-15ա):*
3. *«Վասն յանձնարարութեան նուիրակի» (էջ 15բ):*
4. *«Թուղթ առ բաղիշեցիս՝ վասն բարձման քեսիմիւ նուիրակութեան տալոյն» (էջ 16բ-17ա):*
5. *«Թուղթ՝ վասն յանձնարարութեան նուիրակի (իշխանացն երկրին առ որ գնալոց է)» (էջ 17ա):*
6. *«Վասն յանձնարարութեան» (էջ 17բ):*
7. *«Վասն յանձնարարութեան նուիրակի առ մեծամեծ իշխանս գրելոյ» (էջ 18ա):*
8. *«Վասն յանձնարարութեան նուիրակի՝ զերկաթս ժողովողի» (էջ 18բ):*
9. *«Վասն շնորհակալութեան» (20ա-բ):*
10. *«Վասն շնորհակալութեան ի կողմանէ նուիրակաց առ ամենայն քաղաքս» (էջ 19բ-20ա):*
11. *«Վասն շնորհակալութեան» (21ա):*
12. *«Վասն շնորհակալութեան» (21բ):*
13. *«Վասն շնորհակալութեան» (22ա):*
14. *«Վասն շնորհակալութեան գրելոյ, յորդորման եւ յանձնարարութեան եւ մանաւանդ խնդրանաց» (22ա-բ):*
15. *«Թուղթ վասն նոր նուիրակ կարգելոյ յայտքուստ» (էջ 24ա):*
16. *«Վասն ծայրագոյն նուիրակական կօնդակի (զկնի օրհնութեան՝ այսպէս գրեա՛)» (էջ 36ա-37ա):*
17. *«Օրինակ ծայրագունի նուիրակականի կօնդակի եւ օրհնութեան նամակի» (էջ 41բ-45բ):*
18. *«Օրինակ՝ մասնաւորի նուիրակականի կօնդակի» (էջ 46ա-47բ)[14]:*

Ստորև հրապարակում ենք այս մատյանից մեր քաղած երկու վավերագիր, որոնք խիստ արժեքավոր են իբրև պատմական փաստաթուղթ. առաջինը 1765 թ. Ս. Էջմիածնի նոտար Երեմիա աբեղայի պատրաստած՝ «նուիրական վիճակների»[15] սահմանները ճշտող վավերագիր է՝ 1760-ական թթ. հայաբնակ վայրերի և հայկական եկեղեցիների մի իսկական հանրագիտարան, որն առաջին անգամ հրատարակել է Գյուտ Աղանյանցը, բայց ցայժմ անհայտ էր մնում, թե նա ո՞ր մատյանից էր քաղել այս վավերագիրը[16]: Բավական բարդ ընթեռնելի այս փաստաթղթի վերահրատարակությունը կատարում ենք մեր մանրազնին ընթերցման համաձայն (թեև տարընթերցումները Աղանյանցի հրատարակության հետ չնչին են): Իսկ երկրորդ վավերագիրը՝ 1737 թ. մայիսի 23-ին Ս. Էջմիածնից Գանձասարի կաթողիկոսին հղված մի հետաքրքրական նամակ է:

ՎԱՎԵՐԱԳԻՐ Բ

Ս. Էջմիածնի «նուիրակութեան վիճակները» (1765 թ.)
(Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 9120, էջ 1ա-5բ)

[էջ 1ա] Աստուածակառոյց մեծի Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի համայն նուիրակաց յաղագս նուիրական արդեանց շրջագայելի քաղաքքն հանդերձ գիւղաքաղաքօք նոցին ընդ յատուկ յատուկ անուանց մի ըստ միոջէ ստորագրին.

ՍՏԱՄՊՈԼ

Ի վերայ Աստուածաշէն եւ տիրապահ, արքայանիստ եւ ծովահայեաց գլուխ ամենայն քաղաքաց մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ, եւ ամենից սահմանաց եւ շրջակայից դորին. յորս եւ զետեղեցելոց մերազնէից լուսաւորչածին եւ հայազուն ի Քրիստոս հաւատացելոց ամենեցունց եւ ի դոսին զինուորեցելոց ի Տէր սրբոց եկեղեցեաց, այսինքն՝ Ղումղափիու սրբուհւոյ Աստուածածնի, Սամաթիու սրբոյն Գեւորգեայ զօրավարին, Պալաթու սրբոց Հրեշտակապետացն, Ղալաթիու սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, Ուս-

կուղերու սրբոյն Յովհաննու կարապետին եւ սրբոյ Խաչին, Խասգեղու սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, Օրթագեղու սրբուհւոյ Աստուածածնին:

Այլեւ՝ Բէշիկտաշու, Ղուռուչէշմայու, Հիսարու, Բէքզօղու, Էեպու, Թօփղափիու, Ղատիգեղու, Ղարթալու եւ այլոց մերձաւոր եկեղեցեաց, նաեւ՝ այլոց քաղաքաց, ղասապայից եւ գիւղորէից դոցին, այսինքն՝ Ադրիանուպօլսոյ, Թրակիու, Պրուսայու, Եզնմիտու, Քեօթահեայու, Ադաբազարու, Արմաշու եւ բոլոր շրջակայից գիւղորէից դոցին, Գիւռլայու եւ բոլոր երկրին Եալօվայու, Բիլաճիկու, Ենկիշհարու, Տավշանլուայ, Գեօլտաղու, Մուհալիճու, Պանդրմայու, Էտինճկու, Փիրմաստու, Բալիքեասրու, Էյնայու, Բօղասհեսրու, Կելիպօլու, Մալղարայու, Զօղուայ, Ուզունքեօրփուայ, Կիւմուրճինու եւ այլոց շրջակայից դոցին մեծաց եւ փոքունց գեօղորէից ամենեցունց եւ ի միջի դոցին հաստատեցելոց սրբոց եկեղեցեաց եւ եկեղեցականաց դասուցդ. նախ՝ եղբօր մերում երջանկապատուոյ եւ հանճարազարդի Տեառն այս անուն Աստուածաբանի վարդապետին եւ արժանաժառանգի Պատրիարգին եւ այլոց Արհիապատիւ եւ ուղղավէպ Առաջնորդաց եւ ճշմարտաուսոյց վարդապետաց:

[էջ 1բ] ԻԶՄԻՐ, ՈՐ Է ՏԷՐՈՒՆԻ

Ի Զմիւռին, ի Գեոզհիսար, ի Մանիսայ, ի Մանաման, ի Գիրիդ, ի Սախգըզ, ի Միդիլու, ի յԱյազմայ, ի Քամար, ի Բէրղամայ, ի Ղընըխ, ի Սօվմայ, ի Ղրխաղաճ, ի յԱղասար, ի Գեօրդաստ, ի յԱտալա, ի Մառմառա, ի յԱլաշհար, ի Դուրղութ, ի Բայընդուր, ի Թիրա, ի Բիրգի, ի յՕտամիշ, ի Էնկիպազար, ի Նազլու, ի Դէնկիզլու, ի Հօնաս, ի Ռադոսդ, ի Ստեանքեոյ, ի Բօդրռում, ի Մուղլայ, ի Մալաս, ի Մանդալեաթ, ի Ղուշատայ, ի Սոքա, ի Քեօշք եւ յայլ թեմս եւ ի վիճակս Զմիւռնոյ:

ՂՐԻՄՈՒ

Մայրաքաղաքիդ Կաֆայու, Ղարասուու, Պաղչասարայու, Գեօզլավայու, Աղմէչիտու, Օրթալանկու, Թոփտիու, Սալայու, Ղամիշլըխու, Նորբերդու, Թամանու, Թօմրուկու, Ղափլուու եւ բոլոր Զէրքէզու, Ազախու, Քիրմանու եւ Օրու:

Նաեւ՝ յԱստուծոյ օրհնեալ յերկրիդ Ուռումելու, այսինքն՝ Քիլիսու, Իսմայիլու, Ուրուշճղու, Վառնայու, Թռնօվայու, Եաշու, Հօթինու, Բուքբրեշու, Աղքիրմանու, Ղավշանու, Բանդէրու, Սըշօվայու, Պօչանու, Օրմանիու, Ֆօքշանու, Իպրայիլու, Մուսայիպղշլայու, Սուլթանղշլայու, Խանղշլայու, Իսախչայու, Բաբատաղու, Հաճիօղլուբազարճղու, Շումլայու, Ռազղատու, Տայագեղու, Հըրսօվայու, Սիլիսրէու, Քէօստէնճէու, Մալղարայու, Բուրղազու, Այիտօստու, Ահեօլու, Կառնապատու, Իսլիմլայու, Բելբրղատու, Ֆիլիպէու, Թաթարպազարճղու, Սօֆիու, Նիշու, Վիտինու, Ինապօլու, Կեոմիրճինու, Ենկիճու, Սրամայու, Ենկիշհարու, Եանպօլու, Քեօմփուրլուկու, Ղազանլըխու, Էսկիզաղարայու, եւ Օզիու եւ այլ շրջակայ դասապայից եւ գիւղորէից դոցին, յ[որս]...[17]

ԹՕԽԱԹ

Ի վերայ տիրախնամ մայրաքաղաքիդ Եւդոկիոյ՝ կրկին անգամ յորջորջեալ Թօխաթու, նաեւ՝ ի Սեբաստիոյ, Զառայու, Աղտու, Դավռայու, յԱկնայ, Կամրկապու, Ապուչեխու, Բէնկանու, Արապկերու, Մատէնու, Մաշկերու, Ամասիու, Մարսըվանու, Հաճիքեօյու, Կեսարիոյ, Նիկիտայու, Դէվէլիու, Թօմարռաղու, Բօռու, Փէնէսու, Գեամրակու, Թալասու, Կեարմիրու, Էրքիլատու, Մունճուսունու, Զիլայու, Քեօփրիու, Կաստէմանու, Նիկիսարու, Հէյրակու, Սընապու, Ֆաթսայու, Ղօնիայու[18]*, Կեարզայու, Տաշքեօփրիու, Սամսօնու եւ այլ ամենայն շրջակայ դասապայից եւ գիւղորէից դոցին:*

[էջ 2ա] ԿԱՐԻՆ, ՈՐ Է ԷՐԶՐՈՒՄ

Ի վերայ Աստուծոյ օրհնեալ մայրաքաղաքիդ Կարնոյ՝ կրկին անգամ յորջորջեալ Էրզրումայ, Էրզընկանայ, Տրապիզոնայ, Իրիզայու, Գիրասօնու, Փերշամպայու, Օրտուա, Շէպինղարահիսարու, Աշխարօվայու, Թամզարայու, Կիւմիշխանայու, Բաբերդու, Թէրճանու, Ղուզուչանու, Կամախու, Արմտաներու, Քեղիու, Օլթիու, Նարիմանու, Սպերու, Խոտեջուր հերձուած (sic)[19]*, Հասանղալայու, վերին եւ ներքին Բասենու, Թորթումայու, Համշէնու, Թաքմանու, Խնուսու, Պուլանուխու եւ այլ շրջակայ բոլոր դասապայից եւ գ[իւղորէից դոցին]:*

ԳԱՂԱՏԻԱ, ՈՐ Է ԱՆԿԻՒՐԻԱ[20]

Ի վերայ յԱստուծոյ օրհնեալ մայրաքաղաքիդ Գաղատիոյ, կրկին անուամբ յորջորջեալ Էնկիւրիայ, Սիվրիհիսարու, Աֆիօնղարահիսարու, Ալայիայու, Մէնթէշու, Ղաշու, Միաստայու, Ալմալիու, Ղայապազարու, Ղօնիու, Ղարամանու, Աղչէհէրու, Զիլիֆքէու, Պօրիու, Ատալիու, Սպարթայու, Պուրտուրու, Կուլասարօվայու, Սանդըխլիու, Դէմիրճինու, Ուշաղու, Բէկպազարու, Նալլուխանու, Պոլիու, Ստանօզու, Դովրիկու, Պարթինու, Ենկիխանու, Էրէկլիու, Զաֆրանպոլիու, Ղօռնաֆայու, Կեառատիու, Զէրքէզու, Ղօչհիսարու, Թոսիու, Զանղրայու եւ Ղալաչէրխու, եւ այլ շրջակայ բոլոր ղասապայից եւ գիւղորէից դոցին, յորս...[21]

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ, ՈՐ ԱՍԻ ԴԷՐՊԷՔԻՐ

Դէրպէքիր. ի Բալու, ի Ճապաղջուր, ի Զարսանճաղ, ի Ցազման (՞), ի Բէրթակ, ի Սուրբ Մակաբայեցուոց թեմն, ի Մշու Սուրբ Առաքելոց թեմն, ի Սըղերտ, ի Զըռքան, ի Շիրուան, ի Մէրտին, ի Փերին, ի Մեծկերտ, ի Զմըշկածակ, ի Խառբերթ, ի Հիւսէինիկ, ի Արղընի, ի Մատան, ի Ջերմուկ, ի Շընքուշ, ի Մուսէպին, ի Սէվերակ, ի Ուրհայ, ի Ակըլ, ի Հայնէ, ի Ղուլբ, ի Ղիան, ի Լըճէ, ի Կասկէ, ի Հազրու, ի Բշէրիկ, ի Սասուն եւ ի Հըզու, եւ յայլ շրջակայ ղասապայս եւ գիւղորայս դոցին, յորս [են]...[22]

Ի Ալիփոնղար, ի Ղոյլու, ի Կարմուջ, ի Զոխ[23]*:*

ՎԱՆ (ի բաշխէ)

Վանայ, Բաղիշու, Մշու, Մօտկանու, Գզեխու, Խօշապու, Մահմուտանու, Ապաղու, Արճշու, Արծկու, Խըլաթու, Կարճկանու, Բերկրու, Նօռդըզու եւ այլ շըր[ջակայ]...

ԲԱՑԱԶԻԴ

[էջ 2բ] Բայազիտու, Դիատինու, Նահիու, Թօփրախղալու, Խամուրա, Բատնոցու, Մանազկերտու, եւ այլ շրջակայ...

ՂԱՐՍ

Ի տիրախնամ մայրաքաղաքդ Կարս, ի Կաղզվան, ի Քօրօղլու, ի Սօղանլու, ի Շիրակուան, ի Զառիշատ, ի Մաղզբերդ, ի Տիկօր, ի յԱխբլեխայ, ի յԱրտահան, ի Կեօլէ, ի Ջավախէթ, ի Զըլտըր, ի յԱխըլքէլէկ, ի Շաւշէդ, ի յԱրդուին, ի Խոտէջուր, եւ յայլ շրջակայ դասապայս եւ գիւղորայս դոցին:

ԲԱՂԴԱՏ, ՈՐ Է ՏԷՐՈՒՆԻ

Ի յԱստուծոյ օրհնեալ տիրախնամ մայրաքաղաքդ Բաղդատ, ի Ղարաչօրան, ի Բասրայ, ի Բանդարբուշ, ի Բանտարբռիկ, ի Խարկ, ի Բանտարապաս, եւ յայլ շրջակայ դասապայս եւ գիւղորայս դոցին, յորս կառուցեալ սրբոց Ե...[24]

ՀԸՆԴԿԱՑ, ՈՐ Է ՏԷՐՈՒՆԻ

Որք կայք բնակեալք ի կողմունսդ Հնդկաց, ի մայրաքաղաքսդ, ի քաղաքսդ, ի գիւղաքաղաքսդ եւ ի պանդոկսդ. նախ՝ ի մայրաքաղաքդ Շահջհանապատ եւ ի դորին բոլոր նահանգսդ. ի Բանկալայ եւ ի յամենայն գաւառս դորին, ի Կալկաթայ եւ յամենայն նահանգս դորին: Ի Զիջրա եւ յամենայն նահանգս դորին, ի Դաքայ եւ յամենայն նահանգս դորին, ի Սէյդապատ եւ յամենայն նահանգս դորին, ի Ֆօրսանդէվի եւ յամենայն նահանգս դորին, ի Սուրաթ եւ յամենայն նահանգս դորին, եւ զայլս յամենայն տեղիս, յորս գոն եւ գտանին Հայկազինք: Յորս կառուցեալ եւ հաստատեալ սրբոց եկեղեցեաց եւ...[25]

ՀԱՇՏԱՐԽԱՆ, ՈՐ Է ՏԷՐՈՒՆԻ

Ի տիրախնամ եւ ի կայսերապերճ մայրաքաղաքդ Պետրպուրք, ի Մոսկով, ի Հաշտարխան, ի Ղըզլար, ի Սառաֆան, ի Բորաղան, ի Զէրքէզ եւ այլ շրջակայ...[26]

ՇՕՇ, ՈՐ Է ՍՊԱՀԱՆ

Ի յԱստուծոյ օրհնեալ մայրաքաղաքդ Շօշ, որ յորջորջի Նոր Ջուղայ, ի Համատան, ի Հէրի, ի Կեանտիման, ի Բուրվարի, ի Լընճան, ի Շիրազ, ի Քաշան եւ յայլս: Նաեւ՝ ի Ղում, ի Ղազպին եւ յայլ շրջակայս, ուր եւ յօրհնեալ յազգէս մէրմէ գտանիցին:

[էջ 3ա] ԹԱՐՎԷԶ, ՈՐ Է ՈՒԶՈՒՄԶԻ ԳԻՒՂՆ ՏԷՐՈՒՆԻ

Որք կայք բնակեալք ի բոլոր օրհնեալ թեմս եւ ի վիճակս սրբոց Առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի: Նախ՝ ի մայրաքաղաքդ Թարվէզ, ի Մարաղայ, ի Դուխուրխան, ի Խոյ, ի Սալմաստ, ի Սօմայ, ի Յորմի, ի Հաղբակ, ի Սըլդուզ, ի Յուշնի, ի Մուժամպար, ի յՈւզումչի, ի Մակու եւ ի Զորսայ եւ յայլ շրջակայ դասապայս եւ գիւղորայս դոցին, յորս [են]...[27]

ԳԻԼԱՆ, ՈՐ Է ՏԷՐՈՒՆԻ

Ի վերայ յԱստուծոյ օրհնեալ բոլոր երկրիդ Գիլանու, այսինքն՝ Ռէշտու, Անձալւոյ, Լաքեարանու[28]*, Քիսմէսու, Սալիանու, Մազանտարանու եւ այլ բոլոր շրջակայ դասապայից եւ գիւղորէից:*

ԹԻՖԼԻԶ, ՈՐ Է ՁՈՐՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԷՐՈՒՆԻ

Ի տիրախնամ մայրաքաղաքդ Թիֆլիզ, ի Գորի, ի յԱլ, ի Սուրամ, ի Կրցխլուան, ի յԱխլգօր, ի Սայրեսթօ, ի Անանուր, ի Դուշէթ, ի յԱտենուձոր, ի Սաբարաթիան, ի Կախէթ, ի Թէլաւ, ի Քիսեղ, ի Ղազախ, ի Բոլնիսձոր, ի Դումանէսձոր, ի Ղայդուլի, ի Տաշիր, ի Լոռի, ի Բամբակաձոր, ի Սարիեր, ի Մէժէթուձոր, ի Հանիսուսար, ի Բաբաջանիձոր եւ ի բոլոր Սումխէթ եւ յայլ շրջակայ դասապայս եւ...[29]

ՆԱԽԻՋԵՒԱՆ

Ի վերայ հնոց եւ վաղնջուց քաղաքամօրդ Նախիջեւանու եւ երից սրբոց վանորէից բոլոր թեմից եւ վիճակաց, այսինքն՝ Աստապատու, Շաղկերտու, Շօռութու, Ղազանչու, Գաղու, Նորաշինկու, Ճահկու, Շըխմահմուտու, Քուլթափու, Աձօպու, Ագուլեաց, Դաշտու,

Ցըղնու, Շամբու, յԱրարքու, Ջաղաց տեղւոյ, Ազատակու, Եղեգաձորոյ, Վայո[ց]ձորոյ եւ Օրտուվարու եւ այլ շրջակայ դասապայից եւ գիւղորէից դոցին:

ՂԱՓԱՆ

Ի վերայ Սրբոյ Ստեփէի վանից բոլոր թեմի եւ վիճակի եւ բոլոր երկրիդ Ղափանու. Մեղրու եւ դորին եղեալ գաւառաց եւ գիւղորէից, այսինքն՝ Գունէու, Կաւաբերդու, Պղաբերդու, Ջաւընդրու, Բարկուշատու, Սիսիանու, Քէշտաղու, Ղարատաղու, Աչանանու, Քեղուաձորու, Գուլաբերդու, Շիվանաձորու, Մաղանճղու եւ այլ շրջակայ դասապայից եւ գիւղորէից դոցին:

[էջ 3բ] ԵՐԵՒԱՆ, ՈՐ Է ԱՑԺՄ ԿԷՍՆ ՏԷՐՈՒՆԻ

Երեւանու եւ բոլոր գեղղորէիցն դորին. Գառնու նահանգիդ, Վէթիբասարու, Ղրխբուլաղու, Աղէքաձորու, Ծաղկունեաց ձորու, Շիրակվանու, Ապարանու եւ Կարպու նահանգացդ եւ բոլոր գեղղորէից դոցին, յայնկոյս գետոյն Երասխայ, Բլրոյ եւ բոլոր շրջակայ գեղղորէից դոցին:

ՄԵԾԻ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԲՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՍԻՑ ԳԻՒՂՈՐԱՑՔՆ ԵՆ ԱՑՍՈՔԻԿ՝ Ի ՑԵՐԿՐՈՋՍ ԵՐԵՒԱՆ

Այս գիւղս, որ է կից Սրբոյ Աթոռոյս՝ Եղեւարդ, Յօշական, Ալիբէկլու, Դողս, Փարաքար, Գեօկգիւմբէթ, Կաւակերտ, Արպատ, Քեալարայ, Ֆռանկանոց: Յայնկոյս Երասխայ մեծի գետոյն՝ Սուրմարի, Կողբ, Ալեթլու:

ՎԻՐԱՊԱՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Արկուռի, Վէթի, Արտաշատ, Մուշախպիր, Ջղուն, Վանստան, Մանկուս, Աւանիկ, Վանիկ, Դեղձնավանք, Ուռճաձորն բոլոր:

ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Բայազիդ իւր նահանգովն, Սահաթափոս իւր գիւղորէիւն՝ բաց ի Սուրմարիոյ (եւ ի Ալէթլուոյ)[30], Խոյ իւր նահանգովն, Ալդուզ իւր նահանգովն, Մարաղայ իւր նահանգովն, Յուշնի, Մակու իւր գիւղէիւքն, Զորս:

ԲՃՆՈՒ ՎԱՆԻՑ ԹԵՄՍՆ

Երկուց նահանգաց՝ Կոտէից եւ Ծաղկունեաց, այսինքն՝ Քանաքեռոյ, Գեղրոնայ, Արծնոյ, Էլառոյ, Գամրիսոյ, Թլթոյ, Գոկքիլիսոյ, որ է Նետիս, Քամալայ, Քանքանոյ, Աղօրանոյ, Ղզլղալոյ, Ղզլօրանոյ, Թէզխարապին, Եղնաջրոյ, Այլաքակոյ, Աւազանկին, Կարմիրաւերակայ, Հազարաբերոյ, Նոնուանեաց, Արքոլոյ, Կարենուց, Ջեկրաշինու, Օզանայ, Ֆռանկանոցին, Թեղուաց, Այլաբերուց, Ալաճաքիլիսոյ, Գոռգոչայ, Արտազաքանոյ, [էջ 4ա] Մեղուսայ, Դալուլարայ, Բճնոյ, Ծարայ, իսկ ի Ծաղկունեաց, այսինքն՝ Օղրաձորոյ, Եայչիլարայ, Դրդմաշինոյ, Թրթենաձորոյ, Ըռընդամալոյ, Գարնեղուոյ, Նախամարուց, Աղփարոյ, Աղտենոյ, Զամանկուտոյ, Շխերոյ, Կորկոտանոյ, Խորձորոյ, Կաղսոյ, Մասրիսոյ, Սօլաքայ, եւ այլ առհասարակ[31]:

ՍԷՎԱՆ

Ծաղկունք, Շարիս, Վարսերն, Գօմաձոր, Ցամաքաբերթ, Զպիլուն, Ուռիծառ, Դրախտիկ, Պորտակն, Կորատեղ, Փէշմակալ, Վարդէլն, Բատակալ, Կախմախի:

ՀԱՅՐԱՎԱՆՔ

Ազատքաղաք, Բերդն, Խըշլաձակ, Նորատուս, Պիտնի, Եզնիստ, Կորզաբակ, Ջագ, Փոքր Ջագ, Ծաքար, Մասըրիս, Հապուլն, Դիլանչի, Էրնատար, Իլկավանք, Դալուղարդաշ, Գանձագ, Բուղխանայ, Արնեղի, Ղուլալի, Ղըշլախն, Ղարաղալուկ:

ՄԱՔԻՆԵԱՑ ՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Կոթ, Սալամալիք, Նշխարք, Մեծ Կզնուտ, Փոքր Կզնուտ, Բար, Կածիս, Փռակունիս, Վարդենիս, Քօլատակ, Ախտենիս, Անմեռն, Ոսկաշէն, Դարանակսն, Մազրէն, Աղճաղալէն, Էիշատ, Կալեր, Սոթ, Էրք, Գետիք, Ճիլ, Արտաւուճ, Կարմունջ, Ճամպարակ:

ԽՈՒԹԱՎԱՆԻՑ ԹԵՄՆ[32]

ԿԷՋԱՌԻՍ, ՈՐՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՆՈՒՆՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ Է

Կէչառիս, Քուրտաքն, Հարփանտն, Էշակղուտրան, Թաքալուկն, Շօրաղն:

[էջ 4բ] ԳԵՏԱՐԳԵԼՈՑ ՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Աւան, Ջաղաւանք, Ջաղ, Շըհապն, Արամուս, Աղասօր, Արախուս:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔՆ, ՈՐ ԱՍԻ ԿԱՐԵՆՍՈՒ ՎԱՆՔ

Կարենիս, Ղարաօրան:

ԱՆԱՆԻԱՑ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Առինջ, Բոլոր Բօշայքն:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Ուշի, Լազբրվան[33], Բ (2) Թամիր, Թալին, Մաստարա, բոլոր Իլուն, Կեօզլուքարվանսարա, Ջըրփլու, Աղին:

ՏԵՂԵՐԱՎԱՆՔՆ, ՈՐ ԱՍԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Տեղեր, Բիրական, Աքարակ, Յաղճ, Վրժան:

ՄՕՂՆՈՒ ՎԱՆՔՆ

Մողնի, Շահրիար, Մոլաբայազիդ, Ջաֆարապատ:

ԿՈՇԱՎԱՆՔՆ

Կոչ, Աղունատուն:

ՂԸՓՋԱՂԱՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Ղըփչաղ, բոլոր Շիրակվան:

ՂԶԸԼՔԻԼԻՍԻ ՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Նահիէն բոլոր իւր թեմն է:

ՄԱՌՄԱՌԱՇԷՆ[34]

[էջ 5ա] ԳԵՂԱՐԴԱՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Նորագաւիթ, Ենկիճէն, Նորք, Տաճարաբակ, Պորտիկ, Բարձաապի:

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ

Երևան քաղաքն՝ Կոնդովն եւ Նորագիւղովն, Շընգաւիթ, Զրվէզ[35]*, Գառնի, Կոխտ, Հայոցթառ:*

ԱՂՋՈՒՑՎԱՆՔ

Ճաթղռան, Մեծ Գլան, Փոքր Գլան:

ՑՕՀԱՆԱՎԱՆԻՑ ՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Կարբի, Փոքրգիւղն, Փարպի, Շարապխանի կէսն:

ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻՑ ԹԵՄՆ

Բոլոր Ապարան, Գեղարգունոյ Գաւառ գիւղն, Յաշտարակ, Քիրաշլուն, Շարապխանի կէսն, Սէրքեվիլ[36]*:*

Մատակարարելոցդ անհատավտակ շնորհիւ սրբոյ Հոգւոյն, եւ զարդարելոցդ նորին զանազան պարգեւօք, պատուականագունիցդ իմոց հարց եւ ցանկալեացդ միանգամայն իմոյ նուաստութեան ի Քրիստոս եղբարց՝ գիտութիւն լիցի. զի որովհետեւ ի ձեռն ամենաբաւական շնորհի նոյնոյ Հոգւոյն ճշմարտի յաջողին մեզ օր ըստ օրէ ընթացք բարի եւ կարգաւորեալ ուղղին որք ի մեզ թիւրութիւնք եւ լնանին թերութիւնք եւ կատարին իւրահաճոյ խորհուրդք եւ տրին պէտք, այնր աղագաւ եւ իմոյս մոլեշաւղի՝ որ մի եմ ի կարօտելոց եւ ի պասքողաց նորին կենդանարար աղբեր զովացուցիչ ջրոյ՝ յաջողեցան ընթացք բարի եւ լցան ոչ միայն որ յիս, այլեւ որ յիմումս գործարանի՝ գրատանս ասեմ Աստուածաիջի սրբոյ Աթոռոյս՝ կարօտողք լնման թերութիւնք եւ բարեկարգեալ ուղղեցան թիւրութիւնք եւ տուան պէտք ըստ այսմ օրինակի:

Քանզի գլխաւորապէս այս էր իմ եւ գործարանիս իմոյ թերութիւն, զի ոչ գոյին միանգամայն ժողովեցեալք առանց թերութեան ի մատենոջ յիշատակարանի թեմք եւ վիճակք սրբոյ Աթոռոյս, թէ՝ ո՞րք նուիրակացն սորին էին շրջագայելիք, եւ թէ՝ ո՞րք Առաջնորդացն ի Հայրապետաց սորին կարգելոց հովուելիք: Ուստի, ի գրելն իմում զկոնդակ ինչ նուիրական կամ Առաջնորդական՝ ո՛չ սակաւ աշխատէի ի ժողովելն իմ զիւրաքանչիւրոցն թեմս եւ զվիճակս՝ զհին կոնդակս որոնելով եւ զգիտողս ոմանս հարցանելով: Իսկ եւ թիւրութիւն այն ինչ էր, զի յանտեղեկութենէ ոչ ըստ բարուոք դասաւորութեան գրէի զվիճակսն, զի [էջ 5բ] եւ շրջագայող նուիրակն ըստ գրեցելոյն կարգի շրջագայիցի, որպէս յետ զէջմիածինն գրելոյ՝ Փարաքարն պարտի գրիլ եւ զկնի Երեւան, եւ այլքն ըստ սոյն կարգի, այլ յետ Երեւանու գրիւր Թարվէզ եւ զկնի նորին Նախիջեւան եւ յետոյ Բայազիդն եւ այլքն այսպիսի անուղիղ դասաւորութեամբ: Եւ զի պատահմամբ վիճակ միոյ նուիրակի գրիւր ընդ վիճակս այլոց ուրուք նուիրակի: Կամ՝ գրէին այնպիսիք վիճակք ի կոնդակս, յորս երբեմն բնակեալ լինէին հայք եւ նարդենիս ո՛չ, եւ կամ՝ յաղթարմայու-

թիւն լինէին դարձեալք: Նաեւ՝ ոչ Առաջնորդացն թեմից լինէաք վե-
բահասու: Ուստի, որպէս ասացաք, ի ձեռն առատաբուղխ շնորհաց
Հոգւոյն Աստուծոյ եւ հրամանաւ եւ հարկադրութեամբ առ լցելոյն
եւ կատարելոյն նովաւ վեհազան Հայրապետին սրբոյ Գահիս Տեառն
Սիմէօնի գերերջանիկ կաթուղիկոսին Ամենայն Հայոց եւ իմոյ Տեառն
օրհնածնողի, ես՝ նուաստագունեղ ծառայս նորին եւ ձերումդ
ազն[ւ]ութեան՝ Երեմիայ աբեղայս, նօտարս սրբոյ Գահիս, հաւաստի
տեղեկութեամբ, անթերութեամբ եւ ուղիղ դասութեամբ ժողովեցի ի
մի վայր զընդհանուր թեմս եւ զվիճակս սրբոյ Աթոռոյս՝ զքաղաքս,
զղասապայս եւ զգլխաւոր գիւղորայս նոցին յիւրաքանչիւրումն դա-
սու: Զի ես յիմում ժամանակի եւ յետագայքն իմ յիւրաքանչիւր
դարս անաշխատ գտցուք եւ գրեսցուք:

Եւ այսպիսի օրինակաւ հորդեցաւ ինձ եւ յետագայից իմոց
անխոտոր շաւիղ, եւ գործարանիս իմոյ լցաւ թերութիւն եւ ուղղեցաւ
թիւրութիւն, եւ տուան պէտքն ըստ վերոգրեցելոցն, ուստի եւ Տեառն
իմոյ սրբազանի կատարեցան բարի կամք, որ ի վաղուց կամէր այսմ
այսպէս լինիլ:

Արդ՝ աղաչեմ զհանդիպողսդ եւ զվայելողսդ իմոյս սղուն աշ-
խատանաց՝ յիշել ի մաքրափայլ յաղօթս ձեր զսրբազան Հայրն եւ
տէրն իմ վերոգրեցեալ եւ յուսկ յետոյ զԵրեմիայ սեւաւորս աշխատ-
ողս ի յայս:

Գրեցաւ ի ՌՄԺԴ (1765) յունիսի ԺԸ (18):

ՎԱՎԵՐԱԳԻՐ Գ

Ս. Էջմիածնի միաբանության անդամ մի աբեղայի նամակը Աղվանից Ներսես կաթողիկոսին (1737 թ. մայիսի 23)[37] (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 9120, էջ 22ա-բ)

Վասն շնորհակալութեան գրելոյ, յորդորման եւ յանձնարարութեան եւ մանաւանդ խնդրանաց

Յոգնաջան եւ եռերանեան Հաւուդ իմոյ՝ Տեառնդ Ներսիսի սրբազան Հայրապետիդ կողմանցդ Աղուանից: Ահա նուիրեմ առ ընթերակաց առնատիպ՝ ծառայականն խոնարհութեամբ, անյագ կարօտիւ եւ տապագին սիրով՝ զփրկչաւանդ միարարն սիրով՝ ողջո՛յն:

Արդ՝ յետ սիրալրականիս ողջունատրութեան՝ արտադրեալ բացեւոցեմ հեզաբարոյի անձինդ զմշտադատ կիրս մտաց իմոց, քանզի յայնժամ ի գալստեանդ քում ոչ կարացի ես՝ ծառայս, պատահիլ Տեառնդ իմոյ սիրով եւ ըստ արժանաւորութեանդ պաշտել զքեզ պաշտամամբ ծառայականաւ, որով թերեւս լնանիւր փափագ սրտի իմոյ: Նմին իրի ամէն ասեմ, զի յոյժ կարօտ մնացի եւ կարի պակաս գտանեցայ ի հայրականդ պաշտօնէ: Ուստի՝ ժտեմ ահա յերես անկեալ յորդեսէր Հօրէդ իմմէ զներումն այնց մեղանաց կր[տ]սէր որդեկիս, վասն զի ահա՛ ցուցի զղջումն եւ գոչեցի զմեղայն: Բայց ակն ունիմ բարեխնդրակատար Տեառն իմոյ, զի վերստին արժանացուսցէ զնուաստս ուրախարար տեսութեանդ եւ լցուսցէ զփափագ անձին իմոյ:

Աստանօր եթէ գտի շնորհս առաջի Տեառնդ՝ տու՛ր ի լսել ունկն քո, քանզի որովհետեւ զայսքան բարերարութիւնս եւ զերախտիս ցուցին Սրբոյ Տանս երկրացիք քո եւ մանաւանդ Տեառնդ մեր իսկ ինքնդ: Վասն որոյ՝ ահաւասիկ զթուղթ շնորհակալութեան առաքեցաք ի վերայ այնց գաւառաց, որք տրօք սիրեցին եւ պատուեցին զԱթոռս սուրբ, որոց սիրով տալն եկեալ պատմեաց մեզ սիրելի եւ հոգեւոր եղբայրն մեր եւ հարազատ որդին սրբոյ Գահիս Ա[նունը չի

գրուած, Ա.Ա.] վարդապետն, զորս եւ լուեալ՝ գոհացաք զնոցանէ միաբանութեամբ եւ օրհնեցաք զնոսա: Իսկ այսք չնորհք եւ բարերարութիւնք որո՞ց տալի է, եթէ ոչ բազմասէր Տեառնդ, որով սիրես զսուրբ Աթոռս եւ զպատահեալ միաբանսն սորին, զորմէ եւս, այսինքն՝ զանխարդախ սիրոյ քոյ [էջ 22բ] ճառեաց մեզ աստ Ա[անունը չի գրուած, Ա.Ա.] վարդապետ եղբայրն մեր: Սակս որոյ եւ զվերապատուելի Հօրէդ առաւել եւս եմք չնորհակալ եւ գոհ. Տէր Աստուած զՀաւդ մեր հոգեւոր ըստ իւրոցն հաճոյից պահեսցէ եւ ի վերայ Գրիգորիսանիստ Աթոռոյդ անշարժ արասցէ, եւ ամենայն ժողովուրդօքն քոյ՝ ընդ քեզ չէն եւ ապատ եղիջիք: Ամէն:

Հայցեմ եւս ի վեհանձնութենէդ, զի զնոյն սէր, զոր ունիս առ սուրբ Գահս եւ ունէիր առ Քրիստոս հանգուցեալ Հայրն մեր (իմա՝ Աբրահամ Կրետացի կաթողիկոսը, Ա.Ա.) եւ Քահանայապետակից եղբայրն քոյ՝ անխզելի պահեսցես եւ այժմ առ փեսայամեռ հարսնս պանծալի եւ առ հայրամեռ եւ որբացեալ որդեակս, որք ահա տրտմազգեաց սպասեալ մնամք, զի տայցէ մեզ Տէր զՀովիւ բարի, ըստ բարեխնամ կամաց իւրոց:

Ողջ լեր ի Քրիստոս ի փառս նորին եւ ի պարծանս եւ ի զուարճութիւն ծառայի Տեառնդ՝ Փիլան աբեղայի, մեղկ պաշտօնէի Սրբոյ Էջմիածնի, յորում գրեցի զայս թուղթ առ քեզ ի ՌՃՁ եւ Զ (1737) թուոջս եւ ի Ի եւ Գ (23) աւուրն մայիս ամսոյ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավերագիր 14:

[2] Տե՛ս *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 374բ:

[3] Տե՛ս **Ս. Ճեմճեմեան**, *Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը*, էջ 190-192:

[4] Տե՛ս *Պատմա-բանասիրական հանդես*, 1964, No. 2, էջ 70, ծնթ. 16:

[5] Տե՛ս **Ս. Ճեմճեմեան**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ:* Հ. Զ (Վենետիկ-Ս. Ղազար, 1996), էջ 1010:

[6] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավերագիր 43:

[7] *Նույն տեղում*, թղթապանակ 5, վավերագիր 12:

[8] *Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Դ, էջ 45, 52, 67:

[9] Տե՛ս *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 617բ, 621բ, 644ա, 647ա, 654ա, 655ա, 665ա, 666ա, 667բ, 682բ, 683բ, 686բ, 703ա, 704ա, 705ա, 706ա, 714ա, 726բ, 728ա, 733բ, 735ա. Հմմտ. **Վ. Գրիգորյան**, «Հովսեփ Էմինի և Հովսեփ Արղությանի անտիպ նամակները (1791-1792 թթ.)». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1990, No. 4, էջ 187, 190:

[10] Տե՛ս **Գառնիկ Գէորգեան**, «Ճշտումներ Մինաս Ամթեցիի մասին». - *Բազմավէպ*, 1966, թիւ 7-8, էջ 193, 196:

[11] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավերագիր 43:

[12] *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9120. թերթ՝ 56. թուղթ. 33,5-22,5, նոտրգիր:

[13] Եվրոպական վավերագրագիտությունը, սկիզբ առնելով XVII-րդ դարի երկրորդ կեսին, կատարել է վիթխարի ծավալի ուսումնասիրություններ՝ հայտնաբերելով և հրատարակելով տակավին VIII-IX դարերում կազմված ժողովածուներ, ինչպես, օրինակ, Ֆռանկ թագավորների՝ Formula Marculfi-ն և Formula Imperiales-ը:

[14] Այս ուշագրավ՝ ամբողջությամբ հրատարակվելու սպասող մատյանի մեջ կաթողիկոսական ընտրությունների կազմակերպման խնդիրներին նվիրված է 10 կաղապարային նմուշ-փաստաթուղթ, ահավասիկ.

1. «Թուղթ վասն զորս կամին նոր ընտրել ի կաթուղիկոսութեան» (էջ 10բ):

2. «Վասն վախճանման Հայրապետի՝ թուղթ մխիթարական եւ յորդորական առ ամենայն ազգս Հայոց» (էջ 11ա-բ. նմանատիպ բովանդակությամբ մեկ այլ փաստաթուղթ տե՛ս անդ, էջ 53բ):

3. «Թուղթ մահսարական եւ խնդրանաց վասն նոր կաթուղիկոսից՝ ի Կոստանդինուպոլիս եւ առ ամենայն ազգս մեր» (էջ 11բ):

4. «Թուղթ առ նոր ընտրեցեալ կաթուղիկոսն զկնի յանձն առնլոյն զկաթուղիկոսութիւն, եւ տակաւին ի վիճակս եւ ի տեղիս իւր իցէ» (էջ 12ա):

5. «Թուղթ ընդհանրական ի վերայ Ըստամպոլոյ եւ այլոց քաղաքաց» (էջ 12բ-13ա):

6. «Վասն կաթուղիկոսացուս ընտրելոյ. Թուղթ առ ամենայն ազգն մեր» (էջ 39ա-բ):

7. «Թուղթ առ Արքեպիսկոպոս ոմն, զոր ընտրեն ի կաթուղիկոս» (էջ 39բ-40ա. Հմմտ. անդ, էջ 56բ):

8. «Թուղթ խրատական, զոր պարտի գրել Հայրապետն՝ յետ օծանելոյն իւրոյ՝ առ ամենայն քաղաքս յազգս մեր, որք կամեցեալք ընտրեցին զնա զոլ կաթուղիկոս իւրեանց» (էջ 40ա-41բ):

9. «Թուղթ մահսարական վասն նոր կաթուղիկոս ընտրելոյ» (էջ 53ա):

10. «Թուղթ հրաւիրական առ նոր ընտրեցեալ կաթուղիկոսացւոյ գրե-

լի» (էջ 54ա). - Հմմտ. *Ջամբռ*, էջ 59:
[15] «Նվիրակութեան վիճակներ» անունը փոխ ենք առել Սիմեոն Երևանցուց, տե՛ս *Ջամբռ*, էջ 44-45:
[16] *Դիւան հայոց պատմութեան*, Գիրք Գ (Թիֆլիս, 1894), էջ 797-806: Շնորհակալություն ենք հայտնում պատմաբան Գեղամ Բաղալյանին՝ մատնացույց անելու համար ձեռագրից մեր քաղած այս փաստաթղթի և Գ. Աղանյանցի հրատարակածի նույնությունը, ինչպես նաև տեղանունների ցանկում բազմաթիվ ճշտումներ կատարելու համար:
[17] Մատյանում այդպես է:
[18] «Ղօնիայու» բառը վերցված է շրջանակի մեջ. գուցե սա ջնջելու նշան է:
[19] «Խօտեջուր հերձուած» բառերը ավելացված են տողի վերևում:
[20] 1718 թ. Անկյուրիայի Կարմիր վանքի միաբան Սահակ գրիչն իր հիշատակարանում այսպես է գրանցել Գաղատիայի եպիսկոպոսական վիճակի սահմանները. «Ի յԻկոնիսն եւ որք ի Լիւստրայ, որ է Ախշէհիր, ի Ղարահիսար եւ Ուշաղ, եւ անտի մինչ ի Ղարաման, եւ յարեւելս կոյս քաղաքիս Գաղատիոյ՝ Ղալաճուխ եւ Քիանդրի եւ Զէրքէշ, եւ ի Հիւսիս[ա]կողմն Պօլի եւ Ղաստամոնի ծովեզերօքն հանդերձ, յորս յարեւելեան վաճառականքն հովուին, եւ յարեւմուտս մեր քաղաքագեօղ Հայոց Ստանօղ, եւ յառաջ անտի Պեկնազար եւ Նալլուխան» (տե՛ս **Բ. Կիւլէսէրեան**, *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից*, էջ 911): Ավելի վաղ՝ 1663 թ. գրառված մի հիշատակարանում Գաղատիոյ վիճակի մեջ հատուկ նշվում է. «Ղօնիա՛ քաղաքն... է թէմ Էնկուրո՛ Սուրբ Աստուածածնի վանիցն» (տե՛ս նույն տեղում, էջ 221):
[21] Մատյանում այդպես է:
[22] Մատյանում այդպես է:
[23] Այս չորս բնակավայրերն ավելացված են վերջում՝ մի առանձին նշանի տակ, որը դրված է նաև Բերթակի, Հըզուի և Փերինի մոտ:
[24] Մատյանում այդպես է:
[25] Մատյանում այդպես է:
[26] Մատյանում այդպես է:
[27] Մատյանում այդպես է:
[28] «Լաքեարանու»-ն ավելացված է աջ լուսանցքում մեկ ուրիշ գրիչի ձեռքով:
[29] Մատյանում այդպես է:
[30] Փակագծերում գրվածն ավելացված է աջ լուսանցքում ուրիշ գրիչի ձեռքով:
[31] Ինչ-ինչ պատճառներով Բջնիի նվիրական վիճակի ամբողջ բովանդակությունը գրվել է նոր թղթի վրա և ապա փակցվել հին բովանդակության վրա:

[32] Սրանից հետո մատյանում դատարկ տեղ է թողնված, որն սակայն հետագայում այդպես էլ չի լցվել:
[33] «Լազըրվան»-ի «ը» տառի վերևում ավելացված է «օ» տառը:
[34] Սրանից հետո մատյանում դատարկ տեղ է թողնված, որն սակայն հետագայում այդպես էլ չի լցվել:
[35] Մատյանում այդպես է:
[36] «Սէրքեվիլն» ավելացված է հետագայում՝ այլ գրիչի ձեռքով:
[37] Նամակը գրվել է Ս. Էջմիածնում կաթողիկոս չլինելու պահին. Աբրահամ Կրետացի կաթողիկոսը վախճանվել էր 1737 թ. ապրիլի 18-ին, իսկ Ղազար Ջահկեցու ընտրությունն ու ժամանումը Ս. Էջմիածին մոտ մեկ տարի ժամանակ խլեց (տե՛ս ԱԶԳ, այուն. 1990, 1993):

ՀԱՎԵԼՎԱԾ Գ

ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՅՈՒ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(Կեսարիա, 1726 թ.)

Մաշտոցի անվ. Մատենադարան,

ձեռ. 2121, էջ 366բ-370ա:

[էջ 366բ] Արդ՝ գրեցաւ սա ի թուաբերութեանս աբեթական տօմարիս ՌՃՀԵ (1726)-երորդումն: Եւ ի հայրապետութեան Տեառն Կարապետի երիցս երանեալ ծայրագոյն քահանայապետին Աստուծոյ, որ ի գահն տիեզերական Աստուածաէջ եւ Քրիստոսահիմն սրբ-էաճեմ եւ Ադինասարաս մեծի յԱթոռոյն Էջմիածնի ի սոյն ցաւալից եւ ի վշտաշատ, ի մառախլապատ եւ ի կարկտաբեր յերեկոյացեալ ամի:

Որ ընդ ամաւ յառաջ ել ազգն այլատարազ՝ լէկզի համբաւեն, էառ զերկիրն Աղուանից մինչեւ ի գաւառն Գեղեմայ, աւարմամբ եւ գերութեամբ անմարդաբնակս եւ անապատս արարին: Զքահանայս կտտամահ եւ չարաչար տանջանօք սպանանէին եւ կամ զոմանս ի կարգաւորաց ի շիշ քարշելով ընդ կենդանոյն ի հուրս խորովէին: Զծերս եւ զպառաւուսնս անողորմաբար կոտորէին, իսկ զտղայս եւ զաղջկունս հանդերձ զընչիւք եւ կարասիւք աւար առնէին: Ո՜հ եւ եղուկ թշուառացեալ անձանց տեսողացս. ա՜խ եւ վա՜յ ներամանուկիս եղելոցս:

Իսկ յետ յերից ամաց՝ սաստկացաւ ցաւն եւ դիզացեալ կուտակմամբ չտեմարանեաց ի վերայ գլխոց մերոց. զսուգ անմխիթար եւ զմէջ անփարատելի, քանզի ոմն զօրագլուխ ժանդատեսիլ եւ գա-

զանաբարոյ, առիթ չարեաց եւ պատճառ կորստեան, յապստամբեա-
լն յարքայէն Պարսից՝ Մեվրէիզ ողլի Մահմուտ կոչեցեալն, յանկար-
ծորէն եւ թարց գիտութեան ումեք ուժգնակի արշաւմամբ սրընթաց
երիվարօք եւ յօգնախումբ հեծելազօրօք ել ի Ղանդահարա եւ եկն
պաշարեաց զարքայանիստ մայրաքաղաքն Շօշ (իմա՝ Սպահան, Ա.Ա.):
Վշտիւ եւ նեղութեամբ եւ սովով եւ ծարաւով նուաճեցուցաներ
զբազմակուտակ եւ զյոգնաժողով բնակիչս մեծի քաղաքին: Քանզի
հասեալ էր բարկութիւն Աստուծոյ ի վերայ արեան արբոյ եւ յափշ-
տակող երկդիմի գազանացն պարսից վասն չար եւ անօրէն գործոց
իւրեանց, [էջ 367ա] որ, թողեալ զերկիւղն Աստուծոյ, չարաչար եւ
պէս պէս գանիւ, կեղեքմամբ եւ զանազան տառապանօք՝ ամբարշտե-
ցաւ ընդ ազգս Հայոց: Թարց ամբաստանութեան եւ վկայի ըմբռնէր
զանմեղս եւ կապէր զարդարս, պրկեցուցանելով ի վերայ յերկրի ակ-
ցի եւ բռընցի: Խոշոր եւ ստուար փայտօք կոբէին եւ հարկանէին: Զո-
մանց զըզընկունս ոտիցն հանէին եւ զոմանց զմատունս եւ զթաթս ի
գարշապարացն թափէին, զոմանց զսրունքս եւ զբարձս խորտակէին
եւ զայսպիսի անողորմ եւ դառն գանիւ տանջանօք կիսամահ արա-
րեալ եդեալ ի բանտի՝ առնէին զինչս եւ վաճառէին զտունս եւ զա-
մենայն կարասիս տանն ի վաճառանոցս յղեցուցանէին: Ի խանութս
եւ ի շուկայս՝ կիսագին ծախմամբ զգինս վաճառելոցն առնէին եւ
ապա արձակէին զբանտարկեալսն, քանզի զարդարն ընդ ամբարշտ-
տին կորուսանէին եւ զանմեղսն ընդ մեղանչականին պատժէին, զի ոչ
գոյր քննութիւն ի մէջ նոցին: Եւ զայսպիսի գործս անօրենութեան,
որով գործեցին ի յորբս եւ ի յայրիս, ի վանս եւ ի յանապատս, ի կար-
գաւորս եւ ի ճգնակիր կրօնաւորսն Աստուծոյ: Եւ ո՞ կարողասցի բա-
ւել զանչափութիւն չարեաց չանցն կատաղելոց:

Ուստի եհաս յականջս Տեառն զօրութեան զաղիողորմ հառա-
չումն եւ զդառնակսկիծ արտասուախառն ողբումն գանելոցն եւ զր-
կելոցն. ըստ առաքելոյ բանին, որ ի գիրս կաթողիկոսաց: Որով
առեալ զվրէժն Աստուած եւ հասոյց ի վերայ նոցայ զգաւազան բար-
կութեան իւրոյ: Եւ առաքեաց զթշնամիս իւրեանց ի վերայ նոցայ՝ առ
ի կսկծեցուցանելով յափշտակել զթագաւորութիւն նոցին:

Ուստի եկեալ վերոյ ասացեալ անօրէն բռնակալին, նստելով
ընդդէմ քաղաքին Շօշայ: Յայնժամ արքայն Պարսից, հանդերձ ար-
քայականօք, եւ իշխանքն ընդ իշխեցելովք, եւ զօրագլուխքն ընդ զօ-

բականօք ի պարտութիւն մատնեցան, սովով եւ ծարաւով հաշեալ մաշեցան: Եւ այլ զանազան եւ պէս պէս տառապանօք, ահիւ եւ դողութեամբ նքտեալ տանջեցան: Անկան ի բարձրութեանց, մերկացան յիշխանութեանց, տկարացան ի զօրութեանց, ցնորեցան ի խելաց, եւ լքեալ ի յուսոյ, աղիողորմ ողբով եւ ակամա կամօք, ելեալ [էջ 367բ] մեծամեծօք եւ փոքրումբք ընդ առաջ բռնակալին Մահմուտայ, սիրով եւ մեծարանօք մուծին ի քաղաքն: Տարեալ ի պալատն արքունի եւ նստուցին զնա ի յաթոռն արքայական, որով թագաւորեց ի վերայ ազգին Պարսից եւ քաղաքին այնմիկ: Գործեցաւ զայս սասանական եւ թագաւորաբարձ գործս տառապանաց ի ՌՃՀ[Ա] (1722) թուաբերութեան մերում, ներստորասուզեալ եւ խաւարամած բօթածալ ամանակիս:

Իսկ որդիքն իսմայէլեան եւ ցեղքն օմարեան, տիրողքն Բիւզանդիոյ եւ յամենայն տանն Յունաց, յորժամ լուան զիրս եղելոցն, որ գործեցաւ ի պարսիկս եւ ի հայս, եւ որոնեալ իմացաւ զամայութիւն եւ զանիշխանութիւն տանն Հայոց՝ յայնժամ ձայն տուեալ միմեանց ի սադրելոյ արքային իւրեանց, որ ի Կոստանդինուպօլիս, զօրս կուտակեցան եւ յօգնահանդէս խումբս կառուցան զինուք եւ սուսերօք, արեան արբոյ եւ խստասրտիւք արամբք երկդիմի գազանօք, անթիւ եւ անքանակ հեծելազօրօք, բարկութեամբ եւ դառնութեամբ, սաստկութեամբ եւ զայրացմամբ հասին ի վերայ բազմավէր եւ ցաւալից տանցն Հայոց, Վրաց եւ Պարսից: Առին զՏփխիս քաղաքն Վրաց աւարաւ եւ գերութեամբ: Եկ ինքնագլուխ իշխանն Վրաց, թողեալ զքաղաքն, փախստական լեալ զօրօքն հանդերձ: Եւ յետ առնելոյ զՎիրս՝ յարեան զայրացմամբ ի վերայ Տանն Արարատու՝ ճակատ առ ճակատ պատերազմունս մղելով ընդդէմ հողաշէն եւ բարձրաբերձ ամրոցին եւ դղեկին Երեւանայ: Իսկ ազգն Պարսից յօժարութեամբն իւրեանց ոչ ետուն զբերթն, այլ ընդդիմութեամբ մաքառեալ ամրացեալք ի դղեկի ընդդէմ կացեալ ազգին հզօրաց եւ արանցն քաջասրտաց, պատերազմս տալով ամիսս երիս աւելի եւ կամ պակաս: Բայց յետոյ, նքտեալ ի սովու, ետուն զամրոցն իւրեանց ազգին Իսմայէլեան եւ հնազանդեցան նոցա, քանզի անտիրացեալք էին եւ ո՛չ ոք էր, որ հասանէր ի թիկունս կոյս առ ի օգնել եւ կամ ազատել զնոսա ի ձեռաց օտար թշնամեաց: Եւ ի մրրկամպ մառախլապատ ժամանակին, յորում ոչ էին առեալ զբերթն, զայրացմամբ եւ բարկու-

թեամբ զինուք եւ սուսերօք [էջ 368ա] յարեան ի վերայ քաղաքին եւ ամենայն Տանն Արարատու: Եւ ո՞ կարողասցի բաւել զանչափութիւն աղետիցն, ողբոց եւ աղաղակացն: Քանզի հասեալ էր ի վերայ նոցա ամպն կարկտաբեր, որով տեղեաց ի ծաղկափայլ եւ ի նորաբողբոջ բուրաստանս սրբոյ Լուսաւորչին: Ուստի սուր ի վերայ եղեալ անողորմաբար առհասարակ կոտորեցին զբնակիչս երկրին այնմիկ. վարդապետք եւ քահանայք, սարկաւագունք եւ եկեղեցականք, իշխանք եւ իշխեցեալք, մեծամեծք եւ փոքունք, անմեղք եւ մեղանչականք, հայք եւ պարսիկք, վասն զի հասեալ էր արդարավճիռ բարկութիւն Աստուծոյ ի վերայ մեր: Եւ մատնեաց զմեզ ի ձեռս արեանարբոյ եւ գազանադիմի արանցն խստասրտաց, որով թափեցին ի մեզ զթոյնս դառնութեան եւ բարկութեան իւրեանց եւ այլ ազգի ազգի զիրս ողբոցն եւ աղաղակացն թողցուք եւ յետոյ ճառեսցուք, զի մի խառնափնտորեալ երեւեսցի զիմացումն համառօտաճառ բանիս: Բայց եւ յերկրին Նախչուանայ եղեալ գաւառք եւ գիւղաքաղաքք, այսինքն է՝ Աստապատ, Ջահուկ եւ ամենայն տունն Երնջակայ եւ Գողդնեաց՝ խաս անուամբ կոչեցեալ գեղօրայքն, ամենայն նախկնագոյն պատրաստելով զանձինս իւրեանց, գնացեալ առ զօրապետն Օսմանցոց՝ հնազանդեցան նմա: Եւ բերեալ զդրօշակս, նստուցին ի յերկիրն իւրեանց, որով եղեւ սուղ ինչ խաղաղութիւն ի մէջ նոցա եւ նախախնամութեամբն Աստուծոյ ո՛չ անկան ի գերութիւն: Այլ անփորձ պահեաց զնոսա Աստուած ի պատուհասակոծ գրաւմանէ եւ ի դառնավիշտ գերութէնէ: Եւ թէպէտ յօգնադիմի եղեւ վիշտ նոցին ի ձեռաց այլասեռից արանցն խստասրտաց, սակայն ոչ եղեն այնպէս, որպէս եղեն այլ միւս քաղաքքն եւ գաւառք ամենայն:

Արդ՝ ազգն Օսմանցոց կարի եւ յոյժ ճակատամարտութեամբ հզօրացեալ յարեան ի վերայ քաղաքաց եւ գաւառաց աւարմամբ եւ գերութեամբ: Առին զքաղաքս բազումս, այսինքն է՝ զՆախչուան մայրն տիեզերաց, զՈւրդուար, զԽոյ, զՇահաստան, զՀամատան, զԳանձայ եւ զայլ ամենայն զգաւառս եւ [էջ 368բ] զգեօղս նոցին:

Սակայն եւ մեր իսկ տեսեալ աչօք զյոլովութիւն չարեացն, որ գործեցաւ ի նախաձայնեալ աղէտից սուրբ նահատակին Ներսիսի: Զարթի՛ր Երեմիայ, զարթիր եւ ասա. Ո՞ տայր զգլուխ իմ չտեմարանս ջուրց եւ զաչս իմ յաղբիւրս արտասուաց, զի նստեալ ողբայի բարձրագոչ ձայնիւ զխաւարումն եկեղեցեաց եւ զամայութիւն տանն

Հայաստանեայց: Ուստի զեկեղեցիսն նսեմացեալ եւ զսեղանն սուրբ կործանեալ, զմատեանս Աստուծոյ ինս այրեցեալ եւ առ ոտն կոխեալ[1]: Զսպասն սրբութեան եւ զքրիստոսական նշանս անարժանից ձեռօք շօշափեալ եւ նախատեալ: Զաշխարհս մեր եւ զքաղաքս անապատացեալ եւ բնակութիւն գազանաց եղեալ, քանզի լցան լերինք եւ անապատք մեր անզերծ փախստեամբք եւ դաշտք՝ դիակոյտ ոսկերօք կոտորելոցն: Անդաստանք մեր եւ հովիտք առոգեցան արեամբք եւ կերաք մնացորդքս զհասկ սննդեան այնպիսի արտորէից: Ազատքն մեր ի ծառայութիւն իջին եւ փափուկքն մեր յանընմբերելի չարչարանս: Բարձունքն մեր խոնարհեցան եւ փառաւորք մեր յանարգութիւնս ընկճեցան: Կուսանքն մեր օտարաց եղեն, եւ երիտասարդքն մեր՝ ծառայք այլասեռից: Կարոտացաք ողբոցն Երեմիայի եւ կրեցաք զպատուհաս հնոյն Իսրայէլի: Տղայք մեր որբք եղեն եւ մարք նոցին՝ այրիք: Որդիքն վերնոյն Սիօնի զուգակշիռք ոսկւոյ զքարի հարան իբրեւ անօթ զանպիտան: Ցրուեցաւ հօտն Տեառն, ճապաղեցան խաշինք արօտի նորա: Վաճառակուր եղեն գնեցեալքն արեամբն Քրիստոսի եւ անմեղ գառինքն Լուսաւորչեան: Բաժանեցան ծնունդք ի ծնողաց: Որոշեցան քորքն ի սիրասնունդք եղբարց: Մեկնեցան հարազատքն ի միմեանց: Հեռացան բարեկամքն ի սիրելեաց աղիողորմ հառաչմամբ եւ արիւնախառն արտասուօք: Դարձաւ տօնն մեր ի սուգ եւ ուրախութիւն յարտասուս եւ ոչ գոյ թիւ աղաղակի մերում, զի չիք համար չարեաց մերոց:

Այլ ակն ունիմք ի գթութիւն Աստուծոյ եւ յողորմութիւն [էջ 369ա] նորին՝ յաղագս միջնորդութեան մօրն իւրոյ եւ ծնողի եւ վասն աղօթից ճգնակիր Հօրն մերոյ Լուսաւորչին սրբոյ: Այն, որ բնաբարէ փրկելն եւ կեցուցանելն: Թէպէտ եւ ի մէնջ բռնադատեալ, յարկանէ յուսով խրատու գաւազանաւ բարկութեան եւ չարչարէ զանդամս իւր: Նա՛ բժշկեսցէ զվիրաւորեալ մարմին իւր. զսուրբ եկեղեցի եւ զցրուեալ հօտս իւր հաւաքեսցէ առ ինքն յարօտս խաղաղութեան բարերար կամօք իւրովք՝ ի փառս անուան իւրոյ: Եւ զսաղարթախիտ կանաչացեալ զԱթոռս Հայրապետական, զտեառնախոխ եւ զքրիստոսահիմն զաստուածաշէն Գահն զսուրբ Էջմիածին՝ տեղիքն ամենայն պարծանաց եւ ըղձալին յամենայն ազանց, զոր եթող մեզ զաւակ յուսոյ Տէր զօրութեանց, յորս գոյ աւրհնութիւն Տիրոջն ամենակալի ի վերայ սորա, առ ի հաստատուն եւ անսասան պահել զօրութեամբ

ամենակիր եւ ամենաստեղծ Աջովն իւրով, հանդերձ արժանաւոր կոչմամբ զՏեառն Կարապետիւ Հայոց Մեծաց եւ հանուրց վերադիտողիւ զայժմուս նստեցելոյ: Նաեւ զարժանաժառանգ աթոռակառօք մինչեւ ցյաւիտեան: Ամեն:

Իսկ ի նսեմացեալ եւ ի ծերացեալ աւուրս, ի չարացեալ եւ ի դառնացեալ ժամանակիս մերում էր կաթողիկոս տէր Աստուածատուր բազմաչարչար եւ սրբազան Հայրապետն ամենայն Հայոց, որ ի Գահն Սրբոյն Էջմիածնի: Որ բազմադիմի եւ յոգնատանջ տառապանօք վարեաց զիշխանութիւն հայրապետական պէս պէս վշտիւ եւ նեղութեամբ եւ այլ ազգի ազգի ցաւօք եւ փորձութեամբ. հալածանօք հանդերձ վտարանդի շրջելով ողբօք եւ արտասուօք, միջաբեկիւ եւ անմխիթարաւ սգով՝ երբեմն ի տունն Վրաց, եւ երբեմն ի տունն Նախչուանայ: Եւ անտի դարձեալ գա ի սեպհական յԱթոռն իւր ի Սուրբ Էջմիածին, սուգ առնելով ի վերայ տանն Հայոց եւ ի վերայ գիշատեալ եւ ճապաղեալ, խոցեալ եւ վիրաւորեալ գառանցն իւրոց անմեղաց, որպէս Երեմիաս՝ ի վերայ հնոյն Իսրայէլի: Քանզի հովիւս քաջ արիական յոժարութեամբ զանձն իւր եդ ի վերայ բանաւոր ոչխարացն Քրիստոսի, կամէր մատնիլ զանձն իւր ի գանս եւ ի բանտս, ի թուքս եւ ի յապտակս, ի վիշտս եւ ի նեղութիւնս, ի չարչարանս եւ ի մահս՝ վասն փրկութեան եւ ազատութեան ազգին իւրոյ եւ Աթոռոյն:

Իսկ երանելի հայրս մեր եւ երկրորդն Զօրաբաբէլ պայծառազարդութեան նորոգիչն մերոյս Սիօնի յաւուրս յաւուրս խաղաղութեան իւրոյ եւ ի հանդարտութեան ժամանակին սպիտակացուցեալ զմէջ սրբոյ տաճարին մեծի պէս պէս գեղանկար զարդիւք եւ զանազան ոսկիափայլ ծաղկօք եւ երփն երփն որակօք, հիահրաշիւք զարմացմամբ շքեղացուցեալ պայծառացոյց, ի յերկրէ հեռաստանէ բերելով զպատուական քարինս մարմարիոնեայս. գեղեցկայարմարիւք յօրինուածովք կառուցմամբ կազմեալ կանգնեցոյց զտեղի իջման միածնի բանին Աստուծոյ: Նաեւ զմին խախտեալ սիւնն մեծի տաճարին վերստին ի հիմանէ նորոգմամբ հաստատեաց, որպէս եւ էրն յառաջագոյն: Այլ եւ յետ անբաւելի աշխատանաց եւ քրտնաջան վաստակոց իւրոց եկն էհաս զնախագրեալ պատուհաս բարկութեան Աստուծոյ ի վերայ մեր, որով եւ երանելի Հայրս մեր անկաւ ի հոգս տարակուսանաց: Ուստի ներվարանեցմանն, վճարեաց զկեանս իւր եւ գո-

գովք արեամբք լցելովք գնացեալ եկաց առաջի Աստուցոյ: Որով ընկալաւ զվարձս բարիս եւ դասեցաւ ի կարգս Հայրապետաց: Որ եւ յիշատակ նորին աւրհնութեամբ եղիցի: Աղոթիւք եւ բարեխօսութեամբ Հարցն սրբոց, Տէր ընդ մեզ եւ ընդ ամենայն հաւատացեալս իւր հաշտեսցի: Ամէն:

Եւ յետ աւուրց ինչ անցելոյ յոգնահանդէս ժողով մեծ արարեալ ի Բիւզանդիա քաղաքն արքայանիստ, կամօք եւ հաւանութեամբ ամենեքումբք ընտրեցին զառաջնորդ Գաղատիոյ զՏէր Կարապետ հեզահոգի եւ աստուածաբան սրբազնագոյն եւ արժանաւոր քահանայապետն Աստուծոյ: Ուստի բերեալ ի Կոստանդինուպօլիս եւ անդ երեւելի եպիսկոպոսօք եւ բազմաժողով վարդապետօք արժանաւոր կոչմամբ ձեռնադրեալ զնա օծմամբ Սուրբ հոգւոյն եւ արարին կաթողիկոս ի վերայ ընդհանուր լուսաւորչադաւան ազգիս հայազուներաց, որ կայ այժմ եւ վարէ զիշխանութիւն Հայրապետական: Եւ Տէր տացէ նմա ընդ երկայն աւուրս: Ամէն:

[էջ 370ա] Եւ ես ունայնախոհ եւ խակամիտ Ղազար պիտակ եւեթ վարդապետս, գոլով յերկրէն Նախչուանայ՝ ի գիւղաքաղաքէն Ճահկայ, որդի ումեմն բարեպաշտի եւ երկիւղածի, իմաստախոհ եւ արժանաւոր քահանայի տէր Մկրտիչ վերակոչեցելոյ: Որ եւ իմ եկեալ ի յերկիրն յունաց եւ ի մայրաքաղաքն Կեսարիոյ Կապադովկացւոց յաղագս նուիրակութեան սրբոյ եւ մեծի Աթոռոյն Էջմիածնի, եւ ետու գրել ջերմաջերմ սիրով եւ կաթոգին ըղձիւ զծաղկափայլ բուրաստանս հոգւոյն սրբոյ՝ հանդերձ համառօտաճառիւք յիշատակօք: Յաղագս առապա [=առապագայ, ապագայ] եկելոց աշակերտացդ ճշմարտութեան: Ի վայելումն անձին իմոյ առ ի ուրախութիւն հոգւոյս եւ ի մխիթարութիւն խօթացեալ եւ բազմավիշտ մարմնոյս: Յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց եւ յամենայն համայնից եղբարց եւ ընտանեաց եւ հարազատագոյն աշակերտելոցն իմոց հնազանդեցելոց: Արդ յերեսս անկեալ աղաչեմ հանդիպողացդ այսմ ծաղկափայլ բուրաստանիս՝ յիշել զիս եւ զծնօղս իմ ի Տէր: Եւ դուք յիշեալ լիջիք առաջի յահեղ ատենին Քրիստոսի ի միւս անգամ գալստեանն իւրոյ, այլեւ գովեալ եւ փառաւորեալ՝ ընդ հօր իւրում եւ յամենասուրբ հոգւոյն յաւիտեանս յաւիտենից:

Ամէն[2]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1]1746 թ. մարտի 14-ին գրած մի գրության մեջ, Ղազարն օգտագործել է այս և սրան նախորդող մի քանի նախադասությունները (*Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. 9120, էջ 14բ):

[2]Այս մատյանն ունի ևս մի քանի հիշատակարան ահա այսպիսի կարճ բովանդակությամբ՝ «Զստացող այսմ հոգեկեցոյց սրբոյ մատենիս զտէր Ղազար պիտակ եւեթ անուն վարդապետս յիշել աղաչեմ», էջ 39բ. հմմտ. էջ 286ա, 341ա, 370ա:

ՀԱՎԵԼՎԱԾ Դ

«ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՄԱՍԻԱՑԻՈՅ ՎԱՐՔ ԵՒ ԳՈՐԾՔ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԿԻՈՅ»

Մաշտոցի անվ. Մատենադարան,
ձեռագիր 9245, էջ 54ա-77ա

[էջ 54ա]
Ի Յովհաննիսէ վարդապետէ Ամասիացւոյ՝
ի բուն աշակերտէ Ղազարու սրբազան կաթողիկոսին Ջահկեցւոյ
ասացեալ է այս բան վասն բազմակի սիրոյ Տեառն իւրոյ.
Նաեւ արժանապատուութիւն նորին հանդերձ որպիսութեամբն
ոտանաւորք վիպասանեալ բացայայտէ, ըստ կարի իւրում՝ փոքր ի շատէ:

Ինձ պարտ է՛ զայս գիր պատմութեանս առնելի,
զգործ Ղազարու Հայրապետիս վիպելի.
Լինի ծնեալ ի Նախջուան գաւառի,
գեղեցկանիստ Ջահուկ անուն խաս գեղջի:
Իյետ վեշտասան տիոյ նորին ծաղկալի
թողու զաշխարհս նաեւ՝ ծնօղս ըզկնի
եւ մտանէ յԱնապատն հրաշալի՝
ի սուրբ Սիօն Շատիկ կոչեալ ճահ տեղի:

[էջ 54բ]
Ունականայ անդէն զիմաստս բուն բանի
պէս պէս զչնորհս զգիտութիւնս լիալի,

յանտուստ ծագէ իբր զարուսեակ աշխարհի[1],
համանման Յոհաննիսին Մկրտչի:
Վերին օծմամբ ելեալ լինի նա անտի
եւ հրամանաւ սրբոյ վանահօր մեծի.
լինի յայնժամ անուն Աբբահօր տեղի
Ստեփաննոս Կաֆայեցի այր բարի:
Հանգոյն սրբոյ Տարսոնացւոյն Պօղոսի,
քարոզութեամբ լնու ի մեր հայ երկրի,
յետոյ դիմէ յԱմասիայ քաղաքի,
եւ անդ մնայ քարոզելով առ ա՛մ մի:
Անդէն քայլէ զհամբաւ նորին ցանկալի
մինչ հասանէ յԱթոռ Սրբոյն Գրիգորի՝
յականջ վեհին Աստուածատրոյ մեր ազնի,
որ էր տեղեաւ Համատանու քաղաքի:
Նա հրաւիրեալ կոչէ առ ինքն չեշտակի՝
յԱթոռ իւր Սուրբ իջման բանին Միածնի,
ի փորձ առնէ զհամբաւոյն զոր լըսի,
եւ հրամայէ քարոզ ասել ի դասի:

[էջ 55ա]
Նոյն ժամայն անդ՝ բանայ զբերանն չնորհալի,
ի մէջ բազմաց հրահանգելոց գումարի,
աղբերաբար անդ քարոզէ ատենի.
մնան լսօղք քարոզութեան ապշելի:
Ի վաղճանի հռետորական քարոզի
խոնարհի անդ ի համբուրել զԱջ վեհի.
վեհն համբուրէ զգագաթ նորին նազելի,
այլեւ գովէ՛ զիմաստ մտացն պանծալի:
Սիրով ասէ զվեհ իւր զայս բանս առաջի
համագումար անդ եղելոց ատենի,
թէ՝ «ոչ թողցեր Տէր մեզ զաւակ այսպիսի[2].
նմանէաք իբր Սօդոմայ Գոմորի»:
Էականի բարւոյն դիտմամբ զվեհն հաճի.
իսկոյն կոչէ զմիաբանս համայնի
եւ ձեռնադրէ եպիսկոպոս ընդհանրի.

յղէ նուիրակ չորրորդ Հայոց աշխարհի:
Վաղվաղակի նախ ժամանէ յեզր երկրի՝
Ի Պոնտոսէ սկիզբն առնէ ժողովի,
գայ հասանէ յԱմասիայ քաղաքի
աւարտ առնէ զնուիրակութիւն նոյն կողմի:

[էջ 55բ]
Ամասիոյ զինքըն ուղղէ յԵւդոկի,
անդուստ գրէ՛ զթուղթ իմն առ իս շեշտակի,
վկայութեամբ սրբոց գրոց ճոխալի.
ի գրելոց զայս մինս բերցուք առաջի:
Բենաբան հայր ոսկեբերանն զայս խօսի՝
«Զհայր եւ զմայր թէ ընկողմիցի ի շեմի,
կոխեա՛ ոտիւք զծնօղս քո սրտալի.
եւ հա՛ս զկնի փրկչին քո Սուրբ Յիսուսի»:
Դոյն մինչեւ զայս ընթեռնլով երբ հասի՝
իսկոյն ելի առ բարեկամս դիմեցի,
առնել զխորհուրդս ի նմանէ ելք հնարի.
նա առժամայն նոյն օրն ետես հոգս ռահի:
Առաւօտուն ի հայրենեաց մինչ ելի,
արտասուելով զանձն իմ առ Տէր յանձնեցի,
յաջողմամբ Հօր զգործս իմ ամէն կազմ գըտի,
յայնժամ ի գաղտ ելեալ ծնօղաց գընացի:
Պետին իմոյ նոյն գիշերի ազդ լինի,
տեսլեամբ իմն գնալն իմ առ նա հաւաստի,
վասն այնորիկ յամէ սակաւ նոյն տեղի,
մինչեւ առ նա հասանիցեմ ըզկնի:

[էջ 56ա]
Երեք օրէն ապա հասի յԵւդոկի,
բայց անդ չէր ժամ նուիրակութեան ժողովի,
զի դեռ երկու ամ անցեալ էր նուիրակի.
վասն այն թողաք եւ գնացաք ի Ղայսերի:
Տակաւին անդ չէաք առեալ զմերս հոգի,
եկն էհաս զգոյժ եւ տրտմութեան բօթալի՝

ի վաղճանէ Աստուածատրոյ սուրբ վեհի.
յանժամ եղեւ սիրտք մեր ցաւօք լիալի:
Էր այս գուցէ կամք Աստուծոյ հաճելի,
բայց ժողովուրդքն առ մեզ եղեն դժպեհի,
ասեն՝ «չէ՛ պարտ զնուիրակութիւն այժմ տալի,
զի ոչ գիտէ ոք, թէ վեհն ե՞րբ լինի»:
Արդ այսքան ցաւս սրտից մերոց չբբաւի,
դեռ ռամկաց բանիւք սիրտ մեր խոցոտի,
բայց ողորմածն Աստուած առ մեզ ողորմի[3]:
ի փորձութեանց առնէ զելսն շեշտակի:
Մինչդեռ էաք ի մէջ սգոյ տրտմալի,
ա՛նկարծ էհաս զհրովարտակ Արքայի,
թէ Կարապետ եպիսկոպոսն Զեյթունցի
ի Բիւզանդին կաթուղիկոս ձեռնադրի:

[էջ 56բ]
Ապա լինի հանդարտութիւն մեր սրտի,
նաեւ՝ տրտունջ ժողովրդեան բաց բառնի.
այնուհետեւ գործ մեր կարգաւ ընթանի՝
ի չորս ամսէն անդ ժողովք մեր աւարտի:
Սոյն սա՛ լինի ի թուոյ փրկչին Քրիստոսի
հազարերորդ զեօթն հարիւրեակ զհետ լրծի
քսան եւ հինգերորդ թուով աւելի,
եւ տասն եւ հինգ ապրիլ ամսոյ հաւաստի:
Իսկոյն ապա դարձաք քաղաքն յԵւդոկի,
որ այն միայն մնացեալ էր եզակի.
անդ արարաք զնուիրակութիւն ըստ կարգի,
որպէս վերոյ ութերորդի տանն յիշի:
Այլեւ զնամակ վեհին գա մեզ շնորհալի,
իշխանութիւն տեառն իմոյ նորոգի,
նաեւ՝ փող ինչ հասուցանել աղերսի.
զՀայրն իմ յղէ սուրհանդակաւ շատ ոսկի:
Յորժամ եղեւ եզերանալ մեր բանի,
էաք ի Սուրբ եկեղեցին Սարգըսի,

ա՛նկարծ եկըն առ իս թուղթ իմն միակի,
գրեալ ձեռամբ հօրն իմոյ ծերունի:

[էջ 57ա]
Իւրթն թղթոյս, որ էր գրեալ այսպիսի,
թէ՝ «եկ առ իս, ով իմ որդեակ նազելի,
ի գաղտ գնալդ արար սիրտ իմ վիրալի,
ե՛կ, զի տեսից մինչեւ իցեմ կենդանի»:
Որ էր թէպէտ ինձ բանքս այս տրտմալի,
սակայն չէր կամ ինձ հայրենիս գնալի,
բայց կասկածանս լինի վեհն իմ իւր սրտի,
թէ մի՛ գուցէ երթեալ մնայցէ նոյն տեղի:
Յաղագս որոյ կոչումն առնէ շեշտակի,
ինձ ձեռնադրէ ի սարկաւագ աշտօնի,
ապա կազմէ յոլով անօթս պըղընձի,
ինեւ յղէ ի յԱրզրում քաղաքի:
Ինքն մնայ յամիսս երկու նոյն տեղի
մինչեւ աւարտ հասուցանել իւր բանի,
ապա ելեալ ի տեղուոջէն բազմակի՝
գայ հասանի անարժանիս ըզկընի:
Բազմաբեղուն արդեամբք ելանք եւս անտի,
Բաղձեալ տարաք կապաւ զօրայս բերկրալի[4]*,*
Գնացեալ հասաք յԱթոռն Սուրբ ցանկալի,
որ է տեղին իջման բանին Միածնի:

[էջ 57բ]
Որոյ յայնժամ զկաթուղիկոսն չէր տեղի,
այլ էր ի մէջ ճանապարհին Բիւզանդի.
յետ մեր գնալոյ երեք շաբաթ անցելի՝
ապա եկեալ յԱթոռն սուրբ հասանի:
Իւսմամբ ելաք դէմ ընդ առաջ համայնի,
եկեղեցւոյ ուխտի մանկամբք ընդհանրի,
յաղթանակօք հնչմամբ ձայնիւ բերկրալի՝
բերեալ ածաք եւ նստուցաք յԱթոռի:
Նաեւ՝ ծես էր առաջնորդաց ամենի

յարեւելեան Տանըն մեծի Հայկազնի՝
գալ տեսանել եւ ողջունել նոր վեհի,
այն, որ մարթ էր ի մօտագոյն գաւառի:
Այնու գայցէր Աբբայն սրբոյն Սիօնի՝
Շատիկ կոչեալ Անապատին ցանկալի.
եւ էր յայնժամ անուն Աբբային տեղի՝
Գրիգորիս Աստապատցի այր բարի:
Շարժեաւ իղձն իմ ի տես նորին կըրօնի,
այն, որ վաղուց կայր զբաղճանս իմ սըրտի՝
կրօնաւորիլ ի նոյն Մենաստան տեղի,
բայց ոչ թողոյր զ Ղազարն վեհն իմ պատուելի:

[էջ 58ա]
Ապա լինի միջնորդութեամբ հոգելի
Աստապատցին վարդապետին Պետրոսի.
Այնու վեհն իմ հըրաման տայ սոյն բանի՝
գնալ ըզհետ Աբբահօրըն Գրիգորի:
Կամակատար սրտիւք յայնժամ գընացի
Շատիկ կոչեալ Անապատն այն ցանկալի,
բայց զվեհն իմ յամէ սակաւ իւր տեղի
մինչ ի բացուիլ զերեսս գարնան զուարճալի:
Երբ որ գարունն եկեալ վերա հասանի,
ծառք եւ ծաղկունք կանանչացեալ փլթըթի
յայնժամ զհայրն իմ ի վեհէն ճայնեալ հրաւիրի
զնուիրակութեան գնալ նմին յորդորի:
Ռաբունին իմ բանից վեհին հպատակի
եւ կամ ասէ՝ «պատրաստ քո սուրբ հրամանի,
զի ծառայեմ իջման բանին Միածնի,
նաեւ՝ սրբոյ հայրապետիդ իմ մեծի:
Տեսեալ վեհին կալ հպատակ իւր բանի,
գովէ՛ զնա ի մէջ եղբարց ատենի,
ասէ առ նա, թէ՝ «դու ես սիւն Տան մեծի
եւ ժառանգորդ Սրբոյ Աթոռոյս Միածնի:

[էջ 58բ]
Էն քեզ, -ասէ, - լիցի սատար քո ռահի,
բարեաւ երթալ շուտ հասանիլ Ռումելի,
անդուստ դառնալ առողջութեամբ այս տեղի,
եւ ժառանգել այնմ մեծութեան, զոր ասի»:
Ղազար վեհն իմ համբուրէ զաջ սուրբ վեհի,
ելեալ գնայ նուիրակութեան Ռումելի,
եւ հասանի Հոդին քաղաք բարելի՝
անդուստ առնէ սկիզբն իւր ժողովի:
Այլեւ՝ ընու քարոզութեամբ հրաշալի
քաղաք եւ գեօղ՝ ուր եւ գնա ընդհանրի.
բազում անդարձք մեղաւորքըն սրտալի
գան զղջացեալք Տեառն իմոյ առաջի:
Զուարճացեալ սրտիւք ելեալ եւս անտի՝
բազում արդեամբք եւ պարգեւօք լիալի
գայ հասանի Կաֆայ քաղաք մեր նախնի,
մինչեւ յանդ իւր գործն ամէն անդ լինի:
Անդուստ ելեալ մինչ անկանիլն ընդ ռահի
զԿարապետ Հայրապետն այն վաղճանի
եւ փոխանակ ընտրեալ դնի ի տեղի
սրբազան հայր Աբրահամն Մըշեցի:

[էջ 59ա]
Բապաղ սրտիւք Հօրն իմ մերձիլ Սուրբ Գահի,
յոլով ախիւք եւ շատ արդեամբք բեռնալի.
զնոր վեհն գայ դէմ ընդ առաջ սիրալի,
ասէ՝ «բարեաւ եկիր դու աստ, իմ որդի»:
Որով հայրն իմ համբուրէ զԱջ սուրբ վեհի,
զվեհն համբուրէ ճակատ նորին շնորհալի.
ասէ՝ «դու ես մըշակ եւ ժիր Տանս մեծի.
արդ՝ բազմեա՛ ընդ իմ սիրոյ սեղանի»:
Իւսն սիրով յետ սեղանոյն խրախճանի,
ելեալ դիմեն առ խորան սուրբ հրաշալի՝
երկրպագեն տեղի իջման Միածնի
օրհներգութեամբ հնչմամբ ձայնիւ զուարճալի:

Սոյն այս մեծի նաւակատեաց ըզկընի՝
յաշխարհն պարսից յոյժ մեծագոյն խառնակի,
Թէհմէզ Շահըն բազում զօրօք յոյժգնակի
գալ յերկիրըն Արարատեան ըսկըսի:
Բամից թուրքաց գնդից եւս ազդ լինի
զգալուստ Շահին բազում արամբք չեշտակի.
պատրաստ կազմէ զօրքըն առ իւր համայնի
եւ ամրանայ Երևանայ Տըղեկի:

[էջ 59բ]
Բայց զայս վայրի զվեհ մեր մտօք վարանի,
գուցէ փողով ի նեղութեանց զերծանի.
զփողըն եւս օր ըստ օրէ նուազի
վասն հարկաց մեծամեծաց, որ յուզի:
Արդ՝ վեհն կոչէ զՀայրն իմ առ իւր պալատի,
խնդրէ իւրմէն դարձեալ գնալ նուիրակի՝
առ Բիւզանդին կայսերական քաղաքի,
ասէ՝ «դու ես այնմիկ տեղին արժանի»:
Զհայրն իմ ասէ՝ «ով սրբազան Տէր բարի,
հրաման քո սուրբ՝ գլխոյս վերայ իմ լիցի.
Է ինձ գրագիր եւ աշակերտ պիտանի,
Է Անապատն Շատիկ կոչեալ սուրբ տեղի»:
Ասէ վեհըն՝ «Գրեսցուք առ նա տոմսիկ մի՝
ելեալ անտի գայցէ առ մեզ փութակի,
ընդ քեզ տարցես նուիրակութեան, որ պիտի
հաճոյ կամաց նազելութեանդ քո լիցի»:
Նոյն ժամայն թուղթս սուրհանդակաւ ինձ յղի՝
երկուց համայնց մեծաւորաց կրկնակի,
թէ՝ «հասանիլ թղթոյս առ քեզ հրամանի՝
ելեալ գայցես Սուրբ Ուխտս առ մեզ շեշտակի:

[էջ 60ա]
Կեալըդ տեղւոյդ ճգնողութեամբ է՛ բարի,
բայց հնազանդիլ մեր բանիցն է՛ գերբարի,
զի պիտոյ ես նուիրակութեան պաշտօնի,

թէ՛ տեղդ, թէ՛ աստ է՛ Աստուծոյ հաճելի»:
Ապա թէպէտ այսու խիղճ իմ հանդարտի,
բայց ռահն մեր յամէն կողմանց յոյժ փակի
վասն գողոց արշաւելոց ի դաշտի,
նաեւ՝ ի ձեանց ձմերայնոց սաստկալի:
Թողեալ ապա մեր ճանապարհն արքունի,
մտաք ի ռահն ընդ անծանօթ արտուղի՝
անցմամբ լերանց եւ դաժանմամբ գողուղի,
հազիւ հասաք յէջմիածին ցանկալի:
Ուստի մուտն իմ վեհն իմ չէր անդ ի տեղի,
այլ էր քաղաքն Երեւանայ ի բերդի,
զի կոչեալ էր զփաշայն առ իւր ատենի՝
սակըս ծածուկ դժուարագոյն իմն իրի:
Իիւծեալ մտօք մինչ ես կայի ի խըցի,
նոյն երեկոյ եկըն վեհն իմ ցանկալի.
յառաջ մատեայ համբուրել զԱջ շնորհալի,
ասաց՝ «առ իս բարեաւ եկիր իմ որդի»:

[էջ 60բ]
Ղեկն յուսոյ մարդկանց այժմ բեկանի
վասն անթիւ գործեալ չարեաց իմ մեղի.
Շահըն Թէհմէզ մեծ զօրօք գայ հասանի
Արարատեան դաշտին մեծին Արայի:
Իսկ օսմանցոց զօրքն գընան առաջի՝
տան պատերազմ ընդ զօրս Շահին Թէհմէզի.
յաղթեալք լինին զօրքն օսմանցոց յետ մարտի,
ոմանք փախնուն, ոմանք՝ պնդին ի բերդի:
Կամք Շահին էր յետ յաղթութեան իւր մարտի
իսկոյն դիմել երկիրն թուրքաց ուղղակի,
բայց երեք խանք ապստամբեալք դէմ Շահի,
գրեալ զթուղթ յըղեն ի բերդն գողուղի:
Ուստի զօրքն այն առաջապահքն գիշերի
ըմբռնին զայրն, որ զթուղթն ինքն ունի՝
բերեալ կարդան Թէհմէզ Շահին առաջի.
լսելն իսկոյն սիրտ իւր համայն բեկանի:

Սակս այսորիկ գիշերամէջն վեր կանգնի,
զօրքն անցանել Երասխ գետով հրամայի,
դառնալ Թավրէզ քաղաքն մեծ իւր բաժնի.
զպատիժ խանից ապստամբէից անդ տըրի:

[էջ 61ա]
Իսկ արդ դարձաք զճառելիս մեր բանի.
ոչ է՛ կամ մեր զօրաց մարտից պատմելի,
այլ ժամն այն, զոր ինչ իմիք հանդիպի,
ոչ է՛ անդէպ վիպել փոքր-ինչ ըստ կարգի:
Նա զի մնացաք այնքան Սուրբ Ուխտըն մեծի
մինչ խաղաղիլ երկուց զօրաց կայսերի
յետ գալստեան Հոգւոյն Սրբոյ անցելի,
ապա ելաք նուիրակութեան ի ռահի:
Ջանիւ մեծաւ եւ քեվրանաւ բազմակի,
գնացեալ հասաք ի քաղաքըն Ղառս կոչի.
անդուստ գնացաք Դարանաղեաց գաւառի.
անդ էհաս Տօն Լուսաւորչի Հօր մեծի:
Անդէն Թողաք զկահքըն մեր ի խըցի,
հետեւեցաք ուխտաւորաց ըզկնի.
ելաք ի լեառն Սեպուհ կոչեալ սուրբ տեղի՝
անդ արարաք Ուխտ մեր զենմամբ զուարճալի:
Համագումարք վարդապետքըն, որք անտի,
քարոզ ասել առ Տեառն իմոյ հորդորի.
զվեհն իմ բանայ զբերան շնորհալի,
ճառէ զկիրս Լուսաւորչին հրաշալի:

[էջ 61բ]
Կատարեցման հռետորական ճոխ բանի
օրհնէ զժողովն այն օրհնութեամբ, որ յերկնի.
կան հիացեալք լսողք համայն քարոզի,
եւ փառս տան այնքան շնորհաց տուողի:
Ելեալ անտի առաւօտուն կանխակի՝
իջեալ ի լեռնէն գնացեալ հասաք մեր տեղի.
անդուստ գնացաք ի վանքըն սուրբ Ներսեսի,

կատարեցաք անդ եւս Ուխտ մեր ջերմակի:
Յորժամ էանց յաւուրս երկուս ընդ մէջ մի,
ապա պատրաստ զճանապարհորդն եղանի,
յայնժամ ելեալ անցմամբ բազում գաւառի
հազիւ հասաք առ գետափըն յԵւդոկի:
Իիւսմամբ սիրով իսկոյն յառաջ գան մեզի
Եւդոկիոյ նախածանօթն համայնի.
անդ մեծարեն պէս պէս բարեաւ լիալի,
յետոյ տարեալ փառօք պատուեն ի տեղի:
Որով անդէն առաք հանգիստ ամիս մի
մինչ դիպիլ մեզ ճանապարհորդ ընկերի.
ապա ելեալ ընկերակցօք բազմակի,
գնացեալ հասաք յՈւսկուտար մեծ որ ասի:

[էջ 62ա]
Յայնժամ եկին ընդ առաջ մեր ջերմակի
քահանայքըն հանդերձ մանկամբք Սիօնի,
եւ երգելով զհրաշափառն հոգելի,
այնպէս մուծին երկրպագել խորանի:
Արդ՝ երբ ժամն երեկոյեան աւարտի,
յայնժամ զվեհն իմ վառեալ սիրով ոտք կանգնի.
բանայ զբերան ճոռոմաբան քաղցրալի՝
ողջոյն սիրոյ անդէն բաշխէ համայնի:
Սակայն՝ ի նոյն երեկոյի ազդ լինի
Յովհաննիսի պատրիարգին մեծ Պոլսի,
թէ նուիրակըն լուսակառոյց Խորանի
յՈւսկուտարայ վանք կոչեալ տեղն զետեղի:
Այլ առաւօտն երբ լուսանալ ըսկըսի
պատրիարգին աթոռակալն գայ մեզի,
ասէ՝ «բարի եկիր, ով հայր պատուելի,
արի՛ գնասցուք առ օթեւան մեր տեղի»:
Ցայս վայր կուր մի վասըն մերոյ պատրաստի
անցեալք ընդ ծով ելաք նոքօք ցամաքի,
գնացեալ մտաք ի Պալատն Հօր մեծի՝
Տեառն Յովհաննու պատրիարգին մեծ Պոլսի:

[էջ 62բ]
Ելեալ յայնժամ պատրիարգքն առաջի
առ սրբազան Տեառն իմոյ Նուիրակի,
ջերմ համբուրիւ ողջագուրեն մին ըզմի,
եւ հարցանեն զորպէսն միմեանց զուարճալի:
Այլ հասանիլ յերեկոյեան աղօթի,
դան քահանայք հանդերձ մանկամբք նոր ուխտի.
քաղցրահնչմամբ եւ բուրվառաւ հրաշալի,
մուծին զմեզ ի տաճար Սուրբ Մօր կուսի:
Լրման ապա յերեկոյեան պաշտօնի
զվեհն իմ կանգնի ի բազմամբոխ ատենի
եւ ողջունէ զժողովուրդսն համայնի,
նաեւ՝ ճառէ ըզներգործսն ողջունի:
Է՛ր անդ ներկայ զպատրիարգն մեծ Պօլսի,
նաեւ՝ նորին աշակերտքըն հրաշալի.
համայնք էին կրթեալք զիմաստս Սօփեստի,
ասեն՝ «չքնաղ ետ զլուծմունս ողջունի»:
Այնուհետեւ պատրիարգէն յոյժ սիրի
զվեհն իմ Ղազար աստուածաբան պատուելի.
«զդատաստան ինչ իմն, - ասէ, - թէ լինի
մինչդեռ աստես քեզ յանձնեցի առնելի»:

[էջ 63ա]
Յետ այնորիկ առաջի օրն մեծ պասի
զվեհն իմ դնէ ըզբնաբան Պօղոսի[5],
ասէ՝ «մի է միջնորդողըն երկ միջի
մարդըն Յիսուս Քրիստոս կոչեալ առձայնի:»
Սոյն բնաբանին վերա քարոզն երկարի.
ակն ունէին բուզումք ի վաղեան փոխելի,
եւ ո՛չ փոխէ՛ զբնաբանն յայլ բանի,
յասուցանէ մինչեւ Մեծի ուրբաթի:
Բայց ամէն օր, իւրաքանչիւր պատշաճի,
զխորհուրդ աւուրն լիակատար իւրն ասի,
ի բնաբանէն ոչինչ լինի արտուղի,
եւ համայնըն առ բնաբանին անկ լինի:

Այլ լսողքըն քարոզութեան խոր բանի
եղեն պակեալք ի հիացեալք ատենի,
ասեն՝ «յարմար կերտելն բանի ընաբանի
ոչ է գիտնոց հասարակի, այլ՝ մեծի»:
Նաեւ՝ բազում փողոս անգուստ ժողովի՝
նուիրակութեան Էջմիածնայ Տան մեծի.
եւ մերձ զերծման եկեղեցեաց, որք անտի,
զվեհն իմ դնէ յայլ իմն բան ի մըտի:

[էջ 63բ]
Վասն իջման այսինքն տեղի Միածնի,
ասէ՝ «տացուք չինել կանթեղս արծաթի՝
առ ի կախել ի մէջ չորից սեանց միջի,
զի եղիցի շրջաբոլոր պըսակի»:
Ապա ձայնէ արծաթագործ կիրթ գործի.
«գործեա, - ասէ, - հարիւր կանթեղս արծաթի,
լիցի, - ասէ, - ամէն մինըն մին նուկի,
բայց արծաթըն ամենեւին զուտ լիցի:
Սակայն չորսըն մին մին հոխայ եղիցի,
որ ի միջի քսան եւ չորից կախիցի՝
յուրաքանչիւր ի չորեցունց սեանց միջի,
բայց ամէնըն առ պատկերաւ կերտիցի»:
Նիրակերտէ զարծաթագործն շեշտակի
կանթեղքն ամէն ըստ օրինի հրամանի,
բարձեալ բերէ առ Տեառն իմոյ ի խըցի,
առեալ զփողսն գնայ ուրախ իւր գործի:
Բանայ ապա ըզբերան իւր քարոզի
զՀայրն իմ Ղազար մեծ գիտնական ըաբունի
եւ յորդորէ՛ ժողովրդեանն ամենի
առ ի առնուլ զկանթեղսն արծաթի:

[էջ 64ա]
Անխախտ սիրով մատեան բազումք առաջի,
առին զկանթեղսն, ետուն զփողսն սիրալի
եւ մատուցին առ Խորան սուրբ Միածնի՝

յիշատակ իւր, իւրեանց ծնօղաց համայնի:
Զկնի այսմիկ խոհեմական սոյն բանի,
Աստուածածնայ նուիրակութիւն աւարտի,
լինի թիւրն Հայոց մեծաց Արամի՝
հազար հարիւր ութսուն եւ մին աւելի (1732),
Մայիս ամսոյ քսան եւ հինգն նոյն ամի
յեկեղեցւոյ Աստուածածնայ ելանի,
Ուսկուտարայ եկեղեցին առ դիմի՝
առ ի առնել նուիրակութիւն նոյն տեղի:
Անդ յաւուրս մին քանի օր անցելի
զվեհն իսկոյն ժանտացաւօք ըմբռնի,
այնպէս մնայ զաւուրս քսան յանկողնի՝
տառապանօք եւ տրտմութեամբ ցաւալի:
Կամք Աստուծոյ լինի այնպէս հաճելի,
բայց զգութ իւր իսպառ ի մէնջ ոչ բառնի,
զի զոր սիրէ՝ Տէր խրատէ Պօղոսի[6],
տանջէ զորդիս իւր՝ ընդունեալ որ լինի:

[էջ 64բ]
Ի նոյն աւուր ցաւօք անկեալ գիշերի,
ձայնէ վեհն իմ կանգնիլ առ իս շեշտակի.
«գրեա՛, -ասէ, - զկտակն իմ քարտիսի,
ահաւասիկ զոգիս ի բաց պահանջի»:
Սրտաթափիւ յարեայ լսելն իմ ձայնի,
առեալ ցթուղթ գրեցի զամէնն իւր կամի,
եւ ասացի՝ «քեզ չէ այժմիկ ննջելի,
կաթուղիկոս քեզ դեռ ապա լինելի»:
Իսկ նախագէտ Աստուածային սահմանի
քսան եւ մին օրէն վեհն իմ վեր կանգնի
եւ ժողովման նուիրակութեան հոգ տանի,
մինչ ի վաղճան յուլիս ամսոյ աւարտի:
Ռուպ ինչ մնացեալ եզերելոյ մեր բանի.
եկն Աբրահամ եպիսկոպոսն Կրետացի,
է՛ր Առաջնորդ ի Թրակիոյ քաղաքի
հրաւիրել մեզ գնալ առ իւր Աթոռի:

Ուստի եկեալ ասէ՝ «Ով Տէր սիրելի,
Բարի տեսաք զքեզ հոգւով բերկրալի,
տեսութեան քո սիրտ իմ վաղուց կարօտի,
ե՛լ եւ գնասցուք ի միասին խնդալի»:

[էջ 65ա]
Յայնժամ իսկոյն նաւապետին մարդ յըղի,
որ վասն մեր զնաւակ մի պատրաստի,
եդեալ զմեզ հանդերձ ախիւք ի նաւի,
եհան յայնկոյս օգոստոսի երկրորդի:
Տեսեալ ի հեռուստ քահանայից գալ նաւի,
եկին հանդերձ ժողովրդովք յեզր ծովի՝
յառաջանկեալ մուծին զմեզ յԱթոռի,
Սուրբ Յոհաննու աւետարան գըրողի:
Երեկոյի զվեհն իմ կանգնի ատենի,
բանայ զբերան հոգիաբուղխ շնորհալի,
բաշխէ զողջոյնն եւ զօրհնութիւն համայնի,
որպէս Հոգին ի վերնատան հրեղինի:
Այնուհետեւ սիրտ Տեառն իմոյ հանդարտի՝
հոգսածութեամբ Աբրահամու մեծ դիտի.
այն, որ վաղուց գանձեալ ունէր իւր սրտի,
ի յորոճալ եւ յայտածել ըսկըսի:
Ու ետին զիմաստն, որ կազմեալ էր սենեկի՝
հրեշտակաբնակ յԱնապատին Շատիկի
առ ոտս իւր վարժապետին հոգելի՝
Տեառն Մեսրոպայ Յուշականցի ճգնակըրի:

[էջ 65բ]
Նոյն այս միտս յարանց բազմաց յորդորի
վեհն իմ կանխաւ շրջագայման ներ միջի՝
զգիրք մի կերտել քաղկեդոնեան ընդ դիմի
գուցէ, ասեն, զեն մի ձեռին մեր լիցի:
Իսկ այժմ, ասեն, ոչ գոյ գիրք մի այնպիսի,
որ կարասցէ երկաբնակաց կալ դիմի,
նաեւ՝ նման պարսաքարին քաջ Դաւթի,

տալ ի ճակատն ստայօդին Լեւօնի:
Իւսմամբ այսքան հարկեցուցչաց խրթանի,
այլեւ Տեառնէ Հայրապետէ երջանկի՝
սիրտ Տեառն իմոյ քաջալերեալ յօժարի
վասն այն յայտնել կանխախոկեալն ըսկըսի:
Բաբունին իմ նոյն կանխասաղմ ի մըտի
կամի այժմիկ գրեալ լինի ի թըղթի,
ասէ առ իս՝ «ով իմ որդեակ նազելի,
առ զթուղթ քո եւ նիստ հանդարտ ի գետնի»:
Որ զիմ առեալ եւ հանդերձեալ ըստ բանի,
գրեցի զամէնն արտաբերման իւր բանի.
զգիրքն զայն, Դրախտ ցանկալի որ կոչի,
երեք յամսէն շնորհօք Տեառն անդ լինի:

[էջ 66ա]
Յայսմիկ գրքին շարայարումն ճոխ բանի
լինի Հայոց հազար հարիւրերորդի
ութսուն եւ մին այլեւս թիւ հետ լըծի (1732)
հոկտեմբերի քսան եւ ութն աւարտի:
Նաեւ՝ որքան վեհն իմ էր նոյն քաղաքի,
պատմելն զգեղ լուսակառոյց Խորանի՝
աղեկիզէր սիրտ Տեառն մեծի երջանկի
Աբրահամու Թրակիոյ Աջորդի:
Արդ, սա ո՛չ էր ձեռնադրեցեալ նոյն տեղի,
այլ առեալ էր իշխանութիւնն ի Սըսի.
վասն այն տրտմէր սիրտ իւր այնպէս փղձկալի
ի տեսանել տեղի իջման հրաշալի:
Եպերէ զայն վեհն իմ փոքր ինչ, իւր դիմի,
տրտմումն սրտին Աբրահամու մեծ դիտի,
ասէ առ նա՝ «ոչ հաւատամ քո ըղձի,
թէ ոչ գնաս յԱթոռն իջման Միածնի»:
Իւսէ դէտըն դաշըն առ մեր առաջի,
ասէ՝ «գնացից յէջմիածին ցանկալի
ի գալ տարոյ ամաղայնոյ հասելի.
ուխտ իմ այս է՛ Տերամբ հաստատ առնելի»:

[էջ 66բ]
Անդանօր մեր նուիրակութիւն եղերի
ի Թրակիայ ծովահայեաց քաղաքի.
յանդուստ ելեալ նոյեմբերի երկրորդի
եւ հինգ օրէն հասաք քաղաքն Անդրէի:
Բաբունապետ Աբրահամըն նոյն տեղի
էր ի նոյնոյ Անդրիանու մեծ պօլսի՝
ել ընդ առաջ քահանայիւք ցնծալի
տարեալ նստոյց զվեհն իմ առ իւր Աթոռի:
Ժուժէ վեհն իմ մինչ աւարտման պաշտօնի,
ապա կանգնի ի բազմախուռն ատենի,
ցօնէ զողջոյնն ըստ Տեառնաւանդ հրամանի,
նաեւ՝ ծիսի Առաքելոց համայնի:
Այնուհետեւ անդէն յուշիկ ըսկըսի
զնուիրակութիւն Էջմիածնայ Տան մեծի,
զի ակն ունէր հինգ-վեց ամիս մընալի
եւ է՛ր քաղաքն յոյժ բազմամբոխ մարդալի:
Նաեւ՝ շրջման ի թիւ հայոց միւս ամի՝
հազար հարիւր ութսուներկուերորդի
եկն թուղթ մի ի Կոստանդնու մեծ պօլսի,
ի յամսեանն առաջներորդ յունվարի:

[էջ 67ա]
Արդ, էր գրեալ ի պատրիարգէն նոյն տեղի՝
Յովհաննիսէ աստուածաբան մեծ պետի
վասն սիրոյ առ Տեառն իմոյ Սոփեստի
կրկին անգամ ի տեսանել մին ըզմի:
Պատճէն թղթոյն, որ էր գրեալ այս կերպի.
թէ՝ «շատ ողջոյն յինէն առ քեզ մատուսցի,
թէ կարիցես աւարտ առնել քո բանի
մինչ ի մեծի Բարեկենդան հասելի:
Արդ, խնդիրն է իմ առ ի քէն ըղձալի՝
Ելեալ գայցես առ մեզ սիրով շեշտակի,
զի ես ծեր եմ՝ գուցէ զմահն իմ ժամանի՝
է՛կ, արասցուք զԲարեկենդանս մի տեղի.

Տեսցուք զմիմեանս կրկին անգամ բերկրալի
եւ լցուսցուք զբաղձանս մեր կարօտի,
զի ո՞ գիտէ զկեանըս մեր տեւելի՝
վաղեան աւուր կամ միւսում մընալի»:
Ուստի վեհն իմ տայ զպատասխան իւր թղթի,
թէ՝ «առ սրբոյ պատրիարգիտ մեծ պօլսի՝
Տեառնդ Յովհաննու աստուածաբան հռետորի
ողջոյն սիրոյ առ Հօրդ իմոյ բազմասցի

[էջ 67բ]
Իւսմամբ սիրով գրեալ թուղթ քո քաղցրալի
էհաս առ մեզ առաջներորդ յունվարի
եւ իմացաք զբաղձանք Հաւոյդ իմ մեծի,
բայց ո՞վ եմ ես, որ սիրտ Տեառնդ իմ ըղձասցի:
Որ եմ ծառայ պատրաստական պօլսիդ Դիտի.
որպէս կամի սիրտ Հօրդ իմոյ՝ նոյն լիցի,
որ Աստուծով եւ աղօթիւքդ վըսեմի
գալոց եմ ես, տալով կատար հրամանի»:
Իւսեալ դնէ զվեհն իմ շտապ իւր սըրտի,
այնուհետեւ յորդորելով ոչ դադրի,
եւ ժողովէ զնուիրակութիւն նոյն տեղի,
հանդերձ Տէրամբ յունվարի մէջն աւարտի:
Թեւակոխեալ զգործ մեր անդէն չեշտակի,
իսկոյն ելաք ի ճանապարհ խնդալի,
եկաք հասաք ի քաղաքըն Բիւզանդի,
մտաք ի պալատն պատրիարգին նոյն պօլսի:
Իբրեւ ետես մեզ պատրիարգն բերկրալի՝
ուրախ եղեւ ինքն եւս սրտալի,
ասէ՝ «բարի եկիր, ով իմ ըղձալի,
աչք իմ դիտէր ձեր գալստեան մըշտակի»:

[էջ 68ա]
Իւսմամբ սիրով մատչի յայնժամ առաջի
վեհն իմ առ պատրիարգի Հօր մեծի՝
տալ ի համբոյր օծեալ Աջոյն շնորհալի.

նա ոչ տայ Աջն, բայց համբուրեն մին ըզմի:
Նոյն այս դարձումն ի Բիւզանդին մեր լինի
ի թուականի Հայոց մեծաց տօմարի
հազար հարիւր ութսուներկուերորդի
եւ յամսեանն քսան եւ ինն յունվարի:
Նաեւ Յակոբ վարդապետըն մեծ արհի՝
աշակերտըն պատրիարգին նոյն պօլսի,
չէր անդ, յորժամ մեք անդանօր հասելի,
այլ էր յերկիրն Կապադովկեան կեսարի:
Ուստի յետ մին-երկու աւուր անցելի
նա եւս գայ ի Բիւզանդին հասանի.
յորժամ տեսաք, ողջունեցաք մին ըզմի,
այլ աւելաւ ուրախութիւն մեր սըրտի:
Բաբունին մեծ զպատրիարգն հարգելի
յայնժամ ասէ յաշակեր[տ]ացն ընդհանրի.
«վաղիւն առէք ըզնուիրակն պատուելի
եւ շուրջ ածեք ի վե[ր]այ ջուրցն բերկրալի»:

[էջ 68բ]
Իսկ առաւօտն երկու նաւակ պատրաստի,
մեզ եւ նոցին հասարակաց ամենի,
բայց պատրիարգն եւ գալ ընդ մեզ ոչ կամի,
զի նա սարսի ի վերայ ջուրց լինելի:
Նոքա եւ մեք մտաք ի մէջ նաւակի
եւ ասացաք քարշել զթիակքն հեզակի
եւ երկու կուրքն ի միասին զուգակի.
այնպէս գնացաք կապաւ սիրով մի տեղի:
Հէ՞ ի բնէ է մախանք չարին բանսարկուի՝
ոչ կամի սէր, որք լիցին մէջ ընկերի,
խառնի զորոմն ի մէջ յիստակ ցորենի,
որպէս գրի յԱւետարանն Մատթէի[7]:
Այսպէս սիրոյ քաղցրերց բանից ներ միջի՝
մեջ Տեառն իմոյ մէջ Յակոբայ վարժ գիտի,
ազգմամբ չարին առարկ իմն անկանի,
որոմնական սերման նըման, որ ասի:

Նոյն այս առթին լինի Յակոբն բաբունի,
դրդելով Տեառն իմոյ մեծի սօփեստի,
թէ՝ «դու լիջի՛ր երկաբնաց իբր տեղի,
եւ ես լինիմ Հայոց դասուցն երամի:

[էջ 69ա]
Դոյն օրինակ առարկեսցուք մին ըզմի,
բերցուք վկայս իւրաքանչիւր ըստ կարի,
տեսցուք՝ բանք մեր եւ պատասխան ու՞ր անգի,
զի մի՛ դատարկ չրջագայք մեր անցանի»:
Ետ պատասխան զվեհն իմ առ նա քաղցրալի,
ասէ՝ «չէ այժմ հակաճառումն առնելի,
զի է աւուրս Բարեկենդան հրճուալի,
գուցէ լիցի վերջ առարկմանս դառնալի»:
Բաբունին սէգ Յակոբըն այն փքալի
կարծէր լինիլ զվեհն իմ իւրեան կլանելի,
կրկին ժըտէ Տեառնէ իմմէ բըռնալի,
ասէ առնել հակաճառումն սակաւ մի:
«Ձեր կամք լիցի, - ասէ վեհն իմ պատուելի, -
ես Աստուծով տամ պատասխան ձեր բանի,
սակայն չէ՛ր պարտ այսօր այսպէս առնելի,
որպէս կամիք՝ կամք ձեր բարին եղիցի»:
Ուստի հրճուի բաբունին այն իւր սըրտի,
ասէ՝ «այսօր է յաղթանակ առնելի».
այնուհետեւ հակաճառեալ ըսկըսի
առ Տեառն իմոյ յոգնիմաստին սօփեստի:

[էջ 69բ]
Բաբունին իմ ետ պատասխան իւր բանի
Աստուածային շնորհօք ամէնն իւր տեղի,
յետոյ բերեալ կապէ զՅակոբն մեծ սեպի,
որ ոչ կարաց եւ խլրտալ անգամ մի:
Պարաւանդօք ցնցտելն աստի եւ անտի,
իւր սարկաւագն իւրեան վերայ ծիծաղի,
հարէ զապտակ սարկաւագին յոյժգնակի՝

մինչ զի գտակն ի վերայ ջուրցն անկանի:
Իսկ առ այս գործ սիրտ Տեառն իմոյ յոյժ նեղի,
ասէ առ նա. «ո՜վ իմ եղբայր պատուելի,
եթէ ունիս զվկայութիւն՝ բեր յայտնի,
ապա թէ ոչ՝ զի՞ բարկանաս սաստկալի»:
Սոյն տխրական սրտամնայ դառն բանի՝
ըսկըսեցաք երգել զտաղս քաղցրալի
առ ի դուրել զցասումն սրտից երկակի,
զի մի ժամ մեր բանակռուով անցանի:
Որ յետ դառնալ մեր ի պալատն հասելի՝
ի փսփսուկն յականջ Տեառն անկանի.
արդ պատրիարգն հաւան կենա եւ ոչ մի,
ասէ՝ «չէր պարտ դուք այդ այդպէս առնելի»:

[էջ 70ա]
Իւթ մախանաց գաղեալ մնայ ի սըրտի
առ Յակոբայ վարդապետին մեծակի,
յօրէ այնմիկ, որքան առ անդ մընալի,
խեթիւ հայէր առ Տեառն իմոյ մեծեղի:
Թեթեւակի Բարեկենդանս զրաւելի,
գնացաք ի քաղաքն Նիկոմիդեայ որ կոչի,
անդ արարաք ցնուիրակութիւնս չեշտակի,
ի մին ամսէն գործք մեր անդէն աւարտի:
Ելեալ անտի եւս անկաք մեր ուղղի,
հասաք ի քաղաքն ի Քէօթահեայ որ կոչի.
ի վեց շաբթէն անդ եւս գործք մեր կատարի,
յանդուստ դարձաք ի Պուրսայ քաղաք որ ձայնի:
Անդէն տեսաք զԱրհին այն մեծ րաբունի՝
բիւզանդացին զերկրորդ Ներսեսն Շնորհալի,
որ էր բերան զգիրս Սուրբս հոգելի՝
Աւետարան թէ Այսմաւուրք համայնի:
Մնացաք անդէն շաբաթս տասն բերկրալի,
վայելելով զսէր նորին ցանկալի,
մինչ ի վաղճան գործոյն մերոյ հասելի,
ապա ելեալ եկաք Զմիւռին մեծ թիմի:

[էջ 70բ]
Բայց մեր անդէն յաւուրս ութ անցելի
ի Թրակիոյ առաջնոր[դ]է գայ թուղթ մի,
ասէ. «ընդ ձեզ, որ կռեցի դաշին մի,
այժմ փութամ տալ կատարումն նոյն ուխտի:
Նոյն այս ուխտն է՛ Էջմիածին գընալի,
որ առաջի եղբայրութեանդ ուխտեցի,
այժմ պարտիս վասն իմ յաղօթս առնելի,
ահա գնամ՝ դու ողջ կացիր, նազելի»:
Որ մեր սկիզբն հասման Բիւզանդ քաղաքի,
ասաց առ մեզ զպատրիարգն բաբունի,
թէ՝ «եկեալ էր [Ա]մ[տ]սրտամայ ինձ թուղթ մի,
խնդրեալ էին, թէ կարգաւոր մեզ պիտի:
Տե՛ս Աստուծով առ Զմիւռին հասելի
եւ պատրաստեա՛ կարգաւոր մի յըղելի.
է՛ [Ա]մ[տ]սրտամ քաղաք վիճակ քո թիմի,
քահանայ մի յըղել առ անդ քեզ պարտի»:
Անդէն վեհն իմ պարտէր գիր մի գըրելի
առ Սուրբ Աթոռն Էջմիածին ցանկալի,
ի մէջ թղթոյն ինձ առաքելն իմ յիշի.
վասն այն Վեհրն գրէ առ իս նամակ մի:

[էջ 71ա]
Նոյնժամայն այն նամակն առ իս հասելի.
Տէրն իմ եւս տայ տոմսիկ մի հրամանի
երկուց Տէրանց իշխանութեամբ կրկնակի
եկի ի քաղաքն յԱմստրդամ որ կոչի:
Արդ՝ զայս լինի ի թիւ Փրկչին Յիսուսի՝
հազարերորդ եօթնհարիւրերորդի
երեսուն թիւ նաեւ երեք հետ լըծի
եւ յամսեանն դեկտեմբերի տասնեկի:
Իիւսեալ յըղէ յետոյ առ իս թղթիկ մի
զվեհն իմ Ղազար մեծ գիտնական բաբունի
շրջման թուոյն երեսներորդ չորրորդի,
փետրվարի ամսեանըն հինգերորդի:

Ուստի ասէ՝ «իմա՛, որդեակ զիմ բանի.
ի կողմանէ Թրակիոյ յաջորդի
ի յուխտ գնալն յէջմիածին հասելի,
ըզՄըշեցի Աբրահամ վեհն վաղճանի:
Բամեալ անդէն զմիաբանքն համայնի՝
ընտրեն իւրեանց Աբրահամըն Կրետացի
եւ ձեռնադրեն զկաթուղիկոս ամենի՝
թարց իմացմանց ոլորտ աշխարհ ընդհանրի:

[էջ 71բ]
Օրինակին որդւոյ Կիսին Սաւուղի՝
որոնել զէշն ընդ ընկերին մի տեղի[8],
գտանէ նա զօծումն Արքայ լինելի,
որպէս վերոյ յիշեալ այրըս տեսանի»:
Քանզի նա եւ չորս ամ տեւէ կենդանի
յէջմիածին Աթոռըն սուրբ ցանկալի,
դեռ կատարեալ չորրորդ ամըն ոչ զրաւի,
յաստի կենաց՝ յանանց կեանսըն ներգրաւի:
Վաղվաղակի զմիաբանքն համայնի
ժողովք առնին ամենեքեանք մի տեղի.
Թղթովք ընտրեն զերիս Արըս պատուելի՝
էջմիածնայ կաթողիկոս լինելի:
Իսկ առաջին՝ զպատրիարգն Սաղէմի,
եւ երկրորդըն՝ զՅովհաննէսն մեծ Պոլսի,
եւ երրորդն՝ զ Ղազարըն Ջահկեցի.
զայս երեքեանս էին խնդրեալք ընդհանրի:
Պնդեալ զմռօք՝ երբ զմահսարն հասանի
ի քաղաքըն Բիւզանդին մեծ որ ասի,
ի ձեռն մեծի պատրիարգաց, որք անտի,
որ Աստուծով Գրիգորն եւս անդ լինի:

[էջ 72ա]
Ապա անդէն ժողովք առնեն բազմակի
վարդապետօք, քահանայիւք համայնի.
նախ՝ հրաւիրեն զպատրիարգն Սաղէմի,

թէ՝ «դու լիջիր կաթուղիկոս ընդհանրի»:
Սակայն նա սոյն մեծապատուէս հրաժարի,
ասելով թէ՝ «չէմ այն պատուոյն արժանի,
չառնում յանձն զկեան իմ վաղուան մընալի,
զի ես ծեր եմ՝ մահն իմ կայ միշտ իմ դիմի»:
Ապա յետոյ առ հրաւիրեն բըռնալի
Յովհաննիսի պատրիարգին մեծ Պօլսի.
նա եւս չառնու յանձն պէս-պէս պատճառի,
զտկարութիւն միշտ բերելով առաջի:
Նաեւ ասէ՝ «չէ միշտ ի մէնջ դնելի,
պարտ է այժմ արեւելցի լինելի,
զի երեք արք նստան ի մէնջ Աթոռի,
պէս-պէս խարդախ անցեալ էր անդ ի միջի»:
Եթէ կամիք ըզ Ղազարըն Ջահկեցի,
նա է՛ արժան այսօր զնա առնելի,
այլեւ՝ է՛ նա ծնեալ ի նոյն գաւառի,
գուցէ զտրտունջ նոցին այսօր բաց բառնի»:

[էջ 72բ]
Ապա ասեն համագումարքն մի տեղի
ի մի բերան եւ ի մի սիրտ, մի հոգի.
«Կեցցէ զ Ղազարն Հայրապետ մեր Աթոռի՝
ըստ բանի Հօր պատրիարգիս մեծ Պօլսի»:
Լռիկ լինի մինչեւ ցայս վայր խօսողի
ըզ Պետրոսն, որ զ Քուլթուր անուանի,
որ էր յայնժամ նուիրակ եղեալ նոյն տեղի,
ասէ՝ «մի՞թէ չեմ ես ի նոյն արժանի»:
Բացասաստեն զպատրիարգունքն մի տեղի.
«դու ոչ, - ասեն, - այլ ընկեր քո եղիցի,
ոչ թէ ոք, զանձն որ ընծայէ, նա՛ լինի,
այլ ընտրութիւնն պարտ է Տէրամբ լինիցի:
Աստէն, - ասեն, - զանուն քո չէր ի թըղթի,
այլ էր զանուանս մեր երեքեանս մահսարի,
թէ զքեզ այժմ նստուցանեմք յԱթոռի՝
լինիմք ընդդէմ ընտրօղ մարդկանց ընդհանրի»:

Յայնժամ ժողովքն ընդ բազմութեան մի խրմբի,
ասեն՝ «բարուոք ասաց Հայր մեր պատուելի,
թէ ոք զինքն ինքեան արժան համարի
եւ այնպիսին ոչ է՛ բնաւին այր բարի»:

[էջ 73ա]
Ապա գնան իշխանքն ի դուռն Արքայի,
առնուն իսկոյն հրովարտակս հրամանի
սակս Ղազարու Տեառն իմոյ երջանկի՝
կաթուղիկոս Էջմիածնայ լինելի:
Յայնժամ Արքս երկուտասանս արքունի
հրովարտակօք յղեն Զմիւռին շեշտակի,
անդուստ առցեն զ Ղազարն վեհն իմ նազելի
եւ հասուսցեն ի Սուրբ Աթոռն ցանկալի:
Այլեւ յայտնեն զայս Տեառն իմոյ առաջի,
թէ՝ «դու ես մեր կաթուղիկոս ընդհանրի,
ահա յղեցաք ռոճիկ բազում, որ պիտի,
նաեւ՝ զԱրքս եւ զհրամանս Արքունի:
Յարուսցեալ արդ՝ իսկոյն գնասցես քո տեղի,
զի մի՛ գուցէ հասցէ վնաս Տան մեծի,
թէ պակսութիւն քեզ լինիցի մին իրի,
մեք պատրաստ եմք լցուցանել համայնի:
Տէր իմ յայնժամ սրտապնդեալ ի մըտի,
ոչ ընդդէմ կայ այնքան բազմաց խնդրողի.
յօժար սրտիւ ի յանձն առնու զլուծ մեծի՝
Տանըն Սրբոյ լուսահիման Միածնի:

[էջ 73բ]
Էականի կարողութեամբ վեր կանգնի
զվեհն իմ Ղազար եւ երջանիկ բաբունի,
բազում արամբք ուղեւորօք պատրաստի,
ելեալ ի Զմիւռնոյ առ ի գընալ ըսկըսի:
Ընթանան խումբք ուղեւորել ընդ վեհի,
ոտանաւորք եւ ձիաւորք ըզհետի՝
հայք, հոյնք, ֆռանկ, իւրաքանչիւր ըստ կարգի,

տրամ ընթացիւք ըստ սարասի արքայի[9]:
Տէրն իմ իւրովք պաշտօնէիւք ամենի,
նաեւ՝ մարդկամբք եւ առաքչօք արքունի,
այլեւ՝ եկօք յարեցելովք ընդհանրի՝
գնացեալ ի մերձ յէջմիածին հասանի:
Կազմին յայնժամ միաբանքըն ըստ կարգի.
եպիսկոպոսք եւ վարդապետք ըստ կերպի,
սարկաւագուք եւ տիրացուք ըստ ձեւի՝
բուրվառանօք, անուշ խնկօք պէսպիսի:

[էջ 74ա]
Այլք խաչվառօք մոմեղինօք անթուելի
զոյգ զոյգ կանգնեալ ճանապարհի դէմ դիմի՝
հարմամբ զանկակս խաղացուցմամբ ձնծղայի
ընդառաջեն վեհին իմոյ Տեառն մեծի:
Րամեալք այսպէս անթիւ մարդկամբ բազմակի,
քաղցր հնչմամբ նուագարանօք ցնծալի,
տարեալ պատուով նստուցանեն յԱթոռի,
ասեն՝ «Կեցցէ Վեհիդ մերոյ ամք կենի»:
Իսկոյն յայնժամ Աթոռատեարցն ամենի
իւրաքանչիւր առ սուրհանդակս առաքի,
այն, որ մերձ էր Վաղարշապատ գաւառի՝
արագ գայցեն առ օծանել նոր Վեհի:
Իսկ եւ նոքա ամենեքեան մի տեղի
գան գումարեն ի մէջ մեծի հանդիսի,
ապա կանխեն առնել զպաշտօնս հրաշալի
յերեկոյէ մինչեւ ի լոյս կիրակի:
Իւսին զգեստիւք ի յառաւօտն հասելի
եպիսկոպոսք եւ կարգաւորք համայնի,
բայց քաղցրաձայնքն ի նոցանէ անջատի
սկսեն նոքա զխորհուրդ խորհինս անհասի:

[էջ 74բ]
Բաբբի վեհն իմ յայնժամ պայծառ զարդարի,
ապա եկեալ երկնագումար ատենի,

յետ մեղայէն ձեռնալուայէն ըզկընի,
ելեալ կանգնի սուրբ սեղանոյն առաջի:
Ուստի սկսեն գեղգեղանօք մեղեդի՝
մինչեւ օծման խորհուրդն վերայ հասանի,
ապա յայնժամ քաղցրաձայնքն մի տեղի,
երգեն զքարոզն Աստուածային շնորհի:
Իւսեալք ըզվեց եպիսկոպոսք մի կողմի,
եւ վեց եւս կանգնին եւ այլ միւս կողմի՝
առեալ ըզչիշն զսրբալոյս մեռոնի,
ածեն մի տեղ ի սուրբ գագաթն նոր Վեհի:
Մերձ աւարտման պատարագին հրաշալի,
շրջէ զՎեհն զերեսըն իւր ատենի,
ասէ՝ «ո՛վ հարք եւ սրբազանք Սուրբ Ուխտի,
լուարուք փոքր տառապելոյս ձեր Դիտի:
Փառացս յայսմիկ ես ո՛չ էի արժանի,
արդ, փառք պատիւ բարերարի Տեառն լիցի,
այլեւ սրբոց հարցդ աղօթից համայնի,
հաւատամ ես, հասանիլ ինձ այսմ շնորհի:

[էջ 75ա]
Որովհետեւ պատրիարգունք մեր ազնի
չենթադրեցին զուսս իւրեանց այս լուծի,
այլ ձգեցին հարկադրելով զիմ վըզի,
որ ինձ չէր պարտ բանին նոցին կալ դիմի:
Քանզի ապա զի՞նչ այլ ունեմ ասելի,
որ անցեալքն չէ մարթ յետըս բերելի
խնդրի ի ձէնջ վասն իմ յաղօթս առնելի,
զի կարիցեմ տեւել ի ներքս սոյն Ուխտի»:
Ըէնականի ամի Փրկչին Յիսուսի
հազար եօթն հարիւրերորդ թուականի
երեսուն եւ ութ այլեւս թիւ զհետ լըծի
փետրվարի ի տասնեւութն զայս գործի:
Իսկ արդ այժմիկ կատարեցան բանք նախնի,
որք ասացին Կաթուղիկոս լինելի
սակս Ղազարու Տեառն իմոյ երջանկի,

ահա եղեւ լրումն բանից կանխասի:
Շնորհալի էր Հայրապետս այս ուժգնակի,
նաեւ՝ բազմաց ամենեցունց գովելի.
յորժամ կանգնել քարոզ ասել ի դասի՝
զարմանք կալնոյր սիրտ լըսողաց ամենի:

[էջ 75բ]
Արդ սա էր մեծ մառանապետ բուն բանի
ունէր գանձեալ մառանն բարեաւ պէսպիսի,
թէ ե՞րբ լինէր կամ ու՞մ պիտոյ լինելի՝
հանէր եւ տայր առատասիրտ լիալի:
Տաֆան էր սա եղեմատունկ պարտիզի,
զկորդացեալս կակղէր խրատիւք քաղցրալի,
ապա ցանէր սերմն բանին քարոզի,
լինէր պարարտ ի սիրտ մարդոյն պտղալի:
Էր ամպ ջրաբարձ Աստուածային շնորհի,
քարոզութեամբ մշտացողող համայնի.
է՛ բարեխօս այժմ առ մեզ ընդհանրի՝
որդւոյս մերոյ Լուսաւորչի Գրիգորի:

ՎԵՐՋ

Ասացաւ եւ գրեցաւ ի թուոյ Փրկչին 1756
ներ Ամսեանն Դեկտեմբերի 18. ընդ
Հովանեաւ Սուրբ Հոգի եկեղեցւոյն
Հայոց յԱմստերդամայ:

[էջ 76ա]
Ի թուոյ Փրկչին 1760 եւ մայիսի առաջնումն
ասացաւ զայս ներբողեանս վասն կարօտի
եւ սիրոյ Սրբազանի Տեառն իւրոյ Ղազարու
կաթողիկոսին ամենայն Հայոց. եւ բացայայտէ
զտանագլուխքն, թէ ո՞վ ոք է:

Ի մէջ տանէն յարեւելեան յայտնեցար,
օծմամբ հոգւոյն Աստուածային պատուեցար,
յաջորդ Սրբոյ Լուսաւորչին ընտրեցար՝
ո՛վ սրբազան հայր իմ Ղազար ցանկալի:

Ոսկիափայլ բանիւք սրբովք դու լցար,
քարոզութեամբ դեր, քան զարքին փայլեցար,
վերծանողաց բազմաց գիտնոց հրաշացար՝
ո՛վ սրբազան:

Հայոց Մեծաց կաթողիկոս կարգեցար,
արդեամբ առատ, քան զնախնիս պանծացար,
արժանաւոր փառօք պատուովք ճոխացար՝
ո՛վ սրբազան:

Ներկուռ վարժմամբ եւ արուեստիւք կրթեցար,
պէս պէս շնորհըս դատողական ըստացար,
նուաճելով զըստահակըս զօրարար,
ո՛վ սրբազան:

(76բ)
Ի մէջ սրբոյ եկեղեցւոյ ջահ լուցար,
ճոխ իմաստիւք անշէջ կանթեղ վառեցար,
Սրբոյ Հոգւոյն քաղցր կամաց կազմեցար,
ո՛վ սրբազան:

Էին աջով զայն քան շնորհաց տիրացար,
եւ գանձապետ գանձուց Հոգւոյն դու ցուցար,
վճիտ խրատիւք բազում որդիս շահեցար,
ո՛վ սրբազան:

Անդուլ սիրով եւ հաւատով վիմացար,
ընդ հերձուածողս բանիւք գրքօք զինեցար,
բամից մերոց ուղղափառաց գովեցար,
ո՛վ սրբազան:

Դառն կենօք յայսմ աշխարհի դու կեցար,
կամապաշտից, սոպերց մարդկանց ճանճրացար,
Արեանարբու հինից չարեաց վշտացար,
ո՜վ սրբազան:

Պինտ յօժարիւք թողուլ զաշխարհս ցանկացար,
վասն այն նախքան փոխիլն յաստիս իմացար,
Ելեալ ի մարմնոյդ ընդ յերկինս բարձրացար,
ո՜վ սրբազան:

(77ա)

Տեառնական մաքուր մարմնով ննջեցար,
ի սուրբ գաւիթըս Գայիեանեանց թաղեցար,
Էին լուսոյ գանձարանին գանձեցար,
ո՜վ սրբազան Հայր իմ Ղազար ցան
կալի, բարեխօսեա առ իմ
գերոյս ողբալի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Յոհնն*, Ե, 35:
[2] *Եսայիայ*, Ա, 9:
[3] Կորնթ., Ժ, 19:
[4] Սաղմոս, ՃԻԵ, 6:
[5] Տիմթսի, Բ, 5:
[6] Եբրայեց, ԺԲ, 6:
[7] Մատթսի, ԺԳ, 28:
[8] Թագավորութիւններ, Ա., 9, 3:
[9] «Սարասի արքայի» = սերասքեր, այսինքն՝ գլխավոր հրամանատար:

ՀԱՎԵԼՎԱԾ Ե

ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (1722)[1]
Գրիչ՝ Մխիթար աբեղա

Ի թուականութեան հայկազեան տումարիս ՌՃՀԱ (1722) յոյժ դառնակսկիծ եւ նեղ ժամանակիս, ես սուտանուն եւ անարժան կրաւնաւոր Մխիթար միաբան աբեղայս սուրբ մենաստանիս, որ ի վերայ ծովապատ կղզոյ, Լիմ Անապատ կոչելոյ, աչաւք իսկ իմովք տեսի, թէ գարնանաբեր կենսանորոգ յեղինակիս, թէ որպիսի հաւաքումն կատարեցաւ ի վերայ սուրբ կղզոյս՝ խորհելոյ եւ մտածելոյ եւ ճար-ճարնանք գտանելոյ վասն ազատութեան տառապեալ եւ ողորմելի ազգիս Հայոց:

Առաջնորդք եւ վարդապետք եւ քահանայք եւ իշխանք ամրակառոյց քաղաքիս Վանայ, մեծամեծք գաւառաց Վասպուրականի, Մելիքք յերկրաց Քաջբերունեաց եւ Բզնունեաց, գիւղապետք համայն գիւղօրէից հաւաքեալ եղեն ի ծովապատ սուրբ մենաստանս:

Ես սուտանուն Մխիթար աբեղայս՝ անարժանաբար ի միտս առի զրոյցք գաղտնի եւ ծածկախորհուրդս: Քաջահամբաւ եւ արիասիրտ վարդապետ մի՝ յերկրէն Ռուշտունեաց Տէր Ներսէս անուանեալ, յոյժ յուզեալ եւ լալագին պատկերացոյց դառնակսկիծ վիճակս համօրէն ազգիս Հայոց եւ յայտնեաց ցնծագին՝ թէ այր մի յերկրէն Սիւնեաց Դաւիթ բէկ անուանեալ, զօրաշարժութիւն արարեալ ի՛ցէ վասն հալածելոյ նեղիչք եւ կշտամբիչք մեր, **միտս ունելով ազատագրելոյ արիւնածուփ զաշխարհն Հայաստան:**

Արդ, ով բարեմիտ եւ հայրենապաշտ ժողովականք, շրջեսցէք գաւառս եւ ի կողմանս յերկրին ձերոյ, խրախուսեսցէք ժողովուրդս ձեր, որ մրափեալ է ի խոր խաւարի եւ տանջարանաց, զի թոթափեսցին զլուծ անիրաւանց բռնութեանցս, եւ յորժամ մեք առաքեսցուք զհրաւէր մարտի, բառնան ձայն ապստամբութեան ընդդէմ մարդակեր եւ խաչահալած թշնամեաց մերոց:

Զկնի աւարտման զայս քաղցրալուր ճառասացութեանս՝ ժողովականք յոյժ վշտացեալ արտասուէին լռելեայն: Եւ եղեն զրուցանողք բազումք, կարծիք բազմազանս, առաջարկս անհամարս: Յետ այնորիկ՝ իշխանք եւ պարոնք եւ Մելիքք եւ տանուտէրք յօժարեսցին վասն պատերազմի հաւաքելոց զառնս բազումք քաջակորով եւ կռուարար, եւ հայթայթելոյ ուտեստս կռուապաշարոյ, սայլք եւ նժոյգս բազումս եւ պիտոյս բազմազանս, դամուրս (իմա՝ երկաթ, Ա.Ա.) եւ նաւս եւ բուրդս եւ ցորեանս եւ ոչխարս:

Ամենայն [օր] երիցս [ան]գամ միաբանք սբ. մենաստանիս մեծարեն պատգամաւորս աղու հացիւ եւ ընտիր ուտելեօք: Զկնի զայս հաւաքման, զոր կատարեցաւ երիցս, յօթներրորդ օր՝ նաւ մի եկեալ ի գեղջէ Աւանց կոչեցելոյ եւ գիշեր մի լուսնակազարդ՝ պատգամաւորք տեղաւորեսցին ի մէջ նաւին եւ ուղեւորեսցին գծովապատ եւ զանառիկ կղզին յԱղթամար՝ առ ոտս վեհապատիւ Տէր Յովհաննէս կաթողիկոսի Հայոց Ջորեցւոյ, որում յայտնեալ իցեն զմեծախորհուրդ ձեռնարկս իւրեանց: Աստուածընտիր կաթողիկոսն զՏէր Յովհաննէս համաձայնաբար յօժարեալ իցէ շնորհել զկամս իւր, օրհնելով զպատգամաւորս, որք առաքինաբար զոհելոյ յանձն առեալ իցեն զկեանս իւրեանց, վասն ազատելոյ յաշխարհս Վասպուրական ի լուծոյ բռնաւորաց եւ փաշաներաց եւ բեկերաց եւ աղաներաց:

Տէր Աստուած կատարեսցէ զգործս ձեռաց իւրեանց, տայցէ յաջողութիւն նոցա գործելոյ եւ ազատելոյ ծովազարդն եւ գեղատեսարան զաշխարհն մեր Վասպուրական, յորում յայսմ ժամանակի չէն եւ պայծառ մնացեալ են բազում վանքս եւ մենաստանս եւ եկեղեցիս եւ մատուռս, բազում գաւառս եւ անհամար գիւղօրայս:

Արդ, որ հանդիպիք զայս յիշատակարանիս, զկնի ընթեռնելոյ՝ յիշեցէք սուտանուն կրոնաւօրս, Մխիթար աբեղայս, որ գրեաց սա յուսոյ սրտի եւ լալոյ աչաւք, եւ ասասցէք՝ «Աստուած լուսաւորեսցէ զհոգին իւրոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Սույն հիշատակարանը հրատարակել ենք, թարգմանել անգլերեն ու մանրամասն քննել հետևյալ հոդվածում՝ Armen M. Ayvazyan**, "The Secret Meeting of Armenians on Lim Island in 1722 (Concerning the Possible Involvement of Western Armenians in an All-Armenian Liberation Movement)," in **Janos M. Bak and Peter Banyo**, eds., *Issues and Resources for the Study of Medieval Central and Eastern Europe: Reports and Articles* (Department of Medieval Studies, Central European University and the Committee on Centers and Regional Associations of the Medieval Academy of America: Budapest-Cambridge, MA, 2001), pp. 59-68; **լույս է տեսել նաև՝** *Iran and the Caucasus*, vol. 5 (Tehran: International Publications of Iranian Studies, 2001), pp. 85-92:

Ց Ա Ն Կ Ե Ր

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՁԵՌԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԴԻՎԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան

Ձեռագրեր՝
No. 350, 678, 698, 789, 883, 1534, 2121, 2291, 2347, 2503, 2766, 3531, 7304, 9120, 9245, No. 268 դրսի ժապավենը:

Դիւանական նյութեր՝ Կաթողիկոսական դիվան,
թղթապանակ 1, վավերագրեր 14, 42, 43, 53
թղթապանակ 1գ (պարսկերեն, արաբերեն, օսմաներեն վավերագրեր), վավերագրեր 306-311, 313, 314, 321. ցուցակ No. 29, վավերագիր 291, 330:
թղթապանակ 5, վավերագիր 12.
թղթապանակ 243, վավերագիր 5.
թղթապանակ 244, վավերագրեր 244, 245:

ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ
ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՀԱՅԵՐԵՆ

Աբրահամ Երևանցի, *Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի:* Հրատարակեց Սահակ Ճեմճեմեան. Վենետիկ-Ս. Ղազար, 1977:

Աբրահամ Կրետացի, *Պատմութիւն:* Քննական բնագիր, ռուս. թարգմ., առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973:

Աբրահամյան, Աշ., «Դավիթ Բաղիշեցու տարեգրությունը և նրա արժեքը հայ մատենագրության մեջ». - *Էջմիածին,* 1946, VIII-X:

Ալիշան, Ղեւոնդ. *Շնորհալի եւ պարագայ իւր:* Վենետիկ-Ս. Ղազար, 1873:

Ալիշան, Ղեւոնդ. *Կամենից. Տարեգիրք Հացոց Լեհաստանի եւ Ռումենիոյ հաւատաչեայ յաւելուածովք:* Վենետիկ-Ս. Ղազար, 1896:

Ալպոյաճեան, Արշակ. *Տպագրութեան արուեստը եւ հայք.* անտիպ, Երևանի Եղիշէ Չարենցի անվան գրականության թանգարան:

Առաքել Դաւրիժեցի, *Գիրք պատմութեանց:* Աշխատասիրությամբ՝ Լ. Ա. Խանլարյանի. Երևան, 1990:

Արիստակես Լաստիվերտցի, *Պատմություն:* Թարգմանությունը՝ Վ. Ա. Գևորգյանի, Երևան, «Հայաստան», 1971:

Գանձարան հայ հին բանաստեղծության: Աշխատասիրությամբ՝ Պողոս Խաչատրյանի: Երևան, «Հայագիտակ», 2000:

Ակինեան, Ներսէս. *Բաղէշի դպրոցը (1500-1704):* Վիեննա, 1952:

Ակինեան, Ներսէս. *Երեմիա Զէյլէպի Քէօմիւրճեան. կեանքն եւ գրական գործունէութիւնը:* Վիեննա, 1933:

Ակինեան, Ներսէս. «Ստեփանոս վրդ. Լեհացի». - *Հանդէս Ամսօրեայ, 1912:*

Աղաւնունի, Մկրտիչ. «Կիլիկիոյ հայ արքունիքին եւ հայ եկեղեցականութեան մասին ԺԳ դարուն օտար ճանապարհորդի մը տեղեկութիւնները». - *Սիոն, 1933:*

«Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսի կտակ-շրջաբերականը (1708 թ. փետրուարի 20)». - *Ազգասէր Արարատեան,* Կալկաթա, 1849, No. 12:

Ամատունի, Կարապետ. «ԺԷ դարու երեւելի վարդապետներ». - *Բազմավէպ,* 1987:

Ամատունի, Կարապետ. «Սահակ վրդ. Մակուեցի». - *Բազմավէպ,* 1983. նույն հոդվածը համառոտված տպագրվել է *Բազմավէպ*-ում, 1988:

Ամատունի, Կարապետ. «Յակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոս Էջմիածնի (1600-

1800)», Մաս Ա-Բ. - *Բազմավէպ*, 1992-1993:
Այվազյան, Ա. Մ., «1720-ական թթ. Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից (սկզբնաղբյուրների համադրման փորձ)». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1990, No. 2 (129):
Այվազյան, Ա. Մ., «Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները». - *Պատմա-բանասիրական հանդես*, No. 3 (130):
Այվազյան, Ա. Մ., «Իրադարձությունները Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1990, No. 4 (131):
Այվազյան, Ա. Մ., «Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1991, No. 1 (132):
Այվազյան, Ա. Մ., «Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թվականին». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1991, No. 2 (Հ. 133):
Այվազյան, Ա. Մ., «Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությանը՝ Բջնո, Հաղբատի, Ս. Թադեոսի և Տաթևի արքեպիսկոպոսների հավանություն տալու կանոնը (հավաստիությունը, առաջացման ժամանակն ու հանգամանքները)». - *Հայոց եկեղեցի և պետություն:* Երևան. Հայկական հանրագիտարանի հրատ., 2000:
Այվազյան, Ա. Մ., *Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր):* Երևան. Մատենադարան, «Արտագերս», 2000:
Այվազյան, Ա. Մ., «Հայոց կաթողիկոսի ընտրության հանգամանքները ԺԵ-ԺԷ դարերում (երկու հնատիպ վավերագրերի քննություն)». - *Հանդէս Ամսօրեայ,* հունվար-դեկտեմբեր 2000, No. 1-12:
Այվազյան, Ա. Մ., *Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը (հայկական և եվրոպական աղբյուրների համեմատական քննություն):* Երևան. Մատենադարան, «Արտագերս», 2001:
Այվազյան, Ա. Մ., «Հայ եկեղեցու նվիրական կառույցը ԺԶ-ԺԸ դարերում». - *Կանթեղ* (ՀՀ ԳԱԱ Հումանիտար գիտությունների բաժանմունքի Գիտական հոդվածների ժողովածու), No. 6, 2001 (Երևան, «Ասողիկ» հրատ.):
Այվազյան, Ա. Մ., «Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսը (կթղ. 1715-1725) և հայ ազատագրական շարժումը». - *Էջմիածին*, No. Զ-Է (հունիս-հուլիս), 2002:
Անանեան, Պօղոս. «Ոսկան վարդապետի նամականին». - *Բազմավէպ*, 1967:
Անասյան, Հ. Ս., *Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դարեր:* Հ. Ա., Երևան, 1959:
Անասյան, Հ. Ս., *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում:* Երևան, 1961:

Աստվածաշունչ մատյան:
Արեւշատյան, Ս., «Թովմա Աքվինացի». - *Հայկական սովետական հանրագիտարան*, Հ. 4, Երեւան, 1978:
Բամպուքճեան, Գ., *Յովհաննէս պատրիարք Կոլոտ (1678-1741) եւ իր աշակերտները:* Ստանպուլ, 1984:
Բամպուքճեան, Գ., *Յակոբ Նալեան պատրիարք 1706-1764:* Ստանպուլ, 1981:
Բամպուքճեան, Գ., «Մարտիրոս պատրիարք Ղրիմեցի (1630°-1683) եւ իր նորայայտ չափածոյ յիշատակարանը». - *Բազմավէպ*, 1994:
Գալեմքեարեան, Գրիգորիս. *Կենսագրութիւն Սարգիս Արքեպիսկոպոսի Սարաօեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք:* Վիեննա, Մխիթարեան տպ., 1908:
Գալեմքեարեան, Գ., «Թադէի երիցու պատմական մէկ գործը». - *Հանդէս Ամսօրեայ*, 1887:
Գալեմքեարեան, Գ., «Ո՞վ է Ջուղայեցի Յակոբ Դ կաթողիկոսին յաջորդը». - *Հանդէս Ամսօրեայ*, 1912:
Գէորգեան, Գառնիկ. «Ճշտումներ Մինաս Ամթեցիի մասին». - *Բազմավէպ*, 1966, No. 7-8:
Գրիգոր Տաթեւացի. *Գիրք հարցմանց:* Կոստանդնուպոլիս, 1729:
Գրիգոր Տաթեւացի. *Ընդդէմ Տաճկաց:* Ուսումնասիրեց եւ հրատարակեց՝ Բաբգէն Կիւլէսէրեան. Վիեննա, 1937:
[Գրիգոր Շղթայակիր]. «Ստորագրութիւն ուղեւորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի Պատրիարքի Ս. Աթոռոյս՝ յԵրուսաղէմի ի Կ. Պոլիս». - *Սիոն*, 1866:
[Գրիգոր Շղթայակիր]. «Նամականի Գրիգոր Շղթայակիր պատրիարքի». - *Սիոն*, 1971:
Գրիգորյան, Վ., «Հովսեփ Էմինի և Հովսեփ Արղությանի անտիպ նամակները (1791-1792 թթ.)». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1990, No. 4:
Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցուոց»: Աշխատասիրեց Սամուէլ Արամեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1978:
«Դանիէլին կաթողիկոս ճանաչելու եւ Դաւթին մերժելու շրջաբերականը». - *Արարատ*, 1893:
Դիւան հայոց պատմութեան: Աշխատասիրութեամբ՝ Գիւտ Աղանեանցի: Գիրք Գ, Թիֆլիս, 1894:
Դիւան Հայոց պատմութեան: Աշխատասիրութեամբ՝ Գիւտ Աղանեանցի: Գիրք Դ, Թիֆլիս, 1899:
Դիւան հայոց պատմութեան: Գիրք Ե՝ «Դանիէլ կաթողիկոս /1800-1808/»: Աշխատասիրութեամբ Գ. Աղանեանցի, Թիֆլիս, 1902:
Դիւան հայոց պատմութեան: Աշխատասիրութեամբ՝ Գիւտ Աղանեանցի: Գիրք ԺԱ, Թիֆլիս, 1913:

Եղիա Կարնեցու դիվանը: Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության: Առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի: Երևան, Միտք հրատ., 1968:
Եսայի Հասան-Ջալալեան, *Պատմութիւն համառօտ Ադուանից երկրի:* Երուսաղէմ, 1868:
Զամինեան, Աբրահամ. *Հայոց եկեղեցու պատմութիւն:* Մասն Բ, Նոր Նախիջեւան, 1909:
Զարբհանալեան, Գ., *Հայկական մատենագիտութիւն:* Վենետիկ, 1883:
Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը: Երևան, 1938:
Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն: Վաղարշապատ, Գիրք Ա-Գ 1870:
Մեսրոպ Թերզեան. *Յակոբ Դ. Ջուղայեցի (1655-1680):* Պէյրութ, 1956:
Թովմա Մեծոփեցի. *Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց:* Աշխատասիրութեամբ՝ Կարապետ Շահնազարեանի, Փարիզ, 1860:
Թովմա Մեծոփեցու յիշատակարանը: Հրատարակեց իւր առաջաբանով Կարապետ Կոստանեանց. Թիֆլիզ, 1892:
Թորոսեան, Յովհաննէս. *Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ:* Վենետիկ, 1901:
Թումանյան, Բ. Ե., *Տոմարի պատմությունը:* Երևան, 1972:
ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն Ա (1401-1450 թթ.): Կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1955:
Ինճիճեան, Ղուկաս. *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի:* Հ. Գ, Վենետիկ, 1835:
Իշխանյան, Ռաֆայել. *Հայ գրքի պատմություն:* Հ. 1, Երևան, 1977:
Իշխանյան, Ռաֆայել. «Սահակ Ճեմճեմյան. Մարսիլիո հայկական տպարանը». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1988, No. 1:
Լեո, *Երկերի ժողովածու. Հայոց պատմություն:* Երրորդ հատոր, Գիրք երկրորդ: Երևան, 1973:
Խաչատուր Ջուղայեցի, *Պատմութիւն պարսից (ԺԸ դար):* Աշխատութեամբ՝ Բ. Աղաւելեանցի. Վաղարշապատ, 1905:
Խաչիկյան, Լևոն. «Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը». - *Բանբեր Մատենադարանի*, 1973, No. 11:
Խաչիկյան, Լ. Ս., «Հակոբ Ջուղայեցու կտակը». - *Պատմա-բանասիրական հանդես*, 1966, No. 4:
Խոստիկեան, Միսաք Թ., «Վերածնութեան շրջան - ԺԷ դարու վերանորոգիչ կաթուղիկոսները». - *Արարատ*, 1902:
[Խոսրովու Անձեւացի]. *«Մեկնութիւն աղօթից»: Արարեալ երանելւոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի եւ այլ սրբոց վարդապետաց:* Կ. Պոլիս, [մոտ. 1730-1734]:

Կանոնագիրք Հայոց: Աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի: Հ. Ա, Բ, Երևան, ԳԱ Հրատ., 1964, 1971:
[Կարապետ Ուլնեցի]. *Կարապետի կաթողիկոսի Ուլնեցւոյ Վարք ինքնագիր:* Հրատարակեց Սահակ Ճեմճեմեան. - *Բազմավէպ*, 1978:
Կարապետյան, Մ. Մ., Է. Խ. Թաջիրյան, «Էջեր XVII դարի վերջի Նոր Ջուղայի պատմությունից». - *Բանբեր Երևանի Համալսարանի*, 1998, No. 2 (95):
«Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի Հայոց Կ. Պոլսոյ». - *Արարատ*, 1874:
Կիրակոս Գանձակեցի. *Պատմութիւն հայոց:* Աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի: Երևան, ԳԱ Հրատ., 1961:
Կիւլէսէրեան, Բարգէն. *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը):* Անթիլիաս, 1939:
Կիւլէսէրեան, Բարգէն. *Կոլոտ Յովհաննէս պատրիարք:* Վիեննա, 1904:
Կիւլէսէրեան, Բարգէն. *Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից:* Անթիլիաս, 1957:
Կիւլէսէրեան, Բարգէն. *Վարդապետութեան աստիճանները հայ եկեղեցւոյ մէջ:* Անթիլիաս, 1980:
Կղեմէս Գալանոս, *Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ:* Հ. Ա, Հռոմ, 1650:
Հայելի վարուց: Աշխատասիրությամբ Քնարիկ Տեր-Դավթյանի. Երևան, 1994:
Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.): Հ. Գ: Կազմեց Վազգեն Հակոբյան. Երևան, 1984:
Հայոց նոր վկաները. 1155-1843: (Գիտական հրատարակութիւն): Աշխատասիրությամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի: Վաղարշապատ, 1903:
Հացունի, Վարդան. *Կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն պատմութեան մէջ:* Վենետիկ-Ս. Ղազար, 1930:
Հրավեր ողջամտության: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1993:
Ղազար Ջահկեցի, *Գիրք աղօթից որ կոչի՝ «Աստուածաղերս»:* Կ. Պոլիս, 1742-1744:
Ղազար Ջահկեցի, *Գիրք աստուածաբանական, որ կոչի «Դրախտ ցանկալի»:* Կ. Պոլիս, 1733:
Ղազար Ջահկեցի, *Գիրք նորաբոյս, որ կոչի «Երգարան»:* Կ. Պոլիս, 1737:
Ղազիկեան, Ա., *Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի:* Վենետիկ, 1909-1912:
Ղաֆադարյան, Կարո. *Հաղբատ:* Երևան, 1975:
Ճեմճեմեան, Սահակ. «Նոր նիւթեր Կ. Պոլսոյ երջանկայիշատակ պատրիարք Յովհաննէս Կոլոտի մասին (քաղուած Ս. Ղազարի դիւանէն)». - *Բազմա-*

վէպ, 1978:
Ճեմճեմեան, Սահակ. *Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը:* Վենետիկ-Ս. Ղազար, 1980:
Ճեմճեմեան, Սահակ. *Մարսիլիոյ հայկական տպարանը:* Վենետիկ-Ս. Ղազար, 1986:
Ճեմճեմեան, Սահակ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ:* Հ. Դ, Վենետիկ-Ս.Ղազար, 1993:
Ճեմճեմեան, Սահակ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ:* Հ. Ե, Վենետիկ-Ս.Ղազար, 1995:
Ճեմճեմեան, Սահակ. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ:* Հ. Զ, Վենետիկ-Ս.Ղազար, 1996:
Ճեմճեմեան, Սահակ. *Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հռոմը:* Վենետիկ-Ս. Ղազար, 2000:
Մագսուտյան, Գրիգոր. *Ընտրեալդ յԱստուծոյ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնը:* Երեւան. «Նաիրի», 1995:
Մանկունի, Վահրամ. «Կրօնական պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք». - *Արարատ*, 1874:
Մանր ժամանակագրություններ ԺԳ-ԺԸ դարերի: Կազմեց Վ. Ա. Հակոբյան, Հ. Ա-Բ, Երևան, 1951-1956:
Մաշտոց ձեռնադրութեան կղերիկոսաց, սարկաւագաց եւ քահանայից: Վաղարշապատ, 1876:
Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի: Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունցյան, Փ. Անթաբյան, Հ. Բ, Երևան. ՀԳԱ հրատ., 1970:
Մարտիրոսյան, Ա.Ա., *Մարտիրոս Ղրիմեցի:* Երևան, 1958:
[Մինաս Փերվազեան]. *Վարք գերապատիւ Մինասայ արքեպիսկոպոսին Զմիւռնիոյ գրեալ համառօտիւ ի դիմաց իւրոց:* Մատենադարան Մխիթարեանց ի Վենետիկ (Ս. Ղազար), ձեռագիր 2660:
Մինասեան Լ., «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակը եւ մի քանի նորայայտ գրքեր ու այլ ծանօթութիւններ». - *Հասկ*, 1970:
Մինասեան Լ., *Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972)*: Նոր Ջուղայ, 1972:
Միրզոյան, Հ. Ղ., *XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն:* Երևան, 1983:
Մխիթար Գոշ, *Գիրք Դատաստանի:* Աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975:
Մխիթարեան, Ստ., *Ստորագրութիւն հռչակաւոր վանաց Ս. Գեորգայ որ ի Մուղնի:* Դաւրէժ, 1889:
Մովսէս Խորենացի. *Պատմութիւն Հայոց:* Քննական բնագիրը և ներածու-

թյունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի (նմանահանություն): Լրացումները՝ Ա. Բ. Սարգսյանի. Երևան, 1991:
Մսերեանց, Մսեր. *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէոնէ մինչ ցՅովհաննէս Ը (1763-1831):* Մոսկուա, 1876:
[Մսերեանց, Մսեր]. «Մովսէսի Բջնեցւոյ առեղծուած զգրոյ». - *Ճռաքաղ*, 1861-1862:
Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցի, *Գիրք որ կոչի Սրբազնագործութիւն:* Մադրաս, 1812:
Յովհաննէս Պատկերահան, *Նամականի:* Աշխատասիրեց Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1988:
Յովհաննիսեան, Աշ., «Յակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը եւ տաճկահայ նուիրակութեան խնդիրը». - *Արարատ*, 1915 (փետրուար-մարտ):
Յովհաննիսեան, Աշ., *Պետրոս դի Սարգիս Գիլանէնց:* Ս. Էջմիածին, 1916:
Յովհաննիսեան, Աշ., *Հայ-ռուս օրիենտացիայի խնդիրը:* Էջմիածին, 1921:
Հովհաննիսյան, Աշ., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության:* Գիրք Ա, Երևան, 1957:
Հովհաննիսյան, Աշ., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության:* Գիրք Բ, Երևան, 1959:
Յովսէփեան, Գարեգին. «Թովմա Մեծոփեցու կեանքը (կենսագրական նոր նիւթերով)». - *Արարատ*, 1914:
Նազարյան, Շուշանիկ. *Ողբի և սթափման բանաստեղծություն:* Երևան. ԳԱ հրատ., 1992:
Նալեան, Յակոբ. *Վէմ Հաւատոյ:* Կ. Պոլիս, 1733:
Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն:* Վաղարշապատ, 1898:
Նշանեան, Մեսրոպ. *Օրագրութիւն Երեմիա Չլէքպի Քէօմիւրճեանի:* Երուսաղէմ, 1939:
Նոր բառգիրք Հայկազեան լեզուի: Հ. Ա-Բ, Վենետիկ, 1837:
Շահխաթունեանց, Յով., *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառաց Այրարատոյ:* Հ. Բ, Վաղարշապատ, 1842:
Ոսկանյան, Ն. Ա., Քռ. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան. *Հայ գիրքը 1512-1800 թթ.: Հայ հնատիպ գրքի մատենագիտություն:* Առաջաբանը՝ Ն. Ոսկանյանի, խմբագրությամբ՝ Ռ. Ա. Իշխանյանի, Երևան, 1988:
Ոսկեան, Համազասպ. *Եղիա Աստուածատուրեան Մուշեղեան:* Վիեննա, 1927:
Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVIXVII դդ.): Հ. Բ: Աշխատասիրությամբ Համիկ Սահակյանի, Երևան 1987:
Չամչեանց, Մ., *Պատմութիւն Հայոց:* Հ. Գ, Վենետիկ, 1786:
Զոբանյան, Պ. Ա., *Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին:* Երևան, 1981:

Պատկանյան, Ռափայել. *Հայաստանի ազատության վարդապետարան. - Ցեղին ձայնը:* Երևան, 1999:
[Պետրոս դի Սարգիս Գիլանէնց]. «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի». - *Կռունկ Հայոց աշխարհին*, 1863, No. Բ-Գ:
Պերպերեան, Հայկ. «Էջմիածնի վանքը 1662-ին». - *Հասկ*, 1950:
Պողարեան, Ն., *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Բ, Երուսաղէմ, 1953:
Պողարեան, Ն., *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Ա, Երուսաղէմ, 1966:
Պողարեան, Ն., *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Գ: Երուսաղէմ, 1968:
Պողարեան, Ն., *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Դ: Երուսաղէմ, 1969:
Պողարեան, Ն., *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց:* Հ. Ը: Երուսաղէմ, 1977:
Պոտուրեան, Մկրտիչ. «Հայ կաթողիկոսութիւն». - *Բազմավէպ*, 1902:
Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց: Հրտ. Արշակ Տէր-Միքելեանի:* Վաղարշապատ, 1893:
Սաւալանեանց, Տիգրան Թ., *Պատմութիւն Երուսաղէմի:* Հ. Ա-Բ. Երուսաղէմ, 1931:
Սիմէոն Երևանցի, *Ջամբռ:* Վաղարշապատ, 1870:
Սիմէոն Լեհացի, *Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք:* Ուսումնասիրեց եւ հրատարակեց Ներսէս Ակինեան: Վիեննա, Մխիթարեան տպարան, 1936:
«Դիւան Սուրբ Յակոբի». - *Սիոն* (Երուսաղէմ), 1866, 1940, 1941, 1971, 1972, 1973:
Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ-Ս. Ղազար, 1956:
[Սմբատ Սպարապետ]. *Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ:* Ի լոյս ընծայեաց Հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Շահնազարեանց. Փարիզ, 1859:
Ստեփանոս Ռօշքայ, *Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք:* Վիեննա, 1964:
[Ստեփանոս Սիւնեցի], *«Ողբք եւ հառաչանք ի դիմաց Մօրս մեր սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Ստեփանոսի Սիւնեաց այցելուի, որդւոյ Տարսայիճ իշխանի, ըստ խնդրոյ Վարդապետին Խաչատրոյ Կեչառեցւոյ ի ՉԽԸ (1299) թուիս մերոյ»*, Կալկաթա, 1846:
Ստեփանոս Տարոնացի (Ասողիկ), *Պատմութիւն տիեզերական:* Ս. Պետերբուրգ, 1885:
Ստեփաննոս Օրբելեան, *Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց:* Շարադ-

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներից եկող անձնանունների և տեղանունների ուղղագրությունը թողել ենք անփոփոխ:

Համառոտագրություններ.

կթղ.՝ կաթողիկոս,
պտր.՝ պատրիարք,
արքեպս.՝ արքեպիսկոպոս,
եպս.՝ եպիսկոպոս,
վրդ.՝ վարդապետ:

րեալ ի թուին Հայոց ՉԾԱ (1302) ի կաթողիկոսութիւն Գրիգորի Անաւարզեցւոյ: Կ. Պոլիս, 1756:

Ստեփանոս Օրբելյան, *Սյունիքի պատմություն:* Թարգմ., ներած. և ծանոթագրությունները՝ Ա.Ա. Աբրահամյանի: Երևան, 1986:

Սրուանձտեանց, Գ., *Թորոս Աղբար, [մասն Բ]:* Կ. Պոլիս, 1884:

Վարդան Արեւելցի, *Հաւաքումն պատմութեան:* Աշխատասիրութեամբ՝ Ղ. Ալիշանի: Վենետիկ-Ս. Ղազար, 1862:

Վարդան Արեւելցի, *Մեկնութիւն քերականի:* Աշխատասիրությամբ՝ Լ. Գ. Խաչերյանի: Երևան, ԳԱ հրատ., 1972:

Տաշեան, Ղեւոնդ. *Մայր դիւան մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար, 1707-1733:* Վենետիկ, 1930:

Տաշեան, Ց., *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա:* Վիեննա, 1895:

Տեր-Ավետիսյան, Ս., *«Աբրահամ Կրետացու հիշատակարանը (ծոցի տետրակը)». - Երևանի Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ»*, Հ. XIII, Երևան, 1940:

Տեր-Մկրտչյան, Գալուստ. *Հայագիտական ուսումնասիրություններ (Հայկականք ԺԳ-ԺԹ):* Երևան, Գիրք Ա, 1979:

Տէր-Յովհաննեանց, Յ. Թ., *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան:*

Հ. Ա-Բ, Նոր Ջուղա, 1881.
Տէր-Յովհաննիսեան, Ա., *Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի:* Երուսաղէմ, 1890:
Տեր-Ստեփանյան, Արմեն. «Գևորգ Մխլայիմ». - *Էջմիածին*, 1984, No. 5 (մայիս):
Տէրվիշեան, Տիրայր. *Յրուագանկ «Ազգապատում»ի յատուկ անուններու:* Լոս-Անջելէս, 1976:
Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի: Հ. Ա, Երևան, 1955:
Փափազյան, Հակոբ. «Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դար)». - *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1977, No. 1:
Փափազյան, Հակոբ. «Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից». - *Տեղեկագիր* Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, 1955, No. 8:
Քեշիշեան, Մեսրոպ. *Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին:* Վիեննա, 1964:
[Քէօմիւրճեան, Երեմիա Չէլէպի]. *Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի:* Հրատ. Մեսրոպ Նշանեան, Երուսաղէմ, 1939:
Քիւրտեան, Յ., «Նիւթեր Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կենսագրութեան համար (1655-1680)». - *Հասկ*, 1952:
Քիւրտեան, Յ., «Նոր նիւթեր Եղիազար կաթողիկոս Այնթապցիի մասին». - *Հասկ*, 1952:
Քիւրտեան, Յ., «Յակոբ կաթ. «Ջուղայեցիի նորագիւտ խիստ կարևոր վաւերաթուղթ մը». - *Սիոն*, 1969:
Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան: Երևան, Հայկ. հանրագիտարանի գլխավոր հրատ., 2002:
Օրմանեան, Մաղաքիա. *Ազգապատում:* Հ. Ա-Բ, Կ. Պոլիս, 1912-1914:

Բ. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века. Сборник документов. Т. II, часть I. Под редакцией Аш. Иоаннисяна, Ереван: Изд. АН Арм. ССР, 1964.
Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века. Сборник документов. Т. II, часть II. Под редакцией Аш. Иоаннисяна, Ереван: Изд. АН Арм. ССР, 1967.
Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. Сборник документов. Т. III. Под редакцией Восканяна, Ереван, 1978.
Бердзенишвили, Н, И. Джавахишвили, С. Джанашиа, *История Грузии.* Часть I, Тбилиси, 1946.
Иоаннисян А.Р., *Иосиф Эмин.* Ереван, Изд. ЕГУ, 1945.
Марр, К., *Критика и мелкие статьи.* СПб., 1903.
Мартиросян, В. М., П. А. Чобанян, “Документы по истории армяно-грузинских

взаимоотношений и общественной жизни Грузии (2-ая половина 18 века),” *Кавказ и Византия*, Выпуск 3 (1982).

Меликсет-бек Л., “К биографии сподвижника Исраеля Ори - Минаса вардапета,” *Տեղեկագիր* (Հաս. գիտ.), 1946, No. 1:

Петрос ди Саргис Гиланенц, *Дневник осады Испагани афганами (1722-1723)*. Перевод и объяснения К. Патканова. СПб., 1870.

Симеон Ереванци, *Джамбр*. Москва, Изд. Вост. Лит-ры, 1958.

Судебник Смбата спарапета (гундстабля) 1265 г.. Перевод со среднеармянского, предисловие и примечания проф. А. Г. Сукиасяна. Ер., 1971.

Полное собрание законов Российской империи. Москва, 1830, т. VII.

Советская историческая энциклопедия. Том 10, Москва, 1967.

Чалоян, В.К., История армянской философии. Ереван, 1959.

Эзов, Г. А., *Сношения Петра Великого с армянским народом. Документы, извлеченные из Московского главного и С.-Петербургского архивов Министерства Иностранных Дел, ... и других учреждений*. СПб.: Типография Импер. АН, 1898.

Энциклопедический словарь. Издатели: Ф. Брокгауз, И.А. Ефрон, том XXII, СПб., 1897.

Aivazian, Armen M., *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal.* Center for Policy Analysis, American University of Armenia, Yerevan, Armenia, 1997.

Ayvazyan, Armen M., “The Secret Meeting of Armenians on Lim Island in 1722: Concerning the Possible Involvement of Western Armenians in an All-Armenian Liberation Movement),“ in **Janos M. Bak and Peter Banyo**, eds., *Issues and Resources for the Study of Medieval Central and Eastern Europe: Reports and Articles* (Department of Medieval Studies, Central European University and the Committee on Centers and Regional Associations of the Medieval Academy of America: Budapest-Cambridge, MA, 2001); **լուսյս է տեսել նաև՝** *Iran and the Caucasus*, vol. 5 (Tehran: International Publications of Iranian Studies, 2001), pp. 85-92.

Armen Aivazian, “Demographic Situation in Karabakh in the 1710-1720s,“ *Armenian Mind* (journal of the National Academy of Sciences of Armenia), Vol. 5, No. 1-2, 2001, pp. 66-73 (in English); **վերահրատարակվել է՝** *Louys* biweekly magazine (Los Angeles), March 2002, No. 4 (145).

Azarian, Stephanus, *Ecclesiae Armenae traditio de Romani pontif-*

icis primatu jurisdictionis et inerrabili magisterio. Romae, 1870.

Baron A. von Haxthausen, *Transcaucasia* (London, 1854).

A Cronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII Centuries. Vol. 1, London, 1939.

Hammer, J. de, *Histoire de l°empire ottoman.* T. XIV. Paris, 1839.

Krusinski, Judasz Tadeusz. *The History of the Late Revolutions of Persia.* Vols. 1 and 2. New York, 1973 (**Լոնդոնի 1740 թ. հրատարակութեան վերատպութիւն**).

Mohammed A. Hekmat, *Essai sur l°Histoire des Relations Politiques Irano-Ottomanes de 1722 a 1747.* Paris, 1937.

Lector. Conclave: son organisation, sa legislation ancienne et modern. Paris.,1894.

Lockhart, Laurence. *The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia* (London: Cambridge University Press, 1958).

Mansi Joannes Dominicus. *Sacrorum conciliorum nova et amplissima collectio.* Graz, 1960-1962, Vol. 25 (Anni 1300-1344).

[**Petros di Sarkis Gilanentz**], *The Chronicle of Petros di Sarkis Gilanentz.* Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and additional Notes by Laurence Lockhart. Lisbon, 1959.

A Reference Guide to Modern Armenian Literature, 1500-1920. Compiled and with an Introduction by Kevork B. Bardakjian (Detroit: Wayne State University Press, 2000):

Sempadschfr kodex, herausgegeben und ubersetst von Josef Karst. Strassburg, 1905.

Villote, Jacobo. *Dictionarium Novum Latino-Armenorium.* Romae, 1714.

The World of Knowledge Encyclopeadia. Vol. VI, London-New York-Toronto-Sydney-Aucland, 1971.

Աբրահամ Կրետացի, կթղ. Ս. Էջմիածնի – 13, 103, 147-148, 152-160, 162, 183, 257, 260, 282-283, 284, 291
Աբրահամ Մշեցի (Խոշաբեցի, Կորդվացի, Քյուրդիստանցի), կթղ. Ս. Էջմիածնի, 1730-1734 թթ. – 80-85, 96-97, 100-101, 104-105, 100, 110, 113, 134, 147-149, 150-153, 155, 157-159, 162, 275, 291
Աբրահամ, նահապետ – 131, 138
Աբրահամ Պետրոս Արծիվյան – 72, 78
Ազարյան, Ս. – 225
Ալիշան, Ղ. – 17-18, 102-103, 164
Ալպոյաճյան, Ա. – 100
Ակինյան, Ն. – 8, 100
Ահմեդ Գ, օսմանյան սուլթան – 56-57, 70
Աղանյանց, Գ. – 8, 86, 244, 259
Աղավնունի, Մ. – 190
Աղեքսանդր Ա. Ջուղայեցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1706-1714 թթ. – 32, 55, 68, 163, 180, 182-183, 185-186, 193, 224
Աղեքսանդր Բ. Բյուզանդացի, կթղ. Ս. Էջմիածնի – 27
Աղեքսանդր Է, Հռոմի պապ – 230
Ամատունի, Կ. – 8
Այվազ (Սիմեոն Ռոմանով), հայ կապավոր – 10, 15
Անանյան, Պ. – 8
Անանուն Վանեցի, գրիչ – 188
Անասյան, Հ. – 8, 12, 39, 62, 208-209, 220, 224
Աչոտ Գ. Ողորմած Բագրատունի, թագավոր – 22
Առաքել Դավրիժեցի – 49, 97, 204-206, 229, 231
Ասլան Նորքցի – 200
Ասողիկ, Ստեփանոս – 21
Աստվածատուր Ա. Համադանցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1715-1725 թթ. – 29-37, 39, 43-44, 48, 55, 57-58, 68, 96, 109, 111, 128, 130, 132, 151, 270, 272
Աստվածատուր Տարոնեցի, պտր. հայոց Երուսաղեմի – 209
Աստվածատուր վրդ. Ֆահրապատցի – 98, 105
Ավան-յուզբաշի – 32, 35
Ավետիս, Նոր Ջուղայի քալանթար (Ավետ Քալանթարյան) – 174, 180, 184-185, 187, 222, 224
Ավետիք վրդ., Թիֆլիսի հայոց առաջնորդ, Սանահնի ու Հաղբատի հոգևոր հովիվ – 27
Ավետիք Եվդոկիացի, Կ. Պոլսի Հայոց պատրիարք – 181
Ատոմ Գնունի, նահատակ (†449) – 130
Արամ, արքա հայոց– 131, 282
Արևշատյան, Ս. – 74
Արիստակես Ա. Պարթև (սուրբ), կթղ. Ամենայն Հայոց, 325-333 թթ. – 129
Արիստակես Լաստիվերցի, պատմիչ – 135
Արիստոտել, հին հույն փիլիսոփա – 176
Արշակ Բ Մեծ, արքա հայոց – 131, 135
Արշակունիներ, հայոց – 131

Բաղալյան, Գ. – 259
Բաղդասար Դպիր – 114
Բամպուքճյան, Գ. – 8, 57
Բարաքեազ Ագուլեցի, խոջա – 199
Բարդուղիմեոս առաքյալ – 129

Բարդուղիմեոս Բոլոնիացի – 74
Բարսեղ վրդ.՝ աշակերտ Սրապիոն կաթողիկոսի, առաջնորդ Տիգրանակերտի – 196
Բրքիչա – 177

Գաբրիել, ղրիմահայ – 241
Գաբրիել Կարբեցի, Սաղմոսավանքի առաջնորդ – 199, 204-205
Գալաջյան, Ա. – 99
Գալեմքյարյան, Գ. – 8
Գասպար Երևանցի, մելիք-խոջա – 206
Գէորգ վարդապետ, Հալեպի ասորիների առաջնորդ – 161
Գրիգորիս (Գրիգոր) Աստապատցի, Շատիկա անապատի առաջնորդ – 274
Գրիգոր Լուսավորիչ (սուրբ Լուսատու) – 73, 127, 125, 129, 133, 139, 143, 264-265, 270, 278, 296
Գրիգոր Է. Անավարզեցի, Ամենայն հայոց կթղ., 1293-1307 թթ. – 18-19, 25
Գրիգոր վրդ. Զեյթունցի՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Եփրեմի երաժշտության ուսուցիչ – 232
Գրիգոր Թ. Մուսաբեկյանց, Ամենայն հայոց կթղ., 1439-1441 թթ., այնուհետև Սսի կթղ. – 216, 218
Գրիգոր Շղթայակիր (Շիրվանեցի) – 73, 81-83, 85-86, 93, 99, 104, 108, 114, 117-118, 152-154, 158, 161, 291
Գրիգոր Գ. Պահլավունի (Փոքր վկայասեր), Ամենայն հայոց կթղ., 1113-1166 թթ. – 18
Գրիգոր Բ, Հռոմի պապ – 213
Գրիգոր Տաթևացի – 121, 124-125, 129, 141
Գրիգոր Դ. Տղա, Ամենայն հայոց կթղ., 1173-1193 թթ. – 139
Գրիգոր ԺԳ, Հռոմի պապ – 92
Գևորգ Մխլայիմ – 75-76

Դաղոնց – 54
Դանիել եպիսկոպոս – 239-241
Դանիել մարգարե – 84
Դավիթ, նվիրակ Ս. Էջմիածնի, նահատակ – 93
Դավիթ Բաղիշեցի – 204, 229
Դավիթ-բեկ – 35, 40, 132, 299
Դավիթ, քահանա – 184
Դավիթ վրդ. Մշեցի, միաբան Ս. Էջմիածնի – 199, 203, 205-206
Դավիթ վրդ. Ջուղայեցի – 180, 193
Դավիթ Սալաձորցի, բանաստեղծ – 141
Դիոնեսիոս Արիսպագացի – 230

Եղիա վրդ. Մարտիրոսյան – 70
Եղիազար Ա. Այնթապցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1680-1691 թթ. – 12, 24, 50-52, 54-55, 62-63, 68, 91, 98, 163-164, 172-174, 180-184, 187, 191-192, 201-202, 207-211, 221, 223, 226, 231, 234-235
Եսայի Հասան-Ջալալյան, Գանձասարի կաթողիկոս, 1701-1728 թթ. – 10-11, 15, 31-32, 36, 38
Եսայի մարգարե – 264-266, 298
Եսայի վրդ., առաջնորդ Երնջակի Ս. Կարապետի – 199, 205, 232
Երեմիա աբեղա, նոտար – 244, 255
Երեմիա մարգարե – 111
Երեմիա վրդ. Մեղրեցի, միաբան Ս. Էջմիածնի – 199, 204-205
Երեմիա Զելեպի Քեօմյուրճյան –

209-210
Եփրեմ Ա. Զորագեղցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1809-1830 թթ. – 92, 94
Եփրեմ Ղափանցի (Տաթևացի, Երաժիշտ), պտր. հայոց Կ. Պոլսի, 1684-1686, 1694-1698 թթ. – 76, 204, 232, 234

Զամինյան, Ա. – 225
Զարբհանալյան, Գ. – 103
Զաքարիա Ագուլեցի – 200, 203, 228, 234
Զաքարիա Քանաքեռցի, պատմիչ – 51, 179-181, 188, 199, 201, 208, 211, 222, 226-227, 234
Զորաբաբէլ, Հրեաստանի կառավարիչ (Ք.Ա. VI դ.) – 266

Թադեոս առաքյալ – 20, 22, 129
Թադեոս (Թաթոս) երեց Երևանցի
Համազասպյան – 200, 206, 233
Թահմասպ-կուլի խան Ղաջար – 37, 157, 234
Թերզյան, Մ. – 8
Թէհմէզ (Թահմասպ կամ Թահմազ Բ), Իրանի շահ – 276-277
Թէոդոս փոքր – 177
Թովմա վրդ. – 118
Թովմա Ակվինացի – 74, 75, 79
Թովմա Մեծոփեցի – 22, 59, 213-218, 237
Թորգոմ նահապետ – 145
Թորոս վրդ. – 53

Ինճիճյան, Ղ. – 17-18, 190, 226, 237
Իննովկենտիոս ԺԲ, Հռոմի պապ – 15, 225
Իսահակ վրդ., Ս. Էջմիածնի Ծայրագույն նվիրակ (տե՛ս նաև Սահակ Բ Ահագին) – 238-240
Իսահակ վրդ. Մակվեցի, Արդար մականվամբ, սբ. Թադեի վանքի առաջնորդ – 184, 205, 211
Իսահակ վրդ. Շախսաբանցի – 199, 206 (տե՛ս Սահակ վրդ. Ջուղայեցի)
Իսահակ եպս., վանական Ս. Թադեի – 184
Իսահակ (Սահակ) վրդ. Ջուղայեցի – 233 (տե՛ս նաև Իսահակ վրդ. Շախսաբանցի)
Իսրայել Օրի – 12, 15, 184

Լեւոն Ժ, պապ Հռոմի – 284
Լոքհարթ, Լ. – 39
Լուդովիկ Պելլուկա, կարդինալ – 73
Խաչատուր վրդ. Աստապատցի, միաբան Ս. Էջմիածնի – 58
Խաչատուր վրդ., նվիրակ Ս. Էջմիածնի – 90
Խաչատուր վրդ. Կեսարացի – 97-98
Խաչատուր Գաղատացի, կթղ. Սսի – 13, 50, 209, 210, 216
Խաչատուր Ջուղայեցի, պատմիչ – 222
Խաչիկյան, Լ. – 8, 17-19, 164
Խաչեղբայր, ղրիմահայ – 241
Խաչիկ, Արշարունյաց եպս. – 21
Խոսրով, արքա հայոց – 131
Խոսրով Անձևացի – 102
Խուբյանց, Գևորգ (Եգոր Խուբով) – 223

Կարապետ Ամատունի – 201-202, 234-235
Կարապետ երեց – 216
Կարապետ Բ Ուլնեցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1726-1729 թթ. – 23, 37, 41, 43-50, 52-58, 61-68, 71-72, 77,

80-81, 83, 96, 99, 113, 147-148, 151, 158, 161, 163-164, 224, 261, 266-267, 272, 275
Կարկուտ Օնոփրիոս – 201-203
Կյուրեղ Աղեքսանդրացի – 177
Կիրակոս Ա. Վիրապեցի, կթղ. Ս. Էջմիածնի – 213-216, 218-219
Կիրակոս Բանասեր Ռշտունեցի – 214
Կիրակոս Գանձակեցի – 88
Կյուլեսերյան, Բ. – 8, 17, 56, 232
Կոստանդիանոս – 177
Կոստանդին Ա. Բարձրբերդցի, Ամենայն հայոց կթղ. – 87, 189
Կոստանյանց, Կ. – 17, 218
Կրուշինսկի, Թադեոս, լեհ ճիզվիտ – 29

Հակոբ քահանա՝ որդի Ստեփաննոս քահանայի – 54
Հակոբ վրդ. Բուզայան, մխիթարյան միաբան – 65-67
Հակոբ եպս., միաբան Ս. Ստեփանոս Նախավկայի – 199, 234
Հակոբ Ջուղայեցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1655-1680 թթ. – 54, 127, 177, 186, 198-199, 201, 203-205, 207-212, 215, 217, 221-222, 227-231
Հակոբ Նալյան, պտր. Հայոց Կ. Պոլսի, 1741-1749, 1752-1764 թթ. – 58, 75, 93, 101, 114, 116, 195, 238, 287-289
Հակոբ Սսեցի – 190
Հակոբ Քռնեցի, հայ դոմինիկյան (XIV դ.) – 74
Հակոբյան Հուդա – 129
Հակոբյան, Վ. – 222, 226
Հակոբջան Երևանցի – 48, 200, 206, 233
Հայկ նահապետ – 131
Հասրաթյան, Մ. – 17
Հարություն, կաֆայեցի – 90
Հարություն՝ Մարուքի որդի – 234
Հարությունյան, Պ. – 57
Հեթում Բ, թագավոր – 19, 25
Հոհան վրդ. Շամբեցի – 199, 203, 228
Հովհան Գ. Օձնեցի, կթղ. Ամենայն Հայոց, 717-728 թթ. – 129
Հողեփեռնես – 186
Հովասափ, աթոռակալ Աստվածատուր կթս.-ի – 35, 58
Հովհան արքեպս., առաջնորդ Մշո Ս. Կարապետ վանքի – 150, 161
Հովհան վրդ. Որոտնեցի (1315-1386 թթ.) – 129
Հովհան(նես) Քռնեցի, հայ դոմինիկյանների առաջնորդ, թարգմանիչ (†1347 թ.) – 74
Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի, պտր. հայոց Կ. Պոլսի, 1715-1741 թթ. – 37, 41-43, 47-50, 52, 55, 57-58, 62-64, 67-75, 80-83, 85-86, 93, 96, 99, 104-105, 108-109, 114-118, 148, 152-154, 159-160, 194-195, 238
Հովհաննես վրդ. Ամասիացի – 101-102, 107-108, 110, 114-118, 132
Հովհաննես, նվիրակ Ս. Էջմիածնի – 93
Հովհաննես Զեյթունցի, միաբան Կարմիր վանքի – 47, 61
Հովհաննես վրդ., առաջնորդ Սանահինի – 33
Հովհաննես Կարբեցի, Հովհանավանքի առաջնորդ – 205, 231
Հովհաննես Զ. Սսեցի, Ամենայն հայոց կթղ., 1203-1221 թթ. – 190

Հովհաննես Ջորեցի, կթղ. Աղթամարի (†1725) – 149, 151
Հովհաննիսյան, Ա. Ռ. – 13
Հովհաննիսյան, Ա. Գ. – 8, 39, 185, 223, 225, 227, 235
Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի – 55, 193
Հովհաննես վրդ. Մուղնեցի – 203-205, 231, 234
Հովհաննես վրդ. Կարբեցի (Սուսիկ մականվամբ) – 203
Հովհաննես Սեբաստացի, մխիթարյան միաբան – 79
Հովնանյան, Վարդան, արքեպսկ. – 74
Հովսեփ արքեպիսկ. Արղության – 239-240
Հովսեփ Էմին – 13, 150
Հրանչոիս Փալիվ, ճիզվիտ միսիոներ – 190

Ղազար Ա. Ջահկեցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1737-1751 թթ. – 12, 20-24, 45, 49, 88-89, 98-106, 107-118, 120-126, 128-145, 153-161, 164, 189, 229, 260-261, 267-269, 275, 280-281, 290-293, 295-298
Ղազար, ոմն – 202
Ղազար վրդ. Դիվրիկեցի – 228
Ղազիկյան, Ա. – 100, 103
Ղուկաս վրդ. Խարբերդցի – 74, 79
Ղուկաս, խոջա – 174
Ղուկաս Ա. Կարնեցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1780-1799 թթ. – 239
Ղուկաս Սեբաստացի, մխիթարյան միաբան – 15

Ճեմճեմյան, Ս. – 8, 16, 26, 56, 63, 66, 73, 76

Մատթեոս վրդ. Ջուղայեցի, աթոռակալ Հակոբ Ջուղայեցի կթղ.-ի, 1665-1672 թթ. – 199, 205, 230-231
Մանաճիր – 130
Մաղաքիա Ճեվահիրճի, դպիր – 236
Մանկունի, Վ. – 17
Մանուէլ Աստապատցի (մեծ), աթոռակալ Կարապետ Ուլնեցի կթղ.-ի – 43-44, 57-58, 71
Մանուէլ վրդ. – 199
Մառ, Ն. – 232
Մէհմէտ փաշա – 73
Մեսրոպ Մաշտոց – 129, 218
Մարգար երեց՝ հայր Սիմեոն եպիսկոպոսի – 53
Մարկոս՝ ուսուցիչ Մինաս Ամդեցու – 191
Մարտիրոս Ղրիմեցի (Արևելցի) վրդ., նվիրակ («վէքիլ») Ս. Էջմիածնի – 51, 54, 205, 209, 232
Մարտիրոս վրդ. – 58
Մարուգե (Մարուք), երևանցի մեծահարուստ – 234
Մելիք Գասպար Երևանցի – 199
Մելքիսեդեկ բանասեր – 86
Մելքիսեթ – 79
Մեսրոպ Հուշականցի (Քրիստոսակիր), ճգնավոր Շատիկա վանքում, ուսուցիչ Ղազար Ջահկեցու – 110, 283
Մեվրէիզ ողլի Մահմուտ (Միր-Մահմուտ), աֆղան ապստամբ, Իրանի զավթիչ – 262-263
Մինաս վրդ. Ամդեցի, պտր. հայոց Երուսաղեմի – 12, 15, 98, 105, 180, 183, 191, 223, 240
Մինաս վրդ. Աստապատցի, միաբան

Ս. Էջմիածնի – 58, 172-173, 178, 184, 186, 199, 205
Մինաս վրդ. Տիգրանյան – 10-11, 12, 15, 30-31, 36, 58, 150, 184
Մինաս վրդ. Փերվազյան Ակնեցի – 12, 23, 25-26, 43, 45, 58, 83, 223-224
Մինասյան, Լ. – 170, 200
Միրզոյան, Հ. – 8, 192, 234
Միքայել վրդ., մխիթարյան միաբան – 76
Միքայել վրդ. Շամբեցի, առաջնորդ Ս. Նախավկայի – 199, 203-205, 230
Մխիթար Գոշ – 212
Մխիթար Սեբաստացի, Մխիթարյան միաբանության հիմնադիր – 64-66, 70, 72, 74, 76, 78-79, 132
Մխիթար աբեղա, միաբան Լիմ անապատի (1720-ական թթ.) – 132-134, 299-300
Մկրտիչ քահանա, գործել է Ղրիմում (1629-1631 թթ.) – 90
Մկրտիչ վրդ.՝ լրատու Պետրոս դի Սարգիս Գիլանենցի – 35
Մկրտիչ վրդ., միաբան Ս. Էջմիածնի, Պետրոս Քյուրթյուրի ուղեկից – 118
Մկրտիչ քահանա Ջահկեցի՝ հայր Ղազար Ջահկեցու – 110, 267
Մկրտիչ վրդ. Ջահկեցի՝ եղբայր Ղազար Ջահկեցու, առաջնորդ Երնջակ-Գողթն (գուցե և Նախիջևանի) թեմի – 120
Մկրտիչ վրդ., առաջնորդ Զեյթունի Ս. Աստվածածնի (1678 թ.-ից) – 54
Մովսես Գ. Տաթևացի, կթղ. Ս. Էջմիածնի, 1629-1632 թթ. – 90, 175, 177, 227, 229
Մովսէս քերթողահայր (Մովսես Խորենացի) – 177
Մովսես վրդ. Բլնեցի, առաջնորդ Արարատյան երկրի (առնվազն 1656 թ.-ից) – 51, 170, 174, 197, 199, 204-205, 229-230, 232
Մսերյանց, Զ. – 226
Մուշեղ, սպարապետ Մամիկոնյան – 131
Մուշեղյան, Եղիա (Եղիա Կարնեցի) – 45
Մուստաֆա Զելեբի-զադե, օսմանցի հեղինակ – 78

Յակոբ Ջուղայեցի – 177, 198, 205, 210, 228 (տե՛ս նաև Հակոբ Ջուղայեցի)
Յակոբ վրդ. Նալեան – 101, 116, 287-289 (տե՛ս նաև Հակոբ Նալյան)
Յակոբ բաբունապետ Մեծ – 234 (տե՛ս Հակոբ եպիսկոպոս)
Յակոբջան Երևանցի – 200 (տե՛ս Հակոբջան Երևանցի)
Յարութիւն, ղրիմահայ – 241
Յարութիւն Մարուքի որդի – 200 (տե՛ս Հարություն՝ Մարուքի որդի)
Յոհան վրդ. Շամբեցի – 199, 228 (Հոհան վրդ. Շամբեցի)
Յովհաննէս կթղ. Ջորեցի – 300 (տե՛ս Հովհաննես Ջորեցի)
Յովհաննէս վրդ. Ամասիացի – 269 (տե՛ս Հովհաննես Ամասիացի)
Յովհաննէս վրդ. Կարբեցի – 199 (տե՛ս Հովհաննես Կարբեցի)
Յովհաննէս վրդ. Մուղնեցի – 199 (տե՛ս Հովհաննես Մուղնեցի)
Յովհաննէս մեծ Պոլսի – 279, 285-286, 291-292 (տե՛ս Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի)
Յոհաննէս Մկրտիչ – 111, 270
Յովսէփ արքեպիսկ. – 239 (տե՛ս

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Հովսեփ Արղության)
Յովսէփ քահանա – 184
Յուդա – 199

Նադիր շահ – 157
Նահապետ Ա. Եդեսացի, կթղ. Ս. Էջմիածնի, 1691-1705 թթ. – 12, 32, 50-52, 62-63, 68, 163-164, 171, 179-188, 191-193, 212, 221-222, 224-226
Ներսես, կթղ. Աղվանից – 256
Ներսես, կթղ. Սսի – 53
Ներսէս Ա. Մեծ, կթղ. Ս. Էջմիածնի, 353-373 թթ. – 127, 129
Ներսես վրդ. Ռշտունեցի, արևելահայերի պատվիրակ – 132-134, 150, 299
Ներսէս նահատակ – 112, 264, 278
Ներսես Շնորհալի – 289
Նեստոր – 177
Նշանյան, Մ. – 201
Շմավոն – 129
Շմավոն Ագուլեցի, խոջա – 199, 201, 206, 233
Շմուէլ – 177

Ոհաննես Թմոքվեցի, գրիչ – 214
Ոնոփրիոս վրդ. – 177 (տե՛ս Օնոփրիոս վրդ. Կարկուտ)
Ոսկան Երևանցի, արքեպիսկոպոս – 204
Ոսկյանք, 5 քրիստոնյա վկաներ (I դ.)– 129

Զամչյան, Մ. – 12, 18-21, 23-24, 50, 56, 64, 66, 76, 99, 103, 142, 164, 181, 209-210, 216, 222, 225, 236

Պատկանյան, Ռ. – 59
Պատկանյան, Ք. – 39
Պոտուրյան, Մ. – 17
Պետրոս մահտասի-խոջա՝ հայր խոջա Ղուկասի – 174
Պետրոս Ա., Ռուսաստանի ցար – 10, 30
Պետրոս վրդ. Ագուլեցի, առաջնորդ Ագուլիսի Ս. Թովմայի – 199, 205, 231
Պետրոս Արագոնացի – 74
Պետրոս դի Սարգիս Գիլանենց – 33, 35, 39
Պետրոս վրդ. Քյություր – 91, 103-105, 118, 153, 292
Պետրոս վրդ.՝ աշակերտ Աստվածատուր կաթողիկոսի – 110
Պետրոս վրդ. Աստապատցի – 274
Պերոշ (Պռոշ) իշխան՝ հայր Իսրայել Օրու – 15
Պղատոն (Պլատոն), հին հույն փիլիսոփա – 121
Պողարյան, Ն., արքեպս. – 16

Պողիկարպոս – 21
Պորփիւր աստուածաբան – 121
Պօղոս առաքյալ – 280, 282
Պօղոս Տարսոնացի – 270

Ռաջաֆ փաշա – 60
Ռոմանով, Սիմեոն – 15 (տե՛ս Այվազ)
Ռոշքա, Ստեփանոս – 11, 221, 225

Սահակ, վանական Արղնիի Բարձրահայաց Ս. Աստվածածնի – 229
Սահակ Բ. Ահագին – 238-239
Սահակ Ապուչեխցի, պտր. հայոց Կ. Պոլսի – 78
Սահակ գրիչ, միաբան Անկյուրիայի Կարմիր վանքի – 259
Սահակ Ա. Պարթև, կթղ. Ս. Էջմիածնի, 348-439 թթ. – 129
Սահակ վրդ. Ջուղայեցի (Ղարատանեցի) – 233 (տե՛ս Իսահակ վրդ. Շախսաբանցի)
Սաւուղ՝ որդի Կիսի – 291
Սարգիս, Նվիրակ Ս. Էջմիածնի – 93
Սարգիս վրդ. – 184
Սարգիս վրդ. (X դ.) – 21
Սարգիս Ջորագեղցի, «զառաֆբաշի» Երևանի (1663, 1674-1679 թթ.) – 200, 206, 228
Սիմեոն թարգմանիչ (XIII դ.) – 59
Սիմեոն Լեհացի – 91, 195-196
Սիմեոն՝ որդի հալեպցի Մարգար երեցի – 53
Սիմեոն վրդ. Երևանցի (մեծ), Նվիրակ Ս. Էջմիածնի (1724թ.), աթոռակալ Կարապետ Ուլնեցի կթղ.-ի (1726թ.) – 44, 56-57, 93, 95
Սիմեոն Ա. Երևանցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1763-1780 թթ. – 22-23, 42-43, 48, 50, 52-53, 55-57, 60, 67, 70, 83, 88-89, 92, 99, 114, 127, 139, 158, 183, 192, 220-221, 242, 255, 259
Սիմեոն վրդ. Ջուղայեցի – 229
Սիմեոն Բ. Սեբաստացի, կթղ. Սսի, 1633-1648 թթ. – 51
Սիմոնյան, Պողոս Տայի վրդ. – 72
Սկոթոս, աստվածաբան – 79
Սմբատ Սպարապետ, պատմիչ – 190, 212
Ստեփաննոս վրդ. Լեհացի, «վերակացու եւ դանձապետ ի սուրբ Կաթողիկոսարանն Էջմիածնի» – 199, 203-205, 230
Ստեփաննոս վրդ. Կաֆայեցի, վանահայր Շատիկա – 270
Ստեփաննոս վրդ. Ջուղայեցի – 180, 183, 186-188, 222, 225
Ստեփաննոս վրդ., մխիթարյան միաբան – 78
Ստեփանոս Գ. Սևանցի, կթղ. Ամենայն հայոց, 969-972 թթ. – 21-22
Ստեփանոս Դ. Հռոմկլայեցի, կթղ. Ամենայն հայոց, 1290-1293 թթ. – 18
Ստեփանոս վրդ. Զեյթունցի (Սաչլու)՝ հոգևոր հայր Կարապետ Ուլնեցու, առաջնորդ Անկյուրիայի վիճակի – 52, 54
Ստեփանոս քահանա՝ եղբայր Կարապետ Ուլնեցու – 54
Ստեփանոս Օրբելյան (Սյունեցի) – 18-19, 25, 138, 145, 190
Սրապիոն կթղ.՝ Գրիգոր ԺԳ
Սրապիոն աթոռակից կթղ. Ս. Էջմիածնի, 1603-1606 թթ. – 196

Վախթանգ Զ, Քարթլիի փոխարքա (1703-1714 թթ.), թագավոր (1716-1724 թթ.) – 194
Վահան, Գայլ – 131
Վահան Ա. Սյունեցի, կթղ. Ամենայն Հայոց, 968-969 թթ. – 20-21
Վաղարշակ, արքա հայոց – 131
Վարդան վրդ. Բաղիշեցի՝ վանահայր Ամրդոլու վանքի, ուսուցիչ Հովհաննես Կոլոտի, Գրիգոր Շղթայակրի, Աբրահամ Խոշաբեցու – 154
Վարդան վրդ. Արևելցի – 87-88, 94
Վարդանէնց տուն – 230
Վարդան, ղրիմահայ – 90
Վարդան Հացունի – 18-19, 23, 164
Վրթանէս սուրբ՝ Վրթանես Ա. Պարթև, կթղ. Ս. Էջմիածնի, 262-333 թթ. – 129
Վրթանէս Կեսարացի Ստեփանյան, Կեսարիայի արքեպս. – 59, 77

Տեր-Ավետիսյան, Ս. – 158
Տեր-Հովհաննյանց, Հ. – 6, 171, 221
Տիգրան Բ Մեծ, արքա հայոց – 131
Տիգրանյան, Մինաս վրդ. – տե՛ս Մինաս վրդ. Տիգրանյան
Տիրացու, Արտազի եպիսկոպոս (XIII դ.) – 25
Տրդատ Գ Մեծ, արքա հայոց – 130, 131, 135

Փարթամ, գրիչ – 138
Փիլիպպոս Ա. Աղբակեցի, կթղ. Ս. Էջմիածնի, 1632-1655 թթ. – 53, 175, 177, 182, 206, 222, 227, 231
Փիլիպպոս վրդ. – 199

Քայիխոսրով բեգ – 184
Քյուրտյան, Հ. – 8
Քութուր, Պետրոս – 292 (տե՛ս նաև Պետրոս Քյություր)

Օնոփրիոս վրդ. Կարկուտ – 207-208, 235
Օրմանյան, Մաղաքիա, պտր. Հայոց Կ. Պոլսի, 1896-1908 թթ. – 8, 13, 17, 21, 25, 38, 41-42, 50, 53, 57, 67, 77, 81, 94, 100, 142, 187-188, 214, 216-218, 234, 237
Օրպելի, Սիւնեաց արհիեպիսկոպոս – 19 (տե՛ս Ստեփանոս Օրբելյան)
Օհան-Բաբա՝ որդի Հակոբջան Երևանցու – 233

Исайя патриарх — 40
Аван юзбаши — 35
Айваз (Айвас) — 11
Peter Stephanus Wartanowic — 230

Ադուլիս – 201, 231, 249
Ադաբազար – 245
Ադրիանուպոլիս (Անդրէի քաղաք, Ադրիանու մեծ պոլիս) – 102, 115, 285
Ազախ (Ազով) – 245
Ազատակ (գյուղ) – 221, 250
Ազատքաղաք – 251
Աթէնք – 196, 229
Ալ – 249
Ալաճաքիլիսա – 251
Ալայիա – 247
Ալաշհար – 245
Ալդուլ – 251
Ալէթլու – 251
Ալիբեկլու – 250
Ալմալի – 247
Ախլցխա – 65, 66, 77, 248
Ախթամար (Աղթամար) – 17, 90, 149, 151, 223
Ախլգօր – 249
Ախշեհիր – 259
Ախլքէլէք (Ախալքալաք) – 248
Ախպատ (Հաղբատ) – 20
Ախտենիս – 252
Ածօպ – 249
Ակըլ – 247
Ակն – 246
Ահեօլ – 246
Աղասար – 245
Աղասօր – 252
Աղէքաձոր – 250
Աղին – 252
Աղճաղալէ – 252
Աղմեչիտ – 245
Աղշէհէր – 247
Աղվան – 223, 261
Աղտ – 246
Աղտեն – 251

Աղունատուն – 253
Աղփարա – 251
Աղքիրման – 246
Աղօրան – 251
Աճեմիստան (Իրան) - 70
Ամասիա – 111, 246, 270-271
Ամիթ (=Տիգրանակերտ) – 196
Ամստերդամ – 290, 296
Ամրդոլ, տես նաև՝ Ամրտոլ – 82-83, 147, 154
Այազմայ – 245
Այիտօստ – 246
Այլաբեր – 251
Այլաքակ – 251
Այսրկովկաս – 25, 29, 37, 69, 71, 80, 147-148, 155
Այրարատ – 223
Անանուր – 249
Անապատ – 274
Անգեղակոթ – 11
Անգեղատուն – 131
Անդրէի քաղաք – 285 (տե՛ս նաև Ադրիանուպոլիս)
Անի – 21, 161
Անի-կամախ – 161
Անկյուրիա – 53-54, 65-67, 72, 259, 247 (տե՛ս նաև Գաղատիա)
Անձալի (=Անզելի, Էնզելի) – 249
Անմեռն – 252
Աշխարօվայ – 246
Ապաղ (Աբաղա) – 247
Ապարան – 250, 254
Ապուշեխ – 246
Աջանան – 250
Առինջ – 252
Ասիա – 98
Ասորեստան – 97, 150
Ասպահան//Իսպահան – 180
Աստապատ – 44, 185, 224, 249, 264
Աստրախան – 239
Աւազանկ – 251
Աւան – 252
Աւանիկ – 250
Ատալա – 245
Ատալի – 247
Ատենուձոր – 249
Ատրպատական – 172, 179
Արախուս –252
Արամուս – 252
Արա մեծի դաշտ//Արարատեան դաշտ – 277
Արապկեր – 246
Արատես – 221
Արարատ//Արարադ – 64, 143, 172
Արարատեան տուն (նահանգ, երկիր, դաշտ) –28-29, 34, 48, 81, 112-113, 148, 158, 178-179, 197, 204, 208, 214, 263, 264, 276-277
Արարք – 250
Արդուին – 248
Արգինա – 21
Արեւլեան կողմանք [Հայոց] – 197
Արևելյան Հայաստան – 130, 149, 171, 210
Արևմտյան Հայաստան – 71-72, 149, 220
Արզրում – 182, 273 (տե՛ս նաև Էրզրում, Կարին)
Արծն – 251
Արծկէ – 247
Արկուռի – 157, 250
Արղնի – 226, 247
Արճէշ – 247
Արմաշ – 245
Արմտաներ – 246
Արնեղի – 251
Արպատ – 250
Արտազ – 17-18, 20, 22, 25

Արտազ – 18
Արտազաքան – 251
Արտահան – 248
Արտաշատ – 250
Արտավին (=Արտաբոյնք) – 221
Արտաւուճ – 252
Արցախ – 13, 29, 32, 35, 37-38, 48-49, 69, 70-71, 147, 164
Աքարակ – 252
Արքոլ – 251
Աֆիօնղարահիսար//Աֆիոնդարահիսար – 247

Բաբաջանիձոր – 249
Բաբատաղ –246
Բաբերդ – 246
Բալիքեսար – 245
Բալու – 247
Բաղդատ – 248
Բաղէշ – 42, 82, 247
Բամբկաձոր – 249
Բայազիտ(դ)//Բայազետ – 57, 247, 251, 254
Բայընդուր – 245
Բանդարբուշ – 248
Բանդէր – 246
Բանկալայ – 248
Բանտարապաս – 248
Բատակալ – 251
Բանտարբռիկ – 248
Բասրայ – 248
Բար – 252
Բարկուշատ – 250
Բարձապի – 253
Բելբրղատ (=Բելգրադ) – 246
Բասեն (Ներքին, Վերին) – 246
Բեշիկտաշ – 245
Բատնոց – 247
Բերդ –251
Բէրթակ – 247, 259
Բերիա – 210-211 (տե՛ս նաև Հալեպ)
Բերկրի – 247
Բէկպազար – 247
Բէնկան – 246
Բէրղամայ (=Պերգամոն) – 245
Բէքղօզ – 245
Բզնունիք – 149
Բիլաճիկ – 245
Բիրական (Բյուրական)– 252
Բիրգի – 245
Բլուր – 250
Բիւզանդիոն//Բիւզանդի քաղաք//Բիւզանդիա քաղաք – 116, 263, 267, 272, 276, 287, 290-291 (տե՛ս նաև Կ. Պոլիս)
Բշէրիկ – 247
Բոլոր Բօշայք (=Կոնդ) – 252
Բոսփոր – 128
Բորաղան – 248
Բջնի//Բճնի//Պչնի – 17-18, 22-23, 163, 170, 204, 251, 259
Բուղխանայ – 251
Բուրղազ (Բուրգաս) – 246
Բուրվարի – 249
Բուքըրեշ (=Բուխարեստ) – 246
Բօղբռում (=Հալիկառնասուս) – 245
Բօլնիձոր (=Բոլնիսձոր)– 249
Բօղաահեսար (Բողազհիսար) – 245
Բօռ – 246

Գաղատիա (=Անկյուրիա) – 23, 43, 46-48, 52-54, 56, 58, 65-67, 77-79, 244
Գաղ – 249
Գամրա երկիր (=Գամիրք, Կապադովկիա) – 53
Գամրիս – 251

Գանդէս – 128
Գանձակ – 29, 251
Գանձասար – 10, 29, 31-32, 90, 244
Գանճայ – 264
Գառնի –157, 250, 253
Գարնեղի – 251
Գեամրակ – 246
Գեդրոն – 251
Գեղարգունոյ գաւառ – 254
Գեղարդ – 157
Գեղեմայ (Գեղամայ) գաւառ – 261 (տե՛ս Գեղարգունոյ գաւառ)
Գետարգել վանք – 157
Գետիք – 252
Գեօզլավ – 90, 245 (տե՛ս նաև Կէզլով)
Գեօզհիսար – 245
Գեօլտաղ– 245
Գեօկգիւմբէթ – 250
Գեօրդաստ – 245
Գզեխ – 247
Գիլան – 249
Գիրասօն – 246
Գիրիդ (=Կրետե) – 245
Գիւռլայ – 245
Գլաձոր – 74
Գլան (Մեծ, Փոքր) – 253
Գոկքիլիսէ – 251
Գողթն//Գողդնեաց – 31, 120, 180, 264
Գոռգոչ – 251
Գորի – 249
Գուլաբերդ – 250
Գունէ (=Կենավուզ, Գենվուզ) – 250
Գօմաձոր – 251

Դալուլար – 251
Դալուղարդաշ – 251
Դաշտ – 249
Դարանակս – 252
Դարանաղի//Դարանաղիաց գավառ – 112-113, 278
Դարաշամբ – 221, 230
Դավրէժ, Դաւրէժ (տես՝ Թավրիզ) – 49, 182
Դավռայ – 246
Դեղձնավանք – 250
Դերբենդ – 28
Դերջան – 161
Դէմիրճի – 247
Դէնկիզլի – 245
Դէվէլի – 246
Դէրպէքիր//Դիարբեքիր//Դիարբէքիր //Տիարպեքիր – 65, 149-150, 247
Դրդմաշէն – 251
Դիատին – 247
Դիլանչի – 251
Դողս – 250
Դրախտիկ – 251
Դուխուրխան – 249
Դումանէսաձոր – 249
Դուշէթ – 249
Դուրթուղ – 245
Դօվրիկ (Տեվրիկ) – 247

Եալօվայ – 23, 245
Եայչիլար – 251
Եանպոլ – 246
Եաշ (=Եասի) – 246
Եզնիստ – 251
Եզնմիտ (=Իզնամիտ, Իզմիթ, Նիկոմիդիա) – 245
Եղեգաձոր – 110, 256
Եղեւարդ – 250
Եղնաջուր – 251
Ենկիշհար – 245-246
Ենկիխան – 247

ենկիճ – 246
ենկիճէն – 253
Եվդոկիա (=Թոխատ) – 91, 92, 111, 113, 271, 246, 279
Եվրոպա – 62, 92
Երասխ – 250, 278
Երևան – 28-29, 33-35, 37, 48, 60, 71, 81, 85, 134, 157, 159, 170, 183, 187, 201, 203, 205-207, 209-210, 218, 227, 231, 234, 250, 253-254, 263, 276-277
Երզնկա – 161
Երնջակ//Երնջակայ տուն – 120, 205, 264
Երուսաղեմ – 12, 14, 53, 79, 81-83, 85, 90, 104-105, 113, 117, 148, 154, 161, 174, 201-202, 205-208, 211, 232, 291
Եփեսոս Ս. – 73
Եփրատ – 128

Զառայ – 246
Զառիշատ – 248
Զաֆրանպոլի – 247
Զեթայ (գյուղ) – 221
Զեյթուն – 53, 54
Զըռքան – 247
Զիլայ – 246
Զիլիֆքէ – 247
Զմիւռնիա//Զմիւռին – 26, 46, 99, 109, 114, 150, 154, 160, 239, 245, 289, 293

Էեպ – 245
Էիշատ (=Էրիշատ) – 252
Էլառ – 251
Էյնայ – 245
Էնկիւրիայ – 247 (տե՛ս Անկյուրիա)
Էնկիպազար – 245
Էշակղուտրան – 252
Էջմիածին//Ս. Էջմիածին – 8 և հտ.
Էսկիզաղարայ – 246
Էտինճիկ – 245
Էրէկլի – 247
Էրզընկա – 246 (տե՛ս Երզնկա)
Էրզրում – 71, 150, 223, 246 (տե՛ս նաև Կարին)
Էրնատար – 251
Էրք – 252
Էրքիլատ – 246

Թաթարպազարճիղ – 246
Թալաս – 246
Թալին – 252
Թամա – 245
Թամզարայ – 246
Թամիր – 252
Թավրեզ//Թավրէզ//Թավրիզ – 111, 187, 249, 254, 278
Թաքալուկն – 252
Թեքման – 246
Թէզխարապ – 251
Թէլաւ – 249
Թեղի – 251
Թէրճան (=Դերջան) – 246
Թեքիրդաղ(Թագավոր դաղ, Ռոտոստո) – 148, 152, 160-161
Թըթենաձոր – 251
Թուլթ – 251
Թիրա – 245
Թիֆլիս – 26-27, 31, 37, 45, 69, 111, 223, 249
Թոխատ//Թոքատ//Թոխաթ – 65, 150, 155, 211, 246 (տե՛ս նաև Եվդոկիա)
Թորթում – 246
Թռնովայ – 246
Թրակիա – 100-103, 110, 141, 148, 152-153, 155, 158-161, 245, 282,

285, 290-291
Թուրքիա – 69, 149-150, 209
Թոմառզու – 246
Թոսիա – 247
Թոմրուկ – 245
Թոփղատի (=Թոփկատու) – 245
Թոփրախղալա (=Թոփրակկալա) – 247

Իզմիր – 58, 114-118, 245 (տե՛ս նաև Զմիւռին)
Իլկավանք – 251
Իլուն – 252
Իկոնիս (=Իկոնիա) – 259 (տե՛ս նաև Ղոնիա)
Ինապօլ – 246
Ինդոս – 128
Իպրայիլ – 246
Իսախչայ – 246
Իսլիմլա – 246
Իսմայիլ – 246
Իսպահան – 174, 183 (տե՛ս նաև Սպահան և Շոշ)
Իսրայել//Իսրայէլ – 111, 265, 266
Իրան – 29, 69, 71, 165, 167
Իրիզայ – 246 (տե՛ս նաև Երզնկա)

Լազըրվան – 252
Լաքեարան – 249
Լեհաստան – 79, 92, 97, 135
Լըճէ – 247
Լընճան – 249
Լիմ կղզի, անապատ– 132-133, 149, 299
Լիոն – 213
Լիւստրայ (Ախչէհիր) – 259
Լոռի – 111, 249
Լվով//Լէոպոլիս – 74

Խամուրա – 247
Խանղշլայ – 246
Խառբերթ – 247
Խասգեղ – 245
Խարա-Սու (=Խարասու բազար) – 90
Խարկ – 248
Խըլաթ – 247
Խըշլածակ – 251
Խնուս – 246
Խոշաբ ավան – 104
Խորհրդային Հայաստան – 9
Խորձոր – 251
Խոր Վիրապ – 157
Խրաշկու (գյուղ) – 221
Խրովատեղ (գյուղ) – 221
Խօյ – 249, 251, 264
Խօշապ – 247
Խօտեջուր (=Խոտորջուր) – 246, 248, 259

Ծաղկունեաց ձոր – 250-251
Ծաղկունք – 251
Ծար – 251
Ծաքար (=Ծակքար) – 251

Կալասեռ (գյուղ) – 221
Կալեր – 252
Կալկաթայ – 248
Կախէթ – 249
Կախմախի – 251
Կածիս – 252
Կաղզուան//Կաղզվան – 182, 248
Կաղս – 251
Կարենուց – 251
Կամախ – 161, 246
Կամրկապ – 246
Կամրջաձոր – 21
Կապադովկիա//Կապադոկեան երկիր

– 110, 287 (տե՛ս նաև Գամիրք)
Կառնապատ – 246
Կասկէ – 247
Կաստէման – 246
Կաւաբերդ (=Կաքաւաբերդ) – 250
Կաւակերտ – 250
Կարբի//Կարպի – 157, 231, 253, 250
Կարենիս – 252
Կարին – 81, 155, 161, 246 (տե՛ս նաև Արզրում//Էրզրում)
Կարճկան – 247
Կարմիրաւերակ – 251
Կարմունջ – 252
Կարս – 57, 71, 113, 155, 248, 278
Կաֆա – 90, 113, 245, 275
Կեանտիման – 249
Կեառատի – 247
Կեարզայ – 246
Կեարմիր – 246
Կելիպօլ – 245
Կեոմիրճինա – 246
Կեսարիե – 45, 77, 109-111, 128, 150, 154, 234, 246, 267 (տե՛ս նաև Ղայսէրի)
Կեօզլու – 252
Կեօլէ – 248
Կէզլով – 90 (տե՛ս նաև Գեօզլավ)
Կէչառիս – 252
Կզնուտ (Փոքր, Մեծ) – 252
Կիլիկիա – 17, 19, 87, 170, 189-190, 219
Կիլիկյան Հայաստան – 7, 50, 62, 130, 165
Կիւմիշխանայ – 246
Կիւմուրճին – 245
Կոթ – 252
Կոխտ – 253
Կողբ – 250
Կոնդ – 253
Կող – 253
Կովկաս – 69
Կոտայք – 251
Կորատեղ – 251
Կորզաբակ – 251
Կորկոտան – 251
Կոստանդնուպոլիս//Կ. Պոլիս – 12-13, 23-24, 28-29, 36-37, 41, 44, 46, 47, 49, 51-52, 55, 57, 63-66, 69, 72-74, 76-78, 80-81, 83, 85, 91-93, 96-106, 110, 113-114, 116-118, 124-125, 141, 148, 150, 152-154, 160-161, 163-164, 174, 189, 194, 204, 208-210, 219, 228, 231-232, 234, 237-239, 244, 263, 267, 279-280, 285, 291-292
Կրցխլուան – 249
Կուլասարովայ – 247

Հազարաբեր – 251
Հազրու – 247
Հալեպ//Հալապ – 161, 209-211 (տե՛ս նաև Բերիա)
Հաղբակ (=Աղբակ) – 249
Հաղբատ – 17, 22-23, 25-27, 45, 163, 223
Հաճիքեօյ – 246
Հաճիօղլուբազարճիղ – 246
Համատան – 249, 264, 270
Համշեն – 111, 246
Հայաստան//Հայոց Տուն//Հայկազ-յան տուն – 9, 12, 14, 20, 28, 30, 32, 45, 59, 65, 71, 112, 114, 121-122, 124-125, 127, 130-132, 136, 138-139, 142, 146, 151, 155, 165-167, 170, 175, 190-191, 207, 211, 218-219, 239, 263, 265-266, 271, 274, 299
Հայկական սղնախներ – 69
Հայնէ – 247

Հայոցթառ – 253 (տե՛ս նաև Հավուց թառ)
Հայոց ձոր – 104
Հայոց Սյունիք – 69
Հայոց Ստանօղ – 259
Հայրավանք – 251
Հանիսուսար – 249
Հաշտարխան 248
Հապուլ – 251
Հասանղալայ – 246
Հավուց Թառ – 157 (տե՛ս նաև Հայոցթառ)
Հարփանտ – 252
Հէյրակ – 246
Հէրի – 249
Հըզու – 247
Հըրսօվայ – 246
Հիսար – 245
Հին Ջուղա – 234
Հիւսէինիկ – 247
Հյուսիսային Իրան – 37, 69, 155
Հնդկաստան – 92, 127, 248
Հոռոմստան – 24, 44, 97
Հորս (գյուղ) – 221
Հռոմ – 11-12, 15, 18, 24, 62, 67, 73-77, 79, 92-93, 95, 142, 186, 213, 219, 224-225, 230
Հռոմկլայ – 18
Հունաստան (Հունաց տուն, երկիր) – 98, 110, 240
Հօթին//Հոդին – 246, 275
Հօնաս – 245

Ջագ – 251, 252
Փոքր Ջագ – 251
Ջագաւանք – 252

Ղաբալա – 31
Ղազախ – 249
Ղազանլըխ – 246
Ղազան – 249
Ղազպին – 249
Ղալաթիա – 79, 244, 247, 259, 267
Ղալաճուխ – 259
Ղալաչըխ – 247
Ղամիշլուխ – 245
Ղայապազար – 247
Ղայղուլի – 249
Ղայսերի (=Կայսերի) – 91, 271 (տե՛ս նաև Կեսարիա)
Ղանդահար – 262
Ղաստամոնի – 259
Ղավշան – 246
Ղատիգեղ – 245
Ղարաբաղ – 36, 69
Ղարադալուկ – 251
Ղարահիսար – 259
Ղարաման – 247, 259
Ղարաչօրան – 248
Ղարասու – 245 (տե՛ս նաև Խարասու)
Ղարատաղ – 250
Ղարաօրան – 252
Ղարթալ – 245
Ղարս//Ղառս – 248, 278 (տե՛ս նաև Կարս)
Ղափան – 31, 250
Ղափլու – 245
Ղըզլար – 248
Ղզլղալա – 251
Ղզլօրան – 251
Ղընխ – 245
Ղըշլախ – 251
Ղիան – 247
Ղրիմ//Խրիմ – 90, 92, 240, 245
Ղրխաղաճ – 245
Ղրխբուլաղ – 250
Ղուզուչան – 246

Ղուլալի – 251
Ղուլք – 247
Ղում – 249
Ղումղափու (=Գումգափու) – 244
Ղուշատայ – 245
Ղուռառչէշմայ – 245
Ղօնիա – 246-247, 259 (տե՛ս նաև Իկոնիս)
Ղօչհիսար – 247
Ղօռնաֆայ – 247

Ճաթղռան – 253
Ճահուկ – 109, 110, 249, 267
Ճամպարակ – 252
Ճիլ – 252

Մազանդարան//Մազանտարան – 28, 249
Մազրէն – 252
Մալաս – 245
Մալղարայ – 245, 246
Մակու – 249, 251
Մահմուտան – 247
Մաղազբերդ – 248
Մանազկերտ – 247
Մանաման – 245
Մանդալեաթ – 245
Մանիսայ – 245
Մանկուս – 250
Մաշկեր – 246
Մառմառա – 245
Մառմառաչէն (=Մարմաշէն) – 253
Մասբրիս (Բջնիի) – 251
Մասիս – 143
Մաստարա – 60, 252
Մասրիս (Հայրավանքի) – 251
Մատան – 247
Մատէն – 246
Մարաղայ –249, 251
Մարսբվան – 246
Մելիտենէ (=Մալաթիա) – 53
Մեծկերտ – 247
Մեծ Հայք – 17, 20, 24 (տե՛ս նաև Հայաստան)
Մեղրի – 250
Մեղուս – 251
Մէժէթուճոր – 249
Մէնթէշ – 247
Միսատայ – 247
Միդիլու (=Լեսբոս) – 245
Մուժամպար – 249
Մուհալիճ – 245
Մուղան – 13
Մաղանճղ – 250
Մուղլայ – 245
Մուղնի//Մօղնի – 157, 253
Մունճուսուն – 246
Մուշ – 81-82, 147-148, 150-151, 155, 247
Մուշախպիր (=Մուշաղբիւր) – 250
Մուսայիպղչլայ – 246
Մուսէպին (=Մծբին) – 247
Մօլաբայազիդ – 253
Մօսկով (=Մոսկվա) – 248
Մօտկան – 247

Յաղճ – 252
Յաշտարակ (=Աշտարակ) – 254
Յորմի – 249
Յուշնի – 249-250
Յօշական (=Օշական) – 250

Նալլուխան – 247, 259
Նախամարք – 251
Նախիջևան//Նախչուան – 31, 35, 71, 111, 120, 134, 181-182, 185, 232, 249, 254, 264, 266-267, 269
Նահիա (=Նահեն) – 247

Նարիման – 246
Նէղոս – 128
Նեվա –128
Նետիս – 251
Նիշ – 246
Նիկիսար – 246
Նիկիտայ – 246
Նիկոմեդեայ – 289 (տե՛ս նաև Իզնամիթ)
Նշխարք – 252
Նորագաւիթ – 253
Նորագիւղ – 253
Նորաշենիկ – 249
Նորատուս – 251
Նորբերդ – 245
Նոր Նախիջեւան – 225
Նոր Ջուղա – 29, 51, 52, 170, 178-181, 184, 193, 197, 199-200, 206, 221-222, 224, 233, 249
Նորք – 157, 253
Նուռնուս – 251
Նօռդուզ – 247

Շախսաբան//Շըխշաբան//Շախշաբան՝ Սպահանի թաղ – 228
Շահաստան – 264
Շահջհանապատ – 248
Շահրիար – 253
Շաղկերտ – 249
Շամախի – 29, 69, 31, 32
Շամբ – 250
Շաշ – 247 (տե՛ս նաև Ղաշ)
Շաւշէդ – 248
Շատիկի անապատ (Շատիկա վանք) – 110-111, 189, 269, 274, 276
Շարապխանա – 253-254
Շարիս – 251
Շաքի – 31
Շէպինղարահիսար – 246
Շըխմահմուտ – 249
Շըհապն – 252
Շընդաւիթ – 253
Շընքուշ – 247
Շիրազ – 249
Շիրակ//Շիրակվան//Շիրակուան – 21, 248, 250
Շիրվան//Շիրուան – 31-32, 247
Շիրվանաձոր – 250
Շխեր – 251
Շումլայ – 246
Շօշ – տե՛ս Սպահան
Շօռուիթ – 249
Շօրաղ – 252

Ոսկաշէն – 252
Ոստին (գյուղ) – 221

Ջամանկուտ – 251
Ջանղրայ – 247
Ջաւընդուր – 250
Ջարսանճաղ – 247
Ջէրքէզ – 245, 248
Ջէրքէշ – 247, 259
Ջըլտըր – 248
Ջըրփլու – 252
Ջիջրա – 248
Ջմըշկածակ – 247
Ջորս – 249, 251
Ջորրորդ Հայք – 113
Ջպխլու – 251
Ջուխուր-Սաադ – 231 (տե՛ս նաև Սահաթափոս)
Ջօռլու – 245

Պալաթ – 244
Պախչա-Սարայ//Պաղչասարայ//Բախչիսարայ – 90, 245
Պանդրմայ – 245

Պարթին – 247
Պարսկահայաստան – 24, 48
Պարսկաստան – 29-30
Պեկնազար – 259 (տե՛ս նաև Բէկպազար)
Պէյրութ – 228
Պետրպուրք – 248 (տե՛ս նաև Ս. Պետերբուրգ)
Պիտնի – 251
Պղաբերդ (=Բաղաբերդ) – 250
Պոնտոս – 271
Պորտակ – 251 7
Պորտիկ – 253
Պրուսայ//Պուրսայ – 245, 289
Պուլանուխ (=Բուլանուխ) – 246
Պուրտուր – 247
Պօլի – 247, 259
17

Պօչան – 246
Պօրի – 247
Ջահուկ – 264 (տե՛ս նաև Ճահուկ)
Ջաղաց տեղ – 250 28
Ջավախէթ – 248
Ջաֆարապատ – 253 29
Ջեկրաշեն – 251
Ջերմուկ – 247
Ջղուն – 250
Ջրվէզ – 253
Ջուղայ – 180 41
43

Ռեշտ – 69, 249
Ռընդամալ – 251 44
Ռոդոսթո//Ռոտոսթոյ//Ռադոսդ– 103, 245 46
Ռումելի – 113, 275
Ռուսաստան – 10, 36, 48, 127, 165 50

Սաբարաթիան – 249
Սախգըզ (=Քիոս) կղզի – 245
Սահաթափոս – 251 (տե՛ս նաև Ջուխուր-Սաադ)
Սալամալիք – 252 62
Սալայ – 245

Սալիան – 249
Սալմաստ – 249 65
Սաղէմ – 117, 291 (տե՛ս նաև Երուսաղէմ)
Սաղմոսավանք – 157
Սամաթիա – 244 68
Սամսօն – 246
Սայրեսթօ – 249 72
Սանահին – 27, 33
Սանդըխլի – 247
Սառաֆան – 248
Սասուն – 247
Ս. Ղազար կղզի –14, 236 80
Սարիեր – 249 80
Սեբաստիա – 246
Սեպուհ լեռ – 133, 278 82
Սէրքեվիլ//Սերկևիլ – 214, 254, 260
Սեֆյան Իրան – 8, 165 83
Սէյդապատ – 248
Սէվան – 251
Սէվերակ (Սևավերակ) – 247 87
Սըլդուզ – 249
Սըղերտ – 247
Սընապ (=Սինոպ) – 246
Սըչօվայ – 246
Սիլիսրէ – 246 96
Սիս – 42, 46, 50-55, 205, 210, 284
Սիսիան – 250 98
Սիվրիհիսար –247
Սիւնիք – 22, 69
Սիոն//Սիոն – 111-112, 126, 265-266, 269, 274, 279
Ս. Լուսավորչի անապատ – 157 108
Սկիւտար – 46 113
Սղնախ – 70
Սյունիք – 13, 18-19, 29, 35, 37, 48-49, 70-71, 147, 164 114
Սոթ – 252
Սոքա – 245
Սպահան – 172, 179, 206, 233, 249, 262 (տես նաև Շոշ) 121
Սպարթայ – 247 121
Սպեր – 246

Ստանօզ – 247
Ստեանքեօյ (=Կոս կղզի) – 245 124
Սրամայ – 246
Ստամբուլ//Ստամպօլ – 43, 70, 73, 93, 98, 104, 114, 126, 244 (տե՛ս 132
նաև Կոստանդնուպոլիս)
Սուլթանղշլայ – 246 134
Սումխէթ – 249 136
Սուրամ – 249
Սուրմարի – 250-251 140
Սօլաք – 251 141
Սօղանլու – 248
Սօմայ – 249
Սօվմայ – 245
Սօֆի – 246
Ս. Պետերբուրգ – 86 147
147

Վաղարշապատ գաւառ – 22, 189, 216, 218, 294
Վայո[ց]ձոր – 250 148
Վան (Վուեր) – 71, 104, 149-150, 216, 247, 299
Վանիկ – 250 152
Վանստան – 250
Վառնա – 246
Վասպուրական – 70-71, 149, 299-300 163
Վարդենիս – 252 163
Վարզէլն – 251 165
Վարսերն – 251,
Վենետիկ – 14, 45, 65-66, 70, 76-77, 102, 224
Վէթի (Վեղի) – 250
Վէթիբասար – 250
Վրժան – 252
Վիեննա – 229
Վիտին – 246
Վիրապ – 188
Վիրք//Վրաստան//Վրացստան//Վրաց տուն – 37, 45, 111, 165, 224, 263, 266 170
Վոլգա – 128
171

Տաթև//Տաթեւ – 17, 19-20, 22-23, 29, 74, 163, 180 171
Տաճարաբակ – 253 179

Տաճկահայաստան – 24 179
Տակճկաստան – 42 179
Տայադեղ – 246 181
Տաշիր – 249
Տաշքեօփրի – 246 183
Տավշանլու – 245 184
Տարոն – 71, 82, 149-150, 154 185
Տեղեր – 252 187
Տիգրանակերտ – 70, 150, 231, 247 189
Տիկօր – 248
Տրապիզոն – 246 193
Տփխիս – 263
197
Ցաղման – 247 197
Ցամաքաբերթ – 251 200
Ցըղնի – 250 200
201
Ուզումչի – 249
Ուզունքեօրփու – 245 207
Ուշաղ – 247, 259
Ուշի – 157, 161, 252 209
Ուռիծառ – 251
Ուռճաձոր – 250 212
Ուռումելի – 246
Ուսկուդեր//Ուսկուտար – 118, 244-245, 279, 282 (տես նաև Սկյուտար)
Ուրդուար (=Օրդուբադ) – 264 238
Ուրհայ – 247 238
Ուրուշճըղ – 246
240
Փարաքար – 250, 254
Փարփի//Փարպի – 157, 161, 253
Փերին – 247, 259
Փերշամպայ – 246 261
Փէնէսէ – 246
Փէշմակալ – 251
Փիրմաստ – 245
Փոքր Հայք – 24
Փոքրդիւղ – 253 269

Փռակունիս (=Փառակունիս) – 252

Քաղկեդոն – 64 299
Քամալ – 251
Քամար – 245
Քանաքեռ – 251
Քաչան – 249
Քաջբերունիք – 149 303
Քարթլի – 194
Քարվանսարա – 252 316
Քեալարայ – 250
Քեղի – 246 326
Քեղուաճոր – 250
Քեօշք – 245
Քեոմփուրլուկ – 246
Քեօփրի – 246
Քէշտաղ – 250
Քէօթահեայ – 245, 289
Քէօստէնճէ – 246
Քիանղրի – 259
Քիլիս – 246
Քիսեղ – 249
Քիսմէս – 249
Քիրաշլու – 254
Քիրման – 245
Քուլթափա – 249
Քուրտաք – 252
Քօլատակ – 252
Քօրօղլի – 248

Օզան – 251
Օզի – 246
Օլթի – 246
Օղրաճոր – 251
Օնցուց աշխարհ – 127
Օշական – 60, 157, 218 (տե՛ս նաև Յօշական)
Օսմանյան երկիր – 49, 51, 164
Օսմանյան կայսրություն – 8, 28-29, 48-49, 51, 71, 90, 92, 96-97, 147, 154, 165-167, 181, 192, 231

Օտամիշ – 245
Օրթաղեղ – 245
Օրթալանկ – 245
Օրմանի – 246
Օրդու – 246
Օրտուվար (=Օրդուբաղ) – 250 (տե՛ս նաև Ուրդուար)
Օր – 245

Ֆաթսա – 246
Ֆիլիպէ – 246
Ֆռանկանոց – 250-251
Ֆռանկստան//Ֆռէնկստան – 76, 93, 127
Ֆրանսիա – 73
Ֆօրսանդէվի – 248
Ֆօքչան – 246

Болшая Армения — 35
Карабах — 40
The Bosphorus – 144
The Euphrates – 144
The Ganges – 144
The Indus – 144
The Nile – 144
The Volga – 144

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . . .

ԳԼՈՒԽ Ա.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ՝ ԲՋՆԻԻ, ՀԱՂԲԱՏԻ, Ս. ԹԱԴԵՈՍԻ ԵՎ ՏԱԹԵՎԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՆՈՆԸ (առաջացման ժամանակն ու հանգամանքները) . . . .

ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1720-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ . . . . . .

Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսը (1715-1725) և նրա կապերը հայ ազատագրական շարժման հետ . . . . . .

ԳԼՈՒԽ Գ.

ԿԱՐԱՊԵՏ ՈՒԼՆԵՑԻՆ (1661-1729) ԵՎ ՆՐԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ . . . . . .

Կոլոտի դեմ դժգոհությունների սկիզբը . . . . . .

Կարապետ Ուլնեցու ընտրությանը մասնակցած արևելահայ եպիսկոպոսները . . . . . .

Կարապետ Ուլնեցու կենսագրական կարևոր մանրամասներ . . . . .

Կարապետ Ուլնեցին իբրև «յայնկուսացի» (արևելահայ և արևմտահայ կղերի հարաբերությունները XVII-XVIII դարերում) . . . . . .

ԳԼՈՒԽ Դ.

ԿԱԹՈԼԻԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԱՊԵՏ ՈՒԼՆԵՑՈՒ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏԻ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ . . . . .

Գաղատիա-Անկյուրիա թեմը և հայ-կաթոլիկ
հարաբերությունները . . . . . .
Կոլոտ պատրիարքի և Կարապետ կաթողիկոսի՝ կաթոլիկների
հանդեպ որդեգրած հաշտարար դիրքորոշման
քաղաքական դրդապատճառները . . . . . .
Հովհաննես Կոլոտի և Կարապետ Ուլնեցու հակակաթոլիկ
ձեռնարկները . . . . . .

ԳԼՈՒԽ Ե.

ԱԲՐԱՀԱՄ Բ ԽՈՇԱԲԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ (1719-1734 թթ.) . . . . . .
Նախնական դիտողություններ . . . . . .
Աբրահամ Խոշաբեցու և Կոլոտի հարաբերությունները
1719-1727 թթ. . . . . .
Աբրահամ Խոշաբեցու և Կոլոտի հարաբերությունները
1730-1734 թթ. . . . . .

ԳԼՈՒԽ Զ.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՎԻՐԱԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ . . . . . .

ԳԼՈՒԽ Է.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՆՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱԲՐԱՀԱՄ Բ
ԽՈՇԱԲԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ . . . . . .
Ս. Էջմիածնի առաջին ծայրագույն նվիրակը՝
Ղազար վարդապետ Ջահկեցի . . . . . .

ԳԼՈՒԽ Ը.

ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑՈՒ ՆԱԽԸՆԹԱՑԸ (1719-1731 թթ.) . . . . . .
Ղազար Ջահկեցու տարիքը . . . . . .
Հովհաննես Ամասիացին՝ Ղազարի և Կոլոտի
հարաբերությունների մասին . . . . . .

ԳԼՈՒԽ Թ.

ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ . . . . . .
Հայության ազգակազմիչ տարրերի ջահկեցիական սահմանումը . . .

Ջահկեցու *Երգարանը* իբրև XVIII դարի հայ պաշտոնական ազգայնականության «ձեռնարկ» . . . . . .
Ղազար Ջահկեցին՝ 1722 թ. Լիմ անապատի գաղտնի ժողովում ընթերցված կոչի հեղինա՞կ . . . . . .
Ջահկեցու «Ողբի» գլխավոր հարցադրումը իբրև ուշմիջնադարյան հայ մատենագրության կենտրոնական դրույթ . . . . . .
«Ազատագրական աղոթքը» . . . . . .
Պատուիկներ Ջահկեցու հայրենասիրական-ազգայնական գաղափարախոսության . . . . . .
Ղազար Ջահկեցին ընդդեմ կաթոլիկ քարոզչության . . . . . .

ԳԼՈՒԽ Ժ.

ՕՍՄԱՆՅԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ (1725-1734 թթ.) . . . . . .
Ընդհանուր դիտարկումներ . . . . . .
Աբրահամ Մշեցու ընտրությանը նպաստած ցարդ անհայտ պարագաները . . . . . .
Աբրահամ Կրետացու ընտրությանը նպաստած ցարդ անհայտ պարագաները . . . . . .

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԵՐՋԱԲԱՆ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . .
Պատասխան՝ ուսումնասիրության սկզբում առաջադրված հարցին . . .
Հայաստանը և հայոց եկեղեցին XVII-XVIII դարերում . . . . . .

ՀԱՎԵԼՎԱԾՔ
(ուսումնասիրություններ և վավերագրեր)

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ XV-XVII ԴԱՐԵՐՈՒՄ
(երկու հնատիպ վավերագրի քննություն) . . . . . .
Ա. Նահապետ Եղեսացու կաթողիկոսանալու հանգամանքներն ու դրա հետևանքները . . . . . .
Ա վավերագիր (1693 թ.) . . . . . .
Քննություն Ա վավերագրի . . . . . .

1. Տպագրությունը . . . . . .
2. Պատմական ետնախորքը . . . . . .
3. Նահապետ Եդեսացու կաթողիկոսանալու հանգամանքները . . .
4. Նորջուղայեցիների և պոլսեցիների մասնակցությունը կաթողիկոսական ընտրություններին . . . . . .
5. Մինաս եպս. Աստապատցի . . . . . .
6. Նահապետի կաթողիկոսության շրջանի հետևանքները . . . .
7. Ստեփաննոս Ջուղայեցու ընթացքն ու վախճանը . . . . . .
8. Հայոց կաթողիկոսների կենցաղավարության և տարազի մասին . .
9. Հայ և օտար մշակույթների համեմատական դնահատականներ (1625, 1693, 1733 և 1740 թթ.) . . . . . .

Բ. Հակահակոբյան ժողովներ (1664-1665 թթ.) . . . . . .
Բ վավերագիր (1665 թ.) . . . . . .
Քննություն Բ վավերագրի . . . . . .
1. Վավերագրի գրության ժամանակը և վայրը . . . . . .
2. 1664 թ. հոկտեմբերի ժողովը: Ժողովականները . . . . . .
3. 1665 թ. տարեմուտի հակահակոբյան ժողովի պահանջների հարաբերական մեղմացման դրդապատճառները . . . . . .
4. 1664 թ. ժողովը և Արևմտահայոց կաթողիկոսության ստեղծումը . . . . . .
5. Կոնկլավի կանոնները և 1441 թ. Էջմիածնի կաթողիկոսի ընտրությունը . . . . . .

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.

ՆՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ . . . . . .
1. Ծայրագույն նվիրակներ (1741-1797) . . . . . .
2. Ս. Էջմիածնի նվիրակներին վերաբերող դիվանական անտիպ նյութեր . . . . . .

ՀԱՎԵԼՎԱԾ Գ.

ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑՈՒ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (ԿԵՍԱՐԻԱ, 1726 Թ.) . . . . .

ՀԱՎԵԼՎԱԾ Դ.

«ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՄԱՍԻԱՑԻՈՑ ՎԱՐՔ ԵՒ ԳՈՐԾՔ ՂԱԶԱՐՈՒ ՋԱՀԿԵՑԻՈՅ» . . . . . .

ՀԱՎԵԼՎԱԾ Ե.

ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (1722) . . . . . .

ՑԱՆԿԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ . . .

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ . . . . . .

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ . . . . . .